Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՏՈՐ IV

Բ

4(47.925)
Ա-50

Академия Наук Армянской ССР
институт языка

Г. АЧАРЯН

ПОЛНАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

в сравнении
с 562
языками

том IV

книга II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН — 1961

13220

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ղ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՀԱՏՈՐ IV

Բ ԳԻՐՔ

ՀԱՅԿ Ա Ս Ո Գ Ա Ն ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ОТДЕЛА ОБЩЕСТВ. НАУК АРМ. ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1961

ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՏ
ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
Ин-та искусствозн. АН Арм. ССР

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Տպագրության պատրաստեց և խմբագրեց պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆԸ
Подготовил к печати и редактировал проф. Э. Б. АГАЯН

11270

ԳԼՈՒԽ Է

ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԵՋ

1. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ինչպես միջին հայերենը և բարբառները, նույնպես և աշխարհաբարը կրճատել է գրաբարի լծորդությանց թիվը, արևելյան գրականը ավելի, արևմտյան գրականը նրանից պակաս չափով:

Գրաբարի Ա լծորդության ա տիպարը (ել—եցի) անփոփոխ է մնում թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրականում:

Առաջին լծորդության երկրորդ տիպարը մեծապես քայքայված է: Այս տիպարին հետևող բայերի մի մասը անցել է Ա լծորդության առաջին տիպարին և կամ այլ ձև է առացել և կամ փոխել խոնարհման ձևը: Օրինակ՝

Կլանել, արևմտյան գրականում դարձել է կլլել և խոնարհվում է Ա լծորդության առաջին տիպարի պես (կար. կլլեցի), իսկ արևելյան գրականում դարձել է կուլ տալ և բոլորովին դուրս է եկել շարքից:

Սպանանել արևելյան գրականում դարձել է սպանել և հետևաբար խոնարհվում է առաջին տիպարի ձևով (կար. սպաննցի), իսկ արևմտյան գրականում թեև ունի սպաննել ձևը, բայց դարձյալ խոնարհվում է առաջին տիպարի ձևով (կար. սպաննեցի):

Անցանել արևմտյան գրականում դարձել է անցնիլ և հետևաբար խոնարհվում է Բ լծորդության բ տիպարի պես (կար. անցա), իսկ արևելյան գրականում թեև պահվում է անցնել ձևը, բայց դարձյալ խոնարհվում է Բ լծորդության բ տիպարի պես (կար. անցա):

Ելանել, մտանել, տեսանել, գտանել *արևմտյան գրականում դարձել են* եկնել *կամ* եյել, մանել, տեսնել, գտնել, *բայց խոնարհվում են գրաբարի Բ յոթերդության p տիպարի պես (կոր.* ելայ, մտայ, տեսայ, գտայ)։ *Արևելյան գրականում առաջինը ջնջված է (գործ է ածվում ընդհանրապես դուրս գալ), իսկ մյուսները թեև պահում են մտնել, տեսնել, գտնել ձևը, բայց դարձյալ խոնարհվում են Բ յոթերդության p տիպարի ձևով (կոր.* մտա, տեսա, գտա)։

Անիծանել, ոռոգանել, օծանել և -անել *վերջավորված բայերի մի մեծ մասը խումբ կորցնելով անգործական մասը (ան), դարձել են* անիծել, ոռոգել, օծել և *այլն, և խոնարհվում են Ա յոթերդության a տիպարի ձևով։*

Գրաբարի Ա յոթերդության p տիպարից մնում է միայն 4 բայ (պագանել, բքանել, խածանել և զարկանել), *որոնք շարունակում են իրենց գոյությունը, և այն էլ միայն արևմտյան գրականում* (պագնել, խածնել և զարնել) *և կատարյալում լինում են* պագի, բուքի, խա՛ծի, զարկի։ *Արևելյան գրականը սրանք էլ վերածել է Ա յոթերդության a տիպարին՝ փոխանակելով* պաչել, բքել, կծել, խփել *ձևով, որոնց կատարյալը լինում է* պաչեցի, բքեցի, կծեցի, խփեցի։

Գրաբարի Բ յոթերդության a տիպարը մնում է կենդանի արևմտյան գրականի մեջ (խօսիմ—կոր. խօսեցայ), *մինչդեռ արևելյան գրականում խափան ջնջված է՝ վերածվելով Ա յոթերդության a տիպարին* (խոսիմ—խոսեցի)։ *Հնասեր հեղինակներն են միայն, որ շարունակում են դեռ իմ-եցայ խոնարհումը։ Այսպես՝ Պալասանյանը իր Քերականության մեջ (տպ. Թիֆլիս, 1906, էջ 156—9) դնում է այս յոթերդությունը, օրինակ տալով հետևյալ բայերը.*

համարիմ, բնակիմ, աշխատիմ, կանաչիմ, ծաղկիմ, քրտնիմ, կարմրիմ, ապիտակիմ, սովորիմ, յաջողիմ, պատահիմ, խօսիմ, ցաւիմ, նատիմ, պառկիմ, յոգնիմ, դադրիմ, պարապիմ, հաւանիմ։

Սրանց կատարյալը դնում է՝

համարեցայ, բնակեցայ, աշխատեցայ, կանաչեցայ, ծաղկեցայ, քրտնեցայ, կարմրեցայ, ապիտակեցայ, սովորեցայ, յաջողեցայ և այլն. որոնք արդի գրականում լինում են՝

համարեցի, բնակեցի, աշխատեցի, կանաչեցի, ծաղկեցի, քրտնեցի, կարմրեցի, ապիտակեցի, սովորեցի, հաջողեցի և այլն։

Գրաբարի Բ յոթերդության p տիպարը (անիմ—կոր. այ) *պահում է իր գոյությունը արևմտյան գրականում, այսպես՝*

ապանիմ>հապնիմ, հապայ
բուսանիմ>բուսնիմ, բուսայ
մնառանիմ>մնառնիմ, մնառայ
հատանիմ>հատնիմ, հատայ

Նույնիսկ Ա յոթերդության p տիպարին պատկանող բայերից մի քանիսը անցել են այսպես. ինչպես՝

անցանել>անցնիլ, անցայ
հասանել>հասնիլ, հասայ

Ավելի զարմանալի է այն, որ Ա յոթերդության p տիպարին պատկանող մի քանի բայեր էլ՝ թեև նախկինում խոնարհվում են Ա յոթերդության p տիպարի պես, բայց կատարյալում խոնարհվում են Բ յոթերդության p տիպարի պես։ Այսպես են՝

գտանել>գտնել, նախկ. գտնիմ, կոր. գտայ
մտանել>մտնել, » մտնիմ, » մտայ

Արևելյան գրականում բոլոր այս կարգի բայերը խոնարհվում են վերջին ձևով. այսպես՝

ապանիմ>հապնիմ, կոր. հապա
բուսանիմ>բուսնիմ, » բուսա
մնառանիմ>մնառնիմ, » մնառա
հատանիմ>հատնիմ, » հատա
անցանիմ>անցնիմ, » անցա
հասանիմ>հասնիմ, » հասա
գտանիմ>գտնիմ, » գտա
մտանիմ>մտնիմ, » մտա

*Երբ արևելյան ճյուղում երկրորդ յոթերդությունը վերածվեց առաջինին, արդյունքն այն եղավ, որ որոշ դեպքերում շփոթություն առաջացավ չեզոքի և ներգործականի միջև։ Սրա առաջքը առնելու համար այժմ էլ դիմեցին մի ուրիշ միջոցի, այն է՝ նեղմուծել վ (իլ—ել—վել), թեև սրանով էլ չեզոքը կրավորականի հետ սկզբից շփոթվել. օրինակ՝ շարժիլ—*շարժել—շարժվիլ։ Վերջին շփոթությունը մնաց աննշմարելի, որովհետև համեմատ դեպս չեզոքը շատ ավելի նման է կրավորականին, քան թե ներգործականին, որ նրա ճիշտ հակառակն է։*

Այս ձևափոխությունը գրական լեզվի մեջ այնքան առաջ գնաց, որ բազմաթիվ -իլ վերջացող բայեր դարձան -վել՝ առանց բանավոր պատճառի. օրինակ՝

պարապիլ—պարապվիլ (փոխանակ ասելու՝ պարապել).

շվարիլ—շվարվիլ (այս ձևը ավելորդ է, որովհետև ներգործականն է շվարեցնել). ինչպես՝ Բժիշկը զգաց մի նուրբ հեգնություն և մի քանի վայրկյան նա զարձյալ շվարվեց (Շիրվանզադե, Երկերի լիակ. ժող., 1930, հտ. Դ, էջ 250):

Երրորդ լծորդության ա տիպարը թե արևմտյան, և թե արևելյան գրականում պահում է անփոփոխ իր գոյությունը. ինչպես՝

կարդամ, կարդացի
խազամ, խազացի
աղամ, աղացի

Երրորդ լծորդության բ տիպարը նույնպես մնում է անփոփոխ թե արևմտյան, և թե արևելյան գրականում. ինչպես՝

Գրբ.	գողանամ, գողացայ
Արևել.	գողանամ, գողացա
Արևմտ.	գողնամ, գողցայ
Գրբ.	հեռանամ, հեռացայ
Արևել. Արևմտ.	հեռանամ, հեռացա
Գրբ.	մոռանամ, մոռացայ
Արևել.	մոռանամ, մոռացա
Արևմտ.	մոռնամ, մոռցայ

Չորրորդ լծորդությունը իր երկու տիպարներով և իր բոլոր ձևերով ջնջված է թե արևելյան, և թե արևմտյան գրականում: Վերջինիս մեջ միայն թողում բայն է, որ երբեմն գործածվում է թողում, թողուցի ձևով:

Մեր բոլոր ասածներից երևում է ուրեմն, որ աշխարհաբարում (երկու գրական լեզուներում) մնում են գրաբարի հետևյալ ծորդությունները.

	Գրբ.		Արևել.		Արևմտ.	
Ա լծ.	ա	-եմ,	եցի	եմ, եցի	եմ,	եցի
	բ	-անեմ,	ի	—	նեմ,	ի
Բ լծ.	ա	-իմ,	եցայ	—	իմ,	եցայ
	բ	-անիմ,	այ	նեմ, ա	նիմ,	այ
Գ լծ.	ա	-ամ,	ացի	ամ, ացի	ամ,	ացի
	բ	-անամ,	ացայ	անամ, ացա	նամ,	ցայ

Դ լծ.	ա	-ում,	ի	անամ, ացա	նամ, ցայ
	բ	-նում,	ցայ	—	—

Ինչպես պետք է անվանել աշխարհաբարի այս լծորդությունները:

Եթե աշխարհաբարը կապենք անմիջապես գրաբարի հետ, պատասխանը պարզ է: Արևմտյան գրականը ճանաչում է Ա, Բ, Գ լծորդությանց կրկին տիպարները: Իսկ արևելյան գրականը ճանաչում է Ա լծորդության ա տիպարը, Բ լծորդության բ տիպարը և Գ լծորդության կրկին տիպարները:

Դ լծորդության կրկին տիպարները ջնջված են երկու գրական լեզուներում:

Իսկ եթե աշխարհաբարը ընդունենք իբր անկախ լեզու, բնականաբար բաժանումը և անունները անկախ և ինքնուրույն պիտի լինեն:

Առաջին դրությունը լեզվաբանական աշխատությունների և գիտական ուսումնասիրությանց ընդունած ձևը պիտի լիներ, որին հետևում ենք և մենք՝ այս աշխատության մեջ:

Երկրորդ դրությունը դպրոցական քերականությունների, դասագրքերի և առօրյա ձեռնարկների համար է: Այստեղ գլխավոր դերակատարը մանկավարժությունն է, որի նպատակն է գտնել ավելի դյուրուսուց և հեշտ ըմբռնելի ձևեր:

Եթե գրաբարի խոնարհման անկախ և ինքնուրույն դրությունը այնուամենայնիվ տեղիք է տվել տարբեր տեսակ բաժանումների լծորդությանց մեջ, ինչ պիտի լիներ աշխարհաբարի դրությունը, որ նախ՝ երկու գրականի բաժանված, երկուսն էլ ոչ անկախ և ոչ ինքնուրույն, այլ գրաբարի հետ սերտ կապերով կապված են, և երկրորդ՝ գիտական ու մանկավարժական մեթոդների միջև տատանվում է:

Այսպիսով (Քնն. քեր. 54) դնում է ընդամենը չորս լծորդություն, մի-մի տիպարով. այն է՝ Ա, Բ, Գ լծորդություն (լսել, սրսվիլ, կարդալ), և Դ լծորդություն (մոռնալ): Իսկ մնացյալ բայերը (ճել, նիլ, նալ) իբրև անկանոն կամ բացառություն՝ դնում է գրաբարյան բայերի կարգը (էջ 64): Այսպես պագնել, բքնել, խածնել բայերը, որոնք իսկապես պատկանում են Ա լծորդության ա տիպարին, այստեղ դրված են իբր մի լծորդության կես-զարատուդի, և նրանց կատարյալը նշանակված է պագայ, բքայ, խածայ, որոնք գոյություն չունին (արևմտյան գրականում սրանց կատար-

լալն է պագի, բուքի, խածի):—Հասնիլ, հատնիլ, բուսնիլ, ացցնիլ, հագնիլ, մեռնիլ, ծնանիլ բայերը, որոնք իսկապես պատկանում են Բ լծ. բ տիպարին, այստեղ դրված են նույնպես իբր Դ լծորդության գարտուղի ձևեր, և այլն:

Ամենից լավ է Դադանճյանը (Պոլիս, 1910, էջ 173—5), որ ընդունում է Ա լծ. (գրել), Բ լծ. (խօսիլ), Գ լծ. (կարդալ), իսկ նիլ, նիլ, նալ հանգող բայերի յուրաքանչյուր խումբը դնում է իբրև գարտուղություն համապատասխան լծորդության տակ (չի ճանաչում մի լծորդություն՝ ըստ Ալտնյանի):

Արևելահայ քերականներից Գալատանյանը (Թիֆլիս, 1906) ճանաչում է Ա լծ. -ել—եցի (ազատել), Բ լծ. իլ—եցայ (համբրիմ), Գ լծ. ալ—ացի (կարդալ), Դ լծ. անալ—ացայ (խոստանալ). մյուսները (էջ 169—170) համարում է բացառություն:

Դաղբաշյանը (Թիֆլիս, 1913) ճանաչում է՝ 1. ալ—ացի, (աղալ), 2. անալ—ացայ (հասկանալ), 3. ել—եցի (հանել), 4. նել—այ (գտնել), ինացյալներից ացցնել, գիտել, գիտենալ, ելնել, բողնել, ծնել, տեսնել դնում է անկանոն բայերի շարքում:

Ինքնահնար ձև ունի Աբեղյանը (Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906), որ էջ 116—120 խոնարհումը հիմնում է կատարյալի վերջավորության վրա և ճանաչում է՝

1. Ի խոնարհում (դնացի, գրեցի)
2. Ա » (զարմացայ, մօանցայ, մտայ, ծաղկեցայ, համարուհցայ)
3. Ի—ե խոնարհում (զարմացրի)

Իսկ էջ 103-ում էլ ընդունում է իլ—իմ վերջացող բայերի խումբը, որի համար օրինակ է տալիս՝ մեռնիլ, խօսիլ, ծաղկիլ, տառապիլ, աշխատիլ, դադարիլ, թաւիսուիլ, խռովիլ, թմբլիլ, կանգնիլ, պառկիլ, բազմիլ, նստիլ, սահիլ, ընկնիլ, մարիլ, նուագիլ, քրտնիլ և այլն:

Կատարյալի վերջավորությունը ընդունելով բայերի խոնարհման իբրև հատկանիշ, ոչ միայն լծորդության դրությունը կջնջվի, այլև բայերի սևերն ու անսահմանները իրար խառնվելով, կառնծվի մի քաոս, որից ոչ թե միայն խեղճ աշակերտը, այլև համառ գիտունն էլ կարող չի լինի գլուխ դուրս հանել:

Ա լծորդություն, ա տիպար
(արևել. և արևմտ. գրական)

Ստոր. ներկ.	Ստոր. անկ.	Կատարյալ
սիրեմ	*սիրէի*	*սիրեցի*
սիրես	*սիրէիր*	*սիրեցիր*
սիրէ (արևել. նաև սիրի)	*սիրէր*	*սիրեց*
սիրենք	*սիրէինք*	*սիրեցինք*
սիրէք	*սիրէիք*	*սիրեցիք*
սիրեն	*սիրէին*	*սիրեցին*

Հրամ.	Դերբայներ
սիրէ (արևել. սիրիր)	*ան. սիրել*
սիրեցէ՛ք	*ն. սիրող*
	անց. սիրած, սիրեր (արևել. սիրել)
	ապ. սիրելու, սիրելիք

Ա լծորդություն, բ տիպար
(արևմտյան գրական)

Ստոր. ներկ.	Ստոր. անկ.	Կատարյալ
պագնեմ	*պագնէի*	*պագի*
պագնես	*պագնէիր*	*պագիր*
պագնէ	*պագնէր*	*պագաւ*
պագնենք	*պագնէինք*	*պագինք*
պագնէք	*պագնէիք*	*պագիք*
պագնեն	*պագնէին*	*պագին*

Հրամ.	Դերբայներ
պագ, մի՛ պագներ	*ան. պագնել*
պագէ՛ք, մի՛ պագնէք	*ն. պագնող*
	անց. պագած, պագեր
	ապ. պագնելիք, պագնելու

Բ լծորդություն, ա տիպար
(միայն արևմտյան գրական)

Ստոր. ներկ.	Ստոր. անկ.	Կատարյալ
խօսիմ	*խօսէի*	*խօսեցայ*
խօսիս	*խօսէիր*	*խօսեցար*

խօսի	խօսէր	խօսեցաւ
խօսինք	խօսէինք	խօսեցանք
խօսիք	խօսէիք	խօսեցաք
խօսին	խօսէին	խօսեցան

Հրամ.

խօսէ, մի՛ խօսիր
խօսեցէք, մի՛ խօսիք

Դերբայներ

ան. խօսիլ
ներ. խօսող
անց. խօսած, խօսեր
ապ. խօսելիք, խօսելու

Բ լծորդություն, բ տիպար

Արևել. Արևմտ.

Սառր. ներկ.		Սառր. ան.	Կատարյալ
հագնեմ	հագնիմ	հագնէի	հագայ
հագնես	հագնիս	հագնէիր	հագար
հագնի	հագնի	հագնէր	հագաւ
հագնենք	հագնինք	հագնէինք	հագանք
հագնեք	հագնիք	հագնէիք	հագաք
հագնեն	հագնին	հագնէին	հագան

Արևմտ. Արևել. Արևմտ. Արևել.

Հրամ.

հագի՛, մի՛ հագնիր
հագի՛ր
հագէ՛ք, մի՛ հագնիք

Դերբայներ

ան. հագնիլ, հագնել
ներ. հագնող
անց. հագած
» հագեր, հագել
ապ. հագնելիք
» հագնելու

Գ լծորդություն, ա տիպար
(արևել. և արևմտ.)

Սառր. ներկ.	Սառր. ան.	Կատարյալ
կարդամ	կարդայի	կարդացի
կարդաս	կարդայիր	կարդացիր
կարդայ	կարդար	կարդաց
կարդանք	կարդայինք	կարդացինք

կարդաք	կարդայիք	կարդացիք
կարդան	կարդային	կարդացին

Հրամ.

կարդա՛, մի՛ կարդար
կարդացէ՛ք, մի՛ կարդաք

Դերբայներ

ան. կարդալ
ներ. կարդացող
անց. կարդացած
» կարդացել (արևել.)
» կարդացեր (արևմտ.)
ապ. կարդալիք, կարդալու

Գ լծորդություն, բ տիպար
(արևել. և արևմտ. գրական)

Սառր. ներկ.	Սառր. ան.	Կատարյալ
իմանամ	իմանայի	իմացայ
իմանաս	իմանայիր	իմացար
իմանայ	իմանար	իմացաւ
իմանանք	իմանայինք	իմացանք
իմանաք	իմանայիք	իմացաք
իմանան	իմանային	իմացան

Հրամ.

իմացի՛ր, մի՛ իմանար
իմացէ՛ք, մի՛ իմանաք

Դերբայներ

ան. իմանալ
ներ. իմացող
անց. իմացած
» իմացել (արևմտ. իմացեր)
ապ. իմանալիք, իմանալու

2. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Աշխարհաբարի խոնարհման ծագումը միջին հայերենի մեջ է, այստեղ տեղի ունեցավ նախապես գրաբարի խոնարհման քայքայումը և նոր խոնարհման կազմավորումը։ Միջին հայերենի մեջ ծնված ու հաստատված երևույթներ են արդեն՝

1) Գրաբարի ստորադասականի չնչումը.
2) Գրաբարի ապառնիի չնչումը.
3) Գրաբարի ներկայի փոխանցումը ստորադասական ներկային.

4) կու ձևով նոր ներկայի կազմութիւնը միջին հայերենում, և սրա հետևանքով էլ՝

5) կու ձևով անկատարի կազմութիւնը։

Այս բոլոր նոր երևոյթները պատրաստի ձևով անցան աշխարհաբարին։

Այս բոլորի մասին արդեն խոսել ենք վերը (Ա դիրք) և այստեղ չենք կրկնում։

Չենք խոսում նաև 1) լծորդութիւնների փոփոխութեան, 2) խոնարհման կանոնավորման, 3) վերջավորութիւնների ձևափոխութեան և 4) նախահավելված ե-ի ջնջման մասին ընդհանրապես, բայց կասենք լրացուցիչ տեղեկութիւններ աշխարհաբարի համար։

Աշխարհաբարի հիմնական հատկանիշն է ձայնավորների միակերպութիւնը.— բայի այսինչ կամ այնինչ ժամանակը առաջին դեմքում ինչ ձայնավորով որ սկսեց, նույն ձայնավորն էլ պահպանվում է մինչև վերջ։ Գրաբարը այսպես չէ, այլ գրեթե ամեն մի դեմքին բազմազանութեամբ փոփոխում է ձայնավորը։ Աշխարհաբարը այնպես հավատարիմ կերպով հետևում է այս միակերպութեան (սակավ բացառութեամբ), որ այդ կանոնը գործադրում է նույնիսկ անկանոն բայերի խոնարհման մեջ։ Օրինակ՝

Գրաբար	Աշխարհաբար
սիրեց-ի	սիրեց-ի
սիրեց-եր	սիրեց-իր
սիրեաց	սիրեց
սիրեց-աք	սիրեց-ինք
սիրեց-էք	սիրեց-իք
սիրեց-ին	սիրեց-ին
գա-ի	գա-ալ
գա-եր	գա-ար
եգիտ	գա-ւ
գա-աք	գա-անք
գա-էք	գա-ք
գա-ին	գա-ան

Գրաբար	Աշխարհաբար
եղայց	դու-իմ
դի-ցիս	դու-իս
դի-ցի	դու-ի
դի-ցուք	դու-ինք
դի-ջիք	դու-իք
դի-ցին	դու-ին
եաւ	տու-ի
եաւար	տու-իր
եա	տու-ւ
տուաք	տու-ինք
եատք	տու-իք
եատն	տու-ին
եկի	եկ-ալ
եկիր	եկ-ար
եկն	եկ-ավ
եկ-աք	եկ-անք
եկ-իք	եկ-ք
եկ-ին	եկ-ան

Գրաբարի վերջավորութիւնները խառն ու բազմազան կերպով անին ա, այ, ե, է, ի, ու ձայնավորները, աշխարհաբարը միշտ միատեսակ կամ ի, կամ ա (բացառութիւն է երբեմն եզակի Գ դեմքը)։

Աշխարհաբարը չի սիրում անորոշութիւն բայական ձևերի մեջ։ Մինչդեռ գրաբարում, յուրաքանչյուր բայի խոնարհման ժամանակ, ներգործականն ու կրավորականը գոնե 12 անգամ, երբեմն նաև մինչև 30 — 40 անգամ նույնանում են իրար հետ, աշխարհաբարը ոչ մի անգամ չի թողլ տալիս այդպիսի երևոյթ (Ալտն. 69)։ Այսպիսով, աշխարհաբարի խոնարհումը հակասութիւն է կազմում հոլովման հետ, որ աշխարհաբարում շատ անորոշ, իսկ գրաբարում ընդհակառակը շատ որոշ է։

Այս նպատակով է ահա, որ աշխարհաբարը քայքայել է Ա լծորդութեան բ տիպարը և ամբողջ Դ լծորդութիւնը, որոնց մեջ բայարմատը կատարյալի եզակի Գ դեմքին ու հրամայականն էր միանդամայն։ Այսպես՝

հասանել, հասի, հասեր, հաս, հասաք, հասէք, հասին, հաս, որ է դարում արդեն դարձել էր՝

հասանիլ, հասալ, հասար, հասաւ, հասաք, հասիք, հասան, հասիր։

(Ալտն. 70)։

Եթե ամփոփենք աշխարհաբարի 3 լծորդութիւնների 6 տիպարների պատկերը, կունենանք հետևյալ համադրական ցուցակը, որը համեմատելով գրաբարի համապատասխան ձևերի հետ, դնում ենք ալառեղ.

Ա լծորդութիւն, ա տիպար

Ներկա	Անկատար	Կատարյալ
Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.
եմ>եմ	էի>էի	եցի>եցի
ես>ես	էիր>էիր	եցեր>եցիր
է>է	էր>էր	եաց>եց
եմք>ենք	էաք>էինք	եցաք>եցինք
էք>էք	էիք>էիք	եցէք>եցիք
են>են	էին>էին	եցին>եցին

Հրամ.

	Դերբայներ	
ե՛>է, իր	ան.	ել>ել
եցէք>եցէք	ն.	ող>ող
	անց.	ած>ած
	»	եալ>եր, ել
	ապ.	ելի-ք>ելիք
	»	ելոյ>ելու

Ա լծորդութիւն, բ տիպար

Ներկա	Անկատար	Կատարյալ
Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.
անեմ>նեմ	անէի>նէի	-ի>ի
անես>նես	անէիր>նէիր	-եր>իր
անէ>նէ	անէր>նէր	—>աւ
անեմք>նենք	անէաք>նէինք	աք>ինք
անէք>նէք	անէիք>նէիք	էք>իք
անեն>նեն	անէին>նէին	ին>ին

Հրամ.

	Դերբայներ	
—>—	ան.	անել>նել
էք>էք	ն.	անող>նող
	անց.	ած>ած
	»	եալ>եր
	ապ.	անելի-ք>նելիք
	»	անելոյ>նելու

Բ լծորդութիւն, ա տիպար

Ներկա	Անկատար	Կատարյալ
Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.
իմ>իմ	էի>էի	եցայ>եցայ
իս>իս	էիր>էիր	եցար>եցար
ի>ի	էր>էր	եցաւ>եցաւ
իմք>ինք	էաք>էինք	եցաք եցանք
իք>իք	էիք>էիք	եցայք>եցաք
ին>ին	էին>էին	եցան>եցան

Հրամ.

	Դերբայներ	
եա՛ց>է	ան.	իլ>իլ
եցարո՛ւք>եցէք	ն.	ող>ող
	անց.	ած>ած
	»	եալ>եր
	ապ.	ելի-ք>ելիք
	»	ելոյ>ելու

Բ լծորդութիւն, բ տիպար

Ներկա	Անկատար	Կատարյալ
Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.
անիմ>նիմ, նեմ	անէի>նէի	ալ>ալ
անիս>նիս, նես	անէիր>նէիր	ար>ար
անի>նի	անէր>նէր	աւ>աւ
անիմք>նինք,նենք	անէաք>նէինք	աք>անք
անիք>նիք, նէք	անէիք>նէիք	ալք>ալք
անին>նին, նեն	անէին>նէին	ան>ան

Հրամ.

	Դերբայներ	
-ե՛ր>իր	ան.	անիլ>նիլ, նել
-արո՛ւք>էք	ն.	անող>նող
	անց.	ած>ած
	»	եալ>եր, ել

4125
1320
ՀԱՅԿ Ա Ս.Ռ. Գ.Ա ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека
ՀԱՅԿ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека

ապ. անելի-ք>նելիք
» անելոյ>նելու

Գ լծորդություն, բ տիպար

Ներկա	Անկատար	Կատարյալ
Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.
ամ>ամ	ալի>ալի	ացի>ացի
աս>աս	ալիր>ալիր	ացեր>ացիր
ալ>ալ	ալր>ար	աց>աց
ամք>անք	ալաք>ալինք	ացաք>ացինք
ալք>աք	ալիք>ալիք	ացէք>ացիք
ան>ան	ալին>ալին	ացին>ացին

Հրամ.

ա>ա
ացէք>ացէք

Դերբայներ

ան. ալ>ալ
ն. ացող>ացող
անց. ացեալ>ացել, ացեր
ապ. ալոց>ալու

Գ լծորդություն, բ տիպար

Ներկա	Անկատար	Կատարյալ
Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.	Գրբ. Աշխ.
անամ>[ա]նամ	անալի>[ա]նալի	ացայ>[ա]ցայ
անաս>[ա]նաս	անալիր>[ա]նալիր	ացար>[ա]ցար
անայ>[ա]նալ	անալր>[ա]նար	ացաւ>[ա]ցաւ
անամք>[ա]նանք	անալաք>[ա]նալինք	ացաք>[ա]ցանք
անայք>[ա]նաք	անալիք>[ա]նալիք	ացայք>[ա]ցաք
անան>[ա]նան	անալին>[ա]նալին	ացան>[ա]ցան

Հրամ.

ացիր>[ա]ցիր
ացարուք>[ա]ցէք

Դերբայներ

ան. անալ>[ա]նալ
ն. ացող>[ա]ցող
անց. ացեալ>[ա]ցել, ցեր
ապ. անալոց>[ա]նալու

Համեմատությունից երևում է, որ նեղկալի 6 տիպարների մեջ դրաբար և աշխարհաբար նույն են: Միայն հոգնակի Ա. դեմքի

մեջ մ դարձել է ն և Գ լծորդության ա և բ տիպարների հոգնակի Բ դեմքի մեջ այ դարձել է ա (ալք>աք): Առաջին երևույթի մասին, որ ավելի հեշտ արտասանության համար է, տես Ա. գիրք, էջ 402–3, իսկ երկրորդի մասին, որ ձայնավորների միակերպության օրենքի արդյունքն է, տե՛ս Ա. գիրք, էջ 403:

Անկատարի մեջ տարբերությունը երեք տեղ է. Ա և Բ լծորդության 4 տիպարների մեջ հաք գառնում է հինք, Գ լծորդության ա և բ տիպարների եզակի Գ դեմքի մեջ այ գառնում է ա (այր>ար, անայր>[ա]նար) և հոգնակի Ա. դեմքի մեջ այաք գառնում է այինք: Առաջինը նույնպես ձայնավորների միակերպության համար է. հաք գառնում է հինք, բայց, որովհետև սրանով հոգնակի Ա և Բ դեմքերը նույնանում են, գանազանության համար ավելանում է նաև ն ընդհանը: Մի խումբ բարբառներում անկատարի հաք վերջավորությունը գառնում է հանք. սա ցույց է տալիս, որ ո՛չ թե նախ ձայնավորների միակերպությունն է կատարված, որի պատճառով էլ ավելացել է հետո ն ընդհանը, այլ նախ ավելացել է ն ընդհանը՝ նմանողության համար ներկայի և կատարյալի հոգնակի Ա. դեմքի. ար միշտ ն կա (տիրանք, սիրեցինք), որից հետո հեշտության համար գործադրվել է ձայնավորների միակերպության օրենքը (հանք դարձել է հինք), բայց ո՛չ գեռ բոլոր բարբառների մեջ:

Երկրորդ փոփոխությունը (այր>ար) նույն է, ինչ որ ներկայում (ալք>աք), իսկ երրորդ փոփոխությունը (ալաք>ալինք) այդ երկուսի գումարն է:

Կատարյալի մեջ փոփոխությունները ամենից ավելի շատ են: Ամենից ավելի հավատարիմ ձևերն են Բ լծորդության ա և բ տիպարները և Գ լծորդության բ տիպարը. սրանց բոլորի վերջավորությունները ա ձայնավորով են (այ, ար, աւ, աք, այք, ան,—եցայ. եցար. եցաւ, եցաք, եցայք, եցան,—ացայ, ացար, ացաւ, ացաք, ացայք. ացան): Փոփոխությունը տեղի է ունեցել միայն հոգնակի Ա. դեմքի (աք>անք) և հոգնակի Բ դեմքի մեջ (ալք>աք): Առաջինի մեջ ն-ի հավելումը ներկայի Ա. դեմքի նմանության համար է, իսկ երկրորդի մեջ այ>ա ձայնավորների միակերպության համար է: Առանց ընդհանի հավելման այս երկու դեմքերը պիտի նույնանային:

Գ լծորդության ա տիպարի եզակի Գ դեմքի մեջ եաց>եց սովորական ձայնափոխության արդյունք է. մյուսները ձևացել են ձայնավորների միակերպության համար և հոգնակի Ա. դեմքն էլ՝ ընդհանի սովորական հավելումով:

Այսպես է նաև Ա. լծորդության բ տիպարը, ուր սակայն նորության է եզակի Գ դեմքի աւ վերջավորությունը: Գրաբարում այս վերջավորությունը չկա և բայի արմատն է միայն դրվում, որ և շփոթվում է հրամայականի հետ: Գրաբարում այս շփոթությունը կարող էր վերանալ նախահավելված ե-ի միջոցով: Աշխարհաբարում նախահավելվածը ջնջվելով, շփոթությունը անխուսափելի էր: Այս շփոթությունը վերացնելու համար, ահա, փոխ առին Բ լծորդության բ տիպարի աւ (հատաւ, ուսաւ) վերջավորությունը, որ դնվում էր նաև Բ լծորդության ա տիպարում և Գ լծորդության բ տիպարում (խօսեցաւ, մոռացաւ):

Հրամայականի մեջ անփոփոխ են մնում գրաբարի վերջավորությունները՝ Ա. լծորդության ա տիպարի հոգնակին (եցէ՛ք>եցէ՛ք), Ա. լծորդության բ տիպարի թե եզակին (—>—) և թե հոգնակին (էք>էք), Բ լծորդության բ տիպարի եզակին (իր>իր), Գ լծորդության ա տիպարի թե եզակին (ա>ա) և թե հոգնակին (ացէք>ացէք) և Գ լծորդության բ տիպարի եզակին (ացիր>ացիր), ընդամենը 7 դեպք՝ 12-ից:

Բայց Ա. լծորդության ա տիպարի եզակին էլ (ա>ե) պարզապես ձայնափոխության արդյունք է, որով գրաբարի և աշխարհաբարի հրամայականի նույնանման ձևերի դումարը լինում է 8:

Մնացյալ 4 ձևերը նմանողության համար խոշոր մեծամասնության կազմող մյուս լծորդությունների՝ սացաք է, էք, ացէք, եցէք վերջավորությունները: Այսպես Բ լծորդության ա տիպարի եզակի եաց վերջավորությունը՝ Ա. լծորդության ա տիպարի նման դարձավ ե, իսկ հոգնակիների եցարուք, արուք, ացարուք վերջավորությունները դարձան եցէք, էք, ացէք:

Աբևելահայ գրականում Ա. լծորդության ա տիպարի եզակի հրամայականի իր վերջավորությունը (փոխանակ է՛-ի) առաջանում է Բ լծորդության բ տիպարի (հագիր) և Գ լծորդության բ տիպարի (իմացիր) և մանավանդ արդելականի (մի սիրիր) նմանությամբ, ինչպես որ ամբողջ Բ լծորդության խոնարհումն էլ նմանողությամբ վերածված է առաջինին:

Ժողովրդական լեզվի մեջ, ինչպես որ հրամայականը ազդելով արգելականի վրա, տվել է նրան -եցէք մասնիկը, նույնպես արգելականը ազդելով հրամայականի վրա, տվել է նրան -էք մասնիկը. այսպես՝ խօսեցէք—մի խօսեցէք, մի խօսէք—խօսէք: Ոմանք գրական լեզվի մեջ էլ այս ձևերը գործ են ածում, ինչ որ ընդունելի չէ. օրինակ՝

Եկեք դուք էլ ձեր գործերի մասին պատմեք... խօսեք ձեր հիշողություններից (Միրաս, Զգր. օր. 303):

Գաւառական ձևեր են և գրականի մեջ խոտելի՝

Թողաւ իւր մօտ միայն ընտիր քաջերին (Հոմերի Իլիական, թրգմ. Ա. Վարդանեան, Թիֆլիս, 1886, էջ 216).— թողեց:

Ոչ ոք նրան չէր կարացնում բռնելու (անդ, 208):

Ապրէք ուրեմն, ով քաջեր (անդ, 92):

Դերբայների վերջավորության մասին ընդարձակ կխոսենք առանձին գլխով:

3. ԱՆԿԱՆՈՆ ԵՎ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Ա. ՋԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

Ա լծորդություն, ա տիպար

Գրաբարի ածել, բերել, հանել բայերը, ինչպես գիտենք, Ա լծորդության ա տիպարի զարտուղի բայերն են, որոնք կատարյալի, ապառնիի և հրամայականի մեջ հետևում են Ա լծորդության բ տիպարին: Աշխարհաբարում ապառնիի գրաբար ձևը ջնջված լինելով՝ միայն են կատարյալը և հրամայականը: Թե բարբառներում և թե արևելյան ու արևմտյան գրական լեզուներում այս երկու ձևերը մաքառում են զարտուղությունից կանոնավորության անցնելու համար: Արևելյան գրականում, կատարյալի մեջ երկքն էլ դարձել են կանոնավոր և խոնարհվում են՝

ածեցի	բերեցի	հանեցի
ածեցիր	բերեցիր	հանեցիր
ածեց	բերեց	հանեց
ածեցինք	բերեցինք	հանեցինք
ածեցիք	բերեցիք	հանեցիք
ածեցին	բերեցին	հանեցին

Արևմտյան գրականում ածել և հանել նույնպես վերածված են կանոնավորի, իսկ բերել միայն է անկանոն և կատարյալում լինում է՝

բերի	բերինք
բերիր	բերիք
բերավ	բերին

Այս վերջինը ընդունված է նաև արևելյան գրականում։

Հրամայականում անկանոնությունը շարունակվում է և թե արևելյան և թե արևմտյան գրականում միակ ձևն է բեր, բերէք։

Ասել բայը գրաբարում զարտուղի է. աշխարհաբարի մեջ նրա ժառանգներն են կոր. ասացի, հրմ. ասա՛։ Արևելյան գրականում մինչև այժմ էլ շարունակվում է՝

կոր. ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին
հրմ. ասա՛, ասացէ՛ք.

Բայց կա նաև սրա կանոնավորված ձևը՝

կոր. ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցին.

Նույնը ժողովրդական ձևով՝

կոր. ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին.
հրմ. ասէ՛ք։

Այս վերջինն է, որ միակ ընդունվածն է արևմտյան գրականում, ուր ա-ի սղմամբ ունենք՝

կոր. ըսի, ըսիր, ըսաւ, ըսինք, ըսիք, ըսին.
հրմ. ըսէ՛, ըսէ՛ք։

Ա լծորդություն, բ տիպար

Այս խոնարհումը, ինչպես ասացինք, հատուկ է միայն արևմտյան գրականին, ուր նրա առանձին գոյությունը քերականները չեն էլ ընդունում։ Արևելյան գրականում այս խոնարհման են պատկանում առնել, ելնել, տեսնել, գալնել։

Առնել բայը գրաբարի մեջ (առնում) պատկանում է Դ լծորդության և ունի զարտուղի խոնարհում։ Աշխարհաբարի մեջ սառնալով առնել ձևը՝ անցել է Ա լծորդության բ տիպարին և բավական կանոնավորել է խոնարհման ձևը։ Արևմտյան գրականում, Ա լծորդության բ տիպարի մեջ բոլորովին կանոնավոր է։ (Զարտուղի են համարում նրանք միայն, որ դնում են Ա լծորդության տիպարի ամք)։— Արևելյան գրականում կարելի է խոնարհել 2 ձևով.

առի	առա
առիր	առար
առավ	առաւ
առինք	առանք
առիք	առաք
առին	առան

Հրմ. առ, առէ՛ք։

Սրանցից առաջինը բոլորովին կանոնավոր է իրրև Ա լծորդության բ տիպար, միայն եթե կատարյալի եզակի Դ դեմքը պահենք առավ։ Երկրորդը կանոնավոր կդառնա Բ լծորդության բ տիպարի մեջ, միայն հրամայական ա՛ն կլինա անկանոն։

Ելնել, տեսնել՝ գրաբարի մեջ պատկանում են Ա լծորդության բ տիպարին և խոնարհվում են շատ կանոնավոր ձևով։ Աշխարհաբարում, թե արևմտյան և թե արևելյան գրականում, թեև պահել են գրաբարի հրամայական ե՛լ, տե՛ս (հոդնակի՝ ելէ՛ք, տեսէ՛ք) ձևերը, բայց կատարյալի մեջ դարձել են՝ ելա, ելար, ելավ, ելանք, ելաք, ելան, տեսա, տեսար, տեսավ, տեսանք, տեսաք, տեսան։ Ուստի եթե այս բայերը դնենք Ա լծորդության բ տիպարում, զարտուղի են կատարյալի կողմից, իսկ եթե դնենք Բ լծորդության բ տիպարում (ըստ արևելյան գրականի), զարտուղի են հրամայականի կողմից։

Զարնել բայի գրաբար ձևն է զարկանել, որ պատկանում է Ա լծորդության բ տիպարին և ունի կանոնավոր խոնարհում (կոր. զարկի, հրմ. զարկ)։ Աշխարհաբարում, այս զարկանել ձևը կորցնելով իր միջին ա ձայնավորը, դարձել է զարնել, որով կատարյալի զարկի և հրամայականի զարկ ձևերը համաբերում են անկանոն։ Բարբառներում, կանոնավորելու համար ամբողջը, զարկ արմատից կազմվել է զարկել, որ անցել է Ա լծորդության ա տիպարին։ Արևելյան աշխարհաբարում այս բայը խոնարհվում է մի քանի ձևով.

Կատարյալ

զարկի	զարկեցի	զարկա
զարկիր	զարկեցիր	զարկար
զարկավ	զարկեց	զարկաւ
զարկինք	զարկեցինք	զարկանք
զարկիք	զարկեցիք	զարկաք
զարկին	զարկեցին	զարկան

Հրամ.

բա՛ց	*բարձի՛ր*	*դարձի՛ր*
բացե՛ք	*բարձե՛ք*	*դարձե՛ք*

Դերբայներ

ան.	*բանալ*	*բառնալ*	*դառնալ*
ն.	*բացող*	*բարձող*	*դարձող*
անց.	*բացած*	*բարձած*	*դարձած*
»	*բացել (արևմտ. բացեր)*	*բարձել (արևմտ. բարձեր)*	*դարձել (արևմտ. դարձեր)*
ապ.	*բանալու*	*բառնալու*	*դառնալու*
»	*բանալիք*	*բառնալիք*	*դառնալիք*

Այս ևրևքից առաջինը և վերջինը գործածական են թե՛ արևվելյան և թե՛ արևմտյան գրականում: Երկրորդը սովորական է արևելյան գրականում, իսկ արևմտյան գրականում անսովոր կամ գավառական է:

Արևելյան գրականում բանալ անորոշի տեղ կա նաև բացել կամ բաց անել: Առաջինը խոնարհվում է՝

կտր. բացեցի, բացեցիր, բացեց, բացեցինք, բացեցիք, բացեցին. հրմ. բացիր, բացեցեք:

Բառնալ բայի փոխարեն արևելյան գրականում կա նաև բարձել, որ Ա. լծորդության ա տիպարի տակ խոնարհվում է կանոնավոր կերպով:

Դառնալ բայի ժողովրդական ձևերն են՝

Կատարյալ	Հրամ.	Դերբ.
դառա	*դա՛ռ*	*դառած*
դառար	*դառե՛ք*	*դառել*
դառավ		
դառանք		
դառաք		
դառան		

որոնցից պետք է խուսափել գրական լեզվում:

Դ լծորդություն

Դիտենք, որ գրաբարի Դ լծորդությունը քայքայված է և այս լծորդության պատկանող բայերը անցած են ուրիշ լծորդությանց:

Այստեղ ամենից դիմացկունն է եղել թողուլ բայը, որ դեռ կենդանի է արևմտյան գրականում և խոնարհվում է հետևյալ ձևով.

Ստոր. ներկ.	Ստոր. անկ.	Կատարյալ
թողում	*թողուի*	*թողուցի*
թողուս	*թողուիր*	*թողուցիր*
թողու	*թողուր*	*թողուց*
թողունք	*թողուինք*	*թողուցինք*
թողուք	*թողուիք*	*թողուցիք*
թողուն	*թողուին*	*թողուցին*

Հրամ.	Դերբայներ	
թո՛ղ	*ան.*	*թողուլ*
թողուցէ՛ք	*ն.*	*թողող, թողուցող*
	անց.	*թողած, թողուցած*
	»	*թողուցեր*
	ապ.	*թողելիք*
	»	*թողելու*

Գործ է ածվում նաև թող տալ, ուր խոնարհվում է միայն տալ բայը:

Արևելյան գրականում թողուլ բայը առացել է երկու ձև՝ թողել և թողնել: Առաջինը պատկանում է Ա. լծորդության ա տիպարին, երկրորդը՝ նույն լծորդության բ տիպարին: Ահա երկուսի խոնարհումը.

Ստորադասական ներկա

թողնեմ	*թողնենք*
թողնես	*թողնեք*
թողնե, թողնի	*թողնեն, -նին*
թողնենք	*թողնենք*
թողնեք	*թողնեք*
թողնին	*թողնեն*

Ստորադասական անկատար

թողնեի	*թողնեինք*
թողնեիր	*թողնեիք*
թողներ	*թողնեին*

թողնինք	թողնինք
թողնիք	թողնիք
թողնին	թողնին

Կատարյալ

թողնցի	թողի
թողնցիր	թողիր
թողնց	թողավ
թողնցինք	թողինք
թողնցիք	թողիք
թողնցին	թողին

Հրամ.

—	թո՛ղ
—	թողե՛ք

Դերբայներ

թողնել	թողնել
թողած	թողնող
թողել	թողած
	թողել
	թողնել
	թողնելու

Այս բոլորից՝ ավելի սովորական են առորադասական ներկա թողնեմ, *առորադասական անկատար* թողնեի, *կատարյալ* թողեցի, *հրամայական* թո՛ղ, թողե՛ք *և դերբայների* թողնել *շարքը։*

Բ. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

1. Ա ճ ե լ = ը ն ե լ

Առորադասական ներկա

Արևելյան	Արևմտյան
անեմ	ընեմ
անես	ընես
անե, անի	ընե
անենք	ընենք
անեք	ընեք
անեն	ընեն

Առորադասական անկատար

անեի	ընեի
անեիր	ընեիր
աներ	ըներ
անեինք	ընեինք
անեիք	ընեիք
անեին	ընեին

Կատարյալ

արի, արեցի		ըրի
արիր, արեցիր		ըրիր
արավ, արաւ		ըրաւ
արինք, արեցինք	Հրամ.	ըրինք
արիք, արեցիք	արա՛=ըրէ	ըրիք
արին, արեցին	արե՛ք=ըրէ՛ք	ըրին

Դերբայներ

ան.	անել=ընել
ն.	անող=ընող
անց.	արած=ըրած
»	արել=ըրեր
ապ.	անելիք=ընելիք
»	անելու=ընելու

2. Դ ն ե լ

Առորադասական ներկա

դնեմ
դնես
դնե (արևել. դնի)
դնենք
դնեք
դնեն

Առորադասական անկատար

դնեի
դնեիր
դներ
դնեինք
դնեիք
դնեին

Կատարյալ

Արևմտ. արևել.

դրի	դրի, դրեցի	
դրիր	դրիր, դրեցիր	
դրավ	դրավ, դրեց	

Հրամ.

դի՛ր
դրե՛ք (արևել. նաև՝ դրեցէ՛ք),

Դերբայներ

ան.	դնել
ն.	դնող
անց.	դրած

դրինք	դրինք,	դրեցինք	
դրիք	դրիք,	դրեցրիք	
դրին	դրին,	դրեցին	

անց. դրել (արևմտ. դրեր)
ապ. դնելու
» դնելիք

3. Ունել

Ստորադասական ներկա	Ստորադասական անկատար
ունեմ	ունեի
ունես	ունեիր
ունե (արևել. ունի)	ուներ
ունենք	ունեինք
ունեք	ունեիք
ունեն	ունեին

Կատարյալ	Հրամ.
կերա	կեր
կերար	կերեք
կերավ	
կերանք	
կերաք	
կերան	

Դերբայներ

անց. ուտել
ն. ուտող, կերող
անց. կերած
» կերել (արևմտ. կերեր)
ապ. ուտելու
» ուտելիք

4. Տանիլ

Ստորադասական ներկա		Ստորադասական անկատար
Արևմտ.	արևել.	
տանիմ	տանեմ	տանեի
տանիս	տանես	տանեիր
տանի	տանե, տանի	տաներ
տանինք	տանենք	տանեինք
տանիք	տանեք	տանեիք
տանին	տանեն	տանեին

Կատարյալ		Հրամ.
Արևմտ.	արևել.[1]	
տարի	տարա	տար
տարիր	տարար	տարեք

Դերբայներ

անց. տանիլ (արևել. տանել)
ն. տանող (» տարող)
անց. տարած
» տարել (արևմտ. տարեր)
ապ. տանելու
» տանելիք

[1] Քիչ գործածական են տարի, տարիր..., տարեցի, տարեցիր, տարեց... ձևերը:

տարավ	տարավ
տարինք	տարանք
տարիք	տարաք
տարին	տարան

5. Գալ

Ստորադասական ներկա	Ստորադասական անկատար	Կատարյալ
գամ	գալի	եկա
գաս	գալիր	եկար
գա	գար	եկավ
գանք	գալինք	եկանք
գաք	գալիք	եկաք
գան	գալին	եկան

Հրամ.	
Արևել.	արի, արիք, եկեք
Արևմտ.	եկուր, եկէք

Դերբայներ

անց. գալ
ն. եկող
անց. եկած
» եկել (արևմտ. եկեր).
ապ. գալու
» գալիք

6. Երթալ[1]

(արևմտ. գրական)

Ստորադասական ներկա	Ստորադասական անկատար	Կատարյալ[2]
երթամ	երթայի	գացի
երթաս	երթայիր	գացիր
երթա	երթար	գնաց
երթանք	երթայինք	գացինք
երթաք	երթայիք	գացիք
երթան	երթային	գացին

[1] Արևելյան գրականության մեջ գործածական է սրա տեղ գնալ, ու կանոնավոր է. բարբառային ձև է համարվում երթալ:

[2] Գավառականն ձև են համարվում. գնացի, գնացիր, գնացինք, գնացիք, գնացին. հրմ. գնացե՛ք. դերբ. գնացող. գնացած, գնացիր (թեև սրանք ավելի մոտ են գրաբարին և այժմ էլ գործածական են արևելյան գրականության):

Հրամ.	Դերբայներ	
գնա	*ան.*	*երթալ*
գացէք	*ն.*	*գացող*
	անց.	*գացած*
	»	*գացեր*
	ապ.	*երթալու*
	»	*երթալիք*

7. Տալ

Սաորադասական ներկա	Սաորադասական անկատար	Կատարյալ արևել. ճառ	
տամ	*տայի*	*տվի*	*տվեցի*
տաս	*տայիր*	*տվիր*	*տվեցիր*
տա	*տար*	*տվաւ*	*տվեց*
տանք	*տայինք*	*տվինք*	*տվեցինք*
տաք	*տայիք*	*տվիք*	*տվեցիք*
տան	*տային*	*տվին*	*տվեցին*

Հրամ.	Դերբայներ	
տո՛ւր	*ան.*	*տալ*
տուէք	*ն.*	*տվող*
	անց.	*տված*
	»	*տվել (արևմտ. տուեր)*
	ապ.	*տալու*
	»	*տալիք*

Գ. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Գրաբարը ուներ 12 անկանոն բայ, որոնք են առնել, դնել, ըմպել, լսել, ճանաչել, յառնել, ուսել, ուճել, տանիլ, գալ, երթալ, տալ: Սրանցից ըմպել, յառնել իրրև բառ չնչվեցին լեզվից, լսել, ճանաչել և ուճիլ կանոնավորի վերածվեցին, որով անկանոն բայերի թիվը իջավ 7-ի:

Ահա այս մի քանի բայերի անցյալ պատմութիւնը.

Ըմպեմ բայը արդեն կանոնավորի վերածվել էր. այնպես որ ունենք արդեն կատարյալ ըմպեցաց (Վ.բք. հց. Բ 293) և հրամ.

ըմպեա՛ (փխ. ա՛ր) (Վ.բք. հց. Բ 357): Սակայն խմել ժողովրդական ձևը վերջապես հաղթել է նրան և ըմպել նույնիսկ կանոնավորի վերածվելուց հետո չնչվել է: Գուցե և այս ըմպեա, ըմպեաց ոչ թե կանոնավոր ձևերն են, այլ ապացույց, որ այդ բայը չնչված էր լեզվից և ուժեղ «գրաբարագետ»-ը, ուզենալով գրաբար գրել, հնարել է այդ ձևերը:

Ճանաչել բայի գլխավոր անկանոնությունը կատարյալի մեջ էր (ծանեայ), որից էր հրամայական ծանի՛ր: Կանոնավորի վերածելու համար պետք էր միայն խոնարհման ձևը փոխել. սրա համեմատ էլ առաջացավ կար. ճանաչեաց (փխ. ծանեաւ) ձևը, որ գտնում ենք երկու անգամ Վ.բք. հց. ա 387:

Ավելի շատ են լսել բայի կանոնավոր խոնարհման հետքերը. ինչպես՝

լսեալ համ «լսել ենք» Վ.բք. հց. ա 219.
լսեաց «լսեց» Վ.բք. հց. բ 82. Վ.բք. և վկ. բ 105.
լսեցաք «լսեցինք» Վ.բք. հց. բ 460.
լսեալ լինէին. Փիլ. յոթն. 600.
լսեալ էր. Պղատ. սոկր. 68.
լսեալ. Պղատ. տիմ. 83.
լսեցուք (փխ. լսիցուք) Պղատ. օրին. 217.
լսեա (լսուր) Վ.բք. և վկ. ա 541.

Ունիմ բայի անկանոնություններն են կար. կալայ, հրամ. կա՛լ, անց. դերբ. կալեալ: Սրանից էլ կազմվում են նաև ընդունիմ, կար. ընկալայ, հրմ ընկա՛լ: Կանոնավոր խոնարհման առաջին հետքը ցույց է տալիս Վ.բք. հց. ա 720 հրմ. ընդունեա՛ (փխ. ընկա՛լ):

Առնեմ բայը անկանոն է. ահա նրա կատարյալի պատկերը նախ գրաբար, ապա Պոլսի և Երևանի բարբառներով.

Գրբ.	Պլ.	Երև.
առի	*առի*	*առա*
առեր	*առիր*	*առար*
առ (էառ)	*առավ*	*առավ*
առաք	*առինք*	*առ՛անք*
առէք	*առիք*	*առաք*
առին	*առին*	*առան*

Փոփոխության պատճառը, կարծում եմ, առ և առէք ձևերն

են, որոնք նույն են հրամայականի հետ: Այս պատճառով առ դարձել է առավ և առեք դարձել է առիք (Պլ.): Պոլսի բարբառում այս երկու ձևերը առաջանալուց հետո ամբողջը կապվեց բերել բայի կատարյալի հետ (բերի, բերիր, բերավ, բերինք, բերիք, բերին) և նրա նմանությամբ ամբողջը ձևակերպվեց վերի ձևով: Իսկ Երևանի բարբառով առավ ձևը առացվելուց հետո, ամբողջը ձևակերպեցին տեսնել բայի կատարյալի նման (տեսա, տեսար, տեսավ, տեսանք, տեսաք, տեսան) և առացվեց վերի ձևը:

Սրանք հետևացման առաջին քայլերն էին, որով խոնարհման դժվարությունները դրվեթե կես առ կես հարթվեցին:

Անկանոն բայերի բուն դժվարությունը խոտորնակ ժամանակների մեջ է: այն է՝ կատարյալը, ապառնին, հրամայականը և անցյալ դերբայը: Միջին հայերենում և աշխարհաբարում ապառնիի կազմությանն եղանակը ամբողջապես վերացվեց, որով արվեց երկրորդ քայլը՝ անկանոն բայերի խոնարհման հետևացման գործում:

Տալիս ենք այստեղ ետացյալ ձևերի բացատրությունը.

1. Առնել գրաբարի առնել բայն է, որ միջին հայերենում արդեն դարձել էր այնել: Շատ գործածական բառերը հեշտությամբ ենթարկվում են անկանոն ազդեցների. առնել բայն էլ, որ իբր օժանդակ շատ գործածական էր, հեշտությամբ մաշվեց և այնել դարձավ առնել և վերջապես ընել: Կատարյալի մեջ արարի ամփոփման (haplologie) օրենքով դարձավ արի (կրճատ ըրի), որ վերջն էլ կանոնավորի վերածվելով՝ Ա. լծորդության ա տիպարի համաձայն դարձավ արեցի: Հրամայականի եղակի արա՛ ձևը (արևելյան գրականում) դեռ հավատարիմ է գրաբարին և միջին հայերենին. սակայն արևմտահայերեն ըրե՛ վերածվել է կանոնավորի (ինչպես սիրե՛):

2. Դնել բայը ներկայի, անկատարի և եզակի հրամայականի մեջ (դիր) նույն է գրաբարի հետ: Հոգնակի հրամայական դի՛ք բոլորովին անարտահայտ մի ձև էր. դի՛ր եզակին թվելադրեց նրան դրե՛ք ձևը, ինչպես բե՛ր—բերե՛ք, տա՛ր—տարե՛ք: Ավելի հետո այս դրե՛ք ձևն էլ ավելի կանոնավորվելով դարձավ դրեցե՛ք: Սրանից առացվեց անցյալ դերբայի դրեալ ձևը, որ ունի արդեն վրք. հց. ա 594, 595, բ 89: Կատարյալի (եդի—դրի) ձևափոխության վրա արդեն խոսել ենք. միայն այստեղ դրի ավելի կանոնավորվելով դարձել է արևելյան գրականում դրեցի (ինչպես սիրեցի, բերեցի):

3. Ուտել բայը ծայրից ծայր խոնարհվում է գրաբար ուտեմ բայի ոճով. տարբեր է միայն հոգնակի հրամայական կերայք, որ

առացել է սովորական -եք վերջավորությունը, հենց թեկուզ չշփոթվելու համար կատարյալ հոգնակի Բ դեմքի հետ (կերայք):

4. Տանիլ բայն էլ ընդհանրապես գրաբարի հետ նույն է. այսպես ներկան, անկատարը, եզակի հրամայական առ՛ և անցյալ դերբայ առաբալ>առաբել, տարեր: Տարեր է նախ՝ հոգնակի հրամայական տարայք, որ կատարյալ հոգնակի Բ դեմքի հետ (տարայք) չշփոթվելու համար, նախորդի նման (կերայք) առացել է տարիք ձևը: Երկրորդ՝ տարեր է կատարյալը, որ թեև արևելյան գրականում բոլորովին նույն է գրաբարի հետ (տարա), բայց արևմտյան գրականում դարձել է տարի: Այս փոփոխությունը առաջացել է ոչ թե նրա համար, որ տարա նման է կրավորականի ձևին, այլ բերի բայի նմանությամբ: Տանիլ այնպիսի բայ է, որ մշտապես գործածվում է բերել բայի հետ միասին, ինչպես տանել-բերել, տար ու բեր, այսպես և տարի-բերի: Տարի ձևն առանալուց հետո էլ, հետևելով Ա. լծորդության ա տիպարին, դարձել է կանոնավոր կերպով տարեցի և այլն:

5. Գալ բայը նույն է գրաբարի հետ միայն ներկայի, անկատարի և դերբայի մեջ, իսկ կատարյալում և հրամայականում բոլորովին տարբերվում է: Դյուրին է բացատրել հոգնակի հրամայական եկայք ձևը, որ համաձայն նախորդներին (կերայք, տարայք) դարձել է եկեք: Եզակի հրամայական արի (սրանից էլ՝ արիք) ձևի բացատրությունը արդեն տրված է վերը: Կատարյալի ձևափոխությունը եղել է հետևյալ ձևով: Հոգնակի Ա. դեմքն է եկար, որ պիտի տար աշխարհաբար եկանք, իսկ հոգնակի Բ դեմքն էլ դարձել էր եկայք, որ պիտի տար աշխարհաբար եկաք: Այս երկուսի (եկանք և եկաք) ա ձայնավորը ազդից ետացյալի վրա և նմանության օրենքով բոլորն էլ դարձան ա:

6. Երթալ նույն է գրաբարի հետ՝ ներկայի և անկատարի մեջ. իսկ կատարյալի, հրամայականի և դերբայների մեջ բոլորովին տարբերվում է: Բայց տարբերությունը ձայնափոխության արդյունք չէ: Գրաբարի չոգայ ձևը անսովոր է դարձել (գուցե այստեղ դեր ունի նաև չոքել «ծռմռը դնել» բայը): Հետին հայերենում մինչև իսկ ունենք հրամայական չո՛ր «գնա» (վրք. և վկ. Ա. 30, Բ. 260). ավելի ուշ չորայ փոխանակվել է շատ ավելի սովորական գնալ բայի կատարյալով: Կատարյալին հարակից են միշտ հրամայականն ու դերբայները, որոնք նույնպես հետևանքով երթալ բայից, առացել են գնալ բայի համապատասխան ձևերը:

7. Տալ բայը նայն է գրաբարի հետ նեղկալի, անկատարի, եզակի հրամայական (տո՛ւր, ներկա և անցյալ դերբայ (տուող, տուեալ>տվել) ձևերի մեջ: Տարբեր են կատարյալը և հոգնակի հրամայականը: Այս վերջինը եզակի ձևի հետ (տո՛ւր) ճիշտ այն հարաբերութիւնն ունի, ինչ որ դնեմ բայի հրամայականը (դի՛ր, դի՛ք): Եվ ինչպես որ դի՛ք իրրև բոլորովին անաբառահատ ձև գործած դրի՛ք, նմանապես տո՛ւր գործած տվի՛ք, ուր հայանի կերպով երեում են թե՛ տու արմատը և թե՛ -ք հոգնակի վերջավորութիւնը: Կատարյալի մեջ բոլոր ձևերն էլ՝ միասնակ լինելու բռնութեան: Կատարյալի մեջ բոլոր ձևերն էլ՝ միասնակ լինելու պատճառով ատում էին և նախահավելվածը, ինչ որ վատրվել էր լեզվից: Կատարյալի հոգնակի Ա. դեմքը (տուաք) զուրկ էր արդեն այդ հավելվածից և ավելի լավ էր պահպանում արմատը: Ահա այս ձևը ծառայելով իրրև նմուշ կամ օրինակ, Ա. դեմքի տու ձևն էլ գործած տուի և սրա հետևութեամբ էլ՝ մյուս դեմքերը:

Տալ բայի բայլայումը շատ շատ էր սկսած. ապացնի տաց ձևը այնպիսի անտոկոր վերջավորութեան ուներ, որ կարծես թե հրամայական լիներ, ինչպես՝ բա՛ց, կո՛ց, լո՛ց. ատոի շատով փոխեին և գործածին տացից (ինչպես՝ բացից, լացից, կացից), որ արդեն գործածական է Պատ. օրին. 365:

Դ. ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Ա. Գրաբարի պակասավոր բայերից աշխարհաբարում կենդանի են միայն հետևյալ երկու բայերը.

1) Եմ, ես, է, ենք, եք, են. անկ. էի, էիր, էր, էինք, էիք, էին.

2) կա, որ խոնարհվում է՝

ներկ. կամ. կաս. կա, կանք, կաք, կան.

անկ. կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային:

Սրանցից առաջինը լրանում է լինել (ըլլալ) բայով, իսկ երկրորդը լինել (ըլլալ կամ գտնվել բայով: (Սրա անորոշի տեղ գործածել կենալ բայը՝ ամենաբանութեան է. օրինակ՝ բայց գավաթին մեջ թույն կենալը (այսինքն՝ գտնվելը) ոչ ոք գիտեր: Իսկ այս նայն իմաստով կա լալ ձևը թրքաբանութեան է (ռուս. var olmaq, բառ Աբան., էջ 79):

Գրաբարի մյուս պակասավոր բայերից գոյցես «կարծեաց», գուցե, մի՛ գուցե աշխարհաբարի մեջ գործ են ածվում իրր առանձին բառ և նրանց նախադրյալ բայական ձևեր լինելը բոլորովին անդգալի է:

Բ. Միջին հայերենից ժառանգելով՝ աշխարհաբարը ունի պակասավոր բայերի մի երկրորդ խումբ, որ կազմվում է միևնույն բայի երկու տարբեր լծորդութիւններից կամ տիպարից: Սրանք են՝

1. Ունիմ—ունենամ.

ներկ. ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին.

անկ. ունէի, ունէիր, ունէր, ունէինք, ունէիք, ունէին.

սահր. ներկ. ունենամ, ունենաս, ունենա, ունենանք, ունենաք, ունենան.

սահր. անկ. ունենայի, ունենայիր, ունենար, ունենայինք, ունենայիք, ունենային.

կար. ունեցա, ունեցար, ունեցավ, ունեցանք, ունեցաք, ունեցան.

հրամ. ունեցիր, ունեցե՛ք.

դերբ. ունենալ, ունեցած, ունեցել (=ունեցեր), ունեցող, ունենալու, ունենալիք:

2. Գիտեմ—գիտենամ (գիտնամ).

ներկ. գիտեմ, գիտես, գիտե, գիտենք, գիտեք, գիտեն.

անկ. գիտէի, գիտէիր, գիտէր, գիտէինք, գիտէիք, գիտէին.

կար. գիտցա, գիտցար, գիտցավ, գիտցանք, գիտցաք, գիտցան (արևելահայ գրականում գործածական են այս ձևերը՝ ճիշտ ինչպես արևմտահայ գրականում: Բայց արևելահայ լեզվով պետք է ասել գիտեցայ, գիտեցար և այլն, որոնք սակայն սակավ են գործածական: Լավագույն է համարվում ասել իմացա, իմացար, իմացավ և այլն).

սահր. ներկ. արևմտ. գիտնամ, գիտնաս, գիտնա, գիտնանք, գիտնաք, գիտնան=արևել. գիտենամ, գիտենաս, գիտենա, գիտենանք, գիտենաք, գիտենան.

սահր. անկ. արևել. գիտենայի, գիտենայիր, գիտենար, գիտենայինք, գիտենայիք, գիտենային=արևմտ. գիտնայի, գիտնայիր, գիտնար, գիտնայինք, գիտնայիք, գիտնային.

հրամ. գիտցիր, գիտցե՛ք.

դերբ. գիտենալ (=գիտնալ), գիտեցող (=գիտցող) գիտեցած (=գիտցած), գիտենալու, գիտենալիք (=գիտնալու, գիտնալիք):

3. Կրնամ—կարենամ.

Ներկ. կրնամ, կրնաս, կրնա, կրնանք, կրնաք, կրնան.
անկ. կրնայի, կրնայիր, կրնար, կրնայինք, կրնայիք, կրնային.
կար. կրցա, կրցար, կրցավ, կրցանք, կրցաք, կրցան.
հրմ. կրցիր, կրցե՛ք.
ապառ. ներկ. կարենամ, կարենաս, կարենա, կարենանք, կարենաք, կարենան.
ապառ. անկ. կարենայի, կարենայիր, կարենար, կարենայինք, կարենայիք, կարենային.
դերբ. կրնալ, կարենալ, կրցող, կրցած, կրցեր:
Ամբողջ այս բայը արեւմտահայ ձեւով է:

Արեւելյան գրականում սովորական են միայն ապառազատական ներկա կարեցամ... և ապառազատական անկատար կարեցայի... ձեվերը: Մնացյալի համար գրական լեզուն գործ է ածում կարողացավ կամ կարող եմ բայերը: (Գավառական են ներկա՝ կարամ, կարաս, կարա, կարանք, կարաք, կարան, կատարյալ՝ կարացի, կարացիր, կարաց, կարացինք, կարացիք, կարացին, նաև ներկ. կարում եմ, անկատար կարում էի և այլն: Այս բոլորը գրականում խոտելի են):

4. Ուզեմ—ուզեցամ.

Ներկ. ուզեմ, ուզես, ուզե, ուզենք, ուզեք, ուզեն.
անկ. ուզեի, ուզեիր, ուզեր, ուզեինք, ուզեիք, ուզեին.
կար. ուզեցի, ուզեցիր, ուզեց, ուզեցինք, ուզեցիք, ուզեցին.
հրմ. ուզե՛, ուզեցե՛ք.
ապառ. ներկ. ուզենամ, ուզենաս, ուզենա, ուզենանք, ուզենաք, ուզենան.
ապառ. անկ. ուզենայի, ուզենայիր, ուզենար, ուզենայինք, ուզենայիք, ուզենային.
դերբ. ուզել=ուզենալ, ուզող=ուզեցող, ուզած=ուզեցած, ուզեր=ուզեցեր, ուզելիք=ուզենալիք, ուզելու=ուզենալու:

Այս բայն էլ ամբողջապես գործածականն է արեւմտահայ գրականում: Նույնը ընդունված է նաև արեւելահայ գրականում (կար. նաև ուզեցա, հրմ. ուզի՛ր, դերբ. ուզեցել):

5. Լվամ—լվանամ.

ապառ. ներկ. լվանամ, լվանաս, լվանա, լվանանք, լվանաք, լվանան.

ապառ. անկ. լվանայի, լվանայիր, լվանար, լվանայինք, լվանայիք, լվանային.
կար. լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին.
հրմ. լվա՛, լվացե՛ք.
դերբ. լվանալ, լվացող, լվացած, լվացել, լվանալու, լվանալիք:

Այս խոնարհումը հատուկ է արեւելյան գրականին (բայի մի մասը Գ լծորդության ը ուղղությամբ, ենթալյալը՝ ա ուղղությամբ): Իսկ արեւմտահայ գրականում ամբողջը կանոնավոր կերպով և միօրինակ խոնարհվում է Գ լծորդության ա ուղղությամբ՝ լվալ ձեւով:

6. Արժել—արժեցամ.

Ներկ. արժեմ, արժես, արժե, արժենք, արժեք, արժեն.
անկ. արժեի, արժեիր, արժեր, արժեինք, արժեիք, արժեին.
կար. արժեցի, արժեցիր, արժեց, արժեցինք, արժեցիք, արժեցին.
հրմ. արժեցե՛ք, արժեցե՛ք.
դերբ. արժել, արժենալ, արժող, արժեցած, արժելու կամ արժենալու, արժելիք:

Այս խոնարհումը հատուկ է արեւելյան գրականին.

7. Կենալ—կալ.

ապառ. ներկ. կենամ, կենաս, կենա, կենանք, կենաք, կենան.
ապառ. անկ. կենայի, կենայիր, կենար, կենայինք, կենայիք, կենային.
կար. 1. կեցալ, կեցար, կեցավ, կեցանք, կեցաք, կեցան.
2. կացա, կացար, կացավ, կացանք, կացաք, կացան.
հրմ. կա՛ց, կացե՛ք (անսովոր է՝ կեցիր, կեցե՛ք).
դերբ. կացող կամ կեցող, կենող, կացած կամ կեցած, կացել կամ կեցել, կենալու, կենալիք:

Այս խոնարհումը հատուկ է արեւելահայ գրականին, ուր կենալ ունի «մնալ, բնակվել» իմաստը. բայց նաև «կանգ առնել, դադարել գնալուց»: Ավելի սովորական են ասց կենալ, վեր կենալ, ինչպես նաև զգույշ կենալ ոճերի մեջ: Բայց առանձին գործածության դեպքում կատարյալը լինում է առաջին ձեւով (կեցա, զգույշ կեցա), իսկ ոճերի մեջ՝ կացա ձեւով (անց կացա, վեր կացա):— Արեւմտահայ գրականում կա միայն կենալ, որ խոնարհվում է բոլորովին կանոնավոր կերպով՝ Գ լծորդության ը ուղղության համեմատ (կենամ, կեցա, կեցիր, կեցած և այլն):

8. Ցանկալ—ցանկանալ.

Ներկ. ցանկամ, ցանկաս, ցանկա, ցանկանք, ցանկաք, ցանկան.

անկ. ցանկալի, ցանկալիր, ցանկար, ցանկալինք, ցանկայիք, ցանկալին.

կոր. ցանկացայ, ցանկացար, ցանկացավ, ցանկացանք, ցանկացաք, ցանկացան.

հրմ. ցանկացիր, ցանկացինք.

ստոր. Ներկ. ցանկանամ, ցանկանաս, ցանկանա, ցանկանանք, ցանկանաք, ցանկանան.

ստոր. անկ. ցանկանալի, ցանկանալիր, ցանկանար, ցանկանալինք, ցանկանալիք, ցանկանալին.

դերբ. ցանկացող, ցանկացած, ցանկացել, ցանկանալու, ցանկանալիք:

Հատուկ է արևելյան գրականին. արևմտահայ գրականում անսովոր է և համարվում է հնարան լեզու. օրինակ՝ Ռուսինյանի երգը՝ «Ցանկամ տեսնել գիմ Կիլիկիա»: Արդի լեզվով ասվում է միայն փափաքիլ *(իսկ ցանկալ կամ ցանկանալ պիտի նշանակեր «մոլական ցանկութիւն ունենալ»):*

9. Երևիլ—երևալ.

Ներկ. երևիմ, երևիս, երևի, երևինք, երևիք, երևին.

անկ. երևալի, երևալիր, երևար, երևալինք, երևալիք, երևալին.

կոր. երևացի, երևացիր, երևաց, երևացինք, երևացիք, երևացին.

հրմ. երևիր, երևացէք.

ստոր. Ներկ. երևամ, երևաս, երևայ, երևանք, երևաք, երևան.

ստոր. անկ. երևալի, երևալիր, երևար, երվալինք, երևալիք, երևալին.

դերբ. երևացող, երևացել, երևացած, երևալու, երևալիք:

Հատուկ է արևելահայ գրականին, իսկ արևմտահայ գրականում ունենք՝ Ներկա երևիմ, երևամ, անկատար երևեի, երևայի, կատարյալ երևցա, հրամայական երևա՛, երևցի՛ր, երևացե՛ք, դերբայ երևցող, երևցեր, երևցած, երևնալու, երևնալիք, *որոնք առաջանում են երևնալ բայից:*

Գ. Պակասավոր բայերի մի երրորդ խումբ են կազմում մի քանի դրաբար բայեր, որոնց անորոշը, ներկան և ներկայից կազմված ձևերն են միայն գործածվում աշխարհաբարի մեջ: Իսկ ենթակայալը (կատարյալ, հրամայական և այլն) կամ բնավ չեն գործածվում և կամ, որ նույն է՝ աշխարհաբարին հատուկ ձևերով միայն: Այս կարգի բայերը ավելի սովորական են արևմտահայ գրականում, որ հին հայերենի պերճաբանությանն սիրահար է միշտ. օրինակ՝ երգնուլ, գրօանուլ, հեղուլ, գեղուլ, բեկանել, ուսանիլ, շիջանիլ, գիջանիլ, հարուցանել, գեկուցանել, ուսուցանել, մատուցանել, մարմնչիլ և այլն:

Աբևելահայ գրականում սովորական են խնդրեմ, կարծեմ՝ կարծես, ճոխասամ, որոնց ենթակայալ ձևերը աշխարհաբարի համեմատ են: Հուսամ բայը խոնարհվում է հույս ունեմ, հույս ունիս, հույս ունեի, հույս ունեցա, հույս ունեցիր և այլն:

Ե. ԱՆԴԵՄ ԲԱՅԵՐ

Անդեմ (դիմազուրկ կամ միադեմ) կոչվում են այն բայերը, որոնք գործածվում են միայն եղակի Գ դեմքով:

Աշխարհաբարում մենք կարող ենք այս կարգի բայերը բաժանել 6 տեսակի.

1. Բուն անդեմ բայեր, որոնք են՝

պետք է	հերիք է
հարկ է	ամօթ է
արժան է	անկ է (պատշաճ է)
հնար է	կվալլէ (կվալլէ)
մեղք է	կօգտե
բավ է	կբավե
	ընկնում է (ինձ, քեզ և այլն)

Այսն., 81, որանց է կցում նաև՝ «աչքս կզօրէ (ածկ. ոճով՝ աչքս չի կարեր, որչափ որ աչքդ կառնե), խելքս չ'տարիկեր (հին ձև), խելքդ կկորչի» ձևերը:

Միևնույն ժամանակ ավելացնում է, որ վերոհիշյալներից ամօթ է, պետք է, մեղք է այնպես են՝ ինչպես այլևայլ գոյականներով ասելինք պարծանք է, պատիվ է, թշնամանք է և այլն:

Այսն., 81, սրանց հետ դնում է նաև պետք եմ, որի խոնարհյալ ձևերով էլ տալիս է հետևյալ օրինակները. պետք եմ երթալ, պետք ես մտնել, պետք ենք հարցնել, պետք էիր տեղեկանալ

և այլն։ Այս ձևերը, որ Վիեննայի Մխիթարյանները մինչև այսօր էլ գործ են ածում իրենց գրվածքների, և մինչև իսկ իրենց խոսակցության մեջ, իսպառ գրված է գոլությունից թե՛ արևմտյան և թե՛ մանավանդ արևելյան գրականից։ Բայց դեպքերումն էլ ասվում է, պետք է երթամ, պետք է մտնես, պետք է հարցնենք, պետք է անդնդանալիր և այլն։ Իսկ եթե անհրաժեշտ է բայական ձև տալ, պետք է ասել՝ պարտավոր եմ երթալ, պարտավոր ես մտնել, պարտավոր ենք հարցնել, պարտավոր էիր տեղեկանալ և այլն։

Արևելյան գրականում սովորական է նաև կարիք կա (կարիք կա՛, կարիք չկա) փոխանակ ասելու պետք է։ Այս ձևը արևմտյան գրականում անսովոր է։ Ըստ Ալոն., 81, հնները գործածում էին կարիք բառը թե՛ իբրև անդեմ և թե՛ իբրև դիմավոր. ինչպես՝ կարիք լինի որ այլ աւելի տաս.— կապի գետինն, հանց որ կարիք լինիցիս ի կակղցընել (ԺԲ դար)։

Պիտի ձևի մասին իբրև անդեմ բայ՝ տես առոլե։

2. Բնության երևույթների համար, ինչպես՝ անձրևում է, փայլատակում է, որոտում է, ամպել է, ձյունում է կամ ձյուն է գալիս, կայծակին է տալիս (կայծակում է) և այլն։ Սրանք է գալիս, կայծակին է տալիս (կայծակում է) և այլն։ Սրանք սակայն իսկական անդեմ բայեր չեն. հնագույն նրանց ենթական երկնային ոգին կամ այլ մի էակ էր. այժմ էլ կարող ենք ասել՝ ամպը որոտում է, երկինքը ամպել է։ Իսկ եթե երկինքը կամ ամպերը լեզու առնեին, գոնե բանաստեղծության մեջ, այս բոլոր անդեմները դիմավոր պիտի դառնային։

3. Կենդանիների ձայները համարվում են անդեմ կամ պակասավոր, որովհետև ըստ հարմարության գործածվում են եզակի կամ հոգնակի Գ դեմքով. ինչպես՝ էշը զռում է, առյուծը մռնչում է, կառնները մլավում են, կովը բառաչում է և այլն։ Բայց այս բոլորը սովորական բայեր են, որոնց ենթական էլ հայտնի է։

Օրինակ ֆրանսերեն braire «զռալ» բայը պակասավոր կամ անդեմ է համարվում, որովհետև գործածական է միայն Գ դեմքով. ինչպես՝ il brait, ils braient, il braira, ils brairont, il brairait, ils brairaients. Բայց հին ֆրանսերենում braire նշանակում էր «բղավել» և գործածվում էր թե՛ մարդկանց և թե՛ անասունների համար։ Ավելի ուշ հատկացվեց միայն էշին։ Բայց զարմանալի է նաև նկատել, որ հայերենի մեջ նույնիսկ էշի զռալը խոնարհվում է նաև Ա և Բ դեմքերով. ինչպես՝ Ինչ ես զռում (նախատական՝ Ինչու՞ ես լաց լինում այդպես բարձրաձայն)։ Եվ հին հայկական առածն ասում է.

— Տերտեր, կարդա՛։

— Օրհնած, ես կգամ (որ նշանակում է «ես էլ հենց քո ասածն եմ անում»)։

4. Սովորական բայեր են, որոնք ըստ պատահման անորոշ ենթակա ունենալով՝ վերածվում են անդեմ բայի։ Օրինակ՝ ասվում է (կըսվի թե՛), կարծվում է (կկարծվի թե՛), գոռվում է (կգոռվի), ենթադրվում է (կենթադրվի թե՛), կլսվի, թվում է, խոսվից, ծիում է, հետևում է (կհետևի թե՛), պիտի զգուշացվի և այլն։ Ֆրանսերենում սրանք կազմվում են on անորոշ ենթակայով. ինչպես՝ on dit, on lit, on parle, on croit... Իտալերենում դրվում է նախադաս կամ հետադաս si. ինչպես՝ si dice, dicesi «ասվում է». si crede, credesi «կարծվում է թե»...

5. Կրակաև արտահայտություն ցույց տվող բայեր. ինչպես՝ հաճելի է, դուր է գալիս, պատահում է երբեմն, դժվարս է գալիս և այլն... (այսպիսի բայերը իտալերենում անձնական դերանուններով են կազմվում. ինչպես՝ mi souviene «միտս է գալիս», ti rincresce «դժվարդ կգա»...)։

6. Կրավորական բայերը «կարելի է» իմաստով (կրավորական բայ) գործ են ածվում իբրև անդեմ բայ. ինչպես՝ կուտվի «կարելի է ուտել, ուտելի է», կխմվի, կերթցվի, կնստվեր «կարելի էր նստել», չի խաղացվիր, այսօր չի գործվիր, չի մտածվիր և այլն։

Ալոն. 81 ծան., ասում է, թե ուգիմ, կամ, ըսել (անել), զալ բայերը անդեմ ձև չունեն. չի ասվում՝ կանեմ, կկացուի, եկուեցաւ և այլն, այլ կուենցուի (ուենեալ բայից), կըլուի (ըլալ բայից). իսկ արևելյան գրականում կարվի «կարելի է անել» սովորական է։

Ալոն. անդ, ասում է նաև, որ իբր անդեմ է գործածվում դրած է «կա, գոյություն ունի, պոջ է» իմաստով, իբր թարգմանության բրք. durur բայի։ Այժմ այսպիսի ձև չկա նույնիսկ արևմտյան գրականում։

Հնդկական քաշմիրի լեզվի մեջ կան մի քանի հատ անդեմ բայեր, որոնք թեև թվով քիչ, բայց շատ գործածական են։ Սրանք կազմվում են անցյալ դերբայից. օրինակ՝ asun «ծիծաղել» բայից osum «ինձանով խնդացված էր», այսինքն՝ «ես խնդացի» (Grierson, հտ. 8, մասն II, էջ 42)։

ԳԼՈՒԽ Ը

ԷԱԿԱՆ ԿԱՄ ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅ

Էական կամ օժանդակ կոչվում են այն բայերը, որոնք օգնում են մյուս բայերի զանազան ձևերը կազմելու համար խոնարհման մեջ։ Այսպես՝ երբ ասում գնում եմ, գնացել էի, տեսել ես, բերած կլինի, սրանց մեջ եմ, էի, ես, կլինի բայերը էական կամ օժանդակ են, որովհետև միանալով գնում, գնացել, տեսել, բերած ձևերի հետ՝ կազմում են գնալ, տեսնել, բերել բայերի ներկան, դերակատարը, հարակատարը և այլն։ Օրինակներից երևաց, որ էական կամ օժանդակ բայերը ընդհանրապես միանում են դերբայների հետ և նրանց հետ միասին կազմում են բայերի բազադրյալ ժամանակները։

Ամեն մի լեզու՝ համաձայն իր քերականական կազմության, կարող է ունենալ ավելի կամ պակաս թվով օժանդակ բայեր։

Օրինակի համար ճապոներեն լեզվի մեջ երբև օժանդակ են գործածվում suru *«անել»*, oku *«դնել»*, šimau *«վերջացնել»*, kuru *«գալ» բայերը։*

Մոնղոլերենի ալթայական բարբառում օժանդակ են hū *«նրատել»*, yer *«գալ»*, cšo *«երթալ»*, orxʸo *«ննտել» և այլն բայերը* (Поппе, Алар. гов. 99)։

Ըստ որում օժանդակ բայը օգնում է, ուրիշ խոսքով հնշտացնում է բայերի զանազան ձևերը կազմելը, ատտի ամենանախնական լեզուների մեջ էլ կարելի է գտնել օժանդակ բայ։ Բուշմենները, որոնք հաղիվ 1, 2, 3 թվերը գիտեն, ըստ Bleek *(էջ 66) ունեն օժանդակ բայեր, որոնց նշանակությունը մեջ չի կարողանում թափանցել հեղինակը. այսպես «երթալ» (որ կազմում է ապառնի), դուրս գալ, հեռանալ, գալ (ցույց է տալիս, որ գործողությունը դեռ չէ սկսած)։*

Աֆրիկյան կիկույի լեզվում (բանտու) kalla *«մնալ, նստել» օժանդակով կազմում են անկատարն ու դերակատարը, իսկ* mala *«վերջացնել» օժանդակով՝ կատարյալը. ինչպես՝*

no-mala ku-toa *ծեծեցի*
n-kalla ni-toa *ծեծում էի*
նստում էի ծեծում (Velten, 16—17)

Միայն հնդկական մանդարի լեզուն է, որ ոչ մի օժանդակ բայ չունի և բայի ամբողջ խոնարհումը կատարում է զանազան մասնիկներով։ Սրանով տարբերվում է այս լեզուն մյուսներից և հատկապես եվրոպական լեզուներից (Hoffmann, 114)։

Նոբիերենը ունի 3 օժանդակ բայ (n *«լինել»*, ner *«լինել, վերածվել,* werden*»*, nger *«անել»). սրանք գոյականների, ածականների, դերանունների և թվականների հետ միանալով կազմում են «անվանական խոնարհում», ինչպես՝* beli *«վատ»*, belia *«վատ է»*, ken *«լավ»*, kena *«լավ է»*, šar *«բան»—*nan dare *«ինչ բան է»*, one-n *«այդ իմն է»*, am-baganini-n *«այդ իմ հորն է»*, oren-ta *«երկուս են լինելու»*, e-nde *«այդ ես եմ»*, oml-e *«ես բարկացած եմ»*, šil-i *«նա թագավոր է»*, šil-mi *«նա թագավոր չէ»*, ē kēnd-e *«լավ եմ»*, e kenind-e *«լավ չեմ»*, tē-n *«սա մի կով է»*, tē-mi *«սա կով չէ»*, šil-e-re *«ես թագավոր պիտի լինեմ»*, šil-o-md-e *«ես թագավոր չպիտի լինեմ» և այլն։*

(Kauczor, 250—265)

Ֆիննական չերեմիս լեզվի օժանդակ բայերը, որոնցով կազմվում են բայի զանազան ժամանակներն ու ձևերը, հետևյալներն են.

kolten		*ուղարկեց*
šukten	довел	*հասցրեց*
pətaren		*վերջացրեց*
šogalten	поставил	*դրեց*
šinden	посадил	*նստեցրեց*
purten	ввел	*մտցրեց*
koden	оставил	*թողեց*

Կրավորականներ

kaen	пошел	*գնաց*
šan	достиг	*հասավ*
pəten	окончился	*վերջացավ*

šogalən	встал	*կանգնեց*
šinčin	сел	*նստեց*
puren	вошел	*ներս մտավ*
kodon	остался	*նստեց*

(Васильев, 37)

Ալթրիկյան կենդան (բանտու) լեզուն անի զանազան օժանդակ բայեր, որոնք բայերին տալիս են նոր ածանցական իմաստներ. այսպես՝

մի բան անելու սկսել
ջանալ մի բան անել
գնալ մի բան անելու
մնալ
լինել, դառնալ, վերածվել
թողնել, այլևս չանել
վերջացնել մի բան
գալ
ուզել, կամենալ, համաձայնվել
մի բան արագ անել
ուզել, ցանկանալ
գիտենալ, հասկանալ
բարի, սիրալիր լինել
մի բան անելու մեջ վերջինը լինել
դժվարահաճ լինել
ի վիճակի լինել, կարենալ
մի բան անելու մեջ առաջինը լինել
հոգնած լինել, հոգնել
տևել
վերջացնել
նույն բանը նորից անել, կրկնել

(Ittmann, 195)

Իրմանների մոտ օժանդակ բայեր շատ չեն, որոնք միավանկ լինելով՝ այն առավելությունն ունեն, որ հեշտությամբ կցվում-միանում են բային և ստանում մասնիկի երևույթ. ահա այդ բայերը.

pyu *անել*
pyeng *չափել, խորշել, տալ*
wun *համարձակվել*

ne *մնալ*
tat *սովորած, վարժված է այդ անել*
ra *ձևոք բերել*
rīt *հետ մնալ* (to remain behind)
mie, hmie *պատահարար անել մի բան*
ka'i *դժվար լինել*
lway *հեշտ լինել*
at *կամ* ra „to be fit"
t'oik *արժանի լինել*
t'eng *պատրաստ լինել, ուզենալ անել*
ts'e *պատճառել*
tsan *փորձել*
myai *շարունակել տևականապես անել*
le *վարժված լինել անելու*
un *էլ ավելի (անել, տալ)*
dūn *փոխադարձ բայ*
tsa *սկսել անել մի բան*
poing *կարողություն կամ իրավունք ունենալ անելու մի բան*
ret *անողորմ լինել, զզացմունքից զուրկ լինել*
lyet *շարունակել անել*
no, tsa no *հավանաբար այնպես է լինելու, ինչպես ինքն է մտածում* (Latter, 153)

Օժանդակի կողմից հարուստ են թուրք-թաթարական լեզուները: Օրինակի համար, տաճկերենում իրր օժանդակ են ծառայում olmaq *«լինել»*, itmek *«անել»*, qəlmaq *«մնալ»*, buyurmaq *«հրամայել»*, bulmaq *«գտնել»*, gelmek *«գալ»*, göstermek *«ցույց տալ»*, čekmek *«քաշել»*, görmek *«տեսնել»*, bilmek *«գիտենալ»*, sürmek *«քշել»* և այլն:

Կապակ-կիրղիզ լեզվի մեջ ունենք՝ olmak *«լինել»*, bolmak *«գտնել»*, turmak *«կանգնել»*, barmak *«գնալ»*, bermak *«տալ»*, žatmak *«պառկել»*, oturmak *«նստել»*, žürmek *«քայլել»*, ketpek *«երթալ»* և այլն (Лаптев, Матер. по Каз-кирг. яз., էջ 98):

Ուզբեկերենում օժանդակ բայերն են՝ yat-mak *«պառկել». ցույց է տալիս տրված բոպիին կատարվող մի գործողություն. օրինակ՝* okuy yatgan *(այս րոպեին) «կարդացող»*, yaz-may yatərman *«չեմ գրում» (այս րոպեին)*:

demäk *«ասել». ցույց է տալիս դիտավորություն, մտադրու-*

թյուն. օրինակ՝ munə kələy desäm «եթե մտադիր լինեմ անել այս», uray desä «պիտի գալիներ»:

bermäk «տալ». ցույց է տալիս հարատև շարունակություն. օրինակ՝ tütün čəka berädir «ծուխը դուրս է գալիս» (և դեռ շարունակում է դուրս գալ):

körmäk «տեսնել». ցույց է տալիս մի բան փորձել. օրինակ՝ sözläšib kördim «խոսակցել փորձեցի»:

kelmäk «գալ». ցույց է տալիս ցանկություն. օրինակ. bargəm keldi «գնալ ուզեցի» (=գնալս եկավ), barqəm kelsä «եթե գնալ ուզեմ» (=գնալս գա):

yazmak «գրել». ցույց է տալիս՝ քիչ մնաց, որ... օրինակ՝ ölä yazdem «քիչ մնաց, որ մեռնեի», kala yazdə «քիչ մնաց, որ մնար»:

turgan bolmak «կանգնած լինել». ցույց է տալիս ցանկություն, մտադրություն և հնարավորություն. օրինակ՝ Mäskävdän ketä turgan boldək «Մոսկվայից դուրս գալ ուզեցինք՝ կամ մեզ կարելի եղավ»:

qalmaq «մնալ». ցույց է տալիս գործողության շարունակությունը առանց ենթակայի մասնակցության. օրինակ՝ ešik ačələb qaldə «դուռը բացված մնաց»:

bolmaq «լինել». ցույց է տալիս գործողության լրացումը, նպատակին հասնելը. օրինակ՝ men čay ičib boldəm «ես թեյ խմեցի» (վերջացրի):

qoymak «դնել». ցույց է տալիս գործողության հատատությունը, օրինակ՝ sözünizni däftärdä yazəb qoydəm «ձեր խոսքերը տետրակում գրեցի»:

barmaq «երթալ». ցույց է տալիս գործի շարունակությունը կամ հարատևությունը նույն ուղղությամբ. օրինակ՝ yəldan yəlga yaxšələnəb baradər «տարուց տարի լավանում է»:

ketmek «երթալ». ցույց է տալիս, թե գործողությունը հեռանում է խոսողից. օրինակ՝ bir somdan ašəb ketdi «մեկ ռուբլուց անցավ գնաց»:

čəqmak «դուրս գալ». ցույց է տալիս գործողություն կատարելը՝ հասնելով իր վախճանին. pəlanəməznə bäjärib čəqsaq «մեր պլաններն իրագործենք» (դուրս գանք):

yürmäk «քալել». ցույց է տալիս շարժում, անդի փոփոխությունը. օրինակ՝ hämmägä körsätib yürädir «բոլորին ցույց է տալիս» (մեկից մյուսին տանելով):

yubarmaq «ուղարկել». ցույց է տալիս ուժգին կերպով կատարել և անցնել. օրինակ՝ pəlannə ašərəb yubardəlar «պլանի գերազանցկինն»: (Kissen, 138)

Յակուտերենի օժանդակ բայերն են.

er	*մի բանով զբաղվել*
olor	*նստել*
əl	*վերցնել*
is	*գնալ*
kebis	*գցել, ավարտել*
kel	*գալ*
kör	*նայել, փորձել*
qāl	*մնալ*
tur	*կանգնել*
bar	*երթալ*
kīr	*մանել*
taǧəs	*դուրս գալ, ելնել*
killer	*մացնել, ներս բերել*
sət	*պառկել*
sərət	*մեռ գալ*
nier	*տալ*
kulu	*տուր*

(Ястремской, 205)

Թուրքական օլրոտերեն լեզվի օժանդակներն են՝ otur «նըստել», dʸûr «երթալ», tur «կանգնել» dʸat «պառկել»:

(Тощакова, 34)

Չուվաշերենի օժանդակ բայերը ավելի բազմաթիվ են. այսպես ունենք՝ պառկել *(ընկած մնալ իմաստով. ցույց է տալիս միշտ նույն վիճակը կրելը),* առնել *կամ* վերցնել *(ձեռք բերելու, ստանալու կամ մոտեցման իմաստով),* տալ *(ցույց է տալիս, որ գործողությունը մեկի համար է կատարվում),* ցույց տալ, գցել, տանել, ապրել *(այն է՝ մի բան միշտ անել, սովորություն ունենալ անելու),* երթալ *(ցույց է տալիս գործողության նպատակը),* գալ, քայլել *(մնալուն գործողություն դանազան ուղղությամբ),* դնել, ճնռանալ, երթալ, ուղարկել, նայել, գառնալ *(լինել, վերածվել մի բանի),* մնալ թողնել, կանգնել, մտնել, մուծել, գիացնել, նստել, դուրս գալ *(ելնել),* վերջանալ, վերջացնել, հանել, հասնել, հասցընել:

(Ашмарин, Матер., 310—20)

Հինդուստանի լեզվի մեջ իրրև զուտ օժանդակ են գործածվում «ուղել, լինել, գալ, ՚ձգալ, տալ, ուտել, ընկնել, ելնել, առնել, սկսել» բայերը. կան և ուրիշ բայեր, որոնք տես «Բայերի դանազան տեսակները» գլխում։

(Bonnerjea, 30 Thimm, 34—36)

Պարսկերենի մեջ էլ ունենք բազմաթիվ օժանդակ բայեր, որոնց ցանկը տալիս ենք ստորև, մի-մի օրինակով միասին.

Ներգործական և չեզոք կազմելու համար

būdan	լինել	xasta būdan հիվանդանալ
kardan	անել	xasta kardan խոցել
farmūdan	հրամայել	karāmat farmūdan առաստաձեռնել
āvardan	բերել	yād āvardan հիշել
dāštan	ունենալ	pur dāštan լցնել
nimūdan	ցույց տալ	iltifāt nimūdan մեծարել
sāxtan	սարքել	tar sāxtan խոնավացնել
xōrdan	ուտել	sarmā xōrdan մրսել
zadan	զարնել	ḥarf zadan խոսել
burdan	տանել	farmān burdan հնազանդվել

Կրավորականների համար.

šudan	լինել	xānda šudan	կարդացվել
gaštan	լինել	nimūdār gaštan	հայտնվել
gardīdan	լինել	pur gardīdan	լցվել
yāftan	գտնել	parvariš yāftan	կրթվել
giriftan	բռնել	qarar giriftan	հաստատվել
āmadan	գալ	ba šumār āmadan	համարվել
dīdan	տեսնել	ri'āyat dīdan	պատվվել

(Գևորգ գպիր, Բռ. պրս., 14)

Պետք է զանազանել իրարից օժանդակ բայերի այն տեսակները, որոնք միայն իրրև բայակերտ են գործածվում (օրինակ՝ հիվանդ լինել=հիվանդանալ) և այն տեսակները, որոնք գերբայնեբի հետ միանալով բայերի նոր ժամանակներ են կազմում (օրինակ՝ գնացած լինել, տեսած լինել)։ Պարսկերենի վերոհիշյալ օժանդակների մեծագույն մասը առաջին կարգից է։

Լառսերենի մեջ էլ կան օժանդակ բայեր, որոնք գործ են ածվում մյուս բայերի խմաստը ճշտելու կամ զորացնելու համար։ Այսպես են՝

ao	առնել, վերցնել	hai	տալ
pai	գնալ	văi	պահպանել
mā	գալ	ao văi	»
ao mā	բերել	sia	կորցնել
ao pai	տանել	vắ	ասել
bŏń	նայել	ōk	դուրս գալ
khūn	բարձրանալ	khao	մտնել
lon		yū	բնակվել

(Hospitalier, 193—203)

Մալայո-պոլինեզյան բնաոսկ-խգորոտ լեզվի մեջ կա 12 տեսակ օժանդակ բայ, որոնց մի մասը բայի մի որևէ եղանակը կամ ժամանակն է կազմում, մյուսները բայի դանազան տեսակներ են կազմում։ Այսպես՝

ed պետք է որ. ստիպողական բայ
nget, ngin կարող է լինել որ. կասկածական բայ
ek, tek գնում եմ այսինչ բանը անելու
issa ցույց է տալիս 1) ապառնի գործողության, 2) հրամայականի մեղմ տեսակն է
afus, ipčas ցույց է տալիս նոր կատարված մի բան
tsa հաճախ, անընդհատ կատարված գործողությունն
kankani անմիջական ապառնի
kasin նորից, մեկ էլ անել նույն գործողությունը
sana շատ շուտով կատարել գործողությունը
čičča դեռևս շարունակել գործողությունը
čakasko հանկարծ անել գործողությունը
sumyaak gangkay միշտ միևնույն բանն անել։

(Seidenadel, 118—133)

Եվրոպական լեզուների մեջ օժանդակներով հարուստ է դաներենը, ուր ունենք՝

have ունենալ
vaere լինել
ville ուզել
skalle պարտավոր լինել
maatte müssen
burde »
turde dürfen
faa müssen, bekommen

gide mögen
monne »
kunne können
lade *թողնել*
blive *դառնալ, վերածվել*
vorde » »

Գրեթե նույն դրութիւնը ներկայացնում է նաև շվեդերենը։

Գերմաներենի օժանդակներն են՝

haben *ունենալ*, sein *լինել*, werden *դառնալ, լինել*, wollen *ուզենալ*, sollen *հարկ լինել*, müssen *պարտական լինել*, können *կարենալ*, mögen *կարելի լինել*, dürfen *կարող լինել, համարձակվել*, lassen *թողնել*։

Անգլերենի օժանդակներն են՝

be *լինել*, have *ունենալ*, can *կարենալ*, may *կարող լինել*, shall *համոզաբար պիտի*, will *ուզենալ, անշուշտ պիտի*, must *հարկ է որ*, ought *հարկ է որ*, dare *համարձակվել*, do *անել*։

Ֆրանսերենի օժանդակներն են.

avoir *ունենալ*, être *լինել*, devoir *պարտավոր լինել*, aller *գնալ*, venir *գալ*, faire *անել*։ *Ֆրանսերենում* aller «*գնալ*» *ցույց է տալիս մի գործողութիւն՝ որ քիչ հետո պիտի կատարվի (ինչպես՝* nous allons manger *մենք քիչ հետո կուտենք, ճիշտ ինչպես անգլերեն* she is going to sing *նա (իգ.) հիմա կերգի), իսկ* venir «*գալ*» *ցույց է տալիս մի գործողութիւն, որ նոր է վերջացել (ինչպես՝* nous venons de manger *հենց նոր կերանք վերջացրինք)։*

Եվրոպական լեզուների մեջ ընդհանուր տարածված և շատ գործածականի համար և երկրորդը՝ չեզոք և կրավորական բայերի համար։ Սրանով էլ կազմվում են բոլոր բաղադրյալ ժամանակները։ Այսպես է նույնիսկ լեհերենը։ Շվեդերենը այդ երկուսից ընդհանրացրել է «ունեմ» օժանդակը՝ թե՛ ներգործական, թե՛ չեզոք և թե՛ կրավորականի համար, ըստ որում կրավորականը առանձին վերջավորութիւն ունի. ինչպես՝

jag har älskat *ես ունեմ սիրած*
jag har älskats *ես ունեմ սիրված*
jag har beklagat mig *գանգատվեցի (=ֆրանս.* je me suis plaint)։

Ընդհակառակը լեթթերենը չգիտի «ունեմ» բայը և գործածում է միայն «եմ» էականը։ Այսպես էլ չեխերենում, ուր բայերի բաղադրյալ ձևերը կազմվում են «եմ» էական բայով, որ դրվում է բայից հետո՝ ճիշտ հայերենի պես («եղած եմ» և ոչ թե «եմ ունած», ինչպես ունեն ֆրանսերենը, գերմաներենը, անգլերենը և այլն)։

Օժանդակների մի մասը իրապես օժանդակ կամ էական է, ինչպես «եմ» և «ունեմ», որոնք ծառայում են կազմելու բայերի բաղադրյալ ձևերը։ Մյուսները գոյ են ածվում կազմելու բայերի նորանոր առումներ և մանավանդ ոճեր կամ առոգվածներ։ Այսպես, օրինակ՝ թուրքերեն.

göstermek «*ցույց տալ*»— ri'ayet göstermek «*հարգանք ցույց տալ, հարգել*»

çekmek «*քաշել*»— zarar çekmek «*վնաս քաշել, վնասվել*»

görmek «*տեսնել*»— eylik görmek «*բարիք տեսնել, մեկի բարիքը վայելել*

sürmek «*քշել*»— 'Ömr sürmek «*կյանք քշել կամ վարել=ապրել*»

bilmek «*գիտենալ*»— yazabilmek «*կարող լինել գրել*»։

Կազակ-կիրղիզ լեզվով՝

bilip turur «*գիտի նա գիտի*» (*իրապես «կանգնած է և գիտե», որ հիշեցնում է հլ. կայ և մնայ=կիցա*)։

Մյուս օրինակները տես վերը։

*Հայերենի լավագույն օժանդակ բայն է եմ, որ ծագում է հնխ. ēsmi ձևից |վերջին i ձայնավորի անկումով և m անգալինից առաջ s-ի անկումով, որ ընդհանուր կանոն է (համմա. *oms>հլ. us)։ Երկրորդ դեմքն է ես, որ ծագում է հնխ. *esi-ից=հն ēt, անս. asi. բայց որովհետև s երկու ձայնավորների մեջ ընկնում է, ուստի Մեյեն ենթադրում է կրկնավոր s-ով ձևը՝ essi, որ համապատասխան է գալիս հ. լատ. ess և համեմատ ēssi ձևերին (Esquisse, 118)]։ Եղակի Գ դեմքն է է, որ ծագում է հնխ. ésti ձևից՝ i վերջահնգ ձայնավորի կորստով և s, t բաղաձայնների անկումով։ Նույն վիճակին հասել են նաև ֆրանսերեն est և պրս. ast.— ֆրանս. est ըստ դրութեան պահում է s և t բաղաձայնները, բայց հնչվում է միայն e. Նմանապես պրս. äst դրականում պահել է նույն երկու բաղաձայնները, իսկ ժողովրդական բարբառով հնչվում է ä. «Ով է» լինում է ֆրանսերեն qui est (ki-e) և ճիշտ նույն ձևով ժդ. պրս. ki e։*

Ընդհակառակը բելուջերենը պարզացնելով նույն ast ձևը,

կազմել է նոր էական բայ. astăn *(ես) եմ*, astūń *(մենք) ենք*, astaθan *էի*, astaθūn *էինք և այլն:*

(Gilbertson, 77)

Հին հայերենի օժանդակ բայերն են եմ, լինիմ և եղանիմ, որոնք խոնարհվում են հետևյալ ձևով.

Սահմանական եղանակ

Ներկա

եմ	*լինիմ*	*եղանիմ*
ես	*լինիս*	*եղանիս*
է	*լինի*	*եղանի*
եմք	*լինիմք*	*եղանիմք*
էք	*լինիք*	*եղանիք*
են	*լինին*	*եղանին*

Անկատար

էի	*լինէի*	*եղանէի*
էիր	*լինէիր*	*եղանէիր*
էր	*լինէր*	*եղանէր*
էաք	*լինէաք*	*եղանէաք*
էիք	*լինէիք*	*եղանէիք*
էին	*լինէին*	*եղանէին*

Կատարյալ

		եղէ
		եղեր
		եղև
(չունի)	*(չունի)*	*եղաք, եղեաք*
		եղէք
		եղեն

Հարակատար

	լեալ եմ	*եղեալ եմ*
	լեալ ես	*եղեալ ես*
	լեալ է	*եղեալ է*
(չունի)	*լեալ եմք*	*եղեալ եմք*
	լեալ էք	*եղեալ էք*
	լեալ են	*եղեալ են*

Գերակատար

	լեալ էի	*եղեալ էի*
	լեալ էիր	*եղեալ էիր*
	լեալ էր	*եղեալ էր*
(չունի)	*լեալ էաք*	*եղեալ էաք*
	լեալ էիք	*եղեալ էիք*
	լեալ էին	*եղեալ էին*

Ապառնի

	—	*եղէց*
	լիցիս, լիցես	*եղիցիս, եղիցես*
	լիցի	*եղիցի*
(չունի)	*լիցուք*	*եղիցուք*
	լիջիք	*եղիջիք*
	լիցին	*եղիցին*

Հրամայական եղանակ

եր	*լեր*	—
	լիջիր	*եղիջիր*
	լինիջիր	—
երթուք	*լերթուք*	*եղերթուք*
էք	*լիջիք*	*եղիջիք*
	լինիջիք	—

(Արգելական)

մի լինիր	*մի եղանիր*
մի լինիք	*մի եղանիք*

Սաորադասական եղանակ

Ներկա

իցեմ	*լինիցիմ*	*եղանիցիմ*
իցես	*լինիցիս*	*եղանիցիս*
իցէ	*լինիցի*	*եղանիցի*
իցեմք	*լինիցիմք*	*եղանիցիմք*
իցէք	*լինիցիք*	*եղանիցիք*
իցեն	*լինիցին*	*եղանիցին*

Անցյալ

(չունի)	լեալ իցեմ	եղեալ իցեմ
	լեալ իցես	եղեալ իցես
	լեալ իցէ	եղեալ իցէ
	լեալ իցեմք	եղեալ իցեմք
	լեալ իցէք	եղեալ իցէք
	լեալ իցեն	եղեալ իցեն

Դերբայներ

անորոշ	անորոշ	լինել	եղանիլ
ներկա		—	—
անցյալ		լեալ, լեեալ	եղեալ
ապառնի		լինելոց	եղանելոց

Դիտողություններ.

1) Այս երեք բայերն էլ պակասավոր են, մեկը քիչ, մյուսը շատ. և իրար տեղ գործածվելով պակասները լրացնում են: Ամենից պակասավորը եմ էականն է, որի կատարյալն է եղէ, ապառնին եղեց, որոնք եղանիմ բայի ձևերն են:

2) Եմ բայի հրամայական ձևերը գործ են ածվում միայն ողջ բառի հետ. այսպես ո՛ղջ եր, ո՛ղջ էք կամ ո՛ղջ երուք, որոնք նշանակում են «ողջ եղիր, ողջ եղէք»: Սա նշան է, որ սրանք բայի հնագույն ձևերն են, որոնք հետո գործածությունից ընկել են և միացել են միայն ողջ եր... դարձվածքի մեջ:

3) Էական բայի իրրև անորոշը կա եղ ձևը, բայց հետին է և ե դարում չի գործածված: Հոլովվել ձևերն են՝ եղոյ, եղով, եղոց:

4) Եղանիմ բայի այն ձևերը, որոնք կազմված են -ան- միջամանիկով, ընտիր հայերենում չեն գործածվում. այսպես են՝ եղանիմ, եղանէի, մի՛ եղանիր, եղանիցիմ, եղանել, եղանելոց, որոնց տեղ սովորական են լինիմ բայի համապատասխան ձևերը:— Կատարյալ եղէ և ապառնի եղեց ձևերի տեղ կա նաև գործածված եղայ, եղայց (Զալխ., 354), բայց սրանք անսովոր են: Հին և հարազատ ձևն է եղէ, որի վերջավորությունը իրրև կատարյալի Ա դեմքի՝ միակն է հայերենում: Կանոնավորելու համար ավելացրին սովորական այ վերջավորությունը, որով առացվեց եղեայ միջին ձևը (գործածված է վ.թ. հց. ա. 647), ալս էլ հետո դարձավ եղայ:

5) Շատ հետաքրքրական է եմ էականի իցիւ ձևը, որը եղա-

կի Գ դեմք է միայն և որի մյուս դեմքերը պակասում են: Ըստ Զալխ., 381 «յայտնապես իցի ատորադասականին անկատարն է»: Միտնալով ութիշ բայերի անցյալ դերբային՝ կազմում է իրը ատորադասական գերակատար: Սրա մեսրոպյան օրինակներն են՝

Զալս ասացեալ իցիւ՝ թէ զԱամատէլ հանէր (կինն վհուկ).

Ննդրեալ իցիւ քո գոնեալ՝ թէ զի մեռուցիկ զԱաւուղ և ոչ զի կեցուցից զԱամատէլ. (Եփր. Թգ.)

Գոնեալ թէ ոչ ասացեալ իցիւ՝ եթէ Տէր անց հետացաւ լինէին:

Թէ ինքն յանձնէ իմաստութիւն ոչ առնէր, զէթ յարարիչն նալեցեալ իցիւ՝ ուսանել ի նմանէ զարուեստն (Եղն.):

Եթէ վասն ողորմութեան արար զոր արարն, պահեալ իցիւ զգալատս որդւոյն իւրոյ մինչև ի վախճան աշխարհի և ապա առաքեալ (Եղն.): (ՆՀՌ և Զալխ., 380):

Այս վկայութենից մեջ ասացեալ իցիւ նշանակում է «ասելու էր», ճայեցեալ իցիւ «նալելու էր, նայած լինէր» և այլն:

Ավելի ուշ իցիւ փոխից իր իմաստը և դարձավ «հրանէր թէ». ինչպես՝

Աղեքսանդրէ, իցիւ թէ էիր և կա իմ որդի, զի քո ազանց իշխէի (Պատ. Աղեքս.):

Իցէ այն բարեբաստութիւն, լորժամ բազմազան անուշահոտ բուսակօք գարդարէի (Պիտ.):

Այս նշանակությամբ է գործածվում այսօր էլ մեր լեզվում. ինչպես՝

Այլ ախ, անգութ, եթէ ալեր մեկուն սեր,
Իցէվ թ՛անօր գերեզմանին քարն լինեմ...
(Պ. Դուրյան)

Ուշ ժամանակի և հատկապես հունարան դպրոցի գլուխն է ատորադասական անկատարի իցեի, իցեիր, իցեր... ձևը, որ մտել է նաև մեսրոպյան գրության մեջ՝ հետին գրիչների ձեռքով. ինչպես՝

Զի դա քեզէն իմացիս թէ զինչ իցէր՝ որով ծածկեալ էր երկիր (Զալխ., 380):

Վերի բացատրություններից երևաց, որ իսկական էական բայն է գրաբարում եմ. իսկ լինիմ և եղանիմ բուն չեզոք բայեր են, որ օժանդակում են նրան, և նույնիսկ սրանց խոնարհման մեջ եմ բայը գերանի. այսպես՝ հարակատար՝ լեալ եմ, եղեալ եմ, գերակատար՝ լեալ եի, եղեալ եի, ատորադասական անցյալ՝ լեալ իցեմ, եղեալ իցեմ:

Սակայն ինչպես ուրիշ լեզուների մեջ, նույնպես և գրաբարում կան մի խումբ ուրիշ բայեր, որոնք իրրև օժանդակ գործ են ածվում զանազան ոճեր և ասացվածներ կազմելու համար: Այսպես են առնել, ճարկանել, ածել, տալ, տանել, բերել, ունել և այլն. օրինակ՝ պաշտօն առնել, սպաս առնել, խնամ առնել, փոլթ առնել, զդէմ ունել, շնորհ ունել, խնամ ունել, գլալ հարկանել, լարտառաւս հարկանել, գան հարկանել, հաւր հարկանել, բառն հարկանել, ծափս հարկանել, առն հարկանել, ձեռն յանձին հարկանել, ի միտ առնուլ, պատասխանի ունել, պատասխանի տալ, ծանօթս տալ, թոյլ տալ, տեղի տալ, ի վարձու տալ, աշխատս առնել, այսն առնել, յանձն առնել և այլն և այլն, որոնց լիակատար թվումը բառարանի գործ է:

Միջին հայերենում եմ, լինիմ, եղանիմ օժանդակները շարունակում են իրենց գոյութիւնը, միայն եղանիմ կորցրել է շատ բան, նույնիսկ ներկա եղանիմ, որ արդեն և գարումն էլ գործածական չէր: Նրանից մնում են միայն կատարյալ եղայ և դերբայ՝ եղել, եղած:

Ահա սրանց խոնարհումը (Karst, 387).

Սահմ. ներկ.	*եմ*	*լինիմ, կու լինիմ*
	ես	
	է	*կու լինի*
	ենք	
	էք	
	են	
Անկ.	*էի*	*լինէի*
	էիր	
	էր	
	էաք	
	էիք	
	էին	
Կար.	—	— *եղալ*
Ապառ.	*կու լինամ*	
	կու լինաս	
	կու լինայ	
	կու լինանք	
	կու լինաք, -ալք	
	կու լինան	

Հրամ.	*լեր*	
	լիք (Սիսուան, 95ա, տող. 10).	
Սաստ. ներկ.	*լինամ, լինիմ*	
	լինաս	
	լինայ, լինի	
	լինանք	
	լինաք, -ալք	
	լինան	
Անկ.	*լինայի*	
	լինայիր	
	լինար, -ալր	
	լինայաք	
	լինայիք	
	լինային	
Դերբ. անորոշ	*լինալ*	
» անցյալ	*լել*	*եղել*
		եղած

Այս տախտակից երևում է, որ եմ էական բայից պահված է միայն ներկան և անկատարը. ջնջված է ստորադասական ներկան (իցեմ), իսկ ստորադասական անկատար նորամուտ իցեի ձևը արմատ չէ բռնած: Սրանց փոխարեն լինիմ բայից առեղծվել են առանձին ստորադասական ներկայի և անկատարի ձևեր (լինամ, լինայի): Ավելացնենք նաև այն, որ էական բայի ներկան, թեև ըստ գրութեան նույն է գրաբարի հետ, բայց ըստ հնչման տարբեր է.— գրաբարի մեջ ե-ով սկսվող ձևերը հնչվում էին պարզ e ձայնավորով (em, es, emk', ēn), *իսկ կիլիկյան հայերենում նախաձայն ե գառնալով* ye, *այս ձևերը հնչվում էին* yem, yes, yenk', yen: *Հոդնակի առաջին դեմքում գրվել էր ն՝ փոխանակ մ:*

Եմ այն բացառիկ բայերից է, որ ներկայում կու մասնիկը չէ առացած: Բայց լինիմ բայը ունի թե լինիմ և թե կու լինիմ ձևը (Karst, 386):

Արդի բարբառներում, միջին հայերենի օրինակով, օժանդակ բայը կազմված է եմ, լինիմ և եղանիմ բայերի խառնուրդով, մեկի պակասը լրացնելով մյուսով: Այսպես՝

Երևանի բարբառ

սահմ. ներկ. էմ, էս, ա, էնք, էք, էն
անկ. ի, իր, էր, ինք, իք, ին

սաոր. ներկ. *ըլէմ, ըլէս, ըլի, ըլէնք, ըլէք, ըլէն (նաև՝ ըլնէմ կամ ըլլէմ, ըլնէս, կամ ըլլէս և այլն)*
սաոր. անկ. *ըլէի, ըլէիր, ըլէր, ըլէինք, ըլէիք, ըլէին (նաև՝ ըլնէի, ըլնէիր, կամ ըլլէի, ըլլէիր և այլն)*
կար. *էլա կամ էլամ, էլար, էլաֆ, էլանք, էլաք, էլան (վաղաբշապատ)*
հրմ. *իլ (ըլի), էլէք, մի իլ (մի ըլի, մի ըլնի, մի ըլլի), մի ըլնէք*
դերբ. *էլիլ, էլած, ըլնիլ (ըլնալ, ըլլիլ, ըլիլ)։*

Սրանց մեջ նկատելի է ներկայի եզակի Դ դեմքի ա ձևը, որ գտնում ենք ուրիշ բարբառներում էլ, ինչպես Բալադեհ, Թավրիզ, Ղզլի գյուղերում և այլուր։

Թիֆլիսի բարբառ

սահմ. ներկ. *իմ, իս, է, ինք, իք, ին*
անկ. *էի, էիր, էր, էինք, էիք, էին...*

Շամախիի բարբառ

սահմ. ներկ. *ամ, էս, ա, անք, էք, ան (բայց երբ ձայնավորը փոխուկ է՝ ամ, էս, ա, անք, էք, ան)*
անկ. *ի, իր...*

Ասարախաճի բարբառ

սահմ. ներկ. *էմ, էս, ա, էնք, էք, էն*
անկ. *իմ, իր, էր, իինք, իիք, իին* / *էմ, էիր, էր, էինք, էիք, էին*

Ղարաբաղի բարբառ

սահմ. ներկ. *իմ, իս, ա, ինք, իք, ին*
անկ. *ի, իր, ար. ինքյ, իքյ, ին*
կար. *իլա, իլար, իլավ, իլանք, իլաք, իլան*
հրմ. *իլ, ինիլ մըէր, իլէք, ինիք վըէչ, ինիլ մըէք*
ապռ. *կինիմ, կինիս, կինի, կինինքյ, կինիքյ, կինին*
» *ինըլնական իմ, իս, ինըլնացուք իմ, իս...*
անց.
» *ինըլնական ի, ինըլնացուք ի, իր...*
սաոր. ներկ. *ինիմ, ինիս, ինի, ինինքյ, ինիքյ, ինին*
դերբ. *ինող, ինըլնական, ինըլնացուք, ինիլ, ըլած, ըլալ։*

Նոր-Ջուղայի բարբառ

սահմ. ներկ. *ամ, աս, ա, անք, էք, ան*
անկ. *ի, իր, էր. ինք, իք, ին։*

Սահմանական ներկայի հոգնակի Բ դեմքը Դավրեժ և Մեծ-Մեկղան թաղերում ունի էք ձևը. բայց ուրիշ թաղեր (ինչպես Զարսու և Քոչեր) ունեն աք, որով սկզբից մինչև վերջը ա ձայնավորը ընդհանրացած է լինում. այսպես է նաև Հին-Ջուղայում և Ասաապատում։

կար. լէլա, լէլար, լելավ, լելանք, լելաք, լէլան
հրմ. լէլիր, մի լէլնել, լէլէք, մի՛ք լէլնել
սաոր. ներկ. լէլնամ, լէլնաս, լէլնի, լէլնանք, լէլնէք, լէլնան
անկ. լելնի, լէլնիր, լէլնէր, լէլնինք, լէլնիք, լէլնին
դերբ. լէլնել, լելնում, լէլէլ, լէլած, լէլնելու։

Ագուլիսի բարբառ

սահմ. ներկ. *իմ, իս, ա, իք, իք, ին*
անց. անկ. *իմ նէլ, իս նէլ, ա նէլ, իք, նէլ «էինք, էիք», ին նել։*

Սահմանական ներկայի եզակի Դ դեմքը ա ձևով գործածական է այն ժամանակ, երբ նրա նախորդ բառը վերջանում է ծանր ձայնավորով. հակառակ պարագային գտնում ենք ու։ Բացառաբար ո՞ւնչ «ինչ» բառից հետո ասվում է ո՞ւնչ ու «ինչ է»։ Այս բայի բոլոր ձևերն էլ անշեշտ են և շեշտը դրվում է միայն նախորդ բառի վրա։

Մնացյալ ժամանակները լրացվում են ե՛լիլ «լինել» բայով, որ խոնարհվում է կանոնավոր կերպով։

Ծանոթ.— Էլիլ «լինել» բային իրրև հոմանիշ ունենք հետևյալ ժամանակները.

ապռ. նիլ իմ, նիլ իս, նիլ ու, նիլ իք, նիլ ին «կլինիմ...»։
սաոր. նամ, նաս, նա, նաք, նան, «լինիմ...».

հետաքրքրական է նկատել, որ նոյն ձևը, որ հոգնակի է, գործածական է նաև իրր եզակի, «լինի» նշանակությամբ. ասվում է նաև ըն ամ, ըն աս, ըն ա, ըն աք, ըն ան։

սաոր. անկ. նամ նէլ, նաս նել, նա նել «լինէի...»։

Մարաղայի բարբառ

սահմ. ներկ. *իմ, իս, ը, ինք՛, իք՛, ին*
անց. անկ. *իմ էր, իս էր, էր, ինք՛ էր, էք՛ էր, ին էր։*

Մնացյալ ժամանակները լրացվում են լինել>ըլել բայի ձևավորով. ալսպես՝

սաոր. ներկ. ըլիմ, ըլիս, ըլը, ըլինք, ըլիք՛, ըլին։
կոր. էլամ, էլար, էլավ, էլանք, էլաք, էլան.
հրամ. լիլ, լիլէք՛.
դերբ. էլիր, ըլած, ըլօղ, ըլօղու։

Կատարյալի ձևերը և հրամայականի հոգնակին ունեն կրկին ձև՝ նախավոր յ ձայնով և առանց այդ հավելվածի։ Այս բանը առաջ է եկել հետևյալ ձևով։ Եվ իբրև միասնակ՝ դարձել է յիլ. մյուս բոլոր ձևերը իբրև բազմասնակ՝ չեն ստացել յ հավելվածը. բայց հետո ազդվելով հրամայականից՝ առել են մի նորամուտ յ։ Հրամայականի եզակին իլ ձևով չի գործածվում, բայց կա հոգնակի իլէք՛, մանավանդ արգելականում (մի՛ իլէք՛)։

Խոյի բարբառ

կոր. ըլամ, ըլար, ըլավ, ըլանք, ըլաք, ըլան (Սամադար գյուղում՝ իլա, իլար, իլաֆ, իլանք, իլաք, իլան).
դերբ. ըլիր, ըլած, ըլել։

Վանի բարբառ

ներկ. եմ, ես, ի, ենք՛, էք՛, են
անկ. ի, իր, էր, ինք՛, իք՛, ին։

Ոզմիի բարբառ

ներկ. իմ, իս, ի, ինք, իք, ին
անկ. է. էր, էր, էնք, էք, էն։

Կիլիկիայի բարբառ

ներկ. իմ, իս, է, ինք, էք, ին
անկ. ա, ալ, էյ, աք, աք, ան, կամ՝ ա, իյ, էյ, օնք (ընք) ավ, ան. (առաջին շարքը ծանր ձայնավորով վերջացող բառերի կոդքին, երկրորդը՝ թեթև ձայնավորների հետ)։

Սվեդիայի բարբառ

ներկ. իմ, իս, է, ինք, իք, ին
անկ. էր է, էր, իր, էր ինք, էր իք, էր ին.
(Ձևացյալը լրանում է լինել>ընինի բայից)։

Կարնո բարբառ

ներկ. էմ, էս, է, էնք, էք, էն.
անկ. էի, էիր, էր, էինք, էք, էին.
(Ձևացյալը լրանում է ըլիլ (Ախց., Ախք.), էղնել (Լեն.) բայով), ինչպես՝

Լենինականի

սաոր. ներկ. էղնիմ, էղնիս, էղնի, էղնինք, էղնիք, էղնին
սաոր. անկ. էղնէի, էղնէիր, էղնէր, էղնէինք, էղնէիք, էղնէին
կոր. էղա, էղար, էղավ, էղանք, էղաք, էղան
հրմ. էղիր, էղէք, մի էղնի, մի՛ք էղնի
դերբ. էղել (էղէ), էղնէլ։

Ախալքալաքի գավառական

սաոր. ներկ. ըլիմ, ըլիս, ըլի, ըլինք, ըլիք, ըլին
սաոր. անկ. ըլէի, ըլէիր, ըլիր, ըլէինք, ըլէիք, ըլէին
կոր. էղա. էղար, էղավ, էղանք, էղաք, էղան
հրմ. մի՛ ըլլիր, մի՛ ըլլիք
դերբ. ըլլիլ, էղած։

Տրապիզոնի բարբառ

ներկ. իմ, իս, է, ինք, իք, ին
անկ. էի, էիր, էր, էինք, էիք, էին։

Համշենի բարբառ

ներկ. իմ, էս(ձ), իս(Մ), ս(ձ), է(Մ), ինք(ձ), իք(Մ), էք, ին.
անկ. էլը(ձ), էլի(Մ), էլդ(ձ), էլիր, էլդը(Մ), էր, ալքը(ձ), ալքը(Մ), էքը(ձ), էքը(Մ), էլնը։

Սուչավայի բարբառ

ներկ. իմ, իս, է, ինք, իք, ին
անկ. էի, էիր, էր, էինք, էիք, էին։

Նոր-Նախիջևանի բարբառ

սահմ. ներկ. իմ, իս, է, ինք, իք, ին
անց. անկ. էլի, էլիր, էր, էինք, էլիք, էլին
Մնացյալը լրանում է՝ առնելով ըլալ բայից
սաոր. ներկ. ըլամ, ըլաս, ըլա, ըլանք, ըլաք, ըլան, կամ՝ նախավոր ը-ի անկումով՝ լամ, լաս, լա, լանք, լաք, լան

սաոր. անկ. ըլալի, ըլալիր, ըլար, ըլալինք, ըլալիք, ըլալին
կամ՝ լալի, լալիր, լար, լալինք, լալիք, լալին
կար. էդա, էդար, էդավ, էդանք, էդաք, էդան
հրմ. էղիր, էղիք
դերբ. էդած, էդիլ, էդող, ըլալու կամ լալու, ըլալիք կամ լալիք:

Պոլսի բարբառ

սահմ. ներկ. էմ, էս, է, էնք, էք, էն
անց. անկ. էլի, էլիր, էր, էլինք, էլիք, էլին:
Մնացյալը լրանում է ըլլալ բայից
սաոր. ներկ. ըլլամ, ըլլաս, ըլլա, ըլլանք, ըլլաք, ըլլան
անկ. ըլլալի, ըլլալիր, ըլլար, ըլլալինք, ըլլալիք, ըլլալին
կար. էդա, էդար, էդավ, էդանք, էդաք, էդան
հրմ. էղի՛ կամ էղիր, էղէ՛ք. մը՛լլար, մը՛լլաք
դերբ. էդող, էդած, էդեր, ըլլալ, ըլլալիք, ըլլալու:

Եվդոկիայի բարբառ

սաոր. ներկ. ըննամ, ընննաս, ընննա, ընննանք, ընննաք, ընննան
սաոր. անկ. ընննալի, ընննալիր, ընննար, ընննալինք, ընննալիք, ընննալին
կար. էդա, էդար, էդավ, էդանք, էդաք, էդան
հրմ. էղիր, էղէք (էղիք), մի՛ ընննար, մի՛ ընննաք
դերբ. ընննալ:

Այժմ տալիս ենք օժանդակների զարգացման պատկերը մեր բարբառներում.

Եմ էականի ներկան ամենից ավելի հարազատ ձևով պահված է Պոլսի (նախաձայնը հնչելով է).

էմ, էս, է, էնք, էք, էն:

Հայտնի չէ ինչ պատճառով ներկի Գ դեմքի է ձևը դառնում է ա. այս առաջին քայլը դառնում ենք Սասունի բարբառում, որ ունի՝

էմ, էս, ա, էնք, էք, էն:

Նույնը դառնում ենք նաև ում ճյուղի ուրիշ դանադան բարբառների մեջ. այսպես՝ Նոր-Ջուղա, Ագուլիս, Դարաբաղ, Շամախի, և մինչև անգամ Երևան. իսկ կը ճյուղի բարբառներից նույնը դիտեմ Տիատին (որի դպրոցին է Բասարգեչար) (Բարբ., 146): Սա-

կայն ուրիշ բարբառներ, ինչպես են Տփղիս և Նոր-Նախիջևան՝ ի պահում են անփոփոխ, թեև մյուս դեմքերի մեջ փոփոխություններ մացնում են: Այնուհետև այս ա ձայնը Ագուլիսի և մանավանդ Մարաղայի բարբառում, հպատակելով ձայնավորների ներդաշնակության օրենքին, սառնում է դանադան ձևեր (է, ի, ու, ո), մինչև հասնում է ը ձևին:

Ավելի հետո ներկայի բոլոր մյուս ձևերի մեջ ձայնավորը դառնում է ի. այսպես են՝

Մրդ. Ննիս. Տփ. իմ, իս, ինք, իք, ին.
(Մարաղան պահում է միայն էք>էք՛):

Ինձ թվում է, թե ձայնավորի այս շրջափոխությունը մի որևէ ձայնական օրենքի արդյունք չէ, այլ անկատարի վերջավանկի ի ձայնավորի նմանողությամբ է. այսպես՝

էի, էիր,—, էինք, էիք, էին
իմ, իս,—, ինք, իք, ին.

ի ձայնավորն առացվելուց հետո՝ ավելի ևս կրճատվելով՝ առաջ է եկել ը, որ գտնում ենք Ագուլիսի և Ղարաբաղի բարբառում.

ըմ, ըս,—, ընք, ըք, ըն:

Ներկա եզակի Գ դեմքի ա ձևն սկսում է տղղել մյուս դեմքերի ձայնավորի վրա և նրանք էլ վերածում իր երանգին: Առաջին հերթին հպատակում են անգամանից առաջ գտնվածները. այսպես՝

Շմ. և Ջղ. ամ, աիք, աւ «եմ, ենք, են».

ավելի հետո մյուսներն էլ են ընկնում նույն տղղեցության տակ. այնպես որ թեև Շամախում դեռևս ունենք ես «ես», էք «էք», բայց Նոր-Ջուղայում աս, էք. իսկ Նոր-Ջուղայի որոշ թաղերում, ինչպես և Հին-Ջուղա և Աստապատ, ձևափոխությունը հասել է իր վախճանին, և ամբողջ ներկան ունի ա.

ամ, աս, ա, աիք, աք, աւ:

Անկատարի մեջ էլ գրաբարի պատկերը անփոփոխ պահում է Պոլսի բարբառը, և նրա հետ միասին Նոր-Նախիջևան, Տփղիս և այլն.

էի, էիր, էր, էինք, էիք, էին:

Աստրախանի բարբառը այստեղ էլ առնում է առաջին քայլը և ի ձայնից առաջ է դարձնում է ի. այսպես՝

իմ, իիր, էր:

Կրկնակի ի վերածվելով մեկի, ինչպես որ բնական էր, երևանի, Ջուղայի և Շամախիի բարբառներում դառնում ենք՝

ի, իր, էր, ինք, իք, ին.

միայն Ղարաբաղում ք փոփոխելով՝ առանում ենք

ի, իր, ար, ինք, իք, ին:

Երկրորդ օժանդակ բայն է եղանիլ, որը ե դարում արդեն սկսել էր գործածութիւնից վերանալ: Կիլիկյան հայերենում սրանից ետում էին միայն կատարյալը (եղայ) և երկու դերբայ (եղել, եղած): Բարբառները սրանից շատ ավելի հարուստ են, որովհետև ոչ միայն կատարյալը և դերբայները պահած են շատ տեղ (այսպես՝ Պոլիս, Եվդոկիա, Նոր-Նախիջևան), այլև հրամայականը (եղի՛ր, եղե՛ք), իսկ Լենինականի գավառականում, որ կարծես բարբառի մի ճյուղն է, ունենք ներկա եղնիմ<դրբ. եղանիմ, անկատար եղնեի>դրբ. եղանեի, արգելական մի՛ եղնեի, մի՛ք եղնեի (<դրբ. մի եղանիր, մի եղանիք) և անորոշ դերբայ եղնել <դրբ. եղանել:

Կարևոր է նկատել այն ձևափոխութիւնը, որ բարբառները մտցրել են կատարյալի խոնարհման մեջ: Արդարև գրաբարում կատարյալ եղէ, եղեր, եղև, եղաք (եղեաք), եղեն շատ անկանոն են. եղէ և եղև ոչ մի ձևի չեն ենթարկվում. մյուսները հպատակվում են դանագան լծորդութեանց: Աշխարհաբարը և բարբառները սկսած Կիլիկյան հայերենից կանոնավորել են ամբողջը և վերածել ա լծորդութեան. այսպես առացվել է եղայ, եղար, եղավ, եղաք, եղաք, եղան՝ ճիշտ ինչպես ունենք մեռայ, մեռար, մեռավ, մեռանք, մեռաք, մեռան:

Բացի սրանից դրաբարը չունի այս բայի պարզ հրամայականը. կա լե՛ր, լիջի՛ր, լինիջի՛ր, բայց միայն եղիջի՛ր: Աշխարհաբարը կազմել է նույն ոճով եղի՛ր, եղե՛ք, ինչպես մե՛ռիր, մեռե՛ք[1]: Կա նաև հրամայական եղի՛ք ձևը (ինչպես գտնում եմ «Անիծեալն», թրգմ. Մամուրյան, Զմյուռնիա, 1875, հա. Գ, էջ 71, 73, խոհեմ եղիք... խոհեմ և ծածկապահ եղիք):

Երրորդ օժանդակ բայն է լինիմ, որ շատ մեծ ձևափոխութեանց է ենթարկվել բարբառներում:

[1] Եղանիմ բայի մասին առանձին հոդված ունի Մ. վրդ. Մաքսուդյանց, «Եղանիմ բայի կրած կերպարանափոխութիւնները», Արբա. 1915, էջ 247—253: Իր տեսութիւնները շատ տեղ չեն համապատասխանում մեր կարծիքին:

Ամենից հարազատ ձևը պահել է Ակնա բարբառը, որ լինիլ անորոշի տեղ ունի լընիլ, իսկ առորագասական ներկան խոնարհում է լընիմ, լընիս, լընի, լընինք, լընիք, լընին ձևով: Այս բոլորի մեջ առաջին վանկի ի ձայնավորը կորել է ն-ից առաջ, ճիշտ ինչպես Պոլսի բարբառում շինել դարձել է շնել, շինեմ>շնէմ և այլն:

Այնուհետև մի փոքրիկ տեղափոխութեամբ լընիմ դառնում է ըլնիմ կամ ըլնեմ (ինչպես ունի Երևանի բարբառը). սրա մեջ ն հետևելով լ-ին՝ դառնում է ինքն էլ լ և առացվում է ըլլիմ, ըլլեմ. հետո էլ երկու լ-երը ի մի ձուլվելով՝ առաջանում է ըլեմ, ըլիմ: Սրա համեմատ նաև անկատար՝ ըլնեի>ըլլեի>ըլեի, անորոշը՝ լինիլ>ըլնել>ըլլել>ըլել և այլն:

Կիլիկյան հայերենում տեսանք, որ առորագասականի համար տեղծվել էր լինամ, լինայի ձևը՝ սահմանականի լինիմ, լինեի ձևի դեմ, նույնիսկ անորոշը դարձել էր լինալ՝ փոխանակ լինիլ: Այս երևույթը շարունակվից բարբառների մի մասի մեջ և առացվեց նախ ըլնամ, ըլնայի, ըլնալ: Այս ձևերին դեռ չեմ հանդիպել որևէ բարբառում, բայց նրանց գոյութիւնը հաստատ է: Այս ձևը բաժանվից հետո երկուսի. մի տեղ լ հետևելով ն-ին՝ դարձավ ինքն էլ ն, որով ըլնամ դարձավ ընամ (այսպես է Եվդոկիայի բարբառում) և մի տեղ էլ ն հետևելով լ-ին՝ դարձավ ինքն էլ լ, որով ըլնամ դարձավ ըլլամ (այսպես՝ Պոլիս և այլն): Այնուհետև երկու լ-երը միացան և առացվեց ըլամ (Նոր-Նախիջևան) և կամ նույնիսկ նախավոր ձայնավորը կրճատվելով՝ լամ (Նոր-Նախիջևան):

Լինիմ>ըլնիմ ձևը ձայնափոխութեան մի ուրիշ հանապարհ էլ ուներ. առաջին թույլ ձայնավորը (ը) հետևելով շեշտյալ ի ձայնավորին՝ պիտի դառնար ի, որով պիտի առաջանար *իլնիմ ձևը: Այս ձևը անկասկած չենք գտնում բարբառների մեջ այժմ կենդանի, բայց նրա կատարյալն է իլա, իլար... (համմտ. հատնիլ—կատարյալ հատա, հատար...), որ գտնում ենք Ղարաբաղի բարբառում և Սամաղար գյուղում, ինչպես որ ըլնիմ ձևից էլ ունենք Խոյի բարբառում կատարյալ ըլամ, ըլար..., անցյալ դերբայ՝ ըլիր, ըլած:

Նույն *իլնիմ ձևից կարող էին առաջանալ իլլիմ, իննիմ կրճատ՝ իլիմ, իմիմ և լծորդութեան փոփոխութեամբ էլ՝ իլամ և իմամ ձևերը: Սրանցից իմիմ կենդանի է Ղարաբաղի բարբառում, ուր արտադրում է դանագան բայական ձևեր (ինչպես՝ առորագասական իմիմ, ապառնի

ինքնական ըմ, դերբայ ինօղ, ապառնի կինիմ, արգելական ինիլ մըէր և այլն)։ Սրա անորոշ դերբայից է կազմված Ագլ. ապառնի ⁺*ինիլ ըմ, իսկ իցամ (կամ ըցամ) ձևից՝ Ագլ. աորիստական ցամ, ցաս..., բոլորն էլ նախաձայն ի-ի անկումով։ Ըստ այսմ Դրբ. ինիլ և այլն ձևերը ոչ թե կազմված են լինիլ ձևից՝ լ-ի անկումով, այլ* ⁺*ինիլ ձևից կրճատմամբ, իսկ Ագլ. նել «եղած, լսել» ոչ թե նույնպես լինիլ ձևից է որևէ անկումով, այլ նույնիսկ գրաբարի անցյալ դերբայի լեալ ձևն է, որ մի կողմից տվել է Դրբ. ըլալ, լալ, և մյուս կողմից տարանմանութեամբ Ագլ. նել։*

Մնում է մեզ բացատրել յելնեմ ձևը, որ կազմում է Նոր-Ջուղայի բարբառի խոնարհման ամբողջ հիմքը, մասամբ էլ Մարաղայի, ինչպես նաև Երևանի, Ագուլիսի և Ղարաբաղի. ինչպես՝ Երև. կատարյալ էլա, էլար, էլավ, հրամայական ի՛լ, էլե՛ք, դերբայ էլել, էլած, Ագլ. անորոշ էլիլ, Դրբ. հրամայական էլ և այլն։ Սա ուրիշ բան չէ, եթե ոչ կամ եղանիլ բայի հնագույն ձևացորդը, որ դեռ իր նախնական ղ (=լ) հնչումը պահել է (տես Աբրամ. 1915, էջ 248) և կամ լինել, ըլնել, ըլալ և եղանիմ ձևերի խառնաձևման արդյունքը։

Լինիմ բայի շատ անսովոր մի ձևն է ըլնեցամ, ըլնեցաս..., որ գտնում ենք Ջահարմահալի բարբառում (Նոր-Ջուղայի գավառ). (տես Երեմյան, Հրմհլի ժղ. բնես. 64)։ Այս ձևը լինիմ բայի նոր աորիստականն է և կազմված է այնպես, ինչպես՝ ուզիմ—ուզեցամ, գիտեմ—գիտեցամ և այլն։

Աշխարհաբարը, օգտվելով գրաբարից և բարբառներից, ալսպես է կազմել իր օժանդակ բայի խոնարհումը.

Սահմանական եղանակ

Ներկա

լինում եմ	*եմ*	*կըլլամ*
լինում ես	*ես*	*կըլլաս*
լինում է	*է*	*կըլլայ*
լինում ենք	*ենք*	*կըլլանք*
լինում էք	*էք*	*կըլլաք*
լինում են	*են*	*կըլլան*

Անցյալ անկատար

լինում էի	*էի*	*կըլլայի*
լինում էիր	*էիր*	*կըլլայիր*

լինում էր	*էր*	*կըլլար*
լինում էինք	*էինք*	*կըլլայինք*
լինում էիք	*էիք*	*կըլլայիք*
լինում էին	*էին*	*կըլլային*

Կատարյալ

եղայ
եղար
եղավ
եղանք
եղաք
եղան

Հարակատար

եղել եմ,	*եղած եմ*	*եղեր եմ,*	*եղած եմ*
եղել ես,	*եղած ես*	*եղեր ես,*	*եղած ես*
եղել է,	*եղած է*	*եղեր է,*	*եղած է*
եղել ենք,	*եղած ենք*	*եղեր ենք,*	*եղած ենք*
եղել էք,	*եղած էք*	*եղեր էք,*	*եղած էք*
եղել են,	*եղած են*	*եղեր են,*	*եղած են*

Գերակատար

եղել էի,	*եղած էի*	*եղեր էի,*	*եղած էի*
եղել էիր,	*եղած էիր*	*եղեր էիր,*	*եղած էիր*
եղել էր,	*եղած էր*	*եղեր էր,*	*եղած էր*
եղել էինք,	*եղած էինք*	*եղեր էինք,*	*եղած էինք*
եղել էիք,	*եղած էիք*	*եղեր էիք,*	*եղած էիք*
եղել էին,	*եղած էին*	*եղեր էին,*	*եղած էին*

Ապառնի Ա

կլինեմ	*կըլլամ*
կլինես	*կըլլաս*
կլինի	*կըլլա*
կլինենք	*կըլլանք*
կլինեք	*կըլլաք*
կլինեն	*կըլլան*

Ապառնի Բ

պիտի լինեմ	պիտի ըլլամ
պիտի լինես	պիտի ըլլաս
պիտի լինի	պիտի ըլլա
պիտի լինենք	պիտի ըլլանք
պիտի լինէք	պիտի ըլլաք
պիտի լինեն	պիտի ըլլան

Ապառնի Գ

լինելու եմ	ըլլալու եմ
լինելու ես	ըլլալու ես
լինելու է	ըլլալու է
լինելու ենք	ըլլալու ենք
լինելու եք	ըլլալու եք
լինելու են	ըլլալու են

Անցյալ ապառնի Ա

կլինեի	կըլլայի
կլինեիր	կըլլայիր
կլիներ	կըլլար
կլինեինք	կըլլայինք
կլինեիք	կըլլայիք
կլինեին	կըլլային

Անցյալ ապառնի Բ

պիտի լինեի	պիտի ըլլայի
պիտի լինեիր	պիտի ըլլայիր
պիտի լիներ	պիտի ըլլար
պիտի լինեինք	պիտի ըլլայինք
պիտի լինեիք	պիտի ըլլայիք
պիտի լինեին	պիտի ըլլային

Անցյալ ապառնի Գ

լինելու էի	ըլլալու էի
լինելու էիր	ըլլալու էիր
լինելու էր	ըլլալու էր
լինելու էինք	ըլլալու էինք

լինելու էիք	ըլլալու էիք
լինելու էին	ըլլալու էին

Հրամայական եղանակ

Ներկա

մի՛ լինիր	եղիր	մի՛ ըլլար
մի՛ լինիք	եղէք	մի՛ ըլլաք

Անցյալ

թող լինեի	թող ըլլայի
թող լինեիր	թող ըլլայիր
թող լիներ	թող ըլլար
թող լինեինք	թող ըլլայինք
թող լինեիք	թող ըլլայիք
թող լինեին	թող ըլլային

Ստորադասական եղանակ

Ներկա

լինեմ	ըլլամ
լինես	ըլլաս
լինի	ըլլայ
լինենք	ըլլանք
լինէք	ըլլաք
լինեն	ըլլան

Անցյալ անկատար

լինեի	ըլլայի
լինեիր	ըլլայիր
լիներ	ըլլար
լինեինք	ըլլայինք
լինեիք	ըլլայիք
լինեին	ըլլային

Դերբայներ

Անորոշ՝	լինել		ըլլալ
Ներկ.		եղող	
Անց.	եղել	եղած	եղեր
Ապ.	լինելու		ըլլալու
	լինելիք		ըլլալիք

Ինչպես դրաբարում, նաև նպես և բարբառներում և աշխարհաբարում կան նաև ուրիշ օժանդակ բայեր, որոնք գործածվում են հատկապես ոճաբանության մեջ։ Դրանցից մի մասը գուգադիպում է ուրիշ լեզուների օժանդակների հետ։ Այսպես՝

Նստիլ.— *Օրինակ՝ նստեր է՝ գիր կգրէ. Անի քաղաք նստեր կուլայ.=նստի՝ առասպելս կարկատէ. Եղն.— հմմտ. թրք.* oturmuš yazə yazar «Նստեր գիր կգրե»։

Ուզիմ.— *Գործածական է Պոլսի բարբառում և արևմտահայ գրականում. ինչպես՝ Աստնկ բան տեսած ունիմ.— Աստնկ կերա-կուր կերած չունէի.— Համապատասխանում է արևելահայ բարբառների կալ ձևին. ինչպես՝ Այս տեսակ բան սկի տեսած կամ։ Նույն է ֆրանսերենի և ուրիշ եվրոպական լեզուների «ունիմ» օժանդակի հետ, բայց ֆրանսերենի հետևությամբ չէ. այլ թուրքերենի, ուր ունենք նույնպես, օրինակ՝* gördiyin var mə? *տեսած ունի՞ս=տեսած ես սկի։*

Անել *(արևմտ. ընել).— Գործածվում է շատ տեսակ բառերի հետ և կազմում է բայ. ինչպես՝ հայհոյութիւն ընել «հայհոյել», տեղը ընել «տեղում բնական կարիքը հոգալ», ա՞խ ընել «հառաչել», գիր անել «կախարդել, հմայել» և այլն։ Հատկապես գործածվում է օտար բայերի դերբայական ձևի հետ՝ հայաձև խոնարհվելու համար. օրինակ՝ ռուսերենից՝ ժարիա անել «տապակել», թրք. խուռմիշ ընել «լարել (ժամացույցը և այլն)», բեզերմիշ ընել «ճարել, հարմարցնել, հնարքը գտնել» և այլն և այլն. այսպես է նաև ճապոներենում, ուր չինարեն փոխառությունները խոնարհվում են* suru «անել» *օժանդակով։*

Իմանալ.— *Թավրիզի բարբառում գործածվում է իբր օժանդակ՝ ուրիշ բայերի հետ՝ «կարենալ» նշանակությամբ. ինչպես՝ Ձեմ իմանըմ ուտել «չեմ կարողանում ուտել». նույն է ֆրանսերեն* savoir «գիտենալ», *բայց նաև «կարողանալ». օրինակ՝* La Lituanie avait su résister à toutes les attaques «*Լիտվանիան կարողացավ դիմանալ բոլոր հարվածներին»։ Անշուշտ հետևողությունն է թուրքերենի, ուր* bil-mek «*գիտենալ, իմանալ*» *բայը ծառայում է իբր «կարողական» բայ։— Այս բայի տեղ Նոր-Նախիջևանի բարբառում գործ է ածվում ըլալ, լալ «լինել» օժանդակը «կարենալ» նշանակությամբ։ Դյուղացիք արդեն կրնայ բայը ջնջած են և նրա փոխարեն գործ են ածում ըլալ. օրինակ՝ Բան հասկըցնել գըլայի՞ր վօր «Կարող էիր բան հասկացնել». Ուտելու գըլա՞ս «Կարող ես ու-*

տել»։ Բաղաքում թեև «կարենալ» բայը կա (հինը գարնալ, նորը գրնալ), բայց գործածական է նաև ըլալ ձևը։

Երթալ.— *Յույց է տալիս եղած վիճակի շարունակությունը. գործածվում է միշտ Գ դեմքի հրամայականով. ինչպես՝*

Քնած է.— Թող երթա քնի։
Գրում է.— Թող երթա գրի։

Կարիլ.— *Նշանակում է «դառնալ, վերածվել» և գործածական է զանազան ոճերով. օրինակ՝ քար կարիլ, ջուր կարիլ, էշ կկարիս.*

Հող կարեցան, մոխիր դարձան իմ ծիրանի երազները...։

Դառնալ.— *Նույն ձևով կազմում է ոճեր. օրինակ՝ հող դառնալ, ջուր դառնալ, մարդ դառնալ և այլն, և այլն։*

ԳԼՈՒԽ Թ

ԲԱՐԴ ԵՎ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Բալկան այն բոլոր ձևերը, որ նկարագրեցինք նախորդ էջերում թե՛ գրաբարի, և թե՛ աշխարհաբարի մեջ, կոչվում են պարզ, քանի որում բաղկացած են մի բառից:

Այժմ պիտի խոսենք բարդ և բաղադրյալ ժամանակների մասին:

Այս երկու բառերը հոմանիշ են և հարմար են բոլոր եվրոպական լեզուների, ինչպես նաև գրաբարի համար: Սրանց մեջ բայը, բացի պարզ ձևերից, ունի նաև այնպիսի ձևեր, որոնք կազմված են էական կամ օժանդակ բայի հարադրությամբ և կոչվում են բարդ կամ բաղադրյալ: Այսպես՝ ֆրանսերեն j'ai aimé «սիրել եմ», գերմաներեն ich bin gegangen «գնացել եմ», անգլերեն I have vashed «լվացել եմ», գրաբար լուեալ եմ, տեսեալ եմ, տեսանելոց եմ և այլն:

Բայց աշխարհաբարում բայերը երկու տեսակ այսպիսի ձևեր ունեն. մի մասը կազմված է օժանդակ բայով (տեսել եմ, բերել էի), մյուս մասը զանազան բառերով (կու, կը (կ), պիտի, թող), որոնք նույն էական կամ օժանդակ բայերի ձևերը չեն, այլ ուրիշ անկախ բայերի ձևացորդներ: Այս պատճառով, եթե եվրոպական լեզուների և գրաբարի այս կարգի ձևերը կարելի է անխափ և հաճախ բառացիորեն կոչել բարդ կամ բաղադրյալ, աշխարհաբարում անհրաժեշտ է զանազանել երկու տիպերը: Առաջիններն (օժանդակ բայով կազմվածները) կոչվում են բաղադրյալ, երկրորդները (բայերի ձևացորդներով կազմվածները) կոչվում են բարդ:

Սխալ չէ, որ մի որևէ լեզվի կամ բարբառի մեջ գտնված բաղադրյալ մի ձև անհրաժեշտաբար ուրիշ լեզուների կամ

բարբառների մեջ էլ բաղադրյալ լինի: Օրինակ՝ անգլերենում շարունակական ներկա I am going «գնում եմ» ձևը բաղադրյալ է, մինչդեռ նրա համապատասխան ներկան gidiyorəm ձևը պարզ է, իսկ պղտահայ բարբառով կերթամ կոր ձևն էլ բարդ է:

Այսպես էլ մեր երկու գրական լեզուների և ժողովրդական բարբառների մեջ:

Ըստ այսմ մեր ներկա քննության մեջ էլ մենք պիտի հանենք միայն բայական ժամանակների ձևին կամ կազմության և ոչ թե իմաստին կամ նշանակության:

1. ԲԱՐԴ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Աշխարհաբարի և բարբառների մեջ գտնված բարդ ժամանակները 8 հատ են.

1) Սահմանական ներկա
2) Սահմանական ներկայի շարունակական
3) Սահմանական անցյալ անկատար
4) Սահմանական անցյալ անկատարի շարունակական
5) Ապառնի
6) Անցյալ ապառնի
7) Բարդ հրամայական
8) Բարդ հրամայականի անցյալը:

Ա. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱ

Միջին հայերենում գրաբարի ներկան սաորադասական ներկայի տեղն անցնելուց հետո, բան ներկայի համար հնարվեց կու նախամասնիկով ձևը. կու սիրեմ, կու խօսիմ և այլն: Այս նորաձև ներկան տարածվեց ու սովորական դարձավ բովանդակ հայաբնակության մեջ: Այս ձևն է, որ շարունակում է իր գոյությունը մինչև այսօր էլ արևմտահայ (կը ճյուղ) կոչված բոլոր բարբառներում (հնչական թեթև փոփոխություններով), որոնցից էլ անցավ արևմտյան գրականին:

Արդի բարբառներում 14 ձև է ստացած այս նախամասնիկը. այն է՝ կու, կը, գ'ու, գի, կ'. գ', գա, գօ, գը, գի, քը, քու, քի, որոնք բոլորը ծագում են առաջին և նախնական կու ձևից: Նկատենք նաև, որ այս մասնիկը երբեմն բայից նախադաս է և երբեմն հետադաս:

Ամենաշատ տարածված ձևն է կը (արևմտյան հնչմամբ գրված գը), ինչպես ունեն Մշո, Վանա և Ոզմիի բարբառները. օրինակ՝

Մշ. կը սիրիմ, կը սէանիմ, կը սիրի, կը սիրին. վէն. կը թափիմ, կը թափիս, կը թափէ, կը թափինք, կը թափիք, կը թափին. Ոզմ. կը բ'իրիմ, կը խօսէմ, կը տանէյմ և այլն. վէն. կը խաւսաւնամ, կը խաւսաւնաս, կը խաւսաւնա, կը խաւսաւնանք, կը խաւսաւնաք, կը խաւսաւնան:

Կը հետագաս է կարնո և Բաբերդի բարբառներում. ինչպես՝

սիրէմ կը	սիրէնք կը
սիրէս կը	սիրէք կը
սիրէ կը	սիրէն կը

Կը մասնիկը հնչվում է գը և նախադաս գործ է ածվում Տիգրանակերտի, Մալաթիո, Խարբերդի, Երզնկայի, Մարաշի, Եվդոկիայի, Սվեդիայի, Աւլանբեգի, Պոլսի, Ռոտոսթոյի, Նոր-Նախիջևանի, Սրիմի և այլն բարբառների մեջ. ալսպես՝

Պլ.	Մլր.	Խրր.	Սվեդ.
գը սիրէմ	գը փէրիմ	գը սիրիմ	գը սիրիմ
գը սիրէս	գը փէրիս	գը սիրէս	գը սիրիս
գը սիրէ	գը փէրէ	գը սիրա	գը սիրէ
գը սիրէնք	գը փէրինք	գը սիրինք՛	գը սիրինք
գը սիրէք	գը փէրէք	գը սիրէք՛	գը սիրիք
գը սիրէն	գը փէրէն	գը սիրէն	գը սիրին

Եվդ.	Ասլ.	Նախ.	Ռ.
գը սիրիմ	գը սիրիմ	գը լսիմ	գը սիրիմ
գը սիրէս	գը սիրէ՛ս	գը լսիս	գը սիրէս
գը սիրէ	գը սիրէ՛	գը լսէ	գը սիրէ
գը սիրինք	գը սիրինք	գը լսինք	գը սիրինք
գը սիրէք	գը սիրէ՛ք	գը լսիք	գը սիրէք
գը սիրէն	գը սիրին	գը լսին	գը սիրին

Կը մասնիկը (հնչվելով գը) Սեբաստիալում կարող է դրվել թե՛ նախադաս և թե՛ հետադաս, ինչպես՝

Հարցնէ գը, ցքէ գը կամ գը ցքէ:

Սահմանականի ներկա ժամանակը Սվեդիալի բարբառում կազմվում է սորբագասական ներկալի վրա ավելացնելով գը (<կը) նախամասնիկը. ձայնավորով սկսվող բառերի մոտ այս գը սղվում

լով դառնում է գ. իսկ այն երևույթը, որ սրիշ բարբառներում կա, որով միևնույն գամ, լամ, տամ բայերը սահմանում են կու մասնիկը, ալստեղ ինքնին ջնջված է, քանի որում այդ բայերը վերածված են ուզ'իլ, ուիլ, գվիլ ձևերին:

Ահա չորս լծորդության բայերի սահմանական ներկալի պատկերը.

գը սիրիմ	գը խուսէմ	գը հագցում
գը սիրիս	գը խուսէս	գը հագցուս
գը սիրէ	գը խուսա	գը հագցո
գը սիրինք	գը խուսէնք	գը հագցունք
գը սիրիք	գը խուսաք	գը հագցաք
գը սիրին	գը խուսէն	գը հագցուն
գը թուղամ	գը բաքնիմ	գուգիմ
գը թուղաս	գը բաքնիս	գուգիս
գը թուղա	գը բաքնէ	գուգէ
գը թուղանք	գը բաքնինք	գուգինք
գը թուղաք	գը բաքնիք	գուգիք
գը թուղան	գը բաքնին	գուգին

Կը մասնիկը դառնում է գի և դրվում է բալին նախադաս՝ Սուչավալի բարբառում. ինչպես՝

գի սիրիմ	գի սիրինք
գի սիրիս	գի սիրիք
գի սիրէ	գի սիրին

Այս բարբառում գի մասնիկը ձայնավորով սկսվող բալերից առաջ սղում է իր ի ձայնավորը. օրինակ՝

Լհ. գազագիմ

Լհ. գաղնամ «կազամ (ցորենը)»

Լհ. գաբլիմ «կթաղնեմ»

Հնգ. գ'ամիչնան «ամաչում են»

Սչ. գուգիմ, գափսըսնամ «կափսոսամ», գաբրի, գէրթամ, գըլա «կլինի»:

Զարմանալի կերպով «արձակել, ընծալել, ընկերել» բալերը ձայնավորից առաջ չեն սղում գի մասնիկի ի ձայնավորը. ալսպես՝

գի ացգ'ըրիմ, բի ացգ'ըրիմ

գի ընձալիմ «կծնիմ»

գի ընգէրիմ «կօգնեմ»

Այս երեք օրինակներն էլ պատկանում են լեհահայոց բարբառին (իսկ Հնգ. ունենք կի իշիմ «կհիշեմ»)։

Սուչավայում գոնում եմ գուզէի ձէձիմ<կուզէի ծեծեմ «պիտի ծեծեի» ձևը, որ կարող է ընդհանուր եղած լինել նույն բարբառին։ Բան այսմ՝

գուզէի ձէձիմ<կուզէի ծեծեմ
գուզէիս ձէձիս<կուզէիր ծեծես
գուզէր ձէձէ<կուզէր ծեծէ
գուզէինք ձէձինք<կուզէինք ծեծենք
գուզէիք ձէձիք<կուզէիք ծեծէք
գուզէին ձէձին<կուզէին ծեծեն

Այս բոլորը՝ ենթապրաբար։

Կը մասնիկը հնչվում է գու և դրվում է հետադաս՝ Տրապիզոնի և Համշենի բարբառներում. ինչպես՝

Համշ.	Համշենի Մալայի շրջ.	Տր.
պէրիմ գու	բ'էրիմ գու	սիրիմ գու
պէրիս գու	բ'էրիս գու	սիրիս գու
պէրա գու	բ'էրէ գու	սիրէ գու
պէրինք գու	բ'էրիք գու	սիրինք գու
պէրէք գու	բ'էրէք գու	սիրիք գու
պէրին գու	բ'էրին գու	սիրին գու

Համշենի բարբառում իւղոտիլ>յեղօգուլ բառը համարվում է բաղաձայնով սկսվող և ներկան լինում է յեղօգիմ գու։ Կարելի չէ կրկնել մասնիկը՝ *ոչ կուտիմ կու ձևով, ոչ էլ կուզիմ կու, ոչ էլ կուտօմ կու և այլն։

Մարաշի բարբառում ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն գառնում է գը, գի, գու. ինչպես՝

գը գարթօմ «կը կարգամ»
գը գէնիմ «կը գտնեմ»
գի սիրիմ «կը սիրեմ»
գու խումիմ «կը խմեմ»

Գառնում է գիւ Ակնա բարբառում և դրվում է նախադաս. ինչպես՝

գիւ խըրգիմ գիւ խըրգինք
գիւ խըրգիս գիւ խըրգէք
գիւ խըրգէ գիւ խըրգին

Ծանոթ.— Maxudianz, Le parler arm. d'Akn, էջ 86, 88 և այլն գնում է gu, բայց Ճանիկյան, Հնտթ. Ակնայ, գնում է կիւ. օրինակ՝ էջ 292 հատվածում հաշվում եմ 7 կիւ. այսպես՝ կիւ տամ, կիւ գալ, կիւ բերին, կիւ ճնալ, կիւ տալ, կիւ քաշին, կիւ ծեծին։ Երևի թաղային տարբերությունն է, որովհետև Մաքսուդյանի տառաճաշերտածը Ակնա վարի թաղի բարբառն է։

Գառնում է գօ Զեյթունի բարբառի մեջ և դրվում է նախադաս. այսպես նաև Կյուրինի բարբառով։ Կիլիկիայի (Զեյթուն) բարբառում ներկան կազմվում է գօ մասնիկով, եթե բայը սկսվում է բաղաձայնով. ինչպես՝

գօ սիլիմ «սիրում եմ», գօ բ'իլիմ «բերում եմ», գօ ձիձիմ «ծեծում եմ», գօ դիանում «տեսնում եմ», գօ խաղօմ «խաղում եմ», գօ հիշիմ «հիշում եմ», գօ նօմ «լցնում եմ»։

Միավանկ բայերը (գամ, լամ, տամ), որ ուրիշ բարբառներում բացառությունն կազմելով ներկայի կազմության ընդհանուր կանոնից շեղվում են, Զեյթունի բարբառում ստանում են նույնպես գօ մասնիկը, ինչպես՝ գօդ'օմ, գօղօմ, գօլօմ (նկատենք, որ այս երեք բայերն էլ բաղաձայնով են սկսվում)։

Ձայնավորով սկսվող բայերը ներկայի կազմության համար երկու ձև ունեն.

ա) Մեծագույն մասամբ ստանում են բաղաձայններին հատուկ նույն գօ մասնիկը. ինչպես՝

իջանել—գօ իջնօմ
առնուլ—գօ առնում
անցանել—գօ անցնըմ
ազատել—գօ ազատըմ
աշխատիլ—գօ աշխատըմ
անիծել—գօ անիձիմ
անարդել—գօ անըղդ'իմ
ուրախանալ—գօ ուլախնօմ
օծել—գօ ուձիմ
օրհնել—գօ ուղնիմ
օրօրել—գօ իլլիմ

բ) Ուրիշ բայեր, բնականաբար ամենից սովորականներն ու գործածականները, այս գօ մասնիկից հետո կրճատում են բայի նախաձայն ձայնավորը: Օրինակ՝

ասել—ասիլ—գօ'սիմ
ուտել—ուդիլ—գօ'դիմ
երթալ—իլթօլ—գ'ըլթօմ
առնել—էնիք—գօ'նիմ
ափել—իփիլ—գ'օփիմ
ելանել—իլլիլ—գօ'լլիմ
երերալ—իլալնօլ—գօ'լալնօմ

Ծանոթ.— Ուրախանալ—ույախնօլ բայը, որ առաջին ձևով դառնում է գօ ույախնօմ կարող է նախաձայն ու ձայնավորը փոխելով առանալ նաև գօ իյախնօմ և գօ ըյախնօմ ձևերը:

Ապառնիի Ա ձևը կազմվում է բաղաձայնով սկսվող բայերի առորադասական ներկայի սկիզբը դնելով գու (<կու) մասնիկը. ինչպես՝

տեսանել>դիսնուլ—գու դիսնում
խաղալ>խաղօլ—գու խաղօմ
քերել>քիլիլ—գու քիլիմ
բերել>բ'իլիլ—գու բ'իլիմ
ծեծել>ձիձիլ—գու ձիձիմ
լիշել>հիշիլ—գու հիշիմ

Միավանկ բայերի ապառնին էլ կազմվում է նույն ձևով. ալսպես՝

գու գ'օմ «կը դամ», գու դօմ «կը տամ», գու լօմ «կը լամ»:

Ձայնավորով սկսվող բայերի ապառնի Ա ձևը կազմվում է առորադասական ներկայի սկիզբը ավելացնելով գ մասնիկը, որ ուրիշ բան չէ, եթե ոչ նույն գու մասնիկի կրճատ ձևը. ինչպես՝

առնուլ>առնուլ—գառնում
ափել>իփիլ—գիփիմ
անցանել>անցնըլ—գանցնըմ

Ըստ այսմ սահմանական ներկա և ապառնի ձևերը, որ կը ճյուղի բարբառներում միևնույն ձևն ունեն, Զեյթունի գավառակում տարբեր են իրարից և տարբերվում են նրանով, որ բաղաձայնով սկսվող, ինչպես և միավանկ բայերի մեջ, ներկան առա-

նում է գօ մասնիկը, ապառնին՝ գու մասնիկը, թեև այս երկուսը միևնույն բաներն են և երկուսն էլ ծագում են կու նախաձայն ձևից: Իսկ ձայնավորով սկսվող բայերի մեջ ներկան դարձյալ կազմվում է նույն գօ մասնիկով, ապառնին էլ աղյալ գ ձևով:

Այստեղ դնում ենք մի քանի բայերի ներկա և ապառնի ձևերի ցուցակը՝ տարբերությունը ավելի ցայտուն կերպով ցույց տալու համար.

	Ներկա	Ապառնի
աշխատիլ>աշխադըլ	գօ աշխադըմ	գաշխադըմ
անցանել>անցնըլ	գօ անցնըմ	գանցնըմ
առնուլ>առնուլ	գօ առնում	գառնում
օրհնել>ուրհնիլ	գօ ուրհնիմ	գուրհնիմ
օծել>ուձիլ	գօ ուձիմ	գուձիմ
ապառնիլ>ապադըլ	գօ ապադըմ	գապադըմ
իշանել>իչնօլ	գօ իչնօմ	գիչնօմ
ուրախանալ>ուլախնօլ	գօ ուլախնօմ	գուլախնօմ
>իլախնօլ	գօ իլախնօմ	գիլախնօմ
>ըլախնօլ	գօ ըլախնօմ	գըլախնօմ
անիծել>անիձիլ	գօ անիձիմ	գանիձիմ
անարդել>անըլդ'իլ	գօ անըլդ'իմ	գանըլդ'իմ
գալ գ'օլ	գօ գ'օմ	գու գ'օմ
տալ>դօլ	գօ դօմ	գու դօմ
լալ>լօլ	գօ լօմ	գու լօմ

Վերը տեսանք ձայնավորով սկսվող մի խումբ բայեր, որոնց ներկան կազմելու ժամանակ գօ մասնիկի մոտ սղվում է բայի առաջին ձայնավորը: Այս նույն բառերի ապառնին կազմելու ժամանակ ալսպիսի սղում տեղի չի ունենում, այլ ձայնավորով սկսվող մյուս բայերի նման, սովորական կերպով դրվում է գ: Այսպես՝

	Ներկա	Ապառնի
ուտել>ուդիլ	—գօ'դիմ	գուդիմ
առնել>էնիլ	—գօ'նիմ	գէնիմ
ափել>իփիլ	—գօ'փիմ	գիփիմ
ելանել>իլլիլ	—գ'օլլիմ	գիլլիմ
երերալ>իլալնօլ	—գօ'լալնօմ	գիլալնօմ

Բացառություն են կազմում երկու բայ, որոնց ներկան թեև

կանոնավոր է, բայց ապառնին շեղվում է ընդհանուր կանոնից։ Այս բայերն են՝

ասել > ասիլ — գո՛սիմ, գիսիմ
երթալ > իլթօլ — գո՛լթօմ, գուլթօմ
(փոխանակ լինելու բուռ օրինի *գասիմ, *գիյթօմ)։

Կեսարիայի և Տարենտեի մեջ կը կամ կու դառնում է կա և դրվում է առաջնի մեջ նախադաս, երկրորդի մեջ հետադաս. ինչպես.

Տարենտե՝ բերեմ կա, Կեսարիա՝ կա բերեմ, կա կարդամ, կա գրեմ, կա կարեմ, կա սիրեմ և այլն։

Ձայնավորով սկսվող բայերի մոտ կը կամ կու սղվելով դառնում է կ կամ գ. ինչպես՝

Վն.	Ոզմ.	Տիգ.	Տր.
կուգեմ	կուգեմ	գուգիմ	գուգիմ
կուգես	կուգիս	գուգիս	գուգիս
կուգի	կուգի	գուգէ	գուգէ
կուգենք	կուգինք	գուգինք	գուգինք
կուգէք	կուգիք	գուգէք	գուգիք
կուգեն	կուգին	գուգին	գուգին

Համշենի Հմշ.	Մալայի շրջ.	Պլ.	Սվեդ.
գուգիմ	գուգիմ	գուգէմ	գուգիմ
գուգէս	գուգիս	գուգէս	գուգիս
գուգո	գուգէ	գուգէ	գուգէ
գուգիք	գուգիք	գուգէնք	գուգինք
գուգէք	գուգէք	գուգէք	գուգիք
գուգին	գուգին	գուգէն	գուգին

Ինչպես տեսնում ենք, Համշենի և Տրապիզոնի բարբառներում գը մասնիկը ձայնավորի մոտ նախադաս է, բաղաձայնի մոտ հետադաս։

Սվեդիալի բարբառում, երբ բառը սկսվում է ա ձայնավորով, գը նախամասնիկը ոչ միայն կորցնում է ը ձայնավորը, այլև ինքն էլ վերածվում է գ՛. ինչպես՝ առնել — գ՛առնիմ, ասել — գ՛ոսիմ և այլն։

Կարնո բարբառում ձայնավորով սկսվող բայերի մոտ կը դրվում է երկու անգամ՝ կ ձևով՝ բայից առաջ և կը ձևով՝ բայից հետո. օրինակ՝

կէնէմ կը	կէնէնք կը
կէնէս կը	կէնէք կը
կէնէ կը	կէնէն կը

Մի քանի բայ կա, որոնք այս դեպքում սառնում են գ՛, փոխանակ կ. այսպես են ըլլիլ, ըցնիլ, ուզել և այլն. ինչպես՝

գ՛ըլնիմ կը	գ՛ըլնինք կը
գ՛ըլնիս կը	գ՛ըլնիք կը
գ՛ըլնի կը	գ՛ըլնին կը

Երբ կը-ին անմիջապես հաջորդում են օր (որ), ու շաղկապները, արագախոսությեան դեպքում կը մասնիկը ը-ի սղումով կարող է միանալ դրանց և սառցվել կօր, կու ձևերը, օրինակ՝ ասէ՝ նի կօր սըղէն բ՛էրընքսըվար լընգած գ՛ուլա, վազէ կու մօրը լիմաց կուտա։

Առանց կը մասնիկի ներկա են կազմում գ՛իդեմ, ուզիմ, կամ, եմ բայերը, որոնց ժխտականը կազմվում է պարզ ձևով՝ դրականի վրա ավելացնելով չ ժխտականը։

Այսպես է նաև Սեբաստիայի բարբառում, ուր կարելի է գը մասնիկը կրկնել կամ ոչ. ինչպես՝

գէլլէ կամ գէլլէ գը
գէրթա կամ գէրթա դը
գըսեն գը

Այսպես է նաև Արաբկիրի բարբառը. ինչպես՝ գըսum գու, գէթա գու։

Իսկ Զեյթունի բարբառը թեև կրկնում է մասնիկը, բայց երկուսն էլ դնում է նախադաս. այսպես՝ գօ գիփիմ «կեփեմ», գօ գուզիմ «կուզեմ»։

Երեք միավանկ բայ կա (գալ, լալ, տալ), որոնք կը մասնիկի տեղ առնում են կու։ Այս կու ձևը կարող է դառնալ գու. Կարնո բարբառում պահանջում է նաև հետադաս կը, իսկ գալ բայի մոտ դառնում է գ՛ու (բայի նախաձայն գ՛-ի նմանողությամբ)։

Այսպես՝ մինչդեռ Պոլիս և այլն ունենք՝

գուլամ	գուգամ	գուքամ
գուլաս	գուգաս	գուքաս

գուլա	գուգա	գուքա
գուլանք	գուգանք	գուքանք
գ՝ուլաք	գուգաք	գուքաք
գուլան	գուգան	գուքան

Կարնո բարբառը ներկայացնում է հետևյալ ձևերը.

կուլամ կը	կուամ կը	գ՝ուգ՝ամ կը
կուլաս կը	կուաս կը	գ՝ուգ՝աս կը
կուլա կը	կուա կը	գ՝ուգ՝ա կը
կուլանք կը	կուանք կը	գ՝ուգ՝անք կը
կուլաք կը	կուաք կը	գ՝ուգ՝աք կը
կուլան կը	կուան կը	գ՝ուգ՝ան կը

Համշենի բարբառում այս երեք բայերից չընչվել է լամ (գործածվում է միայն Տրապիզոնի շրջանում, իսկ ճանիկցիք փոխանակել են վայել >վայուշ ձևով).— գամ բայի մոտ գու դառնում է կու: Այսպես՝

Տրապ.		Տրապ.	
գուլօմ	գուգամ	կուկամ	քուքամ
գուլաս	գուգաս	կուկաս	քուքաս
գուլա	գուգա	կուկա	քուքա
գուլօ(ն)ք	գուգօնք	կուկօնք	քուքօ(ն)ք
գուլէք	գուգաք	կուկ՝աք	քուքէք
գուլօն	գուգօն	կուկօն	քուքօն

Վանի բարբառում այս միավանկ բառերի մոտ դրվում է կու. օրինակ՝

կու կլամ	կու կլանք՝
կու կլաս	կու կլաք՝
կու կլա	կու կլան

Առոխալի բարբառում գու մասնիկն է տարածված. այսպես՝ Հն. գուգ՝ամ, գուգամ, գուլամ:

Մշո բարբառում այս երեք բայերը առացել են նախաձայն ի և դարձել իգ՝ալ, իալ, իլալ, որով կարիք չի զգացվել գոյ ծածկելու կու մասնիկը և գրվում է կ. ինչպես. կիգ՝ամ, կիամ, կիլամ և այլն: Միևնույն հանգամանքի պատճառով ենք նաև Տիգրանակերտի բարբառում, ուր ավելանում է չորրորդ միավանկ բայը (որ է պահական կայ, կայ). այսպես՝ իլալ, իք՝ալ, իգալ, իգալ: Այս

Բաղաքը	Ձալքր
դը բէրիմ	կը պերիմ
դը բռնիմ	կը պռնիմ
դու գուդնում	կու կուդնում
քա քամ	կու կամ

Երբ մի քանի ներկա ձևեր իրար հաջորդեն, կը մասնիկը կարող է միայն վերջինի մոտ գրվել. այսպես օրինակ, Կարնո բարբառով՝ ճամփան քունը տաճի գլյնի կը, զարմանաց մնաց կը: Այս բանը գրում է մինչև իսկ, երբ բայը դանադան ուրիշ բառերով անջատված է միմ. օրինակ՝ հոգնին, արուն քրտինք մանին կը:

Ընդհանուր օրենքով կը մասնիկը (իր. բոլոր տեսակներով) դրվում է անմիջապես բայի վրա. բայց մի խումբ բայական ոճերի մեջ կարող է բայից բաժանվել և դրվել հարակից բառի վրա: Ինչպես՝ Ննխ. գը մաճ քա «ման է գալիս», գը ձաճ գա «ձայն է տալիս, կանչում է», քը փախ գա «փախ է տալիս, վազում է», գարուլ դա փիս. ապուլ կուտա «թողնում է, արձակում է» և այլն: Այս բոլորի մեջ ոճը իրր մի միակ բառ է ընդունված: Սրա հետևանք՝ թյուրաեռեսությամբ մի միակ բառը իրր ոճ առնվելով՝ բաժանված է գօրինջգալ «հորանջել» և ևդած է գօրինջ դալ, ըստ այսմ կատարյալ գօրինջ դուվեց (փոխանակ ասելու գօրինջգաց):

Նման ձևեր կան նաև երևանի բարբառում. ինչպես՝ ինձ կ'ուշունց տա՞ս փիս. ինձ ուշունց կտա՞ս, իրրև «հալհոլել»՝ ընդունելով մի բառ, բայց չի կարելի ասել ինձ կը ճաց տա՞ս:

Սահմանական ներկայի կազմությանն կողմից բոլորովին անկախ ու առանձին դիրքի վրա է կանգնած Մուրջուրի բարբառը, որ գրաբարի սահմանական ներկայի ձևը մինչև այժմ անաղարտ պահում է (առանց կը մասնիկի հավելման). ինչպես՝

Ա՛խչի, իտա չ'ուլա նո՞լ տանիս.
մի տունն ի նի տանիմ:

Կու մասնիկը գործածվում է միայն ձայնավորով սկսվող բառերի և միավանկ բայերի հետ. ինչպես՝

Մի (մեր) տուն դ'ուդ'ա՞ս:

Նույն ձևը պահում է նաև Մալաթիայի բարբառը, որի մասին ևս հաջորդ հատվածում (շարունակական ներկա)

Մենք մինչև այժմ խոսեցինք կը ճյուղի բարբառների մասին. բայց Ում ճյուղն էլ ունի կը մասնիկով կազմված բայաձևեր: Տարբերությունն այն է, որ մինչդեռ կը ճյուղի մեջ այս ձևը զուտ ներկա է (ինչպես միջին հայերենում) և երկրորդաբար նաև ապառնիի նշանակություն ունի (ինչ. վաղը կերթամ, այս երեկո կգրեմ), ընդհակառակը, Ում ճյուղի մեջ նա ապառնիի նշանակություն միայն ունի և ներկա չէ: Բայց եղել է ժամանակ, երբ Ում ճյուղի մեջ էլ նա գործածվել է իրր ներկա միայն և այդ պահվում է մինչև այժմ էլ պատմական ներկայի ձևով: Դրա համար էր, որ վերը կը ձևով ներկայի համար ասացի, թեև նա տարածված էր բովանդակ հայութեան մեջ:

Պատմական ներկան հնքիաթների մեջ գործածված ներկան է, որ Երևանի բարբառում էլ շատ հաճախ լինում է կը ձևով: Օրինակ՝

Ժամանակով մի թաքաւոր կըլի. թաքաւորին կուներնա իրեք աղա, իրեք ախչիկ: Ես որ մեռնիմ, կասի թաքաւորը, ով սրճիցը կուզի իմ ախչիկը, կը տաք նրան: Թաքաւորը մեռնելուց հետո մի բազրգեան կը գա թաքաւորի ախչիկը ուզելու: Մենձ ախպէրն ու միշնեկ ախպէրը տալիս չեն, պուճուր ախպէրը կասի. էտիմ բաժինն ա, ես տալիս եմ: Կը տա բազրգեանի տղին: Մի տարուց հետո էլի ըդ'ենց մի բազրգեան կը գա թաքաւորի ախչիկն ուզելու, մէնձ ախպէրն ու միշնեկ ախպէրը էլի տալիս չեն, պուճուր ախպէրը կը գա, կասի. խո՛ չէք տալի, մեր հօր վասեաթը կատարեք: Մենձ ախպէրը կասի. Քնզ ի՞նչ. լիրեք ախպէր ենք, լիրեք քիր. դու քու բաժինը տվել ես, էտ մեր բաժինն ա, չենք տալի:—Ախպէր, կասի. իմ հօր մալը ձեզ, էս ախչիկը տվէք ինձ, պրտի տամ մարթի: Էտ ախչկանն էլ վեկուցի, կը տա էտ բազրգեանի տղին:

(Լալաեան, Մարզպարիտեներ, Ա 246):

(Մատրագծված 13 ձևերը ներկա են):

Այսպես է նաև ելյուղը, ուր պատմական ներկան կազմվում է կը ձևով: Օրինակ՝ Արդվինի բարբառով՝ ...էն մէշումը Սալէթումէն կու աշին օրը (որ) Արթվինումէն մարթ կու դուս գա. գուգան կուփնտռին խիտը (=«կամուրջ»)...

Ահա այս պատճառով մի քանի խոսք էլ Ում ճյուղի այս ձևի մասին անհրաժեշտ ենք համարում ասել:

Երևանի բարբառը իրրև մասնիկ գործածում է կը ձևը, Տրփդիսի բարբառը՝ կու ձևը: Օրինակ՝

Երևան	Տփղիս
կը սիրէմ	կու սիրիմ
կը սիրէս	կու սիրիս
կը սիրի	կու սիրէ
կը սիրէնք	կու սիրինք
կը սիրէք	կու սիրիք
կը սիրէն	կու սիրին

Ձայնավորով սկսող բայերի առաջ այս մասնիկը Երևանի բարբառում կրճատվում է միշտ և դառնում է կ: Իսկ Տփղիսի բարբառում երբեմն կրճատվում է և դառնում կ, բայց շատ անգամ էլ մնում է անփոփոխ. ինչպես՝ կեհամ, կեբբամ, կուճեհամ, բայց մնում է անփոփոխ. ինչպես՝ կու առնիմ, կու ազատիմ, կու աղօթիմ, կու երիմ, կու իմանամ և այլն: Ուզել բայի մոտ վերածվում է թրթռուն գ.— գուզիմ, գուզիս. այսպես է նաև գուբամ, գուբաս «կգամ, կգաս» և այլն: Ածել, աճել, ասել բայերի մոտ կու մասնիկը միանալով նրանց նախաձայն ա-ի հետ՝ առաջ է բերում կօ ձայնախումբը. այսպես՝ կօծիմ, կօճիմ, կօսիմ և այլն:

Արգվինուհի էլ մասնիկն է կու, որ ձայնավորի մոտ մնում է. ինչպես՝ կու փնաըռնի, կու աշին:

Ղարաբաղի բարբառում մասնիկն է կը, որ խուլ բաղաձայնների մոտ դառնում է քը. ինչպես՝

քը սիրիմ	քը սիրինք
քը սիրիս	քը սիրիք
քը սիրի	քը սիրին

Նոր-Ջուղայի բարբառում կը մասնիկը ստանում է ə ձև.

կը, որ գործ է ածվում խուլ բաղաձայնով սկսող բայերի հետ. ինչպես՝ կըտամ, կկեցամ.

կ, որ գործ է ածվում ձայնավորով սկսող բայերի մոտ. ինչպես՝ կերբամ.

գ'ը, որ գործ է ածվում շնչեղ թրթռուն բաղաձայնով սկսվող բայերի մոտ. ինչպես՝ գ'ը բ'երիմ, գ'ըգ'ում, գ'գ'ընիմ, գ'ձ'ելիմ, գ'ըզ'րիմ.

գը, որ գործ է ածվում պարզ թրթռուն բաղաձայնով սկսվող բայերի մոտ. օրինակ՝ գըրգամ, գլամ, գգուա, գդասեմ (պրս. دسته dasta «կապոց» բառից).

քը, որ գործ է ածվում շնչեղ խուլ բաղաձայնով սկսվող բայերի մոտ, ինչպես՝ քըքորեմ, քըթողնեմ, քըցանեմ, քըչափեմ, քըխըճդամ:

Հ կամ յ ձայնով սկսվող բայերի մոտ կ ձայնը միանալով նախաձայնի հետ՝ դառնում է գ', ինչպես՝ գ'ալադամ, գ'անդ'իպեմ, գ'աստադեմ, գ'ուսադվիմ, գ'արձ'ակեմ և այլն:

Ստորև դնում ենք մի մի օրինակ բոլոր ձևերից.

կասեմ	գ'բ'երեմ	գլամ	քըփորեմ
կասես	գ'բ'երես	գլաս	քըփորես
կասի	գ'բ'երի	գլա	քըփորի
կասենք	գ'բ'երենք	գլանք	քըփորենք
կասէք	գ'բ'երէք	գլէք	քըփորէք
կասեն	գ'բ'երեն	գլան	քըփորեն

Ջահարմահալի (Նոր-Ջուղայի գավառ) բարբառը ներկայացնում է խառն դրութիւն: Ըստ Ա. Երեմյանի (Ջահարմահալի հայ ժող. բանահիւսութ., Վիեննա, 1923) ասված օրինակների՝ այս բարբառում ձայնավորով սկսվող բայերը ստանում են կ, միավանկերը կու, թավ բաղաձայնով, շչական և ճ շնչով սկսող բայերը քը- օրինակ՝ կօնեմ «կանեմ» (էջ 20, 70), կօծեմ «կածեմ» (70), կուտամ (70), գուգամ (իմա գ'ուգ'ամ) (70), քըփորեմ (69), քքաշի (59, 62), քչօքի (60), քըչորցնեմ (70), քըփռեմ, քիքաշեմ, քըքանդեմ, քըթաղեմ (70), քըհանեմ (70) քհնձես (60), քըհալեմ (69), քը շինեմ (70), քշատը «կշատնայ» (59), բայց միևնույն ժամանակ կան նաև՝ պարզ խուլի մոտ՝ քկոտրի (59), քծեծեն (60), քկօտրվի (61), քըկիսեմ (69), քը կապեմ (70), քը կրակեմ (70), քը տանեմ (70), քիթի (25), քկանգրեցնեմ (20). թրթռունի մոտ՝ քմենձնալ (61), քվլալ (61), քըղնեմ (69), քըվիթեմ (70), քըշոկեմ (70), քմերի (25):

Այս բոլորից հետևում է այն, որ Ջահարմահալի բարբառում կ մնացել է միայն ձայնավորի մոտ, իսկ բաղաձայնների բոլոր տեսակների մոտ ընդհանրացել է քը ձևը:

Նկատելի է նաև, որ ապառնի (հին ներկա) բայերի առաջին դեմքի վերջում, մ-ից հետո երբեմն դրվում է նաև ը ձայնավորը. ինչպես՝ քըհանեմը, քըփռեմը, քըքաշեմը, քըվիթեմը, քըթաղեմը (բոլորն էլ էջ 70), մի անգամ էլ երկրորդ դեմքով՝ մեռնիսը (70): Կան սակայն բազմաթիվ դեպքեր, ուր այս հավելվածը չկա. ինչպես՝ քըհանեմ, քըկապեմ և այլն:

Հնդկահայոց մեջ կը ձևի հետ անխտիր գործածականն է նաև կու, որ դրվում է թե ձայնավորով և թե բաղաձայնով սկսվող բայերի մոտ. ինչպես՝ կու ուզեմ, «կը նկնկնեա», կու մրսես, կու սիրես, կու ճանդիպի, կու սովորեմ և այլն: Գիլանենցի ժամանակագրության մեջ գտնում ենք երեք բայ, որոնք թեև սկսվում են ձայնավորով, բայց զարմանալի կերպով չեն կրճատում կը՝ մասնիկը. ինչպես՝ կը ամպրեն (112), կը լիմանայ (112), կը ընկանի (97, 196), կը ընկաննեն (181). այսպես նաև բացառական՝ չը ընկանի (199):

Մարաղալի բարբառումն էլ այս ձևը գործածվում է: Պարզ ապառնին կազմելու համար առորագասական ներկայի վրա դնում են կ մասնիկը. եթե բայը ձայնավորով է սկսվում, և կամ կը. եթե բաղաձայնով է սկսվում. ինչպես՝

կիւզիւմ	կը ճաշնամ
կիւզիւս	կը ճաշնաս
կիւզիւ	կը ճաշնա
կիւզիւնք՛	կը ճաշնանք
կիւզէք՛	կը ճաշնաք
կիւզիւն	կը ճաշնան

Ե ձայնավորը բառասկզբում հնչվելով յէ՝ նրանով սկսվող բայերը առանում են կը և ոչ կ. ինչպես՝ կը յեռամ «կեռամ», կը յէրքիմ «կերգեմ»:

Երբ բաղաձայնով սկսվող մի բառի առաջին ձայնավորը թեթև է, կը մասնիկը կարող է դառնալ կի. միևնույն բայերի հետ այս ձայնափոխությունը անհրաժեշտ է. ինչպես՝ կի թոփիմ կամ կը թոփիմ, կիկ՛ամ, կիկ՛աս, կիկ՛ա, կիկ՛անք, կիկ՛աք, կիկ՛ան, կիլամ, կիլաս և այլն: Բայց կամ, կաս և այլն, իբրև ծանր, պահում են կը: Երբ բաղաձայնով սկսվող բայի առաջին ձայնավորն է ու, մասնիկը կարող է դառնալ կու, ինչպես՝ կու ուշամ, կու զուրցաս և այլն: Եթե ձայնավորն է ի, մասնիկը կարող է դառնալ կի. ինչպես՝ կիւ գիւզացուցեմ, կիւ քիւնցիւցիմ «կը քննցնեմ», թեև կարելի է նաև ասել կըքիւնցիւցիմ և այլն:

Թավ բաղաձայնով սկսվող բայերի մոտ կ կարող է դառնալ ք. ինչպես՝ կի թոփիմ կամ կը թոփիմ, քըխմիճ, քշինիս, քիքիցիմ «կը գցեմ»:

Բզզալ բայի ապառնին կազմելու ժամանակ ոչ թե կը մասնիկն է, որ հետևում է բառի նախաձայնին, այլ բայն է, որ հետևում է նրան և լինում է կզզամ, մինչդեռ մյուս ժամանակներն ունեն բզզալ և այլն:

Ուրմիայի բարբառումն էլ պարզ ապառնին կազմվում է նաև ձևով. ինչպես՝

կլէմ	կլէնք՛
կլէս	կլէք՛
կլէ	կլեն

(Ղարիբյան, Հայոց լեզվի պատմ. ներած., 231)

Միայն Ագուլիսի բարբառն է, որ կը մասնիկով կազմված ապառնի ձևը չի ճանաչում բնավ, և նրա փոխարեն ապառնին կազմում է բայի անորոշ դերբայից՝ հետը խոնարհելով էական բայի ներկան, ինչպես կտեսնենք հետո:

Բարբառներից և միջին հայերենից ժառանգելով՝ մեր երկու գրական լեզուներն էլ գործ են ածում կը-ով կազմված բայաձևերը, արևմտյան գրականը սահմանական ներկայի իմաստով, որ կարող է նաև իբրև ապառնի առնվիլ, իսկ արևելյան գրականը միայն ապառնի իմաստով:

Մասնիկի ձևն է կը, որ գործածվում է ամեն տեսակ բաղաձայնով սկսող բայերից առաջ անխտիր: Ձայնավորից առաջ՝ ձայնավորը սղվելով դառնում է կ: Միավանկ (գամ, լամ, տամ) բայերի մոտ արևմտյան գրականը գործածում է կու, իսկ արևելյան գրականը չգիտե այս ձևը և միշտ ամենուրեք գործածում է կը:

Բարբառային այն ձևը, որով հաջորդական մի քանի բայերի մոտ կը կարելի է չկրկնել (վազեմ բերեմ կը), անկարելի է գործածել գրական լեզվի մեջ: Պատճառն այն է, որ այս ձևը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կը հետադաս է. իսկ գրական լեզուն երբեք չգիտե հետադաս կը:

Գրական լեզվի մեջ հարց է դառնում, թե ե և ո ձայնավորներով սկսվող բայերի մոտ պետք է կը սղել թե ոչ: Արևելյան գրականում, ժողովրդական արտասանության համաձայն, սկսել են գրել կը երգեմ, կը եփի, կը որոշեմ և այլն, մեկնելով այն բանից, որ այդպիսի բառերի մեջ ե, ո ունեն սկզբից բաղաձայն տարր (յերգել, վորոշել): Արևմտյան գրականը այդպիսի տատանում չի ունեցել երբեք և գրում է միշտ կ'երգեմ, կեփէ, կ'որոշեմ և այլն:

Մաքուր գրական հայերենի պահանջն էլ այս է:

Արևմտյան գրականում հարց է բարձրացած նաև այն մասին,

թե ինչպես պետք է գրել կը նախամատնիկը: Ալանյանն իր «Քննական քերականության» մեջ, էջ 77, գրում է.

«Ինքնին յայտնի է ըստ ծննդեան, և ոչ շատ խորին բանասիրութիւն պէտք է իմանալու համար թէ արդեօք նեղիլ է մինչև այսօր ըստ կամի սղել կարել և սոսկ կ գրի վերածել արդի կը մասնիկն, որ արդեն քանի մը հեղ սղած կծկած ու ամփոփման լեռ տին սահմանը հասած է. ինչպես ոմանք (թերևս անմտագրաբար) կը գրեն՝ կգրեմ, կկրկնեմ, կարամիմ, կուրանամ. (թող թեամբ) կը գրեն՝ կգրեմ, կկրկնեմ, կարամիմ, կուրանամ. այլևայլ շփոթութիւններն որ անկէ կը ծագին. ինչպես՝ կուրանամ թէ ուրանալ և թէ կուրանալ բայէ. կուտէ հաւատարապէս ուտել և կուտել բայէ. կուսանի՝ ուսանիլ բայէ և կուսանօ գոյականէ, և այլն): Բայց թէ միայն տաղաչափութեան համար պահանջուած տեղ-տեղ այդ ազատութիւնը (միշտ ապաթարց նշանը պահելով) կարելի է թէ իրաւացի համարուի»:

Այս խոսքերից երևում է, որ Ալանյանի ժամանակ՝ 1) արդեն վեճ կար կը ձևի գրության մասին, 2) ոմանք գրում էին պարզապես կ', 3) ուրիշներ նույնիսկ ապաթարց էլ չէին գործածում, 4) Ալանյանը պահանջում է կը, 5) որովհետև ուզում է, որ առանձնական ծագումը դոնե մի քիչ երևա, 6) խուսափելու համար հոմանուն բառերի շփոթությունից, 7) ներելի է միայն ոտանավորի մեջ գործածել կ':

Այնուամենայնիվ տարբեր ձևով գրողներ եղել են միշտ. օրինակ՝ Ալանյանից 9 տարի հետո, Մ. Մամուրյանը իր «Անիծեալն» վիպի թարգմանության մեջ, Զմյուռնիա, 1875, գրում է, հատ. Ա, էջ 186. հրաժեշտ կ'տար, 191 ինչո՞ւ համար կ'գար, հատ. Բ, էջ 13 կ'գային, 54 կ'գան, 82 կ'պատէին, 85 կ'փայլեցընէին և այլն: Միայն տողադարձի ժամանակ գործածում է կը. ինչպես՝ կը-կարկամին Բ 119, կը-գան Գ 102:

Արևմտահայերը գրում են առանձին, բայից անջատ. արևելահայերը մի ժամանակ գրում էին անջատ կամ բային կից. օրինակ՝

Նրա զենքերն կը կապեմ և Ապոլոնի տաճարի մէջ կը կախեմ. ձեզ կը միայ վերցնել նրա դին... (Հոմերի Իլիակ. թրգմ. Փ. Վարդանեան, Թիֆլիս, 1886, էջ 91). բայց՝ Անշուշտ մեզ կը-փըրկեն (էջ 74):

Ձայնավորի մոտ կրճատմամբ լինում է կ' կամ պարզապես կ. անկարելի է դնել կը, նույնիսկ տողադարձի ժամանակ. օրինակ՝

Արդեօք կը իշխեմ մի սրաթռիչ նետ արձակել...
(Հոմերի Իլիակ. թրգմ. Փ. Վարդանեան, Թիֆլիս, 1886, էջ 67):

Այսօր արևմտահայերը գրում են միշտ բաղաձայնի մոտ՝ բայից անջատ կը, որ ձայնավորի մոտ կրճատվելով՝ առանում է ապաթարց կ', իսկ միավանկ բայերի մոտ՝ կու. որ ոմանք միացնում են բային, ոմանք էլ անջատ են գրում: Այսպես՝ կ'երթամ, կը բերեմ, կուգամ. կու գամ:

Իսկ արևելահայերը ամեն դեպքում էլ գրում են անբաժան կ (առանց ապաթարցի). այսպես՝ կասեմ, կրկնեմ, կգամ:

Արևմտահայերը ս, զ, շ բաղաձայններով սկսվող բայերից առաջ կը գրում են երկու ձևով. ոմանք կը, ուրիշներ կ': Առաջիններն գտնում են, որ ս, զ, շ բաղաձայն են, ուստի նրանցից առաջ պիտի գրվի կը՝ սովորական օրենքով: Մյուսները պնդում են, որ այդ բաղաձայնները հնչվելով ըս, ըզ, ըշ՝ պարունակում են նախավոր ձայնավոր, ուստի պետք է գրել կ': Այսպիսի վեճ չկա արևելյան գրականում: Դիտել պետք է սակայն, որ գրության մեջ առավելություն պետք է տալ ականջին և ոչ թե աչքին: Անգլերենում անորոշ հոդը ձայնավորի մոտ գրվում է an, բաղաձայնի մոտ a. բայց օրինակ union բառը, թեև ձայնավորով է սկսվում (ըստ գրության), բայց որովհետև հնչվում է yu- նախավանկով, ուստի համարվում է բաղաձայնավոր և առանում է a. Ֆրանսերենում էլ h բաղաձայն է, բայց երբ բառասկզբում չի հնչվում, համարվում է, թեև բառը սկսվում է ձայնավորով և գրվում է de, le հոդերի փոխարեն d', l'. ինչպես՝ d'homme, l'histoire: Ըստ այսմ, մեր մեջ էլ ավելի ճիշտ պիտի լիներ գրել կ'ստանայ կ'զգենու, կ'շտապի և այլն:

Սակայն բոլորովին անմիտ է միավանկ բայերի մոտ գրված կու նախամատնիկը գրել ապաթարցով կ'ու, ինչպես անում են արևմտահայ գրողներից ոմանք: Օրինակ՝

Միշտ կ'ուզային զգացնել իրենց ներկայութիւնը: Հայ կամավորական խմբեր անարգել ման կ'ուգային գաշտին վրայ (Կիլիկիան տարեցոյց, 1922, էջ 169):

Ի լրումն այս հատվածի՝ տալիս ենք բոլոր լծորդություններին, ինչպես և անկանոն բայերի սահմանական ներկայի ամբողջական խոնարհումը աշխարհաբարում, երկու գրական լեզուներով.

Ա լծորդություն, ա տիպար	Ա լծորդություն, բ տիպար (արևմտ.)
կսիրեմ	կը պագնեմ
կսիրես	կը պագնես

կսիրէ (արևել. նաև կսիրի)	կը պագնէ
կսիրենք	կը՛պագնենք
կսիրէք	կը պագնէք
կսիրեն	կը պագնեն

Բ լծորդություն, ա տիպար (արևմտ.)

կը խօսիմ	
կը խօսիս	
կը խօսի	
կը խօսինք	
կը խօսիք	
կը խօսին	

Բ լծորդություն, բ տիպար

արևմտ.	արևել.
կը հագնիմ	կհագնիմ
կը հագնիս	կհագնիս
կը հագնի	կհագնի
կը հագնինք	կհագնինք
կը հագնիք	կհագնէք
կը հագնին	կհագնին

Գ լծորդություն, ա տիպար

կկարդամ	
կկարդաս	
կկարդայ	
կկարդանք	
կկարդաք	
կկարդան	

Գ լծորդություն, բ տիպար

կիմանամ	
կիմանաս	
կիմանայ	
կիմանանք	
կիմանաք	
կիմանան	

կանեմ	= կ՛ընեմ	կդնեմ	կուտեմ
կանես	կ՛ընես	կդնես	կուտես
կանէ (կանի)	կ՛ընէ	կդնէ (կդնի)	կուտէ (կուտի)
կանենք	կ՛ընենք	կդնենք	կուտենք
կանէք	կ՛ընէք	կդնէք	կուտէք
կանեն	կ՛ընեն	կդնեն	կուտեն

կը տանիմ	= կառնեմ
կը տանիս	կառնես
կը տանի	կառնի (կառնէ)
կը տանինք	կառնենք
կը տանիք	կառնէք
կը տանին	կառնեն

կուգամ	= կգամ
կուգաս	կգաս
կուգայ	կգայ
կուգանք	կգանք
կուգաք	կգաք
կուգան	կգան

կերթամ	
կերթաս	

կերթամ	կուտամ = կտամ
կերթաս	կուտաս կտաս
կերթայ	կուտայ կտայ
կերթանք	կուտանք կտանք
կերթաք	կուտաք կտաք
կերթան	կուտան կտան

Այս բոլորի մեջ արևմտահայ ձևերը գուտ ներկա են, որ երկրորդաբար նաև ապառնիի արժեք ունեն, իսկ արևելահայ ձևերը միայն ապառնի են: Արևմտահայոց մեջ բաղաձայնի մոտ կ գըրվում է միշտ և անջատ կը, իսկ ձայնավորի մոտ՝ ապաթարցով կ՛:

Բ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆԸ

Ընդհանրապես ներկա ասելով հասկանում ենք այժմ կատարված մի գործողություն. գրում (այժմ): Բայց երբ ավելի ուշադրությամբ դիտում ենք ներկան, տեսնում ենք, որ նա այլևայլ զանազանություններ ունի: Այսպես՝

1) Ընդհանուր երևույթներ, որոնք միշտ եղել են և միշտ էլ պիտի լինեն. ինչպես՝ Կապարը ծանր է կշռում. Ջուրը եռում է 100 աստիճանում. 2×2 լինում է չորս. Արևը ծագում է արևելքից:— Սրանք հավիտենական ճշմարտություններ են:

2) Իրողություններ, որոնք սկսել են շատ ու շատ հին ժամանակ և մինչև ներկա րոպեն էլ շարունակվում են: Օրինակ՝ Միլիոնավոր դարերն ի վեր երկիրը պտտվում է արևի շուրջը:

3) Երևույթներ, որոնք այդպես են եղել մոտիկ անցյալում և մինչև այժմ էլ շարունակվում են, բայց որոշ ժամանակի համար, որովհետև մշտական երևույթներ չեն: Ինչպես՝ Գնացքը կեսօրվա ժամը 12-ին է հասնում Երևան. Առավոտները վեր եմ կենում ժամը 8-ին և երեկոյին պառկում եմ ժամը 10-ին. Բնակվում եմ Արովյան փողոց, 85 համարում:

4) Դեպքեր, որ տևել են անցյալում, այժմ չկան, բայց մեկը խոսում է նրանց մասին այժմ: Օրինակ՝ լինում է, չի լինում մի հովիվ. այս հովիվը մի օր գնում է սար, ոչխարներ է արածացնում. հանկարծ տեսնում է մի գայլ...: Այսպիսի ներկան կոչվում է պատմական ներկա (Brugmann կոչում է գրամատիկական ներկա):

5) Դեպքեր, որ սկսել են ներկայումս և դեռ չեն վերջացել ու շարունակվում են (տևական ներկա):

Այս բոլորից ավելի կարևոր է վերջինը, որ հատուկ է մի քանի նոր լեզուների, հատկապես տաճկերենին և անգլերենին:

Անգլերենը գանազանում է երեք տեսակ ներկա. 1) այն, որ ընդհանրապես գործողությունն է ցույց տալիս. I love «սիրում եմ». 2) որ այժմ միայն կատարվում է. I do love. 3) տևական ներկա. I am loving «սիրում եմ այժմ և շարունակում եմ դեռ սիրել, սիրելիս եմ»:

Այս վերջինը, որ վերոհիշյալ 3-րդ ձևն է, անգլերենում կոչվում է գանազան անուններով: Սովորաբար կոչվում է progressive form-«առաջադիմական ձև». քերականագիտ Sweet կոչում է definite form «որոշյալ ձև», ինչ որ հաջող չէ, որովհետև այդ ձևի բայը ոչինչ չի որոշում: Jespersen կոչում է expended tense «ստացված ժամանակ»: Onions կոչում է continuous form «շարունակական ձև», որ արևմտահայոց մեջ էլ ընդունված բառն է:

Անգլերենում այս ձևը գործածական էր դեռ միջին-անգլերենում. բայց հետզհետե ավելի զարգացավ ժէ դարից: Համարվում է առաջացած I am on reading «կարդալու վրա եմ» ձևից, որ հետո եղավ I ama reading և ապա ստացավ արդի I am reading ձևը (BSL հատ. 33, № 100, էջ 119):

Անգլերենի այս ձևին նման կազմություն ունի հոլանդերենի շարունակական ներկան. այն է՝

ik ben schrijvende
ես եմ գրող (գրելիս)
(այժմ գրելու գործողության մեջ եմ),

որի անկատարն էլ լինում է՝

ik was schrijvende
ես էի գրող (գրելիս)
(գրելու գործողության մեջ էի):
(Valette, 220)

Նույն իմաստը տալու համար ֆրանսերենն ասում է. օրինակ՝

je suis à lire,
je suis en train de lire,
գվո. je suis après labourer,

որոնք այնպես արտահայտիչ չեն, ինչպես անգլերենը:

Անգլերենի հետ հավասար գծի վրա է կանգնած տաճկերեն alə-yor əm «առնում եմ», gidi-yor-əm «գնում եմ» և այլն ձևը, որ կազմված է -yor անձանոթ մասնիկով և ունի ճիշտ այժմ կատարելու և գործողությունը դեռ շարունակելու նշանակությունը:

Տաճկերենի այս ներկան տարբեր է պարզ ներկայից (alər-em, sever-im «առնում եմ, սիրում եմ»), որ միաժամանակ ապառնի իմաստ ունի (կառնեմ, կսիրեմ) և տևողություն ցույց չի տալիս:

Թրքական շոռ լեզվի մեջ այս -yor մասնիկի փոխարեն գտնում ենք čör ձևը. օրինակ՝

men para-čörüm
sen para-čörzin
ես կերթամ կոր
դու կերթաս կոր
(Дыренкова, 207)

Իսպաներեն լեզուն էլ ունի այսպիսի երկու ներկա. մեկը պարզ ներկան է, մյուսը՝ շարունակականն է, որ կազմված է estar «լինել» օժանդակ բայի հետ խոնարհելով ապրել բայի ներկա դերբայը. օրինակ՝ hablo *խոսում եմ* estoy hablando *(շարունակական)*:

Տաճկերենի ազդեցությամբ (բայց ոչ փոխառությամբ) հայերենի մեջ էլ կազմվել է շարունակական ներկայի (ինչպես նաև անկատարի) այս ձևը: Ասացի տաճկերենի ազդեցությամբ, որովհետև՝ նախ Կովկասում և Պարսկաստանում բնավ չկա այսպիսի ձև, գոյություն չունի նաև բուն Տաճկահայաստանում, Պարսկաստանի սահմանից մինչև Կարին, Ծարերդ և Տիգրանակերտ: Երևելյին սկսվում է միայն Բաբերդից ու Մալաթիայից և առաջանում է մինչև արևմտյան սահմանը (Ուռուսթո): Լեհաստանի, Հունգարիայի, Սուչավայի և Երիմի հայերեն բարբառներն էլ չգիտեն նման ձև:

Ասացի ազդեցությամբ և ոչ փոխառությամբ, որովհետև տաճկերենի *yor մասնիկը ոչ մի տեղ փոխ չէ առնված, և ամեն մի բարբառում մի առանձին մասնիկ է հնարված, որով կազմվում է այդ շարունակական ձևը (ներկա և անկատար):

Այս մասնիկներն են՝

Բաբերդ—կէ, էր, ընկէ
Մալաթիա—ա
Շապին-Գարահիսար—տար *(հնչվել դար)*, *շրջակա գյուղերում դէ. ինչպես՝ կըսխմ տար, կըսխս տար, անդ՛ը կէհամ տէ:*
Տրապիզոն—էր
Համշեն—ուճի *(տեղ-տեղ նաև կուճի)*
Մարաշ—կո

Արաբկիր—ընը, ը, ը (*հների մոտ մասնիկը ընը ձևն ունի. միջին տերունդի մեջ դարձել է ը, իսկ նորերի մեջ ը: Ձայնավորի մոտ լինում է միշտ ն: Օրինակ՝ կէրթամ ընը, կէրթամ նը, կէրթամ ը.— խմիս ընը, խմիս նը, խմիս ը.— բայց կէրթա ը, ինչպես նաև կէրթայի ը*):

Սեբաստիա—կօր (*հնչել* գօր)

Եվդոկիա—կօր

Ամասիա, Մարսվան—կա (*ինչպես՝ գրեմ կա, կէրթամ կա*)

Ալանբեգ—հա՛յ

Աատափազար—հայկակ (*հնչել* haygag)

Պօլիս—կօր (*հնչել* գօր)

Ռոտոսթո—կօր, երբեմն էլ կօ. օր (*ինչպես՝ կուտիմ կոր, կուտիմ կօ. կուտիմ օր*):

Ահա սրանցից մի քանի օրինակ.

Տր.	Տր.	Ալ.
կառնիմ էր	*սիրիմ էր*	*կը սիրիմ հայէ*
կառնիս էր	*սիրիս էր*	*կը սիրէ՛ս հայէ*
կառնի էր	*սիրէ էր*	*կը սիրէ՛ հայէ*
կառնինք էր	*սիրինք էր*	*կը սիրինք հայէ*
կառնիք էր	*սիրիք էր*	*կը սիրէ՛ք հայէ*
կառնին էր	*սիրին էր*	*կը սիրին հայէ*

Պլ.	Մլր.	Մլբ.	Մլբ.
կը սիրէմ կօր	*սիրիմ ա*	*կէրթամ ա*	*քամ ա*
կը սիրէս կօր	*սիրիս ա*	*կէրթաս ա*	*քաս ա*
կը սիրէ կօր	*սիրէ ա*	*կէրթայ ա*	*քայ ա*
կը սիրէնք կօր	*սիրինք ա*	*կէրթանք ա*	*քանք ա*
կը սիրէք կօր	*սիրէք ա*	*կէրթաք ա*	*քաք ա*
կը սիրէն կօր	*սիրէն ա*	*կէրթան ա*	*քան ա*

Այս բոլոր օրինակներից երևում է, որ շարունակականի մասնիկը բոլոր դեպքերում էլ լինում է միշտ հետադաս: Բայց ներկայի ձևը զանազան է լինում: Ամենից հետաքրքրականն է Մալաթիայի բարբառը, ուր շարունակականի մասնիկը (ա) դրվում է մաքուր ներկայի վրա (առանց կը մասնիկի), եթե բայը բաղաձայնով է սկսվում կամ միավանկ է: Միայն ձայնավորով սկսվող բայերն են, որ ունեն նաև կ նախամասնիկը: Այս երևույթը ցույց է տալիս, որ Մալաթիայի բարբառը նույնպես շարունակում է պահել անփոփոխ դրաբարի ներկան՝ Ստորջուրի բարբառի նման: Բայց Մալաթիան գերազանցում է Ստորջուրը նրանով, որ մինչդեռ Ստորջուրը միավանկ բայերի վրա արդեն դնում է կու, Մալաթիան դեռ չունի այդ հավելվածը՝ շարունակականի մեջ:

Մալաթիայի բարբառին նման են նաև Տրապիզոնի, Արաբկիրի, Ամասիայի, Մարսվանի և Սեբաստիայի բարբառները, որոնք նույնպես շարունակականի մասնիկը (Տր. եր, Սեբ. կօր) դնում են մաքուր ներկայի վրա, և միայն ձայնավորով սկսվող բայերն են, որ առնում են նաև կ՝ մասնիկը. ինչպես՝

Տր. սիրիմ էր, կառնիմ էր
Սեբ. բ՛էրէմ կօր, կընէք կօր, կուտէմ կօր
Արբ. խմիմ նը, կէրթամ նը
Ամասիա. գրեմ կա, կէրթամ կա:

Ավելի դեպի արևմուտք ձայնավորի և բաղաձայնի այս խրտությունը վերանում է, և շարունակականի մասնիկը դրվում է երկու դեպքումն էլ նույն ձևով. ինչպես՝

Ալ. կը սիրիմ հայէ
Աատփ. կէրթամ հայկակ
Պլ. կը սիրէմ կօր, կէրթամ կօր:

Շատ հետաքրքրական է նաև Ամասիայի և Զարշամպայի բարբառում շարունակականի վ մասնիկը, որ ինչպես բարբառագետ Հ. Գաղանճյան է (Ծաղիկ, 1899, սեպտ. 29, № 21 և առանձին նամակ ինձ ուղղված) գրում, դրվում է միայն ներկայի եզակի Դ դեմքի վրա: Այստեղ էլ բաղաձայնով սկսվող բայերը չունեն կը մասնիկը, իսկ ձայնավորով սկսվող, ինչպես և միավանկ բայերը ունեն կ. ալպես՝

վագէվ «վազում է».
ինչ կարթալ «ինչ է կարդում».
կուղէվ «ուզում է».
կուքալ «գալիս է».
կառնէվ «առնում է»:

Սահմանական ներկայի շարունակական ձևը Տրապիզոնի շրջանում և Մալալում կազմվում է ունի կամ գունի ձևով, իսկ Ճանիկի շրջանում հնարվել է բոլորովին նոր մի ձև.— անորոշ դերբայի հետ խոնարհվում է էական բայի ներկան. օրինակ՝

բ՛էրիմ գունի	*բ՛էրիք գունի*
բ՛էրիս գունի	*բ՛էրիք գունի*
բ՛էրէ գունի	*բ՛էրին գունի*

(որ և բ'էրիմ ունի, բ'էրիս ունի և այլն), գաշարցընիմ ունի «կարգացնում եմ (այժմ)»:

Ձայնավորով սկսվող բայերն առանում են միայն ունի ձևը. այսպես՝ գուդիմ ունի «ուտում եմ այժմ», բայց չկա գուդիմ գունի. սրանից հետևում է, որ գունի ձևի նախաձայնը նույն կը մասնիկն է:

Ճանիկում դերբայը գործածվում է երկու ձևով. հները դնում են ուղղական ենթակա, որին կցում են անորոշ դերբայը՝ ավելացնելով էական բայի ներկա եզակի Գ դեմքը, իսկ նորերը այս ձևը չգիտեն, և ենթական դնում են սեռական հոլովով (առացական դերանվան ձևով):

Այսպես ըստ հների՝

յէս էգուշ m	մէք էգուշ m
տուն էգուշ m	տունք էգուշ m
էն էգուշ m	ընէր էգուշ m

Իսկ ըստ նորերի՝

իմս (իմը) էգուշ m «ես գալիս եմ (այժմ)»
քուզդգ (քուզը) էգուշ m «դու գալիս ես (այժմ)»
բնուրը էգուշ m «նա գալիս է (այժմ)»
միրը էգուշ m «մենք գալիս ենք (այժմ)»
ծիրը էգուշ m «դուք գալիս էք (այժմ)»
ընէցը էգուշ m «նրանք գալիս են (այժմ)»:

Առաջինը նման է անգլիական անթևքական ձևին, երկրորդը՝ գրաբարի սեռականով ենթակայի ձևին:

Սրանով հասկանում են, որ գործողությունը դեռ սկսված չէ, բայց սկսվելու վրա է:

Սվեդիայի բարբառում սահմանական ներկայի շարունակականը կազմվում է գը նախամասնիկի տեղ դնելով գու. բայց այս գու՝ ձայնավորով սկսվող բառերի մոտ չի ազվում, այլ միում է միշտ գու:

Զարմանալի է արդարև այս մասնիկի գործածությունը: Հայաստանից դուրս, Փոքր-Ասիայի ամեն կողմը հայ բարբառները լեզվի մեջ մացնելով շարունակականի դրությունը, ամեն տեղ էլ մի նոր մասնիկ են հնարել այս պաշտոնի համար (կոր, ճայե, ա, նը, տար, ըր, ունի): Իսկ Սվեդիայի բարբառը փոխանակ մի նոր

մասնիկ հնարելու, պաշտոնի բաշխում է կատարել կը, կու մասնիկների մեջ, առաջինին պահելով պարզ ներկան, մյուսին տալով շարունակականի դերը: Եվ որովհետև ձայնավորի մոտ երկուսն էլ պիտի նույնանային, այստեղ էլ հնարագետ մի միջոց է հնարել տղումը վերացնելով:

Ահա մի քանի օրինակ շարունակական ներկայից.

գու սիրիմ	գու բաքնիմ	գու հազդում
գու սիրիս	գու բաքնիս	գու հազդուս
գու սիրէ	գու բաքնէ	գու հազդօ
գու սիրինք	գու բաքնինք	գու հազդունք
գու սիրիք	գու բաքնիք	գու հազդոք
գու սիրին	գու բաքնին	գու հազդուն
գու առնիմ	գու ուդիմ	գու ուլում
գու առնիս	գու ուդիս	գու ուլուս
գու առնէ	գու ուդէ	գու ուլօ
գու առնինք	գու ուդինք	գու ուլունք
գու առնիք	գու ուդիք	գու ուլոք
գու առնին	գու ուդին	գու ուլուն

Տարբերությունը նույն է մյուս բայերի մեջ էլ. ինչպես՝ գուդօմ «տալիս եմ», գու ուդօմ «տալիս եմ (կոր)», գուգ'ում «գալիս եմ», գու ուգ'ում «գալիս եմ (կոր)» և այլն:

Դիտ.— Գու առնիմ... ներկայանը հատուկ է Եղոգն-Օլուգ գյուղին, իսկ Հաչի-Հարիրլի գյուղը, որի բարբառին ենք հետևել այստեղ, ունի՝

գօռնիմ	գօռնինք
գօռնիս	գօռնիք
գօռնէ	գօռնին

Այս օ ձայնը առաջանում է համաձայն այն ձայնական օրենքի, որով ա ձայնավորը, միանալով ու ձայնավորի հետ, դառնում է օ: Սրա համեմատ ունենք գօղում «կաղամ», գօխչ'իմ «կաղացնեմ», գօռնիմ «կարածեմ», գօսնեմ «կանցնեմ», գօղութիմ «կաղօթեմ» և այլն շարունակական ձևերը: Միայն ածել բայը տալիս է գունիմ: Իսկ սովորական կամ պարզ ներկայի մեջ ձայնավորի սղմամբ ունենք.

1) գ'ողում, գ'ոխչ'իմ, գ'ողութիմ և այլն, որոնց մեջ ա դարձել է ո և այդ պատճառով էլ գ դարձել է գ':

2) դառնիմ, դառձիմ (ռ-ի պատճառով ա ձևացել է անփոփոխ, և դրա համար զ չի քմայնանում)։

3) դանէմ «կանցնիմ», գինիմ «կանեմ»։

Շարունակական ներկան գոյութիւն ունի նաև կիլիկիայի բարբառում, բայց ձայնավորով սկսվող բայերի և միավանկ բայերի համար։ Ջարմանալի կերպով կազմվում է ապառնի Ա. ձևից, ավելացնելով նրա վրա զօ մասնիկը (ուրիշ խոսքով շարունակական ներկան՝ գումարն է ներկայի և ապառնիի)։

Մնորև դնում եմ ձայնավորով սկսվող մի խումբ բայերի և միավանկ բայերի ներկայի, ապառնիի և շարունակական ներկայի ձևերը.

Ներկա	Ապառնի	Շարուն.
ուտել>ուդիլու—դուդիմ	գօդիմ	գօգուդիմ
իջանել>իչնօլ—գիչնօմ	գօիչնօմ	գօգիչնօմ
առնել>էնիլ—գէնիմ	գօնիմ	գօգէնիմ
ելնել>իլլի—գիլլիմ	գօլլիմ	գօգիլլիմ
առնուլ>առնուլ գառնում	գօառնում	գօգառնում
անցանել>անցնըլ—գանցնըմ	գօանցնըմ	գօգանցնըմ
ազատել>ազադըլ—գազադըմ	գօազադըմ	գօգազադըմ
աշխատիլ>աշխադըլ—գաշխադըմ	գօաշխադըմ	գօգաշխադըմ
երևըալ>իլալնօլ—գիլալնօմ	գօլալնօմ	գօգիլալնօմ
օձնիլ>ուձիլ—գուձիմ	գօուձիմ	գօգուձիմ
օրհնել>ուրհնիլ—գուրհնիմ	գօուրհնիմ	գօգուրհնիմ
անիծել>անիձիլ—գանիձիմ	գօանիձիմ	գօգանիձիմ
անարդել>անըղդ'իլ—գանըղդ'իմ	գօանըղդ'իմ	գօգանըղդ'իմ

Ուրախանալ բայը առանում է երեք ձև, երեքն էլ նույն ոճով կազմում են՝

ուլախնօլ—գուլախնօմ	գօուլախնօմ	գօգուլախնօմ
իլախնօլ—գիլախնօմ	գօիլախնօմ	գօգիլախնօմ
ըլախնօլ—գըլախնօմ	գօըլախնօմ	գօգըլախնօմ

Միավանկ բայերը երեքն են. սրանցից երկուսը հետևյալ ձևերն են առանում.

լալ>լօլ	գուլօմ	գօլօմ	գօգուլօմ
տալ>տօլ	գուդօմ	գօդօմ	գօգուդօմ

Այս ամբողջ ցուցակի մեջ չորս բացառություն կա։ Նախ գալ միավանկ բայը թեև կանոնավոր կերպով կազմում է ներկան զօգ'օմ, ապառնին գուգ'օմ, բայց շարունակականը չի լինում *զօգուգ'օմ, ինչպես սպասելի էր, այլ նրա տեղ գործածվում է սովորական ներկան՝ զօգ'օմ։ Այս կորուստը տեղի է ունեցել նրա համար, որ խուսափեն երեք անգամ գ կրկնելուց։

Ասել>ասիլ բայից ունենք ներկա զօսիմ, ապառնի գիսիմ, բայց շարունակականը, որ ըստ օրինի պետք է լիներ *զօգիսիմ, չի գործածվում, և նրա տեղ դրվում է սովորական ներկան՝ զօսիմ։

Երթալ>իյթօլ բայից կազմվում է ներկա զօյթօմ, ապառնի գույթօմ, իսկ շարունակականը ոչ թե լինում է *զօգույթօմ, ինչպես պահանջում էր օրինքը, այլ բացառաբար զօգիյթօմ։

Վերջապես օրօրել>իյյիլ բայը թեև ունի կանոնավոր կերպով ապառնի գիյյիմ, նույնիսկ շարունակական ներկա զօգիյյիմ, բայց չունի սովորական ներկա (որ պիտի լիներ ըստ օրինի *զօիյյիմ կամ մանավանդ *զօ'յյիմ) և նրա տեղ գործ է ածվում շարունակական ձևը։

Բաղաձայնով սկսվող բայերը չունեն շարունակական ներկա. օրինակ՝ բերել>բ'իյիլ բայից ունենք ներկա զօբ'իյիմ, ապառնի գու բ'իյիմ, բայց շարունակական ներկան, որ ըստ օրինի պիտի լիներ *զօ գու բ'իյիմ, գոյություն չունի և նրա տեղ գործածվում է սովորական ներկան (զօ բ'իյիմ)։

Մնորև դնում ենք մի միավանկ բայի, մի ձայնավորով սկսվող բայի և մի հատ էլ բաղաձայնով սկսվող բայի ներկայի, ապառնիի և շարունակական ներկայի խոնարհման վեց եղրերի պատկերը.

	Ներկա	Ապառնի	Շարունակական
տալ>զօլ	զօզօմ	գուզօմ	զօգուզօմ
	զօզօս	գուզօս	զօգուզօս
	զօզօ	գուզօ	զօգուզօ
	զօզօնք	գուզօնք	զօգուզօնք
	զօզօք	գուզօք	զօգուզօք
	զօզօն	գուզօն	զօգուզօն
առնուլ	զօ առնում	գառնում	զօգառնում
	զօ առնուս	գառնուս	զօգառնուս
	զօ առնու	գառնու	զօգառնու
	զօ առնունք	գառնունք	զօգառնունք

	գո առնուք	գառնուք	գոգառնուք
	գո առնուն	գառնուն	գոգառնուն
	Ներկա	Ապառնի	Շարունակական
բերել	գո բ'իլիմ	գու բ'իլիմ	
	գո բ'իլիս	գու բ'իլիս	
	գո բ'իլէ	գու բ'իլէ	—
	գո բ'իլինք	գու բ'իլինք	
	գո բ'իլէք	գու բ'իլէք	
	գո բ'իլին	գու բ'իլին	

Ծանոթ.— *Զարտուղի ձև է ներկայացնում եղիլ «իւղել, իւղ քսել» բայը, որի ներկան լինում է ըստ օրինի* գո եղիմ, *շարունակական ներկան՝* գո գեղիմ, *ապառնին՝* գեղիմ, *բայց նաև* գիղիմ, *որ կարող ենք իբրև երրորդ բացառութիւն կցել* գիսիմ, գուշթօմ *բացառութիւններին։ Բացի սրանցից ունենք նաև երկու ձևով ապառնի՝* գու եղիմ *և* գու գեղիմ, *որոնք շեղվում են ապառնիի սովորական կանոններից։ Երկրորդ ձևը (*գու գեղիմ*) կարող է արդարանալ, եթե ենթադրենք, որ* եղիլ *բայը նաև* գեղիլ *ձևն ունի, իսկ առաջինը (*գու էղիմ*) հակառակ է ամեն կանոնի։*

Կը մասնիկի գործածութեան այս ձևերը իրենց նման ունեն Մոտրջուրի և Կարնո բարբառներում։ Մոտրջուրի բարբառում միավանկ բայերը, ինչպես և ձայնավորով սկսվող բայերը ունեն ներկայում կը մասնիկի գործածութիւնը, իսկ բաղաձայնով սկսվող բայերը չունեն. ինչպես՝ գ'ուգ'ամ, գ'ուգ'աս, գ'ուգ'ա, *բայց* ճօ՞յ *բայերը չունեն. ինչպես՝* գ'ուգ'ամ, գ'ուգ'աս, գ'ուգ'ա, *բայց* ճօ՞յ *բայերը չունեն. ինչպես՝* «ձեր կտանիս». *Կարնո բարբառումն էլ միավանկ բայերը և ձայնավորով սկսվող բայերը կը մասնիկը դնում են երկու անդամ (մի նախադաս և մի հետադաս), իսկ բաղաձայնով սկսվող բայերը միայն մի անդամ (հետադաս). օրինակ՝*

կուլամ կը	կէնէմ կը	սիրէմ կը
կուլաս կը	կէնէս կը	սիրէս կը
կուլա կը	կէնէ կը	սիրէ կը

Իսկ ինչ որ չափազանց զարմանալի է, և որին չեմ պատահած մինչև այժմ որևէ ուրիշ բարբառում, այդ այն է, որ հոդանջը (hiatus) *գործածվում է այստեղ իբրև բայական երկու հակառակ ժամանակներ կազմելու մի ձև.*

ներկա *գո առնում, գո առնուս, գո առնու*
ապառնի *գառնում, գառնուս, գառնու*

Այս երեւոյթը նշանակալից է ընդհանուր լեզվաբանութեան համար էլ, ուր մացնում է բոլորովին նոր մի միջոց ձևաբանութեան մեջ։

Այս բոլորի մեջ պարզ և շարունակական ներկաների տարբերութիւնը հետևյալն է։ Պարզ ներկան ցույց է տալիս միշտ կամ ընդհանրապես եղած մի գործողութիւն, շարունակականը՝ մի գործողութիւն, որ խոսված րոպեին է կատարվում։ Օրինակ՝ հարց է տրվում. Շունը ինչ կուտե (այսինքն թե շուն կոչված կենդանին առհասարակ իր կյանքում ինչով կապրի)։ Պատասխանն է՝ «Շունը հաց կուտե, միս կուտե, ոսկոր կուտե. ամեն բան կուտե, մինակ խոտ չուտե»։ Այսպիսի ներկան կոչվում է բուն կամ պարզ ներկա։ Բայց երբ խոսքը վերաբերում է մասնավոր մի շան այժմ ուտելուն, սասցվում է անմիջական կամ շարունակական ներկա։ Այսպես՝ «Սա դիմացի պատին տակ սև շուն մը նստեր է, բան մը կուտե կոր. ինչ կուտե կոր»։ – Պատասխան՝ «Ջուկի մը պոչ կուտե կոր».— շարունակական ներկա է։

Բուն Հայաստանում չեն ըմբռնում շարունակական ներկայի նրբութիւնը և ծաղրով են վերաբերվում կոր մասնիկի գործածութեան դեմ։ Օրինակ՝ Կարինում եղած ժամանակս (1894 թ.) լսել եմ մի այսպիսի ծաղրական նախադասութիւն կոր մասնիկը գործածողների հասցեին.

Կորկոտ ապուր կուտե՞ս կոր։

Ահնեցիք էլ, որոնք չունեն շարունակական ձև, կոր գործածողներին նախատում են՝ ասելով.

Կորը *(կարիճը)* քեզ խայթե։

Վերևում ասացինք, որ շարունակականի բոլոր տեսակի մասնիկներն էլ հետադաս են մեր բարբառներում։ Այս կողմից կարևոր բացառութիւն է կազմում Կեսարիայի հայախոս էֆքերև գյուղի բարբառը, որ, ըստ նկարագրողների, շարունակական ներկայի համար գործածում է կա մասնիկը, որ սակայն նախադաս է.

կա կ'ըլլալ «կըլլա կոր, լինում է»
կա կ'երթամ «կերթամ կոր, գնում եմ»
կա կուլամ «կուլամ կոր, լալիս եմ»

(Ալպոյաճյան, Պատմ. հայ Կես., Բ, 1635)

Դժբախտաբար տրված օրինակները ձայնավորով սկսվող և կամ միավանկ բայերի համար են, որոնք՝ ինչպես հայտնի է, կիրառութեյան առանձին ձև ունեն: Բաղաձայնով սկսվող բայերի մոտ տրված մի օրինակ շատ օգտակար պիտի լիներ ճիշտ ճանաչելու համար երևույթը, որ թևերև և բանալի պիտի լիներ կոր մասնիկի ծագումը բացատրելու: Մանավանդ որ ոչ-շարունակական, այլ պարզ ներկայի ձևն էլ տրվում է նույն կա մասնիկով՝ առանց կրկնութեյան. ինչպես՝ կա գրեմ, կա կարեմ, կա կարդամ և այլն (անդ, եջ 1644):

Այժմ երկու խոսք էլ շարունակական ներկայի առնդծման պատճառների և հանգամանքների մասին:

Երբ միջին հայերենում գրաբարի բայական դրութեյունը քայքայվելով հնարվեց կու մասնիկով ներկան, մի ժամանակ այդ ներկան նաև ապառնի էր: Ավելի ուշ հնարվեց պիտի ձևով ապառնին: Բայց կու ձևով ապառնիի գործածութեյունը կու ձևով ներկայի հետ միասին՝ մնաց, ինչպես որ մինչև այսօր էլ մնում է բուն Հայաստանի բարբառներում: Վան, Մուշ, Կարին կրեմ ձևը թե ներկա է, և թե ապառնի:

Լեզուների կյանքում եղել են դեպքեր, երբ այս կամ այն պատճառով միևնույն ձևը թե ներկա է եղել, և թե ապառնի: Բայց մարդիկ աշխատել են սրա դարմանը գտնել: Առաջին դարմանն է անշուշտ իսկական ապառնիի հնարումը, ինչպես եղավ նաև մեր մեջ (պիտի), բայց կարելի էր նաև ներկան բարեփոխել կամ նոր ներկա հնարել, ինչպես արել են Կովկասի դանադան հայ բարբառները (Երևան, Տիրեխ՝ ում և այլն):

Ներկան բարեփոխելու ձևերից մեկն էլ շարունակական ներկայի հնարումն է:

Մեզ օրինակ լինի հնդկական kalāšā (kafīrī) լեզուն, որի մեջ ներկան և ապառնին ընդհանրապես նույն են. օրինակ՝

ōnim	բերում	եմ	կամ պիտի բերեմ
dēm	տալիս	եմ	» պիտի տամ
im	գալիս	եմ	» պիտի գամ
parīm	գնում	եմ	» պիտի գնամ
pīm	խմում	եմ	» պիտի խմեմ
nisīm	նստում	եմ	» պիտի նստեմ

և որպեսզի շփոթութեյան առաջքը առնեն, հնարեցին շարունակական ներկայի ձևը, որ կազմվում է պարզ ներկայի վրա ավելացնելով dai մասնիկը. այսպես՝

dem dai	տալիս եմ	(կուտամ կոր)
parim dai	գնում եմ	(կերթամ կոր)
iu dai	գալիս է	(կուգա կոր)
kārīn dai	անում են	(կընեն կոր)

(Grierson, հատ. 10, էջ 254)

Ինձ հայտնի չէ, թե իրապես ինչ է նշանակում այս մասնիկը և թե որ լեզվի հետևողութեյամբ կամ ինչ աղբյուրից ծագեց այս լեզվի ներկա շարունակականի գաղափարը, բայց մեր մեջ կարելի է բացատրել այդ երևույթի ծագումը նախ կարիքի պահանջից առիթված (ինչպես Կովկասում -ում ձևը) և երկրորդ՝ թուրքերենի դրդիչ օրինակով (բայց ոչ փոխառութեյամբ):

Բոլոր այս շարունակական մասնիկները, նրանց հետ հաշվելով նաև կոր ձևը, խառիչ մերժված են գրական լեզվից: Կարելի է գտնել միայն ժողովրդական լեզվով գրված երկերի մեջ: Օրինակ՝ Գարոնյանի «Բաղաքավարութեյան վնասները»-ի մեջ՝

— Վազ անցա, պապամ, հոգիս ցավեցավ. երևաս կրակի պես կերի կոր:

— Բարկացած կերևաք կոր...

— Տես, դադրեցավ արյունը. չորս տեղեն միայն կը բղխի կոր:

(Հ. Գարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, Ա. հատ., Երևան, 1931, էջ 114)

Այժմ պիտի աշխատենք պարզել, թե ինչ է շարունակական մասնիկի ծագումը:

Իմ կարծիքով Մալաթիայի բարբառի ա մասնիկը հայերեն աճա բառի կրճատ ձևն է, և փերիմ ա նշանակում է բերեմ աճա «տես կրերեմ»: Սրա համաձայն էլ Արաբկիրի ընը—նը—ը շարքը կարող ենք դնել հանա «տեսավասիկ, տես» հոմանիշից, և Մալանթգի հա՛յե ձևը համարել ոչ թե հայիմ «գնալում եմ» բայից, այլ աճա է՞, ինչպես կսիրիմ հա՛յե «կսիրեմ տես է», որի հետ նույն է Առափազարի հայկակ ձևը:

Ամենից շատ տարածված ձևն է կոր, որ Սերաստիայից գնում է մինչև Ռոստովո, բռնելով ամբողջ Փոքր-Ասիայի արևմտյան մեծ կեսը: Այս մասնիկը համարում են ծագած տեսնկերեն yor հոմանիշից, ինչպես ընդունում է նաև Ալտնլան, Քնն. քեր. 76, տեսլով նաև, թե հայերենի մեջ «եա, եու և այլն ձայնով բառ չկան» համար տեսն. y դարձել է կ: Կարելի չէ ընդունել, որ y դար-

ձած լինի կ (=g)։ Թուրքերենից փոխառյալ բառերի մեջ առաւելյամբ ունենք բառասկզբում yo, yu և այլն ձայները. ինչպես՝ եօղուրթ «մածուն», եօղան «վերմակ», նուիֆխա «խմորեղենն» և այլն։ Ընդհանրապես լեզվից լեզու մասնիկներ փոխ չեն առնվում, բայց անհնարին չէ, որ այսպիսի անասովոր մի մասնիկ, որ ավելի բառիկի ձևն ունի, քան իսկական մասնիկի, փոխառյալ լիներ տաճկերենից։ Այս դեպքում yor ձևը ամբողջապես առնված պիտի լիներ։ Այսպես է Նիկոմիդիայի բարբառում։ Լսել եմ, որ Զմյուռնիայի հայոց բարբառումն էլ գործածական է նույն yor մասնիկը նիայի հայոց բարբառումն էլ գործածական է նույն yor մասնիկը շարունակականի համար. ինչպես՝ կուտեմ-եօր «կուտում կոր»։ Դրժբախտաբար դա միայն իմ մանկական հիշողություններից է, որ դեռ չեմ կարողացել ստուգել։ Զմյուռնիայի բարբառով գրված այն նամուշը, որ տալիս է Բոսլան, Հայք ի Զմիւռնիա (տպ. Վիեննա, 1899, էջ 300, արտատպ. Բրբռդ. էջ 239) չունի այդպիսի ձև, որովհետև տրիթ չի ունեցել գործածելու։

Ռոտոսթոյի բարբառում կոր սովորական ձևի հետ կան նաև կօ և օր ձևերը։ Համշենի բարբառումն էլ կա ուն և կուն։ Այս վերջինը բնականաբար կազմված է կը+ուն մասնիկների գումարից։ Եթե այսպես է, կարող ենք նաև կարծել, որ կոր ձևացած լինի կը մասնիկի և օր մասնիկի գումարից։ Արդեն Կարնո բարբառումն էլ, ինչպես վերը տեսանք, հետադաս կը մասնիկը որ շաղկապի հետ միանալով տալիս է կօր (=կ'օր) ձևը։

Ապացույցն է միայն ստուգել, թե այս օր մասնիկը, որ մըտնում է կոր մասնիկի կազմի մեջ, նույն տաճկերեն yor մասնիկն է, թե հայերեն որ շաղկապը։

Մնացյալ մասնիկներից կէ (որից ըսկէ), էր, տար (որից տե), ուն, և մանավանդ վ, ինձ բոլորովին անհայտ են։

Գ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐԸ

Ինչպես որ գրաբարի սահմանական ներկան միջին հայերենում առորադասականին անցնելուց հետո՝ նրա փոխարեն առեղծվեց կը-ով ներկայի ձևը, նմանապես գրաբարը անցնելով առորադասականի տեղը, նրա փոխարեն անցյալ անկատարի համար առեղծվեց մի նոր ձև։ Այս ձևը կազմվում էր միջին հայերենում գրաբարի անցյալ անկատարի վրա ավելացնելով կու նախամասնիկը, որ բարբառներում շարունակելով իր գոյությունը, անցավ արևմտահայ գրականին։

Կու, կը մասնիկի առացած ներկան ձևերի մասին արդեն խոսել ենք։ Գիտենք նաև, որ անկատարի այս նոր ձևը գործածական է միայն կը ճյուղի բարբառներում և արևելյան գրականում այդ ձևը դործածվում է իբրև անցյալ ապառնի։ Խոսել ենք նույնպես առորադասականի անցյալ անկատարի վերջավորությանց մասին, ուստի հիմա է մեզ տալ միայն մի քանի օրինակ տիպական բարբառների սահմանական անկատարից։

Պոլսի բարբառ

գը սիրէի	գէրթայի	գուքայի
գը սիրէիր	գէրթայիր	գուքայիր
գը սիրէր	գէրթար	գուքար
գը սիրէինք	գէրթայինք	գուքայինք
գը սիրէիք	գէրթայիք	գուքայիք
գը սիրէին	գէրթային	գուքային

Վանի բարբառ

կխաստանի	կուզի	կու կյի
կխաստանիր	կուզիր	կու կյիր
կխաստանէր	կուզէր	կու կյէր
կխաստանինք՛	կուզինք՛	կու կյինք՛
կխաստանիք՛	կուզիք՛	կու կյիք՛
կխաստանին	կուզին	կու կյին

Շարունակականի անկատար ձևը գոյությունն չունի Վանի բարբառում։

Առաիալի բարբառում սահմանականի անկատարը կազմելու համար նույն գի մասնիկը գնում են առորադասական անցյալի վրա. այսպես՝

գի սիրէի	գի նայէի	գի հազայի	գի թօղնուի
գի սիրէիս	գի նայէիս	գի հազայիս	գի թօղնուիս
գի սիրէր	գի նայէր	գի հազար	գի թօղնէր
գի սիրէինք	գի նայէինք	գի հազայինք	գի թօղնուինք
գի սիրէիք	գի նայէիք	գի հազայիք	գի թօղնուիք
գի սիրէին	գի նայէին	գի հազային	գի թօղնուին

Համշենի բարբառում կազմվում է գ կամ գու մասնիկով, առորադասականի անկատար ձևից, ինչպես՝

գուդէլը	պէրէլը գու
գուդէլդ(ը)	պէրէլդը գու
գուդէր	պէրէր գու
գուդալքը	պէրալքը գու
գուդէյքը	պէրէլքը գու
գուդէլնը	պէրէլնը գու
կուկալը	գուդալը
կուկալդը	գուդալդ
կուկալր	գուդալր
կուկալքը	գուդալքը
կուկալքը	գուդալքը
կուկալնը	գուդալնը

Մալայի շրջանում լինում է՝

բ'էրէլի գու	բ'էրէլը գու	գուդէլի
բ'էրէլիր գու		գուդէլիր
բ'էրէլդը գու		գուդէլդը
բ'էրէր գու		գուդէր
բ'էրալքը գու		գուդալքը
բ'էրէքը գու		գուդէքը
բ'էրէլդըք գու		
բ'էրէլնը գու		գուդէլնը

Ալտաեզ էլ կարելի չէ ասել մասնիկի կրկնությամբ՝ գուդէլի գու և այլն։

Մթալանկ բայերը լինում են նախորդի նման՝

գուդալը	կուկալ
գուդալդ	կուկալդ
գուդալր	կուկալր
գուդալքը	կուկալքը
գուդալքը	կուկալքը
գուդալնը	կուկալնը

Կարնո բարբառ

սիրէի կը	կէնէի կը	գ'ըլնէի կը
սիրէիր կը	կէնէիր կը	գ'ըլնէիր կը
սիրէր կը	կէնէր կը	գ'ըլնէր կը
սիրէինք կը	կէնէինք կը	գ'ըլնէինք կը

սիրէիք կը	կէնէիք կը	գ'ըլնէիք կը
սիրէին կը	կէնէին կը	գ'ըլնէին կը

կուլալի կը	կուտալի կը	գ'ուգ'ալի կը
կուլալիր կը	կուտալիր կը	գ'ուգ'ալիր կը
կուլար կը	կուտար կը	գ'ուգ'ար կը
կուլալինք կը	կուտալինք կը	գ'ուգ'ալին կը
կուլալիք կը	կուտալիք կը	գ'ուգ'ալիք կը
կուլալին կը	կուտալին կը	գ'ուգ'ալին կը

Տրապիզոն

Ոզմի	Ակն (ձայնավորի մոտ)		(բաղաձայնի մոտ)	
կուզէ	գու սիրէի	գէփէի	նալէի	գու
կուզէր	գու սիրէիր	գէփէիր	նալէիր	գու
կուզէր	գու սիրէր	գէփիր	նալիր	գու
կուզէնք	գու սիրէանք	գէփէինք	նալէինք	գու
կուզէք	գու սիրէիք	գէփէիք	նալէիք	գու
կուզէն	գու սիրէին	գէփէին	նալէին	գու

Ասլ.	Նեխ.	Նեխ.
գը սիրէի	գը լսէի	քը սիրէի
գը սիրէիր	գը լսէիր	քը սիրէիր
գը սիրէ՝ր	գը լսէր	քը սիրէր
գը սիրէանք	գը լսէինք	քը սիրէինք
գը սիրէիք	գը լսէիք	քը սիրէիք
գը սիրէին	գը լսէին	քը սիրէին

Սվեդիայի բարբառում *սահմանականի անկատարը կազմվում է սորագասականի անցյալի վրա ավելացնելով* գը (<կը) *մասնիկը, որ ձայնավորի առաջ ադվում է, իսկ ա ձայնավորից առաջ ոչ միայն ադվում է, այլև ինքն էլ դառնում է գ՛։*

Որովհետև սորագասականի անցյալը բոլոր լծորդությանց մեջ էլ միևնույն ձևն է առացած, ուստի բոլոր լծորդություններից էլ օրինակ չենք բերում և բավական ենք համարում միայն մի քանիսը.

գը սիրէր է	գուդէր է	գառնէր է
գը սիրէր	գադէր	գառնէր
գը սիրիր	գուդիր	գառնիր
գը սիրէր ինք	գուդէր ինք	գառնէր ինք

գը սիրէր իք	գուդէր իք	գառնէր իք
գը սիրէր ին	գուդէր ին	գառնէր ին

Կիլիկիայի բարբառում սահմանական անկատարը, անցյալ ապառնի Ա. ձևը և անկատարի շարունակական ձևը կազմվում են ճիշտ սահմանական ներկայի ձևով՝ զո, գու մասնիկներով և նրանց կրկնությամբ։

Ահաւեղ ունենք սակայն ամեն մի բայից մինչև չորս ձև, որոնց համար տալիս ենք հետևյալ օրինակները.

	Ապառնի	Անկատար	Շարունակական
եփել—զո խփա, զօփա	գու խփա	գիփա	զօգիփա
աւլել—զո ավլը	գու ավլը	գավլը	զօգավլը
իջնել—զո իչնի	գու իչնի	գիչնի	զօգիչնի
— զօլթի	գու իլթի	գուլթի	զօգուլթի
անել—զօչնի, զէնա	գու էնի	զոնի, զոնա	զօգէնի, զօգէնա
— — զօառնի	գու առնի	գառնի	զօգառնի
— —	—	գուդա	զօգուդի
ամաչել—զօամըչնի	գու ամըչնի	գամըչնի	զօգամըչնի
օրհնել—զո ուրհնի(ա)	գու ուրհնի	գուրհնի	զօգուրհնի
անարգել—զո անըդ՛ա	գու անըդ՛ա	գանըդ՛ա	զօգանըդ՛ա
		գանըդ՛ի	
օծել—զո ուձա	գու ուձա	գուձի	զօգուձի
անցնել—զո անցնի	գու անցնի	գանցնի	զօգանցնի
ապառել—զո ապադի	գու ապադի	գապադի	զօգապադի
աշխատել—զո աշխադը	գու աշխադի	գաշխադի	զօգաշխադի
անիծել—զո անրձա	գու անրձի	գանիձի	զօգանիձի
ելանել—զո իլլա	գու իլլա	գիլլա	զօգիլլա
զօգուլչնի	գուլչնի		
ուտել—զօդա	գուդա	գուդա	զօգուդա
սիրել—զօսիլա	գուսիլա	գուսիլա	
պագանել—զո բաքնի	գուբաքնի	գուբաքնը	
մրռել—զո մր՛ա	գումր՛ա	գումր՛ը՝	
կառապիլ—զօգադը	գուգադը	գուգադը	(նույնն է առա-
ազանիլ—զո հագ՛նի	գուհագ՛նը	գուհագ՛նի	ջինի հետ)
հազալ—զօհազի	գուհազը	գուհազի	
զոզանալ—զօգ՛ուղնի	գուգուղնը	գուգ՛ուղնի	
ֆօղուլ—զօֆուղի	գուֆուղը	գուֆուղի	

տալ—զօուդի	գուուդա	գուդի	զօգուդի
լալ—զօուլի	գուլը՝	գուլի	զօգուլի
դալ—զօիգ՛ի	գուիգ՛ի	զօգ՛ի	—
լինել—զօնի	գունի	գունի	զօգունի

Այս չորս շարքից առաջինը անցյալ անկատարի ընդհանուր ձևն է. օրինակ՝

Էռաջ՝ ամէն էօլ ուդոն զո ավլը.
«Առաջ ամեն օր սենյակը ավլում էի»։

Երկրորդը անցյալ ապառնիի Ա. ձևն է.

Վօխդ ունցնինը ուդոն գու ավլը.
«Ժամանակ եթե ունենալի, սենյակը կավլեի»։

Երրորդը պայմանականի անկատարն է.

Ավիլ ունցնինը ուդոն գավլը.
«Ավել եթե ունենալի, սենյակը կավլեի»։

Չորրորդ ձևը անցյալ անկատարի շարունակականն է.

Ուդոն զոզավլը, դ՛օն իգիլ.
«Սենյակը ավլելիս էի, դու եկար»։

Ահա և սրանց վեց եղրերի խոնարհման պատկերը.

զօդի	գուդի	գուդի	զօգուդի
զօդիլ	գուդիլ	գուդիլ	զօգուդիլ
զօդէլ	գուդէլ	գուդէլ	զօգուդէլ
զօդինք	գուդինք	գուդինք	զօգուդինք
զօդիք	գուդիք	գուդիք	զօգուդիք
զօդին	գուդին	գուդին	զօգուդին
զօ առնի	գու առնի	գառնի	զօգառնի
զօ առնիլ	գու առնիլ	գառնիլ	զօգառնիլ
զօ առնէլ	գու առնէլ	գառնէլ	զօգառնէլ
զօ առնինք	գու առնինք	գառնինք	զօգառնինք
զօ առնիք	գու առնիք	գառնիք	զօգառնիք
զօ առնին	գու առնին	գառնին	զօգառնին
զօբ՛իլա և այլն	գու բ՛իլա		զօբ՛իլա
	գու բ՛իլալ		զօբ՛իլալ
	գու բ՛իլէլ		զօբ՛իլէլ

նույն

գու բ'իլօնք	գօբ'իլօնք
գու բ'իլոք	գօբ'իլոք
գու բ'իլան	գօբ'իլան

կեսարիայի գլուղերի բարբառով՝ կա կարեի, կա գրեի և այլն։ Այժմ տալիս ենք Ռամ ճլուղից օրինակներ, որոնք բոլորը գործածվում են իբրև անցյալ ապառնի։

Նոր-Ջուղայում անցյալ ապառնին կազմելու համար ստորադասական անցյալի վրա դնում ենք կ մասնիկը՝ իր հինգ ձևերով.

կ—կէրթի, կասի.
կը—կըսի, կըկենի.
գ'—գ'բ'երի, գ'գ'ի, գ'գ'ընի, գ'ձ'ևի, գ'չ'րի.
գ—գբզգի, գլի, գզռէր, գդասի.
ք—քփորի, քթողնի, քցանի, քչափի, քխնդի։

Օրինակ՝

կասի	գ'բ'երի	գլի	քփորի
կասիր	գ'բ'երիր	գլիր	քփորիր
կասէր	գ'բ'երէր	գլէր	քփորէր
կասինք	գ'բ'երինք	գլինք	քփորինք
կասիք	գ'բ'երիք	գլիք	քփորիք
կասին	գ'բ'երին	գլին	քփորին

Այս ձևով է նաև երևանցի բարբառը, որից իբրև օրինակ հիշենք՝

կը բիրի	կը սիրինք
կը սիրիր	կը սիրիք
կը սիրէր	կը սիրին

Ես.	Դրր.
կու սիրէի	քը սիրի
կու սիրէիր	քը սիրիր
կու սիրէր	քը սիրար
կու սիրէինք	քը սիրինք
կու սիրէիք	քը սիրիք
կու սիրէին	քը սիրին

Ագուլիսի բարբառը բնավ չի ճանաչում ինչպես ներկա, նույնպես և անցյալ ապառնիի կը ձևը. իսկ Մարաղայի և Ուրմիայի

բարբառները անցյալ ապառնին կազմում են բաղադրյալ ձևով. ինչպես պիտի տեսնենք առորև։

Երկու գրական լեզուներում կը մասնիկով կազմված անցյալի ձևերն ունեն հետևյալ պատկերը.

Ա. խոնարհություն, ա տիպար	Ա. խոնարհություն, բ տիպար (արևմտ.)
կսիրէի	կը պագնէի
կսիրէիր	կը պագնէիր
կսիրէր	կը պագնէր
կսիրէինք	կը պագնէինք
կսիրէիք	կը պագնէիք
կսիրէին	կը պագնէին

Բ խոնարհություն, ա տիպար	Բ խոնարհություն, բ տիպար
կխօսէի	կհագնէի
կխօսէիր	կհագնէիր
կխօսէր	կհագնէր
կխօսէինք	կհագնէինք
կխօսէիք	կհագնէիք
կխօսէին	կհագնէին

Գ խոնարհություն, ա տիպար	Գ խոնարհություն, բ տիպար
կկարդայի	կիմանայի
կկարդայիր	կիմանայիր
կկարդար	կիմանար
կկարդայինք	կիմանայինք
կկարդայիք	կիմանայիք
կկարդային	կիմանային

կանէի	=կ'ընէի	կդնէի	կուտէի
կանէիր	կ'ընէիր	կդնէիր	կուտէիր
կանէր	կ'ընէր	կդնէր	կուտէր
կանէինք	կ'ընէինք	կդնէինք	կուտէինք
կանէիք	կ'ընէիք	կդնէիք	կուտէիք
կանէին	կ'ընէին	կդնէին	կուտէին

կաանէի	կգալի = կուգալի
կաանէիր	կգալիր կուգալիր
կաանէր	կգար կուգար
կաանէինք	կգալինք կուգալինք
կաանէիք	կգալիք կուգալիք
կաանէին	կգային կուգային
կերթալի	կուգալի = կուտալի
կերթալիր	կուգալիր կուտալիր
կերթար	կուգար կուտար
կերթալինք	կուգալինք կուտալինք
կերթալիք	կուգալիք կուտալիք
կերթային	կուգային կուտային

Այս ձևերը արևմտահայերի մեջ անցյալ անկատար են, արևվելահայերի մեջ անցյալ ապառնի. արևմտահայ ձևերը գրվում են բաղաձայնի մոտ անջատ կը, ձայնավորի մոտ կ՝:

Դ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆԸ

Ինչպես սահմանականի ներկան ունի իր շարունակականը, որ ցույց է տալիս գործողության տակավին տևելը, նույնպես և՝ սահմանականի անկատարը:

Սահմանականի անցյալ անկատարի շարունակական ձևը ունեցող զանազան լեզուներից առանձնապես հիշատակելի են անգլերենը, իսպաներենը և տաճկերենը:

Անգլերենը կազմում է այս ձևը շարունակական ներկայի նման, միայն ներկայի տեղ դնելով անկատար. ինչպես՝

ներկ. շար. I am reading կարդում եմ
անկ. շար. I was reading կարդում էի:

Իսպաներենը շարունակականը կազմում է estas «լինել» օժանդակով. ինչպես՝

vendia «ծախում էի», estaba vendiendo «կծախէի կոր»:

Տաճկերենը կազմում է այս ձևը նույնպես yor մասնիկով, միայն թե այդ մասնիկին կցում է նաև էական բայի անկատարը: Այսպես՝

ներկ. շար. gidi-yor-əm գնում եմ
անկ. շար. gidi-yor-ədəm գնում էի:

Ֆրանսերենի մեջ կարելի է ասել j'étais à lire, j'étais en train de lire, բայց առանձին քերականական ձև չկա:

Տաճկերենի ազդեցությամբ այս ձևն էլ մտել է հայերենի մեջ: Նրա սահմանը ճիշտ նույն է՝ ինչ որ ներկա շարունակականի համար, այն է Բարերդից մինչև Ռուսոսթո: Կազմության ձևը, ինչպես և մասնիկները նույն են՝ ինչ որ շարունակական ներկայի համար: Այս պատճառով չենք ուզում կրկնել այդ բոլորը այստեղ:

Կարևոր ենք համարում հիշել միայն այն զարմանալի երևույթը, որ մինչդեռ բոլոր բարբառներում էլ ներկա շարունակականի և անկատար շարունակականի մասնիկները նույն են, Տրապիզոնի բարբառում երկուսը տարբեր են: Ներկայի համար դրվում է եր մասնիկը, անկատարի համար ուն մասնիկը: Առաջինը գործածական է նաև Բաբերդի բարբառի մեջ, երկրորդը՝ Համշենի բարբառում:

Այստեղ տալիս ենք Տրապիզոնի բարբառի շարունակական անկատարից երկու օրինակ, որոնց կցում ենք ուրիշ բարբառներից մի քանի օրինակ.

Տր.	Տր.
գէփէի ունի	նայէի ունի
գէփէիր ունի	նայէիր ունի
գէփիր ունի	նայիր ունի
գէփէինք ունի	նայէինք ունի
գէփէիք ունի	նայէիք ունի
գէփէին ունի	նայէին ունի

Ձայնավորով սկսվող բայերից առաջ դրվում է կ մասնիկը, իսկ բաղաձայնով սկսվող բայերից առաջ չի դրվում կ:

Մլբ.	Մլբ.	Մլբ.
գերթայի ա	քալի ա	փէրէի ա
գերթայիր ա	քալիր ա	փէրէիր ա
գերթար ա	քար ա	փէրէր ա
գերթայանք ա	քալաք ա	փէրէաք ա
գերթայիք ա	քալիք ա	փէրէիք ա
գերթային ա	քալին ա	փէրէին ա

Բաղաձայնով սկսվող բայերը շարունակականի մեջ չեն առնում կ նախամասնիկը. այսպես նաև միավանկ բայերը: Իսկ ձայնավորով սկսվող բայերը առանում են նաև կ:

Ապ.	Սեր.	Սեր.
գը սիրէի հայէ	սիրէի գոր	գուդէլի գոր
գը սիրէիր հայէ	սիրէիր գոր	գուդէլիր գոր
գը սիրէ՛ր հայէ	սիրէր գոր	գուդէր գոր
գը սիրէանք հայէ	սիրէանք գոր	գուդէանք գոր
գը սիրէիք հայէ	սիրէիք գոր	գուդէիք գոր
գը սիրէին հայէ	սիրէին գոր	գուդէին գոր

Պոլսի բարբառ

գը սիրէլի գոր	գէրթալի գոր	գուքալի գոր
գը սիրէլիր գոր	գէրթալիր գոր	գուքալիր գոր
գը սիրէր գոր	գէրթար գոր	գուքար գոր
գը սիրէլինք գոր	գէրթալինք գոր	գուքալինք գոր
գը սիրէլիք գոր	գէրթալիք գոր	գուքալիք գոր
գը սիրէլին գոր	գէրթալին գոր	գուքալին գոր

Համշենի բարբառում սահմանականի շարունակական անկատարը կազմվում է Մալայի և Տրապիզոնի շրջանում վրա ավելացնելով ունի կամ գունի ձևը, իսկ Ճանիկի շրջանում էական բայի անկատարը կցելով անորոշ դերբային (ենթական պահելով ուղղական կամ սեռական). օրինակ՝

բ՛էրէլը գունի
բ՛էրէլդը գունի և այլն:
Իմա էշաուշ էր, ջամփաս գըդրէցին, չալցի էշաալ:
Միրը էշաուշ էր, ամա վրէգը թօղավ էչ:
Ընէցը էշաուշ ուզուշ էր, չալցին «նրանք ուզում էին գնալ, (բայց) չկարողացան»:

Սվեդիայի բարբառում սահմանական անկատարի շարունակականը կազմվում է պարզ անկատարի գը (կը) մասնիկը դարձնելով գու, որ ձայնավորի առաջ ունում է նույնպես առանց սղման. օրինակ՝

գու սիրէը է	գու ուզէր է	գօնէր է
գու սիրէր	գու ուզէր	գօնէր

գու սիրէր	գու ուզէր	գօնէր
գու սիրէր ինք	գու ուզէր ինք	գօնէր ինք
գու սիրէր իք	գու ուզէր իք	գօնէր իք
գու սիրէր ին	գու ուզէր ին	գօնէր ին

Կեսարիայի բարբառում շարունակականի մասնիկն է կա. ինչպես՝

Էչքիս կա պաղէր «աչքս կպաղէր կոր»:

Այս բոլորի իմաստն է անցյալում տեղի ունեցած անկատար մի գործողություն, որ սակայն որոշ տևողություն ունեցել է և դեռ վերջացած չէր: Առնելով շարունակական ներկայի համար մեր տված օրինակը և ձևափոխելով անկատարի համար, կունենանք. «Եթե սով ըլլար և ուտելու բան չգտնուէր, շունը ի՞նչ կ՛ուտէր»:

— Ի՞նչ պիտի ուտէր, անօթութենէն կը սատկէր (ընդհանուր դեպք):

«Սա դիմացի սև շունը երէկ պատին տակ նստած բան մը կ՛ուտէր կոր. ի՞նչ կ՛ուտէր կոր»:

— Ջուկի մը պոչ կ՛ուտէր կոր, ուրիշ շուն մը եկավ, պոչը չափշտակից (մասնավոր դեպք):

Ինչպես ներկայի, նույնպես և անկատարի շարունակականը գրական լեզվի մեջ ընդունված չէ բնավ: Կարելի է գտնել միայն բարբառային գրվածքներում:

Ե. Ա Պ Ա Ռ Ն Ի

Ներկան և անցյալը իրրև իրողություն, որոշ օբյեկտիվ գաղափարներ են. բայց ապառնին, իրրև չեղած, գուցե և չլինելիք մի բան, միշտ ենթակա է որոշ վերապահությանն: Համմտ. օրինակ՝ վաղը ես երաշ պիտի տեսնեի, կտեսնեի, տեսած կլինեի և այլն, որոնք գոնադան ձևի ապառնիներ են: Այս պատճառով ահա թեև ամեն լեզվի մեջ էլ կա ներկա և անցյալ ձև, բայց նույնիսկ հարուստ խոնարհումներ ունեցող լեզուների մեջ պատահում է, որ ապառնին հատուկ ձև չունենա: Այսպես է օրինակ սեմական լեզուներում և հին հնդեվրոպական լեզուներից շատերում: Գոթերենում և հին գերմաներենում ապառնի չկար: Ֆիններենում ապառնի չկա և նրա տեղ գործ է ածվում ներկան: Այսպես նաև հունգարերենում, ուր ապառնիի գործածությունը մտավ Ժ.Զ դարում: Կելտական վեյլ լեզվում ապառնի չկա և ներկան նաև ապառնի է: Ռուսակցական լեզվում

ներկան ապառնի հասկանալ սովորական էր (Jones, 315)։ Նույն պատճառով է դարձյալ, որ այնպիսի լեզուների մեջ, ուր կա ապառնիի հատուկ ձև, նրա կողքին ստեղծվում են ապառնիի զանազան նորանոր բացատրութիւններ՝ համաձայն վերապահութեան ասութեանին։ Այսպես՝ ֆրանսերենում, բացի սովորական je ferai ձևից, նորանոր երանգներով ասում են՝

je vais faire — գնում եմ անելու
je veux faire — ուզում եմ անել
je dois faire — պարտավոր եմ անել
je compte faire — մտադիր եմ անել
j'ai à faire — ունեմ անելու, և այլն։

Բայց այս բոլորը նշանակում են «պիտի անեմ» և ոչ ոք չի մտածում օժանդակները իրենց իսկական իմաստով առնել։

Հնդեվրոպական նախալեզվի մեջ ապառնիի իմաստով գործածվում էր ստորադասականը, այս պատճառով էլ, օրինակ, լատիներենում ապառնին հին ստորադասականն է. այսպես ero, dicam, amabo *և այլն. առաջին դեմքը* (dicam) *թե ապառնի է թե ստորադասական, և լեզվաբանական քննութիւնները միայն ցույց են տալիս, որ նախնականը ստորադասականն է։ Նույնպես լատիներէն* perfectum *ձևը (ինչպես՝* dixeris, dixerit) *թե ապառնի է և թե ստորադասական։ Ուրիշ հնդեվրոպական ժառանգների մեջ էլ թեև ներկան և անցյալը հնդեվրոպական նախալեզվի շարունակութիւնն են, բայց ապառնիի համար հնարված են զանազան նոր ձևեր։*

Ահա թե ինչպիսի ձևեր կան զանազան լեզուների մեջ ապառնի գաղափարի արտահայտութեան համար.

1) «Ունեմ».— Երբ լատիներենի մեջ ապառնին իր ուժը հետզհետե կորցրեց և կարիք եղավ մի նոր բացատրութեան դիմելու, ժողովրդական լեզվի մեջ հնարվեց finire habeo *«վերջացնել ունեմ = պիտի վերջացնեմ»,* intrare habeo *«պիտի մտնեմ»,* dicere habeo *«պիտի ասեմ»,* amare habeo *«պիտի սիրեմ» ձևը։ Այնուհետև օժանդակը կցվեց բային և սղված ձևի տակ անցավ նորալատին լեզուներին։ Այսպես առաջացան ֆրանսերեն* j'ai-merai, j'entrerai, je finirai *ձևը, որ ֆրանսերենի սովորական ապառնին է, իբրև մի ամբողջութիւն և ուր ոչ ոք չի մտածում, թե գոնվում են* finir *անորոշը և* ai *«ունիմ» օժանդակը. համեմատիր նաև պորտուգալերեն* darei *«պիտի տամ», escriverei «պիտի գրեմ», իտալերեն* scriverò, *ֆրանսերեն* j'écrirai։ *Միայն* provençal *լեզվում դեռ միացումը վերջնական չէ և անխտրաբար ասում են* vos dirai *կամ* dir vosai *«պիտի ասեմ ձեզ»։ Ունեմ* (haban) *բայով է կազմվում նաև գոթերենի ապառնին։ Պորտուգալերենն էլ ասում է* dar-te-hei *«տալ քեզ ունեմ» (= քեզ պիտի տամ) և այլն, երբ որ միջտեղը դերանուն լինի։*

2) «Ուզենալ, կամենալ».— Լեզուների մեջ չափազանց տարածված է այս ձևը. այսպես ունենք՝

Չինարեն. yāo *«ուզենալ» բայով՝* wo³ yāo⁴ lai² *«ես ուզել գալ» = «պիտի գամ».*

ստորին լատիներեն. volo *«ուզում եմ». facere volo «ուզում եմ անել» = «պիտի անեմ».*

Ֆրանսերեն. je veux faire *«ուզում եմ անել» = «պիտի անեմ», կամ ժողովրդական լեզվով* il ne veut pas pleuvoir *«չպիտի անձրևե».*

անգլերեն. I will make *«պիտի անեմ» = «ուզում եմ անել».*

դանիերեն. jeg vil se *«ուզում եմ տեսնել» = «պիտի տեսնեմ».*

պարսկերեն. xāham xōrd *«ուզում եմ ուտել» = «պիտի ուտեմ»։*

Նույնը պահլավերեն (ուշ ժամկ.). օրինակ՝ xvāhēm dād *«պիտի տանք»* (Gr. Iran. phil. I, 319).

մ. բ. գերմ. wil.

Ն. գերմ. es scheint regnen zu wollen.

լազերեն. bčara-minon *«պիտի գրեմ» = «գրել եմ ուզում».* bčara-mintu *«պիտի գրեի».*

ռումիներեն. voi cânta *«պիտի երգեմ».*

իտալերեն. vuol piovere *«պիտի անձրևե»։*

Ալբաներեն լեզուին էլ կա մի տեսակ ապառնի, որ կազմվում է անորոշի վրա դնելով «ունեմ» (kam) բայը. ինչպես՝ ունեմ երթալ, ունես երթալ, ուն երթալ՝ իբրև «պիտի երթամ» և այլն։

(Feizi, 124)

Աֆրիկյան ազգեր լեզվով ապառնին կազմվում է ba *«գալ» բայով. ինչպես՝*

i ba gbi oti
ես պիտի ջարդեմ ծառ (մի)։

(Westermann, 17)

Նույնպես և՝ աֆրիկյան գանգ լեզվով, ուր օժանդակն է be «գալ». ինչպես՝

fe be tsa
դու գալ պարել
} դու պիտի պարես

(Westermann, 165)

Սոդդերենն էլ ունի պարսկերենի նման «ուզենալ, կամենալ» բայով ապառնի։ Այս լեզվում սահմանական ներկայի վրա դնելով k'm մասնիկը, կատանանք ապառնի. k'm մասնիկը սոդդերեն k'm «ցանկանալ, սիրել» բայից է և կցվում է իրանական kāma «փափագ, ցանկություն» (>հալ. կամք) բառին. դարձել է անփոփոխելի բառիկ. ըստ իմաստի սոդդերեն ʔβr'm k'm ապառնին նույն է պարսկերեն خواهم dād xvāham «պիտի տամ» ձևի հետ։ Մինչդեռ բուդդալական սոդդերեն βaxšām-kām «պիտի բաշխեմ» դեռ պահած է արմատական kām ձևը, սաորական (քրիստոնեական) սոդդերենում k'm դարձել է կրճատմամբ k' և դրվում է q' կամ g'. օրինակ՝ qanṭqâ «պիտի լինեն», baranṭqâ «պիտի տանեն» (Benveniste, 40)։ Այսպիսով kāma բառից ստեղծվել է ապառնիի k մասնիկը, որ ձևով ու պաշտոնով բոլորովին նույն է հայերեն կը մասնիկի հետ, առանց սակայն որևէ կապ ունենալու։

Այսպիսի պատահական մի երևույթ է նաև աֆրիկյան կինյամվեզի (բանտու) լեզվի մեջ ku նախամասնիկը, որով կազմվում է ապառնին. ինչպես՝ n-ku-tula «ես պիտի ծեծեմ», u-ku-tula «դու պիտի ծեծես», a-ku-tula «նա պիտի ծեծե» (Velten, 460)։

Հիպերբորյան կամչադալ լեզվի մեջ ապառնին կազմվում է ol բայով, որ նշանակում է «ցանկանալ» (Bogoras, 740)։

Հետաքրքրական է նույն երևույթի ընթացքը նոր հունարենում. θέλω ἵνα «ուզում եմ որ» դարձավ ապառնի կազմող օժանդակ. հետո կրճատվելով դարձավ θέλω να, ժդ դարում ավելի կըրճատվելով եղավ θὲ νὰ, այսօր պարզապես դարձել է θὰ, ուր ամբողջ θέλω ἵνα նախադասությունից մնում է միայն առաջին բաղաձայնը և վերջին ձայնավորը, այսինքն այնքան փոփոխված, որ դարձել է անճանաչելի։ Այսպես՝ հին հունարեն ὑπὰ ζω ձևի փոխարեն առացվել է հետզհետե θέλω ἵνα ὑπάω>θὼλω να ὑπάγω>θένα πάω>θὰ πάω «պիտի երթամ». ձայնավորի մոտ ավելի կրճատ θ. ինչպես՝ ἀγαπῶ «սիրում եմ», θἀγαπῶ «պիտի սիրեմ»։

Նոր հունարենի ազդեցությամբ այս ձևը մտել է նաև Բալկանյան թերակղզու զանազան լեզուների մեջ. այսպես, օրինակ՝

բուլղարերենում ժդ դարուց իվեր ապառնին կազմվում է հալ. chotĕti «ուզել» օժանդակով. օրինակ՝ ща пиша «պիտի գրեմ» և այլն։

Սերբերենում hóc'u «ուզում եմ» կրճատվելով դարձել է c'u և օրինակ՝ ասում են jâ c'u činiti պիտի անեմ և այլն։

Բերբեր լեզվի մեջ էլ ապառնին կազմվում է ra նախամասնիկով, որ īri «ուզենալ» բայի կրճատ ձևն է (Marcy BSL 37, № 109, էջ 56)։

Աֆրիկյան մվալի լեզվում կա մի տեսակ ապառնի, որ կազմվում է tso մասնիկով. ինչպես՝

atsoenda «պիտի գնա»
atsoswali «պիտի գրվիմ»։

Այս tso մասնիկը առաջանում է tsaho ձևից և նույն է սվահիլի լեզվի ապառնին կազմող ta մասնիկի հետ, որ ծագում է taka «ուզել» բայից (Heepe, 161)։ Այսպիսով այս ta մասնիկն էլ իմաստով ճիշտ համապատասխան, իսկ ձևով պատահարար նույն դուրս եկավ հունարեն θέλω>θα մասնիկի հետ։

Աֆրիկյան մամբիլա լեզվով էլ ապառնին կազմվում է gəni «ուզել» կամ nda «երթալ» բայով (Meyer, 46)։

Ամերիկյան վապո լեզվով ապառնին կազմվում է ya հետամասնիկով, որ մի հին բայ է և նշանակել է «գնալ» (Radin, 46)։

Աֆրիկյան յաունդե (բանտու) լեզվով ապառնին կազմվում է yi «ուզել» բայով (Nekes, 31)։

Եթովպական բարևա լեզվով ապառնին կազմվում է sol «սիրել, ուզենալ» բայով և ga մասնիկով (պատահարար նման հայերեն կը-ին). օրինակ՝ de «մեռնել», de-ga sole «պիտի մեռնեմ», de-n-ga sol-e «պիտի մեռնես» և այլն (Reinisch, 63)։

3) «Պարտիմ, պարտական եմ, պետք է որ».— Գործածության կողմից բոնում է երկրորդ տեղը «ուզենալ, ուզել» բայից հետո. այսպես ունենք՝

անգլերեն I shall make «պիտի անեմ»
դանիերեն skal «պարտիմ», jeg skal se «պիտի տեսնեմ»
գոթերեն ևս skulan=գերմաներեն sollen բայով. մրգ. sol.

Ինչպես ռուսերենում, նմանապես և ուկրաիներենում առեղծվել է ապառնիի մի նոր ձև, որ չկա հին սլավոներենում. այսպես՝
ռուսերեն буду читать «պիտի կարդամ»

ուկրաիններեն буду читáти *«պիտի կարդամ»*
հին ուկր. читáти му *«պիտի կարդամ»:*

Հին ուկրաինեներեն начну, почну, хочу *միանալով անորոշի հետ կազմում են ապառնի:*

(Smal-Stockyj, 318)

Ռուսական ցիգաններեն լեզվով, որ հնդկականի մի ճյուղն է, ապառնին կազմվում է lava *«առնել, վերցնել» բայով, որ խոնարհվում է բուն բայի թեական ձևի հետ. երկուսի միջև դրվում է* te *շաղկապը. օրինակ՝*

lava te bagav *«պիտի երգեմ»:*
(Сергиевский, 51)

4) «Գալ».— Դարձածական է դանիերենում. այսպես kamma atl *«գալիս եմ '...»=պիտի...: Աֆրիկյան հատուկ լեզվով* zaka *«գալ» բայը ծառայում է կազմելու ապառնի, «ինձ գալիս է երթալ» նշանակում է «պիտի երթամ»* (Marré, 52)*:*

Աֆրիկյան նգարիձա լեզվում մի տեսակ ապառնի կա, որ կազմվում է dja *«գալ» բայի ներկան խոնարհելով բայի անորոշի հետ. օրինակ՝*

ngamdjohwenda *«պիտի երթամ»*
ngodjohwenda *«պիտի երթաս»*
ngudjohwenda *«պիտի երթա» և այլն:*

Այս ձևերը բուն նշանակում են ուրեմն «գալիս եմ երթալ, գալիս ես երթալ...» (Heepe, 49)*:*

Այս dja *ձևով ապառնին կա նաև աֆրիկյան մվալի լեզվում* djo *ձևով. ինչպես՝*

ndjoenda *«ես պիտի գնամ»*
adjoenda *«նա պիտի գնա»:*
(Heepe, 161)*:*

Աֆրիկյան սևսուտո (բանտու) լեզվով ապառնին կազմվում է tla *օժանդակով, որ նշանակում է «գալ»* (Beyer, 25)*:*

Ռհատոռոման լեզվով vangir, vengir, vegnir *«գալ» բայը իբր օժանդակ կազմում է ապառնի. ինչպես՝* iou veng a vènder *«պիտի ծախեմ»,* iu veng ad udir *«պիտի լսեմ»* (Conradi, 44)*:*

Եթովպական բեդաուե լեզվով կա երեք տեսակ ապառնի, որոնք կազմվում են հետևյալ ձևով.

ա) yi *«գալ» օժանդակ բայով. ինչպես՝*
derát yiani *«ապառնել գալիս եմ=հիմա պիտի ապառնեմ»:*

բ) di *«տանել» բայով. ինչպես՝*

ani Alib edár ándi
ես Ալիին ապառնեմ պիտի:

գ) hauwi *«ուզել, ցանկանալ» բայով:*
(Reineisch, 150)

5) «Երթալ» բայով.—Սովորական է ֆրանսերենում. ինչպես՝ je vais partir *«գնում եմ մեկնել»=«պիտի մեկնեմ»,* je vais mourir *«գնում եմ մեռնել»=«պիտի մեռնեմ»: Դրեթե նույն միտքն ունի նաև անգլերեն* I am going to write *«գնալիս եմ գրելու»=«պիտի գրեմ»: Աֆրիկյան հատուկ լեզվով էլ կա մի տեսակ ապառնի, որ կազմվում է* zua *«երթալ» բայով* (Marre, 52)*: Կենտրոնական Ամերիկայի սուբտիաբա լեզվով ասվում է՝*

iku-na-xka-nu
ես երթալ աղալ «պիտի աղամ»:

Նման մի ձև էլ ունի սուոռե՝ արաբերենում:

Մալանեզյան իսի լեզվով էլ ապառնին կազմվում է he *«երթալ» բայով. ինչպես՝*

ödrin e he ka han
նրանք երթալ դեպի ուտել } *«պիտի ուտեն»*

Նույնիսկ ասում են՝

oge me he ka he
ես երթալ դեպի երթալ } *«պիտի երթամ»*

(Ray, 99)

Աֆրիկյան գալլա լեզվով ապառնին կազմվում է na *նախամասնիկով, որի բուն նշանակությունն է «գնալ», իսկ ապառնիի իմաստը ավելի ուժեղացնելու համար սրա հետ գնում են նաև* do *մասնիկը. ինչպես՝*

me na ko *«ես պիտի գնամ»*
se na ko *«մենք պիտի գնանք»*

me do na ne «ես անշուշտ պիտի գնամ»
se do na ne «մենք անշուշտ պիտի գնանք»
(Westermann, 60)

6) «Սկսել» բայով.—Այսպես է գոթերենում, ուր ապառնին կազմվում է duginnan «սկսել» բայով: Նույն ձևը գործածական է նաև հունգարերենում, այն է fog... «պիտի...»: Այս ձևի գործածությունը հունգարերենում սկսվել է ԺԶ դարում. դրանից առաջ հունգարերենը ապառնի չուներ:

7) «Մնալ» բայով.—Գործածական է աֆրիկյան հաուսա լեզվի մեջ, ուր ապառնիի մի տեսակը կազմվում է zamna «մնալ» բայով (Marré, 52):

8) «Կարելի լինել» բայով.—Այսպես է անգլերեն this *may* end in desaster «սա պիտի վերջանա դժբախտությամբ»: Բերբերերեն լեզվի մեջ էլ կա մի տեսակ ապառնի, որ կազմվում է ġa նախամասնիկով, և սա ուրիշ բան չէ, եթե ոչ ġi «կարենալ, կարողանալ» բայի կրճատ ձևը (Marcy, BSL 37, № 109, էջ 56):

9) «Միթք ունենալ, մտադիր լինել» բայով.—Գործածական է ամերիկյան սուբտիրա լեզվում. ինչպես՝

ikū-dō-na-nu
ես միթք ունեմ ապրել
(համմ. վերը 5-րդ ձևը):

10) «Իրօք որ» ձևով. Այսպես՝ սամոա լեզվով 'o le ā «իրօք որ» ձևով ունենք՝

'o le ū 'ou sau
պիտի գամ
(Kieckers, 128)

11) Էական բայի ապառնի ձևի հարադրությամբ.—Այսպես՝ սլավական լեզուներից՝ չեխերեն budu, ռուսերեն буду և այլն:

12) Նույն սամոա լեզվի մեջ կա նաև մի ուրիշ տեսակ ապառնի, որ կազմվում է e «սա է» ձևով. ինչպես՝

e sau a'u
պիտի գամ
(Kieckers, 128)

Սրանցից դուրս կան նաև զանազան ձևեր, որոնք կազմվում են ներկայի վրա ավելացնելով այլևայլ նախամասնիկներ:

Ինչպես համեմատությունից երևում է, շատ լեզուներ չեն բավականանում ապառնիի մի ձևով, այլ ստեղծում են զանազան ձևեր խոսողի կամեցողության կամ վերապահության համաձայն: Այսպես՝ գոթերենն ունի «պարտիլ, ունենալ, սկսել» բայերով կազմված ապառնիներ:

Սանսկրիտ լեզվի մեջ կա երկու տեսակ ապառնի. առաջինը կազմվում է s-yá մասնիկով. ինչպես՝ dā «տալ» բայից dāsyāmi «պիտի տամ, տաց»: Երկրորդը կազմվում է ապառնի դերբայով, որ գործ են ածում առանձին և կամ as «լինել» էական բայի դուգակցությամբ. ինչպես՝ dā «տալ» բայից՝ dātṛ «տալոց» և սրանից էլ dātâsmi «տալոց եմ»:

Նոր հունարենը ունի երեք տեսակ ապառնի.

ա) շարունակական ապառնի (futur continu), ինչպես՝ θἀλύω „je délierai *կապը պիտի բաց անեմ, լուծից».*

բ) բացարձակ ապառնի (futur absolu), ինչպես՝ θὰ λύσω *(նույն բայից).*

գ) կատարյալ կամ առաջագույն ապառնի (futur parfait ou antérieur), ինչպես՝ θὰ ἔχω λύσει «կապը բացած պիտի ունենամ, j'aurai délié":

Այս երեքից առաջինը ցույց է տալիս, որ գործողությունը որոշ ժամանակ պիտի տևե կամ պիտի նորից կրկնվի. ինչպես՝ «Ամեն օր պիտի գամ ձեզ տեսնելու: Գարունը պիտի գա և նորից պիտի գա, բայց նույն անձերին ժպիտ չպիտի տա»:

Երկրորդը ցույց է տալիս պարզապես ապագային կատարելու մի գործողություն, առանց նկատի ունենալու տևողությունը կամ կրկնությունը, ինչպես՝ վաղը կգամ. Քիչ ժամանակից ձեզ կգրեմ կամ պիտի գրեմ:

Երրորդը ցույց է տալիս, որ այդ դեպքը կատարված պիտի լինի ապագայում՝ մի ուրիշ ապագա գործողությունից ավելի առաջ. ինչպես՝ վաղը կխոսենք այդ գործի մասին. մինչև այդ՝ ես կարդացած կլինեմ (կամ պիտի լինեմ, j'aurais lu) այդ մասին հղած բոլոր գրությունները:

(C. Capos, Nouv. gram. gr. 402)

Արաբերենն էլ ունի երկու տեսակ ապառնի. առաջինը կազմվում է ներկայի վրա ավելացնելով sa մասնիկը և ցույց է տալիս մոտավոր ապագա, իսկ երկրորդը կազմվում է sawfa մասնիկով և ցույց է տալիս հեռավոր ապագա: Երկուսը միաժամանակ գտնում ենք հետևյալ նախադասության մեջ.

ستحاكم و سوف تقاص
sa tuḥākamu va *sawfa* tuqāṣaṣu
«պիտի դատեն քեզ և պիտի պատժեն»:

Դատելը ավելի առաջ է, ուստի sa *մասնիկը դրված է, իսկ պատժելը ավելի հետո է, ուստի դրված է* sawfa (Belot, 26)*: Աշխարհաբար արաբերենի համար Ասորիքում և Եգիպտոսում կազմվել է երկու նոր ձևի ապառնի, որոնք են՝ մոտիկ ապագայի և շատ մոտիկ ապագայի ապառնի: Առաջինը կազմվում է ներկա ժամանակի խոնարհյալ ձևի սկիզբը դնելով* بّ budd *(նշանակում է «ուզել» և պատահաբար նման է հայերեն պիտի ձևին), որ խոնարհվում է նույն ներկայի հետ. ինչպես՝*

budduhu yusāfir
ուզում է գնա, «պիտի երթա»:

Երկրորդը կազմվում է راح rāha *«երթալ» բայը խոնարհելով ներկայի խոնարհյալ ձևի հետ. ինչպես՝*

rā'ih yamūt
գնում է մեռնում «շուտով կմեռնի»:
(Renan, Hist. des langues sémit, I⁴, 1863, p. 432, Belot p. 161)

Իսպաներենում, ինչպես կա ներկայի և անկատարի շարունակականը (կուտամ կոր, կուտէի կոր), նույնպես կա ապառնիի շարունակականը. այսպես՝ comeré *«պիտի ուտեմ»,* estaré comiendo *«պիտի ուտեմ» (շարունակական), իրը թե ասելինք «պիտի ուտեմ կոր»:*

Աֆրիկյան չիչևա լեզվում կա երկու տեսակ ապառնի. մեկը այն, որ միայն այս անգամվա համար է, և երկրորդը այն, որ միշտ էլ պիտի լինի. կոչվում է սովորական ապառնի. օրինակ՝ միշտ էլ պիտի ուտեմ:
(Watkins, 49)

Ուզբեկերենում էլ կա մի տեսակ ապառնի, որ ցույց է տալիս նոր լսված կամ հանկարծ անսպասելի կերպով երևան եկած մի գործողություն, որ կարելի է թարգմանել հայերեն «դուրս է գալիս որ...», ինչպես՝

kelär-ekän-män *«դուրս է գալիս որ պիտի գամ»*
kelär-ekän-sän *«դուրս է գալիս որ պիտի գաս»*

kelär-ekän-sir *«դուրս է գալիս, որ պիտի գաք»:*
(Kissen, 220)

Այս բոլորի վրա ավելացնենք, որ շատ անգամ ներկա ժամանակն էլ գործածվում է իրրև ապառնի: Այդ միջոցին են դիմում այն լեզուները, որոնք առանձին ապառնի չունեն: Այդի լեզուների մեջ այդ ձևը գործածվում է ցույց տալու համար շատ շատ կատարվելու մի դեպք (մերձավոր ապառնի): Այսպես՝

հայերեն՝ Վաղը մեկնում եմ.

և սրա նման՝ զանազան եվրոպական լեզուներով՝

ֆրանսերեն՝ je pars demain
անգլերեն՝ I start to-morrow
գերմաներեն՝ ich reise morgen ab
իտալերեն՝ parto domani
հունարեն՝ εγώ.

Սրա համար է, որ ֆրանսերեն և անգլերեն լեզուների մեջ si, if *«եթե» բառից հետո չի դրվում ապառնի, այլ միշտ ներկա. ինչպես՝*

Je le dirai si je le vois
I shall mention it when *(կամ* if*)* I see him.
Կասեմ, երբ տեսնեմ:

Հնդկական սինհալի լեզվում ապառնին կազմվում է ներկա դերբայի վրա ավելացնելով դեմքերը. ինչպես՝ bala *«նայել» արմատից* balana *«նայող», որից ապառնի՝*

balannem	*«պիտի նայեմ»*
balannehi	*«պիտի նայես»*
balannē	*«պիտի նայի»*
balannemu	*«պիտի նայենք»*
balannāhu	*«պիտի նայեք»*
balannāha	*«պիտի նայեն»*

(Geiger, 148)

Օվկիանիայի կարոլինյան լեզվում կա երկու տեսակ ապառնի. առաջինը՝ որ մոտիկ ապագա է ցույց տալիս, շինվում է bue lä *մասնիկով, երկրորդը, որ հեռու ապագա է ցույց տալիս, շինվում է* būb *մասնիկով. օրինակ՝*

ōbue lä fōri «իսկույն պիտի տեսնեմ»
i bāb ueri «մի օր կտեսնեմ» (օր մը չէ օր մը կը տեսնեմ)
ngang ī-bue ueri «պիտի տեսնեմ»։
(Fritz, 25)

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) ֆուտումա լեզվում կա 8 տեսակ ապառնի, որոնք զանազանվում են իրարից ուշ կամ շուտ լինելու տարբերությամբ. օրինակ՝ քիչ հետո, անմիջապես հետո, ավելի ուշ, անորոշ ժամանակով և այլն։
(Macdonald, 182—3)

Հնդկական շինա լեզուն ունի մի տեսակ ապառնի, որ կոչվում է կասկածական (dubitatif), որը ցույց է տալիս, թե այդ ապագա գործողությունը վստահ չէ, որ պիտի կատարվի։
(Bailey, 29)

Աֆրիկյան օնո լեզուն, բացի սովորական ապառնիից, ունի նաև երևակայական ապառնի (futur imaginatif), որ ցույց է տալիս կարելիություն և հաճախ երևակայում է մի վտանգ, որ կարող էր տեղի ունենալ. այս ապառնիի մեջ կա միշտ վախի զգացմունքը։ Օրինակ՝ ari «գնալ» արմատից՝

ari-kolo «ես կարող էի գնալ»
ari-kono «դու կարող էիր գնալ»
ari-ko «նա կարող էր գնալ»։

Սրան համապիր է prätérit imaginatif *(երևակայական անցյալ), որ ենթադրում է, թե անցյալում կարող էր մի այսպիսի բան պատահած լինել, բայց իրապես չի պատահել. օրինակ՝*

ari-werap „ich wäre gegangen“
ari-nomrap „du wärest gegangen“
ari-kirap „er wäre gegangen“

Ապառնի վերոհիշյալ ձևը, մի ձայնավորի տարբերությամբ, չափազանց նման է երկրորդ անցյալին և սովորական ապառնիին, բայց զարմանալի է, որ անշփոթ մնում են։ Ահա այդ ձևերը.

präterit II	պարզ ապառնի
ա) ari-kole	ari-kale *պիտի գնամ*
բ) ari-kone	ari-kene *պիտի գնաս*
գ) ari-koke	ari-ake *պիտի գնա*

(Wacke, 166)

Ապառնի կազմելու հետաքրքրական մի ձև ունի օվկիանյան լարնլ լեզուն, որ սրա համար գործ է ածում r *(բաղաձայնի մոտ* ar*) նախամասնիկը, որ զարմանալի կերպով կցվում է դերանունին և ոչ թե բայարմատին. ինչպես՝*

e-r	han	datol-ar	han
ես պիտի	*գնամ*	*մենք երեքս պիտի գնանք*	
u-r	han	mutol-ar	han
դու պիտի	*գնաս*	*դուք երկուսդ պիտի գնաք*	
i-r	han	la-r	han
նա պիտի	*գնա*	*նրանք պիտի*	*գնան*
		(հոգ.)	(Peckel, 25)

Աֆրիկյան մուսուկ լեզվով ապառնին կազմվում է կրկնությամբ. ինչպես՝

faka «վեր կենալ» բայից՝
tanu m-faka-feki *ես պիտի կանգնեմ*
sa «տալ» բայից՝ tanu ma-sa-ši *ես պիտի տամ*։
(F. Müller, 366)

*Միջին հայերենում գրաբարի ապառնին ջնջվելուց հետո, իբրև ապառնի գործ էր ածվում կամիմ բայը (*կամիմ սիրել *կամ* սիրել կամիմ, *էջ 1802), սրա հետ նաև կու ձևով ներկան։ Ապառնիի հատուկ ձև չկար։*

Այս կամիմ ձևը, որ համապատասխանում է ճիշտ պարսկերեն xāham, *հունարեն* θέλω, *ստորին լատիներեն* volo, *անգլերեն* I will *և այլն ձևերին (տես վերը), հաջողություն չունեցավ և ավելի ուշ խափանվեց։*

Համշենի բարբառում կա կմեր բը (իբր կամեր բէ), որով կազմվում է մի տեսակ անցյալ ապառնի. բայց, չգիտենք, թե այս ձևը կիլիկյան ձևի շարունակությունն է, թե անկախ է ձևացած։

Կը ձևի թե իբրև ներկա և թե իբրև ապառնի գործածությունը որոշ անպատահություն էր ներկայացնում. ուստի արևմտյան հայերը կը հատկացրին ներկային և ապառնիի համար առեղծեցին պիտի մասնիկը, իսկ արևելյան հայերը ներկայի համար հնարեցին

ում կամ էլ ձևերը, կը հատկացրին միայն ապառնիին և պիտի ձևն էլ հատկացրին հարկադրական կամ պարտադրական եղանակին:

Կը ձևի մասին արդեն խոսել ենք. այժմ պիտի խոսենք պիտի ձևի մասին:

Պիտի նախապես անդեմ բայ էր՝ «պէտք է» նշանակութ֊յամբ. գործ էր ածվում անորոշի հետ. ինչպես՝ Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի (Եղիշէ). Պիտի պատուել գնասա. Ոչ պիտի ապաննանել (Ագաթ., 81). հետին դարերից՝ Ամենայն ինչ տաք և զոր պիտի: Շատ անգամ ցույց էր տալիս քիչ հետո լինելիք մի բան. ինչպես՝

Բայց մայրն սակաւիկ մի պիտեցաւ զոգիսն ի բաց արձակել (քիչ մնաց մեռներ) (Վրք. հց. ա 99):

Սակաւիկ ինչ պիտեցաւ և սպառսպուռ զոգիսն թափեալ (քիչ մնաց հոգին փչեր) (անդ, 107):

Սակաւիկ ինչ պիտեցաւ և եղեալ գառնէի ի մէջ ամենայն չարեաց. սակաւիկ ինչ պիտէր և սպառեալ կործանէր զիս յերկիր (Վրք. հց. ա 110):

Պիտի իրև անդեմ «պետք է» իմաստով գործածական է մինչև այժմ էլ արևելյան գրականում. ինչպես՝ պիտի գնալ, պիտի ասել որ գնա և այլն:

Սրանից առաջացավ ապառնի պիտի. բայց միայն ներկայի և անկատարի հետ. կատարյալի հետ գործածութ֊յան չմտավ: Ներկայի հետ միանալով կազմեց պարզ ապառնի ձևը, իսկ անկատարի հետ միացած կազմեց անցյալ ապառնի ձևը:

Նախապես, երբ դեռ պիտի բայ էր և գուտ մասնիկի դեր չէր խաղում, կարող էր խոնարհվել ներկա (պիտի), անկատար (պիտէր) և կատարյալ (պիտեցաւ) ձևով, ինչպես տեսանք նախորդ օրինակներում: Այս երևույթը շարունակվում էր դեռ ժէ դարում, ինչպես ցույց են տալիս հաջորդ օրինակները.

Բարւոյ պիտի թուել (Դրնդ. 469)
Պիտէր երգուիլ (Դրնդ. 462)
Դրել պիտէր (Երեմ. Չէլ. օրագր. 110):

Այնուհետև անկատարի պիտեր ձևը դարձավ ըստ օրինի պիտիր (երկրորդ վանկի է դառնալով առաջինի նմանողութ֊յամբ ի), որ գործածվում էր թէ ներկայի և թէ անկատարի հետ: Օրինակ՝

Պիտիր տանիմ «պիտի տանիմ» (Դրնդ. 456)
Պիտիր գալք «պիտի գաք» (Երեմ. Չէլ. օրագր. 108)

Պիտիր հոգանք «պիտի հոգանք» (անդ 106)
Պիտիր գնալին «պիտի գնալինն» (անդ 185)
Պիտիր որ լիւր տեղն գնես «պիտի տեղը գնես» (անդ 185)
Պիտիր ուղարկեն ալդր մօտ թագաւորին (Աբր. Կրետ. 98):

Սրանից հետո պիտիր ձևն էլ քաշվեց ասպարեզից և մնաց միայն պիտի, որ հավասարապես թէ ներկայի և թէ անցյալի բոլոր դեմքերի համար սկսեց գործածվել: Այսպիսով պիտի գարձավ մասնիկ և իբր այն՝ սկսեց կրճատվել և առացավ պիտ, պի, տի, պ, տ ձևերը: Արևմտահայ արտասանութ֊յամբ հնչվելով բիդի, այստեղից էլ առաջացան բիդ, բի, դի, բ, դ ձևերը: Միևնույն ժամանակ պիտի առանալով որ շաղկապը, գարձավ պիտի որ>պիտոր, որի արևմտյան հնչումն է բիդօր, սղյալ բդօր և բըդըր, բըր:

Արևելյան հայ բարբառները, որ ներկայի համար առեղծելով ում ձևը, պիտի հատկացրել էին հարկադրական եղանակին, ավելի երկար պահեցին պիտի բայի խոնարհյալ ձևերը և նոր միայն սկսել են վերածել գուտ ապառնի կազմող մասնիկի:

Պիտի բայը խոնարհյալ և անխառն ձևով պահված է հատկապես Տիգրիսի բարբառում, ուր ունենք թէ պարտավորական ներկա և թէ պարտավորական անցյալ հետևյալ ձևով.

Ներկա		Անցյալ	
պիտիմ	սիրի	պիտէի	սիրի
պիտիս	սիրի	պիտէիր	սիրի
պիտի	սիրի	պիտէր	սիրի
պիտինք	սիրի	պիտէինք	սիրի
պիտիք	սիրի	պիտէիք	սիրի
պիտին	սիրի	պիտէին	սիրի

Նույնը կարելի է կազմել նաև պիտի ձևով, առանց խոնարհելու. ինչպես՝

Ներկա		Անցյալ	
պիտի	սիրիմ	պիտի	սիրէի
պիտի	սիրիս	պիտի	սիրէիր
պիտի	սիրէ	պիտի	սիրէր
պիտի	սիրինք	պիտի	սիրէինք
պիտի	սիրիք	պիտի	սիրէիք
պիտի	սիրին	պիտի	սիրէին

Կա նաև նույնի գերակատար ձևը, բայց այստեղ պիտի մնում է անփոփոխ և խոնարհյալ ձևով չի գործածվում. օրինակ՝

Ներկատար

պիտի սիրիլ էի
պիտի սիրիլ էիր
պիտի սիրիլ էր
պիտի սիրիլ էինք
պիտի սիրիլ էիք
պիտի սիրիլ էին

Երևանի բարբառն էլ ունի պարտավորականի ներկա և անցյալ ձևերը՝ թե խոնարհված և թե անփոփոխ ձևով, բայց երկու դեպքումն էլ կրճատում է պիտի բառի առաջին վանկի ի ձայնավորը. ինչպես՝

Ներկա		Անցյալ	
պտի սիրէմ կամ սիրիլ պտիմ		պտի սիրի կամ սիրիլ պտի	
պտի սիրէս	սիրիլ պտիս	պտի սիրիր	սիրիլ պտիր
պտի սիրի	սիրիլ պտի	պտի սիրէր	սիրիլ պտէր
պտի սիրէնք	սիրիլ պտինք	պտի սիրինք	սիրիլ պտինք
պտի սիրէք	սիրիլ պտիք	պտի սիրիք	սիրիլ պտիք
պտի սիրէն	սիրիլ պտին	պտի սիրին	սիրիլ պտին

Ղարաբաղի բարբառը շատ ավելի է զարգացրել պիտի բայի գործածությունը և պահում ա «պետք է», պիտիմ «պետք եմ» և պիտի ձևերով ստեղծել է սահմանական, պարտավորական, սաստկական և պայմանական եղանակների ներկա և անցյալ (ընդամենը 8) ձև, հետևյալ եղանակով.

Սահմանական եղանակ

Ներկա		Անցյալ	
պէտըմ ա սիրիմ		պէտըմ ա սիրի	
պէտըմ ա սիրիս		պէտըմ ա սիրիր	
պէտըմ ա սիրի		պէտըմ ա սիրըր	
պէտըմ ա սիրինք		պէտըմ ա սիրինք	
պէտըմ ա սիրիք		պէտըմ ա սիրիք	
պէտըմ ա սիրին		պէտըմ ա սիրին	

Պարտավորական եղանակ

Ներկա	Անցյալ
սիրած պիտիմ	սիրած պիտի

սիրած պիտիս	սիրած պիտիր
սիրած պիտի	սիրած պիտըր
սիրած պիտինք	սիրած պիտինք
սիրած պիտիք	սիրած պիտիք
սիրած պիտին	սիրած պիտին

Սաստկական եղանակ

սիրած պիտի պիտիմ	սիրած պիտի պիտի
սիրած պիտի պիտիս	սիրած պիտի պիտիր
սիրած պիտի պիտի	սիրած պիտի պիտըր
սիրած պիտի պիտինք	սիրած պիտի պիտինք
սիրած պիտի պիտիք	սիրած պիտի պիտիք
սիրած պիտի պիտին	սիրած պիտի պիտին

Պայմանական եղանակ

սիրած պիտի պիտի ինիմ	սիրած պիտի պիտի ինի
սիրած պիտի պիտի ինիս	սիրած պիտի պիտի ինիր
սիրած պիտի պիտի ինի	սիրած պիտի պիտի ինըր
սիրած պիտի պիտի ինինք	սիրած պիտի պիտի ինինք
սիրած պիտի պիտի ինիք	սիրած պիտի պիտի ինիք
սիրած պիտի պիտի ինին	սիրած պիտի պիտի ինին

Կարելի է պետքմ ձևի տեղ դնել նաև անկրճատ (և ավելի հին) պէ՛տուէմ ձևը. իսկ անցյալի մեջ էլ օժանդակ բայը նույնպես դարձնել անկատար. այսպես՝

Ներկա՝ պէտուէմ ա սիրիմ...
անցյալ՝ պէտուէմ ա սիրի....
անցյալ՝ պէտըմ ի սիրի և այլն:

Ղազախի բարբառում պիտիմ, պիտիս, պիտի, պիտինք... ձևերը կրճատվելով դառնում են դմ, դես, դի, դենք, դեք, դեն. օրինակ՝

Ի՞նչ դմ սովրիլ.
Մէր բէխէքն ինչ էօրնակ դէն վէ կալնիլ:

Նոր-Ջուղայի բարբառը պիտի ձևի գործածությունը հասցնում է մինչև չորսի. այն է՝ պտի, պիտիլ, պտկա և պլա:

Պտի ձևով կազմվում են պարտավորական եղանակի ներկան և անցյալը, ավելացնելով նույնը սոորադասականի ներկայի և անցյալի վրա:

Ներկա		Անցյալ	
պտի սիրեմ	պտի խագ՛նեմ	պտի սիրի	պտի խագ՛նի
պտի սիրես	պտի խագ՛նես	պտի սիրիր	պտի խագ՛նիր
պտի սիրի	պտի խագ՛նի	պտի սիրէր	պտի խագ՛նէր
պտի սիրենք	պտի խագ՛նենք	պտի սիրինք	պտի խագ՛նինք
պտի սիրէք	պտի խագ՛նէք	պտի սիրիք	պտի խագ՛նիք
պտի սիրեն	պտի խագ՛նեն	պտի սիրեն	պտի խագ՛նին

Պիտիլ «պետք լինել» ձևը գործ է ածվում թե Նոր-Ջուղայում և թե հնդկահայոց մեջ և անխտիր դրվում է ներկա և անցյալ բոլոր դեմքերի վրա. օրինակ՝ Էս լրին հաստատութիւն ա պտիլ (այդ լուրըստուգության կարոտ է). Ո՞րքան ա պիտիլ. Քեզ էդ բ՛անը պիտիլ էր (արժանի էիր դրան). Ձես պիտիլ ման գ՛ում. Պիտիլ մարթ ման գ՛ո «Մարդ պետք է որ մանգա»:

Պտի, պիտիլ ձևերի փոխարեն գործ է ածվում նաև պիտի՝ ներկայի համար և պիտեր՝ անցյալի համար. օրինակ՝ Ի՞նչ պիտի անել «Ի՞նչ պետք է անել». անցյալ՝ պիտէր ՄԻՒ, պիտէր ՄԵՔ, պիտէր ՄԵՔԵՐ, պիտէր ՄԵՒՆՔ, պիտէր ՄԵՒՔ, պիտէր ՄԵՒՆ «պիտի ՄՆալի և այլն»:

Պտկա «պետք է» ձևը ավելացվում է նուլնպես ստորադասականի ներկայի և անկատարի վրա և կազմում է հարկադրական ներկան և անցյալը, հետևյալ ձևով.

պտկա սիրեմ	պտկա սիրի
պտկա սիրես	պտկա սիրիր
պտկա սիրի	պտկա սիրէր
պտկա սիրենք	պտկա սիրինք
պտկա սիրէք	պտկա սիրիք
պտկա սիրեն	պտկա սիրին

Պլա ձևով բայական կազմութիւնը հատուկ է Նոր-Ջուղայի բարբառին և ցույց է տալիս, որ գործողութիւնը կարող է լինել, որ տեղի ունենա: Կազմվում է պլա մասնիկով, որ ծագում է «պիտի լինի, պետք է լինի» ձևից: Այս մասնիկը կցվում է ստորադասականի ներկային և անցյալին և կազմում է նոր եղանակ, որ կարելի է կոչել «պատահական եղանակ»: Օրինակ՝ պլա բ՛երեմ «կարող է լինել, որ բերեմ», պլա գ՛ընամ «կարող է լինել, որ երթամ», պլա սիրի «կարող էր լինել, որ սիրէի», պլա խագ՛նի «կարող էր լինել, որ հագնէի»:

Կա և այս մասնիկի մի քիչ ավելի հին ձևը՝ պիտլա, ինչպես՝ պիտլա սիրեմ, պիտլա խագ՛նեմ, պիտլա խագ՛նի և այլն: Ինչպես պլա, նուլնպես և պիտլա գործածական էին Ջուղայի հին բարբառում. այժմ շատ քչերը միայն գործ են ածում այն, թեև նրա գոյութիւնը ծանոթ են: Ավելի հաճախական է Ջուղայի հայոց կամ Ջուղա պանդխտածների բարբառում:

Տալիս ենք երկու օրինակ պատահական եղանակի ներկայի և անցյալի.

Ներկա		Անցյալ	
պլա սիրեմ	պլա խագ՛նեմ	պլա սիրի	պլա խագ՛նի
պլա սիրես	պլա խագ՛նես	պլա սիրիր	պլա խագ՛նիր
պլա սիրի	պլա խագ՛նի	պլա սիրէր	պլա խագ՛նէր
պլա սիրենք	պլա խագ՛նենք	պլա սիրինք	պլա խագ՛նինք
պլա սիրէք	պլա խագ՛նէք	պլա սիրիք	պլա խագ՛նիք
պլա սիրեն	պլա խագ՛նեն	պլա սիրին	պլա խագ՛նին

Ագուլիսի բարբառը չգիտե պիտի կամ պետք է բառերով կազմված ձևեր. սրանց փոխարեն պարտաւորական եղանակը կազմվում է մտամ ա կամ մտատ ա և մտանի ա ձևով: Այս ձևերը կցվում են խոնարհվելիք բայի ստորադասական ներկային: Ցղնալի ենթաբարբառում այդ երկուսի տեղ գործածում են մ՛տի ա, մ՛տում ա: Օրինակ՝

մ՛տամ ա թ՛ակիմ	մ՛տատ ա թ՛ակիմ
մ՛տամ ա թ՛ակիս	մ՛տատ ա թ՛ակիս
մ՛տամ ա թ՛ակիս	մ՛տատ ա թ՛ակի
մ՛տամ ա թ՛ակինք	մ՛տատ ա թ՛ակինք
մ՛տամ ա թ՛ակիք	մ՛տատ ա թ՛ակիք
մ՛տամ ա թ՛ակին	մ՛տատ ա թ՛ակին

Ցղնալի ենթաբարբառով ասվում է մ՛տի ա թ՛ակիմ կամ մ՛տում ա թ՛ակիմ և այլն:

Այս ձևերը ծագում են հին հայերենի պիտի, պիտիլ բառերից, այսպես մտամ ա «պիտում է, պիտոյանում է», մ՛տատ ա «պիտիլ է», որոնց նվազ մաշված ձևերն են ներկայացնում Ցղ. մ՛տի, մ՛տում:

Տարակուսա չկա, որ նա նախաձայն պ շրթնալինը ապդվելով բառավերջի մ-ից, վերածվել է ռնգականի և այդ ձևը տարածվել է ամբողջ խոնարհման մեջ:

Ագուլիսի բարբառում կա նաև պարտավորական եղանակի անցյալը, որ կազմվում է նախորդների վրա ավելացնելով ճէ. ինչպես՝

մ՛առամ ա նէլ թանկիմ կամ մ՛առալ ա նէլ թանկիմ
մ՛առամ ա նէլ թանկիս կամ մ՛առալ ա նէլ թանկիս
«պետք էր թանկէի» և այլն։

Ցղնալի ենթաբարբառով՝ մէ՛տիլ ա ճէլ բա՛կիմ, մէ՛առամ ա ճէլ բա՛կիմ և այլն։

Կարելի է նաև կրկնել ճէլ մասնիկը. ինչպես՝ *մ՛առամ ա նէլ թանկիմ նէլ կամ մ՛առալ ա նէլ թանկիմ նէլ «պետք էր թանկէի» և այլն։*

Նէլ ձևի մասին մանրամասն տես հետո։

Մարտաշլի բարբառն էլ չի ճանաչում պիտի ձևը, բայց գիտէ պետք է, որ վերածվել է բոլորովին անճանաչելի մի ձևի (կիպատ), տեղափոխելով պ և կ բաղաձայնները։ Գործածական էր հին լեզվի մեջ և կցվելով աորիստականի ներկայի և անցյալի վրա, ձևացնում էր պարտավորական եղանակի ներկան ու անցյալը։ Ինչպես՝

կիպատ էթամ «պետք է երթամ, պիտի երթամ»
կիպատ ասըմ էր «պիտի ասէի» և այլն։

Այժմ այս ձևը ջնջված է և հազիվ թե ծերունիները դործ են ածում. միջին և նոր սերունդը նրա տեղ գործածում է թրքերեն gäräk «պետք է, հարկ է» բառը, որ այստեղ դարձել է պարաք, պարալ կամ պարալՀ, պարախ. ինչպես՝

պարալ էթամ «պէտք է որ երթամ, պիտի երթամ»
պարալՀ իւղիւս էր «պետք էր որ ուղէիր» և այլն։

Կարելի է նաև ավելացնել քի «որ» շաղկապը, որ ձայնավորի մոտ կարող է ի ձայնը կրճատել. ինչպես՝ պարալՀ քի էթամ կամ պարալՀ քէթամ «պէտք է երթամ»։

Ինչպես արևմտյան բարբառներում պիտի մասնիկը, այնպես և այստեղ պարալՀ կարող է դրվել բայից հետո. ինչպես՝ էթամ պարալՀ «երթամ պիտի», տամ պարալՀ «պիտի տամ» և այլն։

Մարտաշլի կիպատ ձևի համապատասխանն է Ուրմիայի բարբառում աիկ՛ի, աիկ՛ո, աըկ՛ը (ըստ զանազան գյուղերի). օրինակ՝

Ներկա	Անցյալ
աըկ՛ը լէմ	*աըկ՛ը լէմ էր*
աըկ՛ը լէս	*աըկ՛ը լէս էր*
աըկ՛ը լի	*աըկ՛ը լէր*
աըկ՛ը լէնք՛	*աըկ՛ը լէնք՛ էր*
աըկ՛ը լէք՛	*աըկ՛ը լէք՛ էր*
աըկ՛ը լէն	*աըկ՛ը լէն էր*

Տիկ՛ի ճուխա ճուխա ըսնին մէկ՛էլ իրէ՛ա
«Պիտի գալ-գալ անցնին մյուս երեսը»։
Տիկ՛ո օխա սիր տան
«Պիտի լոքն անգամ փքա» (Բարբ. 286—7)։

Առանց Մարտաշլի ձևի համեմատության դժվար պիտի լիներ որոշել բառիս ծագումը՝ իրև պետք է (և ո՛չ թե պիտի). որովհետև, եթե Մարտաշլում պետք է ձևից միայն են 3 բաղաձայնները (կիպատ), այստեղ մնում են միայն երկուսը (ք>կ, տ), իսկ պ կորած է։

Տեսանք որ արևելյան բարբառները պիտի (պետք է) գործ են ածում ավելի իբր հարկադրական կամ պարտավորական եղանակ և գուտ մասնիկի չվերածելով դեռ՝ իրև բայ խոնարհում են։ Միայն արևմտյան բարբառներն են, որ պիտի ձևի խոնարհում չգիտեն և գործածում են միայն իրև մասնիկ։

Պիտի մասնիկը հարատած ձևով պահում են Կարնո, Վանա և Մշո բարբառները, որոնք կցելով աորիստականի ներկա և անցյալ ձևերին, կազմում են պարզ և անցյալ ապառնի ձևերը։ Այսպես Վանա բարբառով՝

	Անցյալ		Անցյալ		Անցյալ
պիտի սիրեմ	*սիրի*	*պիտի էրթամ*	*էրթի*	*պիտի կլամ*	*կլի*
պիտի սիրես	*սիրիր*	*պիտի էրթաս*	*էրթիր*	*պիտի կլաս*	*կլիր*
պիտի սիրի	*սիրէր*	*պիտի էրթա*	*էրթէր*	*պիտի կլա*	*կլէր*
պիտի սիրենք՛	*սիրինք՛*	*պիտի էրթանք՛*	*էրթինք*	*պիտի կլանք՛*	*կլինք՛*
պիտի սիրէք՛	*սիրիք՛*	*պիտի էրթաք՛*	*էրթիք՛*	*պիտի կլաք՛*	*կլիք՛*
պիտի սիրեն	*սիրին*	*պիտի էրթան*	*էրթին*	*պիտի կլան*	*կլին*

Գյուղական ձև է սա, որ Մոկաց ենթաբարբառի առանձնահատկությունն է. օրինակ՝ *թո կլա խեմ ի՛նչ սա անի ձիկ։*

Կարևոր բարբառում կարող է դրվել բայից թե՛ առաջ և թե՛ հետո. ինչպես՝ պիտի սիրէմ, սիրէմ պիտի, պիտի սիրէի, սիրէի պիտի և այլն:

Մշո բարբառում գործածական է թե՛ պիտի և թե՛ սղյալ պաի ձևը. ինչպես՝ պիտի սիրիմ, պիտի բ'էրիմ, պտի փիտցոն «պիտի սատկեցնեն» և այլն:

Արևմտյան արտասանության համաձայն պիտի է դառնում բիդի Տրապիզոնի, Համշենի, Սեբաստիա, Եվդոկիա, Ալանբեգի, Պոլսո, Զրիմի և Նոր-Նախիջևանի բարբառներում, որոնց մեջ ձևացած, Զրիմի և Նոր-Նախիջևանի բարբառներում, որոնց մեջ ձևացած նում է պարզ ապառնի և անցյալ ապառնի ձևերը: Սրանց մեջ պիտի կարող է դրվել թե՛ բայից առաջ և թե՛ բայից հետո. ինչպես՝ Տր. բիդի ուզիմ կամ ուզիմ բիդի, Սեբ. բիդի դամ կամ դամ բիդի, Անչ. բիդի սիրիմ, բիդի սիրէի և այլն:

Ահա Պոլսի բարբառով պարզ ապառնիի խոնարհման պատկերը՝ սիրել, երթալ և գալ բայերով.

բիդի սիրէմ	բիդի էրթամ	բիդի դամ
բիդի սիրէս	բիդի էրթաս	բիդի դաս
բիդի սիրէ	բիդի էրթա	բիդի դա
բիդի սիրէնք	բիդի էրթանք	բիդի դանք
բիդի սիրէք	բիդի էրթաք	բիդի դաք
բիդի սիրէն	բիդի էրթան	բիդի դան

Հետագա ձևով կարելի է ասել սիրեմ բիդի, երթամ բիդի, գամ բիդի և այլն: Երբեմն ատտիկության համար երկու ձևերը միասին գործածելով՝ ասում ենք բիդի երթա՛մ, երթա՛մ բիդի:

Մի քանի ապառնի իրար հետևից շարված դեպքում կարելի է բիդի չկրկնել. ինչպես՝ բիդի երթամ բէրեմ. նույնը հետագա՝ երթամ բէրեմ բիդի:

Համշենի բարբառում պարզ ապառնին երկու ձև ունի. առաջինը կազմվում է ներկա դերբայով, երկրորդը՝ պիտի մասնիկով, որ կցվում է սաորադասական ներկային և լինում է սովորաբար հետագա: Կարելի է նաև առաջ դնել: Առաջինը ցույց է տալիս ոչ հատատա մտադրության, երկրորդը՝ հատատատն մտադրության. օրինակ՝

(յես)	էշտօղ իմ	«կգնամ»
(տուն)	էշտօղ էս	«կգնաս»
(ըն)	էշտօղ տ	«կգնա»
(մէք)	էշտօղ ինք	«կգնանք»
(տունք)	էշտօղ էք	«կգնաք»
(ընէր)	էշտօղ ին	«կգնան»

Մ.	բ'էրիմ	իդի (ինի)	ձ.	էշտամ իդի (ինի)
	բ'էրիս	բիդի		էշտաս բիդի
	բ'էրէ	բիդի		էշտա բիդի
	բ'էրիք	բիդի		էշտանք բիդի
	բ'էրէք	բիդի		էշտաք բիդի
	բ'էրին	բիդի		էշտան բիդի

Ինչպես տեսնում ենք, ապառնիի պիտի մասնիկի նախաձայն բ միանալով առաջին դեմքի մ վերջավորության հետ դարձել է մ (նախապես ասվել է էշտամ միդի), ապա երկու մ միանալով՝ վերածվել է մեկի (էշտամ իդի), ավելի ուշ այդ դ ազդվելով մ-ից՝ վերածվել է ն (էշտամ ինի): Մյուս դեմքերում որևէ փոփոխություն չկա, ինչպես նաև եզակի Ա. դեմքի մեջ, եթե նախադաս է պիտի մասնիկը:

Մի քանի բայ միասին գործածվելու դեպքում կարելի է պահել միայն վերջին պիտի մասնիկը. օրինակ՝

Էշտամ դէսնում առնում պէրիմ ինի (իդի):

Նույն բայերի խոնարհումը անցյալ ապառնի ժամանակով.

(յես)	էշտօղ էյ	«կերթայի»
(տուն)	էշտօղ էյդ	«կերթայիր»
(ըն)	էշտօղ էր	«կերթար»
(մէք)	էշտօղ այքը	«կերթայինք»
(տունք)	էշտօղ էյքը	«կերթայիք»
(ընէր)	էշտօղ էյնը	«կերթային»

Մ.	բ'էրէյի	բիդի	ձ.	էշտայը բիդի
	բ'էրէյդը	բիդի		էշտայդ բիդի
	բ'էրէր	բիդի		էշտար բիդի
	բ'էրայքը	բիդի		էշտայքը բիդի
	բ'էրէքը	բիդի		էշտայքը բիդի
	բ'էրէյնը	բիդի		էշտայնը բիդի

Անցյալ ապառնիի հետ կազմված դեղեցիկ մի ձև է զօմօո Մ. կամ զօմմօյ ձ., որ առաջանում է գրաբար կամեր ձևից և նշանակում է «քիչ մնաց որ». օրինակ՝ Այչի օրը զօմօո գ'էչի բիդի, ձ. զօմմօյ կէչի բիդի «քիչ էր մնում սահէի»:

Նոր-Նախիջևանի բարբառում պարզ և անցյալ ապառնին կազմվում են աորիստական ներկայի և անցյալի վրա ավելացնելով բիդի, բիդ, բիք, բիդօր, բիդըր, բիդուր մասնիկները: Սրանցից ամենաառավորականն ձևն է բիդ, որ գործածվում է ձայնավորով կամ թրթռուն բաղաձայնով սկսվող բայերի մոտ: Մնալ բաղաձայնի մոտ դառնում է բիք (Զալթր գյուղում լինում է բիտ): Ավելի քիչ է պատահում բիդի, որ կարող է թե՛ ձայնավորի և թե՛ բաղաձայնի մոտ գանվել: Շատ ավելի հազվագյուտ են բիդըր և բիդուր, որոնց հնագույն ձևը բիդօր՝ այժմ գործածությունից դուրս է ընկած. օրինակ՝

Պարզ ապառնի	Անցյալ ապառնի
բիդ լսեմ	բիդ լսէլի
բիդ էշթամ	բիդ էշթալի
բիթթ խաղամ	բիթթ խաղալի
բիթթ (հ)աքնեմ	բիթթ (հ)աքնէլի

Բոլոր այս մասնիկները Նոր-Նախիջևանի բարբառում դրվում են միշտ բայից առաջ և ոչ բնավ բայից հետո, ինչպես պատահում ենք ուրիշ բարբառներում, օրինակ Պոլսի բարբառում:

Մարաշի բարբառում պիտի դառնում է բիդէ. բայց այս ապառնի ձևի մասին կխոսենք քիչ հետո:

Ռոտոսթոլի բարբառում պիտի դառնում է բըդը, որ կարող է բայից թե՛ առաջ և թե՛ հետո դրվել. ձայնավորի մոտ կրճատվելով դառնում է բըդ. օրինակ՝ բըդը սիրիմ, սիրիմ բըդը, բըդ աշիմ: Հները ունեն նաև բըդըր. որ ծագում է պիտի որ ձևից. օրինակ՝ բըդըր սիրիմ, բըդըր սիրեյի և այլն:

Կեսարիո բարբառում պիտի առանում է երեք ձև. բաղաձայնի մոտ դառնում է պըտը, ձայնավորի մոտ սղմամբ պիտ, իսկ գամ միավանկ բայի հետ պուտու: Այս վերջինը ազդված է անշուշտ ներկայի կուգամ ձևից, առացել է նրանից ու ձայնավորը, որի ազդեցությամբ էլ առաջին վանկի ը ձայնավորն էլ դարձել է ու: Ըստ այսմ Կեսարիո բարբառի ապառնին խոնարհվում է հետևյալ ձևով.

պըտը սիրեմ
պըտը խօսիմ
պըտը գոնամ

պուտու գամ
պիտ երթամ

(Ալպոյաճյան, Պատմ. հայ. Կես. Բ. 1664):

Սուչավալի բարբառում պարզ ապառնին կազմվում է աորիստական ներկայի վրա ավելացնելով բիդօր մասնիկը (որ միջին հայերենի պիտի որ>պիտ'որ ձևի շարունակությունն է), իսկ լեհահայ բարբառում դնելով բի մասնիկը, որ պիտի ձևի կրճատումն է. այսպես՝

Ս.	Լ.
բիդօր սիրիմ	բի սիրիմ
բիդօր սիրիս	բի սիրիս
բիդօր սիրէ	բի սիրէ
բիդօր սիրինք	բի սիրինք
բիդօր սիրիք	բի սիրիք
բիդօր սիրին	բի սիրին

Սուչավալի բարբառում անցյալ ապառնին կազմվում է անշուշտ բիդօր սիրեի ձևով, իսկ լեհահայ բարբառում՝ բի սիրեի ձևվով: Բայց սրանց համար բնագրերում օրինակ չկա, ինչպես և Հանուշի բառացանկում: Այստեղ ունենք միայն մի օրինակ՝ բիլայի «պիտի լինեի», որ ապացույց է բի ձևով անցյալ ապառնիի գոյությյան՝ լեհահայ բարբառում:

Սուչավալի բարբառում գոնում եմ նաև գուզեի ձէձիմ>կուզէի ծեծեմ «պիտի ծեծեի» ձևը, որ կարող է ընդհանուր եղած լինել նույն բարբառին: Ըստ այսմ՝

գուզէի	ձէձիմ	>կուզէի ծեծեմ
գուզէիս	ձէձիս	>կուզէիր ծեծես
գուզէր	ձէձէ	>կուզէր ծեծէ
գուզէինք	ձէձէինք	>կուզէինք ծեծենք
գուզէիք	ձէձիք	>կուզէիք ծեծէք
գուզէին	ձէձին	>կուզէին ծեծեն

Այս բոլորը՝ ենթադրաբար:

Ծանոթ.— բի մասնիկը ձայնավորով սկսվող բայերից առաջ սղում է իր ի ձայնավորը. օրինակ՝

լհ. բաբլիմ «պիտի թողնեմ»
լհ. բաբրիմ «պիտի ապրեմ»
լհ. բանիմ «պիտի անեմ»

Հնդ. բ'անէ «պիտի անե», բ'անին «պիտի անենն», բ'իլան «պիտի լինենն»:

Հդն. բ'ասիմ, բ'ասին:

Այժմ անցնենք պիտի մասնիկի սղյալ ձևերին: Վերը մի քանի տեղ տեսանք վերջաձայն ի-ի անկումը, որի հետևանքով էլ բաղաձայն ս կարող էր դառնալ դ, ս, բ: Բայց այս փոփոխությունը շատ թևթև է:

Պիտի, պիտոր մասնիկը կրճատվում է երեք ձևով. վերջից, սկզբից և մեջտեղից:

Վերջից կրճատվելով՝ առանում ենք պի>բի, ձայնավորի մոտ էլ ավելի կրճատ բ: Այսպես՝ Սեբաստիո բարբառում թևև ունենք բիդի, բայց ձայնավորի մոտ կրճատվելով դառնում է բի. ինչպես՝ բի քնենք «պիտի անենք»: Նվդոկիո բարբառում թևև ունենք բիդի, բայց ձայնավորի մոտ դառնում է բիդ, իսկ Օրտուի բարբառում այս դեպքում դառնում է պարզապես բ, ինչպես՝ բէրքամ «պիտի երթամ»:

Մուշավալի բարբառում թևև գործածվում է բիդօր, բայց Հանգարիո բարբառում սղվելով դառնում է բի. ինչպես՝

բի սիրիմ	բի սիրինք
բի սիրիս	բի սիրիք
բի սիրէ	բի սիրին

Հաճընի բարբառումն էլ պիտի կրճատվելով դառնում է բ. ահա երթամ և գամ բայերի ապառնին.

բիշդամ	բիգ'ամ
բիշդաս	բիգ'աս
բիշդա	բիգ'ա
բիշդանք	բիգ'անք
բիշդէք	բիգ'էք
բիշդաք	բիգ'աք
բիշդան	բիգ'ան

Համեմատելով բի կամ բ աստիճանին՝ մեր ապառնիի մասնիկը նույնանում է պարսկերեն b ب և աֆղաներեն ba մասնիկի հետ, որոնք

նույնպես դրվում են բայից առաջ և կազմում են ապառնի (Darmesteter, Chants pop. CII). բայց ավելորդ է, իհարկե, ասել, որ այս նմանությունը բացարձակապես պատահական է:

Մեջտեղից կրճատումը կատարվում է միայն Սվդիայի բարբառում, ուր պիտոր ձևից առանում ենք բըր ձևը, որ ուրիշ բարբառներում պիտի ձևին է համապատասխանում և ծագում է պիտոր, պիտոր ձևից՝ կրճատմամբ: Դրվում է միայն բայից առաջ (հետագայ չէ Պոլսի բարբառի նման). մի քանի բայ իրար հաջորդելու դեպքում կարող է դրվել մի անգամ և նույնիսկ բայից բաժանվել մի որևէ բառով. օրինակ՝ բըր ուդ'ում ի դօն, առնիմ բ'իրիմ «պիտի երթամ առնեմ, պիտի բերեմ»:

բըր սիրիմ	բըր ուդիմ	բըր առնիմ
բըր սիրիս	բըր ուդիս	բըր առնիս
բըր սիրէ	բըր ուդէ	բըր առնէ
բըր սիրինք	բըր ուդինք	բըր առնինք
բըր սիրիք	բըր ուդիք	բըր առնիք
բըր սիրին	բըր ուդին	բըր առնին

Զեյթունի գավառականում դառնում է կրճատմամբ՝ բաղաձայնով սկսվող բայերի մոտ՝ բի, ձայնավորով սկսվող բայերի մոտ բիդ կամ բ', իսկ միավանկ բայերի մոտ բի, երբեմն նաև բիդի: Այսպես՝ բի սիյիմ, «պիտի սիրեմ», բ'իյթամ կամ բիդ իյթամ «պիտի երթամ», բ'իլիմ կամ բիդ իլիմ «պիտի լինեմ», բիդ առնում կամ բ'առնում «պիտի առնեմ», բի դամ կամ բիդի դամ «պիտի տամ»:

Ստորև դնում եմ երեք բայի պարզ ապառնիի ամբողջական խոնարհումը.

բի սիյիմ	բիյթամ	բի դամ
բի սիյիս	բիյթաս	բի դաս
բի սիյէ	բիյթա	բի դա
բի սիյինք	բիյթանք	բի դանք
բի սիյէք	բիյթաք	բի դաք
բի սիյին	բիյթան	բի դան

Ուրիշ բարբառներում պիտի կարող է լինել նաև հետագայ, իսկ Զեյթունի գավառականում չկա այդպիսի բան: Սրա պատճառն այն է, որ պիտի կրճատվելով՝ հասել է իսկական նախամասնիկի աստիճանին, մինչև իսկ պարզ բ հնչմամբ:

Երբ մի քանի ապառնի հաջորդեն իրար, կարող է մասնիկը միայն մի անգամ դրվել. ինչպես՝ բիյքօմ գիսնում առնում (որ և՝ բիլթօմ, բի գիսնում, բառնում)։

Սկզբից կրճատումը, որի խոնարհյալ օրինակը տեսանք արդեն Ղազախի բարբառում, գտնվում է Մոկաց, Ոզմիի, Ասրբերդի և Ակնի բարբառներում։

Մոկաց բարբառում, ուր i>ը ձայնափոխությունը սովորական է, պիտի գառնում է ը և ձայնավորի մոտ էլ ա. ինչպես՝ ը բռնըմ «պիտի բռնեմ», տասըմ «պիտի ասեմ», ը տէք ձը «պիտի տաք ինձ»։

Ոզմիի բարբառումն էլ միևնույն երևույթն է. բաղաձայնի մոտ ը, ձայնավորի մոտ ը. ինչպես՝ ը բ'իրիմ «պիտի բերեմ», ը բ'իրէ «պիտի բերէ»։

Ահա ուզել բայի ապառնին.

ուզիմ	*ուզիս*
ուզիս	*ուզիք*
ուզի	*ուզին*

Ակնա բարբառում պիտի ձևի կրճատումն է դի, ձայնավորի մոտ դ, իսկ Ասրբերդի բարբառում դը. օրինակ՝

Ակն.	*դի բ'էրիմ*	*դի սիրիմ*
	դի բ'էրէս	*դի սիրէս*
	դի բ'էրէ	*դի սիրէ*
	դի բ'էրինք	*դի սիրինք*
	դի բ'էրէք	*դի սիրէք*
	դի բ'էրին	*դի սիրին*

Ինչպես որ պիտի ձևի կրճատ պի=բի ձևը զուտ պատահական նմանությունն ունի պարսկերեն bi մասնիկի հետ, որ նույնպես ապառնի է շինում, նմանապես այս տի, ը, դի կրճատ ձևերը զուտ պատահական նմանությունն ունեն թալ=Միամ ընտանիքի առոմ լեզվի ti մասնիկի հետ, որ շինում է ապառնի. ինչպես՝

kau ti-po
ես պիտի գնեմ
(Grierson, հատ. 2, էջ 98—99)

Տիգրանակերտի բարբառը ապառնին կազմում է մըն մասնիկով. ինչպես՝ մըն ուզիմ, մըն փէրիմ, մըն ուզի, և այլն։ Թե

որտեղից է առաջանում այս մըն ձևը, որ ուրիշ տեղ գոյություն չունի, չգիտեմ։

Այս բոլորից երևում է, որ պիտի մասնիկը դեռ իր բայական կերպարանքը պահում է Ում ճյուղի բարբառներում, որոնց մեջ պարտավորական եղանակի արժեք ունի և խոնարհվում է։ Զուտ մասնիկ է դառնում և ապառնի է կազմում առանց խոնարհվելու Կը ճյուղի բարբառների մեջ։ Սկզբից կրճատվելով տի ձևն է առանում Ղազախից մինչև Ակն, իսկ վերջից կրճատվելով պի ձևն է առանում Սեբաստիայից մինչև Հունգարիա, որ հայերենի վերջին արևմտյան սահմանն է։

Վերևում մի քանի լեզուների մեջ տեսանք, որ ապառնին կազմվում է «ուզել» բայով. այսպես են հատկապես պարսկերեն, հանարեն և անգլերեն լեզուները։ Միջին հայերենում էլ սկսեց կամիմ բայը իբրև ապառնի կազմելու միջոց գործածվել. բայց շուտ խափանվեց՝ հազիվ մի հետք թողնելով Համշենի բարբառում։ Միջին գարում խնդրել բայն էլ, որ նշանակում է «ուզել», սկսել է գործածվել իբրև ապառնի կազմելու միջոց. համմտ. Ածան. 8՝ հետևյալ նախադասությանը.

Յերկիւղէն որովայն նեռա խնդրէր լուծուիլ «վախից փորը պիտի լուծէր»։

Բայց ինչպես երևում է, այդ ձևն էլ տարածում չի ստացել։

Անշուշտ սրանցից անկախաբար, երկու իրարից անջատ բարբառներում երևան է գալիս նորից «ուզել» բայը՝ ապառնի կազմելու համար։ Առաջինն է Մարաշ, երկրորդը Նոր-Զուղա։

Մարաշի բարբառում երկու տեսակ ապառնի կա. մեկը հասարակ ապառնի, որ կազմվում է ըստ սովորականին բիդե (պիտի) մասնիկով, իսկ մյուսը՝ անմիջական ապառնի, որ կազմվում է իզիլ (ուզել) բայով. օրինակ՝ բիդե բիրիմ «պիտի բերեմ», գիզիմ բիրի «անմիջապես պիտի բերեմ»։

Ավելի հետաքրքրական է Նոր-Զուղայի բարբառը, ուր ապառնի ներկա և անցյալ ժամանակները ունեն մի նոր ձև, որ հատուկ է միայն այս բարբառին և այլուր գոյություն չունի։ Այս ձևը կազմելու համար ստորադասական ներկայի վրա դնում ենք մամ, մաս, մա, մանք, մէք, ման, իսկ անցյալի վրա՝ մի, միք, մէք, մինք, միք, մին. այսպես՝

Ապառնի ներկա	*Ապառնի անցյալ*
մամ խաղամ	*մի խաղի*
մամ խաղաս	*միք խաղիր*

մա	*խաղա*	*մէր*	*խաղէր*
մանք	*խաղանք*	*մինք*	*խաղինք*
մէք	*խաղէք*	*միք*	*խաղիք*
ման	*խաղան*	*մին*	*խաղին*

Հարադրյալ ձևերը ուզել բայի հարադրյալ ձևերն են. այսպես՝ մամ խաղամ<ուզում ամ խաղամ, մաս խաղաս<ուզում աս խաղաս, մի խաղի<ուզում ի խաղի և այլն, և շատ համաձայն են գալիս պարսկերեն ապառնիի կազմութեան. خواهم xāham xŏrd և այլն: Սղումը առաջացած է արագաբանութեան կամ հաճախ գործածութեան պատճառով և նոր երևույթ է բարբառիս մեջ, որին տեղյակ են նաև իրենք ջուղայեցիք: 11 տարեկան մի երեխա (Հովհաննես խան Ղարախանյանի որդին՝ փոքրիկ Անդրանիկը), որից առաջին անգամ լսեցի ապառնիի այսպիսի ձևեր, երբ հարցրի, թե ինչ ձև է դա, իսկույն բացատրեց, թե արագ խոսելիս ասում են մամ խաղամ, փոխանակ ասելու ուզում ամ խաղամ:

Այստեղ վերջանում է ապառնիի մասին մեր քննութիւնը: Աշխարհաբարը այս բազմաթիվ ձևերից ընդունել է միայն երկուսը՝ կը և պիտի: Առաջինը արևմտյան գրականի մեջ բուն նեղկա է և երկրորդաբար ունի ապառնիի իմաստ, իսկ արևելյան գրականում՝ ապառնի է միայն: Երկրորդը արևմտյան գրականում միայն ապառնի է, իսկ արևելյան գրականում բուն պարտավորական է, այժմ արդեն գործ է ածվում իբրև ապառնի:

Ահա այս երկուսի պատկերը երկու գրական լեզուներում.

Ա խոնարհություն, ա տիպար

(արևել.)	(արևմտ.)
կսիրեմ	*պիտի սիրեմ*
կսիրես	*պիտի սիրես*
կսիրէ (կսիրի)	*պիտի սիրէ*
կսիրենք	*պիտի սիրենք*
կսիրէք	*պիտի սիրէք*
կսիրեն	*պիտի սիրեն*

Ա խոնարհություն, բ տիպար

(արևմտ.)

պիտի պագնեմ
պիտի պագնես
պիտի պագնէ
պիտի պագնենք
պիտի պագնէք
պիտի պագնեն

Բ խոնարհություն, ա տիպար

(արևմտ.)

պիտի խօսիմ
պիտի խօսիս

Բ խոնարհություն, բ տիպար

(արևել.)	(արևմտ.)
կհագնեմ	*պիտի հագնիմ*
կհագնես	*պիտի հագնիս*

պիտի խօսի	*պիտի հագնի*
պիտի խօսինք	*պիտի հագնինք*
պիտի խօսիք	*պիտի հագնիք*
պիտի խօսին	*պիտի հագնին*

Դ խոնարհություն, ա տիպար

(արևել.)	(արևմտ.)
կկարդամ	*պիտի կարդամ*
կկարդաս	*պիտի կարդաս*
կկարդայ	*պիտի կարդայ*
կկարդանք	*պիտի կարդանք*
կկարդաք	*պիտի կարդաք*
կկարդան	*պիտի կարդան*

Դ խոնարհություն, բ տիպար

(արևել.)	(արևմտ.)
կիմանամ	*պիտի իմանամ*
կիմանաս	*պիտի իմանաս*
կիմանայ	*պիտի իմանայ*
կիմանանք	*պիտի իմանանք*
կիմանաք	*պիտի իմանաք*
կիմանան	*պիտի իմանան*

Ինչպես բարբառներում, նույնպես և արևմտյան գրականում, մի քանի ապառնի իրար հաջորդելու դեպքում կարելի է պիտի մասնիկը չկրկնել, կարելի է նաև բաժանել բայից դանազան միջանկյալ բառերով: Հետագա պիտի ձևը գրականում շատ հաճելի չէ. օրինակ՝

Պիտի երթամ տեսնեմ այդ թշվառը:
Պիտի իմ ամբողջ ունեցվածքս նվիրեմ իրեն:
Ասում պիտի, բայց չունիմ համարձակութիւն:

Հարց ու պատասխանի ժամանակ պիտի մասնիկը կարելի չէ կրճատել: Օրինակ երբ հարցնում են՝

— *Պիտի երթա՞ս:*

կարելի չէ պատասխանել

— *Պիտի...*

այլ անպատճառ՝ ամբողջությամբ կրկնելով՝

— *Պիտի երթամ:*

Այս դեպքում հայերենը նման չէ անգլերենին, ուր «պիտի» նշանակող ձևի կրճատումը սովորական է. ինչպես՝

— Shall you see him to-day?
Պիտի դուք տեսնե՞ք նրան այսօր.
— Yes, I shall.
Այո, ես պիտի (...)
— Shall you read this book?
Պիտի դուք կարդա՞ք այս գիրքը.
— Yes, I shall.

Այո, ես պիտի (...)
— No, I shall not.
Ոչ, ես պիտի ոչ (...)

Այս դեպքում հունգարահայց բարբառը ունի մի հետաքրքիր ձև, որի մասին մեր մակբային նվիրված բաժնում:

Զ. ԱՆՑՅԱԼ ԱՊԱՌՆԻ

Պարզ ապառնիի այն բոլոր ձևերը, որոնք նկարագրեցինք վերևում, ունեն նաև իրենց անցյալի (անկատար) ձևը: Կազմվում է ավելացնելով նույն մասնիկները ատորագատական անցյալի վրա: Նախորդ նկարագրությանց մեջ ստիպված էինք միշտ զուգընթացաբար հիշել նաև անցյալ ապառնիի ձևերը, որոնցից ամբողջական խոնարհման օրինակներ էլ բերինք Տփղիսի, Երևանի, Ղարաբաղի, Զեյթուլի, Ագուլիսի, Վանի, Համշենի, Առափալի և Նոր-Նախիջևանի բարբառներով: Այստեղ տալիս ենք օրինակներ ուրիշ բարբառներից.

Ոգմ.

աը բ'իրէ	*տուղէ*
աը բ'իրէր	*տուղէր*
աը բ'իրէր	*տուղէր*
աը բ'իրէնք	*տուղէնք*
աը բ'իրէք	*տուղէք*
աը բ'իրէն	*տուղէն*

Սվեդիա

բըը սիրէր է	*բըը ուղէր է*	*բըը առնէր է*
բըը սիրէր	*բըը ուղէր*	*բըը առնէր*
բըը սիրիր	*բըը ուդիր*	*բըը առնիր*
բըը սիրէր ինք	*բըը ուղէր ինք*	*բըը առնէր ինք*
բըը սիրէր իք	*բըը ուղէր իք*	*բըը առնէր իք*
բըը սիրէր ին	*բըը ուղէր ին*	*բըը առնէր ին*

Ուրիշ օրինակներ՝ բըը հազզէր է «պիտի հագայի», բըը թուղէր է «պիտի թողնէի»:

Կիլիկիա

բի սիլա	*բիլթի*	*բիլդի*
բի սիլալ	*բիլթիլ*	*բիդի*

բի սիլէլ	*բիլթէլ*	*բիդէլ*
բի սիլօնք	*բիլթինք*	*բիդինք*
բի սիլոք	*բիլթիք*	*բիդիք*
բի սիլան	*բիլթին*	*բիդին*

Պարզ ապառնիի նման այստեղ էլ բի մասնիկը չի կարող հեռացած լինել, իսկ կրկնության դեպքում կարող է կրճատվել, ինչպես՝ բիլթի դիանի առնի (որ և բիլթի բի դիանի բառնի):

Հճ.

բիշդի	*իդի «պիտի երթայի»*	*բիգ'դի*	*իդի «պիտի գայի»*
բիշդիլ	*իդի*	*բիգ'դիլ*	*իդի*
բիշդէլ	*իդի*	*բիգ'դէլ*	*իդի*
բիշդօնք	*իդի*	*բիգ'դինք*	*իդի*
բիշդէք	*իդի*	*բիգ'դէք*	*իդի*
բիշդիք	*իդի*	*բիգ'դիք*	*իդի*
բիշդին	*իդի*	*բիգ'դին*	*իդի*

Կարելի է ասել նաև պարզապես բիշդի «պիտի երթայի», բուդի «պիտի ուտէի» և այլն:

Ակն

դի բ'էրէի	*դիւդէի «պիտի ուտեի»*
դի բ'էրէիր	*դիւդէիր*
դի բ'էրէր	*դիւդէր*
դի բ'էրէանք	*դիւդէանք*
դի բ'էրէիք	*դիւդէիք*
դի բ'էրէին	*դիւդէին*

Աալ.

բիդի սիրէի	
բիդի սիրէիր	
բիդի սիրէ՛ր	
բիդի սիրէանք	
բիդի սիրէիք	
բիդի սիրէին	

Պլ.

բիդի սիրէի	*բիդի էրթայի*	*բիդի գայի*
բիդի սիրէիր	*բիդի էրթայիր*	*բիդի գայիր*

բիդի սիրէը	բիդի էրթար	բիդի դար
բիդի սիրէինք	բիդի էրթալինք	բիդի դալինք
բիդի սիրէիք	բիդի էրթալիք	բիդի գալիք
բիդի սիրէին	բիդի էրթալին	բիդի գալին

Հետաքրքրական ձևով կարելի է ասել սիրեյի բիդի, էրթայի բիդի, գայիր բիդի և այլն։

Գրական լեզուն ճիշտ այնպես, ինչպես պարզ ապառնիի համար առացինք, բոլոր ձևերից ընդունել է միայն երկուսը՝ անցյալ ապառնիի համար (կը և պիտի)։ Սրանց գործածութիւնը, տարբերութիւնը և նշանակութիւնը ճիշտ այնպես է, ինչպես պարզ ներկայի համար։ Ուստի բավականանում ենք տալով այստեղ երկու գրական լեզուների համեմատական տախտակը.

Ա. լծորդություն, ա տիպար

կսիրէի	պիտի սիրէի
կսիրէիր	պիտի սիրէիր
կսիրէր	պիտի սիրէր
կսիրէինք	պիտի սիրէինք
կսիրէիք	պիտի սիրէիք
կսիրէին	պիտի սիրէին

Ա. լծորդ. բ տիպար *(արևմտ.)*

պիտի պագնէի	պիտի խօսէի
պիտի պագնէիր	պիտի խօսէիր
պիտի պագնէր	պիտի խօսէր
պիտի պագնէինք	պիտի խօսէինք
պիտի պագնէիք	պիտի խօսէիք
պիտի պագնէին	պիտի խօսէին

կհագնէի	պիտի հագնէի
կհագնէիր	պիտի հագնէիր
կհագնէր	պիտի հագնէր
կհագնէինք	պիտի հագնէինք
կհագնէիք	պիտի հագնէիք
կհագնէին	պիտի հագնէին

Գ. լծորդություն, ա տիպար

կկարդայի	պիտի կարդայի
կկարդայիր	պիտի կարդայիր

կկարդար	պիտի կարդար
կկարդայինք	պիտի կարդայինք
կկարդայիք	պիտի կարդայիք
կկարդային	պիտի կարդային

Գ. լծորդություն, բ տիպար

կխմանայի	պիտի խմանայի
կխմանայիր	պիտի խմանայիր
կխմանար	պիտի խմանար
կխմանայինք	պիտի խմանայինք
կխմանայիք	պիտի խմանայիք
կխմանային	պիտի խմանային

Է. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ըստ երևույթին հրամայականը շատ հասարակ մի ձև է. արի, գնա՛, տե՛ս, բայց երբ մի քիչ ավելի խոր կերպով քննութեան ենք առնում լեզուները, տեսնում ենք, որ այստեղ էլ կան զանազան երանգներ և նրբութիւններ։

Ամենից առաջ կան հրամայականի կոպիտ կամ խիստ և կամ մեղմ ու քաղաքավար ձևերը։ Այդ ձևերը կարելի է արտահայտել խիստ կամ մեղմ տոնով, ձայնի բարձրութեամբ կամ ցածութեամբ. բայց լեզուների մեջ կան նաև զանազան քերականական ձևեր այդ տարբերութիւնները արտահայտելու համար։

Աննամերենի մեջ հրամայականը երեք աստիճան ունի.

1) Ամենից ավելի անկիրթ ու կոպիտ ձևն է բայից առաջ դնել hay կամ բայից հետո di «երթալ». օրինակ՝

nin di *(լռիր)*

(իբր թե՝ գնա լռիր)։

2) Երկրորդ ձևը, որ ավելի քաղաքավար է, կազմվում է դնելով միայն բայը. օրինակ՝

nin «լռիր»։

3) Ամենից քաղաքավարական ձևն է խոսել զանազան դարձվածքներով, ինչպես՝ «պետք չէ, մարդ պետք չէ որ..., չի պատկանի, հարմար չէ որ...»։

(Dirr, Gram. annam. 22)

Զարմանալի է, որ աննամերեն հրամայականի առաջին ձևը (hay), որ ամենից անկիրթ ու կոպիտ ձևն է, լաոսերեն լեզվի

մեջ հրամայական կազմելու միակ և սովորական ձևն է. օրինակ՝

hai khiên «գրիր»։

(Տես Hospitalier, էջ 220, ուր այս hai բառը մեկնվում է «օրպեսզի» նախավոր իմաստով)։

Ավստրալիո կամիլարոյ լեզվումն էլ կա երեք տեսակ հրամայական.

goälla «խոսիր» (սովորական ձևն է).

goälla wā («պետք է որ խոսիս». սոխպոդական հրամայական, wā վանկը երկարելով).

goälmia «խոսիր թե կարող ես, թե համարձակվում ես» (նախատական կամ կատակով)։

(Ridley, 9)

Հնդկաստանի կանավարի լեզվում դերանունները ունեն իրենց սովորական և հարգական ձևերը. այդ նույն ձևերը մտնում են նաև խոնարհման ժամանակ բայական վերջավորությանց մեջ, բոլոր ժամանակներում, բայց հատկապես հրամայականում, ուր առանում են երեք ձև.

	1)	2)	3)
դնա	bī-rā	bī-rány	bī-rach
կեր	zā-rā	zā-rány	zā-rach
նստիր	tôšĭ-rā	tôšĭ-rány	tôšĭ-rach

Սրանցից 1) եզակի սովորական ձևն է, 2) եզակի և հոգնակի հարգական ձևն է, 3) երկակի և հոգնակի սովորական ձևն է։

(Grierson, հատ. 3, մասն 1, էջ 433—5)

Ճապոներենում պարզ հրամայական ձևը գործածելը համարվում է շատ անքաղաքավար, և այդ նույնիսկ ծառաների հետ։ Ուստի հրամայականի հետ կցում են միշտ մեղմացուցիչ կամ պատիվ ցույց տվող մի բառ։ Առնվազն ավելացնում են kure, o kure, կրճատ ձևը՝ kunna, որոնք նշանակում են «տալ, նվիրել, շնորհել»։ Կանալք գործ են ածում asobas «հաճեցեք»։ Ծանոթների միջև գործածական է tamau «հաճեցեք»։ Այս բոլորը հրամայական ձևով կցվում են բայի արմատին, իբր թե հայերեն «տուել հաճեցեք» և այլն։ Ամենասովորական ձևն է հրամայականը մեղմացնելու համար -ro, -yo, na ձայնարկությունները (Plaut, 68, 125)։

Մոնղոլերենում կա մի տեսակ հրամայական, որ հրամանը մեղմացնում, սիրալիր ձև կամ պատիվ է տալիս. կազմվում է բայի վրա դնելով de, -k'e վերջավորությունները (Поппе, Daryp. нареч. 162—3)։

Գրական մոնղոլերենում հրամայականը զորացնելու համար կարելի է դնել da մասնիկը. ինչպես՝ ire արի, ire da! արի դա (Клюкин, 63)։ Համապատասխանում է հայերեն ժողովրդական արի՛, արի դա՛ ձևերին։ Մոնղոլական այլ բարբառում, բացի սովորական հրամայականից, կան մի քանի ուրիշ հրամայականներ, այսպես՝ benedictivus (քաղաքավարական և խնդրական ձև), precativus (շատ ազաչական ձև), praescriptivus (ապագայում անելու հրամայական)։ Սրանք ունեն նաև դանազան մասնիկներով մեղմացրած (ավելի խնդրական դարձրած) ձևեր (Поппе, Алар. гов. 101—2)։

Հիմալայան լաքա լեզվումն էլ հրամայականի վերջում հաճախ դնում են a վերջավորությունը. ինչպես՝ yung-ā «նստիր», aba «ել, արի», pugā «կանգնիր», siyā «մեռիր» (Grierson, հատ. 3, մասն 1, էջ 309)։

Նույն երևույթը դանում ենք նաև անկախաբար ամերիկյան լուկի լեզվում. ինչպես՝

o-u-k-a	«վագիր»
cu-k-a	«նստիր»
koo-t-a	«դնա»
tii-k-a	«ցատկիր»

(Kroeber, 363)

Ֆիննական լեզուների մեջ էլ կա երկու տեսակ հրամայական, մեկը՝ խիստ, մյուսը՝ մեղմ։

Արաքաներենում էլ հրամայականը ունի 3 ձև. մեկը սովորական, երկուսը սաստկական հրամայական։

Աստրախանական թաթարներենի մեջ կա հրամայականի մի ձև, որի գործադրությունը թողնված է անորի կամքին. կազմվում է սովորական հրամայականի ծայրին ավելացնելով gilän բառը (Ганіевъ, 54)։

Ջավայում, ինչպես գիտենք, կա երեք տեսակ բարբառ. առաջինը մեծամեծների հետ խոսելու, երկրորդը հավասարների հետ խոսելու և երրորդը իրանից ցածր մարդկանց հետ խոսելու։ Վերջինիս մեջ հրամայականի առանձին ձև կա, բայց առաջինի մեջ հրամայական չկա և նրա տեղ դնում են սահմանականի ձևը (Bohatta, Gr. jav. 71)։

Ալպիսի քաղաքավարական ստոիճաններ հրամայականի մեջ՝ կազմված դանազան մասնիկներով, կան նաև ալթայական լեզուներում. ինչպես՝ չուվաշերեն՝ -sam (հոգնակի samar), -xale, -tʸe, վերջինիս հետ նույն է թաթարերեն حی čə, če խնդրական հրամայականը (Ашмаринъ, Матер. էջ 325)։ Հրամայականի մի ալպիսի ձև է նաև թաթարերենի մեջ كور kür «տեսնել» օժանդակ բայով կազմված ձևը. ինչպես՝ kayta kür «դարձիր (խնդրեմ)», բացասականն էլ kayta kürmā «մի դառնար (խնդրեմ)», որից ևնացորդ է նաև չուվաշերեն səxla kur «սիրեիր դմեզ» (Ашмаринъ, Матер. էջ 326)։

Պարսկերենում կա շարունակական հրամայական (امر مدامی) emr-i mudāmi), որով հրամայում են արդեն սկսված գործը շարունակել առաջ տանել։ Կազմվում է می mī նախամասնիկը դնելով հրամայականի վրա և կամ նույն mī մասնիկը դնելով նույն բայի անցյալ դերբայի վրա և ավելացնելով էական բայը։ Առաջին ձևի համար օրինակ՝ میکوی mī-güy «խոսիր, մինչև այժմ խոսում էիր և շարունակիր խոսելը». երկրորդ ձևի համար օրինակ՝ میگفته باش mī-gufta bāš նույն իմաստով (Դէորդ դպիր, Պարսկ. բառ. էջ 19)։

Կովկասյան արչիներեն լեզվում կա հրամայականի մի ձև, որ գործ են ածում այնինչ բանը անելու, և նրանից հետո և նրա հետ մի ուրիշ բան էլ անելու համար։ Ալպիսի հրամայականը կազմվում է -lli մասնիկով. օրինակ՝

ššelli վերցրու և, sisalli նիւթը ու, alli արա և...

Այս ձևը կարելի է միշտ հայերենում «և, ու» շաղկապի հավելումով թարգմանել (Dirr, Finf, 264)։

Աֆրիկյան չիչևա լեզվի մեջ, որ բանաու ճյուղին է պատկանում, հինգ տեսակ հրամայական կա, որոնք են. 1) ստիպողական կամ պարտադիր և կամ խիստ հրամայական, 2) նվազ խիստ հրամայական, 3) մեղմ կամ պարզ հրամայական, 4) արդելական, 5) հորդորական (hortatory)։ (Watkins, 50)

Հրամայականը, ինչպես էլ լինի, իրապես ապառնի է, որովհետև լսողը հրամանը լսելուց հետո պիտի գնա, թեկուզ անմիջապես հետո. բայ այնպես կան լեզուներ, որ հրամայականի համար ունեն ոչ միայն ներկա և անցյալ, այլև ապառնի ժամանակ. այսպես՝ ամերիկյան ալհուա լեզուն ներկայի հետ գիտե նաև ապառնի հրամայական (Веніаминов, 33)։

Հրամայականի տեղ դանազան լեզուների մեջ կարելի է երբեմն գործածել բայի անորոշը։ Ալպես ռուսերեն молчать «լռել», այսինքն լռիր, լռեցեք։ Ռումիներենում էլ բացասական հրամայականը կազմվում է բայի անորոշ ձևով, ինչպես՝ nu căutà «չփնտրել!»։ Նույն ձևը կա դարձյալ իտալերենում, բայց միայն եզակի բ դեմքով, արդելականի նշանակությամբ և ենթադրում է իր հետ devi «պետք է» դեղչյալ բայը. ինչպես՝

non avere «չունենալ» (իմա՝ non devi avere «պետք չես ունենալ», որ է «մի՛ ունենար»)։

non amare «չսիրել» (իմա՝ non devi amare «պետք չես սիրել», որ է «մի՛ սիրեր»)։

Արևելահայ գրականում էլ կա այս ձևը, ինչպես՝ լռի՛լ «լռիր, լռեցեք», չծխի՛լ «մի՛ ծխիր, մի՛ ծխեք», չաղմկի՛լ «աղմուկ մի՛ հանեք»։

Ինչպես նկատելի է, անորոշի այս գործածությունը թե եզակի է և թե հոգնակի։

Եվ որովհետև այս ձևը ոչ արևմտահայոց մեջ կա և ոչ էլ արևելահայ ժողովրդական լեզվի մեջ, ուստի պետք է լինի թարգմանաբար կազմված ռուսերենից։

Գրաբարում կան միայն մի՛ մակրայով և անորոշ դերբայով կազմված ձևեր. ինչպես՝

Այլ ես ասեմ ձեզ, Ամենեին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս (Մատթ. ե 34)։

Այլ ես ասեմ ձեզ, Մի՛ կալ հակառակ չարին (Մատթ. ե 39)։

Դրավիդյան լեզուների մեջ էլ կա անորոշը իբրև հրամայական. բայց նրա իմաստը խնդրական կամ փաղաքշական է. ինչպես՝

թամիլ. nī vār -a ծաղկե՛ս
śeyvay-āga անե՛ս

(Caldwell, 538)

Հայ ժողովրդական լեզվի մեջ էլ կան հրամայականի փաղաքշական ձևեր։ Ալպես՝ Դրիմի բարբառում հրամայականը երբեմն առնելով չի մասնիկը, առանում է հորդորական ու մեղմ նշանակություն, որ մատնում է ռուսերեն ka մասնիկին՝ иди-ка сюда և նման դարձվածների մեջ. ինչպես՝

Հալդը էրթանք իզոր յարդըմ անինք—չի. Արիցէք իւա բանը անինք— չի. էյ, վըվ անոր սիրդ բիդ անէր՝ ասա— չի դուն. Սա կամուրջին անցնելու տեղ, մզոէսի, ծանծաղ տեղէն անցնինք—չի։

Այսպիսի մի քերականական ձև երևան է հանում Ալվազյան Գ. եպս. Առակք Քռիլովի, տպ. 1896, էջ 80 և իր երկերի մեջ էլ գործածում: Այսպես՝ վերի օրինակներից առաջին երկքը քաղված են իր «Արիմա Հայոց լեզուով շարադրուած Առակներ»-ից, էջ 11, 22, 31: Ալվազյանը գտնում է, թե այս մասնիկը թուրք կամ թաթար լեզվից է մտած և գործածական է Ղրիմի ու Նախիջևանի բարբառում: Իմ «Քննութիւն Նոր-Նախիջևանի բարբառի» աշխատութեան մեջ, էջ 324, նկատել եմ, որ Նոր-Նախիջևանի արդի բարբառը այսպիսի մասնիկ չունի. չեմ գտած նաև Պատկանյանի գործերում, որոնք ներկայացնում են Նոր-Նախիջևանի հնագույն բարբառը: Ուստի հետևցնում եմ, թե հրամայականի մի այսպիսի գործածութիւն Ղրիմի հին բարբառի մեջ միայն կա: Գալով մասնիկի ծագման, կասկած եմ հայտնում նրա թաթարական ծագման մասին, որովհետև թուրքերենում այսպիսի մասնիկ ու գործածութիւն չկա: Ես ավելի հավանական եմ համարում դնել հայերին չէ՞, չի՞ հարցականից համառոտված և մասնիկի կերպարանք առած. այսպես՝ դէհ, երթանք դրան օգնենք, — չէ՞, չի՞ լինիր, լաւ չի՞ լինիր և այլն:

Այժմ Աշմարինի մոա (Матер. էջ 325) դնելով վերոհիշյալ թաթարերեն čə, če մասնիկը ճիշտ այս գործածութիւնով, դնում եմ, որ իմ կասկածը իրավացի չէ և Ալվազյանի բացատրութիւնը շատ ճիշտ է: Հրամայականի փաղաքշական այս ձևը Ղրիմի բարբառում փոխ է առնված թաթարերենից:

Ինդրական հրամայականի մի ձև էլ կա, որ գործածվում է Կևսարիո Թոմարզա գլուղի բարբառով: Կազմվում է լա հետադասմասնիկով, որ դրվում է թե՛ դրական հրամայականի և թե՛ արգելականի վրա. ինչպես՝

մի ըներ լա
ասիկա ըրէ լա
մի երթար լա
(Ալպոյաճյան, Պատմ. հայ Կես. Բ 1661):

Այս մասնիկի ծագումը ինձ անհայտ է[1]:

Ինդրական ձև է նաև ընդդծված անկատարը հետևյալ օրինակում՝

[1] Արաբերենում կա 1) ل «էլ. ոչ» բառ-մասնիկը, հնարավոր է, որ կեսարիայի բարբառի այդ հավելվածը լա-ն փոխառված լինի.— Հ. Ա.

Սա շորերը լվայի՞ր...

Ինդրական կամ աղաչական ձևով հրամայականի մի ուրիշ ձև էլ կա Նոր-Նախիջևանի բարբառում, որ է թեական եղանակի ներկան +ը «եթե»-ի պես՝ Դա մուկրադը դաս նը «խնդրեմ այդ մկրատը տուր»: Այս ձևի ծագումը կարելի է երկու ձևով բացատրել:

Տաճկերեն լեզվի մեջ կա մեզմ հրամայականի նման մի ձև, որ ունի նույն իմաստը: Օրինակ՝ deséne «ասա», yeséne «կեր», gelséne «արի», alsána «առ» և այլն: Սրանք կազմված են աորիստական ներկայի եղակի Բ դեմքից +a, e ձայնավորը՝ իբրև հանգ: Նույնը գտնում ենք նաև հոդնակիում. ինչպես՝ alsánəz-a «առեք», verséniz-e «տվեք»: Այստեղ էլ հանգը a, e ձայնավորն է և հայտնի կերպով ցույց է տալիս, որ եզակիի փաղաքշական վերջավորութիւնը na, ne չէ, այլ միայն աորիստական: Ճիշտ թարգմանութիւնը այդ ձևերը նշանակում են «ա՛ռ, ինչո՞ւ չես առնում», «առո՛ւր, ինչո՞ւ չես տալիս» և այլն: Տաճկաստանի հայերը նրանց իբրև համապատասխան գործածում են «չառնե՞ս, չըսե՞ս, չուտե՞ս, չտանի՞ս, չտանի՞ք», որոնք նշանակում են ճիշտ «ա՛ռ, ինչո՞ւ չես առնում», «ասա՛, ինչո՞ւ չես ասում» և այլն: Այս բոլորը իմաստով նույն են նախորդ թուրքերեն ձևերի հետ, բայց ըստ ձևի բացատական են, մինչդեռ թուրքերեն ձևերը դրական են: Արդ՝ վինի բարբառում նույն թուրքերեն ձևը անփոփոխ թարգմանել են աորիստական ձևով՝ ավելացնելով նաև a ձայնավորը՝ գրի՛ս ա «գրիր», խօսիս ա «խօսիր» (Աճառ. Բրբա. էջ 292):

Եթե Տաճկահայաստանի հայերը նույն ձևերը փոխանակել են չտա՞ս, չըսե՞ս ձևերով, Ղրիմի հայերը կարող էին արդվինցոց նման դնել աորիստականի կամ թեականի (տաս) ձևը, ավելացնելով նրա վրա գոյականն ը «եթէ» բառը և կամ տաճկերենի վերջավորութիւնը սխալմամբ ne կարծելով, փոխանակել հայերեն ը բառով:

Հրամայականի համար կա նաև հարցականի ձևը, որ ըստ հարցնողի տոնի կարող է լինել ավելի կամ պակաս խիստ. ինչպես՝ պիտի լռե՞ս... լռելո՞ւ ես...: Նույնը ուրիշ լեզուներով, ինչպես՝ ֆրանսերեն՝ veux tu te taire! գերմաներեն՝ Wirst du wohl schweigen «լռելո՞ւ ես (լռիր)»: Նույնը արգելական իմաստով՝ ինչո՞ւ ես լռում (*«մի լռիր, խօսիր»*), ինչո՞ւ ես գալիս (*«մի գա, գնա»*): Գես խօսելո՞ւ ես (*«մի խօսիր, լռիր»*):

Հայերեն թե բարբառների և թե գրական լեզուների մեջ երեք տեսակ հրամայական կա, առաջինը սովորական (կամ նաև խիստ), երկրորդը՝ մեղմ, երրորդը՝ ավելի մեղմ կամ խնդրական։ Այսպես բերեմ բայից բե՛ր, բերե՛ս, կրերե՞ս։ Առաջինը պարզ հրամայականն է, որի մասին արդեն խոսել ենք, երկրորդը սառրագասականն է, երրորդը՝ ապառնիի հարցական ձևն է։ Մեղմութեան առհճանները երևում են հետևյալ օրինակներում.

Մի կտոր հաց տուր
Մի կտոր հաց տա՞ս
Մի կտոր հաց կտա՞ս։

Հայերեն բարբառների մեջ մեղմ հրամայականի մի ուրիշ ձև է այն, որ սովորական հրամայականի հետ գնում են նաև մի, մեկ=մեյ մը թվականները. օրինակ՝

Արևել. գնա՛ մի տես, մի գնա՛ տես, մեկ գնա՛ տես։
Արևմտ. մէյ մը գնա՛ տես, գնա՛ մէյ մը տես։
Երկու բարբառների համար էլ՝ գնա՛ մի անգամ տես։

Այսպես է նաև թուրքերեն git bir gör (*գնա՛ մեկ տես*)։

Այսպիսի դործածութեան մեջ մեկ և մեյ մը ձևերը շփոթութեան տեղիք չեն տալիս. բայց արևելյան հայերենում մի անմիջապես շփոթվում է արգելական մի՛ ձևի հետ. օրինակ՝ մի գնա տուն÷մի՛ տուն գնա՛. կամ տեղափոխված՝ մի տուն գնա÷մի՛ տուն գնա՛ (*տարբերութեյունը միայն շեշտի մեջ է*)։ Ուստի, շփոթութեան առաջքն առնելու համար, այժմ արևելյան բարբառում ընդհանրացել է մի հատ ձևը. մի հատ գնա՛ ասա՛, մի հատ արի՛ ըստեղ (*թերևս այստեղ դեր է խաղացել մի հետ «մի անգամ» ձևը. օրինակ՝ մի հետ արի ըստեղ*)։

Հրամայականի պարզ ձևը, որ նկարագրեցինք վերը, թե բարբառներում և թե երկու գրական լեզուներում ունի միայն եզակի և հոգնակի Բ դեմք։ Ներկա Ա և Գ դեմքից զուրկ է։ Զուրկ է նաև ամբողջ անցյալ ժամանակից։ Այսպես են նաև շատ ուրիշ լեզուներ և դանազան միջոցներով լրացնում են թերին։

Ռուսերենում առաջին դեմքի համար դրվում է ապառնի. *ինչպես՝*

пойду посмотрю «*գնամ տեսնեմ*»։

Հոգնակի առաջին դեմքի համար հնարված է մի ձև, որ ուրիշ լեզուների մեջ չկա։ Առնված է հոգնակի Ա դեմքի վերջավորութեյունը -ем, որի վրա ավելացրել են հոգնակի Բ դեմքի վերջավորութեյունը -те, և այսպիսով առացվել է հոգնակի Ա և Բ դեմքերի դումարը.

пойдемте посмотримте «*երթանք նայինք*» (*ես և դու, մենք և դուք*)։

Եզակի և հոգնակի Գ դեմքի համար գործածում են пусть «*թող*» (*թե պարզ և թե անցյալ ապառնի ձևերով*). *ինչպես՝*

пусть пойдет посмотрит
«*թող երթա նայի*»
пусть он пошел посмотрел бы
«*թող երթար նայեր*»։

Հոգնակի

пусть пойдут посмотрят
«*թող երթան նայենն*»
пусть они пошли (бы), посмотрели бы
«*թող երթային նայեին*»։

Ռուսերենում Գ դեմքը կարելի է նաև կազմել «տալ» բայով. ինչպես՝

дай ему встать «*թող վեր կենա*» (*բառացի՝ տուր նրան վեր կենալ*).

Լեհերենում էլ Գ դեմքը կազմվում է niech «*թող*» *բառով. ինչպես՝* niech pisze! «*թող գրե*»։

Նոր հունարենն էլ ἄφες «*թող*» բառը կրճատելով դարձրել է ἄς, որ իրը մասնիկ գործ է ածվում կազմելու համար թե հրամայականը և թե սառրագասականը։

Ավելի լավ է անգլերենը, ուր let «*թող, թողնք*» *կազմում է բոլոր դեմքերով հրամայական. ինչպես՝*

let me go (*թող*) *գնամ*
let us go » *գնանք*
go «*գնա, գնացեք*» (*Բ դեմքի՝ բուն հրամայական*)
let hem go «*թող գնա*»
let them go «*թող գնան*»։

Աֆրիկյան հատուկ լեզվում էլ հրամայականի ձևերից մեկը կազմվում է beri «*թույլ տալ*» *բայով* (Marré, 53)։

Թաթերենի մեջ, որ պարսկերենի զավակն է, հրամայականի համար կազմվել է «թող» ձևը՝ առնելով պարսկերեն hiš-

ten «թողնել» բայի հրամայական bi-hil ձևը և կրճատմամբ վերածելով bil ձևին, դարձրել են հրամայականի մասնիկ. ինչպես՝

bil buro «թող երթա»
bil bärund «թող տանեն»։
(В. Миллер, 40)

Տաճկերենում Գ դեմքի հրամայականը կազմելու համար գործ է ածվել goy «դիր» բայը, որ այս դեպքում մի քիչ սղվելով դարձել է qo: Այս ձևը այժմ սովորական չէ, բայց ծանոթ է հին աստծը, որ ասում է.

Géćme namerd Köprüsinden,
qo aparsən su ɜɛni.
«Մի անցնիր ամարդու կամուրջով,
թող ջուրը քեզ տանի»։

«Թող» ձևով հրամայականը կա նաև ամերիկյան կարիբի ընտանիքին պատկանող կիպիա լեզվի մեջ՝ do pri ձևով (թող, գոլ, ձգել). բայց մինչդեռ բոլոր մյուս լեզուները այս ձևը գործածում են դրական իմաստով, կիպիա լեզուն ընդհակառակը բացասական իմաստով է գործածում (արգելական հրամայական է)։ Այսպես՝

do pri e-coto «մի գողանար» (այսինքն գողանալը թող).
do pri a nicoro-di «մի ծուլանար» (այսինքն թող ծուլանալը)։
(L. Adam, 59)

Հոգնակի Ա դեմքի հրամայականը գտնվում է նաև մոնղոլերենում և տաճկերենում (ինչպես՝ alaləm «առնենք», verelim «տանք»), որ կոչվում է ըստ քերականների voluntativus։ Ֆրանսերենում եզակի Ա դեմքի հրամայական չկա և նրա տեղ հոգնակի Ա դեմքն է գործածվում. ինչպես՝ allons mangeons! «երթանք ուտենք կամ երթամ ուտեմ»։ Տաճկերենի մեջ էլ հաճախ եզակիի տեղ հոգնակի է գործածվում, որից թարգմանաբար անցել է հայերենին, թե՛ ժողովրդական և թե՛ գրական լեզվի մեջ։

Պոլսի բարբառի սովորությունն է եզակի Ա. դեմքի տեղ հաճախ հոգնակի դնել, այսինքն ես ասելու տեղ մենք և սրա համեմատ բայն էլ հոգնակի։ Այս սովորությունը կարելի էր ֆրանսերենի հետևողություն համարել, բայց որովհետև թե՛ հայ ժողովրդական լեզվի և թե՛ տաճկերենի մեջ էլ կա, պետք է ենթադրել, թե սրանից է օրինակված։

Օրինակ՝ «Բերայի դիշերներ» վեպի մեջ (հեղինակ Հ. Մ. Հաճյան, Պոլիս, 1885, էջ 2) հրաշտի մենախոսությունը այսպես է ընթանում.

— «Վաղը կիրակի է. մինչև իրիկուն կը քնանամ... կարծեմ փոքս դասարկ է. Անտրէային խանութը մտնենք քիչ մը բան ուտենք... դէհ, ասոր անոր միզքը չառնենք... երթանք քնանանք. երբոր արթննամ, այս մասին այն ժամանակ կը խորհիմ»։

Այսպես ամբողջ մենախոսությունը շարունակվում է մերթ եզակի և մերթ հոգնակի։

Տեսանք, որ թերի դեմքերի հրամայականը կազմելու համար դանադան լեզուներ գործ են ածում իրը օժանդակ բո՛ղ բայը։ Այսպես է նաև հայերենը թե՛ բարբառներում և թե՛ գրական լեզուներում, որոնց մեջ իրրև մասնիկ բո՛ղ բառը կցվում է թե՛ եզակի և թե՛ հոգնակի, թե՛ ներկա և թե՛ անցյալ անկատար բոլոր դեմքերի վրա։ Բայց որովհետև պարզ հրամայականը ունի եզակի և հոգնակի Բ դեմքերի համար առանձին ձև, ուստի սրանց համար բո՛ղ գործածել անսովոր է։ Անցյալ անկատարի մեջ, ուր պարզ ապառնիի առանձին ձև չկա, բարդ հրամայականի բոլոր դեմքերն էլ գործածական են։

Տալիս ենք այստեղ մի քանի օրինակ զանազան բարբառներից՝ թե՛ ներկա և թե՛ անցյալ ժամանակների համար։

Ահա սիրել, երթալ և գալ բայերի բարդ հրամայականի ներկան և անցյալը՝ Պոլսի բարբառով.

Ներկա

թող սիրեմ	*թող էրթամ*	*թող գամ*
թող սիրէ	*թող էրթա*	*թող գա*
թող սիրենք	*թող էրթանք*	*թող գանք*
թող սիրեն	*թող էրթան*	*թող գան*

Անցյալ

թող սիրէյի	*թող էրթայի*	*թող գայի*
թող սիրէյիր	*թող էրթայիր*	*թող գայիր*
թող սիրէր	*թող էրթար*	*թող գար*
թող սիրէյինք	*թող էրթայինք*	*թող գայինք*
թող սիրէյիք	*թող էրթայիք*	*թող գայիք*
թող սիրէյին	*թող էրթային*	*թող գային*

Այս բող մասնիկը երբեմն կարելի է հետագաս դարձնել և երբեմն էլ հետացնել բայից. օրինակ՝ էրթա՛ բող, էրթար բող, բող

մէյ մը էրթա... բայերի կրկնութեան դէպքում կարելի է չկրկնել թող մասնիկը. թող էրթա մնա, թող մէյ մը էրթա դեսնա...

Մշո բարբառում թո՛ղ համառոտված դարձած է բլխ, երբեմն էլ պարզապես թ. ինչպես՝ թխ ինա, թխ ասա, թխ առնէ կամ թառնէ, թէրթա:

Վերջին կրճատումը բնականաբար միայն ձայնաւորով սկսող բայերի համար կարող է տեղի ունենալ: Այս երկուսի միջին ձևն է թը, որ գտնում ենք Ծեննաեի (Կեսարիա) բարբառում. ինչպես՝ Թը բէրէ «թող բերի»:

Ղրիմում և Նոր-Նախիջևանում էլ մասնիկն է թող, որ նոր բարբառում դարձել է թո և գործածական է միայն ներկա եղակի Գ, հոգնակի Գ և անկատարի բոլոր դէմքերով. ինչպես՝

Ներկա	Անցյալ	
	թող էրթալի	թո էշթալի
	թող էրթալիր	թո էշթալիր
թող էրթա, թո էշթա	թող էրթար	թո էշթար
	թող էրթալինք	թո էշթալինք
	թող էրթալիք	թո էշթալիք
թող էրթան, թո էշթան	թող էրթալին	թո էշթալին

Թող հրամայականի մասնիկը սովորական է նաև կարնո բարբառում:

Համշենի բարբառում այս թող մասնիկը առանում է 6 ձև. թխող, թեղ, թող և վերջաձայնը վերածելով յ-ի՝ թեօխ, թեխ, թօխ.— բայց սրանք կարող են նաև փոխել նախաձայնը ա, որով կունենանք 6 ձև ևս (աեօղ, աեօխ և այլն): Կարող են դրվել միայն բայից առաջ, ավելի սովորական ձևով՝ բայից հետո, բայց նաև միաժամանակ թէ առաջ և թէ հետո: Օրինակ՝ թեօխ էշթա, թեխ էշտա թեխ, թեխ էշտա տօղ և այլն: Եվ որովհետև թող նշանակում է նաև «ձգիր, բաց թող, թուլլ տուր», ուստի հաճախ այս մաքով գործածվում է նաև արծլ. օրինակ՝ արօ՛լ, թեխ էշտա կամ արօ՛լ, էշտա տօղ:

Անցյալ՝ արօ՛լ, թօխ էշտար կամ արօ՛լ, էշտար տօղ և այլն:

Մի քանի բայերի կրկնութեան ժամանակ, կարելի է գործածել միայն մի անգամ թող. օրինակ՝

թող էշտամ դէնում
թող էշտալդ դէնէլդ

Ավելի սովորական ձևով՝

էշտամ դէնում թող (թէխ, տէխ...)
էշտալդ դէնէլդ թող (տօղ, տէխ...)
էշտալ դէնէլ թող (տօղ, տէխ...):

Ավելի զարմանալի է այն ձևը, որ կազմված է ըլլի բայով. օրինակ՝

Յէս դէսած չունէլ նա, տուն տօղ ըլլի դէս.

կամ՝

Յէս դէսած չունէր նա, տուն տօղ ըլլի դէնէլդ:
Սրանց հոգնակին լինում է այսպես.
Մէք դէսած չունալք նա, տունք տօղ ըլլի դէնէլք կամ ...տունք տօղ ըլլի դէսէք:

Այս բոլորի մեջ թող ըլլի նշանակում է «գոնե» և թարգմանված է թրքերեն օլսուն ձևից:

Առոիալի բարբառում ներկայի ձևը կազմվում է առորադասական ներկայի վրա ավելացնելով թօխ մասնիկը: Սա ուրիշ բարբառների թող բառն է, ուր ո՝ բառավերջում գոնվելու պատճառով և կամ խուլ բաղաձայնների մոտ դարձել է խ և ապա այդ ձևը ընդհանրացել է: Լեհահայ բարբառով սրանից օրինակ ունենք միայն թօխ իգ՝ա «թող գա» և թօխ իլա «թող ըլլա, թող լինի» (երկուսն էլ ձայնաւորի մոտ):— Բայց առանց թող մասնիկի կարելի է ասել առորադասական ներկայով. օրինակ՝ Լհ. Ադ՝ւած բահէ ա ձաձգէ:

Հրամայականի անցյալի ձևը պիտի լինէր թօխ սիրեի, թօխ սիրեիս, թօխ սիրեր և այլն, բայց այս կարդի օրինակներ չունենք բնագրերում:

Սառև տալիս ենք սիրել, երթալ և գալ բայերի բարդ հրամայականի ներկան և անցյալը վանի բարբառով.

Ներկա		
թող սիրեմ	թող էրթամ	թող կլամ
թող սիրի	թող էրթա	թող կլա
թող սիրենք	թող էրթանք	թող կլանք
թող սիրեն	թող էրթան	թող կլան

Անցյալ

թօղ սիրի	թօղ էրթի	թօղ կլի
թօղ սիրիր	թօղ էրթիր	թօղ կլիր
թօղ սիրէր	թօղ էրթէր	թօղ կլէր
թօղ սիրինք՛	թօղ էրթինք՛	թօղ կլինք՛
թօղ սիրիք՛	թօղ էրթիք՛	թօ կլիք՛
թօղ սիրին	թօղ էրթին	թօղ կլին

Կարելի է կրճատել այս թօղ *մասնիկը* (թօ), *բայց կարելի չէ հետագաս գործածել։ Կրկնութեան դէպքում կարելի է միայն մի անգամ դնել* թօղ *մասնիկը, իսկ իմաստի սաստկութեան համար կարելի է դնել* տլո (<թրք. hele) *կամ մէ հա և կամ երկուսը միասին. ինչպէս՝*

թօղ մէ հա էրթա տիանա
թօղ տլո էրթա տիանա
թօղ տլո մէ հա էրթա տիանա
թօղ ուտի. թօ կլա խեմ ինչ տը անի ձիկ։

Սվեդիալի բարբառում բող *մասնիկը ձայնաւորով և էրթուն բաղաձայնով սկսվող բայերի մոտ գործածվում է դ՛ըղ ձևով, իսկ խուլ և հնչեղ էրթուն բաղաձայնների մոտ՝ բըխ ձևով։ Շատ հետաքրքրական է այն, որ այս* բըղ *մասնիկը թեև ծագմամբ համապատասխանում է* բէ՛օղ *բային, բայց իբրև մասնիկ գործածվելով նախ իր ձայնաւորը սղել է* (ը) *և երկրորդ՝ նախաձայն* բ *մեղմելով դարձրել է* դ՛ *(ավելի ուշ պիտի տեսնենք նաև* բն *դարձած իբր մասնիկ* դ՛ը)։

Ներկա

դ՛ըղ բ՛իրիմ	դ՛ըղ տսիմ
դ՛ըղ բ՛իրիս	դ՛ըղ տսիս
դ՛ըղ բ՛իրէ	դ՛ըղ տսէ
դ՛ըղ բ՛իրինք	դ՛ըղ տսինք
դ՛ըղ բ՛իրիք	դ՛ըղ տսիք
դ՛ըղ բ՛իրին	դ՛ըղ տսին

Անցյալ

դ՛ըղ բ՛իրէր է	դըղ տսէր է
դ՛ըղ բ՛իրէր	դըղ տսէր

դ՛ըղ բ՛իրիր	դըղ տսիր
դ՛ըղ բ՛իրէր ինք	դըղ տսէր ինք
դ՛ըղ բ՛իրէր իք	դըղ տսէր իք
դ՛ըղ բ՛իրէր ին	դըղ տսէր ին

Այս դ՛ը՛ղ մասնիկը (իբր «պիտի» մասնիկի նման) չի կարող դնել հետագաս, այլ միայն նախադաս է բային, կարող է սակայն մի քանի բայեր իրար հաջորդելու դեպքում, միայն մի անգամ դրվել և մինչև իսկ բայից որևէ բառով բաժանվել. օրինակ՝

դ՛ըղ ուդ՛օ առնէ ուդ՛օ «թօղ էրթա առնի գա».

Էնք դ՛ըղ ուդ՛իր առնիր բ՛իրիր «ինքը թող երթար առներ բերիր».

դ՛ըղ ուդ՛օ ի գօն, առնէ բ՛իրէ «թող էրթա առն, առնի բերի».

դ՛ըղ ի գօն ուդ՛օ «թող առն էրթա».

դ՛ըղ իրիղ տսիր «թող երեկ ասեր»։

Զեյթունի (Կիլիկիա) գավառականում թող *մասնիկը դառնում է խուլ բաղաձայնից առաջ* բուխ, *ձայնավորից առաջ* բուղ. *կարող է և կրճատվելով դառնալ* բու։

Ահա սիրել, երթալ և զալ բայերի բարդ հրամայականի ներկան և անցյալը.

Ներկա

թուխ սիլիմ	թու սիլիմ	թուղ իլթամ	թուխ գամ
թուխ սիլէ	թու սիլէ	թուղ իլթօ	թուխ գ՛օ
թուխ սիլինք	թու սիլինք	թուղ իլթօնք	թուխ գ՛օնք
թուխ սիլին	թու սիլին	թուղ իլթօն	թուխ գ՛օն

Անցյալ

թուխ սիլա	թու սիլա	թուղ իլթի	թուխ գ՛ի թուխ ի գ՛ի
թուխ սիլէլ	թու սիլէլ	թուղ իլթէլ.	թուխ գ՛էլ թուխ ի գ՛էլ
թուխ սիլանք	թու սիլանք	թուխ իլթինք	թուխ գ՛ինք թուխ ի գ՛ինք
թուխ սիլան	թու սիլան	թուղ իլթին	թուխ գ՛ին թուխ ի գ՛ին

Ուրիշ բարբառներում թող *մասնիկը կարող է բայից հետադաս լինել. ինչպես՝ Պլ.* թօղ ըրբա *կամ* ըրբա՛ թօղ. *բայց Զեյթունում նման երևույթ չկա.* թող *մասնիկը թէ՛ ներկայում և թէ՛ անցյալում բայից նախադաս է միշտ:*

Մարաղայի բարբառում էլ բարդ հրամայականը կազմվում է թօղ *կամ կրճատ* թօ *մասնիկով, որ կցվում է բայի աոորոդասական եզակի և հոգնակի Ա և Գ դեմքերի վրա, թէ՛ ներկա և թէ՛ անցյալ. ինչպես՝*

թօ էթամ, թօ էթա, թօ էթանք, թօ էթան.
թօ էթամ էր, թօ էթար, թօ էթանք էր, թօ էթան էր:

Նոր-Ջուղայի բարբառը ունի ոչ միայն հրամայական ներկա և անցյալ, այլև հրամայական գերակատար: Ավատեղ էլ գործածվող մասնիկն է թո՛ղ, որ կցվում է աոորոդասական ներկայի եզակի և հոգնակի երրորդ դեմքի վրա. օրինակ՝

թո՛ղ գ՛րի, թո՛ղ խագ՛նի, թո՛ղ խաղա, թո՛ղ մոռանա.
թո՛ղ գ՛րեն, թո՛ղ խագ՛նեն, թո՛ղ խաղան, թո՛ղ մոռանան:

Անցյալ

Կազմվում է թող *մասնիկով, որ կցվում է աոորոդասական անցյալի եզակի և հոգնակի Բ և Գ դեմքերի վրա. օրինակ՝*

թո՛ղ գ՛րիր, թո՛ղ գ՛րէր, թո՛ղ գ՛րիք, թո՛ղ գ՛րին.
թո՛ղ խագ՛նիր, թո՛ղ խագ՛նէր, թո՛ղ խ՛ագնիք, թո՛ղ խ՛ագնին.
թո՛ղ խաղիր, թո՛ղ խազէր, թո՛ղ խազիք, թո՛ղ խազին.
թո՛ղ մոռանիր, թո՛ղ մոռանէր, թո՛ղ մոռանիք, թո՛ղ մոռանին:

Գերակատար

Կազմվում է թող *մասնիկով, որ կցվում է գերակատարի եզակի և հոգնակի Բ և Գ դեմքերի վրա. օրինակ՝*

թո՛ղ գ՛րէլ իր, թո՛ղ գ՛րէլ էր, թո՛ղ գ՛րէլ իք, թո՛ղ գ՛րէլ ին.
թո՛ղ խագ՛էլ իր, թո՛ղ խագ՛էլ էր, թո՛ղ խագ՛էլ իք, թո՛ղ խագ՛էլ ին.
թո՛ղ խաղացել իր, թո՛ղ խաղացէլ էր, թո՛ղ խաղացէլ իք, թո՛ղ խաղացէլ ին.
թո՛ղ մոռացէլ իր, թո՛ղ մոռացէլ էր, թո՛ղ մոռացէլ իք, թո՛ղ մոռացէլ ին:

Ագուլիսի բարբառում թող *դառնում է* թուղ, *որ խոնարհվում է բայի աոորոդասական կամ ըղձական ձևի հետ. կարելի է այս ձևը գործածել բոլոր դեմքերի համար, բայց հատկապես առաջին և երրորդ դեմքերի համար, որոնք ուրիշ ձևի հրամայական չունեն. ինչպես՝*

թուղ թակիմ	*թուղ ահիմ*
թուղ թակի	*թուղ ահի*
թուղ թակիք	*թուղ ահիք*
թուղ թակին	*թուղ ահին*

Հրամայական անցյալ

Կազմվում է պարզ հրամայականի վրա ավելացնելով ել. հետևաբար կա միայն Բ դեմքով, ինչպես՝

թակա՛ նէլ «թակեիր», ահա՛ նէլ «ասեիր».
Խրկո՛հիք նէլ «թակեիք», ըհո՛հիք նէլ «ասեիք»:

Հրամայական անցյալ (Բ ձև)

Կազմվում է հրամայական ներկայի երկրորդ ձևի վրա ավելացնելով նէլ մասնիկը. գործածական է մանավանդ Գ դեմքով. ինչպես՝

թող թակի նէլ «թող թակեր»
թուղ թակին նէլ «թող թակեին»
թուղ ահի նէլ «թող ասեր»
թուղ ահին նէլ «թող ասեին»:

Այս թող *մասնիկը կարելի է երբեմն հետադաս դարձնել. երբ մի քանի բայ իրար են հաջորդում, կարելի է* թող *մասնիկը չկրկնել (և այս ավելի հաճելի ձև է), կարելի է նաև* թող *մասնիկը անջատել բայից՝ զանազան բառերով: Ահա օրինակներ Պոլսի բարբառից.*

Էրթա թօղ, էրթար թօղ, թօղ մէկ մը էրթա, թօղ առաըվընէ մինչև իրիկուն սպասէ.

թօղ էրթա ես, թօղ մէկ մը էրթա տեսնա...

Մրդ. թօ էթամ ասնիմ կամ «թող երթամ տեսնեմ ու գամ»:

Նոր-Նախիջևանի բարբառում գտնում ենք թէ՛ կրկնված և թէ՛ կրճատ ձևը. ինչպես՝

po էշpա գէնա կամ po էշpա, po գէնա «թող երթա կենա», po էշpա առնէ կամ po էշpա, po առնէ «թող երթա առնէ»:

Նոր-Նախիջևանի բարբառին հատուկ մի ձև է ինչ հարցակա-նից հետո pող հրամայականի գործածութիւնը, որ ուրիշ բարբառ-ներում չկա. ինչպես՝

ի՞նչ po առնէ «ինչ անի», ի՞նչ po ասէ «ինչ ասի»:

Երբեմն պարզ սաորադասականն էլ առանց pող հավելվածի ունի նաև հրամայական Գ դեմքի իմաստ. ինչպես՝

Պլ. հօքին էլլա՜, ըսէ էրթա
Մրդ. խօքիս ըլը, ասա էթա
(այսինքն՝ հոգիդ թող էլլէ, ասա թող երթա):

Տեղ-տեղ pող հրամայականի հետ միանում է նաև երpա՛յ օժանդակը. ինչպես՝ Պլ. թող երթա ուղէ, թող քնանա, որոնք պարզապես «թող ուտէ, թող քնանա» իմաստն ունեն: Մշո բար-բառում կարելի է նաև դնել միայն երpալ բայը, որ այսպիսով դառնում է հրամայական կազմելու նոր մասնիկ. ինչպես՝ Մշ. պահ մեր մալ փիացուն, էրթան փիացուն «մեր ազը պիտի սատկեցնենն, թող սատկեցնենն»:

Ը. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Երբ արվում է մի հրաման, ինչքան էլ շատ լինի նրա գոր-ծողութիւնը, ամենամիանալով հրամանը տրվելուց հետո պիտի լի-նի. ուստի բնականորեն հրամայականը ապառնի է: Եվ երբ կո-չում ենք հրամայական ներկա, հասկանում ենք ապառնի: Դրա համար էլ լեզուների մեծ մասի մեջ հրամայականի համար կա միայն մի ձև, որ միաժամանակ ներկա է և ապառնի:

Բայց կան լեզուներ, որոնք այսոհանդ էլ տարբերում են երեք ժամանակ. հրամայական ներկա (որ այժմ անմիջապես պիտի կա-տարվի), հրամայական անցյալ և հրամայական ապառնի:

Օրինակ՝ ամերիկյան անհաա լեզվի մեջ կա չորս տեսակ հրա-մայական. սովորական հրամայական ներկա, իսկական ներկա հրա-մայական, անցյալ և ապառնի:

Սովորական հրամայականը կազմվում է բայի անորոշից, ավելացնելով նրա վրա դերանվան սովորական դեմքերը. այսպես՝ üvlo «սիրել» բայից՝

	üvlo-ho	թող սիրեմ	üvlo-hog	սիրենք
բ	üvlo-wi	ար. սիրիր	üvlo-wig	ար. սիրեցեք
	üvlo-wia	իգ. սիրիր	üvlo-wiag	իգ. սիրեցեք
գ	üvlo-su	ար. թող սիրի	üvlo-sug	ար. թող սիրեն
	üvlo-sua	իգ. թող սիրի	üvlo-suag	իգ. թող սիրեն

Իսկական ներկա հրամայականը կազմելու համար սրանց սկիզբը դրվում է i, որ ներկայի նշանն է. անցյալը կազմելու հա-մար դրվում է a, իսկ ապառնին կազմելու համար e. այսպես՝

Ներկա	i-üv lo-ho	թող այժմ սիրեմ ես
Անցյալ	a-üvlo wi	թող սիրեիր դու
Ապառնի	e-üvlo-sug	թող սիրեն նրանք ապագայում և այլն:

(Haumonté, 23)

Աֆրիկյան բանտու ընտանիքից լունյորո լեզվի մեջ էլ կա 4 տեսակ հրամայական. սովորական ներկա, մոտավոր ապառնի, հե-ռավոր ապառնի և շարունակական ապառնի: Վերջինը ցույց է տա-լիս, որ պատվերը կամ հրամանը երկար ժամանակ պիտի տևի, կամ գոնապան գեպքերում և կամ սովորաբար պիտի արվի (Mad-dox, 17): Հնդկական Փաշմիրի լեզվում էլ կա տեսական հրամայա-կան (Grierson, հատ. 8, մասն 2, էջ 292):

Շատ անկանոն է հրամայականի կազմութիւնը աֆրիկյան բարի լեզվում. այս լեզուն ուսումնասիրող Միտտեռուցները վերց-րել է այս լեզվի բոլոր բայերը, ըստ իրենց վերջավորութեան բա-ժանել է նրանք 9 խմբի և դրել հրամայականների բոլոր ձևերի ցանկը (Mitterrutzner, 40—48).

Թ. ԲԱՐԴ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼԸ

Կազմվում է սաորադասականի անցյալի վրա դնելով pող ժամանիկը, թէ բարբառներում և թէ երկու գրական լեզուներում:

Նախորդ հատվածում բարդ հրամայականի ներկայի մասին խոսելիս, զուգընթացաբար ստիպված էինք խոսել նաև բարդ հրա-մայականի անցյալի մասին և բերել օրինակներ բարբառներից: Այս բոլորը չենք կրկնում այստեղ, այլ բավականանում ենք դնե-լով մի-մի օրինակ բարդ հրամայականի ներկա և անցյալ ժամա-նակներից՝ երկու գրական լեզուների համեմատութեամբ:

Ա լծորդություն, ա տիպար

թող սիրեմ	թող սիրէի
թող սիրէ (սիրի)	թող սիրէիր
թող սիրենք	թող սիրէր
թող սիրեն	թող սիրէինք
	թող սիրէիք
	թող սիրէին

Ա լծորդություն, բ տիպար

թող պագնեմ	թող պագնէի
թող պագնէ	թող պագնէիր
թող պագնենք	թող պագնէր
թող պագնեն	թող պագնէինք
	թող պագնէիք
	թող պագնէին

Բ լծորդություն, ա տիպար

թող խօսիմ	թող խօսէի
թող խօսի	թող խօսէիր
թող խօսինք	թող խօսէր
թող խօսին	թող խօսինք
	թող խօսէիք
	թող խօսէին

Բ լծորդություն, բ տիպար

թող հագնիմ	թող հագնէի
թող հագնի	թող հագնէիր
թող հագնինք	թող հագնէր
թող հագնին	թող հագնէինք
	թող հագնէիք
	թող հագնէին

Բ լծորդություն, ա տիպար

թող կարդամ	թող կարդայի
թող կարդաս	թող կարդայիր
թող կարդանք	թող կարդար
թող կարդան	թող կարդայինք
	թող կարդայիք
	թող կարդային

Գ լծորդություն, բ տիպար

թող իմանամ	թող իմանայի
թող իմանաս	թող իմանայիր
թող իմանանք	թող իմանար
թող իմանան	թող իմանայինք
	թող իմանայիք
	թող իմանային

Դեպքեր կան, երբ հրամայականի բարդ ներկայի եզակի Ա դեմքը անսովոր է գործածության մեջ. ինչպես՝ թող սիրեմ, թող լռեմ և այլն։ Բայց այդ չի նշանակում, որ բարդ հրամայականի ներկայի եզակի Ա դեմքը ընդհանրապես անսովոր է։ Եվ այդ երևում է, հենց որ վերցնենք մի հարմար օրինակ. ինչպես՝

Թող մեռնեմ պատերազմի դաշտում, և թող ես ևս զոհվեմ Հայրենիքիս պաշտպանության սուրբ գործի համար։

Իսկ բարդ հրամայականի անցյալ անկատարը շատ ավելի սովորական է ընթացիկ լեզվի մեջ։

2. ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ա. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱ

Վերը ասացինք, որ դրաբարի սահմանական ներկան միջին հայերենում սաորադասական ներկայի փոխանցվելուց հետո, նրա փոխարեն ստեղծվեց կը մասնիկով ներկան, որ տարածվեց ընդհանուր հայերենի մեջ։ Այս ձևը իր իմաստով իրոք սահմանական ներկա շատ բավարար էր։ Բայց նա ուներ այն անպատեհությունը, որ միաժամանակ նաև ապառնի էր։ Ամեն լեզվի մեջ էլ ներկան կարող է իրրև ապառնի գործածվել։ Սակայն այն բոլոր լեզուներում, որ ներկան նաև իրր ապառնի է գործածվում, կա հատուկ և առանձին ապառնի։ Դրաբարի ապառնին ջնջվելուց հետո, միջին հայերենը առանձին ապառնիից զուրկ մնաց։ Անպատեհությունը վերացնելու համար, անհրաժեշտ էր ուրիշ կամ առանձին ապառնի ստեղծել և կամ նոր ներկա հնարել։

Առաջին միջոցին դիմեցին արևմուտքի հայերը, որոնք ստեղծեցին պիտի ձևով ապառնի և ներկայի համար հատատ պահեցին կը ձևը։ Երկրորդ միջոցին դիմեցին արևելքի հայերը, որոնք ներկայի համար հնարեցին ում ձևը, պահելով կը ձևը ապառնիի համար, իսկ պիտի ձևը՝ պարտավորականի համար։

Թեև կը ձևի ծագման պատմությունը լուսաբանելու համար կան բավական աղբյուրներ, բայց ում ձևի մասին դժբախտաբար ոչինչ չունենք։ Եթե կան ձեռագրերում հազվագյուտ հիշատակություններ, դրանք էլ հրատարակված չեն։ Ուստի առայժմ մենք կարող ենք ենթադրություններ միայն անել, որոնց ստուգումը կինա ապագային։

Մեր արևելյան բարբառները այսօր ներկայի համար ունեն երեք հիմնական ձև՝ -ում, -լիս և -մաև։ Օրինակ՝ Երև. խաղում եմ, Արդ. փնտռելիս եմ, Ջղ. գնամաև ամ «գնում եմ»։

Այս ձևերի հնագույն գոյությունը հաստատող վկայություններն են հետևյալները։

Թոթռաումն լինի ի սառերեն և ի լուսոյն. թաւի թէ ի կուումն են ընդ իրեար։ Լծ. Փիլ. (հրատ. Փիլ. հատ. բ, էջ 239 ծան.)—թրգմ. Թոթռումը պատճառում է լուսից և սառերից. կարծես թե իրար հետ կռվում են։

Հիւանդին թպտիրն մաշում լինի (կաղմածքն սպառած կըլլալ) (ԺԲ դար). Այտն. 104։

Յերկիւղ մեծ եղեալ և ի զոդման. Վրք. և վկ. Բ 105։

Պարոնագուսաբս կարգման եղաւ «կարգուելու եղաւ» (ԺԳ դար). Այտն. 104։

Եւ նա ի զոդման լեալ՝ ասէ. Վրք. և վկ. Բ 67։

Ի զոդման եմ. Յայսմ. փետր. 18։

Եւ երբ տեսանէ որ չեն ի պակասել և ոչ ի լաւելնալն (երբ տեսնում է որ չեն պակասում և ոչ էլ ավելանում). Մխ. բժշ. 137։

Ահա ի գալ են (ահա գալիս են). Դրնդ. 164։

Թէ չես ողորմիլ և ելանել, իջո՛ ապա և դիս (եթե չես խղճում և բարձրանում, ինձ էլ իջեցրու). Վրք. հց. Ա. 123։

Այսպէս ածէի զմաւս իմով եթէ յերկինս եմ ելանել (այնպես էի մտածում, թե երկինք եմ ելնում). Վրք. հց. ա. 191

այլ ձեռագիր՝ այնպէս համարէի թէ յերկինս ելանիցեմ)։

Եթ ում տալ էր զօրէնսն (որին որ հաղորդութիւն տալիս էր կամ տալու էր՝ ասից). Բուզ. 231։

Ընդ որ գալ էր (որով գալիս էր կամ գալիս էին). Բուզ. 259։

Չի կարծիս առնալ նոցա՝ այնպես գիտացին թէ ընդ աղային գեղջին ի խաղալ և կամ թէ աշխատանալ է և ննջեալ. Յայսմ. գեկտ. 3։

Հարէլ լառաջին ի գնալ էր և նա լեանանց. Յայսմ. մարտ 14։

Karst 375 տալիս է մի ցուցակ ներգոյական անորոշ դերբայով կազմված սահմանական ներկաների, որոնցից առաջին հինգը հավաքել է Վարդանից (ԺԳ դար), մյուսները այլ աղբյուրներից.

են ի կռուիլ «կռվում են».

եմ լասել «պիտի ասեմ».

եմ լանձնել «լանձնում եմ».

Հալոց կանթեղն է ի վառիլ.

հաւատալ եմ.

է ի գալ «գալիս է».

ոնց ելնեմ ի դուրս, երբ երկինքն ի շուրջ է ի գալ և գիս ի ներք է ի լունել.

ինչ ցեղ ելնեմ, երբ երկինքն ի վրայս է ի փլչել և գիս ի ներքեն է լարգելել.

թուենալ թէ գմաանդ ի զատ է ի ձգել.

թուի թէ ի վէմ ես ի հասնել

լինի ի խաղալ

թուենալ թէ ի բարձր ի վայր է ընկնիլ.

ի լայրիլ լինի. Մխ. Հեր. 119.

է ի ասել. Մխ. Հեր. 113.

Ի՞նչ է այս -ում, -լիս և -ման մասնիկների ծագումն ու նշանակությունը։

-ում մասնիկի հետ պատահական նմանություն ունի լազերեն ներկայի -um- մասնիկը, որ ուրիշ բարբառի մեջ ub ձևն ունի. ինչպես՝ b-čar-um, čar-um, čar-um-s «գրում եմ, գրում ես, գրում է» (Dirr, Einl. 110)։ Ում-ը գրաբարի մեջ ներգոյական կազմելու հին մասնիկն է, որ գտնում ենք դերանվանական հոլովման, դասական թվականների հոլովման և մի քանի ուրիշ անկախ բառերի հոլովման մեջ. ինչպես՝ լիմ-ում, ի քում, ի մերում, ի ձերում, յերկրորդում, յերրորդում, ի միում, ի հնումն և ի նորում։ Այս էր, որ ընդունված է նաև արևելյան բարբառների մեջ՝ իբրև ներգոյականի հատատուն մասնիկ։ Ըստ այսմ կռվում եմ, խաղում եմ, վիճում եմ նշանակում են պարզապես «կռվի մեջ եմ, խաղի մեջ եմ, վեճի մեջ եմ» և այլն։ Եվ երբ Լծ. Փիլ. գրում է ի կռումն ես, դեռ չգիտեն, թե ինքը սահմանականի ներկա է գործածում, այլ պարզ ներգոյական, որ սակայն սահմանականի արժեք ունի։

Շատ ավելի հեշտ է ճանաչել նաև -ման մասնիկի ծագումը, որ դարձյալ ուրիշ բան չէ, բայց եթե գրաբարի -ումն վերջացած բառերի ներգոյականը[1]։ Սրանք գոյականաձև դերբայներ են, այսինքն շատ ավելի մոտիկ բայական գաղափարին, որով և հարմար են կազմելու բայի սահմանական ներկան։ Այսպես, օրինակ՝ շարժումն, սեռ. սր. շարժման, ներգ. ի շարժման, որից էլ ի շարժման եմ, այն է «շարժվելու գործողության մեջ եմ, շարժման մեջ եմ, շարժվում եմ», կամ նախդրի սովորական անկումով՝ շարժման եմ։

Նույն ձևով է կազմված ըստ իս լման «լիքը, լրացնել», որ առաջանում է ի լրման ձևից, առաջին անգամ լուանի համար գործածված, հետո ընդհանրացած, որից են կազմված լմնցնել, լմնցնել։

Այսպես են նաև վերի ձևերից ի խաղալ եմ, ի գնալ եմ և այլն, որոնք նշանակում են «խաղում եմ, գնում եմ», այսինքն «խաղալու, գնալու գործողության մեջ եմ»։ Միայն թե անորոշները ո

[1] Այտն. 104 ման մասնիկը պարսկական է համարում. բայց հայանի չէ ի՛նչ պարսկերեն բառ է համարում արա սկիզբը. ես չգիտեմ այսպիսի բառ. այնուամենայնիվ կարգման համարում է կարգումն բառի սեռականը՝ ինչպես որ ունենք, ասում է, անբևուլթին սեռական են՝ տեսնվելու և այլն։

հոլովման պատկաններով և առանձին ներգոյական հոլով չունենալով, ալառեղ դրված են նախդրի հայցական հոլովով, որ գրաբարում n հոլովման մեջ նաև իբր ներգոյական է ծառայում:

Մի քիչ ավելի դժվար է -լիս ձևի ծագման բացատրությունը: Պետք է մեկնել լալիք բառից, որ նշանակում է «ողբ, լաց լինելը» և լալ բայի իբր դերբայն է՝ լալիւն բառին համանիշ: Համմ. Ընդ երեկոյս հանգիցեն լալիք (Սղ. ԻԹ 6). Արդ եղիցին լալիք նոցա (Միք. Ը. 4).— հյց. լինում է լալիս. ինչպես՝ Ջանալ խափանել ի մեռելոյն գմոլեկան լալիսն (Կդկնտ.).— ներգ. և նխ. հյց. ի լալիսն՝ ինչպես՝ իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նըստաւալ լալը... ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն (Բուզ.): Այսպիսով ի լալիս եմ ներգոյականից առաջանում է լալիս եմ «լաց եմ լինում» բայը: Միջին հայերենի շրջանում, բազմաթիվ հայերեն բառեր և հատկապես տեղանուններըն՝ իրենց նախդրով հայցականը =ներգոյականը դարձրել էին ուղղական (-իս վերջավորությամբ), ինչպես՝ Ագուլիս, Տփղիս, Մանգղիս, Եղեգիս, Մասիս և այլն:

-լիս ձևի այս բացատրությունը առաջին րոպեից մի քիչ ծանր է երևում, բայց նախորդ երեք ձևերի բացատրությունները՝ սահմանական ներկան իբրև ներգոյական, ցույց է տալիս, որ այստեղ էլ մենք գործ ունենք ներգոյական ձևի հետ:

Ներգոյական հոլովը իբրև սահմանական ներկա գործածելու երևույթը անսովոր չէ լեզուների մեջ: Թուրքերենի մեջ կա մի տեսակ ներկա, որ ցույց է տալիս տաճիճանական զարգացում և կազմվում է անորոշ դերբայի ներգոյական հոլովից. ինչպես՝

souk gitdikje artmaq-da dər.
«ցուրտը քանի գնում ավելանում է»
səǰak günden güne azalmaq-da dərə
«տաքը օրեցօր պակասում է»
fiatlar bazarda ikigünde bir yükselmek-de ve enmekde dir.
«գները շուկայում երկու օրը մեկ բարձրանում և իջնում են»:

Նույնը կա նաև ուզբեկերենում և ավելի սովորական իմաստով. ինչպես՝
okumakda-man «կարդում եմ», okumak-da-san «կարդում ես» և այլն:

(Kissen, Özbek tili 110):

Բասկերեն լեզվում էլ ներկան ներգոյական հոլովից է կազմվում. օրինակ՝ բասկերեն «գնում եմ» ասելու փոխարեն՝ ասում են «ես գնալու մեջ». — «դու ինձ տանում ես» ասելու փոխարեն՝ «ես տանելու մեջ քեզանով» (Wundt, Völksp. I, Բ մաս, էջ 148): Այս մասին ավելի ընդարձակ վարը:

Պարսկերենից էլ ունենք Մատթէոսի Ուետ. ԺԱ. 7 از باد در جنبش است az bād dar ǰunbiš ast «քամուց շարժման մեջ է»= քամուց շարժվում է:

Աֆրիկյան մի լեզու (էվե), որի ընդարձակ ուսումնասիրությունը դրել է Վեստերմանը (էջ 66), ներկայի շարունակական ձևը կազմելու համար նույնպես դիմել է կազմության այս ձևին: Նա իր բուն ներկան, որ հեղինակը կոչում է progressif, կազմում է le «լինել» և me «մեջը, ներսը» բառերից. ինչպես՝

me le yiyim
ես լինել գնալ մեջ } գնում եմ,

այսինքն «գնալու գործողության մեջ եմ»:

Այս ձևը ցույց է տալիս, որ ենթական հենց այժմ գործողությունը կատարելու ընթացքումն է:

Աֆրիկյան գոլա լեզուն էլ իր շարունակական ներկան (progressif) կազմում է ya «է» էական բայով և sua «մեջ» բառով, որի բուն նշանակությունը սակայն է «փոր»! օրինակ՝

me ya ka sua
ես է գնալ փոր=մեջ } գնում եմ,

որ է «գնալու փորն եմ»=գնալու գործողության մեջն եմ=գնում եմ:

Այսպես նաև անկատարի շարունակականը, որ կազմվում է նույն ձևով և ավելացնելով միայն yel «այն ժամանակ, յայնժամ» մակբայը. օրինակ՝

me ya yel dīe sua
ես է յայնժամ ուտել փոր=մեջ,

այսինքն՝ «ես ուտելու փորումն էի»=ուտելու գործողության մեջ էի, ուտում էի:

(Westerman, 61—62)

Վերջապես հիշենք անգլերենի I am gaing «ես գնում եմ» ձևը, որ գործածվում է այժմ կազմելու համար անգլերենի շարունակական ներկան և որի բացատրությունը տվինք վերը. սակայն նպաստրոնը մեկնում է նույնը իբր ներգոյական. համմ. հ. անգլ. in getinge of your richesses and in usinge them «ձեր հարստությունները ձեռք բերելն ու նրանք գործածելը» (Jespersen, Growth, 180):

Միջին հայերենում սկսեցին գործածել ի նախդիրով դերբայը. ի խաղալ եմ, ի գալ եմ «խաղում եմ, գալիս եմ»: Ավելի ուշ՝ ընկավ նախդիրը և դարձավ խաղալ եմ, գալ եմ: Այս ձևը մնում է մինչև այժմ էլ բացառական ձևով, արևմտյան բարբառներում ը>ը ձայնափոխությամբ, իսկ արևելյան բարբառներում ավելի հին ձևով. ինչպես՝ չեմ խաղալ—չեմ խաղար: Բոլորովին հարաղատ ձևով պահված է այժմ Նոր-Ջուղայի բարբառում, ուր միավանկ բայերը շեշտից հետո կամ հարցական նախադասության մեջ ստանում են այս ձևը. ինչպես՝ վ.որտեղից աս գ'ոլ. Ծաց խէքն ան լալ. Պարզ միտս ա գ'ոլ:

Ներկայի այս ձևը Գ. լծորդության մեջ, ինչպես և Ա. լծորդության բոլոր տիպարի մեջ բոլորովին բավարար էր և իմաստի շփոթության տեղիք չէր տալիս: Բայց նույնը չէր նաև Ա. լծորդության ա տիպարում, որ բայերի մեջ քանակով ամենից շատն էր: Այստեղ այս ձևով կազմված ներկան նույն էր դուրս գալիս հարակատարի հետ: Այսպես՝ ի պակասել իմ «պակասում եմ» հին ձևը դառնալով հետո պակասել եմ, պիտի նույնանար պակասել եմ «պակասել եմ» հարակատարի հետ: Որ հնության մեջ, երբ դերբայը ուներ դեռ -եալ ձևը (պակասեալ եմ), այսպիսի շփոթության երկյուղ չկար: Ավելի ուշ, երբ նույնիսկ դերբայի ա ձայնավորը անհետացավ, անորոշ դերբայը -ել, իսկ անցյալ դերբայը -էլ ձևն ստացած լինելով, ե և է ձայնավորների դանազանության պատճառով՝ դարձյալ երկյուղ չկար շփոթության: (Այժմ էլ Նոր-Ջուղայի բարբառում անորոշ դերբայը և անցյալ դերբայը դանազանվում են ե և է ձայնավորներով, ինչպես՝ մաշել, բ'երել (անորոշ դերբայ) և մաշէլ, բ'երէլ (անցյալ դերբայ):— Իսկ երբ ե և է նույն հնչումն ստացան, այլևս անհնար էր շարունակել պահպանական ներկան: պակասել եմ ձևը՝ իբրև սահմանա-

Ահա այս միջոցին էր, որ հնարվեցին -ում, -ման, -լիս ձևով ներկանները՝ դանազան դարձառներում. -ում ձևը շատ ընդարձակ տարածություն ունի. գտնում ենք Երևանի, Տփղիսի, Ղարաբաղի, Շամախիի, Աստրախանի, Ագուլիսի, նաև Նոր-Ջուղայի բարբառում: -ման ձևը գտնում ենք միայն Նոր-Ջուղայում, իսկ -լիս ձևը Արդվինի, Մարաղա, Ասլ, Սալմաստ և այլն:

Այժմ անցնենք խոսելու յուրաքանչյուր դերբայի մասին մանրամասն:

Նոր-Ջուղայում սահմանական ներկան ունի երկու ձև. առա-

ջինն է ում, որ ընդհանուր է ամեն տեսակ բայերի համար, բացի միավանկներից:

Երկրորդը, որ Նոր-Ջուղայի բարբառին առանձնահատուկ մի ձև է, կազմվում է -ման ձևի դերբայը խոնարհելով էական բայի ներկայի հետ. այս դերբայը կազմելու համար պետք է -ման մասնիկը կցել բայարմատի վրա, որ ստացվում է անորոշ եղանակից՝ կտրելով նրանից -ել, -նել, -ալ, -ցալ վերջավորությունները. օրինակ՝

ապրել — ապրման եմ, աս, ա, անք, էք, ան
մեռնել — մեռման եմ, աս, ա, անք, էք, ան
ծնալ — ծնման եմ, աս, ա, անք, էք, ան
նեղանալ — նեղման եմ, աս, ա, անք, էք, ան:

Միավանկ բայերի մեջ -ման մասնիկը կցվում է ոչ թե արմատի, այլ ուղղակի բայի անորոշ ժամանակի վրա. ինչպես՝ գ'ալման եմ, լալման եմ, տալման եմ, ինչպես նաև կալ «գտնվել, գոյություն ունենալ» պակասավոր բայից՝ կալման ա. օրինակ՝ անց ին կալման «անցնում էին», ի՞նչ տեղ ա կալման «ուր է ծնում, բնակվում»:

Եթե բայարմատի վերջում գտնվում է վ ձայնը, -ման մասնիկի կողքին գտնվելիս ջնջվում է. այսպես են ցաւիլ>ցաւել, ցաման ա «ցավում է», երևիլ>արևալ, արեման ա «երևում է»: Այսպես են նաև բոլոր կրավորական և կրավորակերպ չեզոք բայերը, որոնց -վել վերջավորությունը ամբողջապես ջնջվում է այսպիսի ներկայի կազմության ժամանակ. օրինակ՝ բ'ոնման ա «բռնվում է», մաշման եմ «մաշվում եմ», խառնման աս «խառնվում ես», կապման ան «կապվում են» և այլն:

-ցանալ վերջավորվող բայերի ա հոդակապը, ինչպես տեսնվում է, ծնում է -ման մասնիկի մոտ. այսպես նաև առաջին և երկրորդ լծորդության երկրորդ տիպարի այն բայերը, որոնք գործ են ածվում բարբառիս հին ձևի մեջ -ացնել ձևով -ման մասնիկն ստանալիս՝ պահում են ա ձայնը. օրինակ՝ ընգամաց եմ «ընկնում եմ», խասամաց եմ «հասնում եմ», խազ'ամաց եմ «հագնում եմ», պոծամաց եմ «պրծնում եմ», գ'դ'ամաց եմ «գտնում եմ»:

-նալ վերջավորած բայերից դ'առնալ՝ լինում է «դ'առման եմ», իսկ գ'նալ լինում է «գ'նամաց եմ», որի հետևողությամբ հընդկահայոց մեջ գալ>գ'ոլ բայն ստանալով ավելորդ մի ա՝ դարձել

է գ'ոլամաև ամ, *մինչդեռ Նոր-Ջուղայի մեջ գործածական ձևն է գ'ոլումաև ամ:*

Ներկայի այս ձևը ընդհանուր չէ բարբառի բոլոր բայերին. այդ ձևով խոնարհվում են միայն չեզոք, կրավորական և կրավորական չեզոք բայերը. օրինակ՝ վախման ամ «վախում եմ», շողման ամ «շողում եմ», վարման ամ «վարվում եմ», սկսման ա «սկսվում է», ճալման ա «հալվում է», չ'աճամաև ամ «ջանում եմ», զարմամաև ամ «զարմանում եմ», բ'աճցրամաև ամ «բարձրանում եմ», խաղման ամ «խաղում եմ», դ'ողման ամ «դողում եմ», փախման ամ «փախչում եմ», յելման ամ «լինում եմ», կորման ա «կորչում է», մամաև ամ «մոնում եմ», ճստման ամ «հնազում եմ», պակասման ա «պակասում է», սառման ա «սառչում է», ամաճչման ամ «ամաչում եմ», մրսման ամ «մրսում եմ», ծծաղման ամ «ծիծաղում եմ», կանգրման ա «կանգնում է», մոակաման ա «մոանոնում է», վատամաև ա «վատանում է», ճոճոման ա «մոանոնում է», քոքոման ան «սասոիկ ծիծաղում են», բրբրբոման ան «քրթմնջում են», թուլամաև ա «թուլանում է», կուշտամաև ամ «կշտանում եմ», գգելման ամ «կարողանում եմ», կամ նաև դրսերից ու թուրքերենից փոխառյալ բառերով՝ զմայլման ամ «զմայլում եմ», ճաճի-դ'իպման ամ «հանդիպում եմ», անկարողամաև ամ «անկարող եմ դառնում», խոջամաև ան «հարստանում են», քեֆօվամաև ան «հարբում են» և այլն:

Ներգործական բայերը չեն կարող այս ձևի ներկա ունենալ, ասոի բոլոր այն բայերը, որոնց բունը ձևով կարող է տատանվել ներգործականի ու կրավորականի միջև, պետք է միշտ առնել իբր կրավորական. այսպես՝ լցման ա «լցվում է» (ոչ թե լցնում է), խաբ'ման ամ «խաբվում եմ» (ոչ թե խաբում եմ), քանդման ամ «քանդվում եմ», չ'րման ա «չրվում է», բ'երման ա «բերվում է», տարման ա «տարվում է», խրման ա «խրվում է», յերման ա «ալրվում է», փակման ա «պակակվում է», ճատատդման ա «հատատվում է», կոտրատման ա «կոտրատվում է», կապման ա «կապտատվում է», վում է», սիրման ա «սիրվում է», վնատման ա «վնատվում է», ատման ա «ատվում է», բ'ռնման ա «բռնվում է», խառնման ա «խառնվում է», նաև՝ նկի դրսերից կամ թուրքերենից փոխառյալ բառերով՝ քաջալերման ամ «քաջալերվում եմ», բաւարարման ամ «բավարարվում եմ», յուսահատման ամ «հուսահատվում եմ», ճամարման ամ «համարվում եմ», միաբանման ան «միաբանվում են», դաղման ա «դադվում է, ալրվում է» և այլն:

Չեզոքի ու ներգործականի այս տարբերությունը այնպես որոշ է, որ երբեմն երկու տեսակ ներկաներն էլ կողք-կողքի գոնում ենք իրար հետ միասին գործածված՝ անհամադիր ձևով. օրինակ՝ վայրի գազաններ էին մոտան փչացանում (Ճառ. ազգ. էջ 56):

Կան բայեր, որոնք իմաստով ներգործական են, բայց Նոր-Ջուղայի բարբառի մեջ իբրև չեզոք ըմբռնվելով՝ առացել են այս ձևի կազմությունը. օրինակ՝ փնթփնթման ա՝ կարելի է ըմբռնել իբր ներգործական. քթի տակից մի բան (տլց.) է փնթփնթում. բայց այստեղ ըմբռնվել է իբր չեզոք. ինքնիրան խոսում է: Այսպես նաև պոծամաև ամ «պրծնում՝ ազատվում եմ մի բանից», շախման ամ «շահվում եմ մի բանից», սավորման ամ «սովորում՝ վարժվում եմ մի բանի», խասկամաև ամ «հասկանում եմ, հասկացողություն ունեմ մի բանից», կարօտման ա «կարոտում է մեկին (տրակ.)», խազ'ամաև ա «հագնվում է», խոսման ամ «խոսում եմ»: Այսպես, ըմբռնված պետք է լինեն նաև խոստամաև ամ «խոստանում եմ», ստամաև ա «ստանում է» (Ճառ. ազգ. 51), կարդ'ման աս «կարդում ես» (Dialogues, էջ 3), կամեման ամ (անդ, էջ 16), ցանկամաև ամ (Ճառ ազգ. էջ 106):

Այս բոլորից դուրս -ման մասնիկը կցվում է մի խումբ զուտ ներգործական բայերի վրա, որոնց հետ միաժամանակ կա նաև կրավորական ձևը. այս դեպքում -ման մասնիկը կրում է նոր ձևավոփոխություն.—ներգործական բայերն առանում են -ման մասնիկը սովորական ձևով, իսկ կրավորականները՝ -ել, -ցել -անել լծորդությանց մեջ՝ մասնիկից առաջ պահում են ն հոդակապը, իսկ -ալ, -անալ լծորդությանց մեջ՝ ց հոդակապը. օրինակ՝

Ներգ.		Կրավ.
առնուլ	— *առման ամ*	*առնման ամ*
բանալ	— *բ'ամաև ամ*	*բ'ացման ամ*
գողանալ	— *գ'ողամաև ամ*	*գ'ողացման ամ*
գտանել	— *գ'դ'ամաև ամ*	*գ'դ'անման ամ*
գտնել	— *գ'դ'ման ամ*	*գ'դ'նման ամ*
թողնել	— *թողման ամ*	*թողնման ամ*
խմանալ	— *յիմանամ ամ*	*լիմացման ամ*
մոռանալ	— *մոռամաև ամ*	*մոռացման ամ*
տալ	— *տալման ամ*	*տալնման ամ*
տեսնել	— *տեամաև ամ*	*տեսնման ամ*

Ներկայի կազմութիւն այս անկանոնութիւնները, հատկապես ներգործականի ու կրավորականի շփոթութիւնը պատճառ են դարձել, որ -մաճ ձևի ներկան կամաց-կամաց ասպարեզից քաշվի, տեղի տալով -ում ձևի ներկային, որի գործածութիւնը շատ ավելի պարզ էր: Զուղայի հին բարբառում -մաճ ձևով ներկան շատ ավելի տարածված էր և այսօր էլ Հնդկաստանի հայերը առատորեն գործածում են իրենց խոսակցական լեզվում: Այս մասնիկի ավելի հաճախական գործածութիւն ապացույց է այն, որ Հնդկաստան տպված Dialogues in English and Armenian գրքուկում նույնիսկ ոչ-ժողովրդական ձևերը խոնարհված են այս կերպով. օրինակ՝ էջ 11՝ թխպերն բաժանման ան կամ ճեղքվելով յատկաման ան և փոքր փոքր անհետութեաման ան (the clouds divide, or break as under and desappear by degrees).

Այսօր Նոր-Զուղայի արդի բարբառում -մաճ ձևի ներկան իր կենսունակութիւնը կորցրած՝ գրեթե ամեն տեղ փոխանակվում է -ում ձևով և պահվում է միայն գալ, լալ, տալ, կալ միավանկ բայերի ծայրը, կազմելով այսպես մի տեսակ համադրութիւն երեանի բարբառի միավանկ բայերի -լիս ներկայի հետ.

գ'ոլման եմ	լալման եմ	տալման եմ	կալման եմ
գ'ոլման ես	լալման ես	տալման ես	կալման ես
գ'ոլման ա	լալման ա	տալման ա	կալման ա
գ'ոլման ենք	լալման ենք	տալման ենք	կալման ենք
գ'ոլման էք	լալման էք	տալման էք	կալման էք
գ'ոլման են	լալման են	տալման են	կալման են

Հին-Զուղայում միավանկներն էլ զրկվելով այս ձևի սահմանականից, -մաճ մասնիկը բոլորովին չընչված է:

Ավելի հետաքրքրական է -լիս ձևով ներկայի պատմութիւնը: Այս ձևի ներկան գործածված է նախ՝

1) երեք միավանկ բայերի ծայրին (գալ, տալ, լալ) ում ճյուղի բարբառների մեջ և տալիս է գալիս ե, տալիս ե, լալիս ե ներկայաձևերը: (Փակագծի մեջ պետք է նկատել, որ այս 3 միավանկ բայերը ամեն տեղ էլ բացառութիւն են կազմում.— Պոլսի բարբառում բացառութիւն են կազմում այն մտքով, որ մինչդեռ բոլոր բայերը առանում են կը մասնիկը, այս երեք բայերը առանում են կու մասնիկը.— Կարնո բարբառում բաղաձայնով սկսող բայերը կը մասնիկը հետաքաս են դնում, իսկ այս երեք միավանկ բայերը հետադաս կը մասնիկի հետ առանում են նաև նախադաս կու.— Մշո և Տիգրանա-

կերտի բարբառներում այս երեք բայերը առանում են ի նախաձայնը և հետևաբար սահմանական ներկայի մասնիկը դառնում է կի):

2) Ում ճյուղի բարբառների մեջ նույն -ում ձևով ներկայի կողքին (սիրում եմ) կազմվում է մի ուրիշ տեսակ ներկա, որ գրեթե արևմտահայոց շարունակական ներկայի (կը սիրեմ կոր) իմաստն ունի: Այսպես՝ սիրելիս եմ, սիրելիս ես, սիրելիս է, ուտելիս ենք, ուտելիս էք, ուտելիս են: Բայց այս ձևի ներկան առաջինի չափ գործածական չէ, թեև ամեն տեսակ բայի համար էլ կարելի և օրինական է:

3) Բարբառների երրորդ ճյուղի մեջ (ել ճյուղ) դառնում է համատարած ներկա: Այս կողմից ամենից հարազատ պատկերը ներկայացնում է Արդվինի բարբառը, ուր իսպառ գոյութիւն չունի ներկայի -ում մասնիկը և ուր ներկան կազմվում է -լիս ձևով. ինչպես՝ փնտռելիս է «փնտռում է», խոսելիս եմ «խոսում եմ»:

4) Նույն երեք բայերի ներկայի (գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ) շրջման ժամանակ (այսինքն երբ նախադաս շեշտի, հարցականի կամ բացասականի պատճառով էական բայը առաջ անցնի), անորոշ դերբայը ննալով վերջում, սղման օրենքով կորցնում է իր ա վերջաձայնը և լինում է՝ չեմ գալի, չես տալի, ոչ է լալի, ոչ է գալի, ես եմ գալի: Այս երևույթը հատուկ է Ում ճյուղի բարբառներին, իսկ գրական լեզվի մեջ երբեմն պահվում է, շատ անգամ ոչ: Սղման այս ձևը իր նմանն ունի հատկապես Կարնո բարբառում հարակատարի և վերակատարի շրջլալ ձևի մեջ, ուր դերբայի ւ կամ ր վերջաձայնը ջնջվում է. ինչպես՝ ասեր եմ, բերել եմ, տարել էի, բայց շրջմամբ՝ չեմ ասե, ես եմ բերե, ոչ է տարե:

5) Ել ճյուղի բարբառների մեջ, ճիշտ նախորդների նման, բայց ամեն բայ՝ շրջման դեպքում կորցնում է իր ա վերջաձայնը. ինչպես՝ Արդվինի բարբառով՝ չեմ փնտռելի, չեմ ասելի, չես տալի, Ուրմիո բարբառով՝ կակուղ եմ քէլէլի «կամաց եմ գնում», ինչ իմ անէլի «ինչ եմ անում», Ռուի բարբառով՝ պան ի անէլի «բան է անում», չէտ է դառնալի «հետ է դառնում», Արդվինի բարբառով՝ կալը է ըլնէլի «կորչում էր», վճռուի էս էրթլի «ուր ես գնում», չէմ կալի խոսէլի «չեմ կարողանում խոսել» և այլն:

6) Մարաղայի բարբառը աչնահեաև ընդհանրացրել է շրջլալ կրճատման այս ձևը և գործածում է նաև դրականում. ինչպես՝ ասելի եմ, բերելի ես և հետո օժանդակի միացմամբ էլ՝ ասելիմ, բերելիս և այլն: Այսպիսով, Մարաղայի բարբառի ամենից ավելի հատկանշական երևույթն է դառնում սահմանական ներկայի կազ-

մութլյանը, որի համար գործածվում է ոչ -ում մասնիկը, որ «արեւվելյան» կոչված բարբառների հատկանիշն է (Ում ճլուղ) և ոչ կը մասնիկը, որ «արեւմտյան» կոչված բարբառների հատկանիշն է (Կը ճլուղ)։

7) Մարադալի բարբառում սահմանական ներկայի ձևը կազմելու համար վերցնում ենք բայի անորոշ ժամանակը և պարզապես կամ ավելացնելով ի մասնիկը՝ կցում էական բայի ներկայի հետ. օրինակ՝

իւզէլի իմ	կամ	իւզէլիմ
իւզէլի իս		իւզէլիս
իւզէլի ի		իւզէլի
իւզէլի ինք		իւզէլինք
իւզէլի էք		իւզէլէք
իւզէլի ին		իւզէլին

Դ լծորդութեան կրկին տեսակի բայերը ունենալով վերջավանկում ա, խոնարհման ժամանակ կարող են էականի ի ձայնը դարձնել ը և կամ պահել անփոփոխ. ինչպես՝

ամչընալը լիմ	ամչընալիմ	ամչընալըմ
ամչընալը լիս	ամչընալիս	ամչընալըս
ամչընալը լը	ամչընալի	ամչընալը
ամչընալը լինք	ամչընալինք	ամչընալընք
ամչընալը լէք	ամչընալէք	ամչընալէք
ամչընալը լին	ամչընալին	ամչընալըն

Երբ բայից առաջ գոնվում է մի շեշտալ բառ, ինչպես վերևում ասացինք, էականը անցնում է բայից առաջ. ինչպես՝

խալաթ ին քիցէլի, լիս իմ իւզէլի և այլն։

8) Հարևան գավառներից մի քանի ուրիշ բարբառներ (այսպես Ուբմիա, Խոյ, Սալմաստ, ինչպես նաև Ղարաբաղի Վարանդա և Դիզակ գավառները) արագաբանության օրենքով ավելի են ազել -լիս ձևը և լ-ի կրճատմամբ պահել են միայն ս. այսպես՝

*երթալիս եմ >*երթալս եմ >երթաս եմ*
*ասելիս եմ >*ասելս եմ >ասես եմ*
*գալիս եմ >*գալս եմ >գաս եմ*

Օրինակ՝

Ուբմիա՝ թալէս էր «թալում էր»
էթաս ը «գնում է»

Ահա ներկայի ամբողջ պատկերը

լսէս եմ	լսէս էնք,
լսէս էս	լսէս էք,
լսել ի	լսէս էն
Ուբմիա՝ ընէս էն	«անցնում են»
Խոյ՝ էթաս եմ	«գնում եմ
ուզ՞ս ես	«տղում ես»
Սալմաստ՝ ապրէս են	«ապրում եմ»
լսէս եմ	«լսում եմ»
ծղրաս եմ	«ծիծաղում եմ»։

Դիզակ և Վարանդա՝ հնձիս ըմ, ճնչէս ըս, խուսէս ա, գիդաս ընք, օզէս ըք, ճրնընչիս ըն։— Իսկ միասնակ տամ, գամ, լամ, բալերը՝ տամ ըմ, կյամ ըս, լամ ա, տամ ընք, կյամ ըք, լամ ըն, տաս ըմ, կյաս ըս, լաս ա, տաս ընք, կյաս ըք, լաս ըն։

Աղելով անորոշի լ վերջավորությունը, դուրս է գալիս, որ այս բարբառները բայարմատը ուղղակի կցել են ներգոյականի վերջավորության (ի լալիս ձևի վերջածայնը), որ է ս և օժանդակ բայինն։ Ի վերջո այս ս՝ որ պարզապես հոդնակի հայցականի նշանն է, դարձել է սահմանականի ներկայի հատկանիշ։ Բայց թե այս ս բառածայնը դեր չունի այստեղ, հայտնի է նրանից, որ շրջյալ ձևի մեջ բոլորովին անհետանում է. ինչպես՝

Ուբմիա՝ ինչ իմ անէլի
Խոյ՝ պան ի անէլի, և այլն։

Ուբմիայի բարբառում թեև ամբողջ ներկան -ես մասնիկով է կազմվում, բայց եզակի Գ դեմքն առանում է -էլի, -ալի կամ -ալի. օրինակ՝ լսելի «լսում է» (Աբեղյան, Հայոց լեզ. պատ. ներած. 230, ներքևից 6-րդ տող)։

Այս պարագային ներկայի կազմության հատկանիշը համարել ա՝ այնքան սխալ է, որչափ ասել, թե այդ -ես վերջավորությունը ներկայի եզակի Բ դեմքի վերջավորությունն է, որ ընդհանրացել է բովանդակ բայի վրա։

Ինչ էլ որ լինի, ներկայի այս կազմությունը հիմնված է այն սկզբունքի վրա, ինչ որ Ում ճլուղի ներկան է կամ Նոր-Ջուղայի բարբառի -ման ձևը։ Բոլորն էլ ներգոյական հոլովիներ են, մեկը գոյականների հոլովաձևից վերցրած, մյուսը դերբայների. այսպես՝

Նոր-Ջուղա՝ շարժման եմ «ի շարժման եմ»
Ում ճլուղ՝ շարժում եմ «շարժի մեջ եմ»

եվ ճյուղ՝ { շարժելիս եմ / շարժես եմ } «շարժելու գործողության մեջ եմ»

Բոլորի վրա էլ եղել է նախապես ի նախդիրը, որ հետո աշխարհաբարի ընդհանուր սկզբունքի համաձայն ջնջվել է: Գրիգոր վարդապետ Դարանաղցին, որ ԺԸ դարի կեսին ապրող հեղինակ է և եղել է նաև Կովկասում, իր ժամանակագրության մեջ (տպ. Երուսաղեմ, էջ 105) գրում է. «Նոքա կու արգելուն և չեն ի տալը, ասելով թէ տաճկացաւ, չենք ի տալիս»: Այս օրինակը ցույց է տալիս, որ ԺԸ դարում դեռ կենդանի էր Կովկասում -լիս ձևի նախդիրը, թեկուզ միայնակ բայերի և կամ բացասականի մեջ:

Պարսկահայ բարբառների -ել ձևի օրինակով կազմված եմ համարում թաթերեն լեզվի (որ պարսկերենի զավակն է) ներկայի կազմությունը. այսպես՝

bärdän um *կրում եմ*
bärdän i *կրում ես*
bärdän *կրում է*

(В. Миллер, 41)

Ենթադրությունս հիմնված է այն բանի վրա, որ հայերենի այս ձևերը շատ հեշտությամբ բացատրվում են ի նախդիրի անկումով (ի բերել եմ>բերել եմ), մինչդեռ թաթերենի ներկայի այս կազմությունը ոչ մի բացատրություն չունի: Թաթախոս հայերը, որոնք նախապես երկլեզվյան էին, կարող էին հայերենի վրայից կազմած լինել ներկայի այս ձևը և ապա մուծել թաթերենի մեջ:

-ման և -լիս ձևով ներկայի մասին հարկավոր ծանոթությունը ձեռք բերելուց հետո, դյուրին է այլևս անցնել -ում ձևով ներկային:

Ինչպես արդեն ասացինք, այս -ում ձևն էլ ծագում է գրաբարի -ում ներգոյականից: Արևելյան հայերենի բարբառների մեջ ամենից շատ տարածվածը այս ձևի ներկան է, որ և միակ ընդունվածն է արևելյան գրականում: Նա տարածվում է սկսած Հյուսիսային Կովկասից (Մոզդոկ և Ղզլար) մինչև Հին Բայազետ (Ճահկահայաստան) և Թավրիզի վրայով մինչև Նոր-Ջուղա և այստեղից էլ մինչև Հնդկաստան և Ջավա:

-ում մասնիկը անփոփոխ պահված ենք գտնում Կաղզվանի, Հին և Նոր Բայազետ, Տփղիս և Նոր-Ջուղա, ուրիշ տեղեր ենթարկվում են զանազան ձայնափոխությանց:

Ահա Նոր-Ջուղայի և Տփղիսի բարբառով -ում ձևի ներկայի խոնարհման պատկերը.

Նոր-Ջուղա

սիրում ամ	*խաղնում ամ*	*խազում ամ*	*մոռանում ամ*
սիրում աս	*խաղնում աս*	*խազում աս*	*մոռանում աս*
սիրում ա	*խաղնում ա*	*խազում ա*	*մոռանում ա*
սիրում անք	*խաղնում անք*	*խազում անք*	*մոռանում անք*
սիրում էք	*խաղնում էք*	*խազում էք*	*մոռանում էք*
սիրում ան	*խաղնում ան*	*խազում ան*	*մոռանում ան*

Տփղիս

սիրում իմ	*սիրում ինք*
սիրում իս	*սիրում իք*
սիրում է	*սիրում ին*

Երևանի բարբառը թեև պիտի սիրում ձևը, բայց դնում է նաև ողմամբ սիրըմ ձևը. այսպես՝

սիրում էմ	*կամ*	*սիրըմ էմ*
սիրում էս		*սիրըմ էս*
սիրում ա		*սիրըմ ա*
սիրում էնք		*սիրըմ էնք*
սիրում էք		*սիրըմ էք*
սիրում էն		*սիրըմ էն*

Ղարաբաղի բարբառը թեև ունի -ում ձևը, բայց ավելի գործածական է ողալ ըմ ձևը, քիչ անգամ էլ ամ: Օրինակ՝ Ստեփանի հյուսիսային մասում գործածում են -ում, իսկ հարավային մասում ամ: Արագ խոսակցության մեջ դրվում է ըմ: Այսպես՝ սիրում ըմ, սիրըմ ըմ, սիրամ ըմ: Օրինակ՝ սիրըմ ըմ, կարըմ ըս, քանդըմ ա, խծամ ընք, հսկանըմ ըք, կծառըմ ըն: Ահա սիրեմ բայի ամբողջական ներկան.

սիրըմ ըմ	*սիրըմ ընք*
սիրըմ ըս	*սիրըմ ըք*
սիրըմ ա	*սիրըմ ըն*

Շամախիի բարբառը, որովհետև պիտի ձայնավորների ներդաշնակության օրենքը, ուստի ներկայի -ում մասնիկի ձայնավորն էլ ըստ այնմ փոփոխում է:

Ահա սիրեմ բայի ներկայի պատկերը.

սիրիմ ում	*սիրիմ ունք*
սիրիմ էս	*սիրիմ էք*
սիրիմ ա	*սիրիմ ան*

Ագուլիսի բարբառը ներկայի կազմութիւնն մէջ գործածում է -ում մասնիկը այն դէպքում, երբ շեշտը ընկնում է այս -ում մասնիկի վրայ: Մյուս դէպքերում, որովհետև Ագուլիսի բարբառը զանազանում է ծանր ու թեթև ձայնավորները և նրանց համեմատ վերջավորութիւնները փոխում, ուստի այստեղ էլ -ում մասնիկը դարձնում է մերթ ամ և մերթ ում: Միևնոյն ժամանակ, ինչպես Երևանի բարբառը, սա ևս ճանաչում է -ւիս վերջավորութիւնը ներկայի ձև, այն տարբերութիւնով միայն, որ մինչդեռ Երևանի բարբառը ամեն մի բայի համար ունի թէ -ում և թէ -ւիս ձևով ներկա (վերջինը իբրև շարունակական), Ագուլիսի բարբառը -ւիս ձևը սահմանափակում է միայն Դ յօդորդութեան մի քանի ուրիշ բայերով: Ցղնայի բարբառը դիտե միայն -ում, իսկ -ւիս դարձնում է -աս:

Ահա Ագուլիսի բարբառի սահմանական ներկայի պատկերը.

թակամ ըմ	*անդրամ ըմ*	*սրում ըմ*	*խաչւիս ըմ*
թակամ ըս	*անդրամ ըս*	*սրում ըս*	*խաչւիս ըս*
թակամ ա	*անդրամ ա*	*սրում ա*	*խաչւիս ա*
թակամ ընք	և այլն	և այլն	և այլն
թակամ ըք			
թակամ ըն			

Այն բայերը, որոնք սկսում են ձայնավորով, այս պարագային առանում են նախաձայն ն, որ ըստ Պատկանեանի և Սարգսյանի (էջ 113) հնոսարան հեղինակների գործածած ներգոյականի ըն մասնիկն է. օրինակ՝ նա՛ճամ ըմ «ասում եմ», նօ՛ատամ ըմ «ատում եմ», նի՛զամ ըմ «ուզում եմ», նըրվա՛լիս ա «վերևում է» և այլն: Այսպիսով, ներկայի այս ձևերը ճշտիվ նման են դուրս գալիս հոնաբանների ըն քաղաքում, ըն մարդում ներգոյականներին և միևնոյն ժամանակ առացնում է մի նոր ապացոյց՝ հաստատելու համար, թէ -ում ձևով ներկան առաջացած է ներգոյականից:

Ցղնայի ենթաբարբառում գործածական է միայն -ում ձևը (չկա ամ, ում). բացի սրանից ա՛լիս, ի՛լիս ձևերի մէջ չնչվում է -լի մասը, որով այստեղ ներկան առանում է հետևեալ ձևերը. թա՛կում ըմ, սա՛յրում ըմ, տաս ըմ, «տալիս եմ», գեօս ըմ, «գալիս եմ», տրսնում ըմ «տեսնում եմ», փքխնաս ա «փախչում է» և այլն:

Շեշտելի բառի մոտ էականը նախադաս է դրվում. ինչպես՝ ի՛ս ըմ թա՛կամ «ես եմ թակում» և այլն:

Աստրախանի բարբառում ներկայի մասնիկն է ըմ, իս. ինչպես՝ ասըմ էմ, լսըմ էս, ինդնըմ ա, կալիս էնք, լաց էք իլըմ, չէն լսըմ: Ղարաբաղի բարբառի նման այստեղ էլ ասում են կամ ա կամ կալիս ա, տամ ա կամ տալիս ա, «գալիս է, տալիս է»: Ու ձայնավորը պարունակող բայերը առանում են -ում մասնիկը. ինչպես՝ ուզում էմ, ուզում ա և այլն:

Գրեթե ամեն տեղ էլ գալ, տալ, լալ միավանկները առանում են -ւիս վերջավորութիւնը. ինչպես՝ Երև. գ'ալիս էմ..., Տփ. գալիս իմ, լալիս իմ, տալիս իմ. Ղարաբաղ և Աստրախան երկու ձևով (ամեն վերը): Իսկ Նոր Բայազետի բարբառը այս դէպքումն էլ ընդհանուր կանոնի համաձայն դնում է -ում. այսպես՝ գ'ալում ա, լալում ա, տալում ա:

Վերջացնում ենք մեր խոսքը ներկայի երեք տեսակ կազմութեանց մասին, ավելացնելով այն նկատողութիւնը, որ թէ -ում և թէ -ման ձևի ներկան ունի իր հետ միաժամանակ մի ուրիշ ձև. -ում-ին ընկերանում է -ւիս ձևը, -ման-ին ընկերանում է -ում ձևը: Բոլորի մէջ էլ դերակշռութիւնը պատկանում է -ում ձևին: Միայն -ւիս ձևն է, որ մնում է մենակ:

Բայց այստեղ էլ Արդվինը, որ -ւիս ձևի ամենահարազատ ներկայացուցիչն է, -ւիս ձևի հետ ունի կը ձևով ներկա, որ պահում է այժմ էլ իբր պատմական ներկա: Այսպես հետևյալ փոքրիկ պատմվածքի մէջ միասին դնում ենք 4 կը և 3-ւիս:

Առաչ Արթվին շէնլիկը տասնըհինգ տուն է էղէ. բոլորը մէշա. էն մէշումը Սավէթումէն կու աշին օրը (որ) Արթվինումէն մուխ կու դուս գա, գուգան կու փնտռին խիտը (վրաց. կամուրջ), չէն (չեն կարողանում) գանի օրա ձօրօխը անցնին. էսէվ մէկ ավշին գէլիգի հէտնէմէն գալիս է օրը զարնէ. առաչէվան կալը է ըլնելի. կալը էղած վախտին փնտռելիս է վօրանց գնաց...:

Սա ցույց է տալիս, որ -ւիս ձևի մյուս բարբառներն էլ ունեցել են իրենց հետ -ում ձևը, որ հետո կրճատել են: Այսպես Վարանդա և Դիզակ, որոնք այժմ էլ գործածում են -ւիս ձևի հետ նաև -ում ձևը: Եվ եթե Վարանդա և Դիզակ բառական պաշարով և ձայնական դրութեամբ նույն են մնացել Ղարաբաղի հետ, այդ չէ թե նրա համար, որ իբր թե փոխ են առել կամ ազդվել են նրանցից, այլ որովհետև մի բարբառ են կազմել միշտ:

Ի վերջո ավելացնում եմ այստեղ արեւելյան գրական լեզվի բոլոր լծորդութեյանց սահմանական ներկայի պաակները.

Ա. լծորդություն,
ա տիպար

սիրում եմ
սիրում ես
սիրում է
սիրում ենք
սիրում էք
սիրում են

Բ լծորդություն,
ա տիպար

խօսում եմ
խօսում ես
խօսում է
խօսում ենք
խօսում էք
խօսում են

Բ լծորդություն,
բ տիպար

հագնում եմ
հագնում ես
հագնում է
հագնում ենք
հագնում էք
հագնում են

Գ լծորդություն,
ա տիպար

կարդում եմ
կարդում ես
կարդում է
կարդում ենք
կարդում էք
կարդում են

Գ լծորդություն,
բ տիպար

իմանում եմ
իմանում ես
իմանում է
իմանում ենք
իմանում էք
իմանում են

Բ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Սահմանականի անցյալ անկատարը կազմվում է շատ պարզ ձեւով: Ինչպես որ ներկա դերբայը խոնարհելով էական բայի ներկայի հետ՝ առանում ենք սահմանական ներկա, նույնպես և խոնարհելով էական բայի անկատարի հետ, առանում ենք անցյալ անկատար:

Ասանել ենք արդեն ներկայի կազմութեյան բոլոր ձեւերի մասին զանազան բարբառներում (-ում, -մաճ, -լիս): Այստեղ բավական-

նանում ենք միայն տալով մի քանի օրինակ զանազան կարևոր բարբառներից:

Բոլորն էլ պատկանում են բարբառների Ում ճյուղին և բնավ գործ չունեն Կը ճյուղի բարբառների հետ:

Նոր-Ջուղայի բարբառում սահմանական անկատարն էլ ներկայի նման ունի երկու ձև. առաջինը՝ որ ընդհանուր է ամեն տեսակ բայերի համար (բացի միավանկներից), կազմվում է ներկա դերբայը խոնարհելով էական բայի անկատարի հետ. օրինակ՝

սիրում ի	*խագնում ի*	*խազում ի*	*մոռանում ի*
սիրում իր	*խագնում իր*	*խազում իր*	*մոռանում իր*
սիրում էր	*խագնում էր*	*խազում էր*	*մոռանում էր*
սիրում ինք	*խագնում ինք*	*խազում ինք*	*մոռանում ինք*
սիրում իք	*խագնում իք*	*խազում իք*	*մոռանում իք*
սիրում ին	*խագնում ին*	*խազում ին*	*մոռանում ին*

Երկրորդը կազմվում է -մաճ ձևի դերբայով, որի հանգամանքները ճիշտ նույն են՝ ինչ որ խոսել ենք ներկայի համար: Անկատարի մեջ էլ այս ձևը հիմա գործածութեյունից ընկել է և սովորական է միայն միավանկ բայերի համար. այսպես՝

գ'ոլմաճ ի	*լալմաճ ի*	*տալմաճ ի*	*կալմաճ ի*
գ'ոլմաճ իր	*լալմաճ իր*	*տալմաճ իր*	*կալմաճ իր*
գ'ոլմաճ էր	*լալմաճ էր*	*տալմաճ էր*	*կալմաճ էր*
գ'ոլմաճ ինք	*լալմաճ ինք*	*տալմաճ ինք*	*կալմաճ ինք*
գ'ոլմաճ իք	*լալմաճ իք*	*տալմաճ իք*	*կալմաճ իք*
գ'ոլմաճ ին	*լալմաճ ին*	*տալմաճ ին*	*կալմաճ ին*

Միավանկ բայերի թե՛ ներկան և թե՛ անկատարը ունեն նաև մի կրճատ ձև, որ կազմվում է պարզապես անորոշ դերբայը դնելով էականից հետո՝ առանց -մաճ վորջավորութեյան. այս ձևը կարելի է գործ ածել շեշտից հետո կամ հարցական նախադասութեյան մեջ. ինչպես՝ որտեղի՞ց ես գ'ոլ. խաց ին տալ. յարախէքն անլալ. պարզ միտս ա գ'ոլ:

Երևանի բարբառով,

սիրում ի կամ սիրըմ ի	
սիրում իր	*սիրըմ իր*
սիրում էր	*սիրըմ էր*
սիրում ինք	*սիրըմ ինք*
սիրում իք	*սիրըմ իք*
սիրում ին	*սիրըմ ին*

Ծիղիսի բարբառով.

սիրում էի
սիրում էիր
սիրում էր
սիրում էինք
սիրում էիք
սիրում էին

Ղարաբաղի բարբառով.

Աաչեն	Վարանդա
սիրըմ ի	սիրիս ի
սիրըմ իր	սիրիս իր
սիրըմ ար	սիրիս ար?
սիրըմ ինք	սիրիս ինք
սիրըմ իք	սիրիս իք,
սիրըմ ին	սիրիս ին

Շամախիի բարբառով.

սիրիմ ի
սիրիմ իր
սիրիմ էր
սիրիմ ինք
սիրիմ իք
սիրիմ ին

Աստրախանի բարբառով.

ասըմ էիմ կամ	ասըմ իիմ
ասըմ էիր	ասըմ իիր
ասըմ էր	ասըմ էր
ասըմ էինք	ասըմ իինք
ասըմ էիք	ասըմ իիք
ասըմ էին	ասըմ իին

Անկատարի կազմությանն համար Մարտիալի բարբառը յուշագիր է մի այնպիսի նորություն, որ չափազանց հատկանշական է հայոց լեզվի պատմության համար, որ և գտնվում է Մոլի, Ուրմիո և Սալմաստի բարբառներում: Ամեն ունական անցյալ՝ ինչ ձևվի և եղանակի էլ պատկանի նա, կազմվում է ներկայի վրա ավելացնելով էր: Այս մասնիկը էական բայի անկատարի եզակի Գ դեմքն է, բայց այստեղ անխտիր կցվում է բոլոր թվերի և դեմքերի վրա: Ըստ այսմ անկատարի բոլոր ձևերը ջնջված են հայերեն լեզվի միջից և բայերի խոնարհումը կրկնապես պարզված է:

Ահավասիկ սահմանական անցյալ անկատարի մի քանի օրինակներ.

իւզէլի իմ էր կամ	իւզէլիմ էր	«ուզում էի»
իւզէլի իս էր	իւզէլիս էր	«ուզում էիր»
իւզէլի էր	իւզէլէր	«ուզում էր»
իւզէլի ինք էր	իւզէլինք էր	«ուզում էինք»
իւզէլի էք էր	իւզէլէք էր	«ուզում էիք»
իւզէլի ին էր	իւզէլին էր	«ուզում էին»
ամչընալի իմ էր	ամչընալիմ էր	ամչընալըմ էր
ամչընալի իս էր	ամչընալիս էր	ամչընալըս էր
ամչընալի էր	ամչընալէր	
ամչընալի ինք էր	ամչընալինք էր	ամչընալընք էր
ամչընալի էք էր	ամչընալէք էր	
ամչընալի ին էր	ամչընալին էր	ամչընալըն էր
«ամաչում էի	ամաչում էիր» և այլն:	

Այսպես նաև էական և պակասավոր բայերի համար. ինչպես՝ իմ էր, իս էր, էր, ինք էր, էք էր, ին էր, «էի, էիր, էր...». իւնիւմ էր, իւնիւս էր, իւնէր, իւնիւնք էր, իւնէք էր, իւնիւն էր «ունէի, ունէիր, ունէր» և այլն:

Ներկայի նման՝ շեշտյալ բառերի մոտ կատարվում է օժանդակի շրջում. ինչպես՝ յի՛ս իմ եր իւզելի, խալա՛ք ին եր քիցելի և այլն:

Այս բոլորի մեջ նկատելի է եզակի Գ դեմքի իւզելէ՛ր ձևը, ուր օժանդակը և ներկայի ի վերջավորությունը ջնջված են և շեշտը փոխադրված նոր հանգի վրա: Սրա համեմատ էլ էական բայի անկատար եզակի Գ դեմքը երևան է գալիս իր իսկական ձևով (եր): Նախնական ձևի մեջ անշուշտ օժանդակը ընդհանուր էր. իւզելի իմ եր, իւզելի իս եր, հետևաբար նաև *իւզէլի ի էր. բայց հետո՝ ձայնավորի մոտ ի կրճատվելով՝ ինչպես որ առաջ է եկել իւզելիմ եր, իւզելիս եր, նույնպես և իւզելի եր, ինչպես ունենք անջատ ձևերի մեջ և հետո ձայնավորի մոտ երկրորդ անգամ ի կորչելով՝ իւզէլէր. ինչպես է արդի սովորական ձևը: Այսպես էլ օժանդակը՝ իմ եր, իս եր, *ի եր>էր:

Անկատար անցյալ կազմելու այս դրութիւնը կա նաև Ուրմիո, Սալմաստի, Ղամարլուի բարբառներում:

Ահա մի քանի օրինակ այս բարբառներից.

Ուրմիա— կակուղ իմ էր քէլէլի «կամաց էի գնում», էլթիբար էր ոնէլի «վատահում էր», ըսնը՛ս էն էր «անցնում էինն»:

Սալմաստ— չենք էր «չէինք», էնէնց ենք էր գինուլի «այնպես գիտեինք»:

Ղամարլուի Գարղալու գյուղից— լսէս էր «լսում էր», ծղզաս էր «ծիծաղում էր», շատ էր վախենալը, «շատ էր վախենում», շուէտ էն էր քոշի «շուտ էինն քաշել»:

Ուրմիայի բարբառով

լսէս էմ էր
լսէս էս էր
լսէս էր
լսէս էնք՛ էր
լսէս էք՛ էր
լսէս էն էր

Անցյալ անկատարի կազմութիւնն այս զարմանալի ձևը գտնվում է նաև Ագուլիսի բարբառում, բայց անցյալի տարբեր մասնիկով: Այստեղ մասնիկն է ենք, որ նույնպես կցվում է սահմանական նեղկալի վրա: Սարգսյան, էջ 107 այս ենք ձևը բացատրում է բալական -ել վերջավորութիւնով, որի վրա իբր թե ավելացել է նեղկա կազմող ն մասնիկը՝ Ագուլիսի բարբառում: Այս բացատրութիւնը սխալ է: Ըստ իս, այս ենք մասնիկը ուրիշ բան չէ, եթե ոչ գրաբարի լեալ «եղած» ձևը: Ըստ օրինի լեալ դարձել է նախ լէ, ինչպես գտնում ենք Ղազախի բարբառում (համմ. Դրբ. իլալ) և հետո տարնմանութեան օրենքով՝ ենք: Մեզրիի բարբառը, որ նույն պարագային գործածում է լո ձևը, ներկայացնում է երկուսի միջին աստիճանը, թեև այստեղ էլ վերջածայն լ կորված է. օրինակ՝

ըմ նէլ «էի»
ըս նէլ «էիր»
ա նէլ «էր»
ըք նէլ «էինք»
ըք նէլ «էիք»
ըն նէլ «էին»

սրում ըմ նէլ «սրում էի»
սրում ըս նէլ «սրում էիր»
նամամ ըմ նէլ (Ծղ. նամում ըմ նէլ) } «սում էի»
նծամամ ըք նէլ «ուսում էինք, ուսում էիք»,
տալիս ըս նէլ «տալիս էիր» և այլն:

Շեշտելի բառի մոտ էականը դարձյալ նախադաս է լինում. ինչպես՝ իս ըմ ենք նա՛նամ «ես էի ասում», դիւք ըք ենք նո՛ամամ «դուք էիք ուսում» և այլն:

Այսպես նաև Ուրմիայի բարբառով. օրինակ՝

անցյալ ապառնի

կլսէմ էր
կլսէս էր
կլսէր
կլսէնք՛ էր
կլսէք՛ էր
կլսէն էր

Սրա համար է դարձյալ, որ ստորադասականի անցյալը. որ արդի հայերենի խոնարհման մեջ հիմքն է կազմում, ջնջված է: Ինչպես գիտենք, արդի աշխարհաբարը, արևելյան և թե արևմտյան դրականը, նաև բարբառների ամենամեծ մասը բայի խոնարհման մեջ ճանաչում են միայն 4 հիմնական ձև, որոնցից կազմվում են միացյալ ձևերը: Դրանք են ստորադասական ներկա, ստորադասական անցյալ, կատարյալ և հրամայական: Թե Մարաղայի և թե Ուրմիո և Ագուլիսի բարբառները այստեղ էլ ներկայի վրա ավելացնելով էր կամ ենք ձևը, ջնջում են ստորադասական անցյալի արմատական ձևը:

Ահա դրանց պատկերը.

Մրղ.		Ագլ.		Որմ.	
իւզիամ	էր	թակիմ նէլ		լսէմ	էր
իւզիաս	էր	թակիս նէլ		լսէս	էր
իւզէր		թակի նէլ		լսէր	
իւզինք՛	էր	թակիք նէլ		լսէնք՛	էր
իւզէք՛	էր	թակիք նէլ		լսէք՛	էր
իւզին	էր	թակին նէլ		լսէն	էր

Ինչպես ասացինք, անցյալ կազմելու այս ձևը հատուկ չէ միայն սահմանականի անցյալ անկատար ձևին, այլ բոլոր սեռակի անցյալ ձևերին, որոնցից մի քանիսը օրինակներով հիշեցինք արդեն վերևում: Այսպես սկսած էական բայի անկատարից (իմ էր «էի»), մինչև անցյալ ապառնի (Ագլ. թակիլ ըմ — թակիլ ըմ նէլ), պարտավորական անցյալ (Ագլ. մատամ ա թակիմ — մատամ ա նէլ թակիմ), հրամայականի անցյալ (Ագլ. թակա նէլ), բարդ հրամայական անցյալ (Ագլ. թուղ թակի — թուղ թակի նէլ), ստորադասական անցյալ (թակիմ — թակիմ նէլ) և այլն և այլն: Այսպես նաև Մրղ. պակասավոր բայերից իւնիմ «անիմ» — անկատար իւնիմ էր «անէի», ապառնի կիւզիմ — անցյալ կիւզիմ էր «կուզէի» և այլն:

Ի՞նչ է այս ստորբինակ երևույթի պատճառը:

Գաղանիքի բանալին տալիս է մեզ Աստրախանի բարբառը: Այստեղ էական բայի անցյալ անկատարի երկրորդ ձևն է իմ «էի», իինք «էինք», իին «էին», այսպես և Ա լծորդության անկատարի մեջ՝ իեցեիմ «ընկնէի», իեցեիինք «ընկնէինք», իեցեիին «ընկնէին» և այլն: Եթե այս երկու i-երը միանալին և ստացվեր իմ, ինք, ին, իեցեիմ, իեցեիինք, իեցեիին և այլն, անկատարը պիտի նույնանար ներկայի հետ և ներկայի ու անկատարի միջև ոչ մի զանազանություն չպիտի գտնվեր: Աստրախանում դեռ այսպիսի միացում չի կատարվել, ուստի այնտեղ կարիք չի զգացվել շրթեթության առաջքն առնելու: Բայց այդ միացումը կատարվել է Մարաղայի, Ագուլիսի և այլ բարբառների մեջ, որով անհրաժեշտ կարիք է զգացվել զանազանություն ստեղծելու. Մրղ. ես իմ «ես եմ» և ես իմ «ես էի», իւզելի իմ կամ իւզելիմ «ուզում եմ», բայց նաև «ուզում էի», Ագլ. թա՛կիմ «թակեմ», բայց նաև «թակէի» և այլն ձևերի միջև:

Ի՞նչ միջոց կար զանազանելու համար «ես եմ» (այժմ) և «ես եմ» (անցյալում) ձևերը: Ամենակարճ և ամենաբնական միջոցն էր գործածել անցյալ անկատարի եզակի Գ դեմքը՝ էր, որ իրոք գործ դրեց Մարաղայի բարբառը ամենաախնայացի կերպով: Նույնպիսի միջոցներ եղան Ագուլիսի համար ել և Մեղրիի համար լա, որոնք իրրև դերբայ՝ անդեմ լինելով ավելի հարմար էին որևէ բայի եզակի և հոգնակի բոլոր դեմքերի համար: Մարաղայի բարբառի մեջ՝ էր ձևի գործածության անպատեհությունը այն էր, որ եզակին պիտի ծառայեր նաև իրրև հոգնակի և Գ դեմքը պիտի ծառայեր նաև իրրև Ա և Բ դեմք: Բայց ի՞նչ նշանակություն ունեն

լեզուների համար այդպիսի ձևափոխությունները, եթե կարիքը պահանջում է: Եթե չլիներ մ բաղաձայնի ավելորդ հավելումը անկատարի ծայրին (հավելում, առանց որի ապրում էին ու ապրում են այժմ էլ Ճեացյալ բոլոր բարբառները), այս խոշոր ու պատասխանատու ձևափոխության կարիքը չպիտի զգացվեր: Բայց որքա՜ն անհրաժեշտ է լեզուների համար՝ ետ դառնալ և ժամանակի ուրդեն կատարած վերջացրած գործը նորից վերականգնել:

Այսպիսով հազարավոր տարիների օգտագործած, սրբագործած և ամեն տեղ ընդհանուր ընդունված անկատարի ձևը չնչվեց լեզվից, պահելով նրանից աննշան մի հետք՝ էր և կար, առաջինը էական բայի անկատար եզակի Գ դեմքը և երկրորդը՝ կամ պակասավոր բայի անկատար եզակի Գ դեմքը:

Այստեղ դնում ենք արևելյան գրական լեզվի անցյալ անկատարից մի օրինակ բոլոր լծորդություններով.

Ա լծորդություն, ա տիպար

սիրում էի
սիրում էիր
սիրում էր
սիրում էինք
սիրում էիք
սիրում էին

Բ լծորդություն, ա տիպար	Բ լծորդություն, բ տիպար
խոսում էի	հագնում էի
խոսում էիր	հագնում էիր
խոսում էր	հագնում էր
խոսում էինք	հագնում էինք
խոսում էիք	հագնում էիք
խոսում էին	հագնում էին

Գ լծորդություն, ա տիպար	Գ լծորդություն, բ տիպար
կարդում էի	իմանում էի
կարդում էիր	իմանում էիր
կարդում էր	իմանում էր
կարդում էինք	իմանում էինք
կարդում էիք	իմանում էիք
կարդում էին	իմանում էին

Վերջացնելով -ում ձևով ներկայի և անցյալ անկատարի նկարագրությունը, դնում ենք ալառեղ մի նկատողություն առհասարակ -ում ձևի մասին:

-ում մասնիկի գործածությամբ թեև բայական ձևերը պարզվեցին, բայց տեղ-տեղ երկդիմություն առաջացավ: Անպատեհությունն այն է, որ -ում ձևով ներկան (կամ անկատարը) ձևի նույնության պատճառով շփոթվում է նախ -ում ձևով ներգոյականի հետ և երկրորդ՝ -ում վերջավորությամբ գոյականների հետ: Օրինակ՝ խաղում նշանակում է թե «խաղի մեջ» և թե «կխաղայ», շարժում նշանակում է 1) թե «շարժության», 2) թե «շարժի մեջ, երկրաշարժի ժամանակ» և թե 3) «կշարժի»:

Հմմտ. օրինակ հետևյալ հատվածները (արևմտահայ գրական լեզվով).

«Եթե չունենար ժամանակագրական այնպիսի սխալներ և հակասություններ, որոնք յայտնապես ցերքում են անոր ակնատես վկայ ըլլալու իրողության» (Դուրյան, Ուսումն. և քննադատ., Երուսաղեմ, 1935, էջ 29):

Ալառեղ ցերքում են սասցել է ճիշտ արևելահայ ներկայի ձևը, մինչդեռ նշանակում է «հերքմունք է», որին ապացույց է իրողութեան սեռականը:

«Մի խումբ բառեր ուղ. հյց. հոլովում չունենալով հանգերձ և յանգը, հոլովվում են այս հոլովմամբ»:

Ալառեղ շատ դյուրին է շփոթել հոլովում «հոլովմունք» և «հոլովի մեջ», ուստի նման դեպքերում պետք է դնել միշտ մեջ ձևը (հոլովի մեջ):

«Կաշօցիք որոշում են ընդունել մահմեդական... դառնալ»:

Առաջին մասը կարգալիս ընթերցողը կարծում է, թե որոշում են բայ է և ընդունել մահմեդական բառերից հետո ապասում է, որ պիտի գա մահմեդական կրոնը կամ մահմեդականությունը, ուստի կարդում է՝

«Կաշօցիք որոշում են՝ ընդունել մահմեդական կրոնը»:

Բայց հանկարծ տեսնելով դառնալ բայը, ինքն էլ հետ պիտի դառնա և զգալով, որ որոշում գոյական է, տարբեր շեշտով պիտի կարդա՝

«Կաշօցիք՝ որոշում են ընդունել՝ մահմեդական դառնալ (ու)»:

Այս կետը ի նկատի ունենալով, Կովկասում հաճախ ներգոյականի և գոյականի վրա դնում են ն հոդը, որով զանազանում են բառը ներկայից. ինչպես՝ խաղումն է. հրապարակումն է. ծանրոց-

նների ընդունումն և հանձնումն (փոստի պաշտոնական հայտարարությունը Հայաստանում):

Նույնպիսի օրինակներ են՝ գործում, որ նշանակում է թե գործի մեջ և թե բայ է (գործելիս):

Թվում, որ կարող է ներկայանալ երեք իմաստով. 1) թվի մեջ. օրինակ՝ նրանց թվում (թվումն) էր նաև Կարապետը. 2) թվումն «ենթադրություն», «թվալը, հիշատակություն». օրինակ՝ թվումները բաժանվում են ստորակետով, 3) բայ. օրինակ՝ թվում է թե ինքը դաշտումն է: Այս երեքից ամենաստվերականը վերջինն է արևելահայ գրականի մեջ: Առաջինը մյուսներից զանազանելու համար թեև ծայրին դնում են ն հոդը, բայց այժմ նոր սերունդը չի դնում այդ ն հոդը. օրինակ՝ չեն ասում.— մայրիկը խոհանոցումն է, այլ՝ խոհանոցում է, որով շփոթությունը անխուսափելի է դառնում:

Բողոքում բառը երեք տարբեր իմաստ ունի հետևյալ երեք նախադասությունների մեջ.

1) Բողոքում գրում է:

2) Լութերականությունը բողոքում է կաթոլիկության դեմ:

3) Լութերը բողոքում է պապի դեմ:

Առաջին նախադասության մեջ բողոքում նշանակում է «բողոքի մեջ», երկրորդ նախադասության մեջ նշանակում է «բողոքարկություն», երրորդ նախադասության մեջ բայ է: Եվ եթե ասեինք՝ Լութերը բողոքում բողոքում է պապի դեմ և կոնդակը ալրելը բողոքում է կաթոլիկության դեմ,— երեք տարբեր իմաստով կլիներ:

-ում, -ման, -նել ձևերի կազմությունը նորանշան մի երեվույթ էր հայերենի մեջ. դրանով խոնարհման դրությունը քայքայվեց և հոլովմամբ խոնարհում գարձավ:

Խոնարհման քայքայման այս պատկերը, որ ներկայացնում է մեզ արևելյան աշխարհաբարը, ավելի ընդարձակ չափով գործածված և իր կատարելության է հասած բասկերեն լեզվի մեջ (Van Eys, 55—112):

Բասկերենում նախապես եղել է անշուշտ պարզ ձևի խոնարհում, ինչպես գրաբարի մեջ. բայց ավելի ուշ այս պարզ ձևի խոնարհումը ջնջվել է և առաջացել է բաղադրյալ ձևի խոնարհումը: Պարզ ձևի խոնարհումը պահում են այժմ բասկերենում միմիայն շատ սակավաթիվ բայեր, այն էլ սահմանական ներկա, անկատար և հրամայական ձևով: Այսպես օրինակ, «տանել» բայը խոնարհվում է պարզ ձևով՝

dakust *տեսանեմ*
dakuzu *տեսանես*
dakus *տեսանէ և այլն։*

Բաղադրյալ ձևի խոնարհումը կատարվում է հետևյալ ձևով։

1) Վերցնում ենք բայի արմատը, ավելացնում ենք te *կամ* tze, *որով ստացվում է բայանունը* (substantif verbal). *սրա վրա դնում ենք* n *մասնիկը, որով բայանունը դառնում է ներգոյական հոլով և այս ներգոյականը հարադրելով «ունեմ» բայի ներկայի և անկատարի հետ, ստանում ենք բայի ներկա և անկատար ձևերը. այսպես՝ «տեսնել» բայի արմատն է* ikus, *բայանունը* ikuste, *ներգոյականը* ikusten, *որից՝*

ikusten det *տեսնում եմ*
ikusten nuen *տեսնում էի և այլն,*

որոնք բուն նշանակում են «տեսքի մեջ ունեմ, տեսքի մեջ ունեի» և այլն, ճիշտ նույն ձևով՝ ինչպես աշխարհաբար տես-ն-ում եմ, տես-ն-ում էի և այլն։

2) Արմատը ստանում է a, e, i, o, du, tu, il, ki *մասնիկներից մեկը և դառնում է բայածական* (adjectif verbal), *որ համապատասխանում է մեր անցյալ դերբայինն. այս բայածականն էլ հարադրելով «ունեմ» բայի սահմանական ներկա, անկատար, հրամայական, ստորադասական ներկա և անկատար ձևերի հետ, ստանում ենք բայի հարակատար, կատարյալ, հրամայական, ստորադասական ներկա և անկատար ժամանակները. այսպես նույն* ikus *արմատից* ikusi *«տեսած», որով՝*

ikusi det *տեսել եմ*
ikusi nuen *տեսա*
ikusi ezazu *տես*
ikusi dezadan *տեսնեմ*
ikusi nezan *տեսնեի*

3) Բայածականի վրա դնում ենք սեռականի ko *մասնիկը և այս ձևը հարադրելով «ունեմ» բայի ներկայի և պայմանականի հետ՝ ստանում ենք ապառնին և պայմանականը. այսպես՝*

ikusiko det *պիտի տեսնեմ*
ikusiko nuke *կտեսնեի*

Այսպիսով բասկերեն բայի բոլոր խոնարհյալ ձևերը ստացվում են օժանդակ բայի միջոցով. ո՛չ մի բայ չի խոնարհվում, այլ

խոնարհվում է միայն օժանդակ բայը, իսկ բուն բայից միայն երեք ձև՝ բայանունը ներգոյական հոլովով, բայածականը և բայածականի սեռականը, որոնք համապատասխանում են ճիշտ մեր ներկա դերբայ (-ում— ներգոյական), *անցյալ դերբայ* (-ել) *և սրա սեռականածև* (-ելու) *ձևերին։*

Հայերենի խոնարհման մեջ բաղադրյալ ձև չունեն կատարյալը (սիրեցի), ապառնին (կսիրեմ), անցյալ ապառնին (կսիրեի), հրամայականը (սիրիր), որոնք բասկերենը նույնպես բաղադրյալ ձևով է կազմում։

Գ. ԲԱՂԱԴՐՅԱԼ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Բացի պարզ կատարյալից՝ Ադուլիսի բարբառն ունի նաև բաղադրյալ կատարյալ ձևը, որ կազմվում է անցյալ դերբայի -ալ *ձևվից՝ հետը խոնարհելով էական բայը. այսպիսով հիշյալ ձևը նմանվում է ճիշտ ուրիշ բարբառների հարակատարին. օրինակ՝*

թակալ եմ	*սպրալ եմ*	*սրէլ եմ*
թակալ ես	*սպրալ ես*	*սրէլ ես*
թակալ ա	*սպրալ ա*	*սրէլ ա*
թակալ ենք	*սպրալ ենք*	*սրէլ ենք*
թակալ են	*սպրալ են*	*սրէլ են*

Սարգսյան, էջ 116, կարծում է, որ կատարյալի առաջին ձևն էլ առաջացած է սրանից՝ բայական լ վերջավորության ջնջումով, իբր թա՛կա(լ ը)մ>թա՛կամ, թա՛կա(լ ը)ս >թակաս, թա՛կա(լ ը)ք >թա՛կաք և այլն։ Այս բացատրությունը չեմ կարող ընդունել. բայց կարելի էր տալ և մի երկրորդ բացատրություն։

Պարսկահայոց բարբառներում սովորական է կատարյալի մի ձև, որ հիշեցնում է ագուլեցոց պարզ կատարյալը, այսպես Խոլի, Սալմաստի, Թավրիզի և Մարաղայի գավառականներով ունենք.

խասամ	*«հասա»*
խասար	*«հասար»*
խասավ	*«հասավ»*
խասանք	*«հասանք»*
խասաք	*«հասաք»*
խասան	*«հասան»*

Անտարակույս այս կատարյալը շարունակությունն է հին հայերենի հասի, աշխարհաբար հասա ձևի, առաջին դեմքի վրա ավե-

լացել է՝ նմանութեամբ սահմանական ներկայի.— կարելի չէ՞ ենթադրել, որ նուլը տեղի ունեցած լինի նաև Ագուլիսի բարբառում. բայց այստեղ նմանութիւնը շարունակվելով՝ երկրորդ դեմքն էլ տացած լինի u: Երկու բացատրութիւններից մին կամ մյուսը հաստատելու նպատակով թերևս, եթե իմանայինք, թե ինչ պատճառով պարզ կատարյալի եզակի Գ դեմքը զոլութիւն չունի և միայն բազադրյալ ձևն է, որ գործածվում է նույն դեպքում: Առհասարակ նկատելի է, որ կատարյալի կրկին ձևերը բացարձակապես համանիշ են և իմաստի ու գործածութեան մեջ որևէ տարբերութիւն չունեն. օրինակ՝ շուր ըն ավել ըսկ՛ոցի և կերակրէ՛ն «շոր տվին հագնելու և կերակրեցին» (Սարգսյան, Բ, էջ 62):

Դ. ԲԱՂԱԴՐՅԱԼ ԱՆՑՅԱԼ

(Հարակատար, գերակատար և հարակից ձևեր)

Անցյալը մի ընդհանուր բան է, բայց ունի իր զանազան նրբութիւնները կամ մանրամասնութիւնները. սրանց մասին մենք ընդհանուր ծանոթութիւն տվել ենք: Կան լեզուներ, որոնք տարբերութիւն չեն դնում անցյալի այդ զանազան նրբութիւնների մեջ և բոլորը միացնում են մի խմբի մեջ: Այսպիսի անցյալը կոչվում է präteritum: Օրինակ՝ ճապոներենը ունի քերականական այնպիսի ձև, որով հասկանում է մեր անկատարը, կատարյալը, հարակատարը և գերակատարը միասին վերցրած: Գերմանական լեզուները չեն զանազանում բնավ անկատարը կատարյալից և ինչ որ կատարյալ է, միևնույն ժամանակ նաև անկատար է: Սլավական լեզուներն էլ չեն զանազանում անկատարը, կատարյալը, հարակատարը և գերակատարը իրարից. նրանք միայն որոշում են այն, թե գործողութիւնը անմիջական և վերջացած է, թե շարունակական կամ տևական է: Սրա համար գործածում են երևույթը, որ սլավական քերականութեան մեջ նշանավոր տեղ է գրավում: Օրինակ՝ ռուսերեն читать «կարդալ» բայի անկատարը, հարակատարը և գերակատարը լինում են հավասարապես читал, իսկ կատարյալը՝ прочёл «կարդացի» (про նախամասնիկով).— писать «գրել» բայից писал «գրում էի» անկատար է, իսկ написал (на մասնիկով)՝ կատարյալ, հարակատար և գերակատար է: Երբեմն բառն է ուղղակի փոխվում. այսպես сказал «ասացի» կատարյալ է, իսկ говорил «ասում էի, ասել եմ, ասել էի»: Մի քանի դեպքում, շեշտը փոխելով՝ ժամանակն է փոխվում. ինչպես՝ насы́пал «ցանեցի», насыпа́л «ցանում էի», отре́зал «կարեցի», отреза́л «կարում էի»: Սակայն եվրոպական փոխառութիւնները մեծագույն մասամբ չունեն զանազանութիւն, այսպես՝ телеграфировал նշանակում է հավասարապես «հեռագրում էի, հեռագրեցի, հեռագրել եմ, հեռագրել էի».— аплодировал «ծափահարում էի, ծափահարեցի, ծափահարել եմ, ծափահարել էի»– эксплуатировал «շահագործում էի, շահագործեցի, շահագործել եմ, շահագործել էի».— բայց կա և арестовал «ձերբակալեցի, ձերբակալել եմ, ձերբակալել էի», арестовывал «ձերբակալում էի», декламировал «արտասանում էի», продекламировал «արտասանեցի, արտասանել եմ, արտասանել էի» և այլն:

Սահմանը լեզվի մեջ էլ կատարյալն ու անկատարը նույն են և զանազանվում են միայն շեշտով.— կատարյալը ստանում է շեշտը առաջին վանկում, իսկ անկատարը՝ երկրորդ վանկում. ինչպես՝

áppärston գցեցի, äppärston գցում էի (Miller, Die Spr. D. Oss. 84):

Ուրիշ լեզուներ տևական տևական նրբութիւններ են մտցնում անցյալի գաղափարի մեջ. օրինակ՝ արխապերենը գիտե 1) ընդմիջված անցյալ (präteritum interruptum). որ կազմվում է -uan մասնիկով. ինչպես՝

i-z-bl-uan
այն ես ալրել «քիչ մնաց որ ալրեի»

2) երևակայական անցյալ, որ կազմվում է zsa^{u}a մասնիկով. ինչպես՝

sə՝-qa-zsa^{u}a
ես լինել «լինեի իբր թե» (հրագումա տևսա, որ իբր թե Սուխումիում լինեի».

3) խանգարված անցյալ (präteritum impeditum), որ կազմվում է šan մասնիկով. ինչպես՝

s-qala-šan «պիտի լինեի, բայց...»
(Dirr, Einf. 48—53)

Պորտուգալերենն էլ ունի 4 տևական անցյալ. 1) մոտ անցյալում, 2) ավելի հեռու անցյալում, 3) շատ հեռու անցյալում (օրինակ՝ Ալա գաղթը եգիպտացիներից հրեաներին է անցած եղել). սրանց էլ մի ուրիշ տևականն է 4) անցյալ հառաջադեմն preteritum anterior). օրինակ՝ տևսած եղավ.

Ամերիկյան չինուկ լեզուն ավելի է ճշտում անցյալը և զանազանում է երեք աստիճան. 1) անցյալ, բայց մեկ տարուց պակաս և երկու օրից ավելի անցյալ, որ կազմվում է ni- *մասնիկով. 2) շատ հին անցյալ, որ գործածվում է հեքիաթներում և որ կազմվում է* ga- *մասնիկով. 3) այս օրվանից այն կողմ և հատկապես երեկ կատարված մի գնդք. կազմվում է* na- *մասնիկով* (Boas, Handbook. I. 578–9)։

Աֆրիկյան չիշևա լեզուն (բանտու խմբից) ունի 4 տեսակ անցյալ.

1) մոտավոր անցյալ, որի ազդեցութիւնը շարունակվում է դեռ ներկայի վրա. կոչվում է նաև պատմողական անցյալ, որ է ներկա բոպկից միայն մի փշեր անցյալ տևողութիւմբ. օրինակ՝ նոր եմ կերել *(և դեռ քաղցած չեմ). ես նստել եմ (և դեռ չեմ վեր կացել)։*

2) մոտավոր անցյալ, որի ազդեցութիւնը ներկայի վրա չի շարունակվում. օրինակ՝ նոր եմ կերել (բայց այժմ քաղցած եմ)։

3) հեռավոր անցյալ, որի ազդեցութիւնը շարունակվում է դեռ ներկայի վրա. գնդքը պատահել է նախքան վերջին գիշերը. օրինակ՝ կերել եմ *(և դեռ քաղցած չեմ). գնացել է (և դեռ չի վերադարձել)։*

4) հեռավոր անցյալ, որի ազդեցութիւնը այժմ չի շարունակվում. օրինակ՝ կերել եմ *(բայց այժմ քաղցած եմ),* գնացել եմ *(բայց այժմ արդեն վերադարձել եմ)։* (Watkins, 49)։

Հյուսիսային Ամատալիայի դիերի լեզուն ունի 5 տեսակ անցյալ.

1) մերձավոր անցյալ (prateritum propinquum), *օրինակ՝*

ɒato ɒanka-la wiri
մի քանի օր առաջ արի (կատարեցի, շինեցի).

2) präteritum indefinitum *(անորոշ անցյալ), որ ճիշտ ժամանակը չի որոշում. ինչպես՝*

ɒato ɒanka-na warai
արել եմ.

3) präteritum definitum *(որոշյալ անցյալ). ինչպես՝*

ɒato ɒanka-na paraia
նոր (այս րոպեիս) արի

4) präteritum remotum *(հեռավոր անցյալ). ինչպես՝*

ɒato ɒanka-na-la
իր ժամանակին արի (կատարեցի)

5) հեռագույն անցյալ (präteritum remotius), *ինչպես՝*

ɒato ɒanka-na wonti
վաղուց եմ արել
(Kieckers, 140)

Հայերենն էլ բավական հարուստ է անցյալ ժամանակի զանազան նրբութիւններով, մանավանդ աշխարհաբարը և բարբառները, որոնք այս կողմից գերազանցում են գրաբարից և գրականից։

Գրաբարում անցյալ ժամանակի ձևերը երեք են՝ հարակատար, գերակատար և ստորադասական անցյալ։ Երեքն էլ կազմվում են -եալ գերբայով, որ կոչվում է անցյալ գերբայ։

Այստեղ դնում եմ 4 լծորդութիւնց կրկին տիպարների այս 3 ձևերի խոնարհումը,

հարակատար	գերակատար	ստորադասական անցյալ
սիրեալ եմ	*սիրեալ էի*	*սիրեալ իցեմ*
սիրեալ ես	*սիրեալ էիր*	*սիրեալ իցես*
սիրեալ է	*սիրեալ էր*	*սիրեալ իցէ*
սիրեալ եմք	*սիրեալ էաք*	*սիրեալ իցեմք*
սիրեալ էք	*սիրեալ էիք*	*սիրեալ իցէք*
սիրեալ են	*սիրեալ էին*	*սիրեալ իցեն*
հատեալ եմ	*հատեալ էի*	*հատեալ իցեմ*
հատեալ ես	*հատեալ էիր*	*հատեալ իցես*
հատեալ է	*հատեալ էր*	*հատեալ իցէ*
հատեալ եմք	*հատեալ էաք*	*հատեալ իցեմք*
հատեալ էք	*հատեալ էիք*	*հատեալ իցէք*
հատեալ են	*հատեալ էին*	*հատեալ իցեն*
խօսեալ եմ	*խօսեալ էի*	*խօսեալ իցեմ*
խօսեալ ես	*խօսեալ էիր*	*խօսեալ իցես*
խօսեալ է	*խօսեալ էր*	*խօսեալ իցէ*
խօսեալ եմք	*խօսեալ էաք*	*խօսեալ իցեմք*
խօսեալ էք	*խօսեալ էիք*	*խօսեալ իցէք*
խօսեալ են	*խօսեալ էին*	*խօսեալ իցեն*

ուսեալ եմ	ուսեալ էի	ուսեալ իցեմ
ուսեալ ես	ուսեալ էիր	ուսեալ իցես
ուսեալ է	ուսեալ էր	ուսեալ իցէ
ուսեալ եմք	ուսեալ էաք	ուսեալ իցեմք
ուսեալ էք	ուսեալ էիք	ուսեալ իցէք
ուսեալ են	ուսեալ էին	ուսեալ իցեն
աղացեալ եմ	աղացեալ էի	աղացեալ իցեմ
աղացեալ ես	աղացեալ էիր	աղացեալ իցես
աղացեալ է	աղացեալ էր	աղացեալ իցէ
աղացեալ եմք	աղացեալ էաք	աղացեալ իցեմք
աղացեալ էք	աղացեալ էիք	աղացեալ իցէք
աղացեալ են	աղացեալ էին	աղացեալ իցեն
գողացեալ եմ	գողացեալ էի	գողացեալ իցեմ
գողացեալ ես	գողացեալ էիր	գողացեալ իցես
գողացեալ է	գողացեալ էր	գողացեալ իցէ
գողացեալ եմք	գողացեալ էաք	գողացեալ իցեմք
գողացեալ էք	գողացեալ էիք	գողացեալ իցէք
գողացեալ են	գողացեալ էին	գողացեալ իցեն
թողեալ եմ	թողեալ էի	թողեալ իցեմ
թողեալ ես	թողեալ էիր	թողեալ իցես
թողեալ է	թողեալ էր	թողեալ իցէ
թողեալ եմք	թողեալ էաք	թողեալ իցեմք
թողեալ էք	թողեալ էիք	թողեալ իցէք
թողեալ են	թողեալ էին	թողեալ իցեն
զգեցեալ եմ	զգեցեալ էի	զգեցեալ իցեմ
զգեցեալ ես	զգեցեալ էիր	զգեցեալ իցես
զգեցեալ է	զգեցեալ էր	զգեցեալ իցէ
զգեցեալ եմք	զգեցեալ էաք	զգեցեալ իցեմք
զգեցեալ էք	զգեցեալ էիք	զգեցեալ իցէք
զգեցեալ են	զգեցեալ էին	զգեցեալ իցեն

Այս ձևերը կարելի է թարգմանել աշխարհաբար հետևյալ ձևով.

սիրեալ եմ «սիրել եմ»
սիրեալ էի «սիրել էի»
սիրեալ իցեմ «սիրած լինեմ» և այլն։

Միջին հայերենում գրաբարի -եալ վերջավորությունը դարձավ -ել։ Այսպես են վերջանում Ա, Բ և Դ լծորդության բայերը, իսկ Գ լծորդության բայերը առանում են -ցել վերջավորությունը։ Karst, էջ 346—352 տալիս է 110-ից ավելի օրինակ միջին հայերենի այս ձևերից՝ իրենց համառոտ վկայությամբ հանգերձ։ Ավելորդ է բնականաբար մեջ բերել այստեղ այդ օրինակները ամբողջ, մանավանդ իրենց վկայություններով։ Ուստի բավականանում ենք քաղել նրանցից մի քանի տիպական օրինակներ։ Ձակերտի մեջ դնում եմ համապատասխան գրաբար ձևը.

Ա լծորդություն.— անուանել, անվնել «անուանեալ», գրաւկնել «*գրաւականեալ», գրել «գրեալ», ժողվել «ժողովեալ», մտել «մտեալ», համել «հրամայեալ», լմհել «լմհեալ» (ուշացած), բաժնել «բաժանեալ»։

Բ լծորդություն.—խօսել «խօսեալ», ընկել «անկեալ», կարմրել «կարմրեալ», հալածել «հալածեալ» (հալածել բայից), մեռել «մեռեալ», հաւնել «հաւանեալ», նստել «նստեալ»։

Գ լծորդություն.— գնացել «գնացեալ», խոստացել «խոստացեալ», ծանդրցել «ծանրացեալ», մօտեցել «մօտեցեալ», ճշացել «ճշացեալ», շատցել «շատացեալ», լմցել «լմացել» (լինել «լմնալ» բայից), կեցել «կեցեալ» (կենալ բայից), լճացել (լճացած՝ լճնալ բայից), լեւելցել «լաւելեալ» (լեւելնում բայից), ուռեցել «ուռեցեալ» (ուռենալ բայից)։

Դ լծորդություն.— առել «առեալ», գտել «գտեալ (գտնում բայից), իջել «իջեալ» (իջնում բայից), սկսել «սկսեալ (սկսում բայից)։

Այս ձևով են նաև անկանոն բայերը. ինչպես՝ ալրել «արաբեալ» (այնել=անել, ընել բայից), եկել «եկեալ» (գալ բայից), կալել «կալեալ» (առնել բայից), կերել «կերեալ» (ուտել բայից), տվել «տուեալ» (տալ բայից), տարել «տարեալ» (տանել բայից), դրել «եդեալ» (դնել բայից)։

Այս ձևերից մեծ մասը նման է դուրս գալիս բայի անորոշ ձևին։ Սակայն նրանք նույն չեն և խոսողների գիտակցության մեջ կար երկուսի տարբերությունը, որ հայտնի կերպով էլ երևում էր գարուզի և անկանոն բայերի և մանավանդ Գ լծորդության բայերի մեջ։ Օրինակ՝ ասցել «ասացեալ», որ բոլորովին տարբեր է ասել անորոշից։

Որ հայնց է նա ասցել «որ նա այնպես է ասել».
Վնասակար իրք լինի տուել «վնասակար բան տված կլինի»։

Շատ պաք լինի կեցել «շատ ծոմ պահած լինի».
Չիւրեանք անուցել էր.
Շանն անուն Արմէն էին դրել.
Այնոց որ շատ տաք դեղեր կերել լինի և խմել[1]:

Ուրիշ դեպքերում տարբերութիւնը երևում էր գործածութեան տեղից և ձևից. ինչպես՝

Թէ կցել լինի «եթէ կցեալ լինի».
Թէ համել լինալ «եթէ հրամայեալ լինի».
Չէ համել «չէ հրամայեալ».
Թէ չլինալ անուանել «եթէ չլինի անուանեալ».
Ցեմել լինի «լամնալ լինի» (ուշացած լինի).
Որ ուղել լինալ «որ ուզած լինի».
Չես դատբառնել «բողոքարկած չես».
Թէ կարմրել լինի «եթէ կարմրած լինի»:

Դնում եմ այստեղ միջին հայերենի հարակատարի, գերակատարի և ատորագատական երկու ձևի խոնարհման պատկերը.

ժողվել եմ	ժողվել էի	ժողվել լինում	ժողվել լինայի
ժողվել ես	ժողվել էիր	ժողվել լինաս	ժողվել լինայիր
ժողվել է	ժողվել էր	ժողվել լինալ	ժողվել լինար
ժողվել ենք	ժողվել էաք	ժողվել լինանք	ժողվել լինալաք
ժողվել էք	ժողվել էիք	ժողվել լինաք	ժողվել լինալիք
ժողվել են	ժողվել էին	ժողվել լինան	ժողվել լինալին

Ե՞րբ է սկսվել գերբալական այս ձևի գործածութիւնը միջին հայերէնում: Ըստ Karst 352, Վատտակոց գրքում դեռ չկա -ել ձևը և այնտեղ դեռ գոնում ենք -եալ: Բայց Միխիթար Հերացին ունի. Karst (անդ) հավաքել է 31 ձև, որոնցից հիշենք բռնել ունիս «բռնել ես», լինի յամել «ուշացած լինի», լինի քաշել շատ ճոգս «շատ հոգս քաշած լինի», չլինի երևեցել «երևցած չլինի», յաւելցել լինի «ավելացած լինի», չլինի ցցուցել «ցուցց տված չլինի», «չես տեսել» չես տեսել, լինի տվել «տված լինի», լինի տարել «տարած լինի» և այլն: Սրանից երևում է, որ արդեն ժի դարում և անշուշտ ավելի առաջ՝ խոսակցական լեզվի մեջ սովորական էր:

Միջին հայերենի -ել գերբայը և նրա հետ կապված հարակատարն ու գերակատարը թեթև փոփոխութեամբ շարունակվում են արդի բարբառների մեջ:

[1] Օրինակները քաղված են Այտն. 96 և մասամբ Korst-ից:

Այստեղ Ում ճյուղի բարբառները ավելի հավատարիմ են մնացել հնին, քան Կր ճյուղի և ել ճյուղի բարբառները, քան որում առաջիններդ դեռ պահում են լ վերջածայնը, իսկ երկրորդները՝ դարձրել են ր:

Գերբայական -ել ձևը հնչված էլ ձևով՝ պահվում է մինչև այժմ Նոր-Ջուղայի, Երևանի, Զապախի և Ատրպատականի բարբառներում:

Հարակատարը էական բայի փոքր փոփոխութեամբ մնում է Երևանի և Ատրպատականի բարբառում, իսկ Նոր-Ջուղայի բարբառում էականը խոնարհվում է ա ձայնավորով.

Երևան, Ատրպատական	Նոր-Ջուղա
սիրել եմ	սիրել ամ
սիրել ես	սիրել աս
սիրել ա	սիրել ա
սիրել ենք	սիրել անք
սիրել էք	սիրել էք
սիրել են	սիրել ան

Գերակատարը Նոր-Ջուղա և Երևան նույն են, իսկ Ատրպատականը տարբերվում է միայն էական բայի ձևափոխութեամբ և հատկապես մ հավելվածով. օրինակ՝

Նոր-Ջուղա, Երևան	Ատրպատական	
սիրել ի	սիրել էմ կամ իմ	
սիրել իր	սիրել էիր	իիր
սիրել էր	սիրել էր	էր
սիրել ինք	սիրել էինք	իինք
սիրել իք	սիրել էիք	իիք
սիրել ին	սիրել էին	իին

Տիգրիսի բարբառում գերբայի ձայնավորը դառնում է ի, որով հարակատարն ու գերակատարը ստանում են հետևյալ ձևը.

սիրիլ իմ	սիրիլ էի
սիրիլ իս	սիրիլ էիր
սիրիլ է	սիրիլ էր
սիրիլ ինք	սիրիլ էինք
սիրիլ իք	սիրիլ էիք
սիրիլ ին	սիրիլ էին

Ղարաբաղի, Ղարադաղի և Շամախիի բարբառներում դերբայը առանում է -ալ վերջավորութիւնը և այն ժամանակ հարակատարն ու դերակատարը առանում են հետևեալ ձևը.

Ղրբ.		Շմ.	
սիրալ եմ	սիրալ ի	սիրալ ամ	սիրալ ի
սիրալ ես	սիրալ իր	սիրալ էս	սիրալ իր
սիրալ ա	սիրալ ար	սիրալ ա	սիրալ էր
սիրալ ենք	սիրալ ինք	սիրալ անք	սիրալ ինք
սիրալ եք	սիրալ իք	սիրալ էք	սիրալ իք
սիրալ են	սիրալ ին	սիրալ ան	սիրալ ին

Ագուլիսի բարբառումն էլ -եալ դառնում է -ալ, որ ներդաշնակութեան օրէնքների համաձայն լինում է նաև -ալ, էլ, աճալ, ուճալ (-եալ, -ացեալ):

Այս բոլորի մեջ հարակատարի և դերակատարի օժանդակ բայը դերբայից հետո է դրվում, իսկ երբ մի շեշտյալ բառ կամ բայը դերբայից հետո է դրվում, իսկ երբ մի շեշտյալ բառ կամ հարցական և կամ մի բացասական կա, օժանդակ բայը առաջ է անցնում և դերբայը՝ նրան հաջորդում: Այս դեպքում, մի քանի բարբառների մեջ օժանդակը սղվում է և իր վերջաձայն լ-ն կորցնում: Այսպես է՝

Երև. լէս էմ սիրէ, էն ա ըէրէ, սիրա ա արէ էկէ...
Տփ. չէմ սիրի, լիս իմ բէրի...

Բալաղեսի բարբառում դերբայը վերջավորվում է -էր, Թավրիզի բարբառումն էլ՝ էր: Օրինակ՝ Բալաղեա՝ ասէր ա, տարեր ա, եկէր եմ. Թավրիզ՝ խասէր ա «հասել է»: Երկուսն էլ շրջման դեպքում կորցնում են վերջաձայնը. այսպես՝ Բալաղեա՝ էն ա տարէ, չեմ եկէ, Թավրիզ՝ էն ա տասէ:

Բառավերջի լ (=ր) ձայնի այս անկումը շեշտի պակասութեան պատճառով է, որի ճիշտ նմանը անհնք այլ>էլ, ալ շաղկապի դործածութեան մեջ: Այս շաղկապն էլ Պոլսի բարբառում կարող է դառնալ ա. ինչպես՝ ես ա, դուն ա, ան ա, «ես էլ, դու էլ, նա էլ». նմանպես կեսարիո բարբառում՝ ես է. են է «ես էլ, նա էլ»: Օտար լեզուներից կարող եմ օրինակ բերել ռումիներենի որոշիչ հոդը, որ սովորաբար -ul ձևն ունի, բայց ժողովրդական բարբառի մեջ l-ից զրկվելով՝ դարձել է u. ինչպես՝

ciobanul «հովիվը», ամկ. ciobanu
boul «եզը», ամկ. bou

Սկսած Մարաղայից մինչև Ռուսոսթօ՝ դերբայի վերջավորութիւնը դառնում է ր, ինչպես և Բալաղեառում և Թավրիզում: Միաժամանակ ձայնավորը դառնում է ե, է կամ ի:

Ամենից հարաղատ ձևը պահում է Մուշը, որ դնում է -եր վերջավորութիւնը. ինչպես՝ տեսեր իմ, տէսեր ինք, տէսեր իք և այլն: Շրջման դեպքում էական բայը կրկնվում է. ինչպես՝ յօրի՞ ես դրեր իս, լը՞րի ես էկեր իս: Սա նույն է Բալաղեաի բարբառի «չե՞ս գալում էս, ո՞ւր էս գնում էս» և այլն ձևի հետ:

Մարաղայի, Ուրմիայի, Սոլի բարբառներում դերբայի մասնիկն է -իր: Սրանց մեջ հարակատարը թեև սովորական ձևով, բայց դերակատարը կազմվում է ելլ ճյուղի սովորութեան համաձայն՝ հարակատարի բոլոր դեմքերի վրա ավելացնելով եր, որ էական բայի անկատարի եզակի Գ դեմքն է: Օրինակ՝

Մրդ.

իւզիր իմ «տեսել եմ»	իւզիր իմ էր «տեսել էի»
իւզիր իս	իւզիր իս էր
իւզիր ի	իւզիր էր
իւզիր ինք	իւզիր ինք էր
իւզիր էք	իւզիր էք էր
իւզիր ին	իւզիր ին էր

Խոյ

խասիր էմ	խասիր
խասիր իս	խասիր
խասիր ի	խասիր
խասիր ինք	խասիր
խասիր իք	խասիր
խասիր ին	խասիր

Որմ.

լսիր էմ	լսիր էմ էր
լսիր էս	լսիր էս էր
լսիր ի	լսիր էր
լսիր էնք	լսիր էնք էր
լսիր էք	լսիր էք էր
լսիր էն	լսիր էն էր

Մարադալում -եալ>-իր դառնում է նաև -իւր՝ որոշ ձայնաբանական պայմաններում. ինչպես՝ չէօքիւր «չոքել»:

Նույն -իր վերջավորությունն ունի դերբայը Վանի, Ոզմիի, Տրապիզոնի և Համշենի բարբառներում, որոնցից ահա մի օրինակ.

Վ.ան

ուզիր եմ	*ուզիր ի*
ուզիր ես	*ուզիր իր*
ուզեր ի	*ուզիր էր*
ուզիր ինք	*ուզիր ինք*
ուզիր էք	*ուզիր իք*
ուզիր են	*ուզիր ին*

Նկատելի է, որ հարակատարի եզակի Գ դեմքն ունի ե, մինչդեռ ուրիշ ամեն տեղ դառնում ենք ի: Կրճատ դեպքում Վանա բարբառում ևս ուզեր դառնում է ուզե:

Ոզմ.

ուզիր իմ	*ուզիր է*
ուզիր իս	*ուզիր էր*
ուզիր ի	*ուզիր էր*
ուզիր ինք	*ուզիր էնք*
ուզիր իք	*ուզիր էք*
ուզիր ին	*ուզիր էն*

Տր.

սիրիր իմ	*սիրիր էի*
սիրիր իս	*սիրիր*
սիրիր է	*սիրիր էր*
սիրիր ինք	*սիրիր էինք*
սիրիր իք	*սիրիր էիք*
սիրիր ին	*սիրիր էին*

Համշ.

գ'նացիր իմ	*գ'նացիր ինք*
գ'նացիր էս	*գ'նացիր էք*
գ'նացիր ա	*գ'նացիր ին*

Դերբայի ալս -իր ձևը գտնում ենք նաև Մարաշի բարբառում. նույնը Հաճընի և Զեյթունի մեջ գարձել է իյ՝ ըստ տեղական արտասանության: Օրինակ՝ գ'իրիր է, գ'իրիյ է:

Փոխանակ -իր ձևի ունենք -էր՝ սկսած Կարինից Մարքերդ, Երզնկա, Բղի, Զարսանճաք, Դերսիմ, Արաբկիր, Ակն, Կեսարիա, Շապին-Գարահիսար, Սեբաստիա, Եվդոկիա, Ամասիա, Զմյուռնիա, Պոլիս և Բուռսեթ:

Կարնո բարբառում երբ էական բայը դերբայից առաջ անցնի, վերջածայն ր-ն կջնջվի, ինչպես՝ սիրէը է, չէմ սիրէ, գ'ա՞ւ էս քէրէ, չէ, ինիկ է բ'էրէ և այլն:

Օրինակներ մյուս բարբառներից՝

Մրր. նստէր է, մոլթէր էն.
Երզ. նստէր ա.
Բղի. կերէր է.
Զբս. նստէր է.
Դերսիմ՝ հածէր փախէր է, ճացէր է, էլէր է.
Արբ. նստէր ա, յընկէր ա.
Ակն. էղէր է.
Կես. փակվէր է, քշտէր էն.
Շպ.-Գր. նստէր էր, էլէր էր, գտավէր էմ.
Սեբ. Եվդ. առէր է.
Ասլ. ըրէ՛ր ին.
Զմ. թրջէր է, վաղէր է.
Ռ. էկէր էր, ըսէր ին.

Ահա և Պոլսի բարբառով հարակատարի և գերակատարի պատկերը.

ըրէր էմ «արել եմ»	*ըրէր էի*
ըրէր էս	*ըրէր էիր*
ըրէր է	*ըրէր էր*
ըրէր էնք	*ըրէր էինք*
ըրէր էք	*ըրէր էիք*
ըրէր էն	*ըրէր էին*

Ղրիմից վերականգնվում է նորից -ել ձևով դերբայը, որի հետ նույն է նաև Սուչավալի և Հունգարիայի բարբառը:

Ահա Նոր-Նախիջևանի բարբառի պատկերը.

Նախ.

բէրիլ իմ	բէրիլ էի
բէրիլ իս	բէրիլ էիր
բէրիլ է	բէրիլ էր
բէրիլ ինք	բէրիլ էինք
բէրիլ իք	բէրիլ էիք
բէրիլ ին	բէրիլ էին

Սչ.

սիրիլ իմ	սիրիլ էի
սիրիլ իս	սիրիլ էիր
սիրիլ է	սիրիլ էր
սիրիլ ինք	սիրիլ էինք
սիրիլ իք	սիրիլ էիք
սիրիլ ին	սիրիլ էին

Հնգ.

քաղիլ իմ	քաղիլ ինք?
քաղիլ իս?	քաղիլ իք
քաղիլ է	քաղիլ ին

Բերել եմ, բերել էի, *ինչպես տեսանք, տարածված են ամբողջ հայերէնի մեջ, բացի Ագուլիսի, Կարճևանի և Մեղրու բարբառներից, որոնց մասին ավելի մանրամասն հետո կխոսենք:*

Այստեղ պետք է խոսենք նախ -ած ձևով դերբայի մասին:

Գրաբարի մեջ բազմատեսակ բաղադրյալ ձևեր չկային. կային միայն -եալ և -ոյց դերբայները, որոնք կարելի էր միացնել էական բայի ներկա, անկատար և սաորադասական ձևերին: Այսպիսով յուրաքանչյուրից կստացվեր 3 ձև, գումարը 6 ձև.

տեսեալ եմ, տեսեալ էի, տեսեալ իցեմ.
տեսանելոց եմ, տեսանելոց էի, տեսանելոց իցեմ.

Հունարան հեղինակները հնարեցին մի քանի նոր ձևեր՝ հունարենի հետևողությամբ. այսպես՝ եղեալ գոյ «եղած լինել», տեսեալ գոյ «տեսած լինել», տեսանելոց գոյ «տեսնելու լինել» և այլն:

Բայց այս ձևերը տարածում չգտան և ժողովրդի լեզվի մեջ մուտք չգործեցին:

Միջին հայերենում -եալ ձևը դարձավ -ել, որ ավելի ուշ առացավ -եր ձևը: Այս երկու ձևերը շարունակում են իրենց գոյությունը մինչև այսօր, վերև հիշված սահմաններում: Թե երբ ծագեց -եր ձևը.—ըստ Այտն. -եալ դարձել էր -ել ժ—ԺԱ. դարում. իսկ -եր ձևը երևան եկավ ԺԲ դարում (էջ 96): Ըստ Karst, 371 *Մխ. Հերացու մոտ կա 6 անգամ -եր վերջավ., որոնք բոլորը հնաին ներմուծություն են. սրանք են լիշեր 31, փորձեր 126, տագնապեր 27, յաւելցեր 32, տաքցեր 27, ընկեր 40: -ել ձևը գոյատևելուց հետո, դեռ մինչև ԺԹ և ԺՏ դար, նրա կողքին շարունակում էր հին -եալ ձևը իր գոյությունը (Այտն. 103): Այս երկու ձևվերի տարբերությունը այն էր, որ -ել (հետո էլ -եր) անհոլով ձևով՝ կազմում էր բաղադրյալ ժամանակներ, միանալով եմ և լինիմ օժանդակ բայերի հետ, իսկ -եալ գործ էր ածվում միայն իբր ածական: Այսպես է նաև մեր արդի լեզվի մեջ, ուր ել=եր վերջավ է, իսկ -եալ միայն ածական և գոյական. ինչպես՝ հանդերձեալ կյանք, մեռեալ մարմին, գործեալ ակար, պատուիրեալ նամակ, հետեւեալ հատուածը, ներառեալ կամ ի բաց առեալ, ենթադրեալ կարծիք, ձեացեալը, երևակայեալ, հանգուցեալ, ամբաստանեալը և այլն: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ միջին հայերենում -եալ վերջավորությունը առանում էին միայն գրաբար բառերը. իսկ նոր ժողովրդական բառերը առանում էին միայն -ել ձևը: Այսպես՝ առում էին ուզել եմ, պառկել եմ, բայց ոչ ուզեալ կամ ուզեցեալ եմ, պառկեցեալ եմ և այլն: Այս կետը ցույց է տալիս, որ -եալ ձևը այլևս իբրև կենդանի քերականական ձև գոյություն չուներ և այն -եալ վերջավորությամբ բառերը գրաբարից ժառանգություն ձեացած՝ քարացած ձևեր էին: Հաղիվ ուրեք պատահում է վախեցեալ բառը՝ վախեցել բայից (Այտն. 103—4): Նույնիսկ -եալ վերջավորությամբ հատուկ ձևեր՝ իրենց վերջավորությունը դարձրել էին -ել, ինչպես՝ գրաբար հեծեալ, որ այսօր էլ գործածական է մեր աշխարհաբարում «ձիավոր» իմաստով, միջին հայերենում ասվում էր հեծել: Սրա հետ կային նաև գատել, քաւել, ացել, վերջինը գործածական է այսօր էլ բարբառներում, ինչպես և մեռել «մեռած մարմին, դի» (Այտն., 104):*

Ինչևէ արդյոք -եալ>ել ձևը դարձավ հետո -եր, քանի որ ւ բաղաձայնի այսպիսի ձայնափոխությունը սովորական երևույթ չէ

հայերենի մեջ։ Իմ կարծիքով այդ ձայնափոխությունը կատարված է դանազանության դնելու համար -ել անցյալ դերբայի և -ել անորոշի միջև, որ կարող էր որոշ դեպքերում շփոթվել նրա հետ։ Օրինակ՝ սա ուզել է, սա բողոքել է, սա տեսնուել է և այլն ձևերը այժմ էլ երկու իմաստ ունեն.—նախ իբրև դերբայ «սա ուզեցել է, բողոքել է, տեսակցել է», իսկ երկրորդը՝ իբրև անորոշ դերբայ՝ «սա ցանկանալ է նշանակում, սա մի բողոք է, սա տեսակցություն է» և այլն։ Ահա այս երկդիմության առաջքն առնելու համար էր, որ հնարվից -եր ձևը, որի համար իբրև օրինակ ծառայեց մի կողմից մի՛ խօսիլ—մի՛ խօսիր հարաբերությունը և մյուս կողմից անկատարի -եր վերջավորությունը (եր՝ անց. անկ. և եր՝ անց. դերբայ)։

Այս բացատրությամբ բոլորովին անհիշա եմ համաձայն Karst, 370 այն կարծիքը, որ իբր թե -ել դերբայը առացել է -եր ձևը՝ ազդեցությամբ թրքերեն sever idim, sever idin և այլն ձևերի՝ որոնք թուրքերենի այս ձևերը ոչ հարակատար են և ոչ էլ գերբակատար. sever im «սիրում եմ» սահմանական ներկա է և sever idim «սիրում էի» սահմանական անցյալ անկատար։ Նշանակությամբ տարբեր ձևեր ինչպես կարող էին ազդել իրար վրա։

Եթե ուզենայինք այս ձևերի ծագումը փնտրել օտար լեզուների մեջ, ավելի հարմար էր լազերենը, որ զուգադիպորեն անցյալ դերբայը կազմում է -eli և -eri մասնիկներով. ինչպես՝ ձարթելի կամ ձարթերի «գրած, գրված» (Adjarian, Etude sur la langue laze, 97, Марр, Грам. чан. яз. 63)։ Առաջինը պիտի տար հայերեն -եր, երկրորդը -ել. բայց ինչպես առաջինը (թրք. -er), նույնպես և այս երկուսը պատահական են միայն, որովհետև այսպիսի քերականական ձևեր լեզվից լեզու փոխ չեն առնվում։

Գրաբարի -եալ դերբայը մի ուրիշ ավելի մեծ անպատեհություն ուներ. նա միաժամանակ ներգործական էր և կրավորական։ Օրինակ՝ սիրեալ եմ, բերեալ եմ, առեալ եմ գրաբարի մեջ նշանակում են թե «սիրել եմ, բերել եմ, ավել եմ» (ներգործական) և թե «սիրված եմ, բերված եմ, տրված եմ» (կրավորական)։ Այս անորոշությունը բնականաբար պիտի շարունակվեր նաև միջին հայերեն -ել դերբայի համար։ Օրինակ՝ ԺԴ դարում գրված արձանագրության մեջ կանենք՝

Կամ թէ իրք շորհէ լարդինցս, որ ի սմա հաստատել է «հաստատված է» (Շիրակ 78, Արձ. 1215 թ.)։

Ինն դասուց հրեշտակաց նզովել եղիցի «նզովված լինի» (անդ)։

Այնպիսին որոշել լինի փառացն Որդոյն Աստուծոյ «հետացված լինի» (անդ)։

Բայց նույն արձանագրության մեջ գանում ենք նաև՝ ներգործական մաքով՝

Հայրենիք զոր գնել էի գանձերով.
Զոր ես ի հիմէ շինել էի.
Պահէդն զոր գնել էի և շինել.
Վանացս էի ավել.
Զոր ուրիշ իմ անդարձագրին եմ գրել (իմ կտակագրում ջոկ եմ գրել)։

Հին հայերը կարիք են զգացել զբաղվելու այս հարցով։ Գործք Առաքելոցում կարդում ենք. *Ի բաց կալ ի գոհելոյ կոց և ի լարևնէ և ի հեղձուցելոյ և ի պոռնկութենէ (ԺԵ 29)*. Բայց միայն զգուշանալ նոցա ի կոց գոհելոյ և ի լարևնէ և ի հեղձուցելոյ և ի պոռնկութենէ (ԻԱ 25)։ Կարևոր էր կրոնական տեսակետով իմանալ, թե հեղձուցեալ այտեղ ներգործականն է, թե կրավորական։ Եվ ահա այս անորոշությունը վերացնելու նպատակով է, որ հնարել են հեղձուցիկ ձևը և գարում։ «*Ի բաց լինել ի հեղձուցկէ. Չհեղձուցիկն ուտեն անխտիր*» (Կոչ. Դ)։ Բայց սրանով էլ շատ բան չի պարզվում, և Ոսկ. գծ. 272 ստիպված է ավելի պարզաբանող բացատրություն տալ. «*ի հեղձուցելոյ, ասէ, որ է ի մեռելոտուլ. և ոչ ասէ ի հեղձուցանելոյ... ոչ ասէ ներգործական հեղձուցանելով, որ է մեռուցանելոյ ըստ քեզ, այլ թէ ի հեղձուցելոյ, որ է միջակ կամ կրավորական*»։

Երբ միջին հայերենում հնարվեց կրավորական բայի -ուիլ ձևը, նրա հետ միասին կազմվեց բնականաբար անցյալ դերբայի -ուել (-ուեր) ձևը, որով շփոթության առաջքը առնվեց և -ել դերբայը իբրև կրավորական սկսեց վերանալ։ Միխիթար Հերացին, որ ներկայացնում է նախակիլիկյան հայերենը, չունի դեռ -ուել ձևով դերբայ և հետևաբար տալիս է բազմաթիվ օրինակներ՝ կրավորական իմաստով -ել ձևով դերբայների։ Ավելի ուշ, զուտ կիլիկյան շրջանին, կրավորական -ուել ձևը տարածվում է, սրա հետ զուգընթաց -ել կրավորական դերբայը ջնջվում է և սակայն մնում և շարունակվում է -ել դերբայը իբր ներգործական։

Այս միջոցին -ել ներգործական դերբայի դեմ առեղծվում է -ած ձևով նոր դերբայ՝ կրավորական և չեզոք (բայց ոչ նաև ներգործական) իմաստով։

-ած կամ -ուած վերջավորութիւմբ բառեր բավական կային հին գրաբարում, նոյնիսկ Մեսրոպյան շրջանին: Ահա այս կարգի բառերի մի ցանկ.— անկած (Ս. Գր., Ոսկ.), անկուած, անկուածոյ (Ս. Գր.), ասացուած (Փարպ.), արարած (Ս. Գր., Եզն.), գործուած (Ս. Գր., Եզն.), գարձուած (Ս. Գր., Ագաթ.), արկած (Փիլ., Պիտ.), դիպուած (Ս. Գր.), երկիւղած (Ս. Գր. Բուզ., Ոսկ.), ընթերցուած (Ս. Գր., Եւս. քր.), հալեցուած (Եզեկ. ԻԳ 16), հատած (Եւս. պամ.), հարուած (Ագաթ., Վիպաս., Եւս. քր.), հասուած (Ագաթ.), հարուած (Ս. Գր.), հարցուած (Դան. գ. 4, Եզն., Եւս դ. 16), ճաշացուած (Ս. Գր.), լուելուած (Ս. Գր., Եւս. քր., Ոսկ. մ. բ. 23), յօրինուած (Ս. Գր., Ագաթ.), նալեցած (Ոսկ. մ. ա. 17), ողորմած (Ս. Գր.), սպառուած (Ս. Գր.) ստացուած (Ս. Գր., Ոսկ., Սեբեր.), վարկած (Նար.), ցաւած (Սղ. կը. 30, Ոսկ, մ. բ. 19, Ոսկ. Ես., Սեբեր., Բուզ.): Այս բառերի մի մասը պարզ ածական է (ինչպես ողորմած), մյուսներն էլ բայանուն են և համապատասխանում են մեր «կեցուածք, խօսուածք» և այլն ձևերին: Տարակուսելու չկայ, որ նրանց մեջ ու և ած տարբեր մասնիկներ են, որոնք սկսել միացել են այստեղ: Այդ երևում է հատկապես ճաշած և ճաշուած, հայեցած և հայեցուած բառերի համեմատութիւնից: Սակայն սրանց մեջ հատկապես կրավորականի իմաստ գոյութիւն չունի: Թերևս այդպիսի իմաստ զգալի լինի անկած, ասացուած, արարած, ցաւած և այլ բառերի մեջ, բայց դրանց հակառակ, դուռ ներգործական իմաստ ունեն ճարուած, ողորմած: Բայց ինչպես ներգործական իմաստ ունեցող բայերի մեջ է երևում է, կրավորական իմաստի ըմբռնողութիւնը գերակշռել է մեր ժողովրդի գիտակցութեան մեջ և այս կարգի բառերից հետացրել են ինչպես կրավորական -ուիլ ձևով բայական վերջավորութիւնը, նոյնպես և չեզոք ու կրավորական -ած վերջավորութիւնը: Թև դրանց մեջ -ուած կրավորական իմաստ չունի, պետք է նկատել, որ նրանց մեջ չեզոք սեռի բայեր էլ կան, որոնք նոյնպես ստացել են -ուած:

Այսպիսով միջին հայերենում ստեղծված է -ած վերջավորութեամբ նոր դերբայ՝ կրավորական և չեզոք իմաստով: Karst, էջ 355—365 միջին հայերեն գրվածքներից հավաքել և դասավորել է 332 այս կարգի բառ: Ավելորդ ենք համարում դնել այստեղ այդ ցանկերը:

Թեև Karst, էջ 353 ասում է՝ թե -ել ձևով դերբայը մեմիայն (lediglich) ներգործական է, բայց ավելի ճիշտ է Այտն., որ էջ 96 ասում է, թե «Հին ռամկօրէնի մեջ սովորաբար ել (եր) անցյալը

ներգործական կը շինէր, իսկ ած՝ կրավորական. օրինակ Գրած է գինի «եփին գրուած է». Բռնած ես «բռնուած ես» և այլն: Վերջին կետը այնպես սուղ է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ դերբայը ներգործական է երևում, դարձյալ կրավորական պետք է առնել. Օրինակ՝

Եւ ունան բռնած զգրօշկերոյն ծայրերն.— պետք է թարգմանել «դրօշակների ծայրերը բռնուած պետք է պահեն»:

Որ գրած լինի «որ գրուած լինի».

Թէ զկտաւինն ծալած ծախէ «եթէ կտաւները ծալուած ծախէ».

Իր գողցած իրք «իր գողացուած իրերը».

Թէ կնիկն ճանչած ամուլ լինի «եթէ կինը յայտնապես ամուլ լինի»:

Ո՛չ թե միայն ժողովրդական լեզուն, այլև ԺԲ դարի ուսումնականների լեզուն գրաբարի -ած բայանուն կազմող վերջավորութիւնը ըմբռնում էր իբրև կրավորական դերբայի մասնիկ: Օրինակ՝ կարգած բառը, որ հին հայերենի հասկացողութեամբ նշանակում էր կարգուածք. կարգաւորութիւն, դասաւորութիւն», Եսայի Նչեցու համար այլևս նշանակում էր «կարգուած, նշանակուած», համմտ. Սարկաւագն դռնապան կալը կարգուած» (ՆՀԲ): Karst, էջ 366 հավաքել է Ներսես Շնորհալուց, Ներսես Լամբրոնացուց, Մխիթար Գոշից և ուրիշ հեղինակներից գործածված մի խումբ այսպիսի բառեր, որոնց մեջ կրավորական անցյալ դերբայի իմաստը բացորոշ է. ինչպես՝ հիւսած, նեղկած, հատած, բաժանած, բանտած, բեհեռած, գրած, զարհուրած, ըմբռնած, խաւարած, խրատած, կապած, կոչած, ձգած, ուղղած, պատմած, պատրած, պատդած, սահմանած, գոյացած, մեռած, ցանկած, լցած, թրջած, խնամած, ծալած, կատարած, կուտած, կրկնած, մեռած, նզոված:

Նույնիսկ ավելի հին հեղինակների մեջ էլ կան նման դեպքեր. օրինակ՝ Փավստոսի մեջ, էջ 3, կարդում ենք. Ջոր օրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն «բովանդակութեան»: Այստեղ կարգած չի նշանակում «կարգավորութիւն», որովհետև այս դեպքում պիտի ասվեր «որպէս կարգած աղիւսոյ միոյ»: Այլ՝ «կարգուած, շարուած», որ գուցե հետին սրբագրության արդյունք է (ՆՀԲ չի հիշում այս իմաստով):

Karst, 368 ասում է, թե Կիլիկյան հայերենում դեռ մինչև այժմ մի հատիկ օրինակ չէ գտնված կրավորական -ուած ձևի դերբայի. որովհետև -ած ձևի դերբայը արդեն կրավորական էր: Միակ

օրինակը՝ եթդուեցուած, որ գանում ենք Անսիպք, էջ 25, տող 18 սխալ գրչութիւն է և պետք է տղղել երդուեցուցած: Այս -ուած ձևը աշխարհաբարի հնաբածն է: Հենց որ առեղծվեց կրավորական բայի -ուիլ ձևը, բնականաբար պիտի բխեր նրանից դերբայի -ուած ձևը և -ած ձևից դերբայի կրավորական արժեքը վերանաւոյ, պիտի վերածվեր ըստ օրինի ներգործականի: Այսպես եղավ արդեն աշխարհաբարում և աշխարհաբարը մեր դարձավ երկու տեսակ դերբայի՝ -ած և -ել (-եր), որոնք ներգործական արժեք ունեն և որոնց կրավորականն էլ է -ուած, -ուել (-ուեր):

Առեղծվելով երկու դերբայ, սրանից էլ բնականաբար պիտի առաջանային երկու հարակատար և երկու դերակատար.

ներգործական	կրավորական
—ել եմ —ել էի	—ուել եմ— ուել էի
—ած եմ—ած էի	—ուած եմ— ուած էի

Սրանցից առաջինը գրաբարի շարունակութիւնն է. տեսնել եմ>տեսել եմ>տեսեր եմ, տեսնել էի>տեսել էի>տեսեր էի. իսկ երկրորդը աշխարհաբարի հատուկ սեփական ձևը:

Երկու ձևերի մրցումը սկսեց լեզվի մեջ: Ամենից պահպանողականն է Ջուղայի բարբառը, որ մինչև այժմ էլ չի գործածում հարակատարի և գերակատարի համար բերած եմ, բերած էի, այլ միայն բ'երել ամ, բ'երել էի: Երևանի բարբառումն էլ, թեև երկու ձևերը կան, բայց հաճախ -ած ձևի դերբայը միջին հայերենի ոճով կրավորական նշանակութիւն ունի. ինչպես՝ Պատը ներկած է. էդ գիրքը ապա՞ծ է թե ձեռագիր: Իսկ Ագուլիսի, Մեղրիի և Կարճևանի բարբառները -ել ձևը վերածել են կատարյալի և -ած ձևը հատկացրել են միայն հարակատարի և գերակատարի: Այսպես է նաև Սուչավայի և Հունգարիայի բարբառներում: Իսկ Պղնի գյուղերում գործածական է -ած ձևը. գնացած է, եկած է և ոչ թե գնացեր է, եկեր է: Այս երևույթի մասին ավելի մանրամասն քիչ հետո:

Մնացյալ բարբառներում -ել -եմ ի՛ն, և -ած եմ, -ած ի՛ն հավասարապես գործածական են:

Ահա մի քանի օրինակ մի քանի կարևոր բարբառներից:

Պլ.

սիրէր էմ	սիրած էմ	սիրէր էի	սիրած էի
սիրէր էս	սիրած էս	սիրէր էիր	սիրած էիր
սիրէր է	սիրած է	սիրէր էր	սիրած էր
սիրէր ենք	սիրած ենք	սիրէր էինք	սիրած էինք
սիրէր էք	սիրած էք	սիրէր էիք	սիրած էիք
սիրէր էն	սիրած էն	սիրէր էին	սիրած էին

Նեխ.

սիրիլ իմ	սիրած իմ	սիրիլ էլի	սիրած էլի
սիրիլ իս	սիրած իս	սիրիլ էլիր	սիրած էլիր
սիրիլ է	սիրած է	սիրիլ էր	սիրած էր
սիրիլ ինք	սիրած ինք	սիրիլ էլինք	սիրած էլինք
սիրիլ իք	սիրած իք	սիրիլ էլիք	սիրած էլիք
սիրիլ ին	սիրած ին	սիրիլ էլին	սիրած էլին

Մրդ.

իւզիր իմ	իւզած իմ	իւզիր իմ էր	իւզած իմ էր
իւզիր իս	իւզած իս	իւզիր իս էր	իւզած իս էր
իւզիր ի	իւզած ը	իւզիր էր	իւզած էր
իւզիր ինք՛	իւզած ինք՛	իւզիր ինք՛ էր	իւզած ինք՛ էր
իւզիր էք՛	իւզած էք՛	իւզիր էք՛ էր	իւզած էք՛ էր
իւզիր ին	իւզած ին	իւզիր ին էր	իւզած ին էր

Դրբ.

կ՚արալ ըմ	կ՚արած ըմ
կ՚ալալ ըս	կ՚ալած ըս
Ճ՚ուցալ ի	մոռացած իր և այլն:

Ագլ.

կատարյալ	հարակատար	գերակատար
թ՚ակալ ըմ	թ՚ակած ըմ	թ՚ակած ըմ նէլ
թ՚ակալ ըս	թ՚ակած ըս	թ՚ակած ըս նէլ
թ՚ակալ ա	թ՚ակած ա	թ՚ակած ա նէլ
թ՚ակալ ըք	թ՚ակած ըք	թ՚ակած ըք նէլ
թ՚ակալ ըք	թ՚ակած ըք	թ՚ակած ըք նէլ
թ՚ակալ ըն	թ՚ակած ըն	թ՚ակած ըն նէլ

Մեղրի

կատարյալ	հարակատար	գերակատար
սիրալ ըմ	սիրած ըմ	սիրած ըմ լո
սիրալ ըս	սիրած ըս	սիրած ըս լո

սիրալ ա	սիրած ա	սիրած ա լա
սիրալ ըք	սիրած ըք	սիրած ըք լա
սիրալ ըք	սիրած ըք	սիրած ըք լա
սիրալ ըն	սիրած ըն	սիրած ըն լա

Սուչավա

սիրիլ իմ	սիրիլ էի
սիրիլ իս	սիրիլ էիր
սիրիլ է	սիրիլ էր
սիրիլ ինք	սիրիլ էինք
սիրիլ իք	սիրիլ էիք
սիրիլ ին	սիրիլ էին

Հարց է, թե այս երկու տարբեր ձևի հարակատարն ու գերակատարը իմաստի և գործածութեան մեջ ինչ տարբերութիւն ունեն:

Ալան. 94—95 նախ անունով դանագանում է երկու ձևերը՝ կոչելով

հարակատար՝ տեսած եմ...
գերակատար կամ վաղակատար՝ տեսած էի...
հարակատար անորոշ՝ տեսեր եմ...
գերակատար անորոշ՝ տեսեր էի...

Աբեղյան, Աշխ. քեր. 1906, էջ 115, կոչում է՝

հարակատար ներկա՝ նատած եմ,
հարակատար անցյալ՝ նատած էի,
վաղակատար ներկա՝ նատել եմ,
վաղակատար անցյալ՝ նատել էի.

Բայց հարակատար և վաղակատար միշտ անցյալ են. օրինակ՝ ֆրանսերէն passé indéfini (հարակատար) j'ai mangé «կերել եմ» և plusque-parfait (գերակատար) j'avais mangé «կերել էի» միշտ անցյալ են. և նրանք «ներկա» անունով կոչել դիտական չէ: Եթե պատճառաբանենք, թե կերել եմ կամ կերած եմ ձևերի մեջ եմ ներկա է, կարելի է և հակառակն ասել, թե կերել կամ կերած անցյալ է: Իրականութեան մեջ կերել եմ կամ կերած եմ ցույց են տալիս անցած գնացած, և այժմ վերջացած գործողութիւններ:

Ըստ Ալանյանի՝ նշանակութեան կողմից բուն հարակատարը և անորոշ հարակատարը մի փոքր տարբերութիւն ունեն: -ած ձևով հարակատարը ցույց է տալիս, թե գործողութիւնը մի ժամանակ իրոք կատարված է, կամ թե չեզած է: Օրինակ՝ Ինքը մեզ տեսած և մեզ հետ խոսած է: Տունս այրած է: Իսկ -եր ձևով հարակատարը ցույց է տալիս, թե պատմողը ուրիշից է լսել այդ դեպքը և կամ թե անցյալում եղած մի դեպք այժմ էլ դեռ շարունակվում է: Օրինակ՝ Ինքը մեզ տեսեր է. Գյուղի տունս այս գիշեր այրեր է. Ծնած օրս հալրս մեռեր է. Լսեցի, թե Աթենք գացեր ես. Ինձ մեջ խոսեր եմ. Պարսից շահը հիվանդացեր է:— Բայց -ած և -եր ձևով գերակատարները բոլորովին նույն են իմաստով. օրինակ՝ Հոն մնացած էի կամ հոն մնացեր էի:— Ինչ անգամ անորոշ հարակատարն էլ հավասար է բուն հարակատարին. ինչպես՝ տեսեր եմ կամ տեսած եմ:

Ալանյանի այս բացատրութիւնը, որ արևմտահայ գրականի համար է, ընդհանրապես ճիշտ է նաև արևելահայ գրականի համար: Տարբեր է միայն այն, որ այժմ էլ շարունակվող գործողութիւնը բացատրվում է -ած դերբայով և ոչ թե -ել. օրինակ՝

Ինձ ած եմ, հանդիսատ թողնք ինձ (քնել է և այժմ էլ դեռ շարունակում է քնել):

Երեկ այդի էի գնացել, քանս տարել է (այժմ չէ քնած, գործողութիւնը չի շարունակվում):

Հարակատարի երկու ձևերը՝ -ած եմ և -ել եմ ձգտում են միանալու կամ երանգի նոր նրբութիւնով զանազանվելու: Աբեղյանի դատողութիւնով սրանք տարբերվում են իրարից՝ հետևյալ ձևով.

Արևմտահայոց մեջ -ած (եմ) երբեմն դուռ ածականաբար է գործածվում. ինչպես՝ խմած ե=ուրիշ բառով՝ գինով ե. պառկած ե=իբր թե՝ հիվանդ ե. երկուսն էլ ածականի փոխարեն. իսկ նրանց բայական ձևը լինում է խմեր ե, պառկեր ե և այլն:

Երբեմն էլ -ած և -եր ժամանակի տարբերութիւն են ցույց տալիս. ինչպես՝

Այս բանը սովորութիւն է դարձած Պոլսի մեջ:
Այս բանը սովորութիւն է դարձեր Պոլսի մեջ:

Առաջինը հին կամ վաղուցվա մի բան է հայտնում, իսկ երկրորդը՝ նոր կամ վերջերս կատարված:

Այժմ տալիս ենք հարակատարի և գերակատարի գարգացման և փոփոխման պատմութիւնը այլ լեզուների համեմատութիւնով:

Հնդեվրոպական նախալեզվի մեջ կատարյալը (parfait) ցույց է տալիս արդեն լրացրած վերջացրած գործողություն (ինչպես է հայերեն ասել եմ, բերել եմ և ոչ թե ասացի, բերեցի): Այս ձևը կազմվում էր հաճախ արմատի կրկնությամբ և ուներ առանձին վերջավորություններ[1]. ինչպես՝ հունարեն léloipa «լքել եմ»:

Այս ձևը անազարտ չմնաց ժառանգ լեզուների մեջ. մի տեղ իմաստը փոխվելով հասավ ներկայի. ինչպես՝ լատիներեն memini «հիշում եմ», ուրիշ տեղ գործավ անցյալ (prétérit), ինչպես՝ լատիներեն cecini «երգեցի»:

Բայց ընդհանրապես հնդեվրոպական նախալեզվի կատարյալի ձևը ջնջվից լեզուներից, փոխանակվելով մի նոր բաղադրյալ ձևով: Ահա այս փոփոխության ընթացքը զանազան լեզուների մեջ:

Լատիներենում հարվածը սկսվից կրավորականից, որի համար շատ հարմար էր հիշյալ բաղադրյալ ձևը. այսպես dictus est (նա) ասացեալ է, ասված է (մեկը) կամ մանավանդ անդեմ ձևով՝ dictum est (մի բան) ասված է (ասում են, կըսեն թե):

Ավելի ուշ, ռոմանական շրջանին, նույն ձևը անցնում է նաև ներգործականի և «ունեմ» բայի հարադրությամբ կազմվում է habeo dictum «ասել եմ»: Այս ձևից առաջանում է նորլատին լեզուների հարակատարը՝

ֆրանսերեն՝ j'ai dit, j'ai parlé
իտալերեն՝ ho parlato
իսպաներեն he comprado «գնել եմ, (գնեցի)»
ռումիներեն՝ am auzit «լսել եմ» փխ. auzii լսեցի, որ նվազ սովորական է:

Վերջապես այս ձևը տարածվում է գերմանական ընտանիքի լեզուների մեջ. ինչպես՝

գերմաներեն՝ ich habe gesehen
դանիերեն՝ jeg har set տեսել եմ
շվեդերեն՝ jag har kallat կանչել եմ
անգլերեն՝ I have loved սիրել եմ

Գերմանական ընտանիքում երևույթը հին չէ. գոթականում, Դ դարում (մ. թ.) դեռ այս ձևին չենք հանդիպում:

Ունիմ օժանդակով հարակատարի կամ գերակատարի կազմությունն գիտեն նաև հայերենը: Ըստ Այտն. 97, գրաբարի շրջանից կա առեալ ունիմ «առել եմ», բայց մանավանդ շատ սովորական է ի իմ ձևը, որ նշանակում է գարձյալ «ունիմ». ինչպես՝ Տեսեալ է իմ «տեսած ունիմ, տեսել եմ». չիք իմ տեսեալ «չեմ տեսել». իցէ՞ քո լսեալ «լսել ես»: Միջին հայերենում կա նույն ձևը. ինչպես՝

Զքաղաքն առած ունէին «քաղաքը առած էին» (Սմբ. հրթ. Dulaurier, Hist. des crois. I, էջ 650):
Ի ներքսէ պահած ունի «ներսում պահած է»:

Նույն ձևը շարունակվում է նաև արդի բարբառներից մի քանիսում. օրինակ՝ Համշենի բարբառում հարակատարն ու գերակատարը կազմվում են եմ կամ ունիմ բայով և -ած, -եր գերբայներով. ինչպես՝ գ'նացիր իմ, գ'նացած իմ, գ'նացած ունիմ «գնացել եմ», առած ունիմ «առել եմ», առած ունէի «առած էի» և այլն:

Պոլսի բարբառն էլ գիտե կազմել ունիմ բայի ներկայի և անկատարի օժանդակությամբ և անցյալ գերբայի հարադրությամբ՝ հարակատար և գերակատար անցյալ. ինչպես՝

հարակատար՝
բերած ունիմ, բերած ունիս, բերած ունի,
բերած ունինք, բերած ունիք, բերած ունին.

գերակատար՝
բերած ունէի, բերած ունէիր, բերած ունէր,
բերած ունէինք, բերած ունէիք, բերած ունէին:

Բայց պոլսական այս ձևերը ճիշտ համապատասխան չեն պոլսական բերի եմ կամ բերած եմ, բերեր ես կամ բերած ես և արևելյան գրաբանի բերել եմ, բերել ես ձևերին, այլ Երևանի բարբառի բերած կա՞ս, բերած կայի՞ր ձևերի ճիշտ համապատասխանն են: Օրինակ՝ Օր մը օրանց ասպէս բան տեսած ունե՞ր=«կյանքումդ երբևիցե այսպիսի բան տեսած կայի՞ր»:

Այտնյան, 97 միջին հայերենի այս ձևը (ԺԲ դարում) ճիշտ համապատասխան է գտնում արդի եվրոպական լեզուների ոճին: Մեր մեջ էլ ունիմ օժանդակով կազմում էին ներգործական (հարակատար), եմ օժանդակով՝ կրավորական. օրինակ՝

Առած ունիս «առած ես»,
Առած ես «առնված ես»:

[1] Meillet, Ling. historique et ling. gén. p. 141–4, 149—158.

Արդի բարբառների այս ձևը բնականաբար կարելի չէ վերագրել եվրոպական լեզուների ապդեցութիյան։ Ա. առավելն կարելի էր համարել նմանութիյուն տաճկերենի, ուր կա նուլնպես այս ձևը. ինչպես՝

gitdiyin var գնացած ունիս=գնացել ես, գնացած կաս։

Բայց միջին հայերենի մեջ նույն ձևի գոյութիյունը ապացուլց է, որ այդ ձևն էլ անկախ և միայն զուգահեռ է թե եվրոպականին և թե տաճկերենին։

Ժամանակի ընթացքում այս ձևի հարակատարն էլ լեզուների մեջ նշանակութիյան թուլացմամբ առանում է կատարյալի իմաստը և սկսում է մրցման մեջ մանել պարզ կատարյալի հետ։

Ահա այս երևույթի ընթացքը ֆրանսերենում։

Ֆրանսերենն ուներ պարզ կատարյալի ձև (օրինակ՝ j'aimai, je fus, je dis սիրեցի, եղա, ասացի և այլն), ինչպես սովորում էինք մենք մանկութիյան ժամանակ ֆրանսերեն քերականութիյան մեջ և կարդում այն ժամանակի գրականութիյան մեջ։ Բայց այս ձևի կատարյալը ներկայացնում էր զանազան դժվարութիյուններ. նա շատ անգամ նման էր ներկային կամ անկատարին. այսպես՝ Ա. լծորդութիյան մեջ նման էր անկատարին (j'aimai սիրեցի. j'aimais սիրում էի— նույն հնչմամբ), Բ լծորդութիյան մեջ նույն էր ներկայի հետ (je finis վերջացնում եմ, վերջացրի, je dis ասում եմ, ասացի)։ Այս պատճառով ահա մրցման մեջ հաղթվեց և տեղի տվեց հարակատարին, որ արդեն դարձավ կատարյալ։ Այժմ բուն կատարյալը հնութիյանց կարգն է դասված և բոլորովին գոյութիյուն չունի Փարիզի ֆրանսերենում. j'ai dit նախապես «ասել եմ», այժմ նշանակում է միայն «ասացի»։ Բայց, այսպիսով, ֆրանսերենը զրկվեց հարակատարից, որի համար անշուշտ պիտի հնարվի մի նոր ձև. բայց դեռ ոչ մի նշան չկա, թե ինչ ձև պիտի լինի այդ և ուրտեղից պիտի սկսվի։

Այսպես նաև եվրոպական մյուս լեզուների մեջ, որոնց հարակատարը դարձավ կատարյալ։

Ինչ որ տեղի ունեցավ լատիներենում, նույնը կատարվեց նաև ուրիշ լեզուներում։

Այսպես՝ հին պարսկերենում Դարեհի ժամանակ (Դ դար մ. թ. ա.) հնդեվրոպականի կատարյալ ձևը ջնջվում է և նրա տեղ գալիս է բաղադրյալ ձևը՝ կրավորականի մեջ. օրինակ՝ manā krtam, որ նշանակում է բառացի «ինձ գործեալ». դրանից հետո կատարյալը ջնջվում է և նրա տեղ անցնում է բաղադրյալ ձևը՝ առանձին ներգործական նշանակութիյուն. պարսկերեն kard նշանակում է «արեց» և դերբայի վրա նորից միացնելով բայական վերջավորութիյունները՝ man kardam «արեցի» (ես թե արել եմ), ուր նույնիսկ man առացել է ուղղական նշանակութիյուն «ես»! այժմ պարսկերենում չկա այն դիտակցութիյունը, թե kardam անցյալ դերբայ է[1]։

Սլավերենում հին ժամանակ կար մի պարզ կատարյալ (aoriste) և մի հարակատար՝ բաղադրյալ ձևով. օրինակ budixŭ «արթնացրի», budilŭ jesmi «արթնացրել եմ» (բառացի «արթնացնող եմ»)։ Այս վերջինը կազմված էր անցյալ դերբայի -lŭ ձևից+օժանդակ բայից. այսպես հատ. читалъ есмь։ Սակայն այս ձևը գործածվում էր կատարյալի իմաստով՝ «արթնացրի», «կարդացի» և ոչ թե իրը հարակատար։ Նոր սլավական լեզուներն արդեն բոլորովին ջնջել են հին պարզ կատարյալը և նրա տեղ դրել հարակատարի ձևը, սրա վրայից էլ ջնջելով սակայն օժանդակը և պահելով միայն դերբայը, որ գործածում են իրրև կատարյալ։ Այսպես՝ ռուսերեն voz budil, читал, չեհերեն wz-budzilem։ Դրա համար է, որ արդի ռուսերենում կատարյալը ունի թիվ և սեռ, մինչդեռ ամբողջ բայը զուրկ է սեռից. այսպես ռուսերեն читал արական, читала իգական, читали հոգնակի (որովհետև բոլորն էլ գուա դերբայ են միայն. բայ չկա)։

Սերբական բարբառների մեջ երևույթը դեռ վերջացած չէ և կատարյալը դեռ իր գոյութիյունը զրկել է տալիս (Кульбакинъ, Серб. яз. 80)։

Այսպես ուրեմն ընդհանուր երևույթ է լեզուների մեջ հնիս. հարակատարի ջնջումը, նրա տեղ բաղադրյալ կատարյալի գործածութիյունը, որ հետո դառնում է պարզ կատարյալ։

Գրեթե նույն երևույթը տեղի ունեցավ նաև նոր հունարենում. նոր հունարենը ջնջել էր երկրորդ առբիսաը, առաջին առբիսան էլ չի սիրում գործածել հաճախ և ամենի սիրում է գործածել «ունեմ» բայով կազմված ձևեր, որով կազմվում են (ճիշտ ֆրանսերենի պես).

ἔχω λύσει=j'ai délié (parfait)
εἶχον λύσει=j'avais délié (plusque parfait)
θὰ ἔχω λύσει=j'aurai délié (futur anterieur)

Այն ընդհանուր երևույթը, որ պատմեցինք վերևում արիական ճյուղից սկսած լատիներենի վրայով՝ ռոմանական, գերմանա-

[1] Meillet, Gram. du v. p. 124.

կան և ալավական լեզուների մեջ, մինչև նոր հունարենը, տեղի ունեցավ նաև հայերենի մի քանի բարբառներում։ Այս կարգին են պատկանում նախ Սուչավալի և Հունդարիալի բարբառները, որոնց մեջ կատարյալը չնչվեց և հարակատարը անցավ նրա տեղը։ Սա կարող է լինել եվրոպական լեզուների ազդեցությամբ։ Բայց նույն երևույթը տեղի է ունեցել նաև Ագուլիսի, Կարճևանի և Մեղրիի բարբառներում, ինչ որ կարելի չէ որևէ եվրոպական լեզվի վրա բագրել. երևույթը անկախ է։

Հարակատարի և գերակատարի այս չորս ձևերից դուրս բարբառները ներկայացնում են նաև անցյալի 20 ուրիշ բաղադրյալ ձևեր, որոնք բոլորը կազմված են -ած ձևով դերբայից։ Ո՛չ մեկը չի ստանում -ել ձևի դերբայ։ Այս բաղադրյալ ձևերի կազմից շատ հարուստ է հատկապես Գոլթի բարբառը, ինչ որ ձևապաշտ թուրքերենի ազդեցության արդյունք է։

Այս ձևերը անուն չունեն, մի մասի համար անուններ դրել է Այտնյանը (էջ 94), որոնք և ընդունել եմ այստեղ։ Մնացյալի համար ես ստիպվել եմ անուններ հնարել՝ հետևելով Այտնյանի դրած անուններին։ Իմ դրած անունները նշանակում եմ աստղանիշով։ Յուրաքանչյուր ձևի կողքին նշանակում եմ, թե ուր բարբառների մեջ գործածական է*։

Սահմանական

կրկին կատարյալ.— սիրած եղալ (Ջղ. Ննխ. Գլ.), Մրգ. իւզած չէլամ.

հարակատար ապառնի.— սիրած պիտի լինիմ (ըլլամ) Ջղ. Ագլ. Ննխ. Գլ. (=Մրգ. գ'ուրուչ իւզած ըլիմ).

**հարակատար ապառնի անցյալ.— սիրած եղած պիտի (ըլլամ (Գլ.).*

գերակատար ապառնի.— սիրած պիտի լինեի (ըլլալի) Ջղ. Ագլ. Ննխ. Գլ. (=Մրգ. գ'ուրուչ իւզած ըլիմ էր).

**գերակատար ապառնի անցյալ.— սիրած եղած պիտի ըլլալի (Գլ.).*

**պարտավորական հարակատար.— սիրած եմ լինելու, սիրած ըլլալու եմ Ագլ. Ննխ. Գլ. (=Մրգ. իւզած իմ ըլօլը).*

**պարտավորական գերակատար.—սիրած էի լինելու, սիրած ըլլալու էի Ագլ. Ննխ. Գլ. (=Մրգ. իւզած իմ էր ըլօլը).*

* Ձեզք նշում անթափր բոլոր այն բարբառները, որոնց մեջ օգտագործվում են այդ ձևերը։

պայմանական հարակատար.— սիրած կլինեմ, սիրած կըլլամ Ագլ. Ջղ. Ննխ. Գլ. (=Մրգ. իւզաս կըլիմ).

**պայմանական հարակատար շարունակական.— սիրած կըլլամ կոր (Գլ.).*

պայմանական գերակատար.— սիրած կլինէի (կըլլալի) Ջղ. Ննխ. Գլ. Ագլ. (=Մրգ. իւզաս կըլիմ էր).

**պայմանական գերակատար շարունակական.— սիրած կըլլալի կոր (Գլ.).*

Ստորադասական

հարակատար.— սիրած լինիմ (ըլլամ) Ագլ. Ջղ. Ննխ. Գլ. (=Մրգ. իւզած ըլիմ).

**ապառնի հարակատար.— սիրած ըլլալու ըլլամ (Գլ.)*

գերակատար.— սիրած լինէի (ըլլալի) Ագլ. Ջղ. Ննխ. Գլ. (=Մրգ. իւզած ըլիմ էր).

**ապառնի գերակատար.— սիրած ըլլալու ըլլալի (Գլ.).*

**հարակատար ապառնի անկատար.— սիրած եղած ըլլամ (Գլ.).*

**գերակատար ապառնի անկատար.— սիրած եղած ըլլալի (Գլ.).*

Հրամայական

կատարյալ.— սիրած եղիր Ագլ. Գլ. Ննխ. (=Մրգ. իւզած լիլ).

**հարակատար.— սիրած թող լինիմ (ըլլամ) Ագլ. Գլ. Ջղ. Ննխ. (=Մրգ. թօ(ղ) իւզած ըլիմ).*

**գերակատար.— սիրած թող լինէի (ըլլալի) Ագլ. Գլ. Ջղ. Ննխ. (=Մրգ. թօ(ղ) իւզած ըլիմ էր).*

Ե. ԲԱՂԱԴՐՅԱԼ ԱՊԱՌՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՁԵՎԵՐ

Դրաբարի մեջ ինչպես անցյալը, նմանապես և ապառնին ունի երեք բաղադրյալ ձև, որոնք կազմվում են ապառնի դերբայից (-լոց) և կոչվում են ներկա ապառնի, անկատար ապառնի և ստորադասական ապառնի։

Այստեղ դնում եմ չորս լծորդությանց կրկին սիպարների այս երեք ձևերի խոնարհումը.

Ներկա ապառնի	անկատար ապառնի	ստորադասական ապառնի
սիրելոց եմ	սիրելոց էի	սիրելոց իցեմ
» ես	» էիր	» իցես
» է	» էր	» իցէ

սիրելոց եմ	սիրելոց էաք	սիրելոց իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

հատանելոց եմ	հատանելոց էի	հատանելոց իցեմ
» ես	» էիր	» իցես
» է	» էր	» իցէ
» եմք	» էաք	» իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

խօսելոց եմ	խօսելոց էի	խօսելոց իցեմ
» ես	» էիր	» իցես
» է	» էր	» իցէ
» եմք	» էաք	» իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

ուսանելոց եմ	ուսանելոց էի	ուսանելոց իցեմ
» ես	» էիր	» իցես
» է	» էր	» իցէ
» եմք	» էաք	» իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

աղալոց եմ	աղալոց էի	աղալոց իցեմ
» ես	» էիր	» իցես
» է	» էր	» իցէ
» եմք	» էաք	» իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

գողանալոց եմ	գողանալոց էի	գողանալոց իցեմ
» ես	» էիր	» իցես
» է	» էր	» իցէ
» եմք	» էաք	» իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

Թողլոց եմ	Թողլոց էի	Թողլոց իցեմ
» ես	» էիր	» իցես

Թողլոց է	Թողլոց էր	Թողլոց իցէ
» եմք	» էաք	» իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

զգենլոց եմ	զգենլոց էի	զգենլոց իցեմ
» ես	» էիր	» իցես
» է	» էր	» իցէ
» եմք	» էաք	» իցեմք
» էք	» էիք	» իցէք
» են	» էին	» իցեն

Այս ձևերը կարելի է թարգմանել արևելյան աշխարհաբարում՝

սիրելոց եմ «սիրելու եմ»,
սիրելոց էի «սիրելու էի»,
սիրելոց իցեմ «սիրելու լինեմ».

Նույնը արևմտյան աշխարհաբարում՝

սիրելոց եմ «պիտի սիրեմ»,
սիրելոց էի «պիտի սիրէի»,
սիրելոց իցեմ «պիտի սիրեմ».

Միջին հայերենում այս -լոց ձևի դերբայը չէր գործածվում, գոնե ոչ մի օրինակ չէ ավանդված: Նրա տեղ անցել է մի ուրիշ դերբայ՝ -լոյ վերջավորութիւմբ, որ անորոշ դերբայի սեռականն է (բայց ոչ թե տրականը): Այսպիսի մի ձև գործածական էր նաև հին գրաբարում. ինչպես՝

Տացէ ինձ հաց ուտելոյ և հանդերձ զգենլոյ:
Միթէ տունս ոչ ունիցիք ուտելոյ կամ ըմպելոյ:

Ուրիշ լեզուների մեջ էլ կա այսպիսի գործածութիւն. օրինակ՝ ֆրանսերեն pain à manger «ուտելու հաց», de l'eau à boire «խմելու ջուր». բայց սրանց մեջ անորոշ դերբայը տրական հոլով է դրված, ինչպես որ հայոնի կերպով ցույց է տալիս նախդիրը: Բայց հայերենի մեջ պետք է ընդունենք սեռական, ինչպես պահանջում է հարադիր գոյականը (հաց ուտելոյ): Նույնիսկ եթե առնենք երկրորդ օրինակը (տուն ուտելոյ), դարձյալ անորոշ դերբայը սեռական է, որովհետև ենթադրում է վասն նախադրութիւնը, որ սեռական խնդիր է սառնում (տուն վասն ուտելոյ ի նմա):

Միջին հայերենում այս դերբայը երեք գործածություն ուներ.

1) Իբրև ածական, որ գրաբարի էլ միակ ընդունված ձևն էր և որ շարունակվում է այժմ էլ աշխարհաբարում. ինչպես՝ անասուն ուտելոյ=«ուտելու անասուն»,

հալելոյ դեղերն, զհալելոյ դեղերն.
Ջուր մի՛ տաս խմելոյ (ԺԲ դար):

2) Իբրև գոյական, առաջանում է նույն ածականի հարադիր գոյականը զեղչելով. ինչպես՝ զհալելոյն հալէ, այսինքն «զհալելոյ դեղերն հալէ»: Այս դեպքում գոյականացած առնված դերբայը կարող է հոլովվել, բայց միայն հայցական. ինչպես՝

ի վերոյ գրեալ դեղերոյս՝ զլուսելոյն լուսէ.
զաղալոյն ի դեղերոյս՝ աղա՛.
զաղալոյն աղա:

3) Իբրև բուն դերբայ, որ միացած է լինում օժանդակ բայի հետ. ինչպես՝

Զայլ դեղերն որ հալելոյ է և զայլ դեղերն որ աղալոյ է.
Յայս դեղերոյս՝ զոր հալելոյն է՝ հալէ.
Զայն խեժերն՝ որ չէ լուսելոյ.
Ի խեժերոյն որ չեն ծեծելոյ՝ դուն ներս լից.
Զոր հեշտն է ճանչելոյ՝ մենք այժմ գրեցաք:

Այս ձևն է, որ ավելի ուշ պիտի դառնա աշխարհաբարում -լու, ինչպես որ կա արդեն գրված միջին հայերենում. օրինակ՝

որ քաղելու (փխ. քաղելոյ) լինի:

Բարբառների մեջ ունենք երկու ներկայացուցիչներ, որոնք գրաբարի -լոց ձևի դերբայը պահում են կենդանի մինչև այժմ: Առաջինն է Ագուլիսի բարբառը, որ գրաբարի -լոց ձևը դարձրել է -լոց, -լաց, և նրա միջոցով և եմ էականի կամ ելիլ «լինել» օժանդակի հարադրությամբ կազմում է հետևյալ բաղադրյալ ձևերը.

թկէլոց ըմ «թակելու եմ»
» ըմ նէլ «թակելու էի».
» նոմ «թակելու լինեմ».
» նոմ նէլ «թակելու լինեի»
» ըմ նիլ «թակելու կլինեմ».
» ըմ նէլ նիլ «թակելու կլինեի»:

Երկրորդն է Նոր-Ջուղայի բարբառը, որ ունի -լեց ձևը. օրինակ՝ սիրելեց, խաղալեց, մնալեց և այլն: Այս ձևը հատուկ է հընդկահայ բարբառին և գործածական է թե՛ դրականի և թե՛ բացատրականի հետ՝ էական բայի ներկա և անկատար ձևով միացած: Այսպես են՝

կատարելէց ամ	(Dial.	*19*	*թողալէց չեմ*	(Dial.	*23*
չի թողալէց	»	*16*	*չեմ առալէց*	»	*26*
չե՞ս կամենալէց	»	*30*	*չէր ունենալէց*	»	*42*
գ՚գ՚անելէց աս	»	*26*	*չեմ տալէց*	»	*46*
չեմ առելէց	»	*37*	*չի ծնալէց*	»	*49*
թվալէց չի	»	*38*	*կատարելէց ի*	»	*49*
գ՚ալէց ամ	»	*40*	*չի գ՚ալէց*	»	*51*
բ՚ժշկելէց չի	»	*41*	*չես երգելէց*	»	*50*
կաշտացնելէց չի	(Լէյլի	*115).*			

Նույն ձևը գտնում ենք նաև Գիլանենցի ժամանակագրության մեջ. այսպես՝ Էտոռնք թողելէց չենք (էջ 193). Ասկար կալ գալէց շատ (էջ 206). Ինչ անի գառնալէց (էջ 209) և այլն:

Այս ձևի դերբայը գործ է ածվում նաև իբրև անորոշ ապառնի, որ ներկայի էլ միտք ունի: Սրա համար իբր օրինակ մեջ եմ բերում «Ճառ ի վերայ ապ.» գրքից հետևյալ հատվածները.

Տեսնես միմեանց կուլով կընդգանեն իւրեանց մայրենի լեզուովն կիսօսեն առանց կուշտանալու, օտարութեան, այսինքն գարբուքեան մէջ քաշած նեղութիւններէն այլևս չեն մտածելիք, անուշ հայեցուածով միմեանց երես կականեն և չեն ուզելիք բաժանուիլ լիրարից (էջ 25):

Ջխուդն (հրեայ) ջխուդ ասվիլ չի ախրելիք (էջ 30):
Մարդ չի սխալելիք, եթէ ասի... (էջ 35):
Հայն երբէք այլում որոգալիք չի լարելիք (էջ 36):
Ախորժ չի գալիք միևնույն եղանակն միշտ լսել (էջ 52):

Այս երկու ձևերը (-լոց=լաց և լեց) թեև գրաբարի -լոց ձևի շարունակությունն են, բայց նրա ուղիղ գծով հաջորդությունը չեն: Ինչ ձևից են առաջանում:

Ագուլիսի բարբառով կարելի չէ որոշել այդ, որովհետև բազմաթիվ բառերի մեջ, շեշտից հետո, թե՛ ա, թե՛ այ և թե՛ եա կարող են դառնալ Ագլ. ա և ա: Իսկ Նոր-Ջուղայի բարբառի է ձայնը կանոնավոր ներկայացուցիչն է գրաբարի եա երկրաբառի:

հոդնակիի եր, ենք մասնիկները և անցյալ դերբայի -ել վերջավորությունը, որոնք ծագում են ուղղակի գրաբարի (և միջին հայերենի) -եար, -եար, -եալ ձևերից, բավական ապացուցում են այդ: Ըստ այմ ապառնի դերբայի -լից ձևն էլ ծագած պիտի լինի գրաբարի -լեաց ձևից, որին հակառակ չէ Ագաթիսի բարբառը:

Ըստ այմ Ագաթիսի, Նոր-Ջուղայի և Հնդկահայոց ուսել եմ, բերել եմ և այլն ձևերը ծագում են գրաբար ուսելեաց եմ, բերելեաց եմ և այլն ձևերից:

Ինչից է առաջացել այս -լեաց ձևը: Ինձ թվում է, թե այս -լեաց ձևը -լիք դերբայի սեռականն է: Ինչպես անորոշ դերբայի սեռականից միջին հայերենում և բարբառներում առաջացել է -լոյ >-լու (բերելոյ>բերելու) ապառնի դերբայը, նույնպես և -լիք ձևի սեռականը: Նախապես ասել են օրինակ՝ ուսելեաց կերակուր, պառկելեաց անկողին, հագնելեաց շորեր և այլն, որ և հետո ընդհանուր ձև է դարձել:

Մնացյալ բոլոր բարբառներում -լոց ձևը ջնջված և նրա փոխարեն սովորական է դարձած -լու ձևը, որ միջին հայերենի և գրաբարի -լոյ սեռականի շարունակությունն է: Միայն մի քանի բարբառներ այս -լու ձևն էլ դարձնում են -լիս, ինչպես՝ վն. ուզելիս, Ոզմի ուզիլիս, Ուրմիա՝ լսելիս:

Այստեղ բացառություն է կազմում մի աննշան բարբառ. դա է թրքախոս կեսարիայի կողքին, հալախոս էֆքերև գյուղի բարբառը, որ այս -լու ձևի տեղ ունի -լի. ինչպես՝

էրթալի եմ «պիտի երթամ»,
ըլլալի եմ «պիտի ըլլամ»,
գալի եմ «պիտի գամ»,

(Ալպոյաճյան, Պատմ. հայ կես. Բ. 1635):

Ըստ իս այս -լի միևնույնն է ինչ որ -լու>լոյ: Ժողովուրդը դիտակցել է, թե այս -լոյ ձևը սեռական է միայն և փոխանակ հոլովելու ու հոլովմամբ, վերածել է -ի ընդհանուր հոլովմանը: Այս միևնույն երևույթը գտնում ենք նաև Ղարաբաղի բարբառում, բայց այստեղ ոչ թե խոնարհման մեջ, այլ միայն հոլովման ժամանակ. ինչպես՝

Հընչ օնիս ըսէլի «Ի՞նչ ունես ասելու».
Ասէլի մըտար «խոսելու համար»:

Ինչպես որ անցյալ դերբայից կազմվում են բաղադրյալ ձևեր (թվով 20), նմանապես ապառնի դերբայից կազմվում են

(էական եմ և օժանդակ լինիմ բայերի միջնորդությամբ) գանագան բաղադրյալ ձևեր, որոնց թիվը է 12:

Սահմանական

պարտավորական ներկա.— սիրելու եմ (Ագլ. Պլ. Ջդ.), Մրդ. իւզօլու իմ, Որմ. լսէլիս չէմ.

պարտավորական անկատար.— սիրելու էի (Ագլ. Պլ. Ջդ.), Մրդ. իւզօլու իմ էր. Որմ. լսէլիս չէմ էր.

պարտավորական կատարյալ.— սիրելու եղայ (Ջդ. Ննխ. Պլ.), Մրդ. իւզօլու չէլամ.

*պարտավորական ապառնի.— սիրելու պիտի ըլլամ (Պլ.).

*պարտավորական ապառնի անկատար.— սիրելու պիտի ըլլայի (Պլ.).

պայմանական ապառնի.— սիրելու կլինիմ (կըլլամ) Ագլ. Ջդ. Ննխ. Պլ. (Մրդ. իւզօլու կըլիմ).

*պայմանական ապառնի շարունակական.— սիրելու կըլլամ կոր (Պլ.).

պայմանական ապառնի անկատար.— սիրելու կլինէի (կըլլայի) Ագլ. Ջդ. Ննխ. Պլ. (Մրդ. իւզօլու կըլիմ էր).

*պայմանական ապառնի անկատար շարունակական.— սիրելու կըլլալի կոր (Պլ.).

Ստորադասական

ապառնի.— սիրելու լինիմ (ըլլամ) Ագլ. Ջդ. Ննխ. Պլ. (Մրդ. իւզօլու ըլիմ կամ իւզոլ ըլիմ).

ապառնի անկատար.— սիրելու լինէի (ըլլայի) Ագլ. Ջդ. Պլ. Ննխ. (Մրդ. իւզօլու ըլիմ էր կամ իւզոլ ըլիմ էր).

ապառնի.— սիրելու եղիր Պլ. (Մրդ. իւզօլու լիլ):

Նշանակության կողմից՝ սիրելու ձևը տարբերվում է արևելյան և արևմտյան բարբառներում: Ինչպես որ արևմտյան բարբառներում պիտի սիրեմ սովորական ապառնի է, իսկ արևելյան բարբառներում պարտավորական, նմանապես արևելյան բարբառներում սիրելու եմ պարզ ապառնի է, իսկ արևմտյան բարբառներում պարտավորական: Միջին հայերենում սիրելոյ եմ ապառնի է, ուստի արևելյան հայերենի գործածությունը հնին համապատասխան է, հետևաբար և արևմտյան հայերենի գործածությունը հետին փոխառության արդյունք է: Միայն էֆքերևի բարբառն է, որ միջին հայերենի և արևելյան բարբառների նման -լի եմ ձևը գործ է ածում իբրև պատ ապառնի:

Որտեղից է առաջանում այս փոփոխությունը:

Տաճկերենի մեջ պարտավորական եղանակը կազմվում է meli, malə *մասնիկով, որ կցվում է բայի արմատի վերջին. ինչպես* almalə yəm *առնելու եմ,* sevmeli yim *սիրելու եմ (պետք է որ առնեմ, պետք է որ սիրեմ):*

Թրաբարի մեջ -լոց եմ թեև զուտ ապառնի է, բայց միջին հայերենի -լոյ ձևը զուտ ապառնի չէ: Օրինակ՝ գալն գեղերն որ հալելոյ է՝ հալէ, և գալն գեղերն որ լոսելոյ է՝ լոսէ.— այստեղ հալելոյ է, լոսելոյ է չեն նշանակում «պիտի հալվի, պիտի ծեծվի», այլ «պետք է հալվի, պետք է ծեծվի» և այս իմաստով նրանք համապատասխանում են գրաբարի հալելի, լոսելի, բողլի, բժշկելի և այլն (այն է հալելու ընդունակ, լոսելու համար և այլն) ձևերին: Դրա համար էլ Karst, *էջ 344—5 շատ ճիշտ է վարվել երկու ձևերն էլ թարգմանելով գերմաներեն -bar մասնիկով (schmelzbar, mahlbar, unheilbar և այլն): Հետաքրքրությունն այն է, որ միջին հայերենի ապառնի գերբայի -լոյ ձևը իր կերպարանքը փոխել է մի կողմից հին գրաբարի -ելի, -ւլի գերբայների համաձայն, և մյուս կողմից այն ընդհանուր լեզվական փոփոխության համաձայն, որով «պետք է» դառնում է «պիտի» (անց վերը): Թերևս այստեղ ազդեցությունն գործած լինի նաև տաճկերենի -meli ձևի պատահական նմանությունը:*

Ակսպիսով արևելյան հայերենը ունի 3 տեսակ ապառնի.

1) Կրերեմ (անորոշ իմաստով. հայտնի չէ, թե երբ կբերեմ թե ոչ).

2) պիտի բերեմ (սովորական իմաստով, մտադիր է և ինքն էլ ուզում է, որ բերե).

3) բերելու եմ (պարտավոր է գալ իրեն և անշուշտ պիտի բերե):

Արևելյան բարբառներում ապառնի գերբայի մի քանի տրիշ ձևեր էլ կան, որոնցից նույնպես կազմվում են դանազան բաղադրյալ ձևեր:

Սրանք են՝ -ական, ացկան, -ացուք ձևերը:

-ական ձևը հատուկ է Ղարաբաղի բարբառին. ինչպես՝ տրնըլա՛կան «առնելու», խմըլա՛կան «խմելու», մրռնըլա՛կան «մեռնելու», կրըլա՛կան «կարելու», բռըլա՛կան «առնելու», մուռընըլա՛կան «մոռանալու» և այլն: Սրանցից ունենք հետևյալ բաղադրյալ ձևերը.

Սահմանական ապառնի.— սիրըլական ըմ, սիրըլական ըս «սիրելու եմ, սիրելու ես» և այլն...

Սահմանական ապառնի անցյալ.— սիրըլական ի, սիրըլական իր «սիրելու էի, սիրելու էիր» և այլն...

Պարտավորական ապառնի.— սիրըլական պիտի, սիրըլական պիտիս «պետք է սիրեմ, պետք է սիրես» և այլն...

Պարտավորական ապառնի անցյալ.— սիրըլական պիտի, սիրըլական պիտիր «պետք է սիրեի, պետք է սիրեիր» և այլն...

Ստատկական ապառնի.— սիրըլական պիտի պիտի կամ սիրըլական պիտի պիտի ինիմ «սիրելու պիտի լինեմ» և այլն...

Անցյալ.— սիրըլական պիտի պիտի կամ սիրըլական պիտի պիտի ինի «սիրելու պիտի լինեի», սիրըլական պիտի պիտի կամ սիրըլական պիտի պիտի ինիր «սիրելու պիտի լինեիր» և այլն...

Ղարաբաղի -ա՛կան ձևի փոխարեն Ջուլֆայի գավառում գործածվում է այսպես կամ այսպես ձև, ինչպես՝ կիլլական ըմ «գալու եմ», կիննական ըս «գնալու ես», բռըլական ընք «առնելու ենք», գրկլական ընք «ուզելու ենք». (տես Նոր-դար, 1893, № 49):

Պարսկերենի մեջ անենք նման կազմություններ

puxtanī	*եփելու եմ*
pūšīdanī	*հագնելու եմ*
kəšīdanī	*քաշելու եմ*
kardanī	*անելու եմ*
kuštanī	*սպանելու եմ*
raftanī	*գնալու եմ և այլն:*

Այս ձևերը կազմված են -tan անորոշ գերբայի (-ել) վերջավորության վրա ավելացնելով -ī «-ական» վերաբերական ածականի մասնիկը: Նույն օրինակով կազմված է նաև հայերենը (Աճառ. Հայոց լեզ. պատմ. II, 315):

-ացկան ձևի դեպքը հատուկ է Մեղրիի բարբառին, ուր ունենք սրանից կազմված ապառնի և անցյալ ապառնի ձևերը. ինչպես՝

սիրըցկան ըմ		*սիրըցկան ըմ լո*
»	*ըս*	»	*ըս լո*
»	*ա*	»	*ա լո*
»	*ըք*	»	*ըք լո*
»	*ըք*	»	*ըք լո*
»	*ըն*	»	*ը լո*

Կարճանի բարբառում այս -ացկան ձևի փոխարեն ունենք -ացկուն. ինչպես՝

նիլացկան ըմ «գնալու եմ»,
նիլացկան ըս «գնալու ես»,
անըլացկան ըմ «առնելու եմ»,
ըռըլացկան ըմ «առնելու եմ»:

Երկու բարբառների զուգ մասնիկների համեմատությունը ցույց է տալիս, որ նրանք նույն են գնացական, մուրացկան, դիմացկան բառերի -ացկան մասնիկի հետ: Վերջինը ասված է նաև դիմացկուն՝ նման Կարճանի ձևին: Ուստի և այս -ացկանն էլ նույն է ինչ որ Ղարաբաղի -ականը՝ միայն Դ յոթդրության ձևից վերցրած (մնալ—մնացական):

-ա՛ցուք ձևի գերբայը հատուկ է նույնպես Ղարաբաղի բարբառին, ուր սակայն ավելի քիչ է գործածվում քան -ական ձևը. ինչպես՝ սիրըլացուք «սիրելու», կըրլացուք «կարելու», ըսըլացուք «ասելու», մուռըլացուք «մոռանալու» և այլն:

Ահա և սրանից կազմված բաղադրյալ ձևերը.

սահմանական ապառնի.— սիրըլացուք ըմ, սիրըլացուք ըս «սիրելու եմ, սիրելու ես»...

սահմանական ապառնի անցյալ.— սիրըլացուք ի, սիրըլացուք իր «սիրելու էի, սիրելու էիր»...

Այս ձևին նման է Տփղիսի բարբառի -ա՛ցու. ինչպես՝ սիրէլացու «սիրելիք», որ մեզ ծանոթ -ցու մասնիկն է, ինչպես՝ սիրացու, շաղկացու և այլն:

Այս բոլորից դուրս Ագուլիսի բարբառը ունի բաղադրյալ ապառնիի մի ուրիշ ձև, որ կազմվում է բայի անորոշ դերբայից՝ հետը խոնարհելով էական բայի ներկան: Այս ձևը համապատասխանում է արևելյան բարբառների կը մասնիկով կազմված ապառնիին, որ Ագուլիսի բարբառում բնավ գոյություն չունի: Օրինակ՝

Ագլ.

թակիլ ըմ	«կըմ ակամ»	ամլրիլ ըմ	«կսիրեմ»
» ըս		» ըս	
» ո		» ո	
» ըք		» ըք	
» ըք		» ըք	
» ըն		» ըն	

Զայնավորով սկսվող բառերը այս պարագային սառնում են և նախաձայնը. ինչպես՝ նահիլ ըմ, նահիլ ըս, նահիլ ո, նահիլ ըք, նահիլ ըն:

Այս և մասնիկը, որ ինչպես տեսանք, հանարան հղինակների ներգոյականի մասնիկն է, ցույց է տալիս, որ ապառնիի վերոհիշյալ ձևն էլ կազմված է ներգոյականից: Ըստ այսմ թա՛կիլ ըմ, սա՛յրիլ ըմ բուն նշանակում են ի թակել եմ, ի սիրել եմ. և այս բացատրությունն համապատասխան է գալիս ուրիշ բարբառների բացատական ապառնին՝ չեմ կարիլ, չեմ սիրիլ, որ բուն նշանակում է չեմ ի կարել, չեմ ի սիրել և այլն: Ուրիշ խոսքով Ագուլիսի բարբառի այս ապառնին միջին հայերենի այն ներկայաձևն է, որի մասին խոսել ենք վերը: Միջին հայերենում ներկան նաև ապառնի էր: Ագուլիսի բարբառը պահել է այս ձևը միայն ապառնիի իմաստով:

Ուրիշ բարբառներում, նույնպես և այստեղ, ապառնիի այս ձևը գործածական է էական իբր պատվեր կամ մեղմ հրամանի, ինչպես՝ գոկ սուխա՛րին ալ սա՛րուն գա՛րսիլ ըք օր ըրվի՛ս «այդ սուխարին էլ լավ կլարանք, որպեսզի երևա» (Ագաթ չի, էջ 22):

Բաղադրյալ անցյալ ապառնի

Հատուկ է միայն Ագուլիսի բարբառին:

Այս ձևը կազմելու համար ապառնիի վրա ավելացնում ենք ևել, որ հանդես է գալիս իբրև անցյալի մասնիկ. օրինակ՝

թակիլ ըմ նէլ	«կըմակէի»	ամլրիլ ըմ նէլ	«կսիրէի»
» ըս նէլ		» ըս նէլ	
» ո նէլ		» ո նէլ	
» ըք նէլ		» ըք նէլ	
» ըն նէլ		» ըն նէլ	

Վերջացնելու համար այս գլուխը տալիս եմ այստեղ արևելյան գրական լեզվի մեջ ընդունված և -լու գերբայով կազմված բաղադրյալ ձևերի պատկերը.

սիրելու եմ		սիրելու էի	
» ես		» էիր	
» է		» էր	
» ենք		» էինք	
» եք		» էիք	
» են		» էին	

սիրելու եմ լինում, սիրելու ես լինում...
սիրելու էի լինում, սիրելու էիր լինում...
սիրելու եղայ, սիրելու եղար, սիրելու եղաւ...
սիրելու լինեմ, սիրելու լինես, սիրելու լինի...
սիրելու լինէի, սիրելու լինէիր, սիրելու լինէր...
սիրելու կլինեմ, սիրելու կլինես, սիրելու կլինի...
սիրելու կլինէի, սիրելու կլինէիր, սիրելու կլինէր...
սիրելու պիտի լինեմ, սիրելու պիտի լինես, սիրելու պիտի լինի...
սիրելու պիտի լինէի, սիրելու պիտի լինէիր, սիրելու պիտի լինէր...

ԳԼՈՒԽ Ժ

ԹԵԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

1. ԹԵԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Կան լեզուներ, որոնք ունեն ինչպես ատոբադատական, նոյնպես և առանձին թեական և րդձական հղանակներ։ Հայերենը այդ կարգի լեզուներից չէ։

Դրաբարի մէջ թեական կազմելու համար դնում ենք թէ կամ եթէ շաղկապը և նրա հետ կցում ատոբադատական կամ սահմանական (ներկա և անկատար)։ Օրինակ՝

Թէ միայն մերձենամ ի հանգերձս նորա, փրկիմ.
Թէ հնար ինչ իցէ.
Եւ թէ կամիս.
Թէ որպէս ես ատուծոյ. եթէ որպէս ես ատուծոյ.
Եթէ իցէ հոգին ատուծոյ ի ձեզ բնակեալ.
Եթէ ոչ ատա, ուժգին առից.
Եթէ ոչ ասէր էր ատ մեզ.
Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել.
Սակ եթէ լինիցի, ժանգ եթէ լինիցի.
Եւ եթէ վշտանայ... և եթէ փոսատորի մի անգամ.

Միջին հայերենում թեական շաղկապն է թէ կամ եթէ, որ դրվում է ատոբադատականի վրա (այն է հին դրաբարի ներկան), ինչպես՝ եթէ հիլալէ, եթէ կենալ, եթէ առնու, եթէ լինի, եթէ մնանի (Karst 258)։ Բայց միջին հայերենը ունի նաև մի նոր ձև, որ չկա դրաբարում։ Այդ այն է, որ թեական նախադասութեան

հաջորդող գլխավոր նախադասութեան սկիզբը դնում է նա կամ նայ. օրինակ՝

Թէ լիճն երդնու, նա քիթ է (և) սպիկի «ևթե լիճը երդում անի, ուրեմն ապատ է և մաքուր»:

Թէ կարենան գնուել դինք ի տեղն, նա մեկն ասէ.

Թէ զգայ, նա պատեհ է որ ապա զարպասն լառաջ երթայ.

Եւ թէ ոչ, նա համքերէ պարոնն.

Եւ թէ ապալ կենալ սիկնոջն, նա պիտի որ ունենալ սիկինն դմէկալ կէան զապրնացն.

Այս նա երբեմն կարող է գործանալ ապա կամ աճա բառերով. ինչպես՝

Եւ թէ խոսին ֆալլէ ու չկովի, նա ահա որ սուտ է.

Եւ թէ լիճ չկամենալ երդնուլ, նա ապա բերեն գչավուշն:

(Karst 406)

Այս նա, նա ապա կամ նա աճա կարելի է արդի լեզուով թարգմանել «ուրեմն, ապա ուրեմն» բառերով:

Աբեմատակ բարբառներից մի քանիսի մեջ այս նա կցվելով նախորդ բային, որից անբաժան է ըմբռնվում, կազմել է թեական մի նոր ձև:

Պոլսի բարբառում նա դարձել է նե, որ իբրև մասնիկ կցվում է բայական բոլոր պարզ, բարդ և բաղադրյալ ձևերին (բացի հրամայականից և դերբայներից) և տալիս է նրանց թեական իմաստ: Այս դեպքում կարելի է նախադասութեան սկիզբը դնել նաև եթե շաղկապը (թրք. eyer), որ սակայն բնավ անհրաժեշտ չէ. որովհետև նե մասնիկը ստացել է հենց «ևթե» շաղկապի նշանակութիւնը: («Ուրեմն» իմաստը փոխվել դարձել է «ևթե»):

Ավելորդ եմ համարում մի առ մի դնել բոլոր բայական ձևերը՝ կցված նե մասնիկով և տալիս եմ միայն մի քանի օրինակ Պոլսի բարբառից.

Պաղամ նէ «ևթե խաղամ».

Պիտի խաղամ նէ «ևթե պիտի խաղամ».

Պաղալու ըլլամ նէ «ևթե խաղալու լինեմ».

Գացած ըլլալու ըլլալի նէ «ևթե գնացած լինելու լինեի».

Բռնելու կըլլալի կոր նէ «հենց որ բռնելու վրա էի լինում».

Բերելու պիտի ըլլայիր նէ «ևթե դու բերելու պիտի լինեիր».

Գացած եղած ըլլալի նէ «ևթե ես երթևիցի գնացած եղած լինեի»...

Պոլսի բարբառի թեական նե ձևը գոնում ենք նաև անփոփոխ Զրիմի բարբառում. օրինակ՝ Ինչքան մարդ կան նէ «ինչքան էլ մարդ որ կա» (Նավասարդյան, Հնքիաթներ, է 55 և այլն):

Նոր-Նախիջևանի բարբառում նե գարձել է նը, որ ճիշտ ինչպես Պոլսի բարբառում՝ կցվում է բոլոր բայական ձևերի վրա (բացի հրամայականից և դերբայներից) և կազմում թեական եղանակը: Այսպես՝

սահմանական ներկա.—դը բէրիմ	դը բէրիմ նը
անկատար.—դը բէրէլի	դը բէրէլի նը
սոորագասական ներկա.—լսիմ	լսիմ նը
սոորագասական անցյալ.—լսէլի	լսէլի նը
կատարյալ.—լսէցի	լսէցի նը
ապառնի.—բիդ լսիմ	բիդ լսիմ նը
անցյալ ապառնի.—բիդ լսէլի	բիդ լսէլի նը
սոորագասական հարակատար.—բէրած ըլամ, բէրած ըլամ նը	
սոորագասական անցյալ ապառնի.—բէրէլու ըլալի, բէրէլու ըլալի նը և այլն:	

Թեականի նը մասնիկը սովորաբար գրվում է բայի վրա և սրիշ բառ չի կարող մտնել նրանց միջև: Սակայն ալ շաղկապը կարող է բացառութեան կազմել և թե առաջ և թե հետո ընդունել նը մասնիկը. առաջ գրվելու պարագային՝ նը մասնիկի ը ձայնավորը կրճատվում և իրր մեկ բառ միանում է շաղկապին. ինչպես՝ Մեռցուննուս գոր գոր աճիս նալ՝ ասելու չիմ կամ... աճիս ալ նը և այլն:

Երբ մի քանի թեական բայեր իրար հաջորդեն, վերջինը միայն առնում է նը մասնիկը. ինչպես՝ եշթաս առնուս նը...

Թեականի նը ձևին մոտիկ նշանակութեան ունի իսկ մասնիկը (թրք. ասլ ise «ևթե»), որ սովորաբար ավելացվում է կատարյալի վրա և տալիս է «հենց որ, անմիջապես որ, երբոր» նշանակութիւնը. օրինակ՝ Մադին այազևիրր անցան իսկ «հենց որ մարտի ցրտերը անցան». խմեցիր իսկ «երբ որ խմեցիր»:

Նաև մասնիկը գոյութեան ունի նաև Կիլիկիայի բարբառում նը ձևով: Տանք մի քանի օրինակ.

Պաղամ նը «խաղամ նէ, ևթե խաղամ».

Դիսօձ նի նը՝ գիսա «ևթե տեսած լինեի՝ կասեի».

Գիլօձ էզօձ նամ նը կերած եղած ըլլամ նէ «ևթե կերած եղած լինեմ».

Գիլօձ էզօձ նի նը «կերած եղած ըլլալի նէ, եթէ կերած եղած լինեի».

Դիանալօ նի նը՝ գիտա «եթէ տեսնելու լինեի՝ կտեի».

Այս նաչն ը մասնիկը, պոլսահայ բարբառի նման, ունի նաև մի ուրիշ գործածութիւն. նշանակում է մի այնպիսի վիճակ կամ գործածութիւն, որի մասին խոսողը բոլորովին վստահ է և ուզում է խոսակցի սխալը հերքել. օրինակ՝

— Ըորնդ գ'իդիմ լուչ ան չէ գ'ուխցի «լավ գիտեմ, որ նա գողացած չէ»:

— Իս էօչվէօքիս դիսօ նը՞՞՞՞

Այսպիսի ը-ն խոսակցութեան մէջ տարբերւում է թեականը-ից մի երկար շեշտով:

Թեական այս ձևերը ցույց են տալիս նախ և առաջ թեութիւն կամ պատման. ինչպես՝ էշթամ նը «եթէ երթամ, երբոր երթամ». մինչև թաթոի նը «մինչև որ դադարի». ինչ պետք է նը տուր «ինչ որ պետք է՝ տուր»:

Թեական եղանակի բազմաթիվ ձևերի մէջ ամենից ավելի գործածական են բուն թեական ներկայի եղակի և հոգնակի երկրորդ դեմքերը, որոնք բացի թեականից, ունեն նաև մի տեսակ խնդրական, աղաչական հրամայականի նշանակութիւն. ինչպես՝ Տա նը «եթէ տաս, երբոր տաս», բայց նաև խնդրեմ տուր». օրինակ՝ Իդա մուկրատար տաս նը «Խնդրեմ, այդ մկրատը տուր»:

Թէ Պոլսի և թէ Նոր-Նախիջևանի բարբառում շատ անգամ այս ը մասնիկը լինում է հարցական և գործածվում է այնպիսի մի նախադասութեան մէջ, որ խոսողը դիտմամբ չէ արտայայտում, ինչպես՝

Պլ. Հապա անունը չի տար նէ՞...
Ննխ. Հապա անունը չի տար նը՞...
Պլ. Հապա ամէնն ալ առնէր էրթար նէ՞...
Ննխ. Հապա ալալ-մալալ առնէր էշթար նը՞...
(լրացում՝ այն ժամանակ ինչ պիտի անեինք):

Հայերէն թեական ը այ մասնիկի հետ բոլորովին նույն է հրնչում լազերէն na «եթէ, երբոր», որով կազմվում է ստորադասական ձևը. ինչպես՝ minon na եթէ տեմ, gopti na երբոր մանդամ (Adjarian, Etude sur la langue laze 42, 99): Նույն է դարձյալ հունարէն νά «որպեսզի, որ», որով նոր հունարէնում կազմվում է ստորադասական ձևը. ինչպես νά ἔχω որ ունենամ: Ծագում է հին հունարէն ἵνα ձևից: — Հայերէնի հիմնական նշանակութիւնը («ապա որեմն»), ցույց է տալիս, որ նմանութիւնը պատահական է:

2. ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Այս եղանակը տարածված է գլխավորապես Պոլսի և Նոր-Նախիջևանի (Ղրիմի), ինչպես նաև Սվեդիայի և Կիլիկիայի բարբառներում: Հաճախ կոչվել է պատմական, բայց այժմ չշփոթելու համար պատմական հոլովի և մանավանդ պատմական ներկայի հետ, կոչում եմ պատմողական:

Պատմողական եղանակը ցույց է տալիս՝

1) Ուրիշից լսված մի դեպք, որին շատ վստահութիւն ցույց չի տալիս պատմողը.

2) Հեգնանք կամ ծաղր:

Իմաստը ճշտելու համար համեմատել հետևյալ օրինակները.

Էրէկ դիշերուան կրակին (հրդեհին) երկու հարուր տուն էրեր է էղեր (անվատահութիւն).

Հազար էրէսնոց դիրքը մէկ սահաթէն կը կարդայ էղեր (ծաղր):

Այս ձևը կազմելու համար բոլոր բայական ձևերի վրա (թեականն էլ միասին) պետք է ավելացնել՝ Պոլսի բարբառում էղեր (<եղեր) դերբայածևը, իսկ Ղրիմի (Նոր-Նախիջևանի) բարբառում եղիլ է (<եղել է):

Համապատասխանում է թրքերէն imiš ձևին, որի գուտ թարգմանութիւնն է և որ նույնպես կազմում է թուրքերէնում պատմողական եղանակը՝ բայական բոլոր ձևերից:

Ավելորդ ենք համարում հիշել այստեղ պատմողական եղանակի ձևերի անվերջանալի շարքը և տալիս ենք միայն մի քանի օրինակ:

Պոլսի բարբառից.

Վաղը պիտի գալ էղէր...
Բէրէլու պիտի ըլլալիր նէ էղէր...
Գացած էղած ըլլալի նէ էղէր...
Հասնելու վրայ կըլլայ կոր էղէր...
Սիրած էղած ըլլալու ըլլալի նէ էղէր...

Նոր-Նախիջևանի բարբառից.

Կը լսիմ.— կը լսիմ էղիլ է.

Գանվիլ է.— գանվիլ է էղիլ է.
Պիտի էշթաս.— պիտ էշթաս էղիլ է.
Բերելու ըլաս նը էղիլ է.

Այսպես նաև մյուս բոլոր ձևերը, բացի դերբայներից:

Պլ. եղեր ձևը գրվում է միշտ բայից հետո. այսպես նաև Ղրիմի հին ձևը սովորաբար. բայց վերջինս կարող է նաև բայից առաջ գրվել. օրինակ՝

Իմ առնիս մէջը եղիլ *է աշակերտներ կը կարդացունէ (Պատկ. Բ 276).*

Ոմանք եղիլ *է ձևը կրճատելով գործ են ածում* էղըլ *է.*

Նոր-Նախիջևանի բարբառում, փոխանակ ասելու եղիլ *է, գործածվում է նաև գուտ թրքերեն իմիշ ձևը, ինչպես՝*

Պիտ էշթաս իմիշ «պիտի երթաս եղեր».
Բերելու ըլաս նը իմիշ «իբր թե երբոր բերելու լինես»
և այլն:

Առաջին ձևի նման՝ այս էլ, սովորաբար բայից հետո է գրվում, կարող է երբեմն էլ առաջ դրվել. ինչպես՝

Իմիշ հոն քոմաբը աժան կըլայ «իբր թե (ասում են) ածուխը այնտեղ էժան կը լինի (եղեր)»:

Իմիշ ձևը ավելի հեգնանքի համար կարող է քանի-քանի անգամ կրկնվել. օրինակ՝ Մարդուն մէկը, իմիշ, Գալուստ-ա, իմիշ, աս ինչը բօզայէդ (թրքերեն [bozaɣ] boza, buza *իմիշքը) վազ էկիլ իս իմիշ (Պատկ. Գ 39):*

Երբ միևնույն նախադասության մեջ մի քանի բայեր իրար են հաջորդում, եղեր ձևը կարելի է դնել միայն մի անգամ՝ վերջին բայի վրա. ինչպես՝

Վազը նոր պիտի ելլայ, երթայ, առնէ, կարէ, մեղի պիտի տայ եղեր:

Կիլիկիայի բարբառում պատմողական եղանակը կազմվում է ավելացնելով բայի վրա էղիյ է, որ համապատասխանում է ճիշտ Նոր-Նախիջևանի էղիլ է «եղել է» ձևին և տարբերվում է պոլսահայ բարբառի էղեր «եղել» դերբայական ձևից՝ միայն էական բայի հարացույցով:

Այստեղ էլ ավելորդ ենք համարում հիշել պատմողական եղանակի ձևերի անվերջանալի շարքը և տալիս ենք միայն մի քանի օրինակ.

Իս լը՝սիցի լայ իլիք դան փը՝լիլ է էղիլ է «ես լսեցի, որ երեք տուն փուլ է եկել եղեր».

Ան բը՝դիգ բօլուղը էօլը չիւլա հոց գուդի էղիլ է «Այն փոքրիկ երեխան օրը չորս հաց կուտէ եղեր» (ծաղր կամ հեգնանք).

Վօղը բիդի գ՛ո էղիլ է «վաղը պիտի գա եղեր».

Բի հասնը էղիլ է, ամմա չէ հասի «պիտի հասնի եղեր, բայց չէ հասել».

Հասնիլո վիլո գունա էղիյ է (=Պլ. «հասնելու վրա կըլլա էղեր»).

Սիլօձ էղօձ նի նը էղիլ է (=Պլ. սիրած էղած բլլալի նէ էղեր).

Բ՛իլիլո բի նի նը էղիլ է (=Պլ. բերելու պիտի բլլալի նէ էղեր).

Առօձ էղօձ նի նը եղիլ է, գուդի էղիլ է (=Պլ. առած էղած բլլալի նէ էղեր, կուտալի էղեր=թրքերեն alməš olməš olsayədəm əməš, verir idim imiš.

Երբ նախադասության մեջ մի քանի բաղադրյալ բայեր հաջորդում են իրար, էական բայը կարելի է դնել միայն մի անգամ. օրինակ՝

Առիլ գ՛ացիլ ու ձախիլ է «առել, գնացել ու ծախել է»:

Առօձ բ՛իլօձ ձախօձնինք նը. ը՝ոը՝նդ գունէլ «առած բերած ծախած ևթէ լինէինք, լավ կլիներ»:

Սվեդիալի բարբառում պատմողական եղանակը կազմվում է իղիր, մանավանդ իղիր ի (=Ննխ. եղիլ է) ձևերի օգնությամբ, որ ավելի հաճախ բայից առաջ կամ նախադասության սկիզբն է դրվում. օրինակ՝

Իս գ՛ացած իղիր իմ «ես գնացած եմ եղեր», որ և՝
Իղիր է իս գ՛ացիր իմ.
Իղիր է իս գ՛ացած իմ.
Իղիր է բըր ուդինք «պիտի ուտենք էղեր»:

Պատմողական ձևը գոյությունն ունի նաև Ում և ել ճյուղի բարբառներում. օրինակ Ղարաբաղի բարբառում:

Ղարաբաղի բարբառում պատմողական եղանակի բոլոր ձևերը կազմվում են ներկայի, անկատարի, ապառնիի, հարակատարի, անմիջականի (ինչպես և պարտավորականի) թե՛ ներկայի և թե՛ անկատարի կրկնակ ձևերի վրա ավելացնելով ըլալ (<լինել) դերբայը: Այսպես՝ Ղարաբաղ՝

սիրըմ ըմ ըլալ, սիրըմ ի ըլալ,
հնձիս ըմ ըլալ, հնձիս ի ըլալ,
կրըլնկան ըմ ըլալ, ալնցուք ըմ ըլալ,
կրըլնկան ի ըլալ, ալնցուք ի ըլալ,
կ'ըրած ըմ ըլալ, կ'ըրած ի ըլալ,
ձնացալ ըմ ըլալ, ձնացալ ի ըլալ,
հանէլալ ըմ ըլալ, հաս ու հաս ի ըլալ,
կ'ըրած պիտի ըլալ և այլն։

Արևելյան բարբառներում ամենից ավելի տարածված ձևերն են՝

սիրած եմ եղել (=Ջղ. սիրած ամ լելէլ, Ագլ. սիլրած ըմ Էլոծ, Մրդ. իւզած իմ լէլի).

սիրած էի եղել (=Ագլ. սիլրած ըմ նիլ Էլոծ, Մրդ. իւզած իմ էր լէլի).

սիրելու եմ եղել (=Մրդ. իւզոլու իմ լէլի).

սիրելու եմ եղել (=Մրդ. իւզոլու իմ էր լէլի).

Աբեղյան, Աշխ. քերակ. 1906, էջ 129, ընդունում է այս պատմողական եղանակի գոյությունը արևելյան գրականում և իբր օրինակ հիշում է կայ եղել, ունի եղել, գիտե եղել, որոնք «երբեմն գործ են ածվում և արևելյան աշխարհաբարում և նշանակում են «ասում են թե կա, եղել է, ասում են թե ունի, ունեցել է, ուրիշների ասելով՝ կա, ունի»։

Բայց Պոլսի բարբառում եղեր ձևը բացի հեգնանքից և անվստահությունից ունի նաև ճիշտ հակառակ իմաստը, և ցույց է տալիս մի ճշմարիտ իրողություն, որ առաջ չգիտեր և այժմ միայն իմացավ և հաստատ համառում է. ինչպես՝

Դուն պոլսեցի ես եղեր հա, ես չգիտէի։
Եղբայրդ սարսափելի ստախոս է եղեր, հիմայ հասկցայ։
Անոր կնիկը մեռած է եղեր շատոնց, նոր իմացայ։

Այս բոլորը նույն է թրքերեն imiš ձևի գործածության հետ։

ԳԼՈՒԽ ԺԱ

ԲԱՅԵՐԻ ՉԱՆԱՉԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

1. ԱԺԱՆՑՅԱԼ ԲԱՅԵՐ

Ըստ կազմության բայերը հայերենի մեջ կարող ենք բաժանել 3 տեսակի.

1) Պարզ բայեր, որոնք ուղղակի ժառանգություն են հնդեվրոպական նախալեզվից և որոնց արմատը պետք չէ որոնել հայերենի մեջ. ինչպես՝ տալ, լալ, գալ, ուտել, կենալ և այլն։

Կարող են լինել բայեր, որոնց ծագումը դեռ մեզ հայտնի չէ, բայց իրրև պարզ բայ պատկանում են այս խմբին։

2) Ածանցյալ կամ ածանցական բայեր (déverbatif) կոչվում են այն բայերը, որոնք առաջանում են նույն պարզ բայերից՝ զանազան մասնիկներով. այսպես են՝ անցողական, կրավորական, բացառական, հարցական, կրկնավոր, հաճախական և այլն բայերը։

3) Անվանական բայեր (dénominatif), որոնք կազմվում են գոյականից կամ ածականից՝ ստանալով որևէ բայական վերջավորություն։

Ականկրիա քերականության մեջ ածանցական բայերի դասակարգությունը մի քիչ տարբեր է։ Ածանցական (abgeleitete) կամ երկրորդական կոչվում են այստեղ այն բայերը, որոնք կազմված են պարզ (առաջին կարգի) բայերից. և են 1) կրավորական, 2) սաստկական, 3) ցանկական (désidératif), 4) անցողական, 5) անվանական բայեր։

Սրանցից կազմված են նոր ածանցական բայեր, որոնք կոչվում են երրորդական, ինչպես՝ ցանկականի կրավորականը, անցողականի կրավորականը կամ ցանկականը և այլն։

Ամեն լեզվի մեջ էլ կարելի է բնականաբար կազմել ալպիսի խառնուրդներ, ինչպես՝ հայերեն անցողականի բացասականը (չսիրցնել), կրավորականի բացասականը (չտրվիլ), հաճախականի կրավորականի բացասականը (չրկկռվիլ) և այլն։

Բայց կան լեզուներ, որոնք այս գետքաին էլ հասնում են ծայրահեղ աստիճանի։ Օրինակ՝ Թիջի կղզու լեզվով կարելի է կազմել հաճախականի փոխադարձի անցողականը. ալպես՝ çundrui «բարկանալ» բայից կազմվում է՝

ndau-vei-vaka-çundrui
«լաճախ իրար տալ բարկանալ»,

ուր ndau կազմում է հաճախականը, vei փոխադարձ և vaka անցողական։

Ալս կողմից շատ հարուստ է նաև Թուրքերենը, որից ահա մի բարդ օրինակ.

sev-iš-dir-il-é-me-mek

որ sev-mek «սիրել» բայի փոխադարձի անցողականի կրավորականի կարողականի բացասականն է, իրը «չկարողանալ իրար սիրցընել տալ», որ մի բայական ձևով պիտի լիներ հայերեն՝ «չսիրցրնվատիլ»!։

Պոլինեզյան հավալի լեզուն հաճախականի, սատականի և պատճառականի բազմաթիվ ածանցյալ ձևեր ունի, որոնց թվումը հետևյալն է. lawe «տանել» բայից.

laweia	կրավորական
hoolawe	պատճառական
hoolaweia	պատճառական կրավորական
lalawe	հաճախական
lalaweia	հաճախական կրավորական
hoolalawe	հաճախական պատճառական
hoolalaweia	հաճախական պատճառական կրավորական
lawewe	հաճախական
loweweia	հաճախական կրավորական
hoolawewe	հաճախական պատճառական
hoolaweweia	հաճախական պատճառական կրավորական
lawelawe	սատական հաճախական
lawelaweia	սատական հաճախական կրավորական
hoolawelawe	սատական հաճախական պատճառական

hoolawelaweia	սատական հաճախական պատճ. կրավ.
lalalawe	հաճախական
lalalaweia	հաճախական կրավորական
hoolalalawe	հաճախական պատճառական
hoolalalaweia	հաճախական պատճառական կրավորական

(Andrews 103)

(Կրավորականի մասնիկն է ia, պատճառականի hoo, հաճախականն ու սատականը կազմվում են կրկնութիյամբ)։

2. ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՑ

Գործողութիյունը ենթական կարող է կատարել երկու ձևով, կամ ինքը անձամբ և կամ (եթե որևէ պատճառով ինքը անկարող է անել ալն) ուրիշի միջոցով։ Ալս երկրորդը կոչվում է անցողական (եվրոպական բառով causatif, որ է պատճառական)։ Օրինակ՝ գրեցի՝ ցույց է տալիս, որ ես գործողութիյունը անձամբ իմ ձեռքով կատարեցի, իսկ գրել տվի (անցողական) ցույց է տալիս, որ ես ուրիշի ձեռքով կատարեցի ալդ գործողութիյունը (կամ ուրիշը արեց ինձ համար), որովհետև ես ժամանակ չունեի կամ գրել չգիտեի և կամ ձեռքս ցավում էր և այլն։

Զանազան լեզուներ հնարել են զանազան միջոցներ՝ անցողականը կազմելու համար։ Ալդ միջոցներն են՝

1) Կրկնութիյուն.— Սումերերենում բայի անցողականը կազմվում է կրկնութիյամբ, ինչպես gi դառնալ, gigi դարձնել (Bertin 13)։

2) Ձայնդարձ կամ ներքին ձայնավորի փոփոխութիյուն.— Ալպես հին բարձր գերմաներենում faran «կառքով երթալ» բայի անցողականն է fuoran «ալնպես անել, որ կառքով երթա, conduire»։

3) Մասնիկ.— Շատ լեզուներ անցողական կազմելու համար բայի արմատի վրա դնում են հատուկ մասնիկ. ալպես՝ սանսկրիտ bharati «բերում է» բայից անցողական bharayati «բերել է տալիս», Թուրքերեն yaz-maq «գրել» բայից yaz-dər-maq «գրել տալ», söyle-mek «ասել»— söyle-t-mek «ասել տալ», qač-maq «փախչել»— qač-ər-maq «փախցնել», արխազերեն i-z-ū-u-eit «գրում եմ ալն»— i-sə'-r-ü-u-eit «գրել եմ տալիս»։ Սրանց մեջ անցողական կազմող մասնիկներն են՝ սանսկրիտ ya, Թուրքերեն dər, ir, t, արխազերեն r և այլն։ Արաբերենում անցողականը կազմվում է taf'īl ձևով. ինչպես՝ ktb գրել— taktīb գրել տալ։

4) Օժանդակ բայ.— *Լեզուների մեջ ավելի սովորական է այս ձևը. այսպես՝ ֆրանսերենում անցողականը կազմվում է* faire *«անել» բայով, գերմաներեն* lassen *«թողնել» բայով, աֆղաներենում՝* kṛạl *«անել» բայով* (Gu. ir. phil. I 222), *ճապոներենում՝* saseru *«անել տալ» բայի հարադրությամբ։*

Լազերենում անցողականը կազմվում է գործել օժանդակ p'a *«անել» բայով, բայց սա այնպես է միացել արմատին, որ գործել է ուղղակի բայական մասնիկ. ինչպես՝ «գրել» արմատից* ćaráp'ab *«գրել եմ տալիս», čaráp'i «գրել տվի»* (Adjarian, Etude sur la langue laze, *էջ 93 և* Марр, Гр. чан. яз. 59)։

Լազերենին պատահաբար նման է մալայո-պոլինեզյան բոնտոկ իգորոտ լեզուն, որ անցողականը կազմում է բայի վրա դնելով pa *մասնիկը. բայց այստեղ ոչ թե մասնիկը կցվում է բայի վերջից՝ ինչպես լազերենում, այլ սկզբից՝ իբրև նախամասնիկ* (Seidenadel 93)։

Նախամասնիկով անցողական են կազմում նաև ուրիշ լեզուներ, ինչպես՝

Ամերիկյան տենսա լեզվով lo-*նախամասնիկով. օրինակ* ûvlo-*սիրել—* lu-üvlo *սիրցնել* (Haumonte 24)։

Ամերիկյան միքս լեզվով yac- *նախամասնիկով. օրինակ* tumpotz *աշխատիլ—* yac-tumpotz *«աշխատացնել»* (Grasserie, Langue zoque, *էջ 328*)։

Օվկիանյան տահիթի լեզվով faa, haa *մասնիկով. ինչպես՝* mate *մեռնել—* haamate *մեռցնել, որի կրավորականն էլ լինում է* hia *մասնիկով՝* haamatehia *«մեռցվել»* (X? 20), haapii *սովորեցնել—* haapiihia *սովորեցվել (անդ 21)։*

Մոնղոլերենում yûl *մասնիկով. ինչպես՝* uzenäm *տեսնել,* uzûlnäm *ցույց տալ* (Gastrén, Burjat. 35)։

Բերբերյան Գհատ բարբառում անցողականը կազմվում է բայի սկիզբը դնելով s. *ինչպես՝*

enker *վեր կենալ,*	senker *վեր կացնել*
enkes *ծծել,*	senkes *ծծել տալ*

(Nehlil 48)

Բիրմաներեն լեզվի մեջ բայը անցողական է դառնում հետևյալ ձևերով.

ա) Ավելացնելով tse *«պատճառել» բայը, որով ամեն մի չեզոք բայ դառնում է ներգործական և ամեն ներգործական դառնում է անցողական. ինչպես՝*

t'ie *իմանալ, գիտենալ*—t'ietse	*տեղեկացնել*
tsaga pyau *խոսել*—tsaga pya tse	*խոսեցնել*

բ) Բայի առաջին բաղաձայնը վերածելով շնչեղի, ինչպես՝

kya *ցած ընկնել*—khya	*ցած գցել, ցած գնել*
krouk *վախենալ*—k'rouk	*վախեցնել*
nīt *ընկղմվել*—hnīt	*մխրճել*
luk *դողալ*—hluk	*մեկին դողացնել*

(Latter 127)

Պոլինեզյան հավալի լեզվով անցողական կազմելու համար բայի սկիզբը դնում են hoo *մասնիկը. ինչպես՝*

mala-mala-ma *լուա,*	hoo-mala-mala-ma *լուա տալ*
pokole *կարճ,*	hoo-pokole *կարճացնել*

(Andrews 17)

Բիրմանական լեպխա կամ ռոնգ լեզվով անցողական կազմելու համար բայի առաջին բաղաձայնից հետո ներմուծում են y *ձայնը. ինչպես՝*

thór *փախչել,*	thyór *փախցնել*
thóp *գետին գցել,*	thyóp *գետին գցել տալ*

(Grierson, *հատ. 3, մաս 1, էջ 240*)

Հիմալայան կամբա լեզվի բանինգ բարբառը անցողական շինելու համար ուժեղացնում է բայի նախաձայնը. ինչպես՝

dokko *ընկնել*—tokko	*տալ անկանել, գցել*
bokko get up *«վեր կենալ»*—pokko	*վերցնել*
gīkko *ծնվել*—kīkko	*ծնուցանել*

(Grierson, *հատ. 3, մաս 1, էջ 337*)

Նույնպես է նաև Հիմալայան վալու լեզուն. օրինակ՝

buk' *արթնանալ*—puk'—	*արթնացնել*
duk' *շարժվել*—thuk-to—	*շարժել*
bok *ծնվել*—phok—	*ծնուցանել*

(անդ, էջ 394)

Ղափիերեն լեզվով անցողականը երկու ձևով է կազմվում. ա) կազմվում է s *նախդիրով, որ հին ձևն է և այժմ քիչ է գործած-*

վում. բ) t նախդիրով, որ ti «տալ, թողնել» բայի հնացորդն է. օրինակ՝

sio կշտանալ, tsio կշտացնել
(Steindorff 119)

Բևլուջերենում անցողականը կազմում են արմատի վրա ավելացնելով ain մասնիկը կամ երկարելով արմատի ձայնավորը. ինչպես՝

k'ušaγ սպանել, k'ušainaγ սպանել տալ
t'ašaγ վագել, t'āšaγ վազեցնել
(Gilbertson 107—8)

Հալերենին պատահական նմանություն ունի Դրավիդյան տելուգու լեզուն, որ իր անցողական բայերը կազմում է ներգործականի վրա ավելացնելով inçu (ինցու). օր koṭṭu nçu կամ koṭṭīnçu «զարնել տալ, to cause to beat»:
(Lakshminarasayya 19)

Հնդկական հինդի լեզուն և ռաջասթանի լեզվի մարվարի բարբառը ունեն պարզ անցողական և կրկին անցողական. առաջինը կազմվում է á, āw մասնիկով, երկրորդը՝ wā, wāw մասնիկով. օրինակ՝

uḍaṇā «թռչել», որից uḍāwaṇō թռցնել, uḍawāwanō թռցնել տալ
(Grierson, հատ. 9, մաս 2-րդ, էջ 29)

Հնդկական գուջարաթի լեզվումն էլ անցողականը շինվում է āw մասնիկով. օրինակ՝ lakhwū գրել, lakhāwawū գրել տալ. կա նաև կրկնակ անցողական և անցողականի կրավորականը:
(Grierson, հատ. 9, մաս 2-րդ, էջ 343)

Հնդկական սինդհի լեզվում անցողականը կազմվում է արմատի վրա ավելացնելով ā. բայց կա նաև կրկին անցողական. ինչպես՝ phir դառնալ, phērā դարձնել, phērārā դարձնել տալ:
(Grierson, հատ. 8, մաս 1-ին, էջ 75)

Կովկասյան սրխխերեն լեզվում անցողական կազմելու համար երկու մասնիկ կա. ներմուծում են di, երբ սեռի խնդիրը եզակի է, կամ ներմուծում են γə, երբ սեռի խնդիրը հոգնակի է:
Կա նաև կրկին անցողական:
(Dumézil 66—67, 72)

Հնդկական դիլգիտի շինա լեզվով պատճառական բայ կազմելու համար արմատի վրա դնում են er կամ ar մասնիկը. օրինակ՝

banōiki հագնել, banērōiki հագցնել. կարող է նաև երկու անգամ դրվել մասնիկը, ինչպես՝

pacōiki եփվել, pačerōiki եփել
pačererōiki եփել տալ
(Grierson I, 1, էջ 374)

Հնդկական քաշմիրի լեզվով պատճառական բայը կազմվում է արմատի վրա ավելացնելով anāw մասնիկը. օրինակ՝ karun անել, գործել—karanāwun անել տալ: Թեև կրկին պատճառական բայ գտնվում է հինդի և հնդկական ուրիշ լեզուներում, բայց քաշմիրի լեզվում չկա: Կան մի խումբ բայեր այս լեզվում, որոնք անցողական են դառնում արմատի ձայնավորների երկարումով, ինչպես՝ marun մեռնել, mārun մեռցնել, lagun միանալ, lāgun միացնել:
Grierson, հատ. 8, մաս 2, էջ 310)

Ամերիկյան վապո լեզվով անցողականը կազմվում է omesi բայով, որ նախաձայնի կրճատումով դարձել է mesi և վերածվել է բայի վերջնահար մասնիկի (Radin 45):

Հնդկական սանտալի լեզվով a նախդիրը կազմում է մի նոր տեսակի պատճառական, օրինակ՝

jām «ուտել»—ajâ ուտելու բան տալ
ñu խմել—a ñū խմելու բան տալ
sän գնալ—asän „to lead about".
(Grierson, հատ. V, էջ 39)

Տիբեթերենում անցողական բայը կազմվում է hjug par «անել, պատճառել» բայով. օրինակ՝

hk'yer du hjug par
կամ hk'yer hjug par
«ուտեցնել տալ»
(Foucaux 79)

Հնդկական բարա (բադո) և բալոնգ լեզուների մեջ անցողականը կազմվում է as «տալ» բայով. ինչպես՝ gān-as «հագցնել». նույն խմբի հաջալի լեզվով էլ ri «տալ» բայով. ինչպես՝ kēng-ri «հագնել տալ», հագցնել»:
(Grierson, հատ. III, մաս II, էջ 51, 64)

Հնդկական սանտալի լեզվով անցողականը կազմվում է ocho մասնիկով, որ ունի երկու գործածություն. ա) կազմում է զուտ

պատճառական բայ, բ) կազմում է թուլլատրական բայ (to allow somebody to do something).

(Grierson, IV, 47)

Էթովպական սահո լեզվով պատճառական կազմելու համար բայի սկզբին դնում են s կամ i, կամ վերջում is, iš և կամ երկու ձևերն էլ միասին. օրինակ՝

aday գնալ — s-aday գնել տալ
bal տեսնել — t-bal ցույց տալ
ab անել — ab-is, ab-iš անել տալ

Նաև s-adag-iš, s-adag-š-iš, i-bal-iš, i-bal-š-iš, ab-š-iš, ab-š-iš-iš, այս միջոցներով կազմվում են կրկնակ և եռապատիկ պատճառական (Reinisch 444)։ Կրավորականն էլ կարող է անենալ պատճառական, և այն՝ կրկնակ և եռյակ. ինչպես՝ ab-š-im, ab-š-iš-im, ab-š-iš-š-im, որոնց մեջ im կրավորականի մասնիկն է։ Կա նաև պատճառական-անդրադարձ-կրավորական ձև. ինչպես՝ ab-š-iš-im-š-iš (անդ 446—7)։

Լազերենում կարելի է նաև կազմել կրկին անցողական. այս դեպքում առաջին անձը երկրորդ անձի միջոցով ստիպում է երրորդին անելու այնինչ գործողությունը. համմ. հետևյալ օրինակները.

Ութքարդ կխնալէր ձիուն և չէր ուզեր վազցնել. մինչև ուրիշները վրայ հասան և վազցնել տուին։

(Մեկը մի նամակ է ավել երկրորդ մի անձի, որպեսզի այս երկրորդը հանձնի երրորդին և ասում է) Եթե դու չես կրնար ճասցընել, ես (ուրիշի ձեռօք) ճասցընել կուտամ (Այան. 92)։

Այս օրինակների մեջ վազցնել, ճասցնել անցողական են, իսկ վազցնել տալ, ճասցնել տալ՝ կրկին անցողական։

Կրկին անցողական բայ անին կովկասյաններից չեչեն, բաց, ինգուշ լեզուները (Dumézil BSL 34, էջ 108)։ Նույնը կա նաև թյուրքերենի մեջ։ Թյուրքերենը ունի 2 տեսակ անցողական մասնիկ՝ առանց իմաստի խտրության, այն է dir (dər, dür) և t. առաջինը գրվում է բաղաձայնով վերջացող արմատների, երկրորդը՝ ձայնավորով վերջացող արմատների վրա. օրինակ՝

yaz-maq գրել—yaz-dər-maq գրել տալ
söyle-mek խոսել—söyle-t-meq ասել տալ

Երկու տարբեր մասնիկների գոյությունը պատճառ է դարձել, որ մասնիկների փոխանակությամբ առեղծվեն կրկնակի և եռակի անցողականի ձևեր թյուրքերենի մեջ։ Այսպես՝

öl-mek «մեռնել» բայից՝
öl-dür-mek «մեռցնել»
öl-dür-t-mek «մեռցնել տալ»
öl-dür-t-dir-mek «մեռցնել տալ տալ»!

(Jedlitschka, Türk. conv. gr. 109)

Նույնպես նաև՝

yaz-maq գրել
yaz-dər-maq գրել տալ
yaz-dər-t-maq գրել տալ տալ
yaz-dər-t-dər-maq (քառակի անցողական

(Ганіевъ, Самоуч. 52)

Կրկին անցողական բայ ունեն նաև՝

Ամերիկյան միքս լեզուն, որ yac- նախամասնիկով կազմում է պարզ անցողականը, իսկ սրա վրա ավելացնելով նաև tuc- նախամասնիկը, կազմում է կրկին անցողական. ինչպես՝

tuc-yac—putzoim-pôts «գուբս հանել տալ»
faire faire sortir.

(Grasserie, Langue Zoque 328)

Քամյան ամբար լեզուն պարզ անցողականը կազմում է բայի սկիզբը դնելով s. ինչպես՝

gafa սպանել—s-gafa սպանել տալ
ta-kataba իր համար գրել—s-ta-kataba իր համար գրել տալ։

Իսկ կրկին անցողական կազմելու համար՝ այս s-ից գուբս բայի վերջում էլ դնում են is մասնիկը. օրինակ՝ s-gaf-is սպանել տալ տալ։

(Colizza, 38—39)

Բայց այսպիսի դեպքերում հաճախ կրկնակի անցողականը պարզ անցողականի արժեք ունի. այսպես է չեչեն, բաց, ինգուշ, ինչպես նաև թյուրքերեն լեզուների մեջ։

Անցյալ դարի վրացի քերականները ասում են, թե վրացերենում, ուր անցողականի մասնիկն է ինեբ, կա 3-րդ, 4-րդ և այլ աստիճանների անցողական բայ։ Օրինակ՝

վակեթերիներ «տանել եմ տալիս»
վակեթերիներիներ «տանել տալ եմ տալիս»
վակեթերիներիներիներ «այնպես եմ անում, որ տանել տալ տա

ֆրանսերեն՝ j'obtiens de lui qu'il obtienne de lüi qu'il le lui fasse faire".

Բայց ծոզար մեջ բերելով այս բոլորը, ասում է, թե իրեն անծանոթ են նման ձևեր վրացերենում:

Կարելի է կազմել անցողական բայի կրավորականը. օրինակ՝ ճապոներեն՝ tabesaser-areru *«կերցվել», թուրքերեն* yaz-dər-maq *գրել տալ —* yaz-dər-el-maq *«գրել տրվել»:*

Ինչպես կան լեզուներ, որ կրկնակի անցողական ունեն, նույնպես և կան լեզուներ, որ բնավ անցողական չունեն: Այսպես է ռուսերենը, որ անցողականի պահանջը լրացնում է դանազան երկրորդական ձևերով: Փոխանակ ասելու կարճ ձևով «գրել տվեցի», կարելի է ասել՝

я сказал ему, чтобы он написал *ես ասացի նրան, որ նա գրի*
я предложил ему написать *ես առաջարկեցի իրեն գրել*
я просил его написать *ես խնդրեցի նրանից գրել*
я заставил его написать *ես ստիպեցի նրան գրել:*

Կարելի է սրանց խառնարդևներով կազմել նաև կրկնակի անցողականի ձևեր, ինչպես՝ «ես ստիպեցի նրան, որ խնդրի նրանից գրել...» և այլն:

Հնդեվրոպական նախալեզվի մեջ անցողականը կազմվում էր éye/o *կամ* i, ī *մասնիկով. սրանց ժառանգները պահված են դեռ սանսկրիտ, հունարեն, լատիներեն, հին սլավերեն և իռլանդերեն լեզուների մեջ:*

Գրաբարում հնդեվրոպական նախալեզվի անցողականի այս ձևը պահված չէ. նրա տեղ ունենք -ուցանեմ վերջավորությամբ մի ձև:

Այս մասնիկով անցողական կազմելու համար պետք է առնել սովորական բայի կատարյալի եզակի առաջին դեմքը, կրճատել նրա վերջին ձայնավորը և ճշտյալի վրա ավելացնել -ուցանել մասնիկը. օրինակ՝

ննջեմ — ննջեց-ի . . . ննջեցուցանել
կարծեմ — կարծեց-ի . . . կարծեցուցանել

բխեմ — բխեց-ի . . . . . բխեցուցանել
լիշեմ — լիշեց-ի . . . . . լիշեցուցանել
ըմպեմ — արբ-ի . . . . . արբուցանել
ճանաչեմ — ծանեալ . . . ծանուցանել
անցանեմ — անց-ի . . . . անցուցանել
իջանեմ — իջ-ի . . . . . իջուցանել
հատանեմ — հատ-ի . . . . հատուցանել
ամուսնանամ — ամուսնաց-ալ . ամուսնացուցանել
աշխատիմ — աշխատեց-ալ . . աշխատեցուցանել
խոնարհիմ — խոնարհեց-ալ . . խոնարհեցուցանել
ապրիմ — ապրեց-ալ . . . . ապրեցուցանել
լամեմ — լամեց-ի . . . . . լամեցուցանել
նստիմ — նստ-ալ . . . . . նստուցանել
փախչիմ — փախեալ . . . . փախուցանել
մատչիմ — մատեալ . . . . մատուցանել
գատչիմ — գատեալ . . . . . գատուցանել
ուսանիմ — ուս-ալ . . . . . ուսուցանել
թռչիմ — թռեալ . . . . . թռուցանել
երկնչիմ — երկեալ . . . . . երկեցուցանել
խաղամ — խաղաց-ի . . . . . խաղացուցանել
արբենամ — արբեց-ալ . . . . արբեցուցանել
մոռանամ — մոռաց-ալ . . . . մոռացուցանել
զօրանամ — զօրաց-ալ . . . . զօրացուցանել
արդարանամ — արդարաց-ալ . . արդարացուցանել
կեամ — կեց-ի . . . . . կեցուցանել
դառնամ — դարձ-ալ . . . . դարձուցանել
լնում — լց-ի . . . . . լցուցանել
զգենում — զգեց-ալ . . . . . զգեցուցանել

Այս կանոնից բացառություն են կազմում 4 բայ, որոնք փոխանակ առանալու -ուցանել մասնիկը, առանում են -ուզանել կամ -ուսանել: Այս բայերն են՝

կորնչիմ — կորեալ . . . կորուսանել
փլանիմ — փլալ . . . . փլուզանել (կամ և փլուցանել)
ընկղմում — ընկղալ . . . ընկղուզանել
ելանել — ելի . . . . . ելուզանել

Վերջին երկուսը կարող են բացառություն: Ընկղմում *«ընկղզ-*

մըվեմ, ջրի տակ կուլ գնամ» կազմված է կլնում (կլանեմ) բայից, բայց սրա անցողականը հայտնի չէ. ԱՐ տալիս է կլուցանել (գվռ. կլլեցնել) ձևը, որ երևի մեսրոպյան չէ: Ըստ այմ մեսրոպյան ձևը ենթադրել պետք է *կլուզանել:

Ելանել բայի անցողականը հայտնի չէ. հետևաբար կա ելուցանել. հետին է նաև ելուզանել. բայց որովհետև մեսրոպյան շըրջանից ունենք ընդ-ելուզանել, յելուզակուրիւն և մարդելոյզ բառերը, ուստի պետք է ենթադրել, թե ելանել բայի մեսրոպյան շրջանի անցողական ձևն է ելուզանել: Նույն շրջանից կա և ընդելուցանել, որ սակայն շփոթված է ընդելացուցանել բայի հետ:

Այս բոլոր բայերը անցողական են ըստ ձևի, բայց ըստ գործածութեյան նրանք բաժանվում են երկու տեսակի: Նրանք, որ կազմված են ներգործական բայից, իսկական անցողական բայեր են (խմել—խմցնել, սիրել—սիրցնել), իսկ նրանք, որ կազմված են չեզոք բայից, ըստ գործածութեյան պարզ ներգործական բայեր են և միայն մասնիկով նման են անցողականին (մեռնել—մեռցնել, քնել—քնեցնել): Տարբերութեյունը երևում է նրանից, որ բուն անցողական բայերը ստանում են երկու խնդիր, մին՝ սեռի խնդիր և մյուսը՝ բնութեյան խնդիր (օրինակ՝ նամակս կարապետին գրել տվի), իսկ ձևապես անցողական (ներգործական) բայերը ստանում են միայն մի խնդիր, որ է իրենց սեռի խնդիրը. օրինակ՝

Բուն անցողական բայեր

Վայ որ արբուցանէ ընկերի իւրում հրապոյրս պղտորս (Ամբ. Բ. 15).
Աբբոյց զիս դառնութեյամբ (Ողբ. Գ. 15).
Որ արբուցանէ զամենայն երկիր ի գինւոյ իւրմէ (Երեմ. Ծա. 7).
Արբո՛ ինձ սակաւ մի ջուր ի սափորոյ ալտի (Ս. Գր.).
Արբուցանս նոցա գինի (Ս. Գր.).
Արբուցանեն զամենայն ազգս հոդևոր կաթամբն (Ագաթ.).
Զգեցուացաս Ահարոնի զպատմուճանն սուրբ (Ս. Գր.)
Ծանուսցուք ձեզ բանս (Ս. Գր.).
Ծանուցէք ժողովրդոց գործս նորա (Ս. Գր.).
Ծանուցից սոցա զպօրութիւն իմ (Ս. Գր.).

Ներգործական բայեր

Իջուցին զբևռն իւրաքանչիւր ի գետին (Ս. Գր.).

Իջուցից ի վերայ քո զամենայն թռչունս երկնից (Ս. Գր.).
Իջուցանել զնա ի վիրապն ներքին (Ագաթ.),
Թռուցէ զմարմինս մարդկան ընդ երկինս (Եփր. ծն.).
Թռուցանէ նովաւ զմէգ իւր (Յոբ. իգ. 9).
Նովաւ հանդերձ թռուցանէ զմեզ (Եփր. ա. Թես.),
Արդարացուցանեն զամբարիշտն վասն կաշառոց (Ս. Գր.).
Առնարհեցո՛, Տէր, զանկն քո և լուր ինձ (Ս. Գր.).
Բրիստոս զմեզ ազատեցոյց (Գաղ. Գ. 31), համմ. Օրէնք ազատեցին զիս (Հռոմ. ը. 2):

Երկին ձևերի զանազանութեյունը գանում ենք նաև ուրիշ լեզուների մեջ: Այսպես արաբերենում تفعيل taf'il ձևը կազմում է չեզոքից ներգործական, իսկ ներգործականից անցողական:

Ամեն բայ կարող չէ առանալ -ուցանել մասնիկը, այլ շատ բայեր նրա փոխարեն առանում են տամ բայը, որ ծառայում է իբր օժանդակ՝ անորոշ դերբայի հետ. ինչպես՝ տամ սպասել, տամ իմանալ, տամ բերել, տամ ըմպել, տամ անցանել, տամ ուտել, տամ խօսել և այլն. օրինակ՝

Ետ նմա ըմպել.
Ետու առնել.
Ոչ ետ նմա ոգի առնուլ.
Տայ քեզ ճաշակել.
Տուր ինձ գիտել.
Տուր ընթեռնուլ գիրդ.
Ոչ տայ քեզ մտածել:

Երբեմն էլ կարելի է դնել առնել բայը. օրինակ՝ արժանի առնել՝ փոխանակ արժանացուցանել, բարձր առնել=բարձրացուցանել, խելամուտ առնել=խելամտեցուցանել, խոնարհ առնել=խոնարհեցուցանել, ուրախ առնել=ուրախացուցանել:

Օրինակները ցույց են տալիս, որ ինչպես -ուցանել, նույնպես և տալ կարող է գործածվել թե՛ չեզոքի և թե՛ ներգործականի հետ, նաև այն բայերի հետ, որոնք կարող են առանալ -ուցանել մասնիկը (ինչպես տամ ըմպել և արբուցանել) և նույնիսկ կարող է հարադրվել անցողականին, ինչպես՝ տուր անցուցանել:

Անցողական բայերը ունեն նաև իրենց կրավորական ձևը, որ կազմվում է ըստ սովորականին -եմ վերջավորութեյանը վերածելով -իմ. օրինակ՝

հատուցանեմ — հատուցանիմ
թաքուցանեմ — թաքուցանիմ
մատուցանեմ — մատուցանիմ
մածուցանեմ — մածուցանիմ
արբուցանեմ — արբուցանիմ
ծանուցանեմ — ծանուցանիմ
զատուցանեմ — զատուցանիմ

Այս կրավորական բայերի տարբերությունը իրենց չեզոքից այն է, որ չեզոքը ցույց է տալիս, թե ենթական կատարել է գործողությունը ինքնին, առանց ուրիշի օգնության. մինչդեռ կրավորականը ցույց է տալիս, որ ուրիշը այդ գործողությունը կատարել է նրա վրա, որին և ենթարկվել է նա: Օրինակ՝ թաքեաւ (չեզոք) նշանակում է «ինքը պահվեց կամ թաքնվեց», իսկ թաքուցաւ (կրավորական) նշանակում է, թե ինքը ուրիշի ձեռքով պահվեց կամ որ նույն է՝ ուրիշը նրան պահեց: Այսպես՝

Թաքեաւ ի ծնողաց իւրոց «ինքն իր ծնողներից, հորից ու մորից թաքնվեց, պահվեց».

Թաքուցաւ ի ծնողաց իւրոց (հայրն ու մայրը պահեցին նրան).

Հատուցաւ մանուկն ի սահնէ «մանուկը կաթից կտրվեց» (ոչ թե ինքնաբերաբար, այլ մայրը կտրեց նրան կաթից):

Ինչպես որ ամեն բայ չի կարող դառնալ անցողական, նույնպես և ամեն անցողական չի կարող անենալ իր կրավորականը: Անցողականներից կրավորական են դառնում միայն այն բայերը, որոնք կազմված են -ուցանեմ վերջավորությամբ, իսկ ացուցանեմ կամ եցուցանեմ վերջավորածները չունեն կրավորական:

Սովորաբար բայը եթե ներգործական է, կրավորականի տեղ նրա չեզոքն է գործածվում. ինչպես՝ Արդարացաւ յորդւոց իւրոց (և ոչ թե արդարացուցաւ):

Կամ փոխվում է ձևը և ուրիշ բառով է արտահայտվում. ինչպես՝ փախուցանիմ ասելու փոխարեն՝ փախստական առնիմ կամ փախստական լինիմ և այլն:

Երբեմն -ուցանեմ վերջացող բայերի փոխարեն էլ նրանց չեզոքն է գործածվում. ինչպես՝

Մատեաւ ի վերայ նորա պատարագ (փխ. մատուցաւ).
Ես կացի թագաւոր ի նմանէ (փխ. կացուցայ):

Ինում ենք այստեղ անցողական բայի խոնարհման մի օրինակ՝ իր կրավորականի հետ միասին:

Սահմանական ներկա

թաքուցանեմ	*թաքուցանիմ*
թաքուցանես	*թաքուցանիս*
թաքուցանէ	*թաքուցանի*
թաքուցանեմք	*թաքուցանիմք*
թաքուցանէք	*թաքուցանիք*
թաքուցանեն	*թաքուցանին*

Անկատար

թաքուցանէի	
թաքուցանէիր	
թաքուցանէր	նույնը ընդ ներգ.
թաքուցանէաք	
թաքուցանէիք	
թաքուցանէին	

Կատարյալ

թաքուցի	*թաքուցայ*
թաքուցեր	*թաքուցար*
թաքոյց	*թաքուցաւ*
թաքուցաք	*թաքուցաք*
թաքուցէք (-ցիք)	*թաքուցայք*
թաքուցին	*թաքուցան*

Ապառնի

թաքուցից	*թաքուցայց*
թաքուցես	*թաքուցիս*
թաքուցէ	*թաքուցի*
թաքուցուք	*թաքուցաք*
թաքուցէք (կամ թաքուցանիջիք)	*թաքուցիք*
թաքուցեն	*թաքուցին*

Հրամայական

թաքո	*(թաքուցիր)*
թաքուջիր	*թաքուջիր*
թաքուցանջիր	

մի թաքուցաներ	*(մի թաքուցանիր)*
թաքուցէք	*(թաքուցարուք)*
մի թաքուցանէք	*թաքուցջիք*

Սաորագասական ներկա

թաքուցանիցեմ	*թաքուցանիցիմ*
թաքուցանիցես	*թաքուցանիցիս*
թաքուցանիցէ	*թաքուցանիցի*
թաքուցանիցեմք	*թաքուցանիցիմք*
թաքուցանիցէք	*թաքուցանիցիք*
թաքուցանիցեն	*թաքուցանիցին*

Դերբայ

թաքուցանել	*(թաքուցանիլ)*
թաքուցանող	*չունի*
թաքուցեալ	*թաքուցեալ*
թաքուցանելոց	*թաքուցանելոց, -ցանելի*

Ինչպես տեսնում ենք՝ խոնարհումը ճիշտ նույն է հատանիմ և հատանիմ բայերի խոնարհման հետ։ Տարբեր է միայն հրամայականը, որ ունի ո՛ վերջավորությունը։

Այստեղ դնում ենք ՝ուցացեմ վերջավորող բոլոր բայերի ցուցակը, քաղելով Նոր Հայկազեան բառարանից և Համաբարբառից։ Մեսրոպյան շրջանի ձևերը նշանակված են աստղանիշով։

* *ազուցանեմ (հագցնել)*	* *աղտեղացուցանեմ*
* *ազուցանեմ (իջևան տալ)*	* *աղխուցանեմ*
* *ազատեցուցանեմ*	* *աղբատացուցանեմ*
* *ազդեցուցանեմ*	*աղօտացուցանեմ*
* *ազնուացուցանեմ*	* *ամենցուցանեմ*
աղոխացուցանեմ	20 *ամբիծնացուցանեմ*
ախորժեցուցանեմ	* *ամայացուցանեմ*
* *ախտացուցանեմ*	* *ամաչեցուցանեմ*
ածանցուցանեմ	*ամացուցանեմ*
10 * *ակնածեցուցանեմ*	* *ամբարհատճեցուցանեմ*
ահացուցանեմ	*ամիրացուցանեմ*
ահաւորացուցանեմ	* *ամուսնացուցանեմ*
ազատաղեցուցանեմ	*ամպացուցանեմ*
աղբերացուցանեմ	* *ամրացուցանեմ*

այտուցանեմ	* *ապատամբեցուցանեմ*
30 *ալրացուցանեմ*	* *ապրեցուցանեմ*
* *ալրեցուցանեմ*	*առագաստացուցանեմ*
անապատացուցանեմ	70 *առանձնացուցանեմ*
անարմատացուցանեմ	*առատացուցանեմ*
անգայտացուցանեմ	*առաւելացուցանեմ*
* *անդորրացուցանեմ (-ե)*	* *առաքինացուցանեմ (և)*
* *անդրանկացուցանեմ*	* *առիւծացուցանեմ*
աներեւեցուցանեմ	*ալկոցուցանեմ*
աներեւութացուցանեմ	*ամկալացուցանեմ*
աներկիւղացուցանեմ	* *ամմատուցանեմ*
40 *անզարդացուցանեմ (և)*	*առագացուցանեմ*
անզաւակեցուցանեմ	*առողջացուցանեմ*
* *անզգամեցուցանեմ*	80 *առոյգացուցանեմ*
անզգալացուցանեմ	*աստանդեցուցանեմ*
* *անզօրացուցանեմ*	*աստղացուցանել*
* *անխաչեցուցանեմ*	* *աստուածացուցանել*
անհետացուցանեմ	*առաքացուցանել*
անհոգացուցանեմ	*արագեցուցանել*
* *անձկացուցանեմ*	* *արբանեկեցուցանել*
անձնացուցանեմ	*արբեցուցանել*
50 * *անմահացուցանեմ*	*արբուցանել*
անմարդացուցանեմ	* *արդարացուցանել*
անմեղացուցանեմ	90 *արդիւնացուցանել*
անյայտացուցանեմ (և)	*արժանացուցանել (և)*
* *անշքացուցանեմ*	*արժանաւորեցուցանել*
* *անուշահոտացուցանեմ*	*արիացուցանել*
անուշացուցանեմ	*արիւնացուցանել*
անչափացուցանեմ	*արձակեցուցանել*
անպատեհացուցանեմ	* *արձանացուցանել*
* *անպիտանացուցանեմ*	? *արմատացուցանել*
60 * *անջատեցուցանեմ*	* *արշաւեցուցանել*
* *անցուցանեմ*	*արտացուցանել*
* *անօրացուցանեմ*	100 *արտածոդեցուցանել*
* *աշխատեցուցանեմ*	*արտակացուցանել*
* *ապաւինացուցանեմ*	*արտափայլեցուցանել*
* *ապաքինացուցանեմ*	*արտաքսեցուցանել*
* *ապշեցուցանեմ*	* *(աւաքեցուցանել)*

բազմամարդացուցանել
բազմապատկացուցանել (ե)
* բազմացուցանել
* բազմեցուցանել
բախեցուցանել
110 բաղկացուցանել
բազձացուցանել
* բանակեցուցանել
բանդագուշացուցանել
* բաջադեցուցանել
* բարբառեցուցանել
բարեկամեցուցանել
բարեկենդանացուցանել
բարեվայելչացուցանել
բարիցացուցանել
120 բարիացուցանել
* բարկացուցանել
* բարձուցանել
* բարձրացուցանել
բացագարձուցանել
բացաժանուցանել
բացակացուցանել
բացերևեցուցանել
բաւականացուցանել
* բաւեցուցանել
130 բերանացուցանել
բերկրացուցանել (ե)
բթացուցանել (ե)
բշշացուցանել (ե)
* բղխեցուցանել
* բնակեցուցանել
բնաւորեցուցանել
բոկացուցանել
բողբոջեցուցանել
* բորբոքեցուցանել
140 բորոտեցուցանել
* բուսացանել
* բուրեցուցանել (ա)

* բրտացուցանել
գազազացուցանել
* գազանացուցանել (ե)
գալարեցուցանել
գաղջացուցանել
* գալթակղեցուցանել
* գանգաչեցուցանել
150 * գառացուցանել
* գարշեցուցանել
* գգուեցուցանել
գեղեցկացուցանել
գերազանցուցանել
գթեցուցանել
գժգժեցուցանել
գիշերացուցանել
գիջացուցանել
գիտակացուցանել
160 գիտացուցանել
գիրացուցանել
գլորեցուցանել
* գնացուցանել
գոլացուցանել
* գոչեցուցանել
գրգեցուցանել
* գօսացուցանել
* գաղարեցուցանել
* գալարեցուցանել (ե)
170 գանգատեցուցանել
գանգաչեցուցանել
գաշտացուցանել
* գառնացուցանել
գասեցուցանել
* գատարկացուցանել
գարանեցուցանել
* գարձուցանել
գեղեցուցանել
գեղնացուցանել
180 գերեզմանացուցանել (ե)

(գժոխաժառանգեցուցանել) A
* դժպարտեցուցանել
* դիեցուցանել (ա)
* դիմեցուցանել
* դիպեցուցանել
* դիւրացուցանել
* դղրդեցուցանել
դնդչեցուցանել
(*) դողացուցանել
190 * դռնչեցուցանել
* դրդեցուցանել
դրդուեցուցանել
ելուցանել
* եկեղեցուցանել
եղակնացուցանել
եղկացուցանել
ենթակայացուցանել
ենթակացուցանել
* եռանդնացուցանել
200 * եռացուցանել
երազացուցանել
երաժշտացուցանել
երախտացուցանել (ե)
երամացուցանել
* երգիծ(եց)ուցանել
* երգմնեցուցանել
երեակայացուցանել
* երեսեցուցանել
* երիցացուցանել
210 * երկայնացուցանել
երկարացուցանել
երկբայեցուցանել
* երկեցուցանել
երկմտեցուցանել
երկուացուցանել
երկրպագեցուցանել
* զաղրացուցանել
* զալրագնացուցանել (ե)

* զայրացուցանել
220 զանազանացուցանել
* զանգիտեցուցանել
զանխլացուցանել
* զանցուցանել
* զառանցուցանել
* զատուցանել
զարգացուցանել
? զարդարեցուցանել
* զարթուցանել
* զարկուցանել
230 * զարհուրեցուցանել
* զարմացուցանել
* զբաղեցուցանել
* զբօս(այ)ուցանել (ե)
զգածուցանել
* զգաստացուցանել
* զգացուցանել
զգեստաւորեցուցանել
* զգեց(ուց)անել
* զգուշացուցանել
240 * զգօնացուցանել
զգօսացուցանել
* զեկուցանել
* զեղծ(եց)ուցանել
* զեղուցանել
* զեռացուցանել
* զեռեղեցուցանել
* զերծուցանել
* զկնաւորեցուցանել
* զիջուցանել
250 * զկծեցուցանել
* զղջացուցանել
* զմայլեցուցանել
* զնաուցանել
* զովացուցանել
* զուարթացուցանել
* զուարճացուցանել

դուգակացուցանել
դրաւեցուցանել
* դօրացուցանել
260 էացուցանել
ըմպահկեցուցանել
* ընդարձակեցուցանել
* ընդարմացուցանել
ընդդիմադարձուցանել
* ընդելացուցանել
* ընդելուցանել
* ընդողնեցուցանել
* ընդոստուցանել
? ընթացուցանել
270 * ընծալեցուցանել
ընկղմեցուցանել
* ընկողմանեցուցանել
ընկրկեցուցանել
ընչացուցանել
? ընտանեցուցանել
ըստանձնեցուցանել
* թագաւորեցուցանել
թաթաւեցուցանել
* թախանձեցուցանել
280 * թախծեցուցանել
* թանձրացուցանել
* թառամեցուցանել
թարախեցուցանել
* թարթափեցուցանել
թարշամեցուցանել
թացուցանել
* թաւալեցուցանել
թաւացուցանել
* թաքցուցանել
290 * թեթևացուցանել
թերացուցանել (ե)
թիթեւցուցանել
* թխացուցանել
* թմ(ր)ցուցանել
թնդեցուցանել (ա)
* թշուառացուցանել
* թոզացուցանել
թորեցուցանել (ա)
թորթոշեցուցանել
300 թորթորեցուցանել
* թուեցուցանել
* թուլացուցանել
* թռուցանել
* ժամանեցուցանել
* ժանգոտեցուցանել
* ժանտացուցանել
* ժառանգեցուցանել
ժուժկալեցուցանել
* ժտեցուցանել
310 ժրացուցանել
իգացուցանել
? իմաստ(ն)ացուցանել
* իմացուցանել
* իշխեցուցանել
* իջ(ևց)ուցանել
իրացուցանել
* իրաւացուցանել
իւրացուցանել
* լայնացուցանել (ե)
320 լացուցանել
* լաւացուցանել
լեռնացուցանել
? լիացուցանել
* լիտեցուցանել
* լոզացուցանել
* լուսցանել
(*) լուսացուցանել
* լուսաւորեցուցանել
* լռեցուցանել
330 * լսեցուցանել
* լսնեցուցանել (ա)
լցացուցանել
* լրջացուցանել
* լցուցանել

* լք(ևց)ուցանել
խաղաղացուցանել (ե)
* խաղացուցանել
խաղաւարտեցուցանել
* խամրացուցանել (ե)
340 խայծեցուցանել
? խալատառակեցուցանել
խալտացուցանել
(խանդարեցուցանել)
խանդաղատեցուցանել
խանդացուցանել
* խանձեցուցանել
* խաւարեցուցանել
խափանեցուցանել
* խափուցանել
350 խելագարեցուցանել
* խելամտեցուցանել
* խելայնորեցուցանել
խնդիջացուցանել (ե)
* խնկեցուցանել
* խիզախեցուցանել
խիթացուցանել
խլացուցանել
* խլրտացուցանել
* խնալեցուցանել
360 * խնդացուցանել
* խոնարհեցուցանել
խոնաւացուցանել (ե)
* խոշորեցուցանել
խոպանացուցանել
խոստացուցանել
խոստովանեցուցանել
* խոտորեցուցանել
խորացուցանել
խորթացուցանել
370 խորհրդազգածեցուցանել
խորշեցուցանել
* խուճապեցուցանել
խուսեցուցանել
* խոովեցուցանել
* խստացուցանել
խտացուցանել
խտղտեցուցանել
խրախացուցանել
խրախճացուցանել
380 խրճնացուցանել
խրոխտացուցանել
* խրտուցանել
խփուցանել
խօսեցուցանել
* ծագեցուցանել
* ծագկեցուցանել
ծալբացուցանել
* ծանուցանել
* ծանրացուցանել (ե)
390 ծանօթացուցանել
* ծառալեցուցանել
* ծառացուցանել
* ծաւալեցուցանել
ծերացուցանել
ծիծաղեցուցանել
* ծիրանացուցանել
* ծիւրեցուցանել
ծլեցուցանել
(ծխացուցանել)
400 ծմակեցուցանել
* ծնուցանել
ծոմացուցանել
* ծովացուցանել
* ծորեցուցանել (ա)
* ծուլացուցանել
* ծփեցուցանել
* կազդուրեցուցանել (ա)
* կաթեցուցանել
* կակղացուցանել (ե)
410 * կաղացուցանել

կամեցուցանել
կալլակնացուցանել
կալծակնաճաճանչեցուցանել
կալտահեցուցանել
կանաչացուցանել
կանխեցուցանել
* կառուցանել
* կասեցուցանել
* կատաղեցուցանել
420 * կարծեցուցանել
* կարծրացուցանել
* կարկամեցուցանել
* կարկաջեցուցանել
կարկափեցուցանել A
* կարկեցուցանել
կարճամեցուցանել
* կարմրացուցանել
* կարողացուցանել
կարօտացուցանել
430 * կացուցանել
* կափուցանել
* կաքաւեցուցանել
կենդանատրեցուցանել
* կենդանացուցանել
կենսացուցանել
կերպարանեցուցանել
կերպացուցանել
կերպաւորեցուցանել
կերտացուցանել
440 * կեցուցանել
* կիզեցուցանել
կիսացուցանել
կծեցուցանել
կծկեցուցանել
կնացուցանել
* կողկողեցուցանել
* կողմնեցուցանել
* կորացուցանել
կորդացուցանել
450 * կործանեցուցանել
կուտակեցուցանել
* կուրացուցանել
? կռապաշտեցուցանել
* կռուեցուցանել
* կսկծեցուցանել (ա)
կքեցուցանել
հակառակեցուցանել
հաղորդեցուցանել
(*) հաճեցուցանել
460 հաճոյացուցանել
համաձայնացուցանել
(համապատշաճեցուցանել)
* համարձակեցուցանել
* համբուրեցուցանել
համեղացուցանել
համեստացուցանել
համրացուցանել
* հայհոյեցուցանել
* հանգուցանել
470 հանդրիճեցուցանել
* հանդարտեցուցանել (ա)
հանդիպեցուցանել
հանդիսացուցանել
* հաշտեցուցանել
հաջեցուցանել
հասկացուցանել
* հասուցանել
* հատուցանել
* հարթուցանել
480 (հարկատրացուցանել)
հարկեցուցանել
հարսնացուցանել
* հարստացուցանել
* հաւանեցուցանել
հաւասարեցուցանել
հաւատացուցանել

* հաւատարմացուցանել
* հաւատացուցանել
? հեզացուցանել
490 * հեթանոսացուցանել
* հեծուցանել
* հեղգացուցանել
* հեղձուցանել
* հեշտացուցանել
* հետացուցանել
հետեւեցուցանել (ա)
հերձուցանել
* հզօրացուցանել
հիացուցանել
500 հիւծացուցանել (և)
* հիւանդացուցանել
(հմտացուցանել)
* հնազանդեցուցանել
* հնացուցանել
հնոցացուցանել
* հնչեցուցանել
հոգեւորեցուցանել A
հոգիացուցանել
հոգովացուցանել A
510 հոլանեցուցանել
* հոլովեցուցանել
* հողացուցանել
հողմացուցանել
* հոսեցուցանել
* հովանացուցանել (և)
հովացուցանել
հոտոտեցուցանել
* հպարտացուցանել
հպեցուցանել
520 * հրաժարեցուցանել
* հրաշարացուցանել
հրաշիկացուցանել
հրապուրեցուցանել (ա)
հրացուցանել
հրէացուցանել
հրեշտեցուցանել
* ձանձրացուցանել
* ձգտեցուցանել
530 ? ձեւացուցանել
ձիւնացուցանել
ղօղանջեցուցանել
* ղօղեցուցանել
* ճակատեցուցանել
* ճահիճացուցանել
* ճալթիթեցուցանել
ճալրոտեցուցանել
* ճաշակեցուցանել
ճառագալթացուցանել
540 ճարակեցուցանել
ճարտարացուցանել
* ճգնեցուցանել
* ճեմեցուցանել
ճեպեցուցանել
* ճմլեցուցանել
ճնշեցուցանել
* ճշդրտեցուցանել
* ճշմարտացուցանել (և)
ճոխացուցանել
550 ճռռոցեցուցանել
ճօճեցուցանել
* մաժուցանել
մակազարթուցանել
(մակակառուցանել)
մակաղեցուցանել
մակառեցուցանել
? մահացուցանել
մաղկառեցուցանել
* մաճկացուցանել
560 * մանկացուցանել
* մատաղեցուցանել
* մատուցանել

* մարդացուցանել
մարթացուցանել (և)
* մարմաջեցուցանել
մարմնացուցանել
մարտուցանել
մաքառեցուցանել
* մեծացուցանել
570 * մեկնեցուցանել
* մեկուսացուցանել
* մեղացուցանել
* մեղկացուցանել
* մեղմացուցանել
* մեղուցանել
* մեռուցանել
* մերժեցուցանել
* մերկացուցանել
* մերձաւորեցուցանել
580 * մերձեցուցանել
* մթացուցանել
միաբանեցուցանել
միացուցանել
միաւորեցուցանել
միացուցանել
մշակեցուցանել
մոլեցուցանել
* մոլորեցուցանել
մոխրացուցանել
590 * մռռացուցանել
մորմոքեցուցանել
մռայլեցուցանել
* մտաբերեցուցանել
մտուցանել
մօտեցուցանել
* յագեցուցանել
* յածեցուցանել
(*) յաղթեցուցանել
* յաճախեցուցանել
600 * յամեցուցանել
(յայտերևեցուցանել)
* յանգեցուցանել
յանդգնեցուցանել
* յանկուցանել
յանձնեցուցանել
? (յանգեցուցանել
* յանցուցանել
յապահովացուցանել
* յապաղեցուցանել
610 * յառաջեցուցանել (ա)
յարակայացուցանել
յարակացուցանել
յարդեցուցանել
* յարեցուցանել
յարկացուցանել
յարձակեցուցանել
յարմարեցուցանել
* յարուցանել
յաւէժացուցանել
620 յաւէտացուցանել
յափուցանել
* (յափրացուցանել)
յերկարացուցանել
(յերկուացուցանել)
* յեցուցանել
* յիմարեցուցանել (ա)
* յիշեցուցանել
յիրեցուցանել
* յղացուցանել
630 ? յղփացուցանել
յոլովացուցանել
* յոդդողդեցուցանել
* յոռեցուցանել (ա)
յորդորեցուցանել
* յուլացուցանել
* յուղացուցանել
* յուսացուցանել
* յստակեցուցանել

* յօդացուցանել (և)
640 * յօժարեցուցանել (ա)
նազեցուցանել
նախագոյացուցանել
նախագկուցանել
նախածանուցանել
նախաճանապարհորդեցուցանել
* նախանձեցուցանել
* նահատակեցուցանել
* նալացուցանել
նալեցուցանել
650 նեղացուցանել
ներկացուցանել
ներմծացուցանել
ներքինացուցանել (և)
* նիրհեցուցանել
նիւթացուցանել
նկարեցուցանել
* նմանեցուցանել
* ննջեցուցանել
* նշմարեցուցանել
660 նշողացուցանել
* նողկացուցանել
նորացուցանել
* նուազեցուցանել
* նուաղեցուցանել
նուաստացուցանել
նսեմացուցանել
* նստուցանել
ներբացուցանել
* շաբաթացուցանել
670 * շահեցուցանել
շառագունացուցանել (և)
շառաչեցուցանել
շառաւիղացուցանել (և)
շատացուցանել
շարամտեցուցանել
շարժեցուցանել
* շիջուցանել
* շլացուցանել
* շլմորեցուցանել
680 շնչացուցանել (և)
* շողացուցանել
շուրջբնակեցուցանել
շտապեցուցանել
* շրջեցուցանել
? շրտուցանել
* շքեղացուցանել
* շքմեղացուցանել
ոլորտացուցանել
* ոխացուցանել
690 ողբացուցանել
* ողորկեցուցանել
ողջախոհացուցանել (և)
* ողջացուցանել
ոչնչացուցանել
ոսոսացուցանել
որակացուցանել
որպիացուցանել
ործացուցանել
որովայնազդեցուցանել
700 որովայնացուցանել
ուժգնացուցանել
ուժեղացուցանել
ուժգացուցանել
ունակացուցանել
* ունայնացուցանել
* ուռուցանել
* ուսուցանել
ուրախացուցանել
* ուրացուցանել
710 ուրբաթացուցանել
* չարացուցանել
չորացուցանել
* չուառեցուցանել
* չքացուցանել

* պախեցուցանել
* պակասեցուցանել
պակշեցուցանել
(պակշոտեցուցանել)
պակ(ևց)ուցանել
720 պահպանեցուցանել
պալթեցուցանել
* պալթուցանել
* պալծառացուցանել
* պանդխտեցուցանել
պանծացուցանել
* պապանձեցուցանել
* պառակտեցուցանել
պառիկեցուցանել
* պաստիկեցուցանել
730 պատահացուցանել (և)
պատեհացուցանել
պատերազմեցուցանել
* պատկառեցուցանել
պատկերացուցանել
պատշաճեցուցանել
* պատռպատելեցուցանել
պատրաստեցուցանել
* պարապեցուցանել
պարբերացուցանել
740 պարծեցուցանել
պարկեշտացուցանել
պարսպեցուցանել
* պարտասեցուցանել
* պարտաւորեցուցանել
(պարտեցուցանել)
պերճացուցանել
պիտանացուցանել
* պշուցանել
պոռնկեցուցանել
750 * ջահացուցանել (և)
ջամբեցուցանել
* ջանացուցանել
ջնռացուցանել
* ջնռուցանել
ջերմացուցանել
ջերմեցուցանել
ջլացուցանել
ջրդողեցուցանել
* սակաւացուցանել
760 * սահեցուցանել
սաղապեցուցանել
սաղմնաւորեցուցանել
սալթաքեցուցանել
? սառնացուցանել
սառուցանել
* սասանեցուցանել
* սաստկացուցանել
սատանայացուցանել
սարսափեցուցանել
770 սարսափելեցուցանել
սարսեցուցանել
* սարսռացուցանել
* սարտուցանել
սեպհականացուցանել (և)
* սեացուցանել
* սեթափեցուցանել
սլացուցանել
սխալեցուցանել
սխրացուցանել
780 սղացուցանել
* սմքեցուցանել
սնացուցանել
* սնուցանել
* սողեցուցանել
սոսկացուցանել
* սոսկեցուցանել (ա)
սոսնձեցուցանել
* սորեցուցանել
(սպառացուցանել)
790 սպիացուցանել

* սպիտակացուցանել
(սառահակեցուցանել)
ստացուցանել
ս(ր)տացուցանել
սփռիռեցուցանել
ստորիջուցանել
* սուսերացուցանել
* սուսերացուցանել
սորկացուցանել
800 * սորջացուցանել
* սրարբեցուցանել
* սրատահշտացուցանել
* սրտացուցանել
(*) սքանչացուցանել
սքանչելացուցանել
վազեցուցանել
* վախեցուցանել
* վախճանեցուցանել
* վայելչեցուցանել
810 վայելչացուցանել
վայրացուցանել
* վայրենացուցանել
* վառեցուցանել
(վառվարացուցանել
վարագացուցանել
վարակեցուցանել
վարանեցուցանել
վարատեցուցանել
վարժեցուցանել
820 վարձկանեցուցանել
վհատացուցանել
վերաբաղկացուցանել
վերաբուսցանել
վերադարձուցանել
վերաշխատցուցանել
վերահանդուցանել
վերամատուցանել
վերաբժանացուցանել
* վերացուցանել
830 վերբուսուցանել
վերլարուցանել
վերջացուցանել
վիզնկեցուցանել
վիժեցուցանել
* վիճակեցուցանել
* վիմացուցանել
վիսացուցանել
վկայեցուցանել
(վհատեցուցանել)
840 * վշտացուցանել
վատահարցուցանել
վառնգեցուցանել
վտարեցուցանել
վրդովեցուցանել
* վրիպեցուցանել
* տագնապեցուցանել
* տագտակացուցանել
տաճարացուցանել
տաճկացուցանել
850 տամկացուցանել
* տապալեցուցանել
տապացուցանել
* տառապեցուցանել
տարակալացուցանել
տարակացուցանել
տարակուսեցուցանել
տարբացուցանել
տարխիսացուցանել
տգեղացուցանել
860 * տեղեկացուցանել
տեսակացուցանել
տիրացուցանել (և)
* (տխրեցուցանել)
* տկարացուցանել
* տղայացուցանել
տղեցուցանել

ապմաթյուցանել
* անանկացուցանել
առկացուցանել
870 առչորեցուցանել
ապացուցանել
ապաւորեցուցանել
* արամեցուցանել
* աքնեցուցանել
ասֆաթացուցանել
* ցածուցանել
* ցականեցուցանել
* ցամաքեցուցանել
ցալթեցուցանել
880 * ցաւացանել
* ցաւեցուցանել
ցնծացուցանել
* ցնորեցուցանել
* ցոփացուցանել
* ցրտացուցանել
ցօղացուցանել
* փախուցանել
փակուցանել
փաղփեցուցանել
890 փալլակեցուցանել
* փալլատակեցուցանէլ
* փալլեցուցանել
* փառաւորեցուցանել
* փարատեցուցանել
փարթամացուցանել
* փափագեցուցանել
* փափկացուցանել
* փեսալացուցանել
* փլուցանել
900 ? փոխաբնակեցուցանել
փոխանակեցուցանել
* փոսացուցանել
փորձեցուցանել
* փուքացուցանել
փոքրացուցանել
* փոքրկացուցանել
փրթմուցանել
փրծուցանել
* փրփրեցուցանել
910 փքացուցանել
քահանայացուցանել
քաղաքացուցանել
քաղցեցուցանել
* քաղցրացուցանել
քաջալերեցուցանել
քաջանուցանել
քաջացուցանել
* քաքնեցուցանել
* քարացուցանել
920 քացահեցուցանել
քնքշեցուցանել
քշտքոտեցուցանել
քունեցուցանել
քաոսեցուցանել
քրիստոնէացուցանել
* քրտնացուցանել
* քրքռեցուցանել
օգտացուցանել (ե)
929 * օտարացուցանել

Բոլոր բառերի թիւն է 929, որոնցից գրեթէ կեսը (450 բառ) վկայված է մեսրոպեան շրջանից (միասին հաշուելով նաև կասկածելիները):

Ինչպես ասացինք, այս բոլորը քաղել ենք նոր Հալիպզեան բառգրքից (չեմ վերցրել Ա.Բ-ը՝ վկայութիւններ չունենալու պատ-

ճառով, թեև Ա.Բ-ը ՆՀԲ-ից 5000 բառ աւելի ունի): Համեմատութեան եմ առել նաև Երուսաղէմի Համարարբառը, որով կարելի եղաւ ճշտել մի քանի բառի մեսրոպեան դործածութիւնը: Համարարբառը ասից նաև 2 բառ, որոնք պակասում են Հալիպզեանում: Սրանք են՝ ջերմացուցանել (Սիրաք. ԼՀ. 17) և չուառեցուցանել Ես. ԻԵ 11: Համեմատութեան եմ առել դարձեալ իմ «Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ» երկհատոր աշխատութիւնը (տպ. Վիեննաիկ, 1913, 1922), որից ստացվեց ևս մի քանի բառ (սրանք նշանակել եմ A տառով):

*Անշուշտ կային հայերենի մէջ էլի որիշ շատ անցողական բայեր, որոնք չեն գործածվել մատենագրութեան մէջ և հետևաբար չեն մտել բառարանների մէջ: Սրա ամենապարզ ապացոյցն այն է, որ կան անցողականից ածանցված բառեր, բայց անցողականի ձևը չկայ: Այսպես ունենք ծխացուցիչ, համապատշաճեցուցեալ, յերկուացուցացնող, դիպեցուցիչ, ստահակեցուցիչ, խանգարեցուցիչ և այլն, սակայն չունենք *ծխացուցանել, *համապատշաճեցուցանել, *յերկուացուցանել, *տխրեցուցանել, *ստահակեցուցանել, *խանգարեցուցանել և այլն: Մենք այս և սրանց նման ենթադրյալ ձևերը իրրև իրական դրինք մեր ցուցակի մէջ (սակայն փակագծով): Մեկը կարող է որպի չունենալ, սակայն երբ որդին կա, հայրն ու մայրը անխուսափելի են:*

Այսպես է նաև մեսրոպեան շրջանի վկայութիւնների հարցը:— Դողացուցիչ, հաճեցուցիչ, յաղթեցուցիչ, սքանչացուցիչ և այլն բառերը վկայված են մեսրոպեան շրջանից, բայց սրանց մայր ձևերը (դողացուցանել, հաճեցուցանել, յաղթեցուցանել, լուսացուցանել, սքանչացուցանել) թեև վկայված են հնատպարեան դրականութեան մէջ, բայց մեսրոպեան շրջանից վկայութիւն չունենք: Մենք այս կարգի բառերն էլ մեսրոպեան շրջանի համարեցինք, սակայն աստղանիշը դրինք փակագծի մէջ:

Կա և սրա հակառակը. մի խումբ անցողական բայեր վկայված են մեսրոպեան շրջանից. սակայն պարզ բայը թեև գործածված է համեսրոպեան դրականութեան մէջ, բայց մեսրոպեան շրջանից ավանդված չէ: Այսպես՝ սրատացուցանել, գրատացուցանել, սակաւացուցանել, ջահացուցանել և այլն մեսրոպեան շրջանից են, իսկ սրատանալ, գրատանալ, սակաւանալ, ջահանալ հետին են: Նույնիսկ կան անցողական բայեր, որոնք ավանդված են մեսրոպեան շրջանից կամ ավելի ուշ, իսկ նրանց պարզ ձևը բնաւ չէ գործած-

ված: Այսպես ունենք ցոփացուցանել, ըրքռեցուցանել, տաճկացուցանել, բայց չունենք ցոփանալ, ըրքռել, տաճկանալ:

Առաջինը, որ անցողականը երեք ձև ունի. -ուցանել, -եցուցանել և -ացուցանել: Առաջինը (-ուցանել) հատուկ է Ա և Բ լծորդության անգալին տիպարին և Դ լծորդության երկու տիպարներին: Երկրորդը (-եցուցանել) հատուկ է Ա և Բ լծորդության առաջին տիպարին. իսկ երրորդը (-ացուցանել) հատուկ է Գ լծորդության կրկին տիպարներին:

Սովորաբար անցողականը մի ձև ունի. բայց կան դեպքեր, երբ 2 կամ 3 անցողական ձև միաժամանակ գոյություն են ունենում: Այսպես սալ և տեր արմատներից ունենք սալացուցանել և սալեցուցանել, տիրացուցանել և տիրեցուցանել.— առաջինները առաջանում են սալանալ և տիրանալ բայերից, երկրորդներն՝ սալիլ և տիրել բայերից: Իջանել բայից ունենք իջուցանել և իջեցուցանել:

Երբեմն էլ կրկին անցողականներից մեկի պարզ ձևը պակասում է. այսպես ունենք օգտեցուցանել և օգտացուցանել. առաջինը ծագում է օգտել կամ օգտիլ ձևից. երկրորդի մայրը՝ որ պիտի լիներ *օգտանալ, գոյություն չունի:— Բիրան արմատից ունենք անցողական բրտնեցուցանել. պարզ բայական ձևերն են բրտնել, բրտնիլ, բրտանել, բրտանուլ, որոնցից ոչ մեկը չի կարող տալ բրտնեցուցանել: Սրա մայրն է բրտանալ, որ հիշում է Նչխ, բայց չի ավանդված:— Երեք անցողական ձև ունի զբօս արմատը, որոնք են զբօսուցանել, զբօսացուցանել և զբօսեցուցանել. պարզ բայն էլ երեք ձև ունի՝ զբօսնուլ, զբօսանալ, զբօսանիլ, որոնք տալիս են առաջին երկու ձևերը, իսկ երրորդի (զբօսեցուցանել) մայրը պակասում է (պիտի լիներ *զբօսել կամ *զբօսիլ):

Ջեկուցանել բայը զգալ բայի անցողականն է. սա ծագում է զ մասնիկով գալ բայից, որի կատարյալն է եկի: Սրանից հետևում է, որ գալ բայի հին անցողական ձևն է եկուցանել, որ հետո կորել է:

Կառուցանել բայի պարզ ձևն է կառչիլ, որ այս իմաստով գործածված չէ:

Երգնում, երդուայ բայի անցողականն է երդմնեցուցանեմ, որ ծագում է երդմնեմ (Ոսկ. մ. գ. 25) հաղվագյուտ բայից:

Նշխ թեև բոլոր բայերի կրավորականը առանձին հիշում է, բայց անցողականների կրավորականը չի հիշում, ոչ առանձին և ոչ էլ գոնե ներգործականի հետ միասին. համմտ. հատուցանել,

բառուցանել բայերի կրավորական ձևերը: Այս պատճառով մենք էլ չկարողացանք վերոհիշյալ ցուցակում դնել անցողական բայերի կրավորականները:

Ավելորդ համարեցինք նաև դնել առ բայով կազմված անցողականի ձևերը: Սրանց մի ընդարձակ ցուցակը տես Համաբարբառի մեջ՝ առ բառի առիթ:

Անցողականի արժեք ունեն նաև մուծանել «մացնել» և ցուցանել «տեսցնել» բայերը. բայց իրապես անցողական չեն, ըստ որում նրանց հրամայականն է մոյծ, ցոյց (և ոչ թե մուծո՛, ցուցո՛), ճիշտ ինչպես լուցանել «վառել» բայից լոյց (և ոչ լուցո՛): Առաջինը կապ ունի մտանել բայի հետ (արմատը մուտ), բայց այս երկուսի կապը և առաջաբանությունը հայտնի չէ: Իսկ երկրորդը ծագում է հնխ. skeu- «դիտել», «նկատել» արմատից՝ sk՛ աճականով:

Մնում է բացատրել անցողականի մասնիկների ծագումը:— Անցողականի մասնիկները կազմված են չորս անջատ տարրերից. 1) ց կամ ս, 2) ու, որի նախաձևն է ոյ, 3) ց, որ անցողականի բուն նշանն է և 4) ան բայակերտ մասնիկը.— ուրեմն *ց-ոյ-ց-ան-ել կամ *-ս-ոյ-ց-ան-ել: Առաջինը կատարյալի մեջ երեցող նշանն է, ոյ երկրաբարբառ առաջանում է հնագույն ou- ձևից, որ դանում ենք նաև հունարենում մի քանի տեղ. ինչպես՝ անցողական նեկիա ὀρθώ, կոր. ὄρουσας, ὄρουσεν և այլն (Mariès REA, 1930, X, էջ 180). ան՝ նույն է ինչ որ անպական տիպարի ան մասնիկը, որ հետևաբար ավելացրած է, ճիշտ ինչպես հարց-ան-ել բայի մեջ, իսկ հիմնական ց մասնիկը համապատասխանում է հունարեն -σκω, լատիներեն -scō մասնիկներին (Meillet, Esquisse, 116): Այս մասնիկը թերևս էլ ծառայում է անցողական կազմելու համար:

Անցողականի ց մասնիկի ծագումը այսպես բացատրելուց հետո, կամ առանց դրան էլ, պատահական պետք է համարել զանազան լեզուներում գոյություն ունեցող անցողականի ց մասնիկը: Այսպես՝

Աֆրիկյան չիչևա (բանտու) լեզվի մեջ ts. օրինակ՝ kufu-βira կարմրել—kufuβiritsa կարմրացնել, kuzuza β̀շվառանալ—kuzùzitsa β̀շվառացնել Watkins, 73):

Անցողականը այնպես անձուկ կերպով միացած է խոնարհման հետ, որ մի խումբ բայեր (հատկապես կատարյալում -եայ վերջավորված բայեր, ինչպես փախեայ, զարթեայ, ծաղեայ) չունեն

*Բնենց առնթական -եալ վերջավորությամբ անցյալ դերբայի ձևը և փոխ են առնում անցողականի դերբայը. այսպես՝ փախուցեալ, գարթուցեալ, ծանուցեալ (չկա *ծանեալ, *փախեալ, *զարթեալ), իսկ կորեալ—կորուսեալ՝ թե կորնչիմ և թե կորուսանեմ բայի համար է:*

Մի խումբ բայերի վ, ս ձայնը փոխանակ ց-ի (փլուզանեմ, կորուսանեմ) դեռ բացատրված չէ, ինչպես և անցողականի մյուս մանրամասնությունները: Բայց նկատելի է, որ փլուզանել, ընկլուզանել և ելուզանել բայերը՝ երեքն էլ վերջանում են լ բաղաձայնով և մասնիկն էլ է -ուցանել և ոչ թե -եցուցանել կամ -ացուցանել: Ցանկի մեջ կան 23 ուրիշ դեպքեր, երբ արմատը վերջանում է լ, բայց ոչ մեկի մեջ մասնիկը -ուցանել չէ, այլ միշտ -ացուցանել կամ -եցուցանել:

Անցողական կազմելու անսովոր ձև է առնել, որ համապատասխանում է ֆրանսերեն faire, *դերմաներեն* machen *և անգլերեն* make *ձևերին. այսպես ունենք՝*

> *Եվ ի ճանապարհս և ի ցանգս, և արա այսր մատանել, զի լցցի տունս իմ (Ղուկ. ԺԴ 23):— Արա մատանել նշանակում է «մացրուս»:*

Միջին հայերենում անցողականը նույնպես երեք ձև ունի. հնագույն շրջանում ունենք -ացնել, -եցնել, իսկ ավելի հետո՝ ա; ե ձայնավորների ջնջմամբ՝ -ցնել:

Տալիս ենք այստեղ միջին հայերենի անցողական բայերի մի ցուցակ, որ քաղում ենք Karst-ի քննականությունից, էջ 268—275:

աղեկցնել
աղքատացնել
ամեցնել
ամրցնել
անհոգցնել
անուշ(ա)ցնել
անցցընել, անցընել
առողջացնել
արծկցնել
բանեցնել
բռնեցնել
պիջ(ա)ցնել
գաղրեցնել
գալարցնել
գարձընել
դիժարցնել
դոզացնել
եղկ(ա)ցընել
եռ(ա)ցնել
երջմցնել
երևցնել
զալրացնել
զօրացնել
ընծալիցնել
թուլ(ա)ցնել
թանձրցնել

ժառանգեցնել
իջցնել
իրաւցնել
լաւ(ա)ցնել
լինցընել
լուեցնել
խաղ(ա)դեցնել
խափենացնել
խմցնել
խնդացնել
խոց(ա)ցնել
ծորեցնել
կաթեցնել
կակղ(ա)ցընել
կանուխցնել
կարողցնել
կենդանացնել
կերցնել
կշռացնել
կոթսընել
կուր(ա)ցնել
հան(ա)նդցնել
հաճեցնել
հաշտեցնել
հասա(ա)ցընել
հասցնել
հատցնել
հաւնեցնել
հով(ա)ցնել
հռատցնել
մատուցցնել
մեռցնել
մերկացնել
մոցընել
յամեցնել, լմեցնել, լիմեցնել (<յամեցուցանել)
յարցնել, յերցնել (<յարուցանել)
յաւելցնել, լևելցնել
յերկարացնել, -եցնել
յեռատակեցնել
յորդորեցնել
նեղցնել
նստեցնել
նօսր(ա)ցնել
շատցնել
շողցնել
ողջ(ա)ցնել
ուժովցնել
ուժվորցնել
ուսցնել
չոր(ա)ցնել
պակ(ա)սեցնել
պատեհցնել
պատրաստ(ե)ցնել
պարարտացնել
պարկեշտ(ե)ցնել
պարոնացնել
սեցնել
սիրցընել, (<սրացուցանել)
անցընել, (<անուցանել)
սովրեցնել
սպրդեցնել «մաքրել»
վախցնել
վազ(ե)ցնել
վատուժ(ա)ցնել
վերցնել
վրնդեցնել (<վրդնեցուցանել)
տաքցնել
տկարացնել
ցամ(ա)քեցնել, ցամքըցնել

ցաւցնել	փրթցնել
ցրտացնել	քաղցեցնել
փախցնել	քաղցրացնել
փակցնել	քրանցրնել
փլցնել, բլցնել	օդաւցնել

Այս ձևերի ամենամեծ մասը հների շարունակութիւնն է. քիչ մասը նորակազմ ձևեր են. օրինակ՝ պարոնացնել: Ավելի քիչ են այն ձևերը, որոնք հնի փոխարէն վերակազմված են նոր օրինքի համաձայն. այսպես մղցնել (իմա մռուցանել) փխ. հին մուծացնել ձևի:

Այժմ անցնենք բարբառներին:

Նոր-Ջուղա

Բայերի անցողականը կազմելու համար բայի արմատի վրա ավելացնում ենք -ացնել մասնիկը. ինչպես՝ խօսացնել, ուտացնել, խաղացնել, խանչկացնել «հանգչեցնել, մարել ճրագը», ամաչցնել, կարմրացնել, վազցնել, լեցացնել, փչացնել, նեղացնել. նուչնիակ այն բայերը, որ արիշ բարբառներում առնում են -եցնել, այստեղ կատարյալ միօրինակութիւնով վերցնում են -ացնել մասնիկը. ինչպես՝ ապրացնել, մօտկացնել «մօտեցնել», աշխատացնել, խաշտացնել «հաշտեցնել», կանգրացնել «կանգնեցնել»:

Ամեն բայ անխտիր այս մասնիկը չի ընդունում. Անցյալը կազմվում է տալ բայի հարադրութիւնով, ինչպես՝ յեփել տալ, քամել տալ:

Երբեմն կարելի է տալ բայը կցել անցողականի առաջին ձևին. ինչպես՝ խմացնել տալ, խոսացնել տալ և այլն:

Հնդկահայոց բարբառի մէջ -ցնել մասնիկը պահելով իր ա ձայնը՝ միայն է -ցանել. օրինակ՝ նեղացանել, բ՛անացանել «գործածել», պակսացանել, ցավացանել, ծանօթացանել, թվացանում ա «թվացնում է», յաճցկացանել, յավելացանել, նստացանել: Այսպես ենք գտնում նաև Գիլանենցի «ժամանակագրութիւն» մէջ. ինչպես՝ կարգացանել 199, իվելացանում ա 197. խոսացանիմ 107, դառցանեն 105, մեռցանի 183, կրթվրացանեն 104 և այլն:

Անցողական բայերի խոնարհումը կանոնավոր բայերի խոնարհումից փոքր ինչ տարբերվում է. ահա նրանց խոնարհման պատկերը. տարբերութիւնը կատարյալի առաջին ձևի և հրամայականի մէջ է.

Սահր. ներկա	Սահր. անկ.	Կար. ա	Կար. բ.
լէն-ացնեմ	լէն-ացնի	լէն-ացրի	լէն-ացրեցի
լէն-ացնես	լէն-ացնիր	լէն-ացրիր	լէն-ացրեցիր
լէն-ացնի	լէն-ացնէր	լէն-ացրէց	լէն-ացրեց
լէն-ացնենք	լէն-ացնինք	լէն-ացրինք	լէն-ացրեցինք
լէն-ացնէք	լէն-ացնիք	լէն-ացրիք	լէն-ացրեցիք
լէն-ացնեն	լէն-ացնին	լէն-ացրին	լէն-ացրին

Հրամ.	Դերբայներ	
լէնացրուր	ներկ.	լէնացնում
մի լէնացնել	ան.	լէնացնել
լէնացրէք	անց.	լէնացրէլ
մի՛ք լէնացնել		լէնացրած
	ապ.	լէնացնելու

Հրամայականում փոխանակ -ացրուր ձևի՝ գործ է ածվում նաև -ցուր, ինչպես՝ լեցացուր, բ՛անցրացուր և այլն. այս ձևը ավելի հաճախադեպ է հնդկահայոց մէջ:

Գիլանենցի «ժամանակագրութեան» մէջ գտնում ենք հետևվյալ տարբերութիւնները:

Կատարյալի վերջավորութիւններն են՝ -ացուցի, -ացուցիր, -ացուց և այլն. ինչպես՝ խոսացուցիր «հասցրիր» 104, կանգրնացուց 104:

Անցյալ դերբայը վերջավորվում է -ացուցել. ինչպես՝ խակացուցել 99, կանգնացուցանել 95, 103, չորքացուցել 95, թուրքացուցել 190, փախցուցել 96, 185, նստացուցել 183, 196, պոցքացուցել «ազատել» 186:

ԱԳՈՒԼԻՍ

Անցողականը կազմվում է կամ տալ «տալ» բայի հարադրութիւնով և կամ -ցա՛նիլ, -ցո՛նիլ մասնիկներով (առաջինը ծանր, երկրորդը թեթև բառերի համար). ինչպես՝ թա՛կիլ տալ «թակել տալ», հրատրցա՛նիլ «հատացնել», ըժրնցո՛նիլ «էժանացնել», նըրփրցո՛նիլ «հարբեցնել», խրզզրցո՛նիլ «հագացնել».— անկանոն բայերից՝ ըրրցո՛նիլ «ջնջել», գիդրցո՛նիլ «գիտցնել», դըռցո՛նիլ «դարձնել», լըցրցո՛նիլ «լցնել», մրռնրցո՛նիլ «մեռցնել», բարցո՛նիլ «կերցնել», պըռծրցա՛նիլ «պրծացնել»:

Այս բոլոր բայերը խոնարհվում են Բ լծորդութեան համեմատ. այսպես է նաև ներցա՛նիլ «հարցնել»: Միայն հրամայականն

է, որ սովորական ձևից դուրս, ունի նաև -ցուր, -ցիւր ձևը, որ ավելի է ընդունված. ինչպես՝ ճրցո՛ւր կամ ճրցա՛ճի «հարցրուն», սվըրցո՛ւր կամ սըվըրցա՛ճի «սովորեցրուն», զըզըցի՛ւր կամ զըզըցա՛ճի «ուղղիր»:

ՄԱՐԱՂԱ

Անցողականի կրկին ձևերը (առ բայով կամ -ցնել մասնիկով), որ գործածական են ուրիշ բարբառներում, գործածական են նաև Մարաղայի բարբառում: -ցնել մասնիկը այստեղ առացել է -ացուցել, -օցուցել, -ցուցել ձևերը: Սրանց գործածության համար առանձին կանոններ չկան. բայց առհասարակ -անալ և -ալ վերջավորող բայերը առանում են -ացուցել մասնիկը, որի կրճատն է -ցուցել. իսկ Ա և Բ լծորդության բայերը առանում են -օցուցել. օրինակ՝

նևդանալ—նէդացուցէլ, նէդցուցէլ.
ծիծաղիլ—ծղզացուցէլ.
կուվիլ—կուվօցուցէլ.
պրուցիլ (պուրցալ)—պուրցացուցէլ.
մոռենալ—մրիտացուցէլ.
հազալ—խազդացուցէլ.
գողանալ—կուէղցուցէլ.
երևալ—էրավացուցէլ.
եռալ—էռացուցէլ.
նևխիլ—նէխօցուցէլ.
սողալ—սօղացուցէլ, սօխցուցէլ.
կարդալ—կարթացուցէլ.
բխիլ—բխօցուցէլ.
դադարիլ—դադրօցուցէլ.
բանիլ—պանօցուցէլ.
մաշիլ—մաշօցուցէլ.
քրանիլ—քանօցուցէլ.
փախչիլ—փախցուցէլ.
վալիվիլ—լէվօցուցէլ.
պրծնիլ—պրծօցուցէլ.
հաջիլ—խաչօցուցէլ.
հալիլ—խալօցուցէլ.
կամբրիլ—կամբօցուցէլ.
շվարիլ—շվարօցուցէլ.

նստիլ—նստօցուցէլ.
չոքիլ—չէօքօցուցէլ.
պապանձիլ—պապանձօցուցէլ.
ծլիլ—ծլօցուցէլ և այլն:

Ձայնարանական օրենքների համաձայն վերի մասնիկները երբեմն դառնում են -եցուցել, -ոցուցել, -ուցուցել և -ցիւցել.—

-եցուցել մասնիկը դառնում ենք միայն այրել—երեցուցել բալի մեջ, որ և փոփոկանալով լինում է երեօցիւցել. գործ է ածվում որոշ դարձվածներում իբրև «մեկի հոգին հանել, շատ նեղել» իմաստով. ինչպես՝ մարքու խէ՛րթ երեցուցըն կամ երեօցիւցըն: Սովորական «այրել» իմաստով գործածական չէ, ինչպես որ նման դիրքով ուրիշ բայերի մեջ էլ անցողականի այսպիսի մասնիկ գոյություն չունի. ինչպես՝ վալիվել—լէվօցուցել, հմել—եփօցուցել, դիրանալ—կերցուցել, հնծնել—խեծօցուցել և այլն:

-ոցուցել մասնիկը դառնում ենք այնտեղ, ուր բայի արմատական ձայնավորն է ո. ինչպես՝ բարձրանալ—պոնցրոցուցել, դահանալ—տոխոցուցել:

-ուցուցել ձևը երևան է գալիս, երբ բայարմատի առաջ դնում է ը ձայնը, որ ազդվելով անցողականի ու ձայնավորից, ինքն էլ դառնում է ու. ինչպես՝ ամչնալ—ամչըցուցել>ամչուցուցել, ճանաչիլ—ճանչըցուցել>ճանչուցուցել, տաճկանալ—տաչկըցուցել>տաչկուցուցել:

-ցիւցել մասնիկը երևան է գալիս թևթև ձայնավորից հետո. ինչպես՝ դեղնիլ—տեղինցիւցել, բանիլ—պանցիւցել, դառնալ—տոռցիւցել, փչչիլ—պիւցիւցել, վախենալ—վոխցիւցել, լալ—լոցիւցել, քնել—քինցիւցել կամ քիւնցիւցել, սևանալ—սիվցիւցել և այլն: Այս պարագային էլ՝ երբ անցողական մասնիկի առաջ դրված է ո ձայնը, նույն փոփոխությունը տեղի չի ունենա. ինչպես՝ ոժօցուցել, զոռրօցուցել, պանօցուցել, վորժօցուցել և այլն:

Այս բոլորից դուրս ունենք նաև -ըցօցուցել մասնիկը, որ դնում ենք միայն ամչըցօցուցել «ամաչեցնել» և խասկըցօցուցել «հասկացնել» բայերի մեջ: -ուցել, -ցել մասնիկներով են կազմված կրուցել «կպցնել» և վերցել «վերցնել, առնել»:

Անցողական կազմելու ժամանակ բայարմատն էլ կրում է պահանջված ձայնական փոփոխություններ. ինչպես՝ թռչիլ—թըռնել, բայց թռցնել>թուցուցել, որի մեջ արմատական ը՝ մասնիկից ազդվելով դարձել ու.— հնծնել, անցող. խեծօցուցել կամ խեզցուցել, որի մեջ ծ՝ ընկնելով բաղաձայնի մոտ՝ դարձել է զ.—

խածնել «ատամիլ», անցող. խատացուցել, խատցուցել, որոնց մեջ ա՝ գոնվելով ձայնավորի մոտ՝ վերստացել է իր նախկին վիճակը (հատանիլ).— իջանել>էշնել, բայց անցող. էշցուցել կամ իշցուցել.— անցանիլ>ընգնել, բայց անցող. ուցցուցել, որի մեջ ն միայն ց իր նախկին վիճակը պահում է, այլ և ա>ը ազդվելով ու ձայնից՝ ինքն էլ է դարձել ու.— մտանել>մըննել, անցող. մուտցուցել, մուտացուցել և այլն:

Կան բայեր, որոնք կարող են ստանալ թե -ացուցել և թե -օցուցել մասնիկը. ինչպես՝ թացացուցել կամ թացօցուցել, կանաչացուցել կամ կանաչօցուցել, կայնացուցել կամ կայնօցուցել, ուռացուցել կամ ուռոցուցել, կադդացուցել կամ կադդօցուցել, կռնատացուցել կամ կռնատօցուցել, ուռացուցել կամ ուռօցուցել «կերցնել»:

Հարցնել բառը դոլութիւն չունի բարբառիս մեջ. նրա փոխարեն գործածվում է խոթոր առնել (ճիշտ այսպես է նաև տեղական թուրքերենը, ուր sormaq «հարցնել» բայը չընչված է և նրա փոխարեն գործ է ածվում xäbär almaq):

Թուրքերենից փոխառյալ բայերը անցողական են դառնում երեք ձևով.— 1) սովորական հայերեն մասնիկներով. ինչպես՝ կուդուրմուշցուցել «կատաղեցնել», ալըշմըշացուցել «վարժեցնել».— 2) թուրքական անցողականի ձևով. ինչպես թալտատըրմըշել «շտապեցնել», կըզդըրմըշել «տաքացնել».— 3) թուրքական անցողական ձևի վրա ավելացնելով հայերեն անցողական մասնիկը. ինչպես՝ թալտատըրմըշցուցել, կըզդըրմըշցուցել:

Անցողական բայերը խոնարհվում են հետևյալ ձևով.

Սատր. ներկա	Կատարյալ
տալիցուցիմ	*տալիցուցում, -ըմ*
տալիցուցիս	*տալիցուցիր*
տալիցուցը, -ցու	*տալիցուցից*
տալիցուցինք	*տալիցուցընք, -ցունք*
տալիցուցէք	*տալիցուցըք, -ցուք*
տալիցուցին	*տալիցուցըն, -ցան*

Սահմ. ներկա	Անց. անկ.
տալիցուցել իմ	*տալիցուցելիմ էր*
տալիցուցել իս	*տալիցուցելիս էր*
տալիցուցել ի	*տալիցուցել -էր*
տալիցուցել ինք	*տալիցուցելինք էր*
տալիցուցել էք	*տալիցուցելէք էր*
տալիցուցել ին	*տալիցուցելին էր*

Հրամ.	Ապառնի	Դերբայներ
տալիցուցու	*կտալիցուցիմ*	*տալիցուցած*
տալիցուցէք	*կտալիցուցիս*	*տալիցուցօղ*
	կտալիցուցը	*տալիցուցօլը*
	կտալիցուցինք	
	կտալիցուցէք	
	կտալիցուցին	

Ձևնք դնում միացյալ ձևերը, որոնք ինքնին պարզ են. ինչպես՝ ատորպատական անկատար տալիցուցիմ էր, անցյալ ապառնի կտալիցուցիմ էր, բարդ ձևերից՝ տալիցուցօլը՛ իմ, տալիցուցօլը՛ իմ էր և այլն:

-ցիւցել մասնիկով կազմված անցողականների վերջավորությանց մեջ ի դառնում է ըստ օրինի իւ. ինչպես՝ պիւլցիւցել, պիւլցիւցիմ, պիւլցիւցիր, պիւլցիւցիւնք, պիւլցիւցիւք և այլն: Ուր որ ու վանկին հաջորդում է օ ձայնավորը, կարելի է դնել ը. ինչպես՝ տալիցըցօղ, ցավցըցօղ, ցավցըցօլը իմ և այլն:

ՂԱՐԱԲԱՂ

Ղարաբաղի բարբառում անցողականը կազմվում է -ցնել մասնիկով կամ տալ բայով. օրինակ՝ սիրցնէլ, սիրցնըմ ըմ, սիրցընըմ ի, սիրիլալա՛կան ըմ, սիրիլա՛լական ի, սիրցրի կամ սիրցուցի, սիրցուցեր, սիրցրու, սիրցրեք և այլն:

ՇԱՄԱԽԻ

Շամախիի բարբառում անցողականի մասնիկն է -ցուննի, որի համեմատ ունենք քօռացուննի, մօտացուննամ, ուռացուրալ ա, հասացուրալ ամ, հանգացուրի, պորցրոցուրալ անք և այլն:

ՊՈԼԻՍ

Պոլսի բարբառում անցողականը կազմվում է երկու ձևով. կամ բայի վրա ավելացնելով -ցուննել մասնիկը և կամ բայի հետ խոնարհելով տալ բայը: Օրինակ՝ մոռանալ>մօռնալ, մօռցուննել, ապրիլ>արբի, արբեցուննել, իմանալ>իմացուննել, լվալ>վլալ, վլալ դալ, բանալ>բանալ դալ և այլն:

Կանոն չկա իմանալու համար, թե երբ է դրվում տալ բայը և երբ -ցուննել մասնիկը: Այս վերջինն էլ երբեմն ունենում է -ցուննել ձևը, երբեմն էլ -ացուննել կամ -եցուննել, ինչպես վերի օրինակներից երևաց: Ճիշտ ձևը կազմելու համար առնում ենք բայի կա-

տարբայի եզակի Ա դեմքը, հանում սրա վրայից ի, ա, ցի, ցա վերջավորութիւնները, ավելացնում -ցուցել և սաացվում է անցողականի ձևը. օրինակ՝

	Կատարյալ	Անցողական
գլլել «կլանել»	գլլե-ցի	գլլե-ցուցել
դառնալ	դառ-ցա	դառ-ցուցել
քնանալ «քնել»	քնա-ցա	քնա-ցուցել
ուդել	գեր-ա	գեր-ցուցել

Այն դեպքում, երբ -ցուցել մասնիկի ց ձայնը պատահի ս, ց, տ, ք, շ, չ, խ, ղ, պ բաղաձայններին, ց դառնում է ծ, իսկ հարակից բաղաձայններից ղ դառնում է խ, զ դառնում է ս, տ և չ դառնում են ծ. օրինակ՝ լուսցալ «լուսանալ»—լուսծուցել, վազէլ—վասծուցել, գալ—գծա, գծծուցել, հասնել—հասծուցել, վազտանալ>վազտնալ—վազծուցել, վախնալ>վախծուցել, գողտնալ>գողնալ—գողծուցել, հիվանդտնալ>հիվանդնալ—հիվանդծուցել, հատնել—հածծուցել «ապաուել», ամաչել>ամըշնալ—ամրծուցել, ճանաչել>ճանչնալ>ջաշնալ—ջանծուցել և այլն:

Պետք է նկատել, որ անցողականը բարբառում կազմվում է ոչ թե հին հայերեն ձևի վրայից, այլ բարբառային ձևից. հիշենք իբր օրինակ.

	Կատարյալ	Անցողական
կալ>գենալ	գեցա	կացուցանել—գեցուցել
կլանել>գլլել	գլլեցի	կլուցանել—գլլեցուցել
հնանալ>հինցալ	հինցա	հնացուցանել—հինցուցել

	Կատարյալ	Անցողական	
խլանալ>խուլցալ	խուլցա	խլացուցանել	խուլցուցել
խորանալ>խորուցգնալ	խորուցգցա	խորացուցանել	խորուցգծուցել
կակղել>գազօղնալ	գազօխծա	կակղացուցանել	գազօխծուցել
լնալ>լենալ	լեցա	լցուցանել	լեցուցել
երդնալ>երբվընցալ	երբվընցա	երդմնացուցանել	երբվընցուցել
ողջանալ>օխնընցալ	օխնընցա	ողջացուցանել	օխնընցուցել
ուս(չ)իլ>ուռենալ	ուռեցա	ուռուցանել	ուռեցուցել

Երեք -ցուցել մասնիկից առաջ պատահի ը ձայնավորը, հաճախ այդ ը վերածվում է ու-ի ինչպես՝ փլել—փլա—փուլցուցել, մտանել>մըտնալ—մդամուծծուցել, բայց միևնույն ժամանակ՝ հիւանդտնալ>հըվընդնալ—հըվընծծուցել (և ոչ թե հուվուծծուցել):

*Փրթիլ—կատ. փրրա բայի անցողականը լինում է փրցընել—փուրցուցել (փխ. *փրթցնէլ)։—րրց ձայնախմբով սրիշ բառ չկա բարբառիս մեջ:*

*Անկնիլ>ասնիլ, կատ. անցա բայի անցողականը լինում է ըստ կանոնի անցուցել (փխ. *անցցուցնէլ)— մեկ ց կրճատվում է, կարծես թե ցա վերջավորութիւն լիներ:*

*Զրացել>զուրցել, կատ. զուրցեցի բայի անցողականը լինում է զուրցուցել (փխ. *զուրցեցուցել):*

Անցողականի կազմութիւն համար վերև գրված կանոնին հետևում են 150 բայ. սրանցից դուրս մնում են 22 բայ, որոնք ճիշտ չեն հետևում կանոնին:

Այս բայերն են.

	կատարյալ	անցողական
աղաւոիլ>աղդօդիլ	աղդօդեցա	աղդօծծուցել
աշխաւիլ>աշխադիլ	աշխադեցա	աշխածծուցել
երեբալ>երեբալ	երեբացի	երեբցուցել
գլաւրիլ>գլդօրիլ	գլդօրեցա	գլդօրցուցել
երեվել>երեվալ	երեվացի	երեվցուցել
իջանել>իշնալ	ինչա	ինչեցուցել
խաղալ>խադալ	խադացի	խախծուցել
խմել>խմել	խմեցի	խմցուցել
խոսաւանիլ>խոսաբվանիլ	խոսաբվանեցա	խոսաբվանցուցել
կոթծանիլ>գօթածանիլ	գօթածանեցա	գօթածանցուցել
կակծալ>գըսկըծալ	գեսկըծացի	գըսկըծծուցել
հանդիպիլ>հանդըբիլ	հանդըբեցա	հանդըպծուցել
հրամայել>հրամմել	հրամմեցի	հրամցուցել
նմանիլ>ըլմանիլ	ըլմանեցա	ըլմանցուցել
պարտաւիլ>բարդըգիլ	բարդըգեցա	բարդըկծուցել
պատիլ>բըդըդիլ	բըդըդեցա	բըդըծծուցել
սիրել>սիրել	սիրեցի	սիրցուցել
սխալիլ>սխալիլ	սխալեցա	սխալցուցել
վազել>վազել	վազեցի	վասծուցել
վաստակիլ>վաստըգիլ	վաստըգեցա	վաստըկծուցել

ցաւիլ>ցավիլ	ցավէցա	ցաֆցուցնել
քրանիլ>քըրդընիլ	քըրդընէցա	քըրդընցուցնել

*Սուն 22 բայերից 20-ի մեջ անկանոնութիւնը կայանում է նրանում, որ -ցուցնել մասնիկից առաջ զնդչված է ա կամ է ձայնաւորը. մի դէպքում՝ ձայնաւորի հետ նաև նախորդ բաղաձայնը (հրամայել—հրամցուցնել, փխ. հրամմէցուցնել), և մի դէպքում էլ՝ ընդհակառակը ավելացել է է՝ բաղաձայնների խճողման պատճառով (իջանել—ինչա, ինչէցուցնել, փխ. *ինչցուցնել, որ պիտի տար *իշծուցնել): Այս վերջինը միակ բացառութիւնն է նալ հանդող բայերի դեմ, որոնց թիւն է 76, բոլորն էլ կանոնաւոր:*

-ցնել վերջավորող բայերը երկու կարգի են բաժանվում. 1) նրանք, որ ներգործականից են առաջանում (ինչպես՝ խմել—խմցուցնել). սրանք բուն անցողական բայերն են և 2) նրանք, որ չեզոք բայից են առաջանում (ինչպես՝ մեռնիլ—մեռցուցնել). սրանք պարզապես ներգործական բայերն են և միայն մասնիկով նման են անցողականներին: Այս երկուսից դուրս են մնում ճօրցուցնել և ցուցուցնել, որոնց մեջ ց արմատական է և չի պատկանում մասնիկին:

Ամեն բայ չի կարող առանալ -ցնել մասնիկը: Պոլսի բարբառը ընդունակութիւն ունի իլ վերջացող չեզոք բայերից առանալ ներգործական՝ իլ հանգը վերածելով ել (փոխանակ -ցնել): Այսպես են՝

ազատիլ—ազատէլ
էրիլ—էրէլ
ասխընդիլ—ասխընդէլ
արտնիլ—արտնէլ
գլդօրիլ—գլդօրէլ
էփիլ—էփէլ
թափիլ—թափէլ
թռչիլ—թռչէլ (ջրով)
խախտիլ—խախտէլ
խանձիլ—խանձէլ
խաշիլ—խաշէլ
խափանիլ—խափանէլ
ձագիլ—ձագէլ (ծակիլ)
ձագձըգիլ—ձագձըգէլ (ծակծկիլ)
ձռիլ—ձռէլ (ծռիլ)

գոդրիլ—գոդրէլ (կտրել)
գոդըրդիլ—գոդըրդէլ (կտրտիլ)
գօրձանիլ—գօրձանէլ (կտրծանել)
գըդրիլ—գըդրէլ (կարել)
գըդըրդիլ—գըդըրդէլ (կտրտիլ)
հաֆսըրիլ—հաֆսըրէլ (հավասարել)
ջղիլ—ջղէլ (ճղել)
մարիլ—մարէլ
սրչիլ—սրչէլ (շրջիլ)
օլըրիլ—օլըրէլ
բադռիլ—բադռէլ
բադըրդիլ—բադըրդէլ
վառիլ—վառէլ
ցընիլ—ցընէլ (ցնկնել)
փառադիլ—փառադէլ (թրք. պատառատել)
քրքրիլ—քրքրէլ

և բոլոր -ոտ մասնիկով կազմված բայերը. ինչպես՝ աղդօդել—աղդօդիլ, մրօդել—մրօդիլ և այլն:

Այս հիմամբ է, որ գրական լեզվի մեջ էլ ունենք դեռ՝ ծաւալել—ծաւալիլ, շարժել—շարժիլ և այլն:

Կրաւորականից էլ երբեմն կարելի է անցողական կազմել. ինչպես՝ տնկվիլ, վարժվիլ—դրնգըվցուցնել, վարժըվցուցնել:

Երբ -ցնել մասնիկը դրված է չեզոք բայի վրա և առացված է անցողականի ձևով ներգործական, այդ ներգործականը անցողականի վերածելու համար դնում ենք տալ բայը. օրինակ՝ կպիլ—կպցնել—գըպցնել դալ: Իսկ երբ բայը ներգործականից կազմված բուն անցողական է, ավելացնելով տալ բայը՝ առացվում է կրկին անցողական. ինչպես՝ գարբալ (ինքը կարդալ), գարբացուցնել (ուրիշին տալ որ կարդա), գարբացուցնել տալ (մեկին հանձնարարել, որ մի ուրիշին կարդալ առ.— երկու հոդու միջև կատարված գործողութիւն):

Անցողական բայերի խոնարհումը հետեւյալ ձևով է.

ստոր. ներկա	ստոր. անկ.	կար.
խըմցունէմ	*խըմցունէլի*	*խըմցուցի*
խըմցունէս	*խըմցունէլիր*	*խըմցուցիր*
խըմցունէ	*խըմցունէր*	*խըմցուց*
խըմցունէնք	*խըմցունէլինք*	*խըմցուցինք*

խըմցունէք	խըմցունէլիք	խըմցուցիք
խըմցունէն	խըմցունէլին	խըմցուցին

հրամ.	դերբայներ
խըմցու(ր)	խըմցունէլ
խըմցուցէք	խըմցուցած, խըմցուցէր
	խըմցունող
	խըմցունէլու, խըմցունէլիք

Կան մի քանի բայեր, որոնց կատարյալին, հրամայականի և անցյալ դերբայի մեջ կարող է ջնջվել միջին ց ձայնը. օրինակ՝ վերոհիշյալ խըմցունել բայից ունենք համապատասխան՝ կտր. խմուցի, խմուցիր, խմուց, խմուցինք, խմուցիք, խմուցին. հրամ. խմու, խմուցէք. դերբ. խմուցած, խմուցէր: Այսպես են նաև դառցունել, վէրցունել, մեռցունել, բոցունել, փախծունել, գըպծունել, փակծունել, դըպծունել, գէրցունել, հաբծունել, հասծունել, փուլցունել բայերը:

Թուրքերենից փոխառյալ անցողական բայերը խոնարհվում են երկու ձևով. կամ պահելով թրքական անցողականի -դըրմիշ, դըրմիշ վերջավորությունը, որոնց հետ միանում և խոնարհվում է ընել բայը, և կամ պարզ բայի վրա դնելով ընել առյ բայը. օրինակ՝

խըզդըրմիշ ընել «բարկացնել»
խավուրմիշ ընել առյ «խորովել առյ»

կար. խըզդըրմիշ ըրի, խավուրմիշ ընել առվի
հրմ. խըզդըրմիշ ըրէ, խավուրմիշ ընել առէր և այլն:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆ

Անցողական բայերը կազմվում են երկու ձևով. կամ բայի արմատի վրա ավելացնելով -ցնել, -ցունել, -ցուցնել բայակերտ մասնիկները և կամ հնագույն խոնարհելով առյ բայը. օրինակ՝ մօնցալ—մօնցնել, մօնցունել, մօնցունում, հավնել—հավնեցնել, հավնեցունել, հավնեցուցնում, իսկ բանալ—բանալ առյ:

Այս ձևերից առաջինը -ցնել հատուկ է միայն քաղաքին. հնագույնն է նաև -ցունել. երրորդը անորոշ -ցունուլ ձևով գործածական չէ, այլ կա միայն ներկայի և անկատարի մեջ և իբրև դիմորոշություն՝ նեղմակաբ է այն վիճակին, որ տևողանք վերը վերջին առյ բայով ձևերը ընդհանուր գործածական են:

Խոնարհման ժամանակ առաջինները հետևում են առանձին ձևի. վերջինը նկատելու բան չունի, որովհետև խոնարհվում է միայն առյ բայը սովորական ձևով, իսկ բուն բայը անորոշ ձևով անփոփոխ մնում է:

Հետևյալ -ցնել ձևով խոնարհման պատկերը.

ստոր. ներկա

մօնցնիմ	մօնցունիմ	մօնցունում
մօնցնիս	մօնցունիս	մօնցունուս
մօնցնէ	մօնցունէ	մօնցունու
մօնցնինք	մօնցունինք	մօնցունունք
մօնցնիք	մօնցունիք	մօնցունուք
մօնցնին	մօնցունին	մօնցունուն

ստոր. անցյալ

մօնցնէյի	մօնցունէյի	մօնցունույի
մօնցնէյիր	մօնցունէյիր	մօնցունույիր
մօնցնէր	մօնցունէր	մօնցունուր
մօնցնէյինք	մօնցունէյինք	մօնցունույինք
մօնցնէյիք	մօնցունէյիք	մօնցունույիք
մօնցնէյին	մօնցունէյին	մօնցունույին

կատարյալ	հրամ.
մօնցուցի	մօնցուր
մօնցուցիր	մօնցուցէք
մօնցուց	
մօնցուցինք	
մօնցուցիք	
մօնցուցին	

դերբայներ

մօնցնէլ	մօնցունէլ
	մօնցուցած, մօնցուցիլ
մօնցնող	մօնցունող
մօնցնէլու	մօնցունէլու
մօնցնէլիք	մօնցունէլիք

Կատարյալի մեջ -ցուցի և այլն վերջավորության տեղ ամենք դնում են -ուցի և այլն. այսպես հաբցնել բայից ունենք թե հաբ-

ցուցի, հաբցուցիր, հաբցուց, հաբցուցինք, հաբցուցիք, հաբցուցին և թե հաբուցի, հաբուցիր, հաբուց, հաբուցինք, հաբուցիք, հաբուցին. այսպես նաև վեբցուցի կամ վերուցի, հասցուցի կամ հասուցի, կպցուցի կամ կպուցի և այլն: Նույնպես հրամայականի մեջ՝ հաբցուր կամ հաբուր, կպցուր կամ կպուր և այլն: Կրկին ձևերի զուգորդության համար կարող ենք համեմատել հին հայերեն -ուցանել և -ացուցանել:

Դիտ. 1.— «Ուտել» բայի անցողականը լինում է ուդեցնել և ոչ թե «կերցնել»:

Դիտ. 2.— Եթե բայի առաջին վանկում կա ը ձայնավորը՝ հաջորդ վանկերի ու ձայնավորի ազդեցությամբ դառնում է ու. ինչպես՝ խմցնեմ > խումցուցում, թեև ներգործականը լինում է խմել:

Դիտ. 3.— Անցողականի պես են խոնարհվում նաև ցուցուցնել, հարցուցնել բայերը:

Դիտ. 4.— Իողուլ բայը առանալով -ցնել վերջավորությունը անցողականի ձև է առած և խոնարհվում է վերի ձևով. սակայն հնության իրր ներացորդ կա հրամ. բող, որի նոր ձևերն են բօղցո՛ւր կամ բօղո՛ւր: Կատարյալ բօղուցի... ձևը կարող է համարվել թե իրրև Ի չծորդության ներացորդ և թե իրրև անցողականի ձև՝ առանց ց-ի. ինչպես՝ հարցուցի և այլն:

ՀԱՄՇԵՆ

Անցողական բայերը Համշենի բարբառումն էլ կազմվում են ատ բայով և կամ -ցնուշ, -ացնուշ, -եցնուշ վերջավորությամբ:

Ուրիշ բարբառներում -ցնել ձևը հատուկ է ոչ-բազմաթիվ և շատ սովորական գործածություն ունեցող բայերի, իսկ բայերի ներացյալ անորոշի մեծամասնությունը կազմվում է ատ բայով: Համշենի բարբառը այն մեծ տարբերությունն ունի, որ գրաբարի նման կարող է գրեթե ամեն բայ անցողականի վերածել -ցնել ձևով, իսկ փոքրագույն մասը միայն՝ ատ բայով:

Իրրև օրինակ հիշում ենք այնպիսի բայեր, որ մեր բարբառների և աշխարհաբարի համար բոլորովին անսովոր են.

ամանել > օմնուշ — օմնէցընուշ
այրել > որուշ — որէցընուշ
անկանել > ընգնուշ — ընգնէցընուշ
առնուլ > առնուշ — առնէցընուշ

ասել > ասուշ — ասէցընուշ
արձակել > ացկրուշ — ացկրէցընուշ
աւելել > ավիլուշ — ավիլէցընուշ
եփել > էփուշ — էփէցընուշ
ընտրել > ընդուշ — ընդուէցընուշ
գործել > կօյնուշ — կօյնէցընուշ
թաղել > թադուշ — թադէցընուշ
թափել > թափուշ — թափէցընուշ
պրել > կրուշ — կրէցընուշ
բովհրել > պօֆրուշ — պօֆրէցընուշ
ունենալ > օննուշ — օննըցընուշ
որոշել > ուրիշուշ — «քարերը ջոկել, հատեղենները մաքրել, իրարից անջատել կավողներին» — ուրիշէցընուշ
տեսանել > դէսնուշ — դէսըցընուշ
կարենալ > գալնօմ — գալցընուշ
աղալ > աղուշ — ախցընուշ (ղ > խ ց-ի պատճառով):

Անցողական կազմելու կանոնը հետևյալն է.— վերցնում ենք կատարյալի եղակի Ա. դեմքը, հանում նրա վրայից ի, ա, ցի, ցա վերջավորություններն և ներացյալի վրա ավելացնում ենք -ցընուշ վերջավորությունը:

Կրավորական բայերն էլ (կամ նաև կրավորակերպ չեզոք բայերը) կարող են կազմել այս ձևով անցողական. ինչպես՝

թավալիլ > թավըլվուշ — թավըլվէցընուշ
ածիլուել > ածիլվուշ — ածիլվէցընուշ
փաթաթուել > փաթաթվուշ — փաթաթվէցընուշ
մոլորուել > մօլորվուշ — մօլորվէցընուշ
կորուել > գօրըվուշ — գօրըվէցընուշ
թողուել > թօղվուշ — թօղվէցընուշ «ապահարզան տալ»
խարուել > խափվուշ — խափվէցընուշ
գղուել > կղվուշ (շների) — կղվէցընուշ

Կան բայեր, որոնք միաժամանակ առանում են մի քանի ձևի անցողական. ինչպես՝

բռնել>պռնուշ—պռընցընուշ, պռնէցընուշ
կերծանել>կէլծնուշ—կելծընցնուշ—կէլծընցնուշ, կէլծընցնուշ,
անցանել>ընցնուշ —ընցցընուշ, ընցընուշ (առաջինը կանոնավոր, երկրորդը անկանոն)
թռանիլ, թռչիլ>թռչուշ—թռչէցընուշ, թրռցընուշ «ցատկել»
առնել>ընուշ «առնել»—ընէցընուշ, ընըցընուշ, որէցընուշ:

Մի խումբ բայեր չեն հետևում վերի կանոնին և իրենց անցողականը կազմում են անկանոն կերպով: Այսպես են՝

դնել>տնուշ—տնէցընուշ
գարկանել>գալնուշ—գալնէցընուշ (հանելով գայնեցի կատարյալից և ոչ թե գարգի ձևից)
իջանել>ինշնուշ—ինշէցընուշ, ինշացընուշ
երթալ>էշտուշ—էշտըցընուշ (կոր. գնացի)
ուտել>ուդուշ—ուդէցընուշ (կոր. գէրա) (ալլուր քան կանոնի կերցնել)
բերել>պէրուշ—պէրէցընուշ
դալ>էգուշ—էգծըցընուշ (եկած գերբայից և ոչ թե էգա կատարյալից կազմված)
ելանել>էլլուշ—էլլէցընուշ
լինել>ըլլուշ—ըլլէցընուշ, ըլլըցընուշ
անկանիլ>ընգնուշ—ընգնէցընուշ:

Այն բայերը, որոնք չունեն -ցնել ձևով անցողական և գործածվում են տալ բայով՝ հետևյալներն են. լլել դալ «լցնել տալ», խփիլ դալ «փոկել տալ», աճել դալ (կա և որնէցընուշ), ձևձել դալ (կա և ձէձէցընուշ), գախ ընել դալ «կախել տալ», ընգնել դալ (կա և ընգնէցընուշ), ձաձել դալ (կա և ձաձէցընուշ), դալ դալ և այս բոլորից հետո հետադրբրական պացըցընել դալ «բանալ տալ» ձևը, որ միևնույն ժամանակ ունի նաև պացընուշ և պացըցընուշ ձևերը: Այս օրինակը հաստատում ցույց է տալիս, թե դալ ձևով անցողականի գործածությունը բարմաթիվ ց-երի խճողումից խուսափելու համար է: Բանալ բայի կանոնավոր անցողականն է պացընուշ (կոր. պացի ձևից կազմված), որ սակայն պիտի շփոթվեր պացընուշ «բաց անել» ձևի հետ, որ հատարակ ներգործականի ձև է և ոչ թե անցողական: Շփոթությունը առաջքն առնելու համար առնծել են պացըցընուշ, որ թեև հարմար է, բայց կատարյալում առ-

լիս է պացըցուցի: Սրա ց-երի խճողումից խուսափելու համար ահա կազմվել է պացըցընել դալ, որի կատարյալն է պացըցընել դվի: Նման պատճառաբանությամբ ձևացած են նաև ձևձել դալ (=ձէձէցընուշ) և ձաձել դալ (=ձաձէցնուշ):

Անցողական բայերը խոնարհվում են հետևյալ ձևով.

ստոր. ներկա	ստոր. անկ.	կար.
խըմէցընիմ	*խըմէցընէլ*	*խըմէցուցի*
խըմէցընիս	*խըմէցընէյդ*	*խըմէցուցիր*
խմէցընո	*խըմէցընէր*	*խըմէցուց*
խըմէցընինք	*խըմէցընալըը*	*խըմէցուցաք*
խըմէցընէք	*խըմէցընէլըը*	*խըմէցուցէք*
խըմէցընին	*խըմէցընէլնը*	*խըմէցուցին*

հրամ.	դերբ.
խմէցու, խմէցուր	*խմէցընող*
խմէցուցէք	*խմէցընէլու, խմէցընէլիք*

Հարցանել>հայցընուշ բայի հրամայականը լինում է հա՛յց, կոր. հց. Գ դեմքը՝ եհայց:

Ի տես անսովոր անցողականի այս առատ գործածության՝ հարց է առաջանում, թե ինչ է այս երևույթի բացատրությունը: Արդյոք այստեղ էլ ունենք բարբառիս մեջ սովորական վարնջականն երևույթներից մեկը, թե կա նաև մի այլ դրդապատճառ: Կարծում եմ, որ դարձյալ թուրքերենի ազդեցությունը պետք է տեսնել այստեղ: Թուրքերենը չունի բնավ տալ բայով կազմված անցողական, բայց ազատորեն շինում է բոլոր բայերից dər և dərt մասնիկներով անցողական ձև: Թուրքերենի այս երևույթը ազդել է նաև Համշենի հայ բարբառի վրա, որպեսզի լավ պահի պարբերից ժառանգած հին հարաբերությունը և ընթացք չառ անցողականի երկրորդ ձևին, որին դիմել են առավելապես հայերենի ճնշյալ բոլոր բարբառները:

ԱՒՏԻԱԼ

Անցողական բայ կազմելու համար գրաբարի -եցուցանել, -ացուցանել վերջավորությունը միառնության օրենքով դարձնում են -ցընել (լեհահայ բարբառում -ցընելու), որից առաջ հաճախ գրվում է ն ձայնավորը:

Երկու տեղ -ցընելու մասնիկի մեջ ը ձայնավորը հետևելով հաջորդ ե-ին՝ դառնում է նուազ կամ ես. այսպես են լսհասալ բարբառի չէբրըցնէլու «մաքրել» և գըր'ցնէլու «կպցնել» բայերը։

Հաջորդ ցուցակում հավաքում եմ (Հանուշի բառարանից քաղելով) այն բոլոր անցողական բայերը, որ հիշված են այստեղ՝ իրենց խոնարհման հետ միասին.

արածեցնել > արէչցնէլու, գարէչցնում, արէչցուցիլ իմ, արէչցուցի

բանկցնել > բ'րոբնցնէլու, բ'օսունցնէլու «ճրագ վառել», դի բ'օսունցնում, բ'օսունցուցիլ իմ, բ'օսունցիր չիրախ «վառիր ճրագը»

փլցնել > բ'ըլցընէլու, դի բ'ըլցունում, բ'ըլցուցիլ իմ

ցուցնել > ցըցնէլու, դի ցուցնում, ցուցուցիլ իմ

«մաքրել» > չէբրըցէնէլու, դի չէբրըցունում

չորացնել > չօրցընէլու, դի չօրցունում

մեծացնել > մէծցընէլու, դի մէծցունում, մէծցուցիլ իմ

մէկտեղցնել > մէգդըխցնէլու «միացնել, կցել», դի մէգդըխցունում, մէգդըխցուցիլ իմ

վերցնել > վէրցընէլու, դի վերցունում, վէրցուցիլ իմ

գիրացնել > գ'էրացնէլու

լցնել, լինքցնել > ըլինքցընէլու, գըլինքցունում, ըլինքցուցիլ իմ

աւելացնել > ավէլցընէլու, դավէլցունում, դավէլցունուլի. ավէլցուցիլ իմ

ուսեցնել > ուդէցնէլու, դուդէցնում, ուդէցուցիլ իմ

իմացնել > իմացնէլու, դիմացնում, դիմացնուլի, իմացուցիլ իմ, բիմացնում, դու ինձի իմաց (հրամայական ձև)

լմնցնել > լմընցընէլու, դի լմընցնում, լմընցուցիլ իմ «վերջացնել»

կպցնել > գըր'ցէնէլու, դի գըր'ցունում, գըր'ցուցիլ իմ

սովրեցնել > սօրվէցնէլու, դի սօրվէցնում, դի սօրվէցնուլի, սօրվէցուցիլ իմ

սրել, սրեցնել > սըրէցնէլու, դի սըրէցնում, սըրէցուցիլ իմ

շարել, շարեցնել > շարէցնէլու, դի շարէցնում, շարէցուցիլ իմ

շիտակել, շիտակցնել > շիդդէցնէլու, դի շիդդէցնում, շիդդէցուցիլ իմ

դարձնել > դ'արցընէլու, դի դ'առցունում, դ'առցուցիլ իմ

խաղացնել > խաղալուցնէլու

ՍԱՀՁԱՎԱ

ագանիլ — հագցընել
անցանիլ — անցընել (չեզոքն է անցնել)
երկայնել — էրկընցընել
իմանալ — իմաց/նել
իջանել — ընչէց/նել
լուանալ — լաֆցընել
լնալ — լըցընել
կշտանալ — գիշդ'ացընել
կորսանել — գօրսընցընել
կպչիլ — գըբցընել
հասկանալ — հասգը'ցնել
հեռանալ — հեռացնել = Հնդ. հէռէնէլու
հնանալ — հրնացընել
ողջանալ — վօխչընչընել
պաղիլ — բաղէցընել
փախչիլ — փախցընել
ուղեցընել Հնդ. «կերցնել»
բաղեցընել Հնդ. «սառցնել»։

Սրանցից դուրս կա նաև տալ բայով պատճառական կազմելու ձևը. օրինակ.

Լհ. Բի դամ մանէլու «մանելու պիտի տամ»։

Բոլոր անցողական բայերը վերջավորվում են ներկայի մեջ -ցանում ձևով և խոնարհվում են չորրորդ յոթդուխթյան համաձայն. օրինակ՝

սահր. ներկա	ավէլցունում
» անց.	ավէլցունուլի
սահմ. ներկա	դավէլցունում
» անկ.	դավէլցունուլի
ապառնի	բավէլցունում
անց. ապ.	բավէլցունուլի
հարակատար	ավէլցուցիլ իմ
դերակատար	ավէլցուցիլ էի

ՎԱՆ

Վանի բարբառում բոլոր անցողական բայերը երկու ձև ունեն՝ կարճ և երկար. կարճ ձևը կազմվում է -ուցել վերջավորութիլամբ,

երկար ձևը՝ -ցուցել վերջավորութիյամբ: Սովորականը -ցուցել ձևն է, որից տալիս ենք ահա մի խումբ օրինակներ.

անցուցանել > ընցուցել
բարձրացնել > պանչըրցուցել
բռնեցնել > պռնըցուցել
քանացնել > պոնցուցել
լացացնել > լոցուցել
լողացնել > լօխկըցուցել
ծիծաղեցնել > ծըծղացուցել, ծը-
ծըղկըտացուցել
կարմրացնել > կարմըրցուցել
կոկեցնել > կոկըցուցել
կորցնել > կուրխացուցել
հալեցնել > խալըցուցել
հասկացնել > խասկըցուցել
մեռցնել > մեռցուցել
ործկացնել > վոռծկացուցել
պառաւացնել > պառվըցուցել
ուռեցնել > ուռուցուցել
սիրեցնել > սիրիցուցել
վազեցնել > վազկըցուցել
վախեցնել > վախցուցել
քալեցնել > քէլըցուցել
փլուցանել > պլըցուցել
քրտնեցնել > քըրտընցուցել
քնեցնել > քընըցուցել

Սրանց կարգն է անցել նաև հարցանել > խառցուցել:
Իբր օրինակ տալիս ենք խասկըցուցել բայի խոնարհումը.

սառր. ներկա	սառր. անց.	կար.
խասկըցուցեմ	խասկըցուցի	խասկըցուցի
խասկըցուցես	խասկըցուցիր	խասկըցուցիր
խասկըցուցի	խասկըցուցէր	խասկըցուց
խասկըցուցենք	խասկըցուցինք	խասկըցուցինք
խասկըցուցէք	խասկըցուցիք	խասկըցուցիք
խասկըցուցեն	խասկըցուցին	խասկըցուցին

հրամ.	դերբ.
խասկըցու	խասկըցուցել
խասկըցուցէք	խասկըցուցած, խասկըցուցիր
մը խասկըցուցե	խասկըցուցող
մէք խասկըցուցե	խասկըցուցէլու

Արգելականում շեշտը (հակառակ ուրիշ բարբառների) դրվում է ոչ թե մի արգելական մակրայի վրա, այլ բայի առաջին վանկի վրա. ինչպես՝

մը խասկըցուցե, մը վո՛ւկըցուցե, մը ծը՛ծղացուցե:

Կարճ ձևով անցողականները ավելի քիչ են. ահա մի քանի օրինակ՝

խառուցել «սպասել», կար. խառուցի
քընուցել (=քընըցուցել)
մէռուցել (=մեռցուցել)
խակլիւցել «հագցնել»
թռուցել «թռցնել»
փոթուցել «պոկել, փրցնել»:

Ծանոթ.— Նկատելի է, որ երբեմն -ուցել ձևի տեղ գըտնում ենք -իւցել. ինչպես՝ խակլիւցել, կար. խակլիւցի, լոցիւցել, կար. լոցիւցի և այլն: Գյուղական ձև է փախցում, խարցում փխ. փախցուցեմ, խարցուցեմ և այլն:

ԿԻԼԻԿԻԱ

Կիլիկիայի բարբառում անցողական (կամ պատճառական) բայերը կազմվում են երկու ձևով. կամ բայի վրա ավելացնելով -ցընիլ մասնիկը և կամ բայի հետ խոնարհելով տալ > դօլ բայը. օրինակ՝

մոռանալ > մառնօլ — մառցընիլ
ապրիլ > արլրլ — արլրցընիլ
իմանալ > իմնօլ — իմնացընիլ
լուալ > վօլօլ — վլացընիլ

Բայց նաև՝

լուալ տալ > վօլօլ դօլ
բերել տալ > բ'իլիլ դօլ
բռնալ տալ > բ'անօլ դօլ

Կանոն չկա իմանալու համար, թե երբ է դրվում տալ բալը և երբ -ցնել մասնիկը: Այս վերջինն էլ երբեմն ունենում է -ցընիլ ձևը, երբեմն էլ -ացընիլ, ըցընիլ, ինչպես երևաց վերևի օրինակներից:

Անցողական բալի խոնարհումը կատարվում է հետևյալ ձևով. օրինակ ենք առնում խմցնել բալը.

սառ. ներկա	սառ. անկ.	կատարյալ
խումցունիմ	խումցունա	խումցուցա
խումցունիս	խումցունալ	խումցուցալ
խումցունէ	խումցունէլ	խումցուց
խումցունինք	խումցունոնք	խումցուցոնք՝
խումցունէք	խումցունաք	խումցուցաք
խումցունին	խումցունան	խումցուցուն

հրամ.	դերբ.
խումցու (կամ խումցուլ)	խումցունիլ
խումցուցէք	խումցուցօձ, խումցուցիլ
	խումցունէօղ
	խումցունիլօ, խումցունիլէք

Հետևյալ ցուցակով տալիս ենք մի խումբ բալերի կատարյալի ձևը, ապա անցողականի անորոշը և կատարյալի նկատի Ա. դեմքը.

կանել>գը՝ևիլ	գը՝ևիցի	գ՝ըևը՝ցընիլ	գը՝ևը՝ցը՝ցա
դառնալ>դ՝առնօլ	դ՝առցո	դ՝առցընիլ	դ՝առցըցա
քնել>քնանօլ	քնացո	քընացընիլ	քընացըցա
ուռել>ուդիլ	դիլօ	դըլ՝ցը՝նիլ	գը՝լցը՝ցա
վադիլ>վադիլ	վադիցի	վադցընիլ	վադցըցա
դալխիլ>դ՝իրնօլ	դ՝իրօ	դ՝ը՝րցը՝նիլ	դ՝ըրցը՝ցա
հասանել>հասնօլ	հասօ	հասցընիլ	հասցըցա
հևռանալ>խօսվօնօլ	խօսվօցո	խը՝սվը՝ցընիլ	—
վատաճանալ>վէդնօլ	վէդցո	վէդցը՝նիլ	վէդցըցա
վախենալ>վախնօլ	վախցո	վախցընիլ	վախցըցա
դողանալ>դ՝ադնօլ	դ՝ախցո	դ՝ախցունիլ	դ՝ախցուցա
հիւանդանալ>հիվընդնօլ	հիվը՝նդցո	հը՝վը՝նդցընիլ	հը՝վը՝նդցը՝ցա
ամաչել>ամաչնօլ	ամըչցո	ամըչցընիլ	ամըչցըցա
ճանաչել>ջէնչնօլ	ջէնչցո	ջէնչցընիլ	ջէնչցը՝ցա
խլանալ>խալնօլ	խալցո	խալցունիլ	խալցուցա

կակղանալ>գագուդնօլ	գագուդցո	գագըդցընիլ	գագըդցըցա
երդնուլ>օլդ՝վնօլ	օլդվնցո	ը՝լդ՝վընցը՝նիլ	ը՝լդ՝վընցը՝ցա
ուռնուլ>ուռնօլ	ուռցո	ուռցու(ը՝)նիլ	ուռցուցա
ուռենալ>ուռնօլ	ուռիցո	ուռուցունիլ	ուռուցուցա
փչչիլ>փը՝լչիլ	փօլօ	փը՝լցը՝նիլ	փը՝լցը՝ցա
մռանիլ>մօդնօլ	մօգօ	մը՝դցը՝նիլ	մը՝դցը՝ցա
անցանիլ>անցնըլ	անցօ	անցընիլ	անցըցա
ադաուաիլ>ադդիւդիլ	ադդիւդիցի	ադդիւդցընիլ	ադդիւդցուցա
աշխաաիլ>աշխադըլ	աշխադիցո	աշխադցընիլ	աշխադցըցա
երեքալ>իլիլօլ	իլիլցո	իլայլցընիլ	իլայլցըցա
գլաորիլ>գ՝ը՝լգը՝լիլ		գ՝ըլգը՝լցը՝նիլ	գ՝ը՝լգը՝լցը՝ցա
երևիլ>օլօվնօլ		ը՝լը՝վցը՝նիլ	ը՝լը՝վցը՝ցա
իջանիլ>իջնօլ		իչացընիլ	իչացըցա
խաղալ>խաղօլ		խախցընիլ	խախցըցա
խմիլ>խումիլ		խը՝մցը՝նիլ (ու)	խումցուցա
խուսուվանիլ>խուսուվանըլ		խը՝սգը՝վը՝ցը՝նիլ	խուսգուվանցուցա
կսկծալ>գը՝սգը՝ձօլ		գը՝սգը՝ձը՝ցը՝նիլ	գը՝սգը՝ձացուցա
հանդիպիլ>հանդ՝ըբալ		հանդը՝բցը՝նիլ	հանդըբցուցա
հրամ(այ)ել>հրամալիլ		հրյամցընիլ	հրյամցըցա
նեմանիլ>օյմօննօլ		նըմանցընիլ	նըմանցըցա
		օյմօնցընիլ	օյմօնցուցա

Հետաքրքրական է Զթ. բարցընիլ բալը, որ համապատասխանում է ուրիշ բարբառների ճաացնել բալին՝ «սպասել, վերջացնել, Ջ. դառարկել» նշանակությամբ: Այս բալը գրաբարի պարտալ>բայօր «դառարկ» բառից է և պարպիլ>բայրընօլ «սպասվել» բալի անցողականն է, որ կա նաև բայրըցընիլ ձևով և՛ բարեձևության (euphémisme) համար դարձած է ապա բարցընիլ, կոր. բարցըցը՝, հրամ. բարցուլ:

Գրաբար լցուլ բալը կորցնելով իր նախաձայնը՝ դառնում է Զթ. նօլ, որ կատարյալում տալիս է լը՝ցա՝ գրաբար լցի ձևին համապատասխան: Գրաբար լցուցանել անցողականի դեմ Զթ. չունի համապատասխան ձև. կարևոր դեպքում կարելի է ասել իլըցընիլ:

Թուրքերեն բառերից էլ կարելի է կազմել անցողական բայ. ինչպես՝ սաղցընիլ «կենդանացնել», թեմիզցընիլ «մաքրել», քուրտուցընիլ «անդամալույծ դարձնել», բայըշցընել «հաշտեցնել»:

Անցողական բայերի շարքումն են դասվում նաև հարցանել>հայցընկի, հայցընցը՝, հայցուց և ցուցանել>ցը՝ցը՝նկի, ցը՝՛ցը՝ցա, ցօցու:

Սվեդիա.

Սվեդիայի բարբառում անցողականը կազմվում է ցընկի վերջավորությամբ. խոնարհվում է հետևյալ ձևով.

սառ. ներկա	սառ. անց.	սահմ. կար.
խմցընիմ	*խմցընէր է*	*խմցըցա*
խմցընիս	*խմցընէր*	*խմցըցիր*
խմցընէ	*խմցընիր*	*խմցէօց*
խմցընինք	*խմցընէր ինք*	*խմցըցունք*
խմցընիք	*խմցընէր իք*	*խմցըցոք*
խմցընին	*խմցընէր ին*	*խմցըցէն*

հրամ.	դերբ.
խմցէօ	*խմցընիլ*
խմցըցիք	*խմցընիւղ*
	խմցըցուձ, խմցուցիր
	խմցընիլա, խմցընիլոք:

Մի քանի օրինակ էլ բարդ և բաղադրյալ ձևերից.

սահմ. ներկա	սահմ. ներկ. շարունակական
գը խմցընիմ	*գու խմցընիմ*
գը խմցընիս	*գու խմցընիս*
գը խմցընէ	*գու խմցընէ*
գը խմցընինք	*գու խմցընինք*
գը խմցընիք	*գու խմցընիք*
գը խմցընին	*գու խմցընին*

սահմ. անկ.	սահմ. անկ. շարունակական
գը խմցընէր է	*գու խմցընէր է*
գը խմցընէր	*գու խմցընէր*
գը խմցընիր	*գու խմցընիր*
գը խմցընէր ինք	*գու խմցընէր ինք*
գը խմցընէր իք	*գու խմցընէր իք*
գը խմցընէր ին	*գու խմցընէր ին*

ապառնի	անցյալ ապառնի
բըր խմցընիմ	*բըր խմցընէր է*
բըր խմցընիս	*բըր խմցընէր*
բըր խմցընէ	*բըր խմցընիր*
բըր խմցընինք	*բըր խմցընէր ինք*
բըր խմցընիք	*բըր խմցընէր իք*
բըր խմցընին	*բըր խմցընէր ին*

հարակատար	գերակատար
խմցըցիր իմ	*խմցըցիր էր է*
խմցըցիր իս	*խմցըցիր էր*
խմցըցիր է	*խմցըցիր իր*
խմցըցիր ինք	*խմցըցիր էր ինք*
խմցըցիր իք	*խմցըցիր էր իք*
խմցըցիր ին	*խմցըցիր էր ին*

Անցողական բայ կազմելու երկրորդ ձևն է ներգործականի հետ խոնարհել տալ>դվիլ բայը:

Ահա մի քանի օրինակ թե պարզ և թե կրկնակ անցողականներից.

բ'երիլ դվա, տսիլ դվա, ավչիլ դվա «երգել տվին», խոսըցընիլ դվա, նիղոցընիլ դվա, հասգըցընիլ դվա:

Ամփոփելով այս բոլորը, կտեսնենք, որ անցողականի մասնիկն է միջին հայերենում -ցնել. Ջուղայի բարբառում -ացնել, Հնդկաստանն -ցանել, Ագուլիս -ցա՛նիլ, Մարաղա -ցուցել, Նոր-Նախիջևան, Պոլիս -ցուցնել, Համշեն -ցնուշ, Առտիալ -ցընել (Հմ. -ցընելու), Վան -ուցել, -ցուցել, Կիլիկիա, Սվեդիա -ցընիլ և այլն:

Այս բոլոր ձևերը ծագում են գրաբարի -ցուցանել վերջավորությունից, դանազան ազումներով: Ամենից հավատարիմը կարելի է կոչել Մարաղայի բարբառը, որ գրաբարի -ացուցանել ձևը վերածելով -ացուցել, ներկայացնում է մեզ ճիշտ այն երևույթը, որ գտնում ենք ամենահին հայերենի մեջ էլ. այն է՝ Բ տիպարի -ամիջավանկի կրճատումը. ինչպես՝ ոռոգանել—ոռոգել, լուանալ—լուալ: Մյուսների մեջ ազումը կատարվում է ոչ թե -ան- միջավանկի վրա, այլ ցու վանկի վրա, ինչ որ արագաբանության (haplologie) օրենքի արդյունքն է (կրկին ց-երից խուսափելու համար): Այսպիսով՝ Մարաղայի բարբառը կանգնած է այս կետում բոլորո-

վին տարբեր ուղղության վրա, քան միացյալ բոլոր բարբառները՝ թեև բոլորի էլ ընդհանուր նպատակը կրճատումն է:

Առաջին ցու վանկի ուղղակի կրճատումն են ցույց տալիս Ագուլիսի և Հնդկաստանի բարբառները, որոնք դրաբար -ցուցանել դարձնում են -ցանել: Ջուղայի բարբառը դրաբարի -ացուցանել և -եցուցանել ձևերից ընդհանրացրել է -ացուցանել, որից՝ ճիշտ նախորդ կրկռսի նման կրճատելով -ցու- վանկը, ստացել է -ացնել: Մյուս բարբառների մեծամասնությունը դրաբար -ացուցանել. -եցուցանել ձևերից կրճատել է երկրորդ (ցա) վանկը, որով ստացվել է -ացուցնել, -եցուցնել: Սրա միջից էլ կրճատվելով -ու- ձայնավորը՝ առաջացել է -ցնել, որ մյուս բարբառների, ինչպես և միջին հայերենի ընդունած ձևն է:

Ամենից ավելի կրճատ ձևն ունի Մշո բարբառը, ուր դրաբար -ացուցանել մասնիկը համառոտվել, դարձել է ցու կամ ու և խոնարհվում է իբրև Դ լծորդության. օրինակ՝

կը հարցում	կը հարցունք
կը հարցուս	կը հարցուք
կը հարցու	կը հարցան

նաև կը հերքվում «հարցնեցուցանեմ», կը վերում, կը վերուս, կը վերու «կվերցնեմ, կվերցնես, կվերցնեն», չըն հա՛նու «ոչ հասուցանենն», պոի մեր մալ փիացուն, երբաճ փիացուն՝ «մեր եղան պիոի սատկեցնեն, թող սատկեցնեն»:

Այս բոլոր ձևերից երկու դրական լեզուները ընտրել են -ցնել ձևը, որ ա, ե ձայնավորների հետ միասին դառնում է նաև -ացնել, -եցնել:

«Անլուծանելի խնդիր մը եղած է ասանց»,— ասում է Ալտընյանը (էջ 93).— անցողական բայի -ցնել վերջավորության դրության ձևը: Գրական լեզվի կազմավորության ժամանակ երեք դրչության կար՝ ցուցնել, ցրնել և ցնել: Մինչև անգամ ցուցնել բայը գրվում էր ցցրնել, ցցուցնել կամ ցցնել. հասկացնել բայը գրվում էր հասկրցրնել, հասկուցրնել կամ հասկրցուցնել: Շփոթության պատճառը «առանձին անորոշ և տարատամ հնչմունքն» է համարում Ալտընյանը: Բայց իրապես միայն այդ չէր պատճառը: Գրաբարյանները գրում էին -ցուցնել, որպեսզի գոնե մասամբ պահած լինեն դրաբարի -ացուցանել վերջավորության ցու հնչյունը: Օրինակ՝ նույնիսկ 1899 թվականին, գրաբարյան հեղինակ Սաքիսյան վ. Պարոնյանը, «Բանասէր» հանդեսում, էջ 84, գրում է «անդրադարձնել» և ոչ «անդրադարձնել»: Ալտընյանը ինքը, հիմ-

նվելով ա>ը սղման օրենքի վրա, պահանջում է գրել -ցընել. և ինքն էլ այդպես է գրում: Այդպես էին գրում նաև միջին շրջանի գրողները ընդհանրապես: Օրինակ Մամուրյանը, «Անիծեալն» վեպի թարգմանության մեջ, հատոր Բ (Զմյուռնիա, 1875 թ.), էջ 95՝ կ'փալլեցընէին, 92՝ դարձընել, 98՝ դրադեցընել և այլն: Այս ը ձայնավորը հնչման ճշտությունը ապահովելու համար էր, ինչպես որ նույն տեղը էջ 82 գրված է կ'պարահիճ: Ավելի ուշ, մեր ուղղագրության օրենքի համաձայն, ըստ որում բառի մեջ ը չի գրվում, անցողականն էլ դարձավ -ցնել: Եվ այս ձևը ընդունված է այժմ թե արևելյան և թե արևմտյան գրականում:

Արևմտյան գրականում կարևոր է պահել միայն անցողականը (=դրաբար անցուցանել), դանազանելու համար անցնել (=դրաբար անցանել) չեզոքից, որ շատեր միատեսակ գրում են անցնել: Արևելյան գրականում այս հարցը ընդհանրապես չի դրվում, որովհետև այստեղ տարածված է չեզոքի համար անց կենալ և անցողականի համար անց կացնել ձևը:

Մնում է որոշել, թե երբ պետք է դնել -ցնել և երբ -ացնել -եցնել: Այստեղ երկու գրական լեզուները որոշ չափով շեղվում են իրարից, որովհետև արևմտյան գրականը հաճախ ձայնավոր չի դնում. օրինակ՝ արևելյան գրականով ասում ենք խաղացնել, մոռացնել, իսկ արևմտյան գրականով՝ խաղցնել, մոռցնել:

Արևելյան գրականի համար Աբեղյան, «Աշխարհաբար քերականություն», 1906, էջ 94, տալիս է հետևյալ կանոնները.

1) -ալ, -անալ վերջացող բայերի վրա դրվում է -ացնել. ինչպես՝ խաղալ—խաղացնել, զարմանալ—զարմացնել:

2) -ել, -եմալ վերջացող բայերի վրա դրվում է -եցնել. ինչպես՝ խօսել—խօսեցնել, մօտենալ—մօտեցնել:

3) -չել, -նել վերջացող բայերի վրա դրվում է -ցնել. ինչպես՝ թռչել—թռցնել, հասնել—հասցնել, մանել—մացնել:

Արևմտյան գրականի համար Ալտընյանը էջ 89, որևէ կանոն չի առաջարկում: Մենք վերը Գալոի բարբառի համար դրել ենք հետևյալ կանոնը.

Առնում ենք բայի կատարյալի եզակի Ա դեմքը, հանում սրա վրայից ի, ա, ցի, ցա վերջավորությունները և ավելացնում ենք -ցնել: Այժմ այս կանոնը կարելի է ավելի լավ ձևակերպել հետևյալ ձևով. առնում ենք կատարյալի եզակի Ա դեմքը, հանում սրա վերջից ի, ա ձայնավորը և ավելացնում ենք -ցնել վերջավորությունը (եթե պատահի կրկին ց, մեկը ջնջվում է):

Այս կանոնը գործում է նաև գրականի համար։

Գաղանճյանը, «Նոր քերականութիւն», Պոլիս, 1910 թ., էջ 183, առաջարկում է վերցնել բայի կատարյալի եզակի Դ դեմքը և ջնջելով նրա վրայից աւ վերջավորութիւնը, ավելացնել -ցնել (երկու ց կամ ձ պատահելու դեպքում՝ մին ջնջվում է). օրինակ՝ մաճել, մա-աւ. մացնել, աճցնել, աճց-աւ, աճց (ց)նել. դառնալ, դարձ-աւ, դարձ-(ց)նել. յիշել, յիշ-եց, յիշեցնել. խօսիլ, խօսեց-աւ, խօսեցնել. հանգչիլ, հանգչեց աւ, հանգչեցնել. լալ, լաց-աւ, լացնել. կենալ, կեց-աւ, կեցնել. զարմանալ, զարմաց-աւ, զարմացնել և այլն։

Առաջարկված կանոնների մեջ թվում է, թե այս վերջինն է լավագույնը։ Այնուամենայնիվ բոլորն էլ անեն իրենց բացառութիւնները։ Պոլսի բարբառի համար վերը ևս գրել էի 22 բացառութիւն. բայց, գրականի մեջ, և հատկապես արևելյան գրականի մեջ, այդ բացառութիւններից շատը ջնջվում է. ինչպես՝

արևելյան	արևմտյան		
խաղալ	*խաղաց*	*խաղացնել*	*խաղցնել*
ցաւիլ	*ցաւեց-աւ*	*ցաւեցնել*	*ցաւցնել*
յաջողիլ	*յաջողեց-աւ*	*յաջողեցնել*	*յաջողցնել* և այլն,

որոնց մեջ արևմտյան ձևերը կանոնին չեն հպատակվում, իսկ արևելյանները կանոնավոր են։

Շատ անկանոն են արևմտյան կորսնցնել (=արևելյան կորցնել) և լեցնել (արևելյան լցնել) անցողականները։

Սրա հակառակ լալ—լացնել կանոնավոր է արևմտյան գրականում. իսկ լալ—լացացնել անկանոն է արևելյան գրականում։

Անցողական բայերի խոնարհումը երկու գրական լեզուների մեջ հետևյալ պատկերն ունի (դնում ենք միայն հիմնական ժամանակները).

սադր. ներկա	սադր. անկ.
զարմացնեմ	*զարմացնէի*
զարմացնես	*զարմացնէիր*
զարմացնէ (ի)	*զարմացնէր*
զարմացնենք	*զարմացնէինք*
զարմացնէք	*զարմացնէիք*
զարմացնեն	*զարմացնէին*

կար. (արևմտահայերեն)	կար. (արևելահայերեն)
զարմացուցի	*զարմացրի*
զարմացուցիր	*զարմացրիր*
զարմացուց	*զարմացրեց*
զարմացուցինք	*զարմացրինք*
զարմացուցիք	*զարմացրիք*
զարմացուցին	*զարմացրին*

հրամ. (արևմտ.)	հրամ. (արևել.)
զարմացնէր	*զարմացրու*
զարմացուցէք	*զարմացրէք*

դերբ. (արևմտ.)	դերբ. (արևել.)
զարմացուցած, զարմացուցեր	*զարմացրած, զարմացրել*
զարմացնելու	*զարմացնելու*

Այսպես են խոնարհվում նաև հարցնել և ցուցնել բայերը, որոնք սակայն անցողական չեն։

Խոնարհման այս ձևը ընդհանրապես նույն է կանոնավոր բայերի ձևի հետ. տարբեր են միայն հրամայականը երկու գրական լեզուների մեջ, կատարյալը արևելյան գրականում, ինչպես և անցյալ դերբայը։

Այս տարբերությունը պետք է բացատրել ըստ իս հետևյալ ձևով.

Բոլոր ձևափոխությանց սկզբնապատճառը հրամայականից է բխում։

Անցողականի հրամայականը դրսբարում երկու տեսակ վերջավորություն ունի. ո՛ և ցո՛։ Այն բայերը, որոնք ներկայի մեջ վերջանում են -ուցանեմ, հրամայականում դառնում են -ո՛, իսկ այն բայերը, որոնք ներկայում վերջանում են -ծուցանեմ կամ -ացուցանեմ, բնականաբար պիտի առանան -եցո՛, կամ -ացո՛։ Այսպես՝ մի կողմից՝

հաստուցանեմ—հաստո՛
արթուցանեմ—արթո՛
թաքուցանեմ—թաքո՛
հաստուցանեմ—հաստո՛

Եվ մյուս կողմից՝

կեցուցանեմ—կեցի
զգեցուցանեմ—զգեցի
բխեցուցանեմ—բխեցի
ապրեցուցանեմ—ապրեցի
լցուցանեմ—լցի
խանարհեցուցանեմ—խանարհեցի
խաղացուցանեմ—խաղադրցի:

Գրաբարի հրամայականի -ո՛ վերջավորությունը առնվելով իբր -ոյ (ասես քիչ հետո), դարձել է բարբառներում ո՛ւ (ինչպես՝ մարդոյ > մարդու, հայոյ > հայու), հետևաբար և -ցո՛ վերջավորությունը դարձել է -ցու: Գոլսի բարբառը թեև հրամայականի մեջ ընդհանրապես ունի -ցո՛ւ, բայց մի քանի տեղ էլ հասցրել է մեզ -ո՛ւ. ինչպես՝ հասո՛ւ, խմո՛ւ, վերո՛ւ, մեռո՛ւ, բռո՛ւ, փախո՛ւ, որոնք լիովին հավասար են հասցո՛ւր, խմցո՛ւր, վերցո՛ւր, մեռցո՛ւր, բռցո՛ւր, փախցո՛ւր ձևերին: Արդ, այս ձևերը ծագում են ուղիղ գծով գրաբար -ո՛ ձևից. այսպես հասո՛ւ<գրաբար հասո՛:

Գրաբարի անցողականները կարող են երկու ձև ունենալ

արբուցանեմ—հրամ. արբո՛
արբեցուցանեմ—հրամ. արբեցո՛:

Ենթադրում եմ, որ երկուսից հնագույնը արբուցանեմ ձևն է, որ իր կարճությանը պատճառով ավելի ուշ ընդարձակվեց եց (կամ աց) մասնիկն առնելով, ճիշտ ինչպես ունենք մի կողմից ածի, բերի, հանի (երեք հնացորդ հնություն), իսկ մյուս կողմից ընդհանուր տարածված -եցի ձևը:

-ուցանեմ ձևի հաղթությունը մանավանդ հրամայականի՝ մեջ՝ սկսել էր արդեն ե դարից: Երգ երգոցի հին թարգմանության մեջ Բ 14 ունենք Լուս ինձ զբարբառ քո (ձեռագրում գրված է նուխիակ լուսլ), որ սակայն երկրորդ թարգմանության մեջ ջնջել դարձրել են Լսելի արա (ասես ՀԱ 1924, 221 և անցողական ՆՀԲ լուացանեմ բալի տակ):

Ավելի նոր շրջանում էլ, դեռևս, որ -ու հրամայականի ձևը շատ կարճ է, իսկ -ցո՛ւ ձևը շատ ավելի ազգու, ժողովուրդը օգտվելով գրաբարի երկրորդ ձև անցողական ունենալու հնարավորությունից, անցել է դրան. օրինակ՝ գրաբար նատուցանեմ—հրամ. նատո՛ ձևի դեմ հնարել է նատեցուցանեմ (որ չկա գրաբարի մեջ)

և կազմել է սրանից նստեցնել, որի հրամայականն էլ կլինի նըստեցո՛ւ:

Այսպիսով ընդհանրացել է -ցո՛ւ ձևը:

Գրաբարի Բ լծորդության բ տիպարի հրամայականը վերջանում է -իր (ասեր), սրա նման էլ Գ լծորդության բ տիպարը և Դ լծորդության բ տիպարը վերջանում են -ցի՛ր (գոյացիր, զգեցիր): Բարբառում այս -ի՛ր, -ցի՛ր ձևերը մնում են անփոփոխ, բայց նաև առանց ր-ի (ինչպես՝ հագի=հագիր, մոռցի=մոռացիր, գողցի=գողցիր):

Արդեյական ձևն էլ, որ ուներ միշտ -ի՛ր, ազդում էր իր վերջաձայնով և հրամայականի վրա հաստատվեց -ր:

Այսպիսով գրաբար -ցո՛ > աշխարհաբարի -ցո՛ւ հրամայականը դարձավ -ցուր: Արևմտյան բարբառներում այս ձևը շատ սովորական է, որ և միակ ընդունվածն է գրական լեզվի մեջ: Բայց արևելյան բարբառներն էլ ունեցել են այս ձևը նախապես, որի ապացույցը պահում են Ագուլիս ցրցո՛ւր, սվրցո՛ւր և Ջուղա լեցացո՛ւր, բ՛ացցրացո՛ւր և այլն: Այնուհետև արևելյան բարբառներում շրջվեց -ցո՛ւր վերջավորությունը և առացվեց հրամ. -ցրո՛ւ: Այս բավական էր, որ ոչ միայն կազմվեր հոգնակի հրամ. -ցրի՛ք (զարմացրի՛ք, հարցրի՛ք), այլև կարծվելով, թե արմատն է զարմացր-, սրանից կազմվեր կար. զարմացրի, զարմացրիր: Կարծում եմ, որ կատարյալի նախկին ձևն էր *զարմացցի կամ *զարմացի, որ այնուհետև իսպառ անհետացավ: Այս զարմացրի ձևը ընդլայնվով, արդի էլ կազմեցին (Ա լծորդության ա տիպարի նման) զարմացրեցի, զարմացրեցիր, ճիշտ ինչպես բերի—բերեցի, առի առեցի, դրի—դրեցի և գավառական գլորի—գլորեցի, սիրի—սիրեցի և այլն, որ թեև գավառական, բայց երբեմն երեում է գրական լեզվումն էլ:

Ջուղայի բարբառը նորից հրամայականի վրա ավելացրեց ր և հարցրո՛ւ ձևն էլ դարձրեց հարցրո՛ւր:

Ասացինք, որ ամեն բայ չի կարող առանձնակ -ցնել մասնիկը՝ անցողական կազմելու համար. շատ բայ էլ կա, որ անցողական է դառնում առանց բայի օգնության: Գազանճյան, «Նոր քերականություն», 1910 թ., էջ 184, այս մասին տալիս է հետևյալ կանոնը.

«-ել վերջացող ներգործական բայերի մեծագույն մասը, -նել վերջացող բոլոր ներգործականները, ինչպես նաև -ցնել վերջացող ներգործականներից մի քանիսը իրենց անցողականը կազմում են առանց բայով, ինչպես՝

դրել—դրել տալ
առնել—առնել տալ
բանալ—բանալ տալ և այլն:

Չեզոք բայերը, ինչ վերջավորութիւն էլ որ ունենան, անպատճառ առանում են -ցնել և ոչ երբեք տալ. որ հատուկ է միայն ներգործական բայերին»:

Նույն կանոնը տալիս է նաև Ալանյան, 90—91, օրինակ բերելով չեզոք բայերից՝ մեծցնել, չորցնել, սաքցնել, պաղեցնել, դինովցնել, ծերացնել, անօթեցնել, մահցնել, ծաղկեցնել և այլն: Իսկ ներգործական բայերից՝ բանալ տալ, գոցել տալ, ընել տալ, դնել տալ, կտրել տալ, վճարել տալ և այլն:

Սրանց վրա ավելացնում է և այն հետաքրքիր նկատողությունը, որ չեզոք բայերի մի մասը չի առանում -ցնել մասնիկը, այլ ունենում է առանձին ներգործական բայ. ինչպես՝

մեալ—թողուլ (թողնել)
ելլել—հանել
երթալ—դրկել (ուղարկել) և այլն:

Երբ անցողականը կազմված է տալ բայով, գործածության մեջ խոնարհվում է միայն տալ բայը, իսկ առաջին բայը մնում է միշտ անորոշ ձևով. ինչպես՝ բանալ տուր, գոցել տվավ, մաքրել տամ, վճարել կու տամ և այլն: Այս դեպքում իլ վերջացող բայերն առանում են -ել ձևը, ինչպես և -ցնել մասնիկն առանալու ժամանակ. ինչպես՝ սորվիլ—սորվեցնել, տրամիլ—տրամեցնել, խօսիլ—խօսել տալ, նայիլ—նայել տալ և այլն:

Կրկին անցողականը կազմվում է -ցնել ձևով անցողականի վրա ավելացնելով տալ բայը, իսկ եթե անցողականը կազմված է տալ բայով, այդ տալ բայը կրկնելով. ինչպես՝ մոռացնել տալ, դրել տալ տուի, կարել տալ տուինք:

Ալանյան, 90, հատուկ ուշադրություն է դարձնում անցողականի կրկին տեսակների վրա, որոնց մասին խոսեցինք վերը:— Չեզոք բայերից կազմված անցողականները քան ձևի միայն անցողական են. իրապես նրանք պարզ ներգործական են, ինչպես՝ մեռցնել, լմնցնել, լոգնեցնել, կորսնցնել (կորցնել), վրցնել, վերցնել, խաղացնել, կպցնել, թռցնել, գօրացնել, արամեցնել և այլն, որոնք կազմված են մեռնիլ, լմնալ, լոգնիլ, կորսիլ, փրթիլ, վերնալ, խաղալ, կպչիլ, թռչիլ, գօրանալ, արամիլ և այլն բայերից:

Կան մի խումբ անցողական բայեր, որոնք գրաբարից փոխառնված լինելով՝ ունեն -ուցանել վերջավորութիւնը, չեն հպատակվում անցողականի կազմութեան վերոհիշյալ օրենքներին և չեն խոնարհվում աշխարհաբարի խոնարհման համաձայն: Նրանք կամ բնավ չեն խոնարհվում, կամ խոնարհվում են ստորադասական ներկա և անկատար, ինչպես և պիտի, կը, թող բառիկների հետ միասին, և կամ ու առավելն խոնարհվում են գրաբար ձևով: Այսպես են՝ մատուցանել, յարուցանել, ուսուցանել, սնուցանել, զեկուցանել, հատուցանել, կառուցանել և այլն, ինչպես՝

մատուցանեմ, մատուցանէի, կը կառուցանեմ, պիտի յարուցանէ, թող սնուցանէ, զեկուցի, հատուցի, մատուցի, կառուցի և այլն. այժմ սկսել են սովորական դառնալ զեկուցեց, հատուցեց, կառուցեց և այլն ձևերը:

Վերջացնելու համար այս գլուխը, ավելացնում ենք այն, որ քրդերենում էլ անցողականը կազմվում է danə *«տալ» բայով.*

danə kərənə *անել տալ*
danə kuštənə *սպանել տալ*

Խոնարհման ժամանակ խոնարհվում է միայն danə *«տալ» բայը* (Beidar, Gram. Kurde, 40):

Անշուշտ անցողականի այս ձևը հայերենից է անցել քրդերենին, որովհետև «տալ» բայով անցողական ոչ պարսկերենում կա և ոչ էլ ուրիշ հարևան մի լեզվում:

3. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅ

Կրավորականի կազմութեան մասին արդեն խոսել ենք՝ միջ թերևով հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական զանազան լեզուների կրավորական կազմելու բոլոր ձևերը:

Գրաբարում կրավորականը կազմվում է լծորդութեան փոփոխութեամբ, այսինքն ներգործականի վերջավորութիւնները վերածելով մի ուրիշ ձևի:

Առաջին լծորդութեան երկու տիպարների ներգործականը վերածվում է կրավորականի՝ խոնարհվելով երկրորդ լծորդութեամբ: Ահա նրանց համեմատական տախտակը.

Սահմանական եղանակ

ներկա

ներգ.	կրավ.	ներգ.	կրավ.
սիրեմ	*սիրիմ*	*հատանեմ*	*հատանիմ*
սիրես	*սիրիս*	*հատանես*	*հատանիս*
սիրէ	*սիրի*	*հատանէ*	*հատանի*
սիրեմք	*սիրիմք*	*հատանեմք*	*հատանիմք*
սիրէք	*սիրիք*	*հատանէք*	*հատանիք*
սիրեն	*սիրին*	*հատանեն*	*հատանին*

անց. անկ.

սիրէի		*հատանէի*
սիրէիր		*հատանէիր*
սիրէր	(նույն)	*հատանէր* (նույն)
սիրէաք		*հատանէաք*
սիրէիք		*հատանէիք*
սիրէին		*հատանէին*

անց. կար.

սիրեցի	*սիրեցայ*	*հատի*	*հատայ*
սիրեցեր	*սիրեցար*	*հատեր*	*հատար*
սիրեաց	*սիրեցաւ*	*(ե)հատ*	*հատաւ*
սիրեցաք	*սիրեցաք*	*հատաք*	*հատաք*
սիրեցէք	*սիրեցայք*	*հատէք*	*հատայք*
սիրեցին	*սիրեցան*	*հատին*	*հատան*

ապառնի

սիրեցից	*սիրեցայց*	*հատից*	*հատայց*
սիրեսցես	*սիրեսցիս*	*հատցես*	*հատցիս*
սիրեսցէ	*սիրեսցի*	*հատցէ*	*հատցի*
սիրեսցուք	*սիրեսցուք*	*հատցուք*	*հատցուք*
սիրեսջիք	*սիրեսջիք*	*հատջիք*	*հատջիք*
սիրեսցեն	*սիրեսցին*	*հատցեն*	*հատանիջիք*
			հատցին

հրամ.

սիրեա	*սիրեաց*	*հատ*	*հատիր*
սիրեսջիր	*սիրեսջիր* / *սիրիջիր*	*հատջիր*	*հատջիր*

մի սիրեր	*մի սիրիր*	*մի հատաներ*	*մի հատանիր*
սիրեսցէք	*սիրեսցարուք* / *սիրիջիք*	*հատէք*	*հատարուք*
մի սիրէք	*մի սիրիք*	*մի հատանէք*	*մի հատանիք*

սաոր. ներկա

սիրիցեմ	*սիրիցիմ*	*հատանիցեմ*	*հատանիցիմ*
սիրիցես	*սիրիցիս*	*հատանիցես*	*հատանիցիս*
սիրիցէ	*սիրիցի*	*հատանիցէ*	*հատանիցի*
սիրիցեմք	*սիրիցիմք*	*հատանիցեմք*	*հատանիցիմք*
սիրիցէք	*սիրիցիք*	*հատանիցէք*	*հատանիցիք*
սիրիցեն	*սիրիցին*	*հատանիցեն*	*հատանիցին*

դերբ.

սիրել	*սիրիլ*	*հատանել*	*հատանիլ*
սիրող	—	*հատ(ան)ող*	—
սիրեալ	*սիրեցեալ*	*հատեալ*	*հատեալ*
սիրելոց	*սիրելոց* / *սիրելի*	*հատանելոց*	*հատանելոց* / *հատանելի*

Երկրորդ յօրդութեյան երկու տիպարների կրավորականը առանձին ձև չունի, այս կարգի բայերի կրավորականը նույն է ներգործականի հետ, օրինակ՝ համարիմ նշանակում է թե «համարում եմ» (ներգործական) և թե «համարվում եմ» (կրավորական). դատիմ նշանակում է թե «դատում եմ» և թե «դատվում եմ»։ Օրինակ՝ Մի՛ դատիք (ներգ.), զի մի՛ դատիցիք (կրավ.), զի որով դատաստանաւ դատիք (ներգ.), դատելոց եք (կրավ.) (Մատթ. է 1—2)։

Աստուած է՝ որ ծնաւ («ծնուեց», կրավ.) և Աստուած է՝ զոր ծնաւ («ծննդց», ներգ.) (Կոչ. ժա)։

Իմաստի տարբերութեյամբ՝ ձևի այս նմանութեյան պատճառով այս կարգի բայերը կոչվում են հապարակ։

Երրորդ յօրդութեյան կրավորականը կազմվում է հետևյալ ձևով. 1) առաջին տիպարի մեջ ներկան, անկատարը և արդելականը նույն են ներգործականի հետ. 2) կատարյալը, ապառնին և հրամայականը խոնարհվում են երկրորդ տիպարի պես. 3) սաորագրականի մեջ -եմ վերջավորութեյանը դառնում է -իմ. 4) երկրորդ տիպարի մեջ ամբողջ բայը, թե ներգործական և թե կրավորական, խոնարհվում է նույն ձևով. 5) միայն սաորագրականում -եմ վերջավորութեյանը դառնում է իմ։

Ահա աղամ *և* գողանամ *բայերի ներգործականի և կրավորականի համեմատական տախտակը.*

սահմ. ներկա

ներգ.	կրավ.	ներգ.	կրավ.
աղամ		*գողանամ*	
աղաս		*գողանաս*	
աղալ		*գողանալ*	
աղամք	*(նույն)*	*գողանամք*	*(նույն)*
աղալք		*գողանալք*	
աղան		*գողանան*	

անց. անկ.

աղալի		*գողանալի*	
աղալիր		*գողանալիր*	
աղալր		*գողանալր*	
աղալաք	*(նույն)*	*գողանալաք*	*(նույն)*
աղալիք		*գողանալիք*	
աղալին		*գողանալին*	

կատարյալ

աղացի	*աղացայ*	*գողացայ*	
աղացեր	*աղացար*	*գողացար*	
աղաց	*աղացաւ*	*գողացաւ*	*(նույն)*
աղացաք	*աղացաք*	*գողացաք*	
աղացէք	*աղացայք*	*գողացայք*	*(կամ գողացարուք)*
աղացին	*աղացան*	*գողացան*	

ապառնի

աղացից	*աղացայց*	*գողացայց*
աղացցես	*աղացցիս*	*գողացցիս*
աղացցէ	*աղացցի*	*գողացցի*
աղացցուք	*աղացցուք*	*գողացցուք*
աղացջիք	*աղացջիք*	*գողացջիք*
աղացցեն	*աղացցին*	*գողացջին*

հրամ.

աղա՛	*աղացեր*	*գողացիր*
աղացջիր	*աղացջիր*	*(գողացջիր)*

մի՛ աղար	*մի՛ աղար*	*մի՛ գողանար*	*(նույն)*
աղացէք	*աղացարուք* / *աղացջիք*	*գողացարուք*	
մի՛ աղայք	*մի՛ աղայք*	*մի՛ գողանայք*	

սաոր. ներկա

աղայցեմ	*աղայցիմ*	*գողանայցեմ*	*գողանայցիմ*
աղայցես	*աղայցիս*	*գողանայցես*	*գողանայցիս*
աղայցէ	*աղայցի*	*գողանայցէ*	*գողանայցի*
աղայցեմք	*աղայցիմք*	*գողանայցեմք*	*գողանայցիմք*
աղայցէք	*աղայցիք*	*գողանայցէք*	*գողանայցիք*
աղայցեն	*աղայցին*	*գողանայցեն*	*գողանայցին*

դերբ.

աղալ	*աղալ*	*գողանալ*	*գողանալ*
աղացող	—	—	—
աղացեալ	*աղացեալ*	*գողացեալ*	*գողացեալ*
աղալոց	*աղալի*	*գողանալոց*	*գողանալոց* / *գողանալի*

Ձարդարդ լծորդության կրավորականը կազմվում է հետևյալ ձևով. 1) առաջին տիպարի մեջ ներկան, անկատարը, արդելականը և հրամայականը նույն են ներգործականի հետ. 2) կատարյալը, ապառնին և հրամայականը խոնարհվում են երկրորդ տիպարի պես. 3) երկրորդ տիպարի մեջ ամբողջ բայը, թե՛ ներգործական և թե՛ կրավորական, խոնարհվում է նույն ձևով. այսպես ընթեռնում, ընթեռնուի, ընթերցայ, ընթերցայց... նշանակում են թե՛ «կարդում եմ, կարդում էի, կարդայի, կկարդամ...» և թե՛ «կարդացվում եմ, կարդացվում էի, կարդացվեցի, կկարդացվեմ...»:

Ահա թողում *բայի ներգործականի և կրավորականի համեմատական տախտակը (ավելորդ ենք համարում դնել երկրորդ տիպարը, որ ծայրից ծայր նույն է).*

սահմ. ներկա հրամ.

թողում		*թող*	*թողէր*
թողուս		*թողջիր*	
թողու		*մի՛ թողուր*	*մի՛ թողուր*
թողումք	*(նույն)*	*թողէք*	*թողարուք*

թողուք		մի թողուք	մի թողուք
թողուն			

անկատար		սահրադասական	
թողուի		թողուցում	
թողուիր		թողուցուս	
թողույր		թողուցու	
թողուաք	(նույն)	թողուցումք	(նույն)
թողուիք		թողուցուք	
թողուին		թողուցուն	

կատարյալ		ապառնի	
թողի	թողայ	թողից	թողայց
թողիր	թողար	թողցես	թողցիս
եթող	թողաւ	թողցէ	թողցի
թողաք	թողաք	թողցուք	թողցուք
թողէք	թողայք	թողջիք	թողջիք
թողին	թողան	թողցին	թողցին

դերբ.

թողալ	թողուլ
թողող	—
թողեալ	թողեալ
թողոց	թողոց
թողլոց	թողլի

ԾԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Ըստ այս պատկերի, իբրև ընդհանուր կանոն կրավորականի, կարող ենք ասել, որ.

ա) ներգործականի վերջավորութեան մէջ ե դառնում է -ի. ինչպես՝ սիրեմ—սիրիմ, սիրիցեմ—սիրիցիմ, սիրեսցին—սիրեսցին և այլն:

բ) ի՝ ևս է ի. ինչպես՝ սիրէի—սիրէի, խօսէի—խօսէի, հաւատնէի—հաւատնէի և այլն:

գ) իմ ևս է իմ. ինչպես՝ խօսիմ—խօսիմ, բայց -ի, -եցի, -ացի վերջավորութիւնները դառնում են -այ, -եցայ, -ացայ և սրանց հետևանքով էլ -ից, -եցից, -ացից դառնում են -այց, -եցայց, -ացայց. ինչպես սիրեցի—սիրեցայ, սիրեցից—սիրեցայց, առի—առայ, բարձի—բարձայ, աղացի—աղացայ, թողի—թողայ և այլն:

գ) ա, ու ձայնավորները ևս ևս են ենթարկում. ինչպես՝ ադամ—ադամ, գողանամ—գողանամ, ադալի—ադալի, գողացայ—գողացայ, գողացայց—գողացայց, թողու—թողու, թողացու—թողացու, սիրեսցաք—սիրեսցաք և այլն, բոլորն էլ թէ՛ ներգործական և թէ՛ միանգամայն կրավորական:

Կրավորականի կազմութեան մէջ կանոնների (ձայնափոխութեան) այս բազմազանութիւնը և միօրինակութեան այս բացակայութիւնը արդիւնք են այն բանի, որ կրավորականի յուրաքանչյուր եղրի վից գիմքերը կազմվում են ոչ թէ առաջին դիմքի հետևողութեամբ, այլ յուրաքանչյուր դիմք իր համապատասխան ներգործական ձևի վրայից: Եվ արդարև, եթե, օրինակ, մի անկարկ ձգենք թողից բայի կրավորականի վրա, կտեսնենք, որ Բ, Գ դիմքերը (թողցիս, թողցի) ծագում են ոչ թէ Ա դիմքից (թողայց), այլ իրենց համապատասխան թողցես, թողցէ ձևերից. ըստ որում, եթե թողցիս, թողցի կազմված լինեին թողայց ձևից, պիտի լինեին թողայցիս, թողայցի, քանի որ այ երկբարբառը չի ջնջվում հալերենում: Այսպես նաև հաջորդ դիմքերը (Զալխ. 123, ծան. 1): Համմ. սակայն Ա. դիրք, էջ 309, ուսայց—ուսցիս և այլն շարքը:

2) Ուր որ ներգործական և կրավորական միևնույն ձևով են, ինչպես ասել ենք, բայի սեռը որոշվում է խնդրառութեամբ: Ծրված օրինակների վրա ավելացնում ենք նաև հետևյալները.

Մոռացաւ գլխաւոր նոցա («մոռացաւ», ներգործական, որովհետև սեռի խնդիր կա).

Մոռացաւ լիշատակ նոցա («մոռացվեց», կրավորական է, որովհետև սեռի խնդիր չկա, յիշատակ ենթակա է).

Մոռացի զիս «պիտի մոռանա ինձ» (ներգ.).

Անունս մոռացի «այս անունը պիտի մոռացվի» (կրավ.).

Իմացին զրանն «այն խոսքերը թող հասկանան» (ներգ.).

Իմացին բանքն «այն խոսքերը թող հասկացվին» (կրավ.). (Զալխ. 99):

3) Բայց լեզուն սիրում է ավելի պարզ և հասկանալի ձևեր. երկիմաստութիւնը տանելի երևույթ չէ. ուստի կրավորականի համար ստեղծել են լինել բայով կազմված ձևեր. ինչպես՝

մոռացեալ լինիմ «մոռացվում եմ»
մոռացեալ լինէի «մոռացվում էի»
մոռացեալ եղէ «մոռացվեցի»
մոռացեալ եղէց «պիտի մոռացվեմ»

մոռացնալ լեր «մոռացվիր»
մոռացնալ լինել «մոռացվել»:

*Այսպես նաև՝ մի լինիր ապացնալ, ընկեցնալ լինեի, լինէր, եղև, լիցի, առնալ լինիմ, առնալ լինէի, առնալ լեր (փոխանակ *առի՛ր), առնալ լերուք (փոխանակ *առայք, *առարուք, որոնք գոյութիւն չունեն), առնալ լինիցիմ և այլն:*

Գիտացնալ լինիմ «գիտացվեմ», գիտացնալ եղէ «գիտացվեցա» և այլն:

Այսպես նաև անկանոն բայերի մի մասը:

Լինիմ (բայց ունէ եմ) օժանդակով կրավորական կազմելու այս ձևը հատուկ է դլխավորապես Գ և Դ յօրդուխթյանց (-ամ, -ում), որոնց հիմնական ժամանակները միշտ զուրկ են կրավորականից:

Բայց օրինակը տարածվել է հետո նաև մյուս բոլոր յօրդուխթյանց վրա. այնպես որ նուիրնակ այն դեպքերում, երբ ներգործական և կրավորական տարբեր են, դարձյալ հաճախ թողնում են սովորական կրավորական ձևը և նրա փոխարեն դործածում լինիմ օժանդակով կազմված ձևը: Հատկապես անցյալ ժամանակում. օրինակ՝

լցնալ եղև (փխ. լցաւ)
եղիցես լքնալ (փխ. լքցիս)
թողնալ լիցին (փոխանակ թողցին)
պատուհաս լինէր և այլն:

4) Կրավորական կազմելու երկրորդ ձևն է ոճավոր դարձվածը, որին դիմում են հաճախ մեսրոպյան ընտիր հեղինակներ. ինչպես՝

մոռացօնք եղեն նմա «մոռացվեց»
ի մոռացօնս լիցի ձեզ
ի մոռացումն անկանի:

Եղնիկ, էջ 15, պաշտել «պաշտել» կամ «պաշտվել» բառի երկիմաստության առաջքն առնելու համար, ասում է.

Իբրև խօսուն բերանով անշշունչն բողոքէ, եթէ չեմ արժանի պաշտօն առնլոյ (պաշտելու), այլ պաշտօն հարկանելոյ (պաշտվելու):

Հետևի հեղինակները ավելի ընդհանուր միջոցի դիմեցին. Ա յօրդուխթյան անկատարի եզակի Գ դեմքի կրավորականը ներգործականից զանազանելու համար հնարեցին -իւր վերջավորությունը. այսպես՝

ներգործական	կրավորական	
սիրէր	*սիրիւր*	*«սիրվում էր»*
գործէր	*գործիւր*	*«գործվում էր»*
պատուէր	*պատուիւր*	*«պատվրվում էր» (Ոսկ. գծ. 351)*
հատանէր	*հատանիւր*	*«կտրվում էր»*
տեսանէր	*տեսանիւր*	*«տեսնվում էր»*

Իսկ Գ և Դ յօրդուխթյանց կրավորականի ուղիղ ժամանակները զանազանելու համար Բ յօրդուխթյան բ տիպարի ձևը տալով՝ կազմեցին հետևյալ ձևերը.

առացանիլ «առացվել»
մոռանի «մոռացվում է»
բանի «բացվում է»
լնանիցի «լցվի»
հեղանիւր «թափվում էր»
ընծերցանիլ «կարդացվել»
սքանչանիլ «սքանչացվել»
զննիլ, զննանիլ «մորթվել»
առնանիլ «առնվել» (Ջալխ. 100)
խաբիցաք «խաբվեցինք»
փոխեցիր «փոխվիր»
մի խաբիցուք «չխաբվենք»
երկրպագիլ «երկրպագվել»

5) Երբ մի կողմից այսպես հնարվում էին ձևեր ներգործականից տարբեր կրավորական ունենալու համար, մյուս կողմից ի հակառակն կազմվում էին ձևեր՝ կրավորականից տարբեր ներգործական ունենալու համար:

Որովհետև ընդհանուր սկզբունքով ե ձայնավորը նշան էր ներգործականի և ի ձայնավորը նշան էր կրավորականի, ուստի այն ներգործական ձևերը, որոնք ունեին ընականից ի, սկսեցին շուտ դալ ե-ի: Այսպես առեղծվեցին ապառնիի մեջ՝

կալցես (փխ. կալցիս)
տարցեն (փխ. տարցին)

Ծնցէ (փխ. ծնցի)
ընթերցցես (փխ. ընթերցցես) և այլն։

Բայց այս շարժումը զարգացում չստացավ և սրանք սովորական ձևեր չեն։

6) Այսպիսի անհաջող փորձերից մեկն է կատարյալի մեջ կրավորականի համար ե ձայնավորի հավելումը. այսպես Բուզ. Դ ժդ (էջ 39) կարդում ենք՝

Կործանեցալք լքեալք կասեցէք կազացալք։

Ավելի ուշ ժամանակի գրվածքներից՝

Ծնեալ ի կուսէ (Աթան. 128).
Ծնաալ պիս... պի եթէ ծնեալ ոըդի, լալա է թէ ոչ ստացեալ. և եթէ ստացեալ, ոչ ծնեալ (Աթան. 150)։

Սրանց մեջ ծնաալ նեղզործական է, իսկ ծնեալ, ստացեալ, լքեալք կրավորական են (վերջինը անշուշտ ուշ ժամանակի սրբագրություն)։

Անկանոն բայերի կրավորականի խոնարհմունքն էլ կատարվում է նույն հիման վրա։ Ահա նրանց ցուցակը.

1) Առնիլ.— Ստհմ. ներկա.—առնում, առնիս, առնի, առնիմք, առնիք, առնին.
Անկատ.— առնէի... նույն ընդ ներդ.
կատ.— արարալ, արարար, արարաւ, արարաք, արարալք, արարան.
Ապռ.— արարալց, արարցիս, արարցի, արարցուք, արարջիք, արարցին.
Հրամ.— արարջիր, առնիջիր, մի առնիր, արարջիք, առնիջիք, մի առնիք։
Սապր.— առնիցիմ, առնիցիս, առնիցի, առնիցիմք, առնիցիք, առնիցին.
Դերբ.— առնիլ, արարեալ, առնելոց կամ առնելի։
2) Գնիլ.— Ստհմ. ներկա.— գնում, գնիս, գնի, գնիմք, գնիք, գնին.
Անկ.— գնէի... նույն ընդ ներդ.
կատ.— եդալ, եդար, եդաւ, եդաք, եդալք (եդարուք), եդան.
Ապռ. եդալց, դիցիս, դիցի, դիցուք, դիջիք, դիցին.
Հրամ.— դիջիր, դնիջիր, մի դնիր, եդարուք, մի դնիք,
Սապր. դնիցիմ, դնիցիս, դնիցի, դնիցիմք, գնիցիք, գնիցին.

Դերբ.— գնիլ, եդեալ, գնելոց, գնէի։

3) Ըմպիլ.— Ստհմ. ներկա, ըմպիմ, ըմպիս, ըմպի, ըմպիմք, ըմպիք, ըմպին։
Անկատ.— ըմպէի... նույն ընդ ներդ.
կատ.— արբալ, արբար, արբաւ, արբաք, արբալք, արբան։
Ապռ.— արբալց, արբցիս, արբցի, արբցուք, արբջիք, արբցին.
Հրամ.— (արբիր). մի ըմպեր, արբերուք (արբարուք) մի ըմպիք.
Սապր.— ըմպիցիմ, ըմպիցիս, ըմպիցի, ըմպիցիմք, ըմպիցիք, ըմպիցին.
Դերբ.— ըմպիլ, արբեալ, ըմպելի։

4) Լսելի լինել.— Ստհմ. ներկա.— լսիմ, լսիս, լսի, լսիմք, լսիք, լսին կամ լսելի լինիմ...
Անկ.— լսէի... նույն ընդ ներդ.
կատ.— լսելի եղէ, լսելի եղեր, լսելի եղև...
Ապռ.— լսելի եղէց, լսելի եղիցիս... կամ լուիցիս, լուիցի, լուիցուք, լուիջիք, լուիցին.
Հրամ.— լսելի լեր, մի լինիր լսելի կամ մի լսիր, լսելի լերուք, մի լինիք լսելի կամ մի լսիք.
Սապր.— լսիցիմ, լսիցիս. լսիցի, լսիցիմք, լսիցիք, լսիցին կամ լսելի լինիցիմ, լսելի լինիցիս...
Դերբ.— լսիլ կամ լսելի լինել, լուեալ կամ լսելի լեալ, լսելոց կամ լսելի։

5) Ճանաչիլ.— Ստհմ. ներկա.— ճանաչիմ, ճանաչիս, ճանաչի, ճանաչիմք, ճանաչիք, ճանաչին.
Անկ. — ճանաչէի... նույն ընդ ներդ.
կատ.— ծանուցալ, ծանուցար, ծանուցաւ, ծանուցաք, ծանուցալք, ծանուցան կամ ծանօթ եղէ, ծանօթ եղեր...
Ապռ.— ծանուցալց, ծանիցիս, ծանիցի, ծանիցուք, ծանիջիք, ծանիցին կամ ծանօթ եղէց, ծանօթ եղիցիս...
Հրամ.— ծանիջիր կամ ծանօթ լեր, մի ճանաչիր կամ մի լինիր ծանօթ, ծանիջիք կամ ծանօթ լերուք, մի ճանաչիք կամ մի լինիք ծանօթ.
Սապր.— ճանաչիցիմ, ճանաչիցիս, ճանաչիցի, ճանաչիցիմք, ճանաչիցիք, ճանաչիցին կամ ծանօթ լինիցիմ...
Դերբ.— ճանաչիլ կամ ծանօթ լինել, ծանուցեալ կամ ծանօթ լեալ, ճանաչելոց կամ ճանաչելի։

Դիտ.— *Կատարյալը ամբողջ և ապառնիի եզակի Ա դեմքը սեփական ձև չունենալով՝ փոխ են առնված ծանուցանել բայից:*

6) Յառնել.— *Իբրև չեզոք՝ չունի կրավորական:*

7) Ուտիլ.— *Սահմ. ներկա.— ուտիմ, ուտիս, ուտի, ուտիմք, ուտիք, ուտին.*

Անկատ.—ուտէի... նոյն ընդ ներդ.

Կար.— կերայ, կերար, կերաւ, կերաք, կերայք, կերան (որոնք նաև ներդործական են) կամ կեր եղէ, կեր եղեր...

Ապ.— կեր եղէց, կերիցիս, կերիցի, կեր լիցաք, կեր լիջիք, կեր լիցին կամ կերիցաք, կերիջիք, կերիցին:

Հրամ.— կեր լեր կամ կերիջիր, մի ուտիր, լերուք կեր կամ կերիջիք, մի ուտիք.

Ստոր.— ուտիցիմ, ուտիցիս, ուտիցի, ուտիցիմք, ուտիցիք, ուտիցին.

Դերբ.— ուտիլ կամ կեր լինել, կերեալ, ուտելի:

8) Ունիմ «բռնեմ» բայի համար կրավորական ապառնին ձև չկա, այլ գործ է ածվում կալեալ լինիմ, կալեալ լինէի, կալեալ եղէ, կալեալ եղէց, կալեալ լեր, կալեալ լինիցիմ, կալեալ լինել, կալեալ և ապառնի դերբայ ունելի:

Կարելի է նաև ասել ըմբռնիլ, ընկալեալ լինել, ընդունելի լինել կամ ձերբակալ լինել...:

9) Տանիլ բայի կրավորականն է տարեալ լինել; *որից նաև ապառնի տարեալ լինիմ, անկ. տարեալ լինէի, կոր. տարեալ եղէ, ապ. տարեալ եղէց, հրամ. տարեալ լեր, ստոր. տարեալ լինիցիմ կամ տանիցիմ, տանիցիս, տանիցի, տանիցիմք, տանիցիք, տանիցին, դերբ. տարեալ, տանելի:*

10) Գալ *իբրև չեզոք՝ չունի կրավորական:*

11) Երթալ՝ *նոյնպես:*

12) Տուեալ լինել.— *Սահմ. ներկա.— տուեալ լինիմ... անկ. տուեալ լինէի...*

Կար.— տուայ, տուար, տուաւ, տուաք, տուայք, տուան.

Ապ.— տուայց, տուցիս, տուցի, տուցուք, տուջիք, տուցին.

Հրամ.— տուջիր, մի լինիր տուեալ, տուջիք (կամ տուարուք), մի լինիք տուեալ.

Ստոր.— տուցիմ, տուցիս, տուցի, տուցիմք, տուցիք, տուցին.

Դերբ.— տուեալ լինել, տուեալ, տուոց կամ տուլի:

Եթե մի ընդհանուր հայացք ձգենք դրաբարի կրավորականի կազմութեան վրա, կտեսնենք, որ դրաբարը կրավորականի համար մի ընդհանուր օրինք կամ ձև չունի: Կրավորականը կախված է բայի վերջավորութիւնից, բայց չկա մի այնպիսի վերջավորութիւն, որ բոլոր բայերի համար էլ ընդհանուր լինի: Ընդհանրապես ե ձայնավորը նշան է ներգործականի, որի համապատասխան կրավորականն է ի: Բայց ի միշտ կրավորականի նշան չէ, այլ նաև ներգործականի. օրինակ՝ ի, եցի, ացի ներգործական են, որոնց կրավորականն էլ այն ժամանակ դառնում է այ, եցայ, ացայ: Բավական է ասել, որ շատ բայաձևեր ոչ մի ձև չունեն կրավորականի, և նրանց ներգործականը նաև կրավորական է. այսպես Ա լծորդութեան անկատարը, Բ լծորդութեանը ամբողջ, Դ լծորդութեան ա տիպարի ներկան և անկատարը, բ տիպարը ամբողջապես (բացի աորդապատասկանից), Դ լծորդութեան ա տիպարի ներկան, անկատարը, աորդապատասկանը և Դ լծորդութեան բ տիպարը ամբողջութեամբ:

Եթե գումարենք այս բոլորը, կտեսնենք, որ հոբա լծորդութեանց կրկին տիպարներում (ընդամենը 8 տիպար), յուրաքանչյուր բայի խոնարհման մէջ ընդունելով 6 եղր, ընդամենը 48 եղրից 22 ձև ներգործական է, 26 ձև հասարակ: Սա նշանակում է, թե խոնարհման կեսից ավելին կրավորական չունի և իմաստով երկդիմի է: Եվ այս երկդիմութիւնն են ահա մասնաւորում բոլոր այն դերբայական ձևերը և մասնաւոր ոճարանութիւնները, որոնցով ե դարի ոսկեդէնիկ գրողները աշխատել են խուսափել չարիքից:

Բայց չարիքից խուսափել չի նշանակում չարիքը դարմանել: Այս գործով զբաղվեցին ավելի ուշ շրջանում:

Ստորին դարերի գանազան գրուածքներում գտնում ենք այնպիսի նոյնօրինակ ձևեր, որ ոչ դրաբար են, ոչ աշխարհաբար, ոչ ներգործական են ըստ հին լեզվի և ոչ կրավորական ըստ նոր լեզվի: Իրավացի է Ալտնյան 73, որ այս «խորթ խոնարհումնքներր» համարում է ժամանակի «ռամկօրէնէն փոխառեալ» ձևեր: Անշուշտ գանազան գաւառներում հալ ժողովուրդը փորձեր էր անում մերթ հինը ծռելով, մերթ նորը սարքելով՝ մի հարմարավոր ձև ստեղծելու: Այս մասնաւոր և անջատ փորձերի արդյունքից են քաղված հետևեալ օրինակները.

կացաւ «կեցաւ, ինաց» (դրբ. եկաց)
հարցաւ «հարցրեց» (դրբ. եհարց)

բարձան «վերցրին» (գրբ. բարձին)
լիք «հղիք» (գրբ. լիրուք)
նկալ «բռնեց» (գրբ. կալաւ)
վարժեաց «վարժվեց» (գրբ. վարժեցաւ)
վախաց «վախեցաւ»
խառնց «խառնացավ, առատացավ»
բռնկց «բորբոքեց» և այլն (Ալան. 73)։

Ինչպես վերը տրված օրինակներից երևում է, կրավորականի համար առեղծված նոր վերջավորութիւնների մեջ ամենից շատ հանդիպում ենք ի ձայնավորին, որ գրաբարի մեջ կրավորական կազմող հայտնի նշանն է։ Բայց պատահում ենք նաև ու ձայնավորին, որի ծագումը պիտի որոնենք այժմ։

Ալանյան, 73, կարծում է, որ այդ ու ձայնավորը այն է, որ գտնում ենք գրաբարի գործուած, դարմուած, յօրինուած և այլն բառերի մեջ, որոնց ցանկը տվել ենք արդեն։ Petermann, Abhandlungen d. Ak. d. Wiss. zu Berlin, 1866, *էջ 75, 76 այս ու ձայնավորի երևումը տրիշ տեսակ է բացատրում, որին համամիտ են նաև Հյուբշման* KZ 23, 12, *ապա* Karst 297։ *Ըստ* Petermann-*ի գրաբարի Ի յծորդութիւն բայերը չունենալով տառնձին կրավորական ձև, այս թերին լրացնելու համար ներկայի ու ձայնավորի վրա ավելացրին ի ձայնավորը, որ Ա յծորդութիւնը կրավորական վերածելու սովորական միջոցն էր։ Այսպիսով, ներգործական զենուլ, լնուլ ձևերի կողքին առեղծվեցին կրավորական զենուիլ, լնուիլ ձևերը, ինչպես որ նախակիլիկյան շրջանում առեղծված էին արդեն տամ բայից իբր կրավորական տուիմ, տուիս, տուի, արտուիլ «տրուիմ, տրուիս, տրուի, տրուիլ» (Ալան. 73)։ Շուտով այս սխալ ձևը տարածվեց նաև մյուս յծորդութիւնց վրա և բոլոր բայերից էլ կազմվեցին ներկա -ուիմ, անորոշ դերբայ -ուիլ ձևերը, որոնք և խոնարհվում էին կրավորական Ի յծորդութիւն ձևով։*

Karst, 297 *սրան ավելացնում է այն նկատողութիւնը, թե կրավորականի այսպիսի ձևը նախ ներկայի և անորոշ դերբայի համար էր. ավելի ուշ անցան կատարյալին, հետևյալ ձևով.*

Գրաբար ասվում էր կրավորական կար. բողաւ, բացաւ, ապաւաւ, կերաւ, առաւ և այլն. կրավորականի նորահնար ու մասնիկը նկավ մտավ սրանց մեջ և դարձան բողուաւ, բացուաւ, ապաւնուաւ, կերուաւ, առուաւ և այլն։

Այս օրինակով կազմվեցին նաև անորոշ դերբայի լուացուիլ, յիմընուիլ «իմացուիլ», գողընուիլ «գողացուիլ», բանուիլ, դնուիլ «դրուիլ», բանուիլ «թրջուիլ», լնուիլ «լցուիլ, ավուիլ «տրուիլ», ուտուիլ, գտնուիլ, ճանչուիլ և այլն ձևերը՝ լուանալ, իմանալ, գտանալ, ուտել, գտնել, ճանչել անորոշներից։ Սրա համեմատ ներկան էլ լինում էր լվանամիմ, լիմընամիմ, գողընամիմ, ավամիմ, դնամիմ, բանամիմ, թանամիմ, ուտամիմ, ճանչամիմ. օրինակ՝

Ջուան առնալ երթայր կախուիլ (Վրք. հց. Բ 411).
Արծաթով գնալի (Մոմբ. Եւագր. 42).
Ի ձեռն արծաթով լինի և գնալի (անդ, 47).
Թագալի (անդ, 117)։

Ավելի ուշ կատարյալի բնի վրայից կազմվեց նոր անորոշ դերբայ՝ լուացուիլ, թացուիլ, լցուիլ, բացուիլ, դրուիլ, կերուիլ, տարուիլ, գտուիլ, իմացուիլ... ձևով, որ մրցման մեջ մտավ նախորդ լուանուիլ և այլն (ներկայատուն) ձևի հետ և ի վերջո հաղթեց։ Այժմ լուանվիլ, դնվիլ և այլն գավառական ձևեր են միայն և գրականի մեջ ընդունված է միայն լուացուիլ, դրուիլ և այլն։

Ի վերջո Karst, 298, *ու մասնիկի ծագման համար հիշեցնում է նաև գրաբար* գրեմ—գրուեմ, կծեմ—կծուեմ, կտեմ—կտուեմ *բառերի համեմատութիւնը, որոնց վրա մենք էլ կարող ենք ավելացնել դրվել –դրդուել*[1]։

Բայց այս բոլորի մեջ ու ավելի զորացուցիչ է և ոչ քնավ կրավորական։

Պետք է որոշել, թե միջին հայերենում ինչպես էր հնչվում կրավորականի վերջավորութիւնը։ Թեև գրվում էր -ուիլ, բայց ու այստեղ բաղաձայն էր և հնչվում էր վ. այդ ապացուցանում է- վիլ կամ -ւիլ գրչութիւնը, որ հավատարապես գործ է ածվում առաջինի, հետ։ Այսպես Karst, *էջ 295 անենք գտուի, գտվի, գտի «գտնուի» և լվացվի, լուացվի, լվացւի երեք տարբեր գրչութիւնները։*

Կարևոր է իմանալ նաև -ուիլ կրավորականի ծագման ժամանակը։ Մխիթար Հերացին իր «Քերմանց մխիթարութիւնն» աշխատութեան մեջ (1184 թ.) գործածում է այս ձևը. օրինակ՝ խաշուի էջ 18, քաշուի 39, արհնուի (արկանի) 48, 63, լուանվիլ 12, լուացվի, լվացվի, լուացվի 26, 27, 28, բացւի 12, գտուի, գտվի, գտի 22, 38,

[1] *Վերը, տեսանք մի խումբ լեզուներ, հատկապես աֆրիկյան բանտու լեզուներից, որոնց մեջ կրավորականը կազմվում է w մասնիկով։ Սրա նմանութիւնը հայերենի հետ պատահական է և այդ երևում է հատկապես նրանից, որ ըստ* Meinhof, Grundzüge einer vergl. Gram. *էջ 76, այդ մասնիկի հին ձևն է ij-wa, որ ամեն տեղ կբաղավիլով գոթել է w։*

44, 45: Ավելի շատ օրինակներ տալիս է «Վաստակոց գիրք»-ը. դրանց հավաքումը տես Karst, 295: Այս բոլորը մեզ մատնանշում են ԺԲ դարը, երբ կրավորականի ձևը արդեն հաստատված իրողություն էր:

Այժմ հետաքրքիր է մեզ իր օրինակ միջին հայերենի կրավորականի խոնարհման՝ մեջ բերել այստեղ այն, ինչ որ տալիս է Karst իր Քերականության վերջում առանձին տախտակով.

սաոր. ներկա

լսվիմ	տարվիմ	գողնվիմ	գովիմ
լսվիս	տարվիս	գողնվիս	գովիս
լսվի	տարվի	գողնվի	գովի
լսվինք	տարվինք	գողնվինք	գովինք
լսվիք	տարվիք	գողնվիք	գովիք
լսվին	տարվին	գողնվին	գովին

սաոր. անկ.

լսվէի	տարվէի	գողնվէի	գովէի
լսվէիր	տարվէիր	գողնվէիր	գովէիր
լսվէր	տարվէր	գողնվէր	գովէր
լսվէաք	տարվէաք	գողնվէաք	գովէաք
լսվէիք	տարվէիք	գողնվէիք	գովէիք
լսվէին	տարվէին	գողնվէին	գովէին

սահմ. ներկա

կու լսվիմ	կու տարվիմ	կու գողնվիմ	կու գովիմ
կու լսվիս	կու տարվիս	կու գողնվիս	կու գովիս
կու լսվի	կու տարվի	կու գողնվի	կու գովի
կու լսվինք	կու տարվինք	կու գողնվինք	կու գովինք
կու լսվիք	կու տարվիք	կու գողնվիք	կու գովիք
կու լսվին	կու տարվին	կու գողնվին	կու գովին

անկատար

կու լսվէի	կու տարվէի	կու գողնվէի	կու գովէի
կու լսվէիր	կու տարվէիր	կու գողնվէիր	կու գովէիր
կու լսվէր	կու տարվէր	կու գողնվէր	կու գովէր
կու լսվէաք	կու տարվէաք	կու գողնվէաք	կու գովէինք
կու լսվէիք	կու տարվէիք	կու գողնվէիք	կու գովէիք
կու լսվէին	կու տարվէին	կու գողնվէին	կու գովէին

ԿՐԱՎՈՐԱԿԱՆԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Նոր-Ջուղայի բարբառում կրավորականը կազմվում է -վել վերջավորությամբ. ինչպես՝

Ա. խոր դ ութ յուն.— սիրել—սիրվել
Բ » — խագ՛նել—խագ՛նվել
Գ » — կարդ՛ալ—կարդ՛ացվել
Դ » — մոռանալ—մոռացվել

Բաղաձայնների խճողման պատճառով երբեմն միավանկի կոթած ա ձայնավորը վերականգնվում է, ինչպես՝ գ՛դ՛նել—գ՛դ՛անվել, կորճել—«կորչիլ» բայի կրավորականն է կորցնվել, որ կորցնել ձևից է կազմված. նազճիլ բայից կա և՛ խազ՛նվել, և՛ խազ՛ացվել:

Անկանոն բայերի կրավորականներն են՝

անել—արվել	լվանալ—լվացվել
առնել—առնվիլ	ուտել—ուտվել
ասել—ասվել	վնռնել—վնռնվել
բ՛անալ—բ՛ացվիլ	տալ—տրվել, տվվել
բ՛երել—բ՛երվել	տանել—տարվել, տանվել
դ՛նել—դ՛րվել, դ՛նվել	տեսնել—տեսնվել
թողնել—թողնվել	

Այս բոլորը խոնարհվում են Ա խոր դ ութ յան համաձայն. այսպես՝

սաոր. ներկա

սիրվիմ	խագ՛նվիմ	կարդ՛ացվիմ	մոռացվիմ
սիրվիս	խագ՛նվիս	կարդ՛ացվիս	մոռացվիս
սիրվի	խագ՛նվի	կարդ՛ացվի	մոռացվի
սիրվինք	խագ՛նվինք	կարդ՛ացվինք	մոռացվինք
սիրվիք	խագ՛նվիք	կարդ՛ացվիք	մոռացվիք
սիրվին	խագ՛նվին	կարդ՛ացվին	մոռացվին

անցյալ

սիրվի	խագ՛նվի	կարդ՛ացվի	մոռացվի
սիրվիր	խագ՛նվիր	կարդ՛ացվիր	մոռացվիր

սիրվէր	*խագ՛նվէր*	*կարդ՛ացվէր*	*մոռացվէր*
սիրվինք	*խագ՛նվինք*	*կարդ՛ացվինք*	*մոռացվինք*
սիրվիք	*խագ՛նվիք*	*կարդ՛ացվիք*	*մոռացվիք*
սիրվին	*խագ՛նվին*	*կարդ՛ացվին*	*մոռացվին*

կատարյալ

սիրվեցի	*խագ՛նվեցի*	*կարդ՛ացվեցի*	*մոռացվեցի*
սիրվեցիր	*խագ՛նվեցիր*	*կարդ՛ացվեցիր*	*մոռացվեցիր*
սիրվէց	*խագ՛նվէց*	*կարդ՛ացվեց*	*մոռացվէց*
սիրվեցինք	*խագ՛նվեցինք*	*կարդ՛ացվեցինք*	*մոռացվեցինք*
սիրվեցիք	*խագ՛նվեցիք*	*կարդ՛ացվեցիք*	*մոռացվեցիք*
սիրվեցին	*խագ՛նվեցին*	*կարդ՛ացվեցին*	*մոռացվեցին*

հրամ.

սիրվիր	*խագ՛նվիր*	*կարդ՛ացվիր*	*մոռացվիր*
մի՛ սիրվիլ	*մի՛ խագ՛նվիլ*	*մի՛ կարդ՛ացվիլ*	*մի՛ մոռացվիլ*
սիրվէք	*խագ՛նվէք*	*կարդ՛ացվէք*	*մոռացվէք*
մի՛ք սիրվիլ	*մի՛ք խագ՛նվիլ*	*մի՛ք կարդ՛ացվիլ*	*մի՛ք մոռացվիլ*

դերբայներ

սիրվիլ	*խագ՛նվիլ*	*կարդ՛ացվիլ*	*մոռացվիլ*
սիրվում	*խագ՛նվում*	*կարդ՛ացվում*	*մոռացվում*
սիրվէլ	*խագ՛նվէլ*	*կարդ՛ացվէլ*	*մոռացվէլ*
սիրված	*խագ՛նված*	*կարդ՛ացված*	*մոռացված*
սիրվելու	*խագ՛նվելու*	*կարդ՛ացվելու*	*մոռացվելու*

Կրավորական բայերը գործ են ածվում բացի կրավորականից, նաև իբր կարողական, փոխադարձ, կրավորակերպ չեզոք և պարզ չեզոք, ինչպես՝

կարողական—կարդ՛ացվել «կարելի լինել կարդալ», խոսակցվել «կարելի լինել հասկանալ», գ՛ողացվել «կարելի լինել գողանալ».

փոխադարձ—թակվել «իրար թակել»,

կրավորական—*չեզոք*—խագ՛նվել «ինքը իրեն հագցնել». առնդրվել «ինքը իրեն առնդրել». *չեզոք*—խալվել «ծխալ, մաշիլ»:

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Կրավորական բայերը կազմվում են -վել վերջավորությամբ, որ իր հարազատ ձևի տակ հնչվում է ւրել. ինչպես՝ ասել—ասւրել,

պերել—պերւրել և այլն. անկանոն բայերից՝ տանիլ—տարւրել, ուտել—ուտւրել կամ կերւրել, տալ—տասւրել, տեսնել—տեսնւրել և այլն:

Հին հայերենի ի լծորդության պատկանող բայերից շատերը՝ ստանալով կրավորականի մասնիկը՝ պահում են չեզոքի նշանակությունն. ինչպես՝ կ՛ուզ՛ատւրել «գանգատվել», խոստովանւրել «խոստովանվիլ», կուրսոււրել «կորչիլ», վախճանւրել «վախճանվիլ, մեռնիլ», խրւրել «խրվիլ», պապանձւրել «պապանձվիլ» և այլն:

Կրավորական բայերը խոնարհվում են ի լծորդության առաջին տիպարի համաձայն. ինչպես՝

սաոր. ներկա	կատարյալ	հրամ.	դերբ.
տարվիմ	*տարւայ*	*տարվի՛*	*տարւրէլ*
տարվիս	*տարւար*	*տարվէ՛ք*	*տարւած*
տարվի	*տարւավ*		*տարւօղ*
տարվինք	*տարւանք*		*տարւօղը*
տարվէք	*տարւաք*		
տարվին	*տարւան*		

Սրանց համեմատ նաև մյուս ձևերը. ինչպես՝ ներկա տարւրելիմ, անկատար տարւրելիմ եր, ապառնի կտարվիմ, անցյալ ապառնի կտարվիմ եր, անցյալ սովորութենական տարվիմ եր և այլն:

Ամբողջ խոնարհման ժամանակ վ դառնում է ւ՝ հաջորդական ի, ըի ձայնների մոտ. ուրիշ ձայնավորի մոտ մնում է վ:

ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌ

Կրավորական կազմելու համար ներգործականի վերջավորությունը դարձնում ենք -վիլ. օրինակ՝ խրա՛վիլ «խորովվիլ», սա՛յրվիլ «սիրվիլ», ա՛րվիլ «արվիլ, անվիլ», ա՛ավիլ «առվիլ», տա՛ճվիլ «տարվիլ», մոռա՛ճվիլ «մոռացվիլ» և այլն:

Դ լծորդության պատկանող բայերը լինելով չեզոք՝ չունեն կրավորական:

Կրավորական բայերը խոնարհվում են Ա. լծորդության համաձայն, ինչպես՝ մոռա՛ճվիլ «մոռացվիլ», ըդհ. մոռա՛ճվիմ, կաբ. մոռա՛ճվամ, հրմ. մոռա՛ճվա, մըռըճվո՛ճի՛ք, դերբ. մոռա՛ճվամ մըռըճվե՛լոց և այլն:

Գ լծորդության մեջ իրր բացառություն հիշված բայերը կրավորական դառնալու ժամանակ՝ նեղկա դերբայի մեջ առնում են երկու ձև, այսինքն վ մասնիկը առաջ կամ հետ. այսպես՝ խսե՛լվիս կամ խըսվե՛լիս «խոսվելիս», ճըվըռե՛լվիս կամ ճըվըռվե՛լիս «հավաստացվելիս», կրդըվո՛լիս կամ կրդո՛լվիս «կարգացվելիս», ճըճըճչվել՛իս կամ ճըճըճչվե՛լվիս «ճանաչվելիս»:

Թա՛ղվիլ բայը թեև կրավորականի ձև ունի, բայց թե՛ ներգործական է և թե՛ կրավորական, «ժածկել» և ժածկվիլ» իմաստներով:

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ

Ղարաբաղի բարբառում կրավորական բայերը ներգործականի ել, իլ վերջավորությունից առաջ մուծում են վ մասնիկը. օրինակ՝ կա՛րվիլ կամ կա՛րվել, սի՛րվիլ կամ սի՛րվել և այլն: Սրա համեմատ էլ ամբողջ բայի խոնարհումը, ինչպես՝ սիրվըմ ըմ, սիրվըս ըմ, սիրվըս ի, սրրվէցա կամ սրրվէցի, սրրվըլնական ըմ, սրրվըլնացոք ի, սիրված ըմ, սիրված ըմ ըլալ, սիրված ի ըլալ, մոանցված ի ըլալ և այլն:

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

Պոլսի բարբառում կրավորականը կազմվում է ներգործական բայից, երբեմն էլ նույնիսկ չեզոք բայից, Ա և Բ լծորդության անորոշի վերջավորությունը դարձնելով -վիլ, իսկ Գ լծորդության կրկին տիպարների մեջ կատարյալի եզակի առաջին դեմքի ի, ա վերջավորությունը ջնջելով և ստացյալի վրա դնելով -վիլ (բազմաձայնների խճողման դեպքում -ըվիլ). օրինակ՝

սիրել—սիրվիլ
խածանել>խազնել, խազնըվիլ
խօսիլ—խօսվիլ
անցանել>անդիլ, անդըվիլ
մոռնալ, մոռցա>մոռցըվիլ
լուալ>վալ, վացի—վացվիլ

Այսպես նաև՝

կենալ, կեցա>կեցվիլ
դիմանալ, դիմացա>դիմացվիլ
իմանալ, իմացա>իմացվիլ
լալ, լացի>լացվիլ

բանալ, բացի>բացվիլ
լենալ, լեցա>լեցվիլ
ժողովել>ժողվել, ժողվըվիլ
ուսել—ուսվիլ

Գիտ.— Կրավորականի -վիլ մասնիկից առաջ պատահած ց ձայնը կարող է դառնալ ս. ինչպես՝ վլասվիլ, բայց ընդհանրապես չի փոխվում, ինչպես վերի օրինակների մեջ. նույնիսկ ասվում է վլացվիլ:

Անցողական բայերը կարող են դառնալ կրավորական՝ -ցնել>ցունել վերջավորությունը վերածելով -ցվիլ. օրինակ՝ խմցունել—խմցըվիլ, խոսեցունել—խոսեցվիլ, հարցունել—հարցըվիլ, վերցունել—վերցըվիլ, ինչեցունել—ինչեցվիլ և այլն:

Բայց, որովհետև Գ լծորդության բայերն էլ կրավորական են դառնում -ցըվիլ վերջավորությամբ, ուստի հաճախ կարելի չէ իմանալ, թե տվյալ կրավորական ձևը երրորդ լծորդությունից է առաջանում, թե անցողականից:

Այսպես բոլորովին նույն են՝

խէնթէէնալ	խէնթէէցունէլ—խէնթէէցվիլ
էվէլնալ	էվէլցունէլ—էվէլցըվիլ
խնդալ	խնդացունէլ—խնդացվիլ
գօղնալ	գօղածունէլ—գօղածըվիլ
մօռնալ	մօռցունէլ—մօռցըվիլ
լէնալ	լէցունէլ—լէցվիլ
վէրնալ	վէրցունէլ—վէրցըվիլ

Մյուս լծորդությանց մեջ նման շփոթություն չի պատահում և երկու ձևերը տարբեր են լինում. ինչպես՝

խմէլ—խմվիլ	խմցունէլ—խմցըվիլ
գըլէլ—գըլըվիլ	գըլէցունէլ—գըլէցվիլ
մաշէլ—մաշվիլ	մաշէցունէլ—մաշէցվիլ
խոսիլ—խոսվիլ	խոսէցունէլ—խոսէցվիլ
ուդէլ—ուդվիլ	գէրցունէլ—գէրցըվիլ

Այս չորսից դուրս բայը կարող է ունենալ նաև մի հինգերորդ ձև, այսպես՝ ծռել բայից՝

ծռել (ներգործական ձև). օրինակ՝ նաստ երգաթը ծռեցի.
ծռվիլ (կրավորական ձև). օրինակ՝ վրաս նասելեա ծռվեր է.

ձոխ (չեզոք ձև). օրինակ՝ ձոխցա, գեղինը բաքի.

ձոխցունել (անցողական). օրինակ՝ էրգու ձառքով ձոխցուցի.

ձոխցվիլ (անցողականի կրավ.). օրինակ՝ մեկ ձառքօվ գը ձոխցվի՞:

Վերևում ասացինք, որ Պոլսի բարբառը, հակառակ գրաբարի և նմանութիւմբ թուրքերենի՝ կարող է չեզոք բայերից էլ կազմել կրավորական: Բայց այս երևույթը ընդհանուր չէ և կան շատ չեզոք բայեր, որոնք չունեն կրավորական: Այս պարագային՝ կրավորականը կազմվում է անցողականից. օրինակ՝

չեզոք	կրավորական	անցողական	կրավորական
փրթիլ	—	փրցոնել	փրցըվիլ
փակիլ «փակչիլ»	—	փակծունել	փակծըվիլ
փախիլ «փախչիլ»	—	փախծունել	փախծըվիլ

Կրավորական բայերի մի մասը կազմվում է անկանոն կերպով, այսպես են՝

երթալ>էրթալ—էրթըցվիլ (կէրթցվի—կէրթվի)
գալ>գալ—գացվիլ
գտանել>գտնալ—գտնըվիլ
տեսանել>դէսնալ—դէսնըվիլ
լինել>ըլլալ—ըլլըվիլ
դնել>դնէլ—դրվիլ
ուզանիլ>հաքնիլ—հաքվիլ
ելանել>էլլալ—էլլըվիլ, էլլըցվիլ (կէլվի—կէլլըցվի)
տալ>դալ—դրվիլ, գացվիլ
տանիլ>գանիլ—գարվիլ
իջանել>իշնալ—իշնըվիլ

Այս բոլորի անկանոնութիւնը նրանումն է, որ կրավորականը կազմվում է անորոշից, մինչդեռ պիտի կազմվեր կատարյալից (այսպես են էրթալ, գալ, գտնալ, տեսնալ, ըլլալ, էլլալ, տալ, իշնալ), և կամ ընդհակառակը՝ կրավորականը կազմվում է կատարյալից, մինչդեռ պիտի անորոշից կազմվեր (այսպես են՝ դնել, հաքնիլ, տանիլ):

Անկանոնութիւնների մի մասը ուղղված է դրական լեզվում այն պարզ միջոցով, որ -ալ վերջավորութիւնը դարձրել են -ել. այսպես են տեսնալ, գտնալ, իջնալ, ելլալ:

Փակել>քագել բայի կրավորականը բոլորովին անկանոն կերպով դառնում է քաղվիլ:

Ընել բայը չունի կրավորական. դրա փոխարեն գործածվում է ըլլըվիլ, որ ըլալ բայի կրավորականն է:

Պոլսի բարբառի համար անսովոր ձև է ըրուի, որ երկու անգամ գործածել է Շանթ, «Ընկած բերդի իշխանուհին» պիեսի մեջ, «Հայրենիք», 1923, № 10, էջ 21բ (ինչ պետք է ըրուի, ինչ պիտի ըրուի), ազդված Կովկասի արուի ձևից:

Կրավորական բայերը գործ են ածվում ոչ միայն իբրև՝

ա) կրավորական, այլև՝

բ) կարողական, ինչպես՝ լսվիլ «կարելի լինել լսել», գերբըցվի «կարելի է երթալ», ադօր ճամբան գու լացվի՞ «դրա համար լալ կարելի՞ է» և այլն: (Չեզոք բայերից կազմված կրավորականները ընդհանրապես այս կարգին են պատկանում և սրա համար էլ կրավորական ձև են ստացած: Այսպես նաև անկանոն կրավորականներից մի քանիսը. ինչպես՝ էլլըցվիլ, գացվիլ, մինչդեռ սրանց կրկնակները՝ էլլըվիլ, տրվիլ՝ իսկական կրավորական են):

Կրավորականը իբրև կարողական գործածելու սովորութիւնը կա նաև թուրքերենի մեջ. ինչպես՝ gidilir «կերթցվի, կարելի է երթալ», yazələr «կգրվի, կարելի է գրել», նաև հնդկական դասական լեզվում, ինչպես՝

lakhāy «կդրվի (կարելի է գրել)
dēkhāy կտեսնվի (կարելի է տեսնել)»:
(Grierson, հատ. 9, մաս 2-րդ, էջ 343):

գ) փոխադարձ, ինչպես՝ ծեծել—ձեձգըվիլ, ձեզգըվիլ «իրար ծեծել», փաթաթուիլ>փաթըռվիլ «իրար փաթաթվել», պագանել>բաբաղվիլ «իրար համբուրել», տեսանել—դեսնըվիլ «իրար հետ տեսակցութիւն ունենալ» և այլն:

դ) Անդրադարձ կամ կրավորակերպ չեզոք, ինչպես՝ քերել—քերվիլ, քերվըգվիլ, քսել—քսվիլ, կտրել—գօդրըվիլ «ամօթահար լինել», հաճել—հաճվիլ «մերկանալ, շորերը հանել», սոթել—սօթարվիլ «ձեռները քշտել», սրբել—սըրփըվիլ «իրեն սրբել», լուալ—վլաավիլ «իրեն լվալ» և այլն:

Անդրադարձ բայերի մի ուրիշ ձև էլ կա, որ կազմվում է -վօրիլ (<-աւորիլ) մասնիկով, այսպես են ուռեցվօրիլ «մարմինը ուռչել», սօթարվօրիլ «իր ձեռները քշտել», փեռցըվօրիլ (ըստ Թէո-

դիկի) «բանավորվել», հազբրվօրիլ «պատրաստություն տեսնել» (թրք. հազըր բառից):

Կրավորական բայերը խոնարհվում են Բ յոթերդությանը ա տիպարի համաձայն. օրինակ՝

սիրվիմ	սիրվէյի	սիրվէցա
սիրվիս	սիրվէյիր	սիրվէցար
սիրվի	սիրվէր	սիրվէցավ
սիրվինք	սիրվէյինք	սիրվէցանք
սիրվիք	սիրվէյիք	սիրվէցաք
սիրվին	սիրվէյին	սիրվէցան

հրամ.	դերբ.
սիրվէ	սիրված, սիրվէր
սիրվէցէք	սիրվօղ
	սիրվէլու, սիրվէլիք

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Կրավորական բայերը կազմվում են ներգործական (երբեմն նաև չեզոք) բայերի անորոշ վերջավորությունը դարձնելով -վել. ալպես՝

Ա յոթերդություն — լսել—լսվել.
խառնել—խառնվել.
Բ յոթերդություն — բըռնել—բռնըվել.
հաքնել—հաքնըվել, հաքվել.
Գ յոթերդություն — խաղալ—խաղացվել.
մօռնալ—մօռցվել.
Դ յոթերդություն — առնալ—առնվել:

Այս բոլոր բայերն խոնարհվում են Բ յոթերդության համեմատաբար, հետևյալ ձևով.

ապոր. ներկա	ապոր. անց.	կատարյալ	հրամ.	դերբ.
լսվիմ	լսվէյի	լսվէցա	լսվէ	լսված
լսվիս	լսվէյիր	լսվէցար	լսվէցէք	լսվիլ
լսվի	լսվէր	լսվէցավ		լսվօղ
լսվինք	լսվէյինք	լսվէցանք		լսվէլու, լսվէլիք
լսվիք	լսվէյիք	լսվէցաք		
լսվին	լսվէյին	լսվէցան		

Այս ձևով է կազմվում և խոնարհվում նաև անցողական բայերի կրավորականը, ինչպես՝ զօղցնել—զօղցվել, հավնեցնել—հավնեցվել և այլն:

Անկանոն բայերի կրավորականը սովորաբար կանոնավոր է. բայց մի քանիսն անկանոն են, ուստի կարևոր ենք համարում բոլորի կրավորական ձևերը նշանակել այստեղ.

անկանիլ>իյնել
առնել>անել—արվել
առնուլ>*առնուլ—առնվել
ասել>ասէլ—ասվել
բանալ>բանալ—բացվել
բերել>բէրէլ—բէրվել
դալ>քալ—քացվել
դնել>դնէլ—դրվել
ելանել>էլլէլ—էլլըցվել
երթալ>էշթալ—էշթըցվել
զարկանել>զարնէլ—զարնըվել
լալ>լալ—լացվել
լինել>ըլալ—ըլըվել
լնուլ>ուլէլ—լցվել
լուանալ>լվանալ—լվացվել
կորչիլ>գօրցըվել
նստիլ>նստէլ—նստըվել
ուտել>ուդէլ—ուդվել
տալ>դալ—դրվել
տանիլ>դանէլ—դարվել

Կրավորական բայերը գործ են ածվում ոչ միայն իբրև՝

ա) կրավորական, այլև՝

բ) կարողական, ինչպես՝ գը լավի «կարող է լսել, կարելի է լսել», գէշըցվի «կարելի է երթալ» և այլն:

գ) փոխադարձ, ինչպես՝ ձէձգվիլ «իրար ծեծել», մեմեզգի ձեդ գը ձեձգըվին «իրար հետ կծեծկվենք»:

դ) անդրադարձ կամ կրավորակերպ չեզոք. ինչպես՝ գը լվացվիմ, բը սանդրվի, բը հաքվի և այլն:

ե) չեզոք, ինչպես՝ մաշվիլ «հյուծվել». ինչո՞ւ գը մաշվիս:

Գլխավորապես կարողական նշանակության պատճառով է, որ Նոր-Նախիջևանի բարբառում ոչ միայն ներգործականները, այլև

առհասարակ ամեն բայ կարող է կրավորական ձև առանալ. մինչև անգամ գալ բայից քացվել և նման ձևեր:

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌ

Կրավորականը կազմվում է սովորական ձևով՝ արմատի վերջավորութ֊յան մեջ ներմուծելով վ. խոնարհումը լինում է Բ լծորդութ֊յան համաձայն. օրինակ՝

ստոր. ներկա	ստոր. անկ.	կտր.	ճրամ.	դերբ.
սիրվիմ	սիրվէլը	սիրվէցա	սիրվո	սիրվօղ
սիրվիս	սիրվէլդ(ը)	սիրվէցար	սիրվէցէք	սիրված
սիրվի	սիրվիր	սիրվէցավ		սիրվիլ
սիրվինք	սիրվէլք(ը)	սիրվէցաք		սիրվուշ
սիրվիք	սիրվէլք(ը)	սիրվէցաք		սիրվելիք, սիրվելու
սիրվին	սիրվէլն(ը)	սիրվէցօն		

Կարևոր է հիշատակել անկատարի մեջ -վիր վերջավորութ֊յունը, որ միակ տարբերութ֊յունն է ներկայացնում Բ լծորդութ֊յան խոնարհման մեջ: Այս տարբերութ֊յունը առաջացել է հաջորդ ր-ի պատճառով, որ իրենից առաջ գտնված շեշտյալ ե, է ձայնավորը դարձնում է հաճախ ի:

Կրավորական կազմելու ժամանակ նկատելի է ն ձայնի կորուստը վ-ից առաջ մի խումբ բայերի մեջ. ինչպես՝

պըռըվուշ «բռնվել»
կըղըվուշ «գտնվել»
հաքըվուշ «հագնվել»
դևսըվուշ «տեսնվել»
խառըվուշ «խառնվել»:

Կան մի խումբ բայեր, որոնք ձևով ներգործական, բայց իմաստով թե՛ ներգործական են և թե՛ կրավորական: Այսպես՝ խէխտուշ բայից՝

Ճուրն ըճզա, խէխտիմ գու.
Հիմի կէլիմ քեզի խէխտիմ գու.

այսպես են նաև հալուշ, մաշուշ, նեղուշ, տրուշ «այրել», ճուշ «ծռվել» և այլն: Այս բոլորը նրանից է, որ այդ բայերը հին հայե-

բենում ունեցել են ներգ. -եմ, չեզ. -իմ, ձևը, որոնք համշենի բարբառում հավասարապես գործում են -իմ: Եզակի Բ դեմքից սկսած երկու սեռերը տարբերվում են. խէխտես գու, խէխտիս գու և այլն:

ԱՌՏԻԱԼԻ ԲԱՐԲԱՌ

Կրավորականը կազմվում է ներգործական բայի վերջավորութ֊յունը վերածելով Մչ. -վել=Լհ. -վելու ձևին. օրինակ՝ Մչ. խառնըվէլ, խօրվըվել, ճաղօրթվել, մըղրըդվել «մազերը խուզել», բարբըվել:

Խոնարհումը լինում է հետևյալ ձևով.

ստոր. ներկա	ստոր. անկ.	հարակատար	գերակատար
դախվիմ	գախվէի	գախվիլ իմ	գախվիլ էի
դախվիս	գախվէիս	գախվիլ իս	դախվիլ էիս
դախվէ	գախվէր	գախվիլ է	գախվիլ էր
դախվինք	գախվէինք	գախվիլ ինք	գախվիլ էինք
դախվիք	գախվէիք	գախվիլ իք	գախվիլ էիք
դախվին	գախվէին	գախվիլ ին	գախվիլ էին

սահմ. ներկա	սահմ. անկ.	ապառնի	անց. ապառնի
դի դախվիմ	դի գախվէի	բի գախվիմ կամ բիդօր գախվիմ	բի գախվէի կամ բիդօր գախվէի

Ահա Հանուշից հավաքած օրինակներս.

խեղդուիլ>խըխղ'ըվէլու, դի խէխղ'ըվիմ, խէխղ'վիլ իմ
լիշուիլ>իշվէլու, դիշվիմ
ցցուիլ>ցըցվէլու, դի ցըցվիմ
երազել>էրձէվէլու, պէրձէվիմ, էրձէվիլ իմ
կախուիլ>գախվէլու, դի գախվիմ, գախվիլ իմ
լուացուիլ>լըվացվէլու, դի լըվացվիմ, լըվացվիլ իմ
հագնուիլ>հագ'նըվէլու, դի հագ'նըվիմ, դի հագ'նըվէի, հագ'նըվիլ իմ
խառնուիլ>խառնըվէլու, դի խառնըվիմ
գրուիլ>գ'ըրվէլու
գարթնուլ>գարդ'ըվէլու
թրջուիլ>թացուդվէլու

կարգաւիլ>դ'արգ'ըվէլու
ճկիլ>ջիգվէլու
ուղղորդել>խօրդ'վէլու
քաղել>քաղվէլու

Այս ձևերից մի մասը իրապես կրավորական է, ուրիշները՝ կրավորակերպ չեզոք (հագնուիլ, լվացուիլ), կա էլ որ՝ միայն չեզոք (երազել)։

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Վանի բարբառում կրավորական բայերը կազմվում են -վել վերջավորութիւնով և իջնարնվում են բ լծորդութեան ա տիպարի ձևով. օրինակ՝

ստոր. ներկա	ստոր. անց.	սահմ. կար.	հրամ.	դերբ.
ազատվիմ	ազատվի	ազատվա	ազատվի	ազատվիլ
ազատվես	ազատվիր	ազատվար	մ'ազատվե	ազատվօղ
ազատվին	ազատվէր	ազատվավ	ազատվէք	ազատվածազատվիր
ազատվիք	ազատվինք	ազատվանք	մէք ազատվե	ազատվէլու
ազատվէք	ազատվիք	ազատվաք		
ազատվեն	ազատվին	ազատվան		

Ծանոթ.— Երբ բայարմատը վերջանում է կ բաղաձայնով, կրավորականի վ ձայնի մոտ դառնում է յ. օրինակ՝ փակել>փակվել, փակյվել, քակել>քակվել, քակյվել, պսակել>փսակել, փսակյվել և այլն։

Երևանի բարբառի նման՝ վանի բարբառի մեջ էլ կրավորական ձևի բայը կարող է փոխանակել հին հայերենի բ լծորդութեան չեզոքի ձևը. օրինակ՝

մոլորիլ>մէօլորվել, մէօլորվիլ, կար. մէօլորա, մէօլորվա
պատառիլ>պատառել, պատառվիլ, կար. պատառա, պատառվա
դանդատիլ>կար. կյոնդյորտվար, կյոնդյորտվավ...
և կյոտվավ «դանդատվեց», որ սակայն չի խոնարհվում։

Կրավորական բայերը գործ են ածվում նաև իբրև՝

ա) կարողական, *ինչպես՝*

Էրթալ—Էրթացվել «կարելի լինել երթալ» օրինակ՝ սաեղօվ կէրթացվի՞ *էայս տեղով կարելի է երթալ, ճամբա կա՞»։*

կյոլ—կյոցվել «գալը կարելի լինել». օրինակ՝ սաեղօվ կու կյոցվի՞ «այս տեղով կարելի՞ է գալ».

Էլնել—Էլնըվել «բարձրանալը կարելի լինել».

տալ—տըրվել «կարելի լինել տալ», երկու կուռուշ կը տրվի՞ «կարելի՞ է մեծն երկու ղրուշ տալ».

Էննել—Էննըվել «կարելի լինել իջնել».

բ) փոխադարձ, *ինչպես՝*

ծեծել—ծիծկըվել «իրար ծեծել»։
տրփել—տրփվել «նայն նշ.».
կյըրկել—կյըրկվել «իրար գրկել».
պաքյել—պաքյվել «իրար համբուրել».
փոթիւթել—փոթիւթվել «իրար փաթաթվել».

գ) անդրադարձ կամ կրավորակերպ չեզոք բայ. *ինչպես՝*

խայնել—խայնըվել «ինքը իր շորերը հագնել».
խանել—խանվել «ինքը իր շորերը հանել».
սանդրել—սանդրվել «ինքը իր մազերը սանրել».
լվալ—լվացվել, լվանալ «ինքը իրեն լվալ»։

ԿԻԼԻԿԻԱՑԻ ԲԱՐԲԱՌ

Կրավորականները կազմվում են նախդրածական բայերից, երբեմն էլ նաև նախդիր չեզոք բայերից։ Կրավորականը կազմվում է առաջին և երկրորդ լծորդութեան անորոշի վերջավորութիւնը դարձնելով վա, իսկ երրորդ լծորդութեան կրկին տիպարների մեջ կատարյալի եղակի Ա դեմքի ը, ո վերջավորութիւնը չնչելով և ճեացյալի վրա դնելով -վալ կամ վըլ (բաղաձայնների խճողման դեպքում -ըվալ) մասնիկը։ Այսպես՝

սիրել>սիրիլ—սիրվալ
խածանիլ>խածանիլ—խածանըվալ
խօսիլ>խոսալ խոսվալ
անցանիլ>անցնըլ—անցնըվալ
հաւաքիլ>հաւքիլ—հաւքըվալ
ուտիլ>ուդիլ—ուդվալ
խմիլ>խումիլ—խումվալ
կլանիլ>գը'լիլ - գը'լը'վալ
մաշիլ>մէշիլ—մէշվալ
քանալ>ք'անօլ—ք'ացվըլ
լուալ>վօլօլ—վըլացվըլ

դիտել > դ'իդնօլ—դ'իդցվալ
դիմանալ > դ'իմանօլ—դ'իմացվըլ
իմանալ > իմնօլ—իմացվըլ
լալ > լօլ—լացվըլ
լնուլ > նօլ, լը՝ցա—լը՝ցվըլ
կենալ > գինօլ—գիցվալ
մոռանալ > մառնօլ—մառնըվալ

Կորչիլ բայը ստացել է գըշնը՝վըլ ձևը, որ կրավորականի ձևն ունի. սրա ներգործականն է գըշնը՝լ, որ է «կորցնել», այս էլ անցողական է դառնում գըշնլ-ցընել ձևով։

Անցողական բայերն էլ կարող են ունենալ իրենց կրավորական ձևը. օրինակ՝

խմել > խումիլ—խումցունիլ—խումցուվալ
կլանել > գ'ըլիլ—գը՝լը՝ցը՝նիլ—գը՝լը՝ցվալ
մաշել > մէշիլ—մէշըցընիլ—մէշըցվալ
խօսել > խուսալ—խուսուցունիլ—խուսուցվալ
ուտել > ուդիլ—գը՝յը՝նիլ—գը՝յը՝վալ

Կրավորական բայերը խոնարհվում են հետևյալ ձևով.

ստոր. ներկա.	ստոր. անկ.	կատարյալ	հրամ.	դերբ.
սիլվամ	*սիլվա, սիլվի*	*սիլվիցս*	*սիլվե*	*սիլվալ*
սիլվաս	*սիլվիլ*	*սիլվիցոլ*	*սիլվիցէք*	*սիլօձ, սիլվիլ*
սիլվա	*սիլվէլ*	*սիլվիցօվ*		*սիլվէօղ*
սիլվանք	*սիլվօնք*	*սիլվիցօ(ն)ք*		*սիլվիլօ, սիլ-*
սիլվաք	*սիլվիք*	*սիլվիցաք*		*վիլէք*
սիլվան	*սիլվին*	*սիլվիցօն*		

ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Սվեդիալի բարբառում կրավորական բայերը կազմվում են ներգործական բայերից, երբեմն էլ չեզոք բայերից, վերջավորությունը դարձնելով -վիլ, -ըվիլ, -ցըվիլ և խոնարհվում են Բ լծորդության համաձայն։ Օրինակ՝

ստոր. ներկա	ստոր. անկ.	սահմ. կար.	հրամ.	դերբ.
սիրվէմ	*սիրվէր է*	*սիրվիցս*	*սիրվէ*	*սիրվիլ*
սիրվէս	*սիրվէր*	*սիրվիցոր*	*սիրվիցիք*	
սիրվա	*սիրվիր*	*սիրվիցուվ*	*սիրվաք*	*սիրվիւղ*

սիրվա	*սիրվիր*	*սիրվիցուվ*	*սիրվաձ, սիրվիր*
սիրվէնք	*սիրվիր ինք*	*սիրվիցանք*	*սիրվիլա*
սիրվաք	*սիրվէր իք*	*սիրվիցաք*	*սիրվիլաք*
սիրվէն	*սիրվէր ին*	*սիրվիցան*	

Մի քանիսը՝ նաև բարդ և բաղադրյալ ձևերից.

ապառնի	անցյալ ապառնի
բըր սիրվէմ	*բըր սիրվէր է*
բըր սիրվէս	*բըր սիրվէր*
բըր սիրվա	*բըր սիրվիր*
բըր սիրվէնք	*բըր սիրվէր ինք*
բըր սիրվաք	*բըր սիրվէր իք*
բըր սիրվէն	*բըր սիրվէր ին*

սահմ. ներկա	սահմ. ներկա շարունակական
դը սիրվէմ	*դու սիրվէմ*
դը սիրվէս	*դու սիրվէս*
դը սիրվա	*դու սիրվա*
դը սիրվէնք	*դու սիրվէնք*
դը սիրվաք	*դու սիրվաք*
դը սիրվէն	*դու սիրվէն*

սահմ. անկ.	սահմ. անկ. շարունակական
դը սիրվէր է	*դու սիրվէր է*
դը սիրվէր	*դու սիրվէր*
դը սիրվիր	*դու սիրվիր*
դը սիրվէր ինք	*դու սիրվէր ինք*
դը սիրվէր իք	*դու սիրվէր իք*
դը սիրվէր ին	*դու սիրվէր ին*

հարակատար	գերակատար
սիրվաձ իմ	*սիրվաձ էր է*
սիրվաձ իս	*սիրվաձ էր*
սիրվաձ է	*սիրվաձ իր*
սիրվաձ ինք	*սիրվաձ էր ինք*
սիրվաձ իք	*սիրվաձ էր իք*
սիրվաձ ին	*սիրվաձ էր ին*

Անցողական բայերն էլ կարող են կրավորական դառնալ. ինչ-

պես՝ գ'իդոցվիլ, գուդ'ուցվա կամ գուդ'ուվվա, «կերթցվի, կարելի է երթալ», ուդ'ուցվիլ կամ ուդ'ուվվիլ «կարելի լինել երթալ»:

Արեւմտյան գրականում կրավորական կազմելու համար Ա և Բ յոթդրությյան կրկին տիպարների -ել, -իլ վերջավորությյանը դարձնելով -ուիլ, իսկ Գ յոթդրությյան կրկին տիպարների մեջ նույն -ուիլ ժամանիկը դնելով կատարյալի արմատի վրա. ինչպես՝

սիրել—սիրուիլ	իմանալ—իմացուիլ
պագնել—պագնուիլ	տեսնել—տեսնուիլ
խօսիլ—խօսուիլ	գտնել—գտնուիլ
կարդալ—կարդացուիլ	իջնել—իջնուիլ
անցնիլ—անցնուիլ	ելլել—ելլուիլ

Դիտ. 1.— Պետք է նկատել, որ թե Ա և թե Բ յոթդրությյան բ տիպարների մեջ ն ձայնը չի կորչում կրավորական կազմելու ժամանակ: Միայն ճագնիլ, հարցնել, ցուցնել բայերը կորցնում են իրենց ն ձայնը, դառնում են կրավորական հագուիլ, հարցուիլ, ցուցուիլ:

Դիտ. 2.— Ըլլալ բայը անկանոն կերպով դառնում է կրավորական ըլլուիլ, իբր թե անորոշը լիներ ըլլել:

Արեւելահայ գրականում կանոնը նույն է. միայն թե փոխանակ ավելացնելու -ուիլ վերջավորությունը, դնում են -ուել (Բ յոթդրությունը ըստ սովորականին վերածված Ա-ի):

Այստեղ նույնիսկ բացառությունները վերացվում են. ճագնել դառնում է կրավորական հագնուել. ցուցնել բայը չնչված է և նրա տեղը գործ է ածվում ցույց տալ. իսկ հարցնել բայի հարցվել գործածական չէ:

Կրավորական բայերը խոնարհվում են արեւելահայոց մեջ Ա յոթդրության համաձայն, իսկ արեւելահայոց մեջ՝ Բ յոթդրության համաձայն:

Տալիս ենք այստեղ միայն հիմնական ձևերը.

սաոր. ներկա	ապն.	կար.		
սիրուեմ	սիրուիմ	սիրուէի	սիրուեցի	սիրուեցայ
սիրուես	սիրուիս	սիրուէիր	սիրուեցիր	սիրուեցար
սիրուի	սիրուի	սիրուէր	սիրուեց	սիրուեցաւ
սիրուենք	սիրուինք	սիրուէինք	սիրուեցինք	սիրուեցանք
սիրուէք	սիրուիք	սիրուէիք	սիրուեցիք	սիրուեցաք
սիրուեն	սիրուին	սիրուէին	սիրուեցին	սիրուեցան

հրամ.	դերբ.
սիրուիր, սիրուէ	սիրուող
սիրուեցէք	սիրուած, սիրուել (բ)
	սիրուելու, սիրուելիք

Անցողական բայերն էլ կարող են վերածվել կրավորականի՝ -ցնել վերջավորությյանը դարձնելով արեւմտահայերեն -ցուիլ=արեւելահայերեն -ցուել (երկուսի մեջ էլ կրճատելով ն ձայնը) օրինակ՝

յատկացնել—յատկատցուիլ,	յատկացուել
վերացնել—վեր(ա)ցուիլ,	վերացուել
ներկայացնել—ներկայացուիլ,	ներկայացուել
հեռացնել—հեռացուիլ,	հեռացուել
մացնել—մացուիլ,	մացուել
խմցնել—խմցուիլ,	խմցուել
մոռացնել—մոռցուիլ,	մոռացուիլ

Երբ անցողականը կազմված է ուղ բայով, կրավորականի է վերածվում միայն ուղ բայը. օրինակ՝ բերել ուղ—բերել կըրուի:

Անկանոն բայերի կրավորական ձևերն են.

անել	ըլլուիլ	արուել
դնել	դրուիլ	դրուել
ուզել	ուզուիլ	ուզուել
առնիլ	առըուիլ	առըուել
գալ	գացուիլ	գացուել
երթալ	երթ(ա)ցուիլ	երթացուել
տալ	տրուիլ	տրուել

-չիլ վերջացած բայերից կրավորական չի կազմվում:

-ցնել վերջավորած բայերի կրավորականը հաճախ եզակի Գ դեմքով գործածվում է իբրև անդեմ բայ. ինչպես՝

Թուն կխմցան կմեռցան (այսինքն թե թուն են խմացնում մեռցնում):

Անցողականի կրավորականը հաճախ շփոթվում է Գ յոթդրության երկու տիպարների կրավորականի հետ, որովհետև երկուսի

համար էլ մասնիկն է -ցուել կամ -ցուիլ։

Ալպաղս արևմտյան գրականում՝

խնդիենալ	խնդիեցնել	խնդիեցուիլ
աւելնալ	աւելցնել	աւելցուիլ
խնդալ	խնդացնել	խնդացուիլ
դողնալ	դողցնել	դողցուիլ
մռնալ	մռացնել	մռացուիլ
լենալ	լեցնել	լեցուիլ
վերնալ	վերցնել	վերցուիլ

Արևելյան գրականումն էլ՝

կարդալ	կարդացնել	կարդացուել
յատկանալ	յատկացնել	յատկացուել
վերանալ	վերացնել	վերացուել
ներկայանալ	ներկայացնել	ներկայացուել
հեռանալ	հեռացնել	հեռացուել
մտնել	մտցնել	մտցուել

Բայց մյուս լծորդութեանց մեջ նման շփոթութեան չի պատահում և երկու ձևերը տարբեր են լինում. ինչպես՝ արևմտահայ գրականով՝

խմել—խմուիլ	խմցնել—խմցուիլ
մաշել—մաշուիլ	մաշեցնել—մաշեցուիլ
կլլել—կլլուիլ	կլլեցնել—կլլեցուիլ
խօսիլ—խօսուիլ	խօսեցնել—խօսեցուիլ
ուտել—ուտուիլ	կերցնել—կերցուիլ

Նույնը արևելյան գրականով՝

խմել—խմուել	խմացնել—խմացուել
մաշել—մաշուել	մաշեցնել—մաշեցունել
խօսել—խօսուել	խօսեցնել—խօսեցուել
ուտել—ուտուել	կերցնել—կերցուել

Այս շփոթութեանը դարմանելու համար արևելյան գրականում մտածել են պարզ կրավորականին դնել -ուել մասնիկը, իսկ անցողականի կրավորականին -ևուել: Ալպաղս՝

յատկանալ—յատկացուել	յատկացնել—յատկացնուել
ներկայանալ—ներկայացուել	ներկայացնել—ներկայացնուել

մտանալ—մտեցուել	մտեցնել—մտեցնուել
վերանալ—վերացուել	վերացնել—վերացնուել
մտնել—մտցուել	մտցնել—մտցնուել

Աբեղյան (Աշխ. քեր. 1906, էջ 95), չի ըմբռնում ոչ այս երկու դրութեանց տարբերութեյունը, ոչ նորոգութեյան պատճառը և ոչ էլ նպատակը, և համարում է «նոր մտած մի անուղիղ ձև... փոխանակ հին և ավելի գործածական ձևերին»։

Արևմտյան գրականը ոչ մի միջոցի չի դիմել շփոթութեյունը վերացնելու համար։ Ըստ այսմ Ալպաղս. 92 գրում է թէ «ամէն անցողական կրաւորական չ'ունենար. այլ անոր տեղ իր ներգործականին կրաւորականը կը դրուի, որ շատերուն արդէն նոյն է. օր. ճանչցուիլ, դողցուիլ, կարդացուիլ։ Նոյնպէս ցնել վերջաւորած ներգործականներուն՝ շատ անգամ իրենց չեզոքն է իրենց կրաւորականը»։

Վերևում ասացինք, որ կրավորական կազմվում է երբեմն նաև չեզոք բայերից։ Երևույթը ընդհանուր չէ և կան շատ չեզոք բայեր, որոնք չունեն կրավորական։ Այս պարագային կրավորականը կազմվում է անցողականից. ինչպես՝

չեզոք	կրավորկ.	անցողական	կրավորկ.
փրթիլ	—	փրցնել	փրցուիլ
փակչիլ	—	փակցնել	փակցուիլ
փախչիլ	—	փախցնել	փախցուիլ

Չեզոքից կրավորական կազմելը ինքնին անսովոր երևույթ է քերականութեյան մեջ. այս երևույթը մտել է հայերենի մեջ թուրքերենի ազդեցութեյամբ՝ առեղծելու համար կարողական բայը, որ հայերենի մեջ առանձին քերականական կարգ չէր։

Հին ձևով ասվում է՝ հնար է, մարթ է, կարելի է ուտել, ասել, լսել, բերել և այլն. իսկ այս նոր ձևով՝ կուտուի, կասուի, կլսուի, կբերուի և այլն։

Սրանց համեմատ նաև չեզոք բայերից՝

կերթացուի (կերթցվի—կարելի է երթալ
կլացուի (կու լացուի)—կարելի է լալ
կկենուի (կկեցուի)—կարելի է ելնել և այլն։

Կրավորական բայը գործածվում է բացի՝

1) կրավորականից, որ նրա իսկական արժեքն է,

2) կարողականից, որ մաել է մեր մեջ թուրքերենի ազդեցությամբ,

նաև իբրև

3) փոխադարձ բայ. ինչպես՝

տեսնել—տեսնուել «իրար հետ տեսակցություն ունենալ»

փաթաթուել—իրար փաթաթուել

համբուրուել—իրար համբուրել

ծեծկուել—իրար ծեծել

բռնուել—իրար բռնել

խառնուել—իրար խառնուել,

4) անդրադարձ կամ կրավորակերպ չեզոք (այսինքն իր վրա կատարված մի գործողություն), ինչպես՝

լուացուել, սանդրուել, սրբուել, քորուել, հանուել (իր շորերը հանել), հագնուել և այլն։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կրավորականի վերջավորությունը (-վել, -վի և այլն, իրենց բոլոր հոնարհյալ ձևերով) միջին հայերենից սկսած՝ տատանումի է գրության ձևի կողմից։ Համաձայն հին հայերենի ուղղագրական կանոնների, v (վ) հնչյունը գտնվելով բաղաձայնի և ձայնավորի միջև՝ գրվում է ու, ինչպես երուանդ, ադուէս, յօդուած, հատուած և այլն։ Ըստ այմ կրավորականի վերջավորությունն էլ գտնվելով բաղաձայնի ու ձայնավորի միջև, պիտի գրվեր միշտ ու. ինչպես՝ հալուիլ—հալուել, տարուիլ—տարուել։ Այսպես թե արևելահայ և թե արևմտահայ ուղղագրությամբ։

Բայց երբ սկսվեցին ուղղագրությունը բարեփոխելու առաջին փորձերը, առաջին հարվածը սկսավ հենց կրավորականից այն պատճառով, որ կրավորականը չափազանց սովորական (շատ գործածված) մի ձև էր, և բացի սրանից՝ լինելիք փոփոխությունը շատ թեթև կամ հարմար էր։ Առաջացավ երկու ձև, -վել և -ւել, առաջինը հնչական և վճռական, երկրորդը տատանվող միջին ձև, որ մասամբ նման էր հին գրչության (-ուել) և մասամբ էլ նման նորին (-վել)։ Այս տատանվող գրությունը մնաց և մնում է դեռ արևմտյան գրականում, իսկ արևելյան գրականը անցել է -վել ձևին։

Արևմտյան գրականի համար հատկապես ծանր է այն բառերի կրավորականը, որոնք ունեն իրենց արմատի մեջ վ ձայնը. այսպես հաշիւ, հովիւ, պատիւ և այլն, որոնց կրավորականը անշրնորհք ձևով գրվում է հաշուրուիլ, հովուրուիլ, պատուրուիլ և այլն։

Այս երկու գրությունից դուրս գալու վերջին միջոցն է՝ հաշվըվիլ, հովվըվիլ, պատվըվիլ և այլն։

4. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՅ

Բացասականը դրական գաղափարի հերքումն է. դա մի համաշխարհային լեզվական երևույթ է և չկա մի լեզու, որ հաստատականի կողքին նաև բացասական չունենա։

Կարելի էր կարծել, որ բացասականը իբրև վճռական մի հերվույթ իր տեսակները և նրբերանգները չունենար լեզուների մեջ։ Բայց կան մի քանի լեզուներ, որոնք այս կետումն էլ առեղծվեն տարբերություններ։

Ճապոներենում սովորական բացասականի հետ կա նաև մի այնպիսի բացասական, որ ցույց է տալիս «դեռ ոչ, դեռ բնավ ոչ»։ Օրինակ՝ հարց է տրվում՝

— Ճապոնիայում եղել ես։

— Դեռ բնավ չեմ եղել։

(Plaut, 118)

Այս լեզվի մեջ կա նաև մի բացասական, որ առատկանի իմաստ ունի. իբր թե «ոչ քիչ, այլ շատ»։ Օրինակ՝ Երբ նրա երեսը տեսավ, քիչ չվախեցավ (այլ շատ)։

(Plaut, 119)։

Աֆրիկյան սվահիլի լեզվումն էլ կա մի տեսակ բացասական ձև, որ Seidel (Suahili, 49) կոչում է Noch-nicht-perfektum «դեռ ոչ կատարյալ» և որ ցույց է տալիս, թե «դեռ այս ինչ գործողությունը չկա»։ Օրինակ՝

si ja piga
դեռ չզարկի

որի մեջ մասնիկն է ja «դեռ ոչ»։

Կա նաև սրա ավելի բարդ ձևը, որ ցույց է տալիս, որ թեև գործողությունը մինչև այդ ժամանակ չի կատարել, բայց քիչ հետո պիտի անի. օրինակ՝

si ja piga bado
«նար պիտի զարնեմ».

(մասնիկն է բայից առաջ դրված ja «դեռ ոչ» և բայից հետո bado)։

Մալայո-պոլինեզյան Բոնաուկ-իպորոա լեզվի մեջ հինգ տեսակ տարբեր բացասական կա. այսպես՝

adi *ոչ, չ (սովորական բացասական)*
iga *բոլորովին ոչ (ամենաբացասական)*
maid *չկա, գոյություն չունի*
faken *այն չէ, ինչ որ կարծում էին*
tsaan *դեռ ոչ։*

Այս բոլորը բայ են և խոնարհվում են իբրև բայ։

(Seidenadel 138, 140, 141, 144, 146)

Մորդվիններեն լեզուն էլ ունի 5 տեսակ բացասական իրենց դանազան խոնարհումներով։

(Евсеевъ, Հավել., էջ 279)

Բացասականի մի անսովոր ձև ունի սիերիկյան կրի լեզուն. բառի ծայրին դնում է ban, *որով իմացվում է, որ նա չկա, մեռել է կամ կորել է. օրինակ՝*

ni musomi-ban *հանդուցյալ պապս*
ki musomi-ban *հանդուցյալ պապդ։*

Այս մխենուլը կազմում է նաև բայի անկատար անցյալը։

(Lacombe, 18)

Ի՞նչ ձևեր կան լեզուների մեջ արտահայտելու համար բացասականը։

Տարօրինակ է աֆրիկյան փուլ լեզուն, որ բացասականը արտահայտում է միայն տոնի բարձրությամբ, առանց որևէ մասնիկի կամ վերջավորության. օրինակ՝

mi warata *«պիտի սպանեմ» (վերջածայնը մյուս վանկերին հավասար տոնով).*

mi waratà *«չպիտի սպանեմ» (վերջին վանկը բարձր տոնով).*

mi piya *«խփում եմ».*
mi piyá *«չեմ խփում»։*

Սրա նման աֆրիկյան նձիմա լեզուն էլ բացասական ապառնին դանազանում է դրականից միայն շեշտի տարբերությամբ. այսպես՝

nwóli *«պիտի ուտեմ».*
nwóli *«չպիտի ուտեմ»։*

(Weiman, A preliminary study of the nzima, 107)

Զարմանալի է նաև Դրավիդյան տելուգու լեզուն, որ թեև իր բայական դանազան ժամանակները կազմում է lēdu *«չկի, ոչ» մակբայով, բայց ներկայի և անցյալի համար չունի ժխտական. սրանց տեղ դնում է* aoriste-ի *դրական ձևը (առանց ժխտականի, բայց ժխտական իմաստով). օրինակ՝*

koṭṭanu *«չեմ ծեծում. չծեծեցի, չպիտի ծեծեմ»*
koṭṭavu *դու* koṭṭamu *մենք*
koṭṭadu *նա* koṭṭaru *դուք, նրանք*
koṭṭadu *նև կամ չեզ.* koṭṭavu *նրանք (չեզ.)։*

(Lakshminarasayya, 25—26)

Մնացյալ բոլոր լեզուներում բացասականը կազմվում է ինչ որ մասնիկով, որ դրվում է սովորաբար ժխտելի բառի սկիզբը, կամ նաև վերջը և կամ բառի ու վերջավորության միջև։ Այսպես վրացերեն ar *ժխտականը, որի հետ նույն է նաև լազերեն* var, *դրվում է բառի կամ բայի սկիզբը։*

Ամերիկյան տուկա լեզվում (Զիլի) երեք բացասական մասնիկ կա՝ la, qui, no *(որոնցից* la *պատահաբար նման արաբականին,* no *պատահաբար նման եվրոպականին)։ Առաջինը դրվում է սահմանական եղանակում, երկրորդը ստորադասականում և գերբայների վրա։*

(Grasserie 34, Febres, 8)

Սրա նման աֆրիկյան կենյան (բանտու) լեզվումն էլ բացասականի մասնիկը ըստ բայի ժամանակի զանազան է լինում. այսպես՝ ներկայի և ապառնիի համար դնում են pù, *անցյալի զանազան տեսակների համար* béke, *հրամայականի համար* ké։

(Ittmann, 198)

Աֆրիկյան սարա լեզվում բացասական կազմելու համար բայի դրական ձևի վերջում դնում են nge *մասնիկը*

musa *ուտում եմ* musange *չեմ ուտում*
yusa *ուտում ես* yusange *չես ուտում*
nusa *ուտում է* nusange *չի ուտում*
zusa *ուտում ենք* zusange *չենք ուտում*

susa *ուսում եք* susange *չեք ուսում*
zusa *ուսում են* zusange *չեն ուսում*
ապո. musa ngena *պիտի ուսնեմ*
musangenange *չպիտի ուսնեմ և այլն։*
(Delafosse, 25)

Նույնպես և սրանց կրավորականը. ինչպես՝

musanga *ուսվում եմ* musangange *չեմ ուսվում*
yusanga *ուսվում ես* yusangange *չես ուսվում*
musangenanganga *չպիտի ուսվեմ։*
(անդ, էջ 26)

Ամերիկյան վապո լեզվի մեջ բացասական մասնիկն է la *կամ* laki (Radin, 139), *որ պատահաբար նման է արարերենին։*

Մալգաշերեն լեզվի բացասական մասնիկն է tsy, *որ պատահարար նման է մեր չ-ին* (Montagné, 77)։

Հետաքրքրական է ևթովպական գալլա լեզվում արդելականի եզակի արական, իգական և հոգնակի ձևերը կազմելու համար jeḍi *բառիկը, որ նշանակում է բուն «ասա» և համապատասխանում է մեր «թող» մասնիկին. օրինակ՝*

ասա (նրան) չերթա, չաս, չգրի
ասա (նրանց) չերթան, չգան
ասա (ներան) չերթա և այլն.
փոխանակ թող չերթա և այլն։
(Hodson, 43)

Աֆրիկյան խաուս լեզվում կա բացասականի «դեռ ոչ» ձևը, որ կազմվում է na *մասնիկով. օրինակ՝*

tenabiga *«նա դեռ չի գարկել»*
tetunaimba *«մենք դեռ չենք երգել»։*
(Kotz, 19)

Աֆրիկյան կինգա (բանտու) լեզվումն էլ բացասականը կազմվում է ne *մասնիկով, որ դրվում է բայից առաջ։*
(Wolff, 80)

Սամերենումն էլ բացասականի մասնիկն է nu, *որ դրվում է խոսքի սկիզբը. սրանով է կազմվում նաև արդելականը։*
(Deimel, 231)

Պերսի առնա սիմի կամ կնչտա լեզվում բացասականը կազմվում է ֆրանսերենի նման.— բացասականի մի մասը դնելով բայից առաջ, մյուսը բայից հետո. այսպես՝

puñuni *քնում եմ.*
mana puñuni-ču *չեմ քնում.*

(պատահաբար առաջինը նման հայերեն մի՛ և երկրորդը չի բառին)։
(Middendorf, 103)

Հնդկական չուտիյա լեզվում բայը բացասականի վերածելու համար բառի ներսում դնում են a *մասնիկը, ինչպես՝*

lari-ri *ավի→*lari-ā-ri *չավի*
lari-rumde *ավել էի→*lari-ā-rumde *չէի ավել*
no-ni *ավել եմ→*no-yā-ni *չեմ ավել*
no-n *պիտի տամ→*no-yā-n *չպիտի տամ։*
(Grierson III, *մ. 2 էջ 121)*

Դրավիդյան բրահուի լեզվումն էլ բացասական կազմելու համար բայի մեջ պետք է մուծել a *մասնիկը։*
(Bray, 139)

Աֆրիկյան ցվա (բանտու) լեզվում բացասական կազմելու համար բայի սկիզբը դնում են a *ինչպես՝*

nza famba *ման եմ գալիս,* a nzi fambi *ման չեմ գալիս*
nzi ranza *սիրում եմ,* a nzi ranzi *չեմ սիրում։*

Այս առթիվ այս լեզվի քննիչը (Persson, *51*) *անում է հետևյալ նկատողությունը. «Եվրոպացիք բացասականը կազմում են բայի դրական ձևից՝ ավելացնելով «ոչ». բայց բանտու լեզուները այդպես չեն. բացասականը կազմում է նրանց մեջ բայի մասը։— Չկարողացա հասկանալ հնդինակի միտքը. արդյոք նա ասում է այսպես՝ նկատի ունենալով այն հանգամանքը՝ որ «ոչ» (անգլ. not) բառը առանձին է դրվում, թե մի այլ հանգամանք։ Եթե առաջինն է, ավելի ուժեղ է նախորդ չուտիյա լեզվի դրությունը կամ թաքներեն* ma, *որ մտնում-թաքնվում է բառի մեջ. ինչպես՝*

áima-dəm *չառի*
sát-ma-də *չծախեց և այլն։*

Նոքիերենում բացառականը կազմվում է min օժանդակով, որ ձևացնում է առանձին խոնարհում բոլոր ժամանակների և բոլոր 15 լծորդութիւնների համար, նաև սրտական բայաձևով (verbum dativum). օրինակ՝

hur-re սպանում եմ
hur-mind e չեմ սպանում
hur-ndi-re նրան սպանում եմ
hur-nu-md-e նրան չեմ սպանում։

(Kauczor, 227—250)

Կովկասյան ուրիշ լեզվով բացառական մասնիկն է m, որ կարող է դրվել բայից առաջ կամ հետո. օրինակ՝

u-z-bie-n քեզ ես տեսնում եմ
u-s-əm-bie-n քեզ ես չեմ տեսնում
u-z-bie-qa-ma քեզ ես չեմ տեսել։

Բացի սովորական m բացառականից, կա նաև «բնավ ոչ» բացառականը, որի մասնիկն է bz. օրինակ՝

a-s-em-bie-n նրան ես չեմ տեսնում
a-s-əm-bie-bzä-n նրան ես չեմ տեսնում բնավ։

(Dumézil, 60, 62)

Կովկասյան լեզուներն լեզվում բացառական կազմելու համար բայի վերջում դրվում է č. իսկ արգելական կազմելու համար դրվում է mir, նույնպես բառավերջում։

(Жирков, 93, 96)

Աֆրիկյան հարար լեզվի մեջ բացառականը կազմվում է բայի մեջ ներմուծելով um բացառական մասնիկը. ինչպես՝ gadala «սպանել» բայից՝ անկատար ժամանակ՝

	դրական	բացասական
եզ.	Ա. igadl-aḥ	igadl-um-ieḥ
	Բ tigadl-aḥ	tegadl-um-ieḥ
հոգ.	Ա. nigadl-ana	negadl-um-ie na

(Cerulli, 90)

Բացառական բայ կազմելու մի անսովոր ձև էլ կա հնդկական

առջասթանի լեզվի մարվարի բարբառում. այդ է դրական բայի վրա ավելացնել rahaṇō «մնալ». օրինակ՝

gātō երգել— gātō rahaṇō չերգել։

(Grierson, հատ. 9, մաս 2, էջ 29)

Նենեց (սամոյեդ) լեզուն ունի բայի ժխտականը կազմելու առանձին մի ձև. նա ունի nisʸ ժխտական բայը, որ խոնարհվում է իբրև առանձին բայ՝ բոլոր ձևերով և նրա կողքին դրվում է դրական բայը անփոփոխ։

(Терещенко, 239)

Կան և սրա հատատական ձևերը, որոնք են՝

vunisʸ իմարդն ոչ (իմարդն չգնացի)
xa'nyasʸ չէ՞ որ (չէ՞ որ չգնաց)։

Սրանց հետ պետք է հիշել նաև՝

xaçyasʸ քիչ մնաց որ... (քիչ մնաց որ ընկնէր, բայց չընկավ)։

(անդ, 240)

Նենեց լեզվին ցեղակից սելկուպ լեզուն էլ, բացի այն, որ ունի 2 տեսակ բացառական մասնիկ, նախ assa «չ» որ կցվում է բայի գանազան ժամանակների վրա, և երկրորդ əkə «մի», որ կցվում է միայն հրամայականի վրա,— ունի նաև «անկարող լինել, չկարենալ» և «պակասել» բայերը, որոնք նախորդի ձևով իրենք միայն խոնարհվում են դրական բայի կողքին և տալիս են նրան բացառական իմաստ։

(Прокофьев, 95—96)

Չեչեն լեզվի մեջ էլ բացառական մասնիկը երկու է. ca (ծա), որ սովորական բացառական է, և ma, որով կազմում են արգելականը. ինչպես՝

dieša կարդա
ma dieša մի կարդար։

(Мациев, 123)

Եվրոպական շատ լեզուների մեջ բացառականն է ne, որ դրվում է խոսքի սկիզբը. ինչպես, հայերեն ոչ և հունարեն οὐ, οὐκ, οὐχ. օրինակ՝ լատիներեն nescio չգիտեմ=հայերեն ոչ գիտեմ, ռուսերեն не хочу ոչ կամիմ, հունարեն οὔφημι ոչ ասեմ, οὐκ ἐθελω ոչ կամիմ, οὐ λὸσω ոչ թողից, οὐκ ἐρεῖς չես ասելու և այլն։

Գերմաներենում և անգլերենում բացասականը դրվում է խոսքի վերջում, ինչպես՝

գերմ. ich habe nicht
անգլ. I have not
} ունեմ ոչ=չունեմ։

Այսպես նաև ամերիկյան չիրչա լեզվում, ուր բացասականը կազմելու համար բայի խոնարհման բոլոր ձևերի վերջում դրվում է -za մասնիկը. ինչպես՝

zebquyscuaza «չեմ անում»
umquyscuaza
abquyscuaza և այլն։

(Uricoecha, 40)

Բերբերական կաբիլերեն լեզվում բացասական կազմելու համար բայից առաջ դնում են ur, իսկ բայից հետո ara (որ պատահաբար նման է վրացերեն ara բացասականին). օրինակ՝

ur ēssiner ara չգիտեմ
ur thennidh ara չասացիր։

(Hanoteau, 175)

Մունդա խմբից կոհլ լեզվով բացասական կազմելու համար բայարմատից առաջ դրվում է ka մասնիկը և այս ածիվ դերանուն վերջավորություն էլ առաջ է անցնում. օրինակ՝

aing sentan-aing գնում եմ
aing ka-ing sentana չեմ գնում։

(Nottrott, 50)

Թուրքերենում մասնիկն է ma կամ me, որ դրվում է բայի արմատի վերջում՝ բայական վերջավորությունից առաջ և նախավոր շեշտով. օրինակ՝

ál-ma-dəm չառի
vér-me-dim չտվի։

Այս շեշտը անհրաժեշտ է, առանց որի բայը դառնում է հասարակական. ինչպես՝

qavûrma մի տապակեր
qavurmá տապակ, դավուրմա

dondûrma մի սառեցնիր
dondurmá պաղպաղակ
késme մի կտրիր
kesmé կտրվածք։

(Այս երևույթի համար համմ. էջ 388 poul լեզվի ձևը)։

Անհրաժեշտ չէ, որ այսինչ կամ այնինչ լեզուն ունենա միայն մի բացասական մասնիկ։ Կարող է ունենալ և մեկից ավելին։ Օրինակ՝ արաբերենում բացասականի մասնիկը երկու է՝ mā և lā. առաջինը դրվում է կատարյալ ժամանակի վրա, երկրորդը ներկայի վրա. օրինակ՝

mā kataba չգրեց
la yaktubu չի գրում։

(Belot, 29)

Հնդեվրոպական նախալեզվի մեջ բացասական կազմելու համար բայի կամ բառի վրա դնում էին ne, որ պահում են սանսկրիտը nā, պարսկերեն na, մյուսները ne ձևով. ինչպես՝

սանս. nā tvâvān Indra kāç cana
nā jāto nā janiṣ yate
Քո քեզ նման ով Ինդրա
Ոչ ծնվել է, ոչ կծնվի։

լատ. nē-scio ոչ գիտեմ
լիտ. àš nègeriu չեմ խմում
պրս. nā dādam չտվի։

Հնդեվրոպական աշխարհի արևելյան ճյուղում բացասականը երկու էր. բացի ne ձևից՝ կար նաև mē, որ պահում են արիական, հունն և հայ լեզուները միայն, հրամայականի մեջ՝ արգելական կազմելու համար. օրինակ՝ սանս. mâ bharaḥ=պրս. mā bur=հուն. μὴ φέρε=հայ. մի՛ բերեր։

Հայերենը ունի երկու տեսակ բացասական բառիկ՝ ոչ (որի կրճատ ձևն է չ) և մի՛։

Ոչ կամ չ գործածվում է բոլոր տեսակի բացասականների համար, իսկ մի՛ միայն արգելականի մեջ։

Շատ լեզուների մեջ բացասական և արգելական կազմվում են նույն ձևով և նրանց մեջ խտրություն չկա. օրինակ՝

ռուս. не говорит, не читает *ևն*
не говори, не читай *ևն*։

Բայց կովկասյան մի խումբ լեզուների մեջ արգելականը զարմանալի կերպով տարբեր է սովորական բացասականից։ Օրինակ՝ ինգուշերենում սովորական բացասականը կազմվում է cə *նախամասնիկով, որ դրվում է անորոշի սկիզբը. ինչպես՝* cedešär «չսովորել» (Мальсагов, 60)։ *Սրա հետ նույն են չեչեներեն* ca, cə *բաց.* co. *իսկ արգելականը կազմվում է* ma *մասնիկով* (Dumézil, BSL 34, էջ 109)։ *Այս վերջինիս հետ էլ նույն են թաբասարան* me, mi (Жирков, 138 *գնում է* m), *հյուրկիլի* ma-, *աղուլի* m, *կյուրիներենում էլ* -mir, *որ վերջահար է. օրինակ՝*

kač «առնել» *բայից* ǩačûmir *մի առներ։*

(Dirr, 294)

Այս ձևերի հետ նույն են զարձյալ բուդուխ. -ma, -mo, *արխազ. և ուբիխ.* m, *կաբարդին.* mə. *ինչպես՝*

t'xə *գրիր,* a-u-mu-t'xə *մի գրիր,* mə-šen *չգիտենալ։*

(Dirr, Einführ, 48—49)

Լազերենում էլ ունենք մո՛ ճարուփ «մի գրիր, մո՛ ճարուփք» մի գրեք»։

(Марръ, Грам. чан. яз. 55)

Այս բոլորը շատ նման են հայերենին. ինգուշ. cə, *չեչեն.* ca, cə, *բաց.* co *նույն են հնչում հայերեն* ոչ, չ *ձևի հետ, իսկ մյուսները հայերեն մի՛ ձևի հետ։ Հատկապես Կյուրին.* mir *նույն է ճիշտ Ղրբ. մըր ձևին, որ նրա պես թե վերջահար է և թե կրում է* p *վերջավորությունը. այսպես Ղրբ. կ'օ՛ռռալ մըր «մի գոռա», մըռա՛ճալ մըր «մի մոռանա»։*

Չ բացասականի հետ մեծ նմանություն է ցույց տալիս նաև պարսկական մինջանի բարբառը, ուր ունենք ǰč *(ամբողջական ձևը), «ոչ» նշանակությամբ։ Սրա կրճատ ձևն է* či-, *որ գործածվում է իրրև բացասական մասնիկ բայերից և գոյականներից առաջ. ինչպես՝*

čidə́m *չեմ գարնում*
za čivzânə́m *ես չգիտեմ*
čʲpərsa *չհարցնես, մի հարցնի և այլն։*

Տարակույս չկա, որ այս բառը պրս. hīč «բնավ, ոչ ոք» *ձևն է* (Gauthiot MSL 19, 145), *բայց թե կովկասյան ձևերի և թե մինջանի ձևի բացարձակ նմանությունը հայերենի հետ զուտ արտույտներ են պատահականության, ինչպես որ պատահականություն է նաև այն, որ բացասականի այս* ma *ձևը ընդհանուր է շատ բազմաթիվ լեզուների մեջ՝ սկսած չինարենից, թուրքերենից, կովկասյաններից, մինչև արաբերեն և ավելի հեռավոր ամերիկյան լեզուներ։*

Պատահական է նաև čé, *որ մալայան էնգպանո լեզվի մեջ բայը բացասականի է վերածում. օրինակ՝*

čé sai-l *չվազեա։*

(Kähler, 123)

Մելանեզյան իսի լեզվով բացասական մասնիկն է ča. *օրինակ՝*

oge ma ča he ka he
ես չ պիտի երթամ։

(Ray, 99)

Այս բոլորը պատահական բաներ են, ինչպես որ պատահական է նաև աֆրիկյան չիդդի (բանտու) լեզվով էական բայի բացասականը tsi=*հայ. չի։*

(Raum, 108)

Հայերեն մի՛ ծագում է հնխ. mē *ձևից (*ē *ըստ օրինի դառնում է* i)։

Ինչպես ասացինք, հնդեվրոպական նախալեզուն ուներ երկու տեսակ բացասական բառիկ՝ ne, *որ գործածվում էր բայական բոլոր ձևերի համար և* mē, *որ գործածվում էր միայն արգելականում։ Այս վերջինը հատուկ է միայն արևելյան ճյուղին, բայց քանի որ այնպիսի հին և պահպանողական լեզուներ (ինչպես են սանսկրիտն ու հունարենը) պահում են այն, պետք է կարծել, որ նա ընդհանուր էր նաև մյուս լեզուներին։*

*Երկու ռնգականների նմանությունը մի կողմից (*n *և* m) *և ավելորդ հոմանիշներից մեկի ջնջման օրենքը մյուս կողմից հետացրին վերջապես* mē *ձևի գործածությունը մյուս լեզուներից։ Նույնիսկ հնդկական պալի լեզուն արգելականում թեև ունի* mā, *բայց ավելի շատ՝* na (V. Henry, 100)։

Մրցումը տարվել է երկու ուղղությամբ. մինչդեռ լատինա-

բենը, գերմաներենը և սլավերենը ջնջել են mē ձևը և ընդհանրացրել ne, ընդհակառակը թոխարներենը ջնջել է ne ձևը և ընդհանրացրել է mē: Բալի բոլոր բացասական ձևերը թոխարներենում կազմվում են անխտիր mā (նաև mar) մասնիկով (Sieg u. Siegling 316):

Հնդկականումն էլ կա համանօրինակ շարժում. մինչդեռ սանսկրիտին հատուկ է միայն mā արգելականը, արդի լեզուներից, օրինակ, սինհալի լեզուն գործածում է արգելականում no. ինչպես՝

no-kiya «մի ասա» (Geiger, 150):

Նույն մրցումը տարվում է նաև այսօր իրանական ճյուղի մեջ՝ պարսկերեն լեզվում:

Պարսկերենում, ինչպես գիտենք, բացասականի մասնիկն է na, իսկ արգելականինը՝ ma: Բայց այժմ պարսկական ժողովրդական լեզվում արգելականն էլ փոխանակվում է ne ձևով. ինչպես՝

né-ters =գրակ. mé ters «մի վախիր»
né-gū =գրակ. mé-gū «մի ասիր».
(Jensen, Neup. gram. 168)

Ավելի զարմանալին այն է, որ ածականի և դոյականի բացասականի nā -ան մասնիկը նույնպես անցնում է բայերին: Ճանապարհը այսպես է: Ածականը ունի nā մասնիկը. ինչպես՝ nāpāk «անմաքուր». հետո անցյալ դերբայը՝ իբրև ածական, ստանում է նույն nā մասնիկը. ինչպես՝ nā āzmūde «անփորձ» (իբր «ան-փորձված»). այստեղից էլ անցել է անորոշ դերբայի վրա. ինչպես՝ nā giriftēn «չգրավել», nā ṭalebīden «չպահանջել»: Բայց երևույթը այստեղ կանգ է առել և դեռ խոնարհման մեջ չէ մտել (Jensen, Neupers. gr. 169): Զարմանալի է նույնպես այն, որ պարսկական թվիշի բարբառով բացասականը՝ փոխանակ դրվելու բալի սկիզբը, մտել է բալի և վերջավորության միջև. օրինակ՝ ōmām եկա, ōmā-n-im չեկա (Grund. ir. phil, I 366).

Հայտնի է, որ թուրքական լեզուների մեջ ժխտական մասնիկն է ma. բայց դա ձայնական զանազան փոփոխություններով կարող է դառնալ b, p, օրինակ՝ Սիբիրի թուրքական խակաս լեզվով նույնը դառնում է m, b, p:

(Дыренкова, 67)

Թուրքական շոռ լեզվի մեջ էլ բացասականը կազմվում է pa, pe, ba, be, me մասնիկով (Дыренкова, 151):

Գալով հայերեն ոչ-չ բառիկին, ըստ Meillet MSL 23, 224, սա բաղկացած է երկու մասից՝ n+չ, վերջինը անորոշի նշանն է, որ գտնում ենք նաև ին չ բառի ծայրին. իսկ n նույն բացասականն է, որ պետք է կցել հոլ. otū, սանս. àti «հակառակ» բառերին: Այս բառերի իբրև բացասական գործածության համար համմ. սանս. àti vratàm «ընդդէմ օրինի», հոլ. ôt-roū=ռուս. отрокъ «մանուկ» (իբրև լտ. in-fans «անխոս»=մանուկ): Ըստ այսմ ոչ նշանակում է «ոչ մի», իսկ ոդյալ չ ձևի մեջ միացել է միայն «մի, մեկ» գաղափարը: Վերջին երևույթի հետ նույն է թրք. hič bir šey «ոչ մի բան», որ Գոլսի ժողովրդական լեզվում կրճատվելով դարձել է bišey «մի բան»:

Դրաբարի մեջ հնդեվրոպական նախալեզվի նման, թե նախադասության և թե բայի խոնարհումը բացասական լինելու դեպքում բացի ոչ բացասականը վերցնելուց, ուրիշ ոչ մի փոփոխություն չէին կրում:

Մի՛ արգելականի գործածության ձևը բոլոր լծորդությունների մեջ արդեն տեսանք: Ինում ենք այստեղ նաև ոչ բացասականի համար իբր օրինակ Ա լծորդության ներկայի խոնարհումը. միացյալը բոլորովին նույն է.

ոչ սիրեմ	կրճատ չսիրեմ
ոչ սիրես	չսիրես
ոչ սիրե	չսիրէ
ոչ սիրեմք	չսիրեմք
ոչ սիրէք	չսիրէք
ոչ սիրեն	չսիրեն

Ոչ գործածվում է ոչ միայն բայական ձևերի, այլև ուրիշ մասունք բանիների հետ. օրինակ՝ ոչ ապաքէն, ոչ բնաւ, ոչ այսօր և ոչ վաղիւ, ոչ յառաջ և ոչ յետոյ և այլն: Արդի աշխարհաբարում դրեթե բացասական մասնիկի ձև է առացել. ինչպես՝ ոչ-բարի, ոչ-ապարդյուն, ոչ-մեծ, ոչ այնքան կարևոր, ոչ ավել-ոչ պակաս: Գրաբարում բացասական մասնիկ է չ ձևով. ինչպես՝ չերէց, չքահանայ, չդիտանք, չդոյ, չմարդի, նույնիսկ բառի ներսում՝ չափչդիտութիւն: Նույնպես նաև արդի բարբառներում, ինչպես՝ չհաս, չքեր, չտես, չհասութիւն և այլն:

Մի՛ իրև արգելական կցվում է ոչ միայն հրամայականի հետ, այլև ապառնիի, սաորադասականի և անեղևույթի հետ. օրինակ՝ մի լուիցես, մի տեսցէ, մի առնուցուս յանձն, մի տեսցես, մի տե-

առնիցես, մի տեսանիլ։ Կարող է լինել նաև հետադաս. ինչպես՝ Որ ոչ աշխատ լինիցի, կերիցէ մի։ Վերջապես կարող է դործածվել որևիցե բառի վրա առանց բայի և այդ դեպքում բայը գորութիւմբ կիմացվի. օրինակ՝ Մի, մի այր (այսինքն այստեղ մի բերնք)։ Այժմ ասում ենք մի և հասկանում ենք մի՛ աներ։

Մի արգելականը կարող է իր բայից բոլորովին հետանալ՝ անջատվելով բազմաթիվ բառերով։ Դասական օրինակ է Եղնիկի հետևյալ տողը՝

Զի մի մթարքն, որ զբրօքն շողայցեն, արգել հալելոյ ի լատակութիւն լուսոյն լիցին։

Սովորական կարգով այս հատվածը պիտի լիներ այսպես.

Զի մթարքն, որ զբրօքն շողայցեն, մի լիցին արգել հալելոյ ի լատակութիւն լուսոյն։

Վերի ձևով մի՛ ոչ միայն բաժանված է իր բայից 8 բառով, այլև մի ամբողջ հարաբերական նախադասութիւմբ։

Միջին հայերենում, բայական այն եղրերը, որոնք գրաբարի հետ նույն էին ձևացել դրականում, բացասականի մեջ էլ անփոփոխ պահեցին գրաբարի բացասական ձևը։ Այստեղ սակայն հարկավոր էր ընտրութիւն անել ընդարձակ ոչ և սղյալ չ ձևերի միջև։ Միջին հայերենը բնականաբար պիտի ընտրեր կարճ ձևը։

Սխալվում է Karst, *373 ծան., որ կարծում է, թե ընտիր դասական հայերենում ընդունված էր միայն ոչ ձևը և չ ժողովրդական էր և թե ընտիր դասական հայերենում ամանդված չ-ով ձևվերը հարազատ չեն։ Ուրեմն հարազատ չէն չիք. չնչին, չնաշխարհիկ, չերեց, չքոտի և այլն ձևերը և պետք է սրանց հարազատ ձևերն համարել՝ ոչիք, ոչնչին, ոչնաշխարհիկ, ոչերէց, ոչքոտի և այլն։ Եվ երբ Եղնիկը իր սուր հնդնութիւմբ և բառախաղով գրում է «Զերն չէին վասն չէին յաշտ առնէր»՝ պետք է համարել անհարազատ և ուղղել՝ Ոչ երն ոչ էին վասն ոչ էին յաշտ առնէր։*

Չիարդ և իցէ. գրաբարի մեջ կային ուրեմն հավասարապես ոչ և չ ձևերը։ Ավելի ուշ, ժողովրդական լեզվի մեջ գերակշռեց կարճ ձևը և անփոփոխ ժառանգութիւն անցավ միջին հայերենին։ Այսպիսով, միջին հայերենը ստացավ կատարյալի, հարակատարի, գերակատարի, անորոշ գերբայի, ինչպես նաև արգելականի ձևերը, համարյա անփոփոխ գրաբարից։ Օրինակ՝ չառի, չեկիր, չգալոյն, չես ասցել, չէ հրաւիրել, չես խօսել, չլինի խօսել, չլինի ծնել, չլինի առել, չլինի ցուցուցել, չէ ընդունած, մի այնէք, մի գողնայք (Karst, 374)։

Իսկ այն բայական ձևերը, որոնց դրականը փոփոխվել էր միջին հայերենում, բնականաբար իրենց բացասական ձևն էլ պիտի փոխեին։ Նախ չնչվեցին գրաբարի ապառնին (չսիրեցից) և ստորադասական ներկան (չսիրիցեմ)։ Երկրորդ՝ գրաբարի սահմանական ներկան և անկատարը վերածվելով միջին հայերենում ստորադասական ներկայի և անկատարի, անփոփոխ տեղափոխվեցին այստեղ (չսիրեմ, չսիրէի). օրինակ՝ կու ազաչենք գքեզ որ չծախես. նա իսկի չայնէ, նա վասն այնոր չատատ դարպասն. նա այլ չընդունվի բնաւ. թէ այնէ այրիկն տիսթիկ ու թէ չայնէ (ամուսինը կտակ անե թե չանե). չառնուն, որ չգոնուն, չարգելեն, չբանան, որ չտան (Karst, 376)։

Ամենակարևորը սահմանական ներկան և անկատարն էին, որոնք միջին հայերենում ստանալով կու բառիկը, բոլորովին փոխել էին իրենց կերպարանքը։

*Անշուշտ կարելի էր նորաստեղծ ներկայի և անկատարի վրա ավելացնել չ բացասականը և կազմել նոր ձև, իբր *չկու սիրեմ, *չկու սիրեի կամ ավելի լավ՝ *կու չսիրեմ, *կու չսիրեի։*

Այսպիսի մի փորձ արել է հաջողութիւմբ կեսարիայի բարբառը, որից իբր օրինակ ունենք՝

չկամ կարդամ	*«չեմ կարդում»*
չկար գրէի	*«չէի գրում»*
չկաս գրէիր	*«չէիր գրում»։*

(Ալպոյաճյան, Պատմ. հայ կես. Բ 1644)

Դժբախտաբար այս օրինակները շատ քիչ են և բավական անհարիր՝ հասկանալու համար կանոնը։ Երևում է, որ օժանդակն է կոլ բայը, որ ներկայի եզակի Ա դեմքի մեջ բայի հետ միասին խոնարհվել է (չկամ կարդամ), անկատարի մեջ եզակի Ա դեմքում ունենք չկար գրէի. ուրեմն եզակի Գ դեմքը ընդհանրացել է. բայց ինչու՞ եզակի Բ դեմքում ասվում է չկաս գրէիր, ուր չկաս թե խոնարհված է ներկա և թե եզակի Բ դեմք է։ Ավելի հետո (անդ, էջ 1663) կամ բայի տեղ դրվում է գամ. որ՞ն է առուլգ։

Անհրաժեշտ է մի քանի օրինակ էլ՝ ավելի լավ պարզաբանելու համար օրենքը։

Բայց այս փորձը կդժվարացած է այս միակ վայրում և այլուր նույնը չտեսավ ժողովուրդը և դիմից մի ուրիշ միջոցի, այն է՝ անորոշ գերբայի ներգոյականով կազմված ներկա և անկատար ձևին, որ արդեն գոյութիւն ուներ լեզվի մեջ։ Ավելացնելով չ բա-

ցաւականը սրանց վրա, կազմվեցին միջին հայերենի ներկան և անկատարը. օրինակ՝ չեմ լերթալ «չեմ գնում», չեմ լառնուլ «չեմ առնում», չես ի կարել «չես կարողանում», չէիր ի խօսել «չէիր խօսում», չէ ի վճարել «չի վճարում», չէ ի հասնել «չի հասնում», չէ ի հաճեցնել «չի հաճեցնում», չէ ի հրամայել «չէ հրամայում», չէ ի տալ «չի տալիս», չի ճանչել «չի ճանաչում», չի լինիլ «չի լինում», չէր ի փնդռել «չէր փնդռում», մենք չէաք ի հաւինիլ «չէինք հավանում», չեն ի կարել «չեն կարում», չեն ի լալրել «չեն ալրում», չեն ի լուրանալ «չեն ուրանում», չեն ի պակսիլ «չեն պակասում», չեն ի պատկառիլ «չեն պատկառում», չէ ի լնրնել «չէ երևում», չէ ի լերևենալ «չի երևում», չէ ի պակասել «չի պակասում», չեն ի պակասել «չեն պակասում», չլինի ի տալ «չի տալիս կամ չպիտի տա»:

(Karst, 374—5)

Օրինակներից երևում է, որ որևէ բայի սահմանական ներկան և անկատարը կազմելու համար, վերցնում ենք բայի անորոշ դերբայը, ավելացնում նրա վրա ի (բաղաձայնի մոտ) կամ յ (ձայնավորի մոտ) նախդիրը և ամբողջը խոնարհում ենք էական բայի ներկայի և անկատարի հետ:

Ներկա եզակի Գ դեմքում, ձայնավորների հանդիպման ժամանակ, կարող է կրճատվել էական բայի է ձայնավորը և առաջ վել նախդիր միացած չ-ի հետ, ինչպես՝ չի լինիլ: Ձայնավորով սկսվող բայերի առաջ էլ նախդիրը կարող է կրկնվել ի և յ ձևերով, ինչպես՝ չէ ի լերեսել, չէ ի լերևենալ:

Այս ձևով ներկան միաժամանակ ունի նաև ապառնիի արժեք. և ահա այս ձևն է, որ մինչև այժմ պահել է Ագուլիսի բարբառը՝ իբրև բարդ ապառնի:

Արգելականը ունի երկու ձև. առաջինը վերջանում է ր բաղաձայնով և ուղղակի շարունակությունն է գրաբարի, երկրորդը վերջանում է լ բաղաձայնով, որ առաջացել է ներկայի կամ անորոշ դերբայի նմանությամբ: Karst, 378 տալիս է հետևյալ օրինակները՝ երկու ձևով արգելականի.

մի այներ	մի տալ
մի առնուր	մի առնուլ
մի բողցներ	մի արգիլել
մի դներ	մի լսել
մի տար	մի հասցնել

մի արծկեր	մի պատրաստեցնել
մի մատներ	մի քամել
մի մտեր	մի դահել
մի վազցներ	մի հանել
մի յամեցներ	

Մի քիչ ավելի հին օրինակ է մի ելանել (Վրք. հց. ա. 620): Կա նաև արգելական մի երրորդ ձև, որ վերջավորում է ս բաղաձայնով, որ ստորադասական ներկայի եղակի Բ դեմքի նմանությամբ է առաջացած: Karst, 378 տալիս է հետևյալ օրինակները, որոնց մեծ մասը Միխիթար Հերացուց է. ինչպես՝

մի շինես	մի դնես
մի արգիլես	մի ընդունիս
մի հովցնես	մի տաս

Պետք է ավելացնել նաև, որ բայի բոլոր ձևերն էլ չ բացասականի փոխարեն կարող են առանալ չի, որ նրա ավելի քնքուշ ձևն է. օրինակ՝

չիբռնես (չբռնես)
չի հովցնես (չհովցնես)

չիլալանաս, չիտաս, չի յանկցնես, չիգտուի, չիգաւէ, չիգաս, չիմոռու, չի լինի, չի լուծանի, չի լուծի, չիմէ, չի խոցնալ, չիսգիի, չիկալ, չիքաշէ, չիկարե, չիկնոալ, չիմտե, չէ յամէ, չի յաջողի, չի շտապի, չի պատահի, չի սիռի, չի տանի, չիմնաց, չինանդիպեցաւ (Karst, 379): Նույնիսկ ձայնավորի մոտ ասվում է չիընդունի:

Ահա լոսել բայի բացասականի խոնարհման պատկերը ըստ Karst, 377.

ներգործական	կրավորական
սահմ. ներկա	
չեմ ի լոսել	չեմ ի լոսվիլ
չես ի լոսել	չես ի լոսվիլ
չէ ի լոսել	չէ ի լոսվիլ
չի լոսել	չի լոսվիլ
չենք ի լոսել	չենք ի լոսվիլ

չէք ի լոսել	չէք ի լոսվիլ
չեն ի լոսել	չեն ի լոսվիլ

սահմ. անկ.

չէի ի լոսել	չէի ի լոսվիլ
չէիր ի լոսել	չէիր ի լոսվիլ
չէր ի լոսել	չէր ի լոսվիլ
չէաք ի լոսել	չէաք ի լոսվիլ
չէիք ի լոսել	չէիք ի լոսվիլ
չէին ի լոսել	չէին ի լոսվիլ

կատարյալ

չլոսեցի	չլոսվեցայ
չլոսեցիր	չլոսվեցար
չլոսեց	չլոսվեցաւ
չլոսեցաք	չլոսվեցաք
չլոսեցիք	չլոսվեցայք
չլոսեցին	չլոսվեցան

սաոր. ներկա

չլոսեմ	չլոսվիմ
չլոսես	չլոսվիս
չլոսէ	չլոսվի
չլոսենք	չլոսվինք
չլոսէք	չլոսվիք
չլոսեն	չլոսվին

սաոր. անկ.

չլոսէի	չլոսվէի
չլոսվէիր	չլոսվէիր
չլոսէր	չլոսվէր
չլոսէաք	չլոսվէաք
չլոսէիք	չլոսվէիք
չլոսէին	չլոսվէին

արգելական

մի՛ լոսեր մի՛ լոսել մի՛ լոսէք	չէ վկայված

անորոշ

չլոսել չլոսվիլ

Ալանյան, 87, ասում է, որ ժԹ դարում արդեն գանում ենք արդի բացառականի ձևը՝ չեմ վախեար, չես ճախանձիր:

Այս վիճակին հասնելու համար միջին հայերենի բացառականը կրել է երկու փոփոխություն. 1) նախդիրի չնջումը անորոշի վրայից, 2) անորոշի վերջին լ բաղաձայնի վերածումը ր-ի.

Առաջինը բնական և սովորական երևույթ է հայերենի համար, որ բոլոր նախդիրները վերջ ի վերջո չնջվեցին: Երկրորդը կարծում եմ, որ արգելականի պատճառով է: Ինչպես որ արգելականի բնական ր ձայնը (որ ժառանգություն էր գրաբարից) աղդվելով անորոշ դերբայի լ վերջաձայնից՝ դարձավ լ, նմանապես և փոխադարձաբար սահմանականի լ վերջաձայնը աղդվելով արգելականի ր-ից՝ դարձավ ր:

Ահա երևույթի ընթացքը խոսակցության մեջ.

1)— Մի՛ ալներ
— Չեմ (ի) ալնել
2)— Չեմ ալնել
— Մի՛ ալնել
3)— Մի՛ ալներ
— Չեմ ալներ

Առաջին ասոիճանը միջին հայերենի հին և սովորական վիճակն է. երկրորդը միայն է մինչև այժմ արևելյան գրականում, երրորդը սովորական դարձավ արևմտյան գրականում:

Բայց դեռ ժԶ դարում կենդանի էր հին ձևը. համմտ. չեմ ի հասկանալ «չեմ հասկանում» 1589 թվի մի հիշատակարանում (տե՛ս Անան. Շիր. Գ. Տ. Մկրտչյանի, էջ 29):

Այժմ քննենք բացառականի կազմությունը մի քանի կարևոր բարբառներում:

Նոր-Ջուղայի բարբառում բայերի բացառական ձևը կազմելու համար ասորագասական ներկա և անցյալ, կատարյալ, պարատավորական ներկա և անցյալ, հարկադրական ներկա և անցյալ ժամանակների դերբայների վրա ավելացնում ենք պարզապես չ մասնիկը: Բարդ ձևերից սահմանական ներկայի և անկատարի կրկին տեսակները, հարակատարը, գերակատարը կազմվում են նույն ոճով, միայն էական բայը նախադաս դնելով, որին կցվում է բացառականը:

Բացի սրանից էականը դործածվում է չեմ, չես, չի, չենք, չէք, չեն ձևով և ոչ թե չամ, չաս, և այլն. չ մասնիկը և ե ձայնի վրա դրված շեշտը պատճառ են դարձել, որ էականի ձայնավորը լավ պահպանվի և չվերածվի ա:

Սահմանականի ներկան և անկատարը, բացի սովորական ձևերից (օրինակ՝ չեմ մաշում, չեմ մաշմաև, չի մաշում, չի մաշմաև), ունի նաև մի երրորդ ձև, որ կազմվում է էական բայի բացասական ձևը կցելով բայի անորոշ եղանակին. այսպես չեմ մաշել «չեմ մաշում», չի մաշել «չէի մաշում»: Այս երեք ձևերից ամենադործածականը առաջինն է. երկրորդ ձևի համար պետք է հասկանալ նույնը՝ ինչ որ ասել ենք դրականի համար. գալով երրորդին, այս ձևը միևնույն է պարզ ապառնիի հետ և անխտիր նույն իմաստով դործ է ածվում. օրինակ՝ աչքս չէր տեսնել «աչքս չէր տեսնում». վարժապետները լավ չին սովորացնել. Սահեից չէր արեվալ. Էս խացը չոր է, չի ուռվել (չի ուռվում և չի ուռվիլ). Չի ուզել շարժի (չի ուզում շարժել):

Արգելականի մասնիկն է եզակի մի՛, հոգնակի մի՛ք, երբեմն մէ՛ք. եզակիում կարելի է դոնել նաև մի՛ն ձևը, որ թե նախադաս և թե հետադաս կարող է լինել. օրինակ՝ մի՛ն գ՛նալ, գ՛նալ մին:

Բուշիսի հայոց մեջ արգելականը կազմվում է դրականից. ինչպես՝ մի՛ տուր, մի՛ ար «մի՛ տուներ», մի՛ արա «մի՛ անիլ»:

Ահավասիկ չորս լծորդութլանց բացասականի խոնարհման աղյուսակը.

Սահմ. ներկա (Ա).—չեմ մաշում, չես, չի, չենք, չէք, չեն մաշում, խագ՛նում, խաղում, մոռանում:

Սահմ. ներկա (Բ).—չեմ մաշմաև, չես, չի, չենք, չէք, չեն մաշմաև, խագ՛մաև, խաղմաև, մոռամաև:

Անկատար (Ա և Բ).— չի մաշում, չի մաշմաև, չիր, չէր, չինք, չիք, չին մաշում, մաշմաև, խագ՛նում, խագ՛մաև, խաղում, խաղմաև, մոռանում, մոռամաև:

Սահմ. ներկա (Գ) և ապառնի.— չեմ մաշել, չես, չի, չենք, չէք, չեն մաշել, խագ՛նել, խաղալ, մոռանալ:

Անցյալ ապառնի և անկատար (Գ).— չի մաշել «չէի մաշել, չէի մաշում», չիր մաշել, չէր, չինք, չիք, չին մաշել, խագ՛նել, խաղալ, մոռանալ:

Պարտավորական ներկա.— չպակա մաշեմ, մաշես, մաշի, մաշենք, մաշէք, մաշեն, խագ՛նեմ, խաղամ, մոռանամ.— կարելի է ասել նաև պակա չմաշեմ և այլն:

Անցյալ.— չպակա մաշի, մաշիր, մաշէր, մաշինք, մաշիք, մաշին, խագ՛նի, խաղի, մոռանի. կարելի է ասել նաև պակա չ մաշի և այլն: Հնդկահայոց մեջ գործածական է նաև չի պիտիլ «պետք չէ» ձևով. ինչպես՝ չի պիտիլ հավատալ: Սովորական գործածութլուն չունեն չեմ ասելու, չէի ասելու, ասելու չեմ, ասելու չէի ձևերը:

Հարակատար.— չեմ, չես, չի, չենք, չէք, չեն մաշէլ, խագ՛էլ, խաղացէլ, մոռացէլ:

Գերակատար.— չի, չիր, չէր, չինք, չիք, չին մաշէլ, խագ՛էլ, խաղացէլ, մոռացէլ:

Կատարյալ.— չմաշեցի, չմաշեցիր, չմաշեց, չմաշեցինք, չմաշեցիք, չմաշեցին, չխագ՛ա, չխագ՛ար, չխագ՛ավ, չխագ՛անք, չխագ՛աք, չխագ՛ան, չխաղացի, չխաղացիր, չխաղաց, չխաղացինք, չխաղացիք, չխաղացին, չմոռացա, չմոռացար, չմոռացավ, չմոռացանք, չմոռացաք, չմոռացան:

Սաոր. ներկա.— չմաշեմ, չմաշես, չմաշի, չմաշենք, չմաշէք, չմաշեն, չխագ՛նեմ, չխագ՛նես, չխագ՛նի, չխագ՛նենք, չխագ՛նէք, չխագ՛նեն, չխաղամ, չխաղաս, չխաղա, չխաղանք, չխաղաք (չխաղէք), չխաղան, չմոռանամ, չմոռանաս, չմոռանա, չմոռանանք, չմոռանէք, չմոռանան:

Սաոր. անցյալ.— չմաշի, չմաշիր, չմաշէր, չմաշինք, չմաշիք, չմաշին, չխագ՛նի, չխագ՛նիր, չխագ՛նէր, չխագ՛նինք, չխագ՛նիք, չխագ՛նին, չխաղի, չխաղիր, չխաղէր, չխաղինք, չխաղիք, չխաղին, չմոռանի, չմոռանիր, չմոռանէր, չմոռանինք, չմոռանիք, չմոռանին:

Դերբայներ.— չմաշել, չխագ՛նել, չխաղալ, չմոռանալ, չմաշած, չխագ՛ած, չխաղացած, չմոռացած, չմաշելու, չխագ՛նելու չխաղալու, չմոռանալու: (Ներկա դերբայի մաշում և անցյալ դերբայի մաշիլ ձևերը բացասական չունեն):

Ագուլիսի բարբառում բացասական բայերը կազմվում են չորս ձևով.

1) Դերբայները և պակասավոր բայերը առանում են չ, չի նախամասնիկը. ինչպես՝ չծնիմ «չունեմ», չիկո կամ չկո «չկա», չիմ «չեմ», չի կո ենել կամ չկո ենել «չկար»:

2) Բոլոր այն ձևերը, որ կազմվում են էական բայի հարադրութլամբ, բացասականի են վերածում միայն էական բայի ներկան, որ թե ծանր և թե թեթև բառերի համար հավասարապես լինում է այսպես՝

չիմ	չի՛ք
չիս	չի՛ք
չի	չին

Այս ձևերը դրվում են սովորաբար դերբայից հետո. իսկ երբ նախորդ բառը շեշտված է, լինում է նախադաս, ինչպես՝ նո թմկալ չի, նո չի թմկալ։

3) Արգելականը կազմվում է հետադաս մա, մո կամ մոն, մանի, հոդնակիում մաք, մաք մասնիկներով, որոնք դրվում են բայի անորոշ դերբայի վրա կամ ուղղակի և կամ վերջածայն ը ջնջելով։ Ա և Բ յոթդուխյան մեջ բայը վերջանալով ի, բնականաբար դրվում է թեթև մո, մոն, մաք ձևերը. իսկ Գ յոթդուխյան մեջ բայը վերջանալով օ, դրվում է մա, մաք։ Օրինակ՝ լէօ մոն «մի լա», խզգօ մա «մի հագա», խզգօ մաք «մի հագաք», ած ման, ած մաք «մի տար, մի տաք» և այլն։ Ձայնավորով սկսվող բայերը ըստ սովորականի ստանում են ն նախածայնը։ Ինչպես՝ նռռի մոն «մի առնիլ», նօսի մոն «մի ուտիլ», նարի մոն «մի անիլ», նայի մոն «մի ասիլ» և այլն։

Շեշտյալ բառի մոտ գործածված ժամանակ արգելական մասնիկը նախադաս է լինում. ինչպես՝ դուս մաք քաշիլ «դուրս մի քաշիք», դուս մո՛ տալ «դուրս մի տալ, մի ցնդացաներ», տօկ մա գիձիլ «տակը մի ձգեր», վէր մո՛ նածիլ «մի թափիլ», չէօլ մա նէլիլ «մի կախվի», շօռ մա գիալ «մի շրջի», վէզ մո՛ տալ «մի վազի»։ Ինչպես տեսնվում է, այս պարագային գործածվում է անորոշ դերբայը իր ը հանգով միասին, իսկ մասնիկը հարաբակվում է նախորդ բառի ձանրութեան և թեթևութեան։

Սարգսյան, էջ 121 տալիս է նաև Ագուլիսի համար մի՛, մի՛ք մասնիկները. բայց այդ մասնիկները չկան Ագուլիսում, ուստի պետք է դնել միայն ծղնալի ենթաբարբառին հատուկ։

4) Ըղձականի բացասականը կազմվում է հետադաս ուչ (< ոչ) մասնիկով, որ շեշտ ստանալով կարող է լինել նախադաս. ինչպես՝ ա՛նիս ուչ կամ ո՛ւչ անիս «չանանես». իսկ կատարյալի առաջին ձևը բացասական չունի։

Անցյալ ձևերի նէլ մասնիկը դրվում է միշտ հետո. օրինակ՝ կօն ուչ նէլ «չկային». և ոչ թե կօն նէլ ուչ, թա՛կամ չիմ նէլ «չէի թակում» և ոչ թե թա՛կամ նէլ չիմ։

Համառոտիկ թակել բայի բացասականի ամբողջ խոնարհումը.

ներկա	ապառնի
թմկամ չիմ	թմկիլ չիմ
թմկամ չիս	թմկիլ չիս
թմկամ չի	թմկիլ չի
թմկամ չի՛ք	թմկիլ չի՛ք
թմկամ չի՛ք	թմկիլ չի՛ք
թմկամ չին	թմկիլ չին

անկատար	ճարակատար
թմկամ չիմ նէլ	թմկած չիմ
թմկամ չիս նէլ	թմկած չիս
թմկամ չի նէլ	թմկած չի
թմկած չի՛ք նէլ	թմկած չի՛ք
թմկամ չի՛ք նէլ	թմկած չի՛ք
թմկամ չին նէլ	թմկած չին

կատարյալ	գերակատար
թմկալ չիմ	թմկած չիմ նէլ
թմկալ չիս	թմկած չիս նէլ
թմկալ չի	թմկած չի նէլ
թմկալ չի՛ք	թմկած չի՛ք նէլ
թմկալ չի՛ք	թմկած չի՛ք նէլ
թմկալ չին	թմկած չին նէլ

ըղձ. ներկա	ըղձ. անց.
թմկիմ ունչ	թմկիմ ունչ նէլ
թմկիս ունչ	թմկիս ունչ նէլ
թմկի ունչ	թմկի ունչ նէլ
թմկի՛ք ունչ	թմկի՛ք ունչ նէլ
թմկի՛ք ունչ	թմկի՛ք ունչ նէլ
թմկին ունչ	թմկին ունչ նէլ

հրամայական

թմկիլ մո(ն)	թմկիլ մաք
թմկի մո(ն)	թմկի մաք

դերբայներ

անորոշ՝ չթ՚ակիլ
անցյալ՝ չթ՚ակած

Մարաղայի բարբառում *բայերի բացասականը կազմվում է շատ պարզ ձևով. բոլոր պարզ ժամանակները դրականի վրա ավելացնում են չ մասնիկը, եթե բայը սկսվում է բաղաձայնով.— չը, եթե սկսվում է բաղաձայնով, որին հաջորդում է ծանր ձայնավոր.— չի, եթե բաղաձայնին հաջորդում է թեթև ձայնավոր.— լու, եթե այդ ձայնավորն է ու. ինչպես՝ չի գիդամ, չի քիցըմ, չի քինամ, չի գեօվամ, չը տաճիմ, չը տամ, չի պըէրիմ, չուտուռում «չտվիր»:— Այն ձևերը, որ կազմված են օժանդակով, օժանդակը դարձնում են նախադաս և վրան ավելացնում նույն չ մասնիկը. ապառնին կազմվում է նույնպես նախադաս օժանդակով, իսկ բայը դրվում է առորդաստական ներկայի դրականի եզակի Գ դեմքի ձևով. արգելականը առանում է մի՛ մասնիկը: Ահա ուզել բայի բացասականի խոնարհումը.*

առոր. ներկա	կատարյալ
չիւզիւմ	*չիւզում*
չիւզիւս	*չիւզիւր, չիւզիր*
չիւզիւ	*չիւզից, չիւզից*
չիւզիւնք՛	*չիւզունք՛*
չիւզիք՛	*չիւզուք՛*
չիւզիւն	*չիւզան*

արգելական

մի՛ իւզիւ
մի՛ իւզէք՛

դերբայներ	արգելական
չիւզէլ	*մի՛ իւզիւ*
չիւզած	*մի՛ իւզէք՛*
չիւզող	
չիւզոլը	

սահմ. ներկա	անց. անկ.	առոր. անց.
չիմ իւզէլի	*չիմ էր իւզելի*	*չիւզիմ էր*
չիս իւզէլի	*չիս էր իւզէլի*	*չիւզիս էր*
չէլի իւզէլի	*չէր իւզէլի*	*չիւզեր*
չինք՛ իւզէլի	*չինք՛ էր իւզէլի*	*չիւզինք՛ էր*
չէք՛ իւզէլի	*չէք՛ էր իւզէլի*	*չիւզէք՛ էր*
չին իւզէլի	*չին էր իւզէլի*	*չիւզին էր*

ապառնի	անց. ապառ.
չիմ իւզիւ	*չիմ էր իւզիւ*
չիս իւզիւ	*չիս էր իւզիւ*
չիւզիւ	*չէր իւզիւ*
չինք՛ իւզիւ	*չինք՛ էր իւզիւ*
չէք՛ իւզիւ	*չէք՛ էր իւզիւ*
չին իւզիւ	*չին էր իւզիւ*

հարկ. ապառ.	անց. հարկ.
չիմ իւզոլը՛	*չիմ էր իւզոլը՛*
չիս իւզոլը՛	*չիս էր իւզոլը՛*
չի իւզոլը՛, չիւզոլը	*չէր իւզոլը՛*
չինք՛ իւզոլը՛	*չինք՛ էր իւզոլը՛*
չէք՛ իւզոլը՛	*չէք՛ էր իւզոլը՛*
չին իւզոլը՛	*չին էր իւզոլը՛*

Այսպես նաև մյուս բարդ ձևերը. ինչպես՝ իւզած չիմ, իւզած չըլիմ և այլն:

Հարկադրական ապառնին, որ բացի -լը ձևից, լինում է նաև -լու ձևով, կարող է վերջում առանալ նաև շնչայլ ը՛. ինչպես՝ չիմ եթալուը՛, չի կ՚ալուը՛, չին էր պէրօլուը՛ և այլն:

Բացասական կազմելիս Ա և Բ լծորդության առաջին տեսակի մեջ ապառնին և հարակատարը նույն ձևն են առանում. ինչպես՝ չիմ խարիը նշանակում է «չեմ հարբիլ» և «չեմ հարբել». իսկ մյուսները տարբեր են. ինչպես՝ չիմ խազզա «չեմ հազալ», չիմ խազզացը «չեմ հազացել»: Այսպես նաև անցյալ ապառնին և դերակատարը. օրինակ՝ չիմ էր իւզիւ «չէի ուզիլ» և «չէի ուզեցիլ»:

Ձայնավորով սկսվող բայերի բոլոր լծորդությունց առորդաստական ներկա և ապառնի եզակի Գ դեմքը ձևով նույն է. տարբերությունը կայանում է միայն շեշտի մեջ, որ ապառնիում նախավանկի վրա է, առորդաստականի մեջ՝ վերջավանկում. ինչպես՝ առոր. չիւզի՛ւ, ապառ. չի՛ւզիւ:— Նկատելի է լինել բայի առոր. չըլը՛ «չլինի» և ապառ. չը՛լը «չի լինիլ» ձևերը, որոնք տարբերվում են շեշտով և լ-ի կրկնությամբ:

Օժանդակով կազմված ձևերի մեջ բացասականի հեռացումը ընդունելի չէ. կարելի չէ ասել իւզօլու չիմ, չիւզօլու իմ, չիւզօլու իմ եր և այլն:

Այն բայերը, որոնց նախավանկը ունի իւ կամ եօ ձայնավորը, կարող են օժանդակի ի ձայնը դարձնել իւ. ինչպես՝ չիմ իւզելի կամ չիւմ իւզելի, չիս իւզելի կամ չիւս իւզելի և այլն:

Արգելականը բոլորովին կանոնավոր է. ինչ ձևի էլ լինի խոնարհումը, կազմվում է միշտ դրականի վրա ավելացնելով մի՛ մասնիկը. այսպես՝ մի՛ ազատ՛, մի՛ ազատէք, մի՛ խաքը՛, մի՛ խաքէք, մի՛ ճուչացը՛, մի՛ ճուչացէք, մի՛ բզզա, մի՛ առ, մի՛ ասա, մի՛ մրար, մի՛ պի կամ մի՛ պիր «մի՛ բերեր», մի՛ տի, «մի՛ դնի», մի՛ տու «մի՛ տար», մի՛ կի «մի՛ ուտիլ», մի՛ տար «մի՛ տանի», մի՛ բօ «մի՛ թողնի», մի՛ ուի կամ մի՛ ուիս «մի՛ տեսնի», մի՛ լս կամ մի՛ լոց «մի՛ լար», մի՛ յիլ «մի՛ լինի», հոգ. մի՛ իլէք՛ (ոչ թե մի՛ յիլէք՛) և այլն:

Առաջին վանկում ծանր ձայնավոր պարունակող բայերի մի արգելականը կարելի է դարձնել մը՛. ինչպես՝ մը՛ խաճ կամ մի՛ խաճ «մի՛ հանիր», մը՛ տար կամ մի՛ տար և այլն:

Ձայնավորով սկսվող բայերի մոտ կարելի է մի արգելականի ձայնավորը ջնջել կամ պահել. ինչպես՝ մի՛ ուրէք՛ կամ մո՛րէք՛ «մի՛ անիր», մի՛ ասէք՛ կամ մա՛սէք՛ «մի՛ ասիր», մի՛ իշացէ՛ք կամ մի՛ ւշացէք՛ «մի՛ ուշանաք», մի՛ օրօրվէք՛ կամ մօ՛րօրվէք՛ «մի՛ օրօրվիր», մի՛ էփէք՛ կամ մէ՛փէք՛ «մի՛ եփիր», մո՛րա «մի՛ անիլ», մա՛սա «մի՛ ասիլ» և այլն:

Պոլսի բարբառում *բայերի բացասականը կազմելու համար սովորաբար դրականի սկիզբը դնում ենք չ. այսպես են սաորադասական ներկան և անկատարը, կատարյալը և դերբայները. օրինակ՝* լսեմ, չլսեյի, չլսեցի, չլսել, չլսօղ, չլսած, չլսեր, չլսելիք, չլսելու:

Սահմանական ներկայի բացասականը կազմելու համար էական բայի ներկան կցում ենք ավյալ բայի անորոշի հետ, միայն վերջինիս լ ձայնը վերածելով ր. այսպես.

չէմ սիրէր, չէս սիրէր, չի՛ սիրէր,
չէնք սիրէր, չէք սիրէր, չէն սիրեր:

Եզակի Դ դեմքի մեջ փոխանակ չէ ձևի՝ դրվում է շեշտյալ չը՛ (կարելի է երբեմն նաև չի՛): Ձայնավորով սկսվող բայերի մոտ

դրվում է միայն չ, իսկ շեշտը անցնում է բայի առաջին վանկի վրա. ինչպես.

չէրթար, չուդէր, չը՛սէր, չը՛նէր և այլն:

Սրանով այս բայաձևը նույնանում է սաորադասական անցյալի հետ. բայց շփոթություն վերանում է շեշտի միջոցով, որ սաորադասական անցյալի մեջ բայի վերջին վանկի վրա է. այսպես՝

ներկ. չէրթար, չուդէր
սաոր. անց. չէրթար, չուդէր:

Միավանկ բայերի մոտ (գալ, տալ, լալ) *ավելանում է նախ ի. այսպես՝*

չէմ ի քար, չէս ի քար, չի՛ քար,
չէնք ի քար, չէք ի քար, չէն ի քար և այլն:

Սահմանական անկատարը կազմելու համար էական բայի անկատարը խոնարհում ենք բայի անորոշի հետ (լ վերջածայնը վերածելով ը). ինչպես՝

չէյի սիրէր, չէյիր սիրէր, չէր սիրէր
չէյինք սիրէր, չէյիք սիրէր, չէյին սիրէր:

Միավանկ բայերը նույն ձևով են կազմվում. ինչպես՝

չէյի ի դար, չէյիր ի դար, չէր ի դար
չէյինք ի դար, չէյիք ի դար, չէյին ի դար:

Այս երկու ժամանակների շարունակականը կազմվում է սովորական կոր>զօր մասնիկի հավելմամբ. ինչպես՝

ներկ. չէմ սիրէր գօր, չէս սիրէր գօր, չը՛ սիրէր գօր
չէնք սիրէր գօր, չէք սիրէր գօր, չէն սիրէր գօր
չէմ ի դար գօր...

անկ. չէյի սիրէր գօր, չէյիր սիրէր գօր, չէր սիրէր գօր
չէյինք սիրէր գօր, չէյիք սիրէր գօր, չէյին սիրէր գօր
չէյի ի դար գօր...

Ապառնին և անցյալ ապառնին կազմվում են դրականի վրա դնելով չը կամ չի. ինչպես՝

չը՛ բիդի սիրէմ, չի՛ բիդի սիրէմ, չսիրէմ բիդի...
չը՛ բիդի սիրէյի, չի՛ բիդի սիրէյի, չսիրէյի բիդի...

Կարելի չէ ասել սիրեմ չբիդի, սիրեյի չբիդի և այլն:

Բաղադրյալ ձևերի մեջ բացասական չ մասնիկը սովորաբար

դրվում է էական բայի վրա, բայց կարելի է նաև դնել ձերբայի վրա: Կարելի է դարձյալ անել զանազան տեղափոխություններ. օրինակ՝

չեմ սիրեր, չսիրեր եմ, չեի սիրեր, չսիրեր եի, սիրած չեմ, չե՛մ սիրած, չսիրած եմ, դեսած չէյինք, չդեսած էյինք *(իբր թրք.* görmemiš idik), սիրած չը՛բիդի ըլլամ, սիրած բիդի չըլլամ, սիրած չըլլամ բիդի, չըլլամ բիդի սիրած, չսիրած բիդի ըլլամ, չսիրած ըլլամ բիդի, չը՛ բիդի սիրած ըլլամ, չը՛ բիդի ըլլամ սիրած, բիդի սիրած չըլլամ *(կարելի չէ միայն ասել* սիրած ըլլամ չբիդի, ըլլամ չպիտի սիրած. *իսկ* բիդի չըլլամ սիրած, բիդի ըլլամ չսիրած, ըլլամ բիդի չսիրած *ձևերը թեև կարելի, բայց սովորական չեն):*

Կարելի չէ նաև ասել սիրեր չեմ «չեմ սիրած». *իսկ* չեմ սիրեր *երկիմաստ է. նշանակում է թե «չեմ սիրում» (սահմանական ներկա), և թե «չեմ սիրած» (հարակատար). միաժամանակ ապառնի է և նշանակում է «չեմ սիրի»:*

Արդելականի մասնիկն է մի՛ *կամ* մը՛ *(ձայնավորի մոտ* մ. *իսկ բայը դրվում է եզակի Բ դեմքում բացասական բայաձևով, հոգնակի Բ դեմքում՝ սովորադասական ներկա հոգնակի Բ դեմքով. ինչպես՝* մի՛ սիրեր, մի՛ սիրեք, մի՛ խաղար, մի՛ խաղաք, մերթար, մե՛րթաք, մը՛ներ, մը՛սեր, մը՛լլար, մի՛յնար, մը՛ սիրեր, մը՛ սիրեք,— *մի՛ կամ* մը՛ *արգելականի գործածությունը ազատ է բազմավանկ բայերի հետ. իսկ միավանկ բայերի հետ գործածվում է միայն* մի՛. *ինչպես՝* մի՛ լար, մի՛ դար, մի՛ քար *(Պոլսի բարբառում կարելի չէ ասել* մը՛ լար *և այլն):*

Թեև հրամայականի մեջ վերջածայն p-ի *գործածությունը բոլորովին ազատ է, բայց արգելականում դրվում է միշտ* p. *ինչպես՝* ճաքո՛ւ, ճաքո՛ւր, ճաքծո՛ւ, ճաքծո՛ւր *(չորս ձև) նշանակում են «հապցրու», իսկ արգելականն է միայն* մի՛ ճաքծուներ *(*մը՛ ճաքծուներ):

Բացասական բայը հաստատականի հետ կրկնված՝ տալիս է «անմիջապես» գաղափարը. օրինակ՝ եգավ չեգավ «անմիջապես որ եկավ». *օրինակ՝*

Առնելիքս առնեմ չառնեմ՝ բարաքքս բիդի դամ:

Նոր-Նախիջևանի բարբառում *բայերի բացասականը կազմելու համար սովորաբար դրականի սկիզբը ավելացնում են չ կամ չի բացասական մասնիկը. այսպես են սովորադասական ներկան և անցյալը, կատարյալը և ձերբայները. օրինակ՝* չլսիմ, չլսե՛յի, չլսեցի, չլսող, չլսած *կամ* չի լսիմ, չի լսե՛յի, չի լսեցի, չի լսող, չի լսած *և այլն:*

Սահմանական ներկայի բացասականը ինչ ձև ունի. առաջին ձևը կազմելու համար կը (կու և այլն) մասնիկը ջնջվում է և նրա տեղ դրվում է չիմ չիս, չի, չինք, չիք, չին էականը. իսկ բուն բայը դրվում է բացասական բայաձև, որ կազմվում է սովորադասական ներկայի Ա դեմքի մ վերջածայնը վերածելով ւ. ինչպես՝ չիմ լսիլ, չիս լսիլ, չի լսիլ *և այլն:*

Երկրորդ ձևը կազմելու համար կը, կու մասնիկը ջնջվում է և ենթյալի վրա դրվում է չի մասնիկը, որ ձայնավորի մոտ դառնում է չ. սրանով սահմանական ներկայի բացասականը ձևապես նույնանում է սովորադասական ներկայի բացասականի հետ. բայց շփոթությունն առաջն առնելու համար սահմանականում բացասական մասնիկի վրա դրվում է մի զորավոր շեշտ, որից զուրկ է սովորադասական ներկայի բացասականը. օրինակ՝

սահմ. ներկ.— չի՛ լսիմ «չեմ լսում», չի՛րթամ «չեմ գնում».
սովոր. ներկ.— չլսի՛մ, չի լսի՛մ, «չլսեմ», չերթամ «չգնամ»:

Ըստ այսմ եզակի Գ դեմքը պիտի լիներ չի՛ լսե. բայց այս ձևը բնավ գործածական չէ և կա միայն առաջին ձևով. ինչպես՝ չի լսիլ, չի բաքնիլ, չի ճաքնիլ *և այլն: Բացասությունն է կազմում միայն ուզել բայը, որից երկրորդ ձևով անենք չուզե. օրինակ՝* ճաց չուզե, ջուր չուզե, էրեսս դեսնել չուզե:

Երրորդ ձևը նույն է առաջին ձևի հետ, միայն այստեղ ջնջված է բայի վերջածայն ւ. ինչպես՝ չիմ լսի, չիս լսի, չի լսի, չինք լսի, չիք լսի, չին լսի *և այլն:*

Չորրորդ ձևը նույն է երկրորդի հետ. միայն այստեղ էականը փոխանակ լինելու չի՝ դրվում է հավասարապես չին բոլոր դեմքերի համար, բացի եզակի Գ դեմքից, որ միայն է առաջին ձևով. ինչպես՝ չին լսիմ, չին լսիս, չի լսիլ, չին լսինք, չին լսիք, չին լսին:

Հինգերորդ ձևը առաջին և երկրորդ ձևերի խառնուրդն է. այսինքն թե էական բայն է խոնարհվում և թե բուն բայը՝ իրենց բոլոր դեմքերով. ինչպես՝ չիմ լսիմ, չիս լսիս, չի լսիլ, չինք լսինք, չիք լսիք, չին լսին:

Ներկայի սույն հինգ ձևերն անխտիր ընդհանուր են ամբողջ բարբառին առհասարակ, այլ յուրաքանչյուրը հատուկ է այս կամ այն գյուղին կամ շրջանին. այսպես քաղաքում որոշ ընտանիքներ

գործածում են առաջին ձևը, սրիշներ՝ երկրորդ ձևը։ Զալթր—Թոփ-ատի շրջանում գործածվում են առաջին և երրորդ ձևերը։ Մեծ և Փոքր Սալա գյուղերը գործածում են չորրորդ ձևը։ Իսկ վերջին հինգերորդ ձևը՝ որ շատ քիչ գործածական է, պատահում է քաղաքում։

Սահմանական անկատարի բացասականը կազմելու համար ունենք 4 ձև. բոլորի մեջ էլ սահմանականի զը, գու մասնիկը ջընջվում է և նրա տեղ դրվում չեր, չի (ձայնավորի մոտ չ), չին էականներր՝ անխտիր բոլոր դեմքերի համար. իսկ բուն բայը մնում է անփոփոխ. չորրորդ ձևի մեջ միայն գործածվում է բացասական բայաձև. ինչպես՝ չեր լսեի, չեր լսիր, չեր խաղար, չեր ճաքճեյիներ, չի լսեի, չին լսեի, չեր խաղայի, չի խաղայի, չին խաղայի, չօքտաեր, չեր ասիլ և այլն։

Ներկայի նման անկատարի բացասական ձևերն էլ ընդհանուր չեն ամբողջ բարբառին, այլ յուրաքանչյուրը ունի իր հատուկ շրջանը։ Այսպես, քաղաքում գործածվում է չեր լսեի կամ չի լսեի ձևը. Զալթր—Թոփսի շրջանը գործածում է չեր լսեի ձևը, Մեծ և Փոքր Սալա գյուղերը գործածում են չին լսեի, իսկ վերջին (չորրորդ) ձևը գտնում ենք միայն մի քանի անգամ գործածված Պատկանյանի գործերում. չեր ասիլ Հանդ. գր. և պատմ. Ա 340, չեր երևցնալ Հանդ. գր. Բ 39, չեի գուդնուլ և այլն։

Նկատելի է, որ անկատարի եզակի Գ դեմքը շատ անգամ նույնանում է սրիշ բարբառների ներկայի հետ. այսպես չի բաքնեի, չի դար, չօքդեր նշանակում են «չէր համբուրում, չէր տալիս, չէր բավում», մինչդեռ նույն ձևերը Պոլսի բարբառում նշանակում են «չի համբուրում, չի տալիս, չի բավականանում»։

Ապառնիի ներկան և անցյալը բացասական չունեն և նրանց տեղ գործածվում են պարտավորական ներկայի և անցյալի բացասական ձևերը. ինչպես՝ բիդ էշթամ—էշթալու չիմ, բիդ էշթայի—էշթալու չէյի։ Տնդափոխված չեմ երթալու, չեի երթալու ձևերը գործածական չեն։ Պարտավորական ներկայի և անցյալի դրական ձևը բարբառում ջնջված լինելով՝ ապառնի բացասականի այս գործածությունը թյուրիմացության տեղիք չի տալիս։ Միայն բացասական անցյալի ձևն է, որ թե՛ ապառնիի և թե՛ պարտավորականի իմաստով գործածվում է. այսպես՝ էշթալու չէյիր նշանակում է թե «չպիտի երթայիր» և թե «չպետք է երթայիր»։

Պատկանյանի գործերի մեջ պատահում են բացասական ապառնիի ձևեր. ինչպես՝ չի բիդի լաս Բ 301, բիդի չի վախճա Բ 437, բիդի չի լաս Բ 437, բիդի չասիմ Բ 440, բիդի չի աճիս Բ 444, չի բիդի լա Գ 190. այս բոլորը հին բարբառին հատուկ ձևվեր են, որոնք այժմ էլ երբեմն գործածվում են։

Բաղադրյալ ձևերի մեջ բացասականի մասնիկը սովորաբար դրվում է էական բայի և ոչ թե դերբայի վրա։ Հարակատարի և գերակատարի բացասականը կազմելու համար առնվում է երկրորդ -ած ձևը և ոչ բնավ -իլ ձևը. ինչպես՝ բերած չիմ, բերած չեի (որովհետև չիմ բերիլ, չեր բերիլ ձևերը դառնում են սահմանական ներկա և անկատար)։ Իրար հակադրությամբ ասվում է, օրինակ՝ ի՛նչ եղիլ է, ինչ եղած չէ. ի՛նչ ասիլ է, ի՛նչ ասած չէ (դրականը -իլ դերբայով, բացասականը -ած դերբայով)։ Հարակատարի և գերակատարի ձևերը կարող են շրջմամբ էլ կազմվել. ինչպես՝ չէ բերած, չեի բերած։

Քիչ անգամ պատահում է, որ բացասական մասնիկը դրվի դերբայի վրա. ինչպես՝ չեզած եր «եկած չէր», չդեսած ըլայի ներ «եթե տեսած չլինեի», քէշքեմ չըբերած էլի ձերանի բերած չլինեին»։

Ապառնի հարակատարի և ապառնի գերակատարի բացասականը գործածական չէ, ինչպես ապառնիի ներկան և անցյալը. սրանց տեղ գործածվում է պարտավորական ներկայի և անցյալի բացասականը։ Ձևն ասում, օրինակ՝ բերած չպիտի ըլամ, բերած չպիտի ըլայի, այլ բերած ըլալու չիմ, բերած ըլալու չէ՛յի։

Արգելականը կազմվում է մի՛ մասնիկով, իսկ բայը դրվում է եզակի Բ դեմքում բացասական բայաձևով, հոգնակի Բ դեմքում առորդաստական ներկա հոգնակի Բ դեմքով. ինչպես՝ մի՛ լսիլ, մի՛ լսիք և այլն։ Կա նաև վերջածայն լ-ի հապավումով մի՛ լսի և այլն ձևը։ Մի՛ մասնիկի ի ձայնավորը կարող է երբեմն կրճատվել, ձայնավորի մոտ բոլորովին ջնջվել, բաղաձայնի մոտ վերածվել բ. ինչպես՝ մէ՛շթա, մէ՛շթալ «մի՛ երթար», մէ՛շթակ «մի՛ երթաք», մը՛ լսի «մի՛ լսեր», մը՛ լսիք «մի՛ լսէք»։

Անավարտիկ չորս լծորդությանց բայերի բացասական ձևերի տախտակը.

Առճատական

Ա. ձև

չիմ	լսիլ	չիմ բաքնիլ	չիմ հարսիլ	չիմ հաքնիլ
չիս	լսիլ	չիս բաքնիլ	չիս հարսիլ	չիս հաքնիլ
չի	լսիլ	չի բաքնիլ	չի հարսիլ	չի հաքնիլ
չինք	լսիլ	չինք բաքնիլ	չինք հարսիլ	չինք հաքնիլ
չիք	լսիլ	չիք բաքնիլ	չիք հարսիլ	չիք հաքնիլ
չին	լսիլ	չին բաքնիլ	չին հարսիլ	չին հաքնիլ

Բ ձև

չի	լսիմ	չի բաքնիմ	չի հարսիմ	չի հաքնիմ
չի	լսիս	չի բաքնիս	չի հարսիս	չի հաքնիս
չի	լսիլ	չի բաքնիլ	չի հարսիլ	չի հաքնիլ
չի	լսինք	չի բաքնինք	չի հարսինք	չի հաքնինք
չի	լսիք	չի բաքնիք	չի հարսիք	չի հաքնիք
չի	լսին	չի բաքնին	չի հարսին	չի հաքնին

Գ ձև

չիմ	լսի	չիմ բաքնի	չիմ հարսի	չիմ հաքնի
չիս	լսի	չիս բաքնի	չիս հարսի	չիս հաքնի
չի	լսի	չի բաքնի	չի հարսի	չի հաքնի
չինք	լսի	չինք բաքնի	չինք հարսի	չինք հաքնի
չիք	լսի	չիք բաքնի	չիք հարսի	չիք հաքնի
չին	լսի	չին բաքնի	չին հարսի	չին հաքնի

Դ ձև

չին	լսիմ	չին բաքնիմ	չին հարսիմ	չին հաքնիմ
չին	լսիս	չին բաքնիս	չին հարսիս	չին հաքնիս
չի	լսիլ	չի բաքնիլ	չի հարսիլ	չի հաքնիլ
չին	լսինք	չին բաքնինք	չին հարսինք	չին հաքնինք
չին	լսիք	չին բաքնիք	չին հարսիք	չին հաքնիք
չին	լսին	չին բաքնին	չին հարսին	չին հաքնին

Ե ձև

չիմ	լսիմ	չիմ բաքնիմ	չիմ հարսիմ	չիմ հաքնիմ
չիս	լսիս	չիս բաքնիս	չիս հարսիս	չիս հաքնիս
չի	լսիլ	չի բաքնիլ	չի հարսիլ	չի հաքնիլ
չինք	լսինք	չինք բաքնինք	չինք հարսինք	չինք հաքնինք
չիք	լսիք	չիք բաքնիք	չիք հարսիք	չիք հաքնիք
չին	լսին	չին բաքնին	չին հարսին	չին հաքնին

Ճերմակ

չիմ	խաղալ	չիմ մօնալ	չիմ մուդնալ
չիս	խաղալ	չիս մօնալ	չիս մուդնալ
չի	խաղալ	չի մօնալ	չի մուդնալ
չինք	խաղալ	չինք մօնալ	չինք մուդնալ
չիք	խաղալ	չիք մօնալ	չիք մուդնալ
չին	խաղալ	չին մօնալ	չին մուդնալ
չի	խաղամ	չի մօնամ	չի մուդնամ
չի	խաղաս	չի մօնաս	չի մուդնաս
չի	խաղալ	չի մօնալ	չի մուդնալ
չի	խաղանք	չի մօնանք	չի մուդնանք
չի	խաղաք	չի մօնաք	չի մուդնաք
չի	խաղան	չի մօնան	չի մուդնան
չիմ	խաղա	չիմ մօնա	չիմ մուդնա
չիս	խաղա	չիս մօնա	չիս մուդնա
չի	խաղա	չի մօնա	չի մուդնա
չինք	խաղա	չինք մօնա	չինք մուդնա
չիք	խաղա	չիք մօնա	չիք մուդնա
չին	խաղա	չին մօնա	չին մուդնա
չին	խաղամ	չին մօնամ	չին մուդնամ
չին	խաղաս	չին մօնաս	չին մուդնաս
չի	խաղալ	չի մօնալ	չի մուդնալ
չին	խաղանք	չին մօնանք	չին մուդնանք
չին	խաղաք	չին մօնաք	չին մուդնաք
չին	խաղան	չին մօնան	չին մուդնան
չիմ	խաղամ	չիմ մօնամ	չիմ մուդնամ
չիս	խաղաս	չիս մօնաս	չիս մուդնաս
չի	խաղալ	չի մօնա	չի մուդնալ
չինք	խաղանք	չինք մօնանք	չինք մուդնանք
չիք	խաղաք	չիք մօնաք	չիք մուդնաք
չին	խաղան	չին մօնան	չին մուդնան

Ա. Ցցյալ

Ա ձև	չէր լսէլի	չէր բաքնէլի	չէր հարփէլի
	չէր լսէլիր	չէր բաքնէլիր	չէր հարփէլիր
	չէր լսէր	չէր բաքնէր	չէր հարփէր
	չէր լսէլինք	չէր բաքնէլինք	չէր հարփէլինք
	չէր լսէլիք	չէր բաքնէլիք	չէր հարփէլիք
	չէր լսէլին	չէր բաքնէլին	չէր հարփէլին
Բ ձև	չի լսէլի	չի բաքնէլի	չի հարփէլի
	չի լսէլիր	չի բաքնէլիր	չի հարփէլիր
	չի լսէր	չի բաքնէր	չի հարփէր
	չի լսէլինք	չի բաքնէլինք	չի հարփէլինք
	չի լսէլիք	չի բաքնէլիք	չի հարփէլիք
	չի լսէլին	չի բաքնէլին	չի հարփէլին
Գ ձև	չին լսէլի	չին բաքնէլի	չին հարփէլի
	չին լսէլիր	չին բաքնէլիր	չին հարփէլիր
	չին լսէր	չին բաքնէր	չին հարփէր
	չին լսէլինք	չին բաքնէլինք	չին հարփէլինք
	չին լսէլիք	չին բաքնէլիք	չին հարփէլիք
	չին լսէլին	չին բաքնէլին	չին հարփէլին
Դ ձև	չէի լսիլ	չէի բաքնիլ	չէլի հարփիլ
	չէիր լսիլ	չէիր բաքնիլ	չէլիր հարփիլ
	չէր լսիլ	չէր բաքնիլ	չէր հարփիլ
	չէինք լսիլ	չէլինք բաքնիլ	չէլինք հարփիլ
	չէիք լսիլ	չէլիք բաքնիլ	չէլիք հարփիլ
	չէին լսիլ	չէլին բաքնիլ	չէլին հարփիլ

Ա. Ցցյալ.

չլսեցի	չբաքի	չհարփեցա
չլսեցիր	չբաքիր	չհարփեցար
չլսից	չբաքից	չհարփեցավ
չլսեցինք	չբաքինք	չհարփեցանք
չլսեցիք	չբաքիք	չհարփեցաք
չլսեցին	չբաքին	չհարփեցան

ա ճ կ ա տ ա ր

չէր հաքնէլի	չէր խաղալի	չէր մօռնալի	չէր մուդնուլի
չէր հաքնէլիր	չէր խաղալիր	չէր մօռնալիր	չէր մուդնուլիր
չէր հաքնէր	չէր խաղար	չէր մօռնար	չէր մուդնուր
չէր հաքնէլինք	չէր խաղալինք	չէր մօռնալինք	չէր մուդնուլինք
չէր հաքնէլիք	չէր խաղալիք	չէր մօռնալիք	չէր մուդնուլիք
չէր հաքնէլին	չէր խաղալին	չէր մօռնալին	չէր մուդնուլին
չի հաքնէլի	չի խաղալի	չի մօռնալի	չի մուդնուլի
չի հաքնէլիր	չի խաղալիր	չի մօռնալիր	չի մուդնուլիր
չի հաքնէր	չի խաղար	չի մօռնար	չի մուդնուր
չի հաքնէլինք	չի խաղալինք	չի մօռնալինք	չի մուդնուլինք
չի հաքնէլիք	չի խաղալիք	չի մօռնալիք	չի մուդնուլիք
չի հաքնէլին	չի խաղալին	չի մօռնալին	չի մուդնուլին
չին հաքնէլի	չին խաղալի	չին մօռնալի	չին մուդնուլի
չին հաքնէլիր	չին խաղալիր	չին մօռնալիր	չին մուդնուլիր
չին հաքնէր	չին խաղար	չին մօռնար	չին մուդնուր
չին հաքնէլինք	չին խաղալինք	չին մօռնալինք	չին մուդնուլինք
չին հաքնէլիք	չին խաղալիք	չին մօռնալիք	չին մուդնուլիք
չին հաքնէլին	չին խաղալին	չին մօռնալին	չին մուդնուլին
չէլի հաքնիլ	չէլի խաղալ	չէլի մօռնալ	չէլի մուդնալ
չէլիր հաքնիլ	չէլիր խաղալ	չէլիր մօռնալ	չէլիր մուդնալ
չէր հաքնիլ	չէր խաղալ	չէր մօռնալ	չէր մուդնալ
չէլինք հաքնիլ	չէլինք խաղալ	չէլինք մօռնալ	չէլինք մուդնալ
չէլիք հաքնիլ	չէլիք խաղալ	չէլիք մօռնալ	չէլիք մուդնալ
չէլին հաքնիլ	չէլին խաղալ	չէլին մօռնալ	չէլին մուդնալ

կ ա տ ա ր յ ա լ

չհաքա	չխաղացի	չմօռցա	չմդա
չհաքար	չխաղացիր	չմօռցար	չմդար
չհաքավ	չխաղաց	չմօռցավ	չմդավ
չհաքանք	չխաղացինք	չմօռցանք	չմդանք
չհաքաք	չխաղացիք	չմօռցաք	չմդաք
չհաքան	չխաղացին	չմօռցան	չմդան

Ստորադասական

չլսիմ	չբաքնիմ	չհարփիմ	չհաքնիմ
չլսիս	չբաքնիս	չհարփիս	չհաքնիս
չլսէ	չբաքնէ	չհարփի	չհաքնի
չլսինք	չբաքնինք	չհարփինք	չհաքնինք
չլսիք	չբաքնիք	չհարփիք	չհաքնիք
չլսին	չբաքնին	չհարփին	չհաքնին

Ստորադասական

չլսէլի	չբաքնէլի	չհարփէլի	չհաքնէլի
չլսէլիր	չբաքնէլիր	չհարփէլիր	չհաքնէլիր
չլսէր	չբաքնէր	չհարփէր	չհաքնէր
չլսէլինք	չբաքնէլինք	չհարփէլինք	չհաքնէլինք
չլսէլիք	չբաքնէլիք	չհարփէլիք	չհաքնէլիք
չլսէլին	չբաքնէլին	չհարփէլին	չհաքնէլին

Ա. պ

լսէլու չիմ	բաքնէլու չիմ	հարփէլու չիմ	հաքնէլու չիմ
լսէլու չիս	բաքնէլու չիս	հարփէլու չիս	հաքնէլու չէս
լսէլու չէ	բաքնէլու չէ	հարփէլու չէ	հաքնէլու չէ
լսէլու չինք	բաքնէլու չինք	հարփէլու չինք	հաքնէլու չինք
լսէլու չիք	բաքնէլու չիք	հարփէլու չիք	հաքնէլու չիք
լսէլու չին	բաքնէլու չին	հարփէլու չին	հաքնէլու չին

Ա. ց յ ա լ

լսէլու չէլի	բաքնէլու չէլի	հարփէլու չէլի	հաքնէլու չէլի
լսէլու չէլիր	բաքնէլու չէլիր	հարփէլու չէլիր	հաքնէլու չէլիր
լսէլու չէր	բաքնէլու չէր	հարփէլու չէր	հաքնէլու չէր
լսէլու չէլինք	բաքնէլու չէլինք	հարփէլու չէլինք	հաքնէլու չէլինք
լսէլու չէլիք	բաքնէլու չէլիք	հարփէլու չէլիք	հաքնէլու չէլիք
լսէլու չէլին	բաքնէլու չէլին	հարփէլու չէլին	հաքնէլու չէլին

Հ ր ա մ ա յ ա կ ա ց

մի լսի(ւ)	մի բաքնի(ւ)	մի հարփի(ւ)	մի հաքնի(ւ)
մի լսիք	մի բաքնիք	մի հարփիք	մի հաքնիք

ն ե ր կ ա

չխաղամ	չմօռնամ	չմուդնում
չխաղաս	չմօռնաս	չմուդնուս
չխաղա	չմօռնա	չմուդնու
չխաղանք	չմօռնանք	չմուդնունք
չխաղաք	չմօռնաք	չմուդնուք
չխաղան	չմօռնան	չմուդնուն

ա ն ց յ ա լ

չխաղալի	չմօռնալի	չմուդնուլի
չխաղալիր	չմօռնալիր	չմուդնուլիր
չխաղար	չմօռնար	չմուդնուր
չխաղալինք	չմօռնալինք	չմուդնուլինք
չխաղալիք	չմօռնալիք	չմուդնուլիք
չխաղալին	չմօռնալին	չմուդնուլին

ա ո ց ի

խաղալու չիմ	մօռնալու չիմ	մդնէլու չիմ
խաղալու չիս	մօռնալու չիս	մդնէլու չիս
խաղալու չէ	մօռնալու չէ	մդնէլու չէ
խաղալու չինք	մօռնալու չինք	մդնէլու չինք
խաղալու չիք	մօռնալու չիք	մդնէլու չիք
խաղալու չին	մօռնալու չին	մդնէլու չին

ա պ ա ո ց ի

խաղալու չէլի	մօռնալու չէլի	մդնէլու չէլի
խաղալու չէլիր	մօռնալու չէլիր	մդնէլու չէլիր
խաղալու չէր	մօռնալու չէր	մդնէլու չէր
խաղալու չէլինք	մօռնալու չէլինք	մդնէլու չէլինք
խաղալու չէլիք	մօռնալու չէլիք	մդնէլու չէլիք
խաղալու չէլին	մօռնալու չէլին	մդնէլու չէլին

ա ո ա ջ ի ց

մի խաղա(ւ)	մի մօռնա(ւ)	մի մուդնու(ւ)
մի խաղաք	մի մօռնաք	մի մուդնուք

Հրամայական

թո չլսե	թո չբաքնե	թո չհարփի	թո չհաքնի
թո չլսին	թո չբաքնին	թո չհարփին	թո չհաքնին

Ցայտական

թո չլսէիր	թո չբաքնէիր	թո չհարփէիր	թո չհաքնէիր
թո չլսէր	թո չբաքնէր	թո չհարփէր	թո չհաքնէր
թո չլսէիք	թո չբաքնէիք	թո չհարփէիք	թո չհաքնէիք
թո չլսէին	թո չբաքնէին	թո չհարփէին	թո չհաքնէին

Հատուած

թէրած չիմ	թաքած չիմ	հարփած չիմ	հաքած չիմ
թէրած չիս	թաքած չիս	հարփած չիս	հաքած չիս
թէրած չէ	թաքած չէ	հարփած չէ	հաքած չէ
թէրած չինք	թաքած չինք	հարփած չինք	հաքած չինք
թէրած չիք	թաքած չիք	հարփած չիք	հաքած չիք
թէրած չին	թաքած չին	հարփած չին	հաքած չին

Գերբայ

թէրած չէլի	թաքած չէլի	հարփած չէլի	հաքած չէլի
թէրած չէլիր	թաքած չէլիր	հարփած չէլիր	հաքած չէլիր
թէրած չէր	թաքած չէր	հարփած չէր	հաքած չէր
թէրած չէլինք	թաքած չէլինք	հարփած չէլինք	հաքած չէլինք
թէրած չէլիք	թաքած չէլիք	հարփած չէլիք	հաքած չէլիք
թէրած չէլին	թաքած չէլին	հարփած չէլին	հաքած չէլին

Գերբայ

չլսող	չբաքնող	չհարփող	չհաքնող
չլսած	չբաքած	չհարփած	չհաքած
չլսել	չբաքնել	չհարփել	չհաքնել
չլսելիք	չբաքնելիք	չհարփելիք	չհաքնելիք
չլսելու	չբաքնելու	չհարփելու	չհաքնելու

Երկրորդ

թո չխաղա	թո չմօնա	թո չմուդնու
թո չխաղան	թո չմօնան	թո չմուդնուն

Անցյալ

թո չխաղայիր	թո չմոռնայիր	թո չմուդնայիր
թո չխաղար	թո չմօնար	թո չմուդնուր
թո չխաղայիք	թո չմօնայիք	թո չմուդնուիք
թո խաղային	թո չմօնային	թո չմուդնուին

Կատար

խաղացած չիմ	մօռցած չիմ	մդած չիմ
խաղացած չիս	մօռցած չիս	մդած չիս
խաղացած չէ	մօռցած չէ	մդած չէ
խաղացած չինք	մօռցած չինք	մդած չինք
խաղացած չիք	մօռցած չիք	մդած չիք
խաղացած չին	մօռցած չին	մդած չին

Կատար

խաղացած չէլի	մօռցած չէլի	մդած չէլի
խաղացած չէլիր	մօռցած չէլիր	մդած չէլիր
խաղացած չէր	մօռցած չէր	մդած չէր
խաղացած չէլինք	մօռցած չէլինք	մդած չէլինք
խաղացած չէլիք	մօռցած չէլիք	մդած չէլիք
խաղացած չէլին	մօռցած չէլին	մդած չէլին

Ճերբ

չխաղացօղ	չմօռցող	չմդնօղ
չխաղացած	չմօռցած	չմդած
չխաղալ	չմօռնալ	չմուդնուլ
չխաղալիք	չմօռնալիք	չմդնէլիք
չխաղալու	չմօռնալու	չմդնէլու

Ձենք դնում ենացյալ բարդ ձևերի, թեականի, պատմականի, ինչպես նաև կրավորական, անցողական, անկանոն և պակասավոր բայերի բացասականը, որովհետև այդ բոլորը կազմվում են միևնույն ձևով, առանց որևէ մասնավոր կանոնի. ինչպես՝ բերելու չբլաս ես եղիլ է, չլաված, չհավնեցուցի և այլն:

Բարբառիս մեջ սովորական ձև է բայերի դրականի ու բացասականի կրկնությունը՝ անմիջական մի գործողություն ցույց տալու համար. ինչպես՝ գերած չի գերած «անմիջապես որ կերած», գարգած չի գարգած «հենց որ զարկավ»: Այս ձևը միայն դերբայինն է հատուկ և ոչ դիմավորներին:

Համշենի բարբառում բայերի բացասականը կազմելու համար դրվում է նախադաս չ, չի կամ հետադաս ուչ (էչ).— վերջինն երկուսից ուչ Մալալի ձևն է, իսկ էչ՝ ճանիկցոց. նմանապես նախադաս չի դնում են մալացիք, չ ճանիկցիք. օրինակ՝

սահմ. ներկա

Մ	չիմ բ'էրիլ	Ճ	չիմ լսէլ	լսէլ չիմ
	չիս բ'էրիլ		չէս լսէլ	լսէլ չէս
	չի բ'էրիլ		չի լսէլ	լսէլ չի
	չինք բ'էրիլ		չինք լսէլ	լսէլ չինք
	չէք բ'էրիլ		չէք լսէլ	լսէլ չէք
	չին բ'էրիլ		չին լսէլ	լսէլ չին

անկատար

Մ	չէյը բ'էրիլ	Ճ	չէյը լսէլ	լսէլ չէյ
	չէյըր բ'էրիլ		չէյդ լսէլ	լսէլ չէյդ
	չիր բ'էրիլ		չէր լսէլ	լսէլ չէր
	չա՛քը բ'էրիլ		չա՛յքը լսէլ	լսէլ չա՛յքը
	չէքը բ'էրիլ		չէյքը լսէլ	լսէլ չէյքը
	չէյնը բ'էրիլ		չէյնը լսէլ	լսէլ չէյնը

Միավանկ բայերը (լալ, գալ, տալ) ներկայի կազմության մեջ հետևում են նույն կանոնին. ինչպես՝ չիմ դալ և այլն:

Կատարյալը ունի երկու ձև՝ նախադաս բացասականով և հետադաս բացասականով. օրինակ՝

Մ	չի բ'էրի	կամ	բ'էրիլ ուչ
	չի բ'էրիր		բ'էրիր ուչ
	չի բ'էրավ		բ'էրավ ուչ

Մ	չի բ'էրաք	կամ	բ'էրաք ուչ
	չի բ'էրիք		բ'էրիք ուչ
	չի բ'էրին		բ'էրին ուչ

Ապառնին ունի 3 կամ 5 ձև. Մալալում բացասականը դրվում է սկիզբը, միջտեղը կամ վերջը. օրինակ՝

չի բիդի բ'էրիմ	բ'էրիմ ուչ բիդի
բ'էրիմ իդի ուչ	
չի բիդի բ'էրիս	բ'էրիս ուչ բիդի
բ'էրիս բիդի ուչ և այլն:	

Ճանիկում լինում է 5 ձև. ալսպես՝

չբիդի պէրիմ
պէրիմ լօչ բիդի սիրիմ էչ բիդի
պէրիմ իդի լօչ սիրիմ իդի լօչ
բիդի չպէրիմ բիդի չսիրիմ

և ապառնիի մասնիկը կրկնվելով՝

սիրիմ իդի լօչ բիդի...

այս վերջինը հին ձև է և այժմ սակավագեպ:

Անցյալը՝ չբիդի սիրէր սիրել էչ բիդի, բիդի չսիրել...

Ներկայի և անկատարի շարունակական ձևերը լինում են՝

իմս չէշաուշ ա «ես չեմ գնում»
իմս չէշաուշ էր «ես չէի գնում»...

Սառըդատականի ներկան և անկատարը առանում են երկու ձև. բացասականը նախադաս կամ հետադաս.

չլսիմ	կամ	լսիմ էչ
չլսէս		լսէս էչ
չլսա		լսա էչ
չլսինք		լսինք էչ
չլսէք		լսէք էչ
չլսին		լսին էչ
չլսէյը		լսէյ էչ
չլսէյդը		լսէյդ էչ
չլսէր		լսէր էչ
չլսա՛յքը		լսա՛յք էչ
չլսէյքը		լսէյք էչ
չլսէյնը		լսէյն էչ

Ինչպես տեսնվում է, բայի վերջի թարմատար ձայնավորը կրճատվում է, երբ «էչ» հետադաս է (ձայնավորների հանդիպումից խուսափելու համար)։

Բաղադրյալ ձևերը կազմվում են նույնպես երկու ձևով.

չսիրած ունիմ կամ սիրած չունիմ
չսիրած ունէլը » սիրած չունէլ.

բայց նաև էական բայով՝

լսած չիմ, լսած չէս, լսած չ՛, լսած չէլդ «լսած չէիր»...
էշարցած չիմ կամ կնացած չիմ...

Դերբայների մեջ բացասականը միշտ նախադաս է. ինչպես՝ չլսող, չլսած, չլսուշ, չլսելիք, չլսելու։

Արդելական մասնիկն է մի, որ հոգնակիում կարող է առանալ մի՛ք ձևը և կարող է լինել թե՛ նախադաս և թե՛ հետադաս. ինչպես՝

մի լսէլ, լսէլ մի — մի լալ, ձիձաղիլ մի
մի լսէք, լսէք մի — խօսիք մի, մի հաքնիք
մի՛ք լսէլ, լսէլ մի՛ք,
մի՛ք լսէք, լսէ՛ք մի՛ք, մի խաղաք, մի մդնուք։

Մալաթիա կա և մ͡ե՛ք ձևը. ինչպես՝ մ͡ե՛ք բ՛երիլ, մ͡ե՛ք լալ (երկբարբառային ե-ով)։

Սահմանական ներկայի ձևը ունի թե՛ ներկայի և թե՛ ապառնիի նշանակություն. այսպես չիմ դալ «չեմ տալիս» և «չեմ տալ», չի էշտալ «չի գնում» և «չի գնալ»։

Արդելականի երկրորդ ձևն է չպէրես, չդօնի՛ս, որ ավելի հարդարական նշանակություն ունի։ Այսպես նաև հետադիր ձևով՝ մօռնաք ուչ «չմոռանաք» և այլն։

Հրամայականի երկրորդ ձևը (բօղ, թէղ) գործածվում է նաև բացասական ձևով. ինչպես՝ ըն լսէր է՛չ բօղ «լծող նա չլսեր». բայց այստեղ կա զարմանալի մի ձև, որ հատուկ է միայն երկրորդ դեմքին. կազմվում է անցյալ դերբայից, զուրկ է հարադիր էական բայից և հոգնակիում էլ ստանում է ք հոգնակերտ նշանը. ինչպես՝

ուն լսած է՛չ «լսեիր», որ և լսած է՛չ բօղ
ունք լսածք է՛չ «լսեիք», որ և լսածք է՛չ բօղ

օրինակ՝ ըն ասաց ամա, տուն լսած է՛չ
ըներ պէրին ամա, տունք առածք է՛չ.

Բաղաձայնների խճողման դեպքում դրվում է ը. օրինակ՝ առածքը յէչ։

Դերբայով ապառնին էլ ունի իր բացասականը. ինչպես՝

յես լսող չիմ «չպիտի լսեմ»
տուն լսող չէյդ «չպիտի լսէիր»...

Մ ա ն ո թ.— Փոխանակ է՛չ ձևի, գտնում ենք նաև ճէչ, օրինակ՝ դվավ ճէչ «տվավ ոչ, չտվավ», դեսնու ճէչ «չտեսնի»։

Առտիալի բարբառում բայերի բացասականը կազմելու համար 3 ձև կա.

1) Ձայնավորով սկսվող բայերից առաջ դրվում է չ. ինչպես՝

չունիմ, չունիս, չունի, չունին,
չուզիմ, չուզիս, չուզէ։

2) Բաղաձայնով սկսվող բայից առաջ դրվում է չի. օրինակ՝

չի մօռնամ, չի մօռնաս, չի մօռնա
չի բաղիմ, չի բաղիս, չի բաղի
չի քամ, չի քաս, չի քա
չիդիմ, չիդիս, չիդէ (իբր չի գիտեմ և այլն)
չիլալ (Հնգ.) «չի կարող»
չիպիկէ (Հնգ.) «պետք չէ» (ՀԱ, 1898, էջ 49)։

3) Սկզբում դրվում է էական բայի բացասականը, իսկ բուն բայի վրայից հանվում է լ վերջավորությունը. ինչպես՝

չիմ թօղու, չիմ անի, չիմ բ՛օջ՛ի
չիս թօղու, չիս անի, չիմ բ՛օջ՛ի
չի համբ՛իրի, չի գարնա
չին էրթա, չին իմանա, չին դիսնու, չին լսի
չին դուվի «չեն տվել»։

Հրամայականի բացասականը (որ է արդելական) կազմվում է մի՛ մակբայով. ինչպես՝

մի թօղնու	*մի թօղնուք*
մի առնու	*մի առնուք*
մի ձէձի	*մի ձէձիք*
մի սիրի	*մի սիրիք*
մի հազա	*մի հազաք*
մի նալի	*մի նալիք։*

Bittner-ը, Հուշարձ., էջ 365, տալիս է էական բայի բացասականի ներկան հետևյալ ձևով. չիմ, չիս, չի, չիմք, չիք, չին: Բոլոր դեպքերում ե ձայնավորը դարձել է ի, նույնիսկ եզակի Գ դեմքում (չի), որ դրականում է ձևով է (է). ավելի կարևոր է դիտել այն, որ, ինչպես հեղինակն էլ է դիտում, հոգնակի Ա. դեմքը ունի մ բաղաձայնը (չիմք), մինչդեռ բոլոր մեր բարբառները ունեն ն (չենք, չինք):

Հենգարահայ բարբառով մի փոքր հատվածի մեջ գտնում ենք չինք գիտիլ (Բազմ. 1922, էջ 279), որ էականը ունի չինք (և ոչ չիմք), իսկ բուն բայը գիտիլ (ւ-ով) ձևը):

Վանի բարբառում բայերի բացասականը կազմելու համար սովորաբար դրականի սկիզբը դնում են չ. այսպես են սաորադասական ներկան և անկատարը, կատարյալը և դերբայները: Տալիս ենք մի օրինակ բաղաձայնով և մի օրինակ ձայնավորով սկսվող բայերից: (Բացասական մասնիկն է միշտ չ և չի կարող դառնալ չի. ինչպես՝ չլսեմ և ոչ թե չիլսեմ):

Սաոր. ներկա	սաոր. անց.	սահմ. կար.
չլսեմ	չլսի	չլսած
չլսես	չլսիր	չլսած
չլսի	չլսէր	չլսած
չլսենք	չլսինք	չլսանք
չլսէք	չլսիք	չլսայք
չլսեն	չլսին	չլսան
չուզեմ	չուզի	չուզիցի
չուզես	չուզիր	չուզիցիր
չուզի	չուզէր	չուզեց
չուզենք	չուզինք	չուզիցինք
չուզէք	չուզիք	չուզիցիք
չուզեն	չուզին	չուզիցին

դերբ.

չլսել	չուզել
չլսող	չուզող
չլսած	չուզած
չլսէլու	չուզէլու

Սահմանական ներկան և անկատարը կազմելու համար վերցնում ենք բայի անորոշը, կտրում ծայրից լ ձայնը և խոնարհում էական բայի ներկայի և անկատարի հետ. այսպես՝

ներկա

չեմ լսե	չեմ ուզե
չես լսե	չես ուզե
չի լսե, չը՛լսե[1]	չուզե, չի ուզե
չինք՛ լսե	չինք՛ ուզե
չէք՛ լսե	չիք՛ ուզե
չեն լսե	չեն ուզե

անկատար

չի լսե	չի ուզե
չիր լսե	չիր ուզե
չէր լսե	չէր ուզե
չինք՛ լսե	չինք՛ ուզե
չիք՛ լսե	չիք՛ ուզե
չին լսե	չին ուզե:

Նույն ձևով կազմվում են նաև հարակատարն ու գերակատարը. այնպես որ չեմ լսե նշանակում է թե «չեմ լսում» և թե «չեմ լսել», ինչպես որ չի լսե նշանակում է «չէի լսում» և «չէի լսել»: Այս երկուսը իրարից պահպանել անհնարին է: Պոլսի բարբառումն էլ չեմ լսեր թե ներկա է և թե հարակատար, ինչպես որ չէի լսեր թե անկատար է և թե գերակատար. բայց Պոլսի բարբառում գոնե կարելի է ասել չեմ լսած (հարակատար) և չէի լսած (գերակատար), իսկ Վանի բարբառում չի գործածվում ոչ լսած չեմ, լսած չի, ոչ էլ չեմ լսած, չի լսած: Կարելի է ասել միայն լսած չկամ, լսած չկի, որոնք կարող են բոնել հարակատարի և գերակատարի տեղը:

Միայն Գ չծորդութ յան բայերն են, որ պահպանում են ներկան ու անկատարը հարակատարից և գերակատարից: Ահա սրանց շարքը.

ներկա	անկատար	հարակատար	գերակատար
չեմ խաղա	չի խաղե	չեմ խաղցե	չի խաղցե
չես խաղա	չիր խաղե	չես խաղցե	չիր խաղցե

[1] Ինչպես տեսնում ենք, չ բացասականը կարող է առնել թե չի՛ և թե չը ձևը. նույնիսկ ձայնավորի մոտ կարող է մնալ չի:

չի (չը) խաղա	չէր խաղա	չի (չը) խաղայ	չէր խաղայ
չենք խաղա	չէնք խաղա	չենք խաղայ	չէնք խաղայ
չէք խաղա	չիք խաղա	չէք խաղայ	չիք խաղայ
չեն խաղա	չէն խաղա	չեն խաղայ	չէն խաղայ

Ծանոթ.— *Անկատարի կազմութեան մէջ բայական ալ վերջավորութիւնը ինչպես ալստեղ, նոյնպես և միավանկ բայերի ծայրին դառնում է ե, մի զարմանալի ձայնական երևոյթ, որ ինձ անբացատրելի թւաց։*

Միավանկ տալ, լալ, գալ բայերը սահմանական ներկայի կազմութեան ժամանակ առանում են ի նախդիրը. ալսպես՝

չեմ ի տա	չեմ ի լա	չեմ ի կլա
չես ի տա	չես ի լա	չես ի կլա
չի (ի) տա	չի (ի) լա	չի (ի) կլա
չենք ի տա	չենք ի լա	չենք ի կլա
չէք ի տա	չէք ի լա	չէք ի կլա
չեն ի տա	չեն ի լա	չեն ի կլա

Սահմանական անկատարի մէջ ալս նոյն բայերը ունենում են երկու ձև. կամ առանում են ալս ի նախդիրը և կամ ոչ. բայց բալի վերջի ա ձայնը դարձնում են ե, որի մասին խոսեցինք վերևում։ Ըստ ալմ՝

չի տե	չի լե	չի կլե
չէր տե	չէր լե	չէր կլե
չէր տե	չէր լե	չէր կլե
չէնք տե	չէնք լե	չէնք կլե
չիք տե	չիք լե	չիք կլե
չէն տե	չէն լե	չէն կլե

կամ՝

չի ի տե	չի ի լե	չի ի կլե
չէր ի տե	չէր ի լե	չէր ի կլե
չէր ի տե	չէր ի լե	չէր ի կլե
չէնք ի տե	չէնք ի լե	չէնք ի կլե
չիք ի տե	չիք ի լե	չիք ի կլե
չէն ի տե	չէն ի լե	չէն ի կլե

Ապառնին և անցլալ ապառնին կազմվում են չ մասնիկը դնելով բալի վրա, հետևլալ ձևով.

պիտի չլսեմ	պիտի չլսէ	պիտի չիկլամ	պիտի չի կլի
պիտի չլսես	պիտի չլսիր	» չիկլաս	» չի կլիր
պիտի չլսի	պիտի չլսէր	» չիկլա	» չի կլէր
պիտի չլսենք	պիտի չլսինք	» չիկլանք	» չի կլինք
պիտի չլսէք	պիտի չլսիք	» չիկլաք	» չի կլիք
պիտի չլսեն	պիտի չլսին	» չիկլան	» չի կլին

Ծանոթ. 1.— *Սովորութիւն չէ բացատական մասնիկը դնել պիտի ձևի վրա (չպիտի լսեմ և այլն)։*

Ծանոթ. 2.— *Բազմավանկ բայերի բացատականը թեև չ (չը) ձևն ունի, բայց միավանկ բայերի բացատականը լինում է չի։ Այս ձևը կազմվում է ոչ թե չը դարձնելով չի, այլ միավանկ բայերի ի նախդիրն է, որ միանում է չ բացատականին. ալսպես՝*

պիտի չ-իկլամ	պիտի չ-իկլի
պիտի չ-իտամ	պիտի չ-իտի
պիտի չ-իլամ	պիտի չ-իլի

Արգելականը կազմվում է «մի» մակրայով, որ վանի բարբառում առանում է մի կամ մը ձևը, իսկ ձայնավորի մոտ սղմամբ դառնում է մ։ Հոդնակիում լինում է միշտ մեք, որ բազաձայնի մոտ կարող է դառնալ մեհ. օրինակ՝

մը լըսե, մը լը՛սե
մը պիրե, մը պիրէ կամ մը պե, մը՛ պե
մ՛ասե, մ՛ուտե, մ՛անե, մ՛իլնե, մ՛ամչընա, մ՛ոդա
մէք լսե, մէք անե, մէք պիրե, մէք ոդա, մէք իլնե, մէհ խոդա, մէհ խալնե։

Կիլիկիայի բարբառում բայերի բացատականը կազմելու համար գործածվում են չ, չօ, ը՝չ մասնիկները, որոնք բոլորը կըցվում են դրական ձևի սկիզբը։

Ամենից պարզը կատարյալ ժամանակը և դերբայները են, որոնք առանում են չ բացատական մակրայը՝ նախամասնիկի ձևով. ինչպես՝

կատարյալ	
չսիլեցի	չսիլեցոնք
չսիլեցիլ	չսիլեցաք
չսիլեց	չսիլեցան, չսիլեցին

Կարելի է ասել նաև չի սիյիցի և այլն։
դերբայներ՝ չսիլիլ, չսիլէօղ, չսիլօձ, չսիլիլու, չսիլիլէք։

Այսպես են նաև սուորադասականի ներկա և անցյալ ձևերը, ինչպես նաև հրամայականի P ձևի ներկան ու անցյալը։ Այսպես՝

չսիլիմ	չսիյա
չսիլիս	չսիյալ
չսիլէ	չսիլէլ
չսիլինք	չսիլօնք
չսիլէք	չսիյաք
չսիլին	չսիյան

թուխ չսիլիմ	թուխ չսիյա
թուխ չսիլիս	թուխ չսիյալ
թուխ չսիլէ	թուխ չսիլէլ
թուխ չսիլինք	թուխ չսիլօնք
թուխ չսիլիք	թուխ չսիյաք
թուխ չսիլին	թուխ չսիյան

Չօ ձևը դրվում է սահմանական ներկայի և անկատարի վրա, որոնք այս դեպքում սառնում են շարունակականի նշանակությունն. ինչպես՝

չօ սիյիմ «չեմ սրբեր կոր»
չօ սիյա «չէի սրբեր կոր»

ներկա	անկատար
չօ սիլիմ	չօ սիյա
չօ սիլիս	չօ սիյալ
չօ սիլէ	չօ սիլէլ
չօ սիլինք	չօ սիլօնք
չօ սիլէք	չօ սիյաք
չօ սիլին	չօ սիյան

Պարզ ապառնին, ինչպես և անցյալ ապառնին կազմվում են ը՝չ մասնիկի հարացուությամբ՝ հետևյալ ձևով.

ը՝չ բիդէ սիլիմ	ը՝չ բիդէ սիյա
ը՝չ բիդէ սիլէ	ը՝չ բիդէ սիյալ
ը՝չ բիդէ սիլէ	ը՝չ բիդէ սիլէլ
ը՝չ բիդէ սիլինք	ը՝չ բիդէ սիլօնք

ը՝չ բիդէ սիլէք	ը՝չ բիդէ սիյաք
ը՝չ բիդէ սիլին	ը՝չ բիդէ սիյան։

Այս ձևերի սկիզբը դրած ը՝չ մակրայը շեշտված է ճիշտ իբր ը՛։

Դիտելի է, որ բիդի մասնիկը թեև դրականում ունի ի վերջաձայնը, բայց բացասականում միշտ էլ դառնում է ե։

Մնացյալ բայերը կազմվում են էական բայի ներկայի և անկատարի օժանդակությամբ. այսպես՝

Ներկայի անցողական ձևը, որ նաև ապառնիի նշանակությունն ունի, կազմվում է եմ էականով, որի հետ միանում է անփոփոխ դերբայական -ի ձևը (իմն -իյ, որ նույն է Պլ. -ների և ուրիշ բարբառների -ել ձևի հետ)։

չիմ սիլի	չինք սիլի
չիս սիլի	չէք սիլի
չէ սիլի	չին սիլի

Հարակատարը կազմվում է -օձ դերբայով, որ կարող է թե նախադաս լինել եմ էականից և թե հետադաս.

չիմ սիլօձ	սիլօձ չիմ
չիս սիլօձ	սիլօձ չիս
չէ սիլօձ	սիլօձ չէ
չինք սիլօձ	սիլօձ չինք
չէնք սիլօձ	սիլօձ չէք
չին սիլօձ	սիլօձ չին

Ապառնի դերբայով կազմված բացասականն էլ ունի նույն կազմությունը, բայց ավելի սովորական ձևն է դնել նախ դերբայը, ապա էական բայի բացասականը. այսպես՝

սիլիլօ չիմ	սիլիլօ չինք
սիլիլօ չիս	սիլիլօ չէք
սիլիլօ չէ	սիլիլօ չին

Անկատարի սովորական ձևը կազմվում է նույնպես -ի հանգող դերբայով, որի հետ խոնարհվում է էական բայի անկատարը. այսպես՝

չը՝ սիլի	չոնք սիլի
չայ սիլի	չը՛ք սիլի
չէյ սիլի	չը՛ն սիլի

Գերակատարը կազմվում է -օձ դերբայով՝ հարադրությամբ էական բայի, որ կարող է դերբայից թե առաջ դրվել և թե հետո. օրինակ՝

ընը՝ սիլօձ	սիլօձ ընը՝
էայ սիլօձ	սիլօձ էայ
էէյ սիլօձ	սիլօձ էէյ
էոնք սիլօձ	սիլօձ էոնք
ընը՝ք սիլօձ	սիլօձ ընը՝ք
ընը՝ն սիլօձ	սիլօձ ընը՝ն

Արգելականը լինում է մի՛ սիյի, մի՛ սիյէք. հետագաս մի՛ էի դործածվում բնավ։

Միավանկ լալ, տալ, գ՛ալ բայերի բացառականը լինում է հետևյալ ձևով.

ստորադասական ներկա

էի լօմ	էի դօմ	էի գ՛օմ
էի լօս	էի դօս	էի գ՛օս
էի լօ	էի դօ	էի գ՛օ
էի լօնք	էի դօնք	էի գ՛օնք
էի լ՛ոք	էի դ՛ոք	էի գ՛ոք
էի լօն	էի դօն	էի գ՛օն

ստորադասական անկատար

էի լի	էի դի	էի գ՛ի
էի լիյ	էի դիյ	էի գ՛իյ
էի լէյ	էի դէյ	էի գ՛էյ
էի լինք	էի դինք	էի գ՛ինք
էի լիք	էի դիք	էի գ՛իք
էի լին	էի դին	էի գ՛ին

կատարյալ

էի լացը	էի դը՝վը՝	էի գի
էի լացըյ	էի դը՝վը՝յ	էի գիյ
էի լացօվ	էի դօվօվ	էի գիք
էի լացօնք	էի դօվօնք	էի գօնք
էի լացո՛ք	էի դը՝վո՛ք	էի գո՛ք
էի լացը՛ն	էի դը՝վը՛ն	էի գին

դերբայներ

էի լօլ	էի դօլ	էի գ՛օլ
էի լացէօղ	էի դը՝վէօղ	էի գ՛էօղ[1]
էի լացօձ	էի դօվօձ	էի գ՛օձ
էի լալո	էի դալո	էի գ՛ալո
էի լալէք	էի դալէք	էի գ՛ալէք

սահմանական ներկա

էօ լօմ, էօ իլօմ	էօ դօմ	էօ գ՛օմ
էը՛ գուլօմ	էօ գուդօմ	էօ գուգ՛օմ
էիմ իլօ	էիմ իդօ	էիմ իգ՛օ

ապառնի ա

էիմ լո	էիմ դո	էիմ գ՛օ

անկատար

էօ լի	էօ դի	էօ գ՛ի
էօգուլի	էօգուդի	էօ գ՛ի
էի՛ լի	էի՛ դի	էի՛ գ՛ի

ապառնի անկ. շար.

էօ գու լի

ընը՝է բիդե լօմ (իլօմ)	ընը՝է բիդէ դօմ (իդօմ)	ընը՝է բիդէ իգ՛օմ (գ՛օմ)
ընը՝է բիդէ լի (իլի)	ընը՝է բիդէ դի (իդի)	ընը՝է բիդէ գ՛ի (իգ՛ի)

հրամայական

մի՛ լո	մի՛ դո	մի՛ գ՛օ
մի՛ լո՛ք	մի՛ դվէք (մի՛ դո՛ք)	մի՛ գ՛ո՛ք
թո՛ւ էիլօմ	թո՛ւ էի դօմ	թո՛ւ էի գ՛օմ
թո՛ւխ էիլօմ	թո՛ւխ էի դօմ	թո՛ւխ էի գ՛օմ
թո՛ւ էիլի	թո՛ւ էի դի	թո՛ւ էի գ՛ի
թո՛ւխ էիլի	թո՛ւխ էի դի	թո՛ւխ էի գ՛ի

հարակատար

էիմ	լացի	էիմ դը՝վի	էիմ	իգի
էիս	լացի	էիս դը՝վի	էիս	իգի
էէ	լացի	էէ դը՝վի	էէ	իգի

[1] Զարմանալի են իգ՛էօղ, չիգ՛էօղ ձևերը, որոնց մեջ կ դարձել է ապօրինի կերպով գ՛, հետևելով գ՛օլ բայի նախաձայնին։

չինք	լացի	չինք	դը՛վի	չինք	իգի
չէք	լացի	չէք	դը՛վի	չէք	իգի
չին	լացի	չին	դը՛վի	չին	իգի

գերակատար

չը՝ լացի	չը դը՛վի	չը՝ իգի
չը՛յ լացի	չը՛յ դը՛վի	չը՛յ իգի
չէյ լացի	չը՛յ դը՛վի	չէյ իգի
չը՛նք լացի	չը՛նք դը՛վի	չը՛նք իգի
չօնք լացի	չօնք դ՛ըվի	չօնք իգի
չը՛ք լացի	չը՛ք դը՛վի	չը՛ք իգի
չը՛ն լացի	չը՛ն դըվի	չը՛ն իգի

Բ ձև

չիմ լացօձ	չիմ դօվօձ	չիմ իգօձ
չը՝ լացօձ	չը՝ դօվօձ	չը՝ իգօձ

Սրանց վրա ավելացնում ենք լինել և լցնել բայերի գլխավոր ձևերը.

սաոր. ներկա	սաոր. անկ.	կատարյալ
չի նամ	չի նի	չէղա
չի նաս	չի նիյ	չէղայ
չի նա	չի նէյ	չէղավ
չի նանք	չի նինք	չէղանք
չի նաք	չի նիք	չէղաք
չի նան	չի նին	չէղան

հրամայական	դերբայներ
մի՛ նա	նալ
մի՛ նաք	էղէօձ, նօձ (էղօձ)
	էղիյ
	նալու, նալէք

սահմ. ներկա	ապառնի	հարակ.-գերակ.
չիմ նա	ը՛չ բիդէ նամ	չիմ էղի
չօ նամ	ը՛չ բիդէ նի	չիմ էղօձ
չօ գունամ		չը՝ էղի
		չը՝ էղօձ

Նոյ «էյնալ» բայից.

սաոր. ներկա	սաոր. անկար.	կատարյալ
չի նօմ	չի նի	չի լը՛ցը՝
չի նօս	չի նիյ	չի լը՛ցը՛յ
չի նօ	չի նէյ	չի լը՛ցավ
չի նօնք	չի նինք	չի լցօնք
չի նաք	չի նիք	չի լը՛ցան
չի նօն	չի նին	չի լը՛ցօն

հրամայական	դերբայներ
մի՛ նօ	նօյ
մի՛ նաք	նէօղ, նօձ
	լը՛ցիյ
	նալու, նալէք

սահմ. ներկա	ապառնի	հարակ.-գերակ.
չիմ նօ	ը՛չ բիդէ նօմ	չիմ նօձ
չօ նօմ	ը՛չ բիդէ նի	չիմ լը՛ցի
չօ գունօմ		չը՝ լը՛ցի
		չը՝ նօձ

Ալեդիայի բարբառում *բացառական բայ կազմելու համար սաորադասական ներկայի և անցյալի, կատարյալի, ապառնիի և դերբայների սկզբին ավելացնում ենք չը մասնիկը. ահա այս ձևերի պատկերը.*

սաոր. ներկա	սաոր. անց.	սահմ. կար.
չսիրիմ	չսիրէր է	չսիրիցա
չսիրիս	չսիրէր	չսիրիցիր
չսիրէ	չսիրիր	չսիրից
չսիրինք	չսիրէր ինք	չսիրիցունք
չսիրիք	չսիրէր իք	չսիրիցաք
չսիրին	չսիրէր ին	չսիրիցէն

ապառնի	անց. ապառնի	հրամ. անց.
չպըր սիրիմ	չպըր սիրէր է	դ՛ըխ չսիրէր է
չպըր սիրիս	չպըր սիրէր	դ՛ըխ չսիրէր
չպըր սիրէ	չպըր սիրիր	դ՛ըխ չսիրիր

չպըր սիրինք	չպըր սիրէր ինք	դ'րխ չսիրէր ինք
չպըր սիրիք	չպըր սիրէր իք	դ'րխ չսիրէր իք
չպըր սիրին	չպըր սիրէր ին	դ'րխ չսիրէր ին

դերբայներ

չսիրիլ
չսիրիւղ
չսիրուձ, չսիրիր
չսիրիլա, չսիրիլոք

Հրամայական ձևը կազմելու համար մասնիկն է մը թե եզակի և թե հոգնակի. սա առաջանում է մի՛ ձևից: Նկատելի է, որ Սվեդիայի բարբառում մասնիկները (հաճախակի գործածութեան պատճառով) ձայնավորը սղում և ը-ի են վերածում, այսպես թող>դ'ըղ, պիտի որ>բըր և մի՛>մը:

Ահա օրինակներ արդևլականից.

եզ.	մը սիրէ	մը բաքնէ	մը խուսէ	մը հազզո
հոգ.	մը սիրիք	մը բաքնիք	մը խուսոք	մը հազզոք
եզ.	մը հաւնէ	մը գ'ուղնօ	մը սիրվէ	մը խմցընէ
հոգ.	մը հաւնէք	մը գ'ուղնոք	մը սիրվոք	մը խմցընիք
եզ.	մը թուղօ			
հոգ.	մը թուղոք			

Այլաձև կազմութիւն ունեն սահմանական ներկայի և անկատարի պարզ և շարունակական ձևերը: Պարզ ներկայի եզակի առաջին երեք դեմքերը սառնում են չըմ, չըր, չը օժանդակները, նրա հոգնակի երեք դեմքերը և անկատարը ամբողջ սառնում են չըր օժանդակը, իսկ ներկա և անկատար շարունակական ձևերը ամբողջապես սառնում են չու, որ իհարկե կու և չ ձևերի գումարն է:

ներկա (պարզ)	ներկա (շարունակական)
չըմ սիրէ	չու սիրիմ
չըր սիրէ	չու սիրիս
չը սիրիր	չու սիրէ
չըր սիրինք	չու սիրինք
չըր սիրիք	չու սիրիք
չըր սիրին	չու սիրին

անկատար (պարզ)	անկատար (շարունակական)
չըր սիրէր է	չու սիրէր է
չըր սիրէր	չու սիրէր
չըր սիրիր	չու սիրիր
չըր սիրէր ինք	չու սիրէր ինք
չըր սիրէր իք	չու սիրէր իք
չըր սիրէր ին	չու սիրէր ին

Կարևո բարբառում[1] պարզ կազմութիւն ունեցող ձևերի՝ ներբայների, ըղձականի ապառնի, անցյալ ապառնի, սահմանականի կատարյալ ժամանակների ժխտականները կազմվում են չ մասնիկով, որը դրվում է բայից առաջ (բաղաձայնով սկսվող բայերը առնում են չը), օրինակ՝ չըլըսէս, չըլըսէլու, չըլըսէր, չըլըսած, չըլըսող, չըլըսէ, չըլըսէմ, չըլըսէի, չըլըսի:

Ներբայների և օժանդակ բայի հարադրութեամբ կազմված բոլոր բաղադրյալ, երկրորդական բաղադրյալ ձևերը ժխտական են դառնում դարձյալ չ մասնիկով, բայց ժխտական այդ մասնիկը ընդունում է օժանդակ բայը: Ժխտական օժանդակ բայը եզակի Գ դեմքում չէ-ի փոխարեն ունի չի ձևը և կարող է դրվել ներբայներից և՛ առաջ և՛ ետ, ընդ որում ներբայները ենում են անփոփոխ (բացի վաղակատար ներբայից):

Պիտի եղանակիչով կազմված ժամանակներում չ-ն կարող է դրվել և՛ եղանակիչի վրա և՛ բայի վրա:

Սահմանական ներկայի և անցյալ անկատարի ժխտական ձևվերում կը մասնիկը չի պահպանվում: Այդ ժամանակների, ինչպես նաև ենթադրական ապառնի և անցյալ ապառնի ժամանակների ժխտականները կազմվում են ըղձական ներբայի և օժանդակ բայի ժխտական ձևի հարադրութեամբ, ըստ որում օժանդակ բայը միշտ դրվում է բայից առաջ:

Հրամայական առաջին ձևի արգելականը կազմվում է մի՛ (եզակիի համար), մի՛ք (հոգնակիի համար) ժխտականներով, որոնք ավելանում են բայի հատատակական ձևի եզակի թվի հիմքին: Երկրորդ ձևի համար գործ է ածվում չ մասնիկը, որը դրվում է բայի վրա:

---

[1] Քաղված է Հ. Մկրտչյանի «Կարնո բարբառը» մենագրութիւնից:

Պատճառական, կրավորական, բազմապատկական, անկանոն և պակասավոր բայերի ժխտական ձևերը կազմվում են նույն հիմունքներով։

Տալիս ենք աշել *(նալել) բայի ժխտական խոնարհման բոլոր ձևերը.*

դերբայներ

չաշէլ	չաշէր, չաշած
չաշէլու	չաշօղ
	չաշէ

ըղձական եղանակ

ապառնի (ներկա)	անց. ապառնի
չաշէմ	չաշէի
չաշէս	չաշէիր
չաշէ	չաշէր
չաշէնք	չաշէինք
չաշէք	չաշէիք
չաշէն	չաշէին

սահմանական եղանակ

ներկա	անց. անկտր.
չէմ աշէ	չէի աշէ
չէս աշէ	չէիր աշէ
չի աշէ	չէր աշէ
չէնք աշէ	չէինք աշէ
չէք աշէ	չէիք աշէ
չէն աշէ	չէին աշէ

ապառնի (ներկա)	անց. ապառնի
չէմ աշէլու	չէի աշէլու
չէս աշէլու	չէիր աշէլու
չի աշէլու	չէր աշէլու
չէնք աշէլու	չէինք աշէլու
չէք աշէլու	չէիք աշէլու
չէն աշէլու	չէին աշէլու

վաղակատար

ներկա	անցյալ
չէմ աշէ	չէի աշէ
չէս աշէ	չէիր աշէ
չի աշէ	չէր աշէ
չէնք աշէ	չէինք աշէ
չէք աշէ	չէիք աշէ
չէն աշէ	չէին աշէ

հարակատար

ներկա	անցյալ
չէմ աշած	չէի աշած
չէս աշած	չէիր աշած
չի աշած	չէր աշած
չէնք աշած	չէինք աշած
չէք աշած	չէիք աշած
չէն աշած	չէին աշած

անց. կար.

չաշէցի	չաշէցինք
չաշէցիր	չաշէցիք
չաշէց	չաշէցին

հարկադրական եղանակ

ապառնի (ներկա)	անց. ապառնի
չըպիտի աշէմ կամ չաշէմ դի	չըպիտի աշէի կամ չաշէի դի
չըպիտի աշէս » չաշէս դի	չըպիտի աշէիր » չաշէիր դի
չըպիտի աշէ » չաշէ դի	չըպիտի աշէր » չաշէր դի
չըպիտի աշէնք » չաշէնք դի	չըպիտի աշէինք » չաշէինք դի
չըպիտի աշէք » չաշէք դի	չըպիտի աշէիք » չաշէիք դի
չըպիտի աշէն » չաշէն դի	չըպիտի աշէին » չաշէին դի

հրամայական

մի՛ աշէ	մի՛ք աշէ
թո՛ղ չաշէմ	թո՛ղ չաշէնք
թո՛ղ չաշէ	թո՛ղ չաշէն
թո՛ղ չաշէիր	թո՛ղ չաշէիք
թո՛ղ չաշէր	թո՛ղ չաշէին

Մյուս բարբառների մեջ բացասականի կազմութեան համար կարևոր երևույթներ են.

Ղարաբաղի բարբառում *բայական բոլոր ձևերի բացասականը կազմվում է ավելացնելով նախադաս չ մասնիկը կամ վերջադաս վրէչ. օրինակ՝*

կարըմ չըմ, կարըմ չըս, կարըմ չի, չսիրէցէ, սիրէցէ վրէչ, կրըլնկան չըմ, կարալ չըմ, կրըլնցուք չըմ ըլալ, կարած չըպիտի պիտիր, չըմ թակի, թող չկարէ, թող կարէ վրէչ, իմնըվաս չի, ըրէվաս վրէչ, չենք քաշէլ, լվանալ չըմ, խրանվէմ վրէչ, տամ չի և այլն:

Արգելականը կազմվում է անևրևույթի վրա դնելով եզակիի համար մըի՛ր ((մի՛), իսկ հոգնակիի համար մըիք (մի՛-ք). *այսպես՝*

կյօռալ մըէր «մի՛ գոռար», սիրէլ մըէք «մի՛ սիրէք», մըռանալ մըէր, մըռանալ մըէք, կդնըվիլ մըէր, քլինալ մըէք և այլն:

Երևանի բարբառում *բացասական մասնիկը կարող է բայից թե առաջ դրվել և թե վերջը. օրինակ՝*

չէմ ուզում	կամ	ուզում չեմ
չի ուզում	»	ուզում չի
չէմ ուզիլ	»	ուզիլ չէմ
չսիրէցի	»	սիրէցի վոչ

Արգելականը կարելի է կազմել երեք ձևով.

մի՛ սիրի,	մի՛ սիրա,	մի՛ սիրիլ
մէ՛ք սիրիլ	սիրիլ մէ՛ք:	

Նոր Բայազետի *բարբառում բացասականը կազմելիս էական բայը կրկնվում է, բայց բացասականը միայն մի անգամ է դրվում. օրինակ՝*

չեմ բ'երում ես, չի ուզում ա, չենք ուզում ենք, չէր ուզում իր, չէր խօսում էր և այլն:

Տիգրանակերտում ապառնիի մեջ բացասականը կազմվում է չը՛ մըն (չպիտի) ավելացնելով բայի վրա. օրինակ՝

չը՛ մըն ուզիմ	չը՛ մըն ուզէի
«չպիտի ուզեմ	չպիտի ուզեի»:

Խարբերդի բարբառում *բացասական ապառնիի մեջ պիտի մասնիկի պ ձայնը դառնում է վ. այսպես՝ չըվդի սիրիմ, չըվդի սիրէի «չպիտի սիրեմ, չպիտի սիրէի» և այլն: Իսկ չպիտի սիրիմ կամ սրա հակադիր ձևը՝ պիտի չսիրիմ դոյութիւն չունի:*

Տրապիզոնի բարբառում *բացասականի ժամանակ էական բայի հետ դերբայն էլ է խոնարհվում. ինչպես՝*

չիմ քամ «չեմ գալիս»
չիմ ուզիմ «չեմ ուզում»
չինք բանէցունինք «չենք բանեցնում»:

Բացասականը կարող է թե առաջ դրվել և թե հետո. ինչպես՝

չիս գրիր կամ գրիր չիս «չես գրել»:

Էական բայը կրկնվում է՝ ինչպես Բայազետի բարբառում. ինչպես՝

չինք իմացիր ինք «չենք իմացել»:

Սեբաստիայի մոտ Բրգնիկ գյուղի բարբառով *բացասականի մեջ էական բայի ե ձայնավորը դառնում է ու. ինչպես՝*

չում ճօշնար «չեմ ճանաչում, չեմ ճանչնար»:

Կեսարիայի բարբառով *սահմանական ներկայի բացասականը ներկայացնում է Նոր-Նախիջևանի բացասականի հինգերորդ ձևի նախնական վիճակը. այսպես՝*

չեմ	սիրեմ	չենք	սիրենք
չես	սիրես	չէք	սիրէք
չի	սիրէ	չեն	սիրեն

Կա նաև մի երկրորդ ձև, որ կազմվում է գամ բայով. ինչպես՝

Իհու չի գաս խօսըս «ինչո՞ւ չես խոսում»
Իհու չի գա ուգա «ինչո՞ւ չի գալիս»։

Արգելականը կազմվում է մը՛ (ձայնավորի մոտ մ) մասնիկով, իսկ բայը զրկվում է ը վերջավորութիւնից. ինչպես՝

մը՛ սիրէ, մը՛ խօսը, մը՛ գօղնա, մուգա «մի ուզի», մերթա «մի երթա»։

(Ալպոյաճյան, Պատմ. հայ կես. Բ 1665)։

Եթե ամփոփենք բարբառների ներկայացրած բոլոր երևույթները, կտեսնենք, որ բացառականը միջին հայերենի շարունակութիւնն է։ Ջնջված է միայն սահմանական ներկայի և անկատարի ի նախդիրը և անորոշ դերբայի վերջածայն լ դարձել է ը. այսպես՝

չեմ ի լոսել>չեմ լոսեր
չեմ ի լոսվիլ>չեմ լոսվիր
չէի ի լոսել>չէի լոսեր
չէի ի լոսվիլ>չէի լոսվիր

Մնացյալ նորութիւններից հետաքրքիր են՝

1) Ա՛յն որ բացառականը կարող է դրվել բայից հետո ո՛չ ձևով։

2) Արգելական մի՛ ստանում է եզակիում նաև մը, մ՛ կրճատ ձևերը, ինչ որ նշանակում է, թե նա համարվում է զուտ մասնիկ և ոչ բառիկ։ Մի՛ բառի այս ձևափոխութիւնը իր հավասարն ունի կը (կու) բառի ձևափոխութեան մեջ։

3) Մի՛ ստանում է մի՛ը ձևը, որի վերջածայն ը ուրիշ բան չէ, եթե ոչ մի՛ սիրեր ձևի վերջածայնը՝ փոխադրված մակրայի վրա։

4) Հոգնակի արգելականում մի՛ դառնում է մի՛ք. սրա վերջածայն ք ուրիշ բան չէ, եթե ոչ մի՛ սիրեք ձևի վերջածայնը՝ փոխադրված մակրայի վրա, ըստ այսմ մի՛ք ձևը մի՛ մակրայի հոգնակին է!

5) Տեղ-տեղ այս մի՛ք ձևը դառնում է մէ՛ք. այս էլ կազմված է նմանութեամբ հատատական հրամայականի -է՛ք վերջավորութեան։

6) Հետաքրքիր է մի՛ մակրայի հետադիր գործածութիւնը, որ նմանութեան է ո՛չ ձևի հետադիր գործածութեան. այսպես՝

բերես ոչ—բերիլ մի։

7) Վերջապես ամենից հետաքրքիրն այն է, որ բայի արգելական ձևը կարող է ջնջվել և նրա տեղ գործածվել զուտ հրամայականը. ինչպես՝

տուր—մի տուր, առ—մի առ, բեր—մի բեր և այլն։

8) Սրանց նմանութեամբ նաև հոգնակի արգելականը. ինչպես՝

տուէք—մի տուէք
ասացէք—մի ասացէք
գնացէք—մի գնացէք
իջէք—մի իջէք.

փոխանակ ասելու մի տաք, մի ասէք, մի գնաք, մի իջնէք և այլն։

Այս ձևերը ոմանք արևելյան գրականութիւն էլ գործ են ածում, ինչ որ խոտելի է։ Կանոնավոր է միայն՝

բերէք—մի բերէք, ածէք—մի ածէք,

որոնք և պատճառ են եղել իրենց նմանութեամբ մյուս անկանոն ձևերի էլ կազմութեան։

Բացառականը արևմտյան գրականում միջին հայերենի ձևով է։ Սառարացական ներկան ու անկատարը, սահմանականի կատարյալը և բոլոր տեսակի դերբայները իրենց բացառականը կազմում են առանձնակի չ մասնիկը. ինչպես՝

չլսեմ, չլսէի, չլսեցի, չլսել, չլսած, չլսելու, չլսելիք, չլսող։

Դիտ.— Այս չ մասնիկը 6 ձև ուներ գրաբարի մեջ և ունի մինչև այժմ էլ.

1) Ոմանք ամեն դեպքում դնում են պարզապես չ. ինչպես վերի օրինակների մեջ։

2) Ոմանք ամեն դեպքում դնում են ապաթարց. ինչպես՝ չ'լսեցի, չ'լսած, չ'եմ լսած և այլն։

3) Ոմանք ապաթարցը դնում են միայն այն դեպքում, երբ հաջորդ բայը սկսվում է ձայնավորով. ինչպես՝ չ'ունիմ, չ'երթամ և այլն։

4) Ոմանք գրում են չը անբաժան բառից կամ բայից. ինչպես՝ չըսիրեցի, չըլսեց, չըտես և այլն։

3) Ոմանք գրում են չը՝ բայից անջատ ձևով. ինչպես՝ չըլսեց, չը սիրեցի և այլն։

4) Ոմանք էլ գրում են չ՝ բայից բաժանված ձևով։ Այսպես ենք տեսնում վերջերս Երևանում, հայտարարութիւնների մեջ. ինչպես՝ Չ ծխել, Չ աղմկել, Չ խոսել։ Այս ձևը բոլորովին խոտելի է և առաջանում է ռուսերենի կապական նմանութիւնից։ Ռուսերենի մեջ գրվում է Не курить! *և այստեղ* не *իրավամբ պետք է գրվի անջատ, քան որում առանձին բառ է։ Բայց հայերենում չ (առանց ձայնավորի և միայն մի բաղաձայնով) բառ չէ, այլ մասնիկ։ Ուստի անհնար է անջատել բայից։*

«Ոչ» նշանակող բառը անջատ թեև միացած գրելու հարցը դրդուցրել է նաև ուրիշ լեզուներ. պարսկերենում не *մասնիկը կարելի է գրել ձայնավորով և անջատ, բայց նաև առանց ձայնավորի և միացյալ։ Եվրոպական բոլոր լեզուներում անջատ է գրվում։ Ռուսերենում երբ մասնիկ է, գրվում է բառի հետ միացած. ինչպես՝*

некрасивый *տգեղ*
недовольный *դժգոհ*

իսկ երբ մակրայ է՝ առանձին. ինչպես՝

не хочу *չեմ ուզում։*

Չեխերենում, վերջին դեպքում, ne նույնպես մասնիկ համարելով՝ գրում են կցված բայիս. ինչպես՝

nejsem *չեմ,* nebudu *չպիտի լինեմ։*

Հայերենի մեջ սխալ է նաև դնել ապաթարցը, որովհետև ապաթարցը որևէ ձայնավորի ջնջման իբրև փոխարինութիւն է դրվում. իսկ այստեղ ոչ մի ջնջված տառ չկա և հետևաբար ապաթարցն էլ ավելորդ է։ Միայն մի դեպքում ապաթարցը անհրաժեշտ է և այն էլ միայն արևմտյան գրականում, ինչ որ ցույց կտանք հետո։

Լավագույն գրողների ընդունած ձևն է չ առանց ապաթարցի և բառից ու բայից անբաժան։

Սահմանական եղանակի ներկայի և անկատարի բացասականը կազմվում է էական բայի բացասականով, որին կցում ենք ավյալ բայի անորոշ դերբայը, միայն սրա վերջածայն լ փոխելով դ. օրինակ՝

չեմ լսեր, չէի լսեր
չեմ խոսեր, չէի կարդար
չեմ պագներ, չէի պագներ և այլն։

Արևմտյան գրականում (ինչպես և Պոլսի բարբառում) Ա լծորդության բացասականի ներկան և անկատարը շփոթվում են հարակատարի և գերակատարի բացասականի հետ. մինչդեռ արևելյան գրականում նման երևույթ չկա. այսպես՝

արևմտ.	*չեմ սիրեր*	*չէի սիրեր*
արևել.	*չեմ սիրում*	*չէի սիրում*
	չեմ սիրել	*չէի սիրել*

Այս շփոթութիւնից խուսափելու համար է, որ երբ ներկա կամ անկատար է, օժանդակը նախադաս է լինում, իսկ երբ հարակատար կամ գերակատար է օժանդակը հետադաս է, օրինակ՝

Դեռևս առաջին առաքեալները չընդուներ էր (չէր ընդունել), Անիծեալն, թրգմ. Մամուրյան, Զմյուռնիա, 1875, հատ. Ա, էջ 22)։ Այսպես նաև՝ Արքեպիսկոպոսը չուզեր էր երէցին առնը բան մ'ուտել (անդ, հատ. Բ, էջ 115)։

Չեր ընդուներ պիտի նշանակէր «չէր ընդունում»։ Բայց ընդհանրապես օժանդակը ապատ է թե նախադաս և թե հետադաս լինելու. ինչպես՝

Այն ապաշխարութիւնները զոր չկրցեր էր գտնել (չէր կարողացել. անդ, հատ. Ա, էջ 67)։

Եմ, կամ, ունիմ պակասավոր բայերը չունենալով անորոշ դերբայ, իրենց ներկայի և անկատարի բացասականը կազմում են պարզապես չ մասնիկով. ինչպես՝ չեմ, չկամ, չունեմ, չէի, չկայի, չունէի և այլն։ Միայն կրնամ բայը ունի իր բացասականը. ինչպես՝ չեմ կրնար, չես կրնար, չէի կրնար և այլն։

Գիտեմ պակասավոր բայի ներկայի ու անկատարի բացասականն էլ լինում է բուն օրինի չգիտեմ, չգիտէի։ Այս ձևերը, որ սովորական են արևելյան գրականում, սովորական էին նաև արևմտյան գրականում, բայց այժմ անսովոր են համարվում և նրանց տեղ գործածվում են չեմ գիտեր, չէի գիտեր։

Հրամայականի բացասականը, որ կոչվում է արգելական, կազմվում է մի՛ մակրայով, որին կցվում է եզակի Բ դեմքում բայի անորոշ դերբայը (լ վերջածայնը փոխելով ր), իսկ հոգնակի Բ դեմքում սառրագասական ներկայի Բ դեմքը, ինչպես՝

մի լսեր, մի լսէք
մի խօսիր, մի խօսիք
մի պագներ, մի պագնէք։

Այս մի՛ բառը միշտ առանում է շեշտ, զանազանելու համար մի «մեկ» թվականից, և գրական լեզվի մեջ երբեք չի կրճատվում։ Կրճատված մ՛ ձևը միայն բարբառային է։

Բ յոթդուբլյան սահմանական անկատարի բացասականը կազմելու ժամանակ -իր վերջավորությունը դառնում է -եր. ինչպես՝ չէի սորվեր, չէիր խօսեր, չէր հագներ (փոխանակ ասելու չէի սորվիր, չէիր խոսիր, չէր հագնիր և այլն)։ Այսպես են հատկապես կրավորական բայերը, որոնք բոլորը պատկանում են Բ յոթդուբլյան. ինչպես՝ չէր լսուեր, չէիր մոռցուեր, չէին կարդացուեր և այլն։

Ոմանք գամ, լամ, ամամ միավանկ բայերի ներկայի և անկատարի բացասականը կազմելու ժամանակ օժանդակի և բայի միջև դնում են ի. ինչպես՝ չեմ ի գար, չես ի գար, չեմ ի տար, չեմ ի լար, չէր ի տար և այլն։ Այս ձևը ժողովրդական է և գոնվում է Պոլսի բարբառում։ Գրականի մեջ գործածությունը շատ ախորժելի չէ։ Ավելի լավ է բուն սովորականին ասել չեմ գար, չեմ տար, չեի լար և այլն։

Արևելյան գրականում *բացասականի կազմությունը մասամբ տարբերվում է արևմտյանից։ Այստեղ էլ ստորադասական ներկան ու անկատարը, սահմանական կատարյալը և բոլոր տեսակի դերբայները բացասական են դառնում առանալով չ մասնիկը։*

Սահմանական ներկան և անկատարը կազմվում են ոչ թե միջին հայերենի ձևով, այլ -ում դերբայով. ինչպես՝ չեմ սիրում, չէի սիրում և այլն։

Կրնալ *բայը գոյություն չունի արևելյան գրականում, այլ ասվում է կարողանալ, որով չեմ կարողանում, չէի կարողանում, չկարողանալ և այլն։*

Արդիականի բացասականը թեև կարող է արևմտահայ գրականի նման լինել ը վերջավորությամբ, բայց ավելի սովորականն է ւ վերջաձայնով, որ կարող է և ջնջվել՝ համաձայն ժողովրդական բարբառների։ Այս դեպքում վերջավորության ե ձայնավորը դառնում է ի. ինչպես՝ մի կարդալ, մի զարմանալ, մի գրիլ, մի փախչիլ կամ մի կարդա(լ), մի զարմանա(լ), մի գրի, մի փախչի և այլն։— Հոդնակի Բ դեմքը նույն է արևմտյան ձևի հետ։

Ապառնիի երկրորդ ձևի ներկայի և անցյալի բացասականը կազմվում է էական բայով և ավյալ բայի անորոշ դերբայով, որի ւ վերջաձայնը կարող է ջնջվել։ Այստեղ էլ վերջավորության ե ձայնավորը դառնում է ի։

Պիտի ձևով ապառնիի բացասականը կազմվում է չ մասնիկով, որ թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրականում կարող է դրվել թե՛ պիտի բառի վրա և թե՛ բայի վրա. ինչպես՝ չպիտի բերէի, չպիտի բերեմ կամ պիտի չբերեմ, պիտի չբերէի։ (Թե՛ Արեղյան, Աշխ. քեր., 1906, էջ 132 և թե՛ Գազանճյան, Նոր քեր., 1910, էջ 189, ասում են, թե ավելի սովորական և նախընտրելի է դնել չ բայի վրա։ Իմ կարծիքով հակառակը ավելի սովորական և հաճելի է)։

Բաղադրյալ ձևերի ահագին բազմությունը կազմում են իրենց բացասականը նույնպես չ մասնիկով, որ կարող է դրվել թե՛ էական բայի վրա և թե՛ դերբայի վրա. ինչպես՝ ասելու չեմ, չեմ ասելու, չեմ բերած, բերած չեմ, չբերած եմ, բերած չպիտի ըլլամ, բերած պիտի չըլլամ, ասած չլինիմ, չասած լինիմ և այլն։— Բարդ հրամայականի իրեղ մասնիկը չի կարող վերցնել չ բացասական, ինչպես՝ իրեղ չսիրե, իրեղ չերթայ, բայց ոչ երբեք չիրեղ սիրե։

Որովհետև շեշտյալ բառի մոտ էական բայը նախադաս է լինում արևելյան հայերենում և բացասականի մասնիկը (ոչ>չ) շեշտյալ է համարվում, ուստի բոլոր բաղադրյալ ձևերի մեջ ավելի ընդունելի են նրանք, որոնց մեջ էականը նախադաս է։ Այսպես՝ չեմ բերելու, չեմ բերիլ, չեմ տեսած, քան թե բերելու չեմ, բերիլ չեմ, տեսած չեմ։ Նույնիսկ կարելի է ասել բերում չեմ, բայց ավելի սովորական է չեմ բերում։

Այս դեպքում բացասական օժանդակի և բայի միջև կարող է նաև մի ուրիշ հարակից բառ էլ մտնել. ինչպես՝ չեմ ցույց տալիս, չեմ բաց անում, չեմ մահ գալիս, բայց նաև ցույց չեմ տալիս, բաց չեմ անում, մահ չեմ գալիս և այլն։

Միավանկ գալ, տալ, լալ բայերի սահմանական ներկան և անկատարը, երբ բացասական օժանդակից հետագաս լինեն, կարող են կորցնել իրենց ա վերջաձայնը. ինչպես՝ չեմ տալի, չեմ գալի, չեմ լալի։ Բայց սա ժողովրդական ձև է և մաքուր գրականի մեջ խոտելի։

Բաղադրյալ ձևերի բացասականի սահմանական ներկան կազմվում է էական բայի հարադրությամբ, բայց ազակի Գ դեմքում, փոխանակ չէ ձևի, դրվում է չի՝ թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրա-

կանում. ինչպես՝ չի բերում=չի բերեր, չի կարդում=չի կարդար: (Այս չի-ն ուրիշ բան չէ, եթե ոչ միջին հայերենի չէ ի ձևի միացումը):

Դնում ենք բացատական բայերի խոնարհման համեմատական պատկերը՝ թե արևելյան և թե արևմտյան դրականում:

Եակաճ բայ

(երկու բարբառներն էլ նույն ձևով)

ներկա	անկատար
չեմ	*չէի*
չես	*չէիր*
չէ	*չէր*
չենք	*չէինք*
չէք	*չէիք*
չեն	*չէին*

Ա. յծորդություն

(ա տիպար)

սահմանական ներկա

չեմ	*սիրեր*	*չեմ*	*սիրում*
չես	*սիրեր*	*չես*	*սիրում*
չի	*սիրեր*	*չի*	*սիրում*
չենք	*սիրեր*	*չենք*	*սիրում*
չէք	*սիրեր*	*չէք*	*սիրում*
չեն	*սիրեր*	*չեն*	*սիրում*

անկատար

չէի	*սիրեր*	*չէի*	*սիրում*
չէիր	*սիրեր*	*չէիր*	*սիրում*
չէր	*սիրեր*	*չէր*	*սիրում*
չէինք	*սիրեր*	*չէինք*	*սիրում*
չէիք	*սիրեր*	*չէիք*	*սիրում*
չէին	*սիրեր*	*չէին*	*սիրում*

կատարյալ *(նույն է)*

չսիրեցի	*չսիրեցինք*
չսիրեցիր	*չսիրեցիք*
չսիրեց	*չսիրեցին*

ապառնի Ա

չպիտի սիրեմ	*չպիտի սիրէի*
չպիտի սիրես	*չպիտի սիրէիր*
չպիտի սիրէ(ի)	*չպիտի սիրէր*
չպիտի սիրենք	*չպիտի սիրէինք*
չպիտի սիրէք	*չպիտի սիրէիք*
չպիտի սիրեն	*չպիտի սիրէին*

ապառնի Բ

չեմ	*սիրեր*	*չեմ*	*սիրի(լ)*
չես	*սիրեր*	*չես*	*սիրի(լ)*
չի	*սիրեր*	*չի*	*սիրի(լ)*
չենք	*սիրեր*	*չենք*	*սիրի(լ)*
չէք	*սիրեր*	*չէք*	*սիրի(լ)*
չեն	*սիրեր*	*չեն*	*սիրի(լ)*

ապառնի Գ *(միատեսակ)*

չեմ	*սիրելու*	*կամ*	*սիրելու*	*չեմ*
չես	*սիրելու*		*սիրելու*	*չես*
չի	*սիրելու*		*սիրելու*	*չէ*
չենք	*սիրելու*		*սիրելու*	*չենք*
չէք	*սիրելու*		*սիրելու*	*չէք*
չեն	*սիրելու*		*սիրելու*	*չեն*

անցյալ *(միատեսակ)*

չէի	*սիրելու*	*կամ*	*սիրելու*	*չէի*
չէիր	*սիրելու*		*սիրելու*	*չէիր*
չէր	*սիրելու*		*սիրելու*	*չէր*
չէինք	*սիրելու*		*սիրելու*	*չէինք*
չէիք	*սիրելու*		*սիրելու*	*չէիք*
չէին	*սիրելու*		*սիրելու*	*չէին*

անցյալ Բ

չէի	*սիրեր*	*չէի*	*սիրի(լ)*
չէիր	*սիրեր*	*չէիր*	*սիրի(լ)*
չէր	*սիրեր*	*չէր*	*սիրի(լ)*
չէինք	*սիրեր*	*չէինք*	*սիրի(լ)*
չէիք	*սիրեր*	*չէիք*	*սիրի(լ)*
չէին	*սիրեր*	*չէին*	*սիրի(լ)*

ապոր. ներկա անց. *(միաառնակ)*

չսիրեմ	*չսիրէի*
չսիրես	*չսիրէիր*
չսիրէ(ի)	*չսիրէր*
չսիրենք	*չսիրէինք*
չսիրէք	*չսիրէիք*
չսիրեն	*չսիրէին*

հրամայական

մի սիրեր	*մի սիրի(ւ)*
մի սիրէք	*մի սիրէք*

դերբայ *(միաառնակ)*

չսիրել
չսիրող
չսիրած
չսիրելու, չսիրելիք

Կրավորական բայ *(սիրուիլ=սիրուել)*

սահմանական ներկա

չեմ	*սիրուիր*	*չեմ*	*սիրվում*
չես	*սիրուիր*	*չես*	*սիրվում*
չի	*սիրուիր*	*չի*	*սիրվում*
չենք	*սիրուիր*	*չենք*	*սիրվում*
չէք	*սիրուիր*	*չէք*	*սիրվում*
չեն	*սիրուիր*	*չեն*	*սիրվում*

անկատար

չէի	*սիրուեր*	*չէի*	*սիրվում*
չէիր	*սիրուեր*	*չէիր*	*սիրվում*
չէր	*սիրուեր*	*չէր*	*սիրվում*
չէինք	*սիրուեր*	*չէինք*	*սիրվում*
չէիք	*սիրուեր*	*չէիք*	*սիրվում*
չէին	*սիրուեր*	*չէին*	*սիրվում*

կատարյալ

չսիրուեցայ	*չսիրվեցի*
չսիրուեցար	*չսիրվեցիր*

չսիրուեցաւ	*չսիրվեց*
չսիրուեցանք	*չսիրվեցինք*
չսիրուեցաք	*չսիրվեցիք*
չսիրուեցան	*չսիրվեցին*

ապառնի

չպիտի սիրուիմ	*չպիտի սիրվիմ*
չպիտի սիրուիս	*չպիտի սիրվես*
չպիտի սիրուի	*չպիտի սիրվի*
չպիտի սիրուինք	*չպիտի սիրվենք*
չպիտի սիրուիք	*չպիտի սիրվէք*
չպիտի սիրուին	*չպիտի սիրվեն*

անցյալ *(միաառնակ)*

չպիտի սիրուէի	*չպիտի սիրվէինք*
չպիտի սիրուէիր	*չպիտի սիրվէիք*
չպիտի սիրուէր	*չպիտի սիրվէին*

անցյալ Բ

չեմ	*սիրուիր*	*չեմ*	*սիրվի(ւ)*
չես	*սիրուիր*	*չես*	*սիրվի(ւ)*
չի	*սիրուիր*	*չի*	*սիրվի(ւ)*
չենք	*սիրուիր*	*չենք*	*սիրվի(ւ)*
չէք	*սիրուիր*	*չէք*	*սիրվի(ւ)*
չեն	*սիրուիր*	*չեն*	*սիրվի(ւ)*

անցյալ Գ *(միաառնակ)*

չեմ	*սիրուելու*	*սիրվելու չեմ*
չես	*սիրուելու*	*սիրվելու չես*
չի	*սիրուելու*	*սիրվելու չէ*
չենք	*սիրուելու*	*սիրվելու չենք*
չէք	*սիրուելու*	*սիրվելու չէք*
չեն	*սիրուելու*	*սիրվելու չեն*

անցյալ *(միաառնակ)*

չէի	*սիրուելու*	*կամ սիրվելու չէի*	
չէիր	*սիրուելու*	*սիրվելու չէիր*	

չէր	սիրուելու	սիրվելու չէր
չէինք	սիրուելու	սիրվելու չէինք
չէիք	սիրուելու	սիրվելու չէիք
չէին	սիրուելու	սիրվելու չէին

անցյալ Բ

չէի	սիրուեր	չէի	սիրվի(ւ)
չէիր	սիրուեր	չէիր	սիրվի(ւ)
չէր	սիրուեր	չէր	սիրվի(ւ)
չէինք	սիրուեր	չէինք	սիրվի(ւ)
չէիք	սիրուեր	չէիք	սիրվի(ւ)
չէին	սիրուեր	չէին	սիրվի(ւ)

սաոր. ներկա

չսիրուիմ	չսիրվիմ
չսիրուիս	չսիրվիս
չսիրուի	չսիրվի
չսիրուինք	չսիրվինք
չսիրուիք	չսիրվիք
չսիրուին	չսիրվին

սաոր. անց. *(միաուեակ)*

չսիրուէի	չսիրվէինք
չսիրուէիր	չսիրվէիք
չսիրուէր	չսիրվէին

հրամայական

մի սիրուիր	մի սիրվի(ւ), մի սիրվիր
մի սիրուիք	մի սիրվէք

դերբայ

չսիրուիլ			չսիրվիլ
չսիրուող,	չսիրուած,	չսիրուելու,	չսիրուելիք

Երբ բայը ձայնավորով է սկսվում, սահմանական ներկա եզակի Գ դեմքի մեջ չի օժանդակի ի ձայնավորը սղվում է և նրա փոխարեն դրվում է ապաթարց։ Այս երևույթը հատուկ է միայն արևմտյան գրականին, իսկ արևելյան գրականը ի ձայնավորը պա-

հում է։ Օրինակ՝ չեմ ուտեր, չես ուտեր, չ'ուտեր, որ արևելյան գրականով լինում է չեմ ուտում, չես ուտում, չի ուտում։

Այսպես նաև չ'առներ, չ'իմանար, չ'ընդունիր=չի առնում, չի իմանում, չի ընդունում։

Միայն այս դեպքումն է, որ ապաթարցը անհրաժեշտ է չ-ից հետո (միայն արևմտյան գրականում)։ Արևմտահայ լավ գրողները հատկապես ուշադիր են լինում այս կետին։ Մինչդեռ անփութ գրողները ոչ միայն ապաթարցը չեն դնում հաճախ, այլև հաճախ գրում են չառնեի, չուտեր և այլն, ինչ որ բոլորովին տարբեր բան է։ Հնչմամբ նույն են չ'ուտեր և չուտեր, բայց առաջինը սահմանական ներկա եզակի Գ դեմքն է, որ համապատասխանում է արևելյան գրական չի ուտում ձևին, երկրորդը սաորադասական անկատարի եզակի Գ դեմքն է, որ համապատասխանում է արևելյան գրական չուտեր ձևին։ Ժողովրդական լեզվում այս երկուսը դանազանվում են շեշտով. առաջինի մեջ շեշտը գտնվում է առաջին վանկի վրա (չ'ուտեր «չի ուտում»), երկրորդի մեջ շեշտը վերջին վանկի վրա է (չուտէր «չուտէր»)։

Ավելի մեծ է սխալը այն դեպքում, երբ անցյալ դերբայը (-եր) շփոթելով անկատարի հետ (-եր), գրում են չէի սիրէր, չէիր գրէր, չէր լսեր, փոխանակ չէի սիրեր, չէիր գրեր, չէր լսեր։

5. ՀԱՐՑԱԿԱՆ ԹԱՑ

Ըստ երևույթի հարցականը մի շատ հատարակ քերականական ձև է, որ մեր մեջ արտահայտվում է ձայնի բարձրացումով միայն.

ուտում եմ—ուտո՞ւմ եմ

Բայց նա էլ ունի իր տեսակները և նրբութիւնները։

Ամբարեան լեզվի մեջ (Կովկասյան լեզվաբնից) 3 տեսակ հարցական կա. առաջինը սովորական ձևն է, որ կազմվում է -jš վերջադիր մասնիկով։ Երկրորդն է առկախ հարցական (թե արդյոք է՞)։ Կազմվում է -iš-li հետադիր մասնիկով։ Երրորդն է անհրաժեշտ հարցական, որին պատասխան չպիտի տրվի. կազմվում է վերջահար -da մասնիկով (Dirr. Einf. 172—7)։

Ջինարեանում կա երկու տեսակ հարցական. բուն առաջին ձևի նախադասութեան վերջում դնում են mŏ, որ համապատասխանում է տաճկահայոց մի հարցական մասնիկին. ինչպես՝

šan¹ ka'o¹ mo
սարը բարձր(է) մի՞

čĕ⁴ko lu⁴ čang² mo
այս ճամբան երկա՞ր (է) մի՞

Երկրորդ ձևով հարցական կազմելու համար գրական բայը կրկնում են բացասականով. ուրիշ խոսքով կրկնում են բայը, երկուսի միջև դնելով pu⁴ *բացասական կազմող բառը. ինչպես՝*

t'a¹ nəŋ² pu⁴ nəŋ
Նա կարենա ոչ կարենա

իբր թե «նա կարո՞ղ է թե չի կարող», բայց նշանակում է «նա կարո՞ղ է»։

Աննամերեն լեզվումն էլ հարցական կազմելու համար նախադասության վերջում դնում են «ոչ, չ» բացասականը, որի ամբողջական ձևն է k'oŋ, *բայց հաճախական գործածության մեջ մաշվելով՝ դարձել է* k'ŋ, *ուր լսում է միայն ŋ ընդգլինը։*

Բացասականի միջոցով հարցական կազմելու այս ձևը առաջացել է աննամերենի մեջ չինարենի հարցականի երկրորդ ձևի նմանության համար։

Բացասականի և հարցականի կապը ցույց տալու համար հիշենք այն հեգնական հարցականը, որով՝ ինչպես հայերենի, նույնպես և աննամերենի մեջ բացասականն է արտահայտված. ինչպես՝

— Կերա՞լ ես։
— Ո՞վ է կերել (=չեմ կերել)։
— Պակասում է։
— Ի՞նչ է պակասում (=ոչինչ չի պակասում)։

Ամերիկյան բեռլա կամ տուկանո լեզվի մեջ հարցականը կազմվում է վերջնահար -ro *մասնիկով, որի ծագումը հայտնի չէ. օրինակ՝* rayke-ro? *եկե՞լ ես,* saháke-ro *տարե՞լ ես,* egake-ro *ուզո՞ւմ եք* (MSL 19, 94)։

Լաղերենում հարցականը կազմում են բայի ծայրին դնելով i *մասնիկը. ինչպես՝ ճարամխոնի «պիտի գրե՞ս», si rei «դու՞ես», ճարի, «գրեցի՞ր»* (Adjarian, Etude sur la langue laze, 91)։

Ամերիկյան մայա լեզվի մեջ հարցական կազմելու համար բայից հետո կարելի է դնել wa, *որի իմաստն է* by chance *«պատահարար» կամ* perhaps *«թերևս». ինչպես՝*

onqot-n-ah- eč-na „did you dance?"
t-a-puč-ah-wa „did you strike him?"
(Tozzer, 94)

Ամերիկյան չիբչա լեզվի մեջ հարցական կազմելու համար վերջում դնում են ua, *որ էական բայի հարցականն է. ինչպես՝*

abquyua „ha hecho?"
abquyngaua „harálo hacer?"
(Uricoechea, 43)

Հնդկական նագա լեզվի մեջ նախադասությունը հարցական դարձնելու համար վերջում դնում են gā, ro, mà *մասնիկները։*
(Grierson III, *մ.* II, *էջ 214)*

Ամերիկյան այմարա լեզվով հարցական կազմելու համար ավելացնում են ti *մասնիկը (պատահարար նման Համշենի բարբառի* թէ? *ձևին). օրինակ՝*

acan uxta-ti? *այստե՞ղ ես բնակվում.*

կամ շեշտյալ ձևով՝

acan-ti utx-ta? *այստե՞ղ ես բնակվում։*
(Middendorf, 91)

Բերբերական կաբիլերեն լեզվով հարցական կազմելու համար բայի վրա դնում են kera. *ինչպես՝*

thesenedh kera? *գիտե՞ս*
inna kera? *ասա՞ց*
illa kera? *կա՞։*
(Hanoteau, 172)

Նույն ընտանիքից բերբերական տամաշեկ լեզվում հարցական կազմելու համար բայից կամ նախադասությունից հետո դնում են mir. *օրինակ՝*

tessaned Tamahek mir?
գիտե՞ս տամաշեկերեն?
(Hanoteau, 87)

Աֆրիկյան մինխանկա լեզվով թեև շեշտի պարզ բարձրացումը բավական է հարցականի համար, բայց հաճախ նախադասության վերջում դնում են la? *որ նշանակում է «այնպես չէ՞»։*
(Chéron, 48)

Եթովպական կունամա լեզվում հարցական կազմելու համար

բայի վերջում ավելացնում են -be, *իսկ հարցական բացասական կազմելու համար* -immi-be «չէ՞ որ, չէ՞»։

(Reinisch, 28—29)

Բիրմաներենում հարցական կազմելու ամենաառոտ ձևն է նախադասության ծայրին դնել la? *մասնիկը. ինչպես՝*

t'ameng ça byī la?
ընթրիքը կեր-ա՞ք

Բայց կան նաև ուրիշ մասնիկներ, որոնք քիչ գործածական են. lai, lī dun, çeng, çan, lau, nī, ra

(Latter, 147)

Տիբեթական սիկկիմ-բհուտիա լեզվով հարցականի մասնիկն է bo *կամ* mo (Sandberg, 46)։

Սրա նման է Թուրքական դագախերին լեզուն, որ հարցականի համար դնում է ma, me *մասնիկը և որ տակալն կարող է դառնալ նաև* ba, be.

(Шонанов, 21)

Քամյան ածար լեզվով թեև հարցական կազմելու համար առանձին բարձրացումը բավական է, բայց կարելի է նաև դնել māhā *բառը և կամ հարցական բառի սկզբին ավելացնել* tū *մասնիկը. ինչպես՝*

ta'ļiga *գիտես—* taļiga? *(շեշտը երկրորդ վանկի վրա) գիտե՞ս կամ թե* tū-ta'ļiga? *գիտե՞ս։*

(Colizza, 5)

Ամերիկյան սիլլամակ լեզվում հարցականի համար դնում են hi *կամ* ki *մասնիկը. ինչպես՝*

da gata-vuc hi? *ով եք դուք*
da tan hi? *մեծ բան է*
qit hi ła ts-yau? „now is it about cooked?

(Edel, 42)

Թալ—Սիամ խմբի քամոի լեզվով հարցական կազմելու համար նախադասության վերջում դնում են kē?

(Grierson, II, 148)

Տիբեթական լաքաբի բարբառում նախադասության մեջ եթե չկա հարցական բառ (ինչ, քանի՞, արդյո՞ք և այլն), հարցական

կազմելու համար բայի վերջում ավելացնում են a *ձայնավորը և նրանից առաջ դնված բաղաձայնը կրկնում են. ինչպես՝*

khyo-rang yong-in-na? *դուք պիտի գա՞ք։*

(Grierson, III, *մ. 1, էջ 59*)։

Բիրմանական լեպխա կամ ռոնգ լեզվով էլ հարցական կազմելու համար, եթե նախադասության մեջ հարցական բառ չկա, վերջում դնում են a. *ինչպես՝*

hó a-lom li-a „did you 'say so?"

(Grierson, III, *մ. 1, էջ 241*)

Հնդկական քաշմիրի լեզվով հարցական կազմելու համար բայի ծայրին դնում են a, *իսկ երբ խոսքը կնոջ մասին է՝* ay. *բացասականի համար բայի վերջում դրվում է* na. *իսկ հարցական բացասականի համար դրվում է* nā *(չէ՞), որ կանանց ուղղելիս կլինի* nay. *օրինակ՝*

čhusna *չեմ,* čhuna *չէ (նա).*
čhusnā *չե՞մ,* čhunā *չէ՞ նա (ար.),* čhunay *չէ՞ նէ (իգ.)։*

Խոսքը ավելի հաստատելու համար վերջում դրվում է ti *«իրոք».* čhusti *իրոք եմ,* čhuti *նա է իրոք, որոնց հարցականն էլ լինում է* čhustya *իրոք ե՞մ,* čhutya *իրոք է՞։ Վերջում դնելով* āsana, *կատացվի կասկած. օրինակ՝* čhwāsana *նա՞ է արդյոք։*

(Grierson. VIII, *մ. 2, էջ 284*)

Ալբանեերենում հարցական կազմելու համար խոսքի սկիզբը դնում են a. *բացասականի համար բայից առաջ դնում են* nuk, *որով հարցական-բացասական ձևը լինում է* a nuk? *օրինակ՝*

a nuk qe ti i kënaqur *«գոհ չեղա՞ր»։*

(Feizi, 52)

Մարոկկոյի բերբերական լեզվում հարցական կազմելու համար խոսքի սկիզբը դնում են is *մասնիկը, իսկ բացասականի համար* ul *կամ* ur. *օրինակ՝*

Is gires ša uḥam *ունե՞ վրան (չադիր).*
ul giri ulli *չունեմ ոչխար։*

(Laoust, 45—46)

Աֆրիկյան սարա լեզվում հարցական կազմելու համար բայի սկզբում դնում են ba *մասնիկը. ինչպես՝*

musa *ուռում եմ* ba musa *ուռմում եմ*
yusa *ուռում ես* ba yusa *ուռմում ես*
nusa *ուռում է* ba nusa *ուռմում է*

(Delafosse, 25)

Ամերիկյան մի քանի լեզուով հարցական կազմելու համար բայից հետո դրվում է a. *ինչպես՝*

häwatŏ-ni-kŏ a? *կարող են նրանք վազել։*

(Kroeber, 287)

Իր հարակից մի քանի լեզուով էլ հարցականը կազմվում է ha *մասնիկով. օրինակ՝*

main-mi-ha? *ով է.*
mis yaun-hā? *մոռանում ես, հիշում ես.*
tot mi yik-i-ha? *լավ զվարճացա՞ք։*

(անդ, 363)

Արաբերենում հարցականը կազմում են բայի սկիզբը դնելով hal *կամ* a *մասնիկը, որ համապատասխանում է մեր «արդյո՞ք» ձևին։ Բայց ժողովրդական արաբերենում հարցականը արտահայտվում է միայն տոնի բարձրացումով։*

(Belot, 29)

Հնդեվրոպական նախալեզվում էլ հարցականը կազմելու համար բավականանում էին միայն տոնի բարձրացումով, բայց տոնի բարձրացման աստիճանի և ձևի մասին ուրիշ բան չգիտենք։ Նույնը ժառանգեցին նաև բոլոր հին լեզուները՝ սանսկրիտ, հունարեն, լատիներեն և այլն։

Նոր եվրոպական լեզուներում հարցական կազմելու համար հնարվել է մի նոր ձև, որ է՝ դերանուն ենթական դնել բայից հետո. ինչպես՝

Ֆրանս. avez-vous?
Գերմ. haben Sie?
Անգլ. have you?
Իտալ. avete voi?

(Meillet, Ling. hist. II 105 *ասում է, թե լատիներենում այսպիսի ձև չկա. դրա հեղինակը գերմանացիք են, որոնցից անցել է մյուսներին և հատկապես ֆրանսերենին)։*

Գրաբարում, ինչպես նաև աշխարհաբարում և բարբառներում, հնդեվրոպական նախալեզվի և հին լեզուների նման հարցումը կատարվում է ձայնի պարզ բարձրացումով, որ իսկույն իջնում է։ Այսպես է թե դրական և թե բացասական բայի համար, ինչպես՝

Իցէ տեսեալ յորժամ հրդեհ զմեծամեծ տանց հարկանիցի (Ոսկ. Եփես.)։

Զիցէ արդեք տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ (Վեցօր.)։

Աշխ.— տեսար, չտեսար։

Այժմ անցնենք բարբառներին։

Նոր-Ջուղայի բարբառում հարցական կազմելու համար առանձին մասնիկ կամ դարձված չկա. շեշտի բարձրացումը բավական է կազմելու հարցականը։ Միայն բարբառներից եղած միակ տարբերությունը՝ որ աչքի է խփում, այն է, որ հարցականը դրվում է ոչ թե առանձնապես հարցնելու բառի վրա, այլ ամբողջ նախադասության վերջին բառի վրա. օրինակ՝ Սօր պըտի գ՛ոք մեր տո՞ւն «այսօր մեր տունը պիտի գնք» խոսքի մեջ հարցումը գա՞ք բայի վրա է, բայց Նոր-Ջուղայի բարբառը այդտեղ չի դնում հարցումը, այլ տուն բառի վրա։ Այս պատճառով էլ հարցումը շատ դորավոր չի լինում, այլ բառը տանում է մի փոքր երկարացում (՞)։

Իսկան բայով կազմված բարդ ժամանակների մեջ հարցականը կազմվում է մի քիչ տարբեր ձևով. նախ դերբայի վերջին վանկը տանում է մի բավական խոշոր երկարացում, որի վերջին կա ավելի բարձր մի շեշտ. նույն աստիճանի շեշտով էլ անցնում են էականին և շուռով կանգնում. այսպես՝ գ՛ոլմա՞՞ն ա՛ս. ասո՞ւո՞ւմ ա՛ս։ Հարցականի այս ձևը ճիշտ հակառակն է Դարաբաղի բարբառի հարցականին, ուր, ընդհակառակը, դերբայն է, որ տանում է կարճ ու բարձր շեշտը, իսկ էականը երկարում է. օրինակ՝ ասում ե՞ս։

Ագուլիսի բարբառումն էլ բայերի հարցականը կազմելու համար առանձին ձև չկա. շեշտի պարզ բարձրացումը բավական է դարձյալ բայը հարցական դարձնելու համար։ Սակայն շատ անգամ զարմանալի կերպով հարցումը դրվում է ոչ թե բայի, այլ դոյականի վրա. ինչպես՝ Ձեռս ըն ավէծ թո՞ չէ «Ձեռս ավազ են թե չէ». Ձալ ըք խմէծ «Թել խմե՞լ ես». Ձալ չիք խմէծ «Թել չե՞ք խմած»։ Հարցականի այս ձևը գտնում ենք նաև Դարաբաղի բարբառում։

Հարցականի այս տարբերությունը տալիս է նաև նշանակության տարբերություն. այսպես՝ օրինակ չայ խմի՞ծ ըք նշանակում է «առհասարակ ձեր կյանքում թել խմել եք». իսկ չա՞յ ըք խմեծ միայն խոսված բոպևի մասին է:

Մարաղայի բարբառում հարցական կազմելու համար առանձին մասնիկ կամ դարձված չկա. չկա նաև ինչ-ինչ արևելյան բարբառներում ընդունված շեշտի երկարացումը կամ հարցականի մի (տաճկ. mə, mi) մասնիկը, որ գոնում ենք Գոլտի բարբառում: Շեշտի հատարակ բարձրացումը բավական է, ինչպես գոնում ենք նաև արևմտյան բարբառներում:

Սակայն մեր բարբառները մի ուրիշ հարցական ձևեր էլ ունեն: Սրանց մեջ ամենից հատկանշականն է երգողական հարցականը, որ գործածվում է Կովկասի հայ բարբառներում, մասնավորապես Կարաբաղի բարբառում: Անմարժ ականջի համար շատ տարօրինակ է այս հարցականը, որ հարցական լինելուց ավելի զարմացականի նման մի բան է: Հարցականի այս ձևը կազմվում է հետևյալ եղանակով.— բառի վերջընթեր վանկը մի գորավոր շեշտ է առանում, հաջորդ վանկի մեջ ձայնը հանկարծ իջնում է ցած և հինգ հաջորդական խազերից անցնելով՝ կանգնում է վեց աստիճան բարձր ձայնի վրա: Այս վեց հաջորդական խազերի տևողությունը կարող է կարճ լինել, բայց սովորաբար շատ երկար է: Կան այնպիսի խոսողներ, որոնք մինչև անգամ չափազանց երկարում են, ծիծաղելի լինելու չափ:

Ներկայացնելով, թե խոսողի առաջին և հիմնական ձայնաստիճանը լինի do[1], ահավասիկ, թե ինչ պատկեր է ներկայացնում երգողական հարցականը. օրինակ տեսա՞ր բառը.

mi do re mi fa sol la
տե՞ս ա . . . . . ար

Հարցականի այս ձևը Կովկասից դուրս գտնված ուրիշ բարբառներում չեմ տեսած. կա սակայն Ատրպատականի և Կովկասի թուրքերի մեջ և կարծում եմ, որ նրանցից պարզ փոխառություն է:

Հարցականի երկու ուրիշ ձևեր էլ կան, որոնք կազմվում են քե և մի մասնիկներով: Առաջինը գործածական է Համշենի բարբառում, երկրորդը Եվդոկիայից սկսած դեպի արևմուտք՝ մինչև Գոլիս և Ռոտոսթո: Երկու մասնիկներն էլ դրվում են հարցական բառից հետո, իսկ հարցական բառը առանում է բարձր շեշտ:

Համշենի բարբառում քե մասնիկը կարող է զանազան դիրքեր առնել. օրինակ՝ չէ՞ն թէ գ՛ալ, գ՛ալ չէ՞ն թէ, չէ՞ն գ՛ալ թէ, որոնք հավասարապես նշանակում են «գալու չեն»: Սակայն եթե բայից առաջ հարցական միջակ անուն կամ մակրայ կա, քե մասնիկը չի դրվում. ինչպես՝

քօնի՞ հօքի լիք «քանի՞ հոգի եք»
Ի՞նչօ էրիք «ի՞նչպես արիք»
Վէ՞ր մաշար էկավ «ո՞ր մարդը եկավ»
Հո՛րօր որ գ՛ալ չէ՞զը, օրի՞ խոսք կուտ՛էզը «երբոր որ գալու չէիր, ինչո՞ւ խոսք ասիր»:

Կարելի չէ ասել քօնի՞ հօքի յիք քե և այլն:
Ընդհակառակը ասվում է՝

Էսո՞ ասմ թէ «սա ասմ»
Մէ՞ք թէ «մենք»
Տո՞ւն գ՛ացիր թէ «տո՞ւն գնացիր» և այլն:

Մի հարցական մասնիկը, որ թուրքերենից է փոխառված, երկու ձև ունի. մը կամ մի: Նույն մասնիկը թուրքերենում էլ երկու ձև ունի (mi կամ mə), բայց այս տարբերությունը կախված է նախորդ բառի ծանր կամ թեթև լինելուց: Ծանր ձայնավորից հետո դրվում է mə, թեթև ձայնավորից հետո mi, ինչպես թրք. verir mi sin? «կտա՞ս», ben mi «մեթե՞ ես», alə'r mə sən? «կառնե՞ս»: Սակայն հայ բարբառներում այս տարբերությունը չկա. և յուրաքանչյուրի մեջ ընդունված է այս կամ այն ձևը: Եվդոկիայի բարբառում գործածվում է մը. ինչպես՝ կուտա՞ս մը «կտա՞ս», կառնե՞ մը «կառնե՞ս»:

Տրապիզոնի շրջանում կարելի է գործածել նաև թրք. մի՝ մասնիկը. ինչպես՝ ունի՞ս մի, չունի՞ս մի: Նույնիսկ կարելի է ավելացնել սրան նաև քե մասնիկը. ինչպես՝ ունի՞ս մի քե, չունի՞ս մի քե: Այսպիսով առացվում է հին հայկերենի միքէ ձևը, որ սակայն, ոչ մի կապ չունի սրա հետ:

Գոլտի բարբառում դրվում է միայն մե (չկա մը), թեև միայն շեշտի բարձրացումը բավական է հարցական կազմելու համար. ինչպես՝ էկու, գացի՞ր, էս ըսի, ասօր գալու է. կամ՝ նաև՝ էկու՞ մի, գացի՞ր մի, էս մի ըսի, ասօր գալու՞ է մի:

Հարցական բայի վրա երբեմն էլ ավելացնում են օր (<որ) շաղկապը. ինչպես՝ գացի՞ր օր, ... ասօր գալու է օր...

Կարելի է նաև ավելացնել թրք. յա, բայց սա ավելի գարմացական է. ինչպես՝ էդու՞մ մի յա...

Վերջին դեպքում պատասխանը անշուշտ «ոչ» է։

Դրական և բացասական միասին գործածված ցույց է տալիս վարանում. օրինակ՝ էրթանք մի, չէրթանք մի... տամ մի, չի տամ մի... էղաւ մի, չէղաւ մի...

Մի մասնիկը թե մասնիկի չափ ազատություն չունի. կարելի է միայն ասել զալո՞ւ ես մի, բայց չի ասվում գալո՞ւ մի ես: Սակայն նույնպես եթե բայից առաջ հարցական միջակ անուն կամ մակրայ կա, չի գրվում մի մասնիկը. ինչպես՝ քանի՞ հոգի եք. բայց չի ասվում քանի՞ հոգի եք մի. ըմո՞ր երիք «ինչպես արիք», բայց չի ասվում ըմո՞ր երիք մի...

Ընդհակառակը կարելի է ասել ասիկա՞ մի տամ, մե՞նք մի, առո՞ւն մի գացիր և այլն։

Նոր-Նախիջևանի բարբառում էլ թեև ձայնի բարձրացումը բավական է հարցական կազմելու համար, բայց կարելի է նաև դնել մի մասնիկը։ Սա հին լեզվի մեջ ավելի սովորական էր. այժմ քիչ է գործածվում. ինչպես՝ կինիմարդ չէ՞ մի «հնիկ չէ՞» (Պատկ. Բ, 285). Բէլլի՞ մի չէ «հալանի չէ՞ մեթեռ» (Պատկ. Բ, 287)։ Փոխանակ մի ձևի՝ հին մարդկանց մոտ քիչ անգամ գործածվում էր մը ձևը. ինչպես՝ իմացա՞ր մը. կա՞ր մը. չքա՞ր մը «կար թե չկար»։

Կրկնված մի մասնիկի և որ շաղկապի գործածության օրինակներ են Նոր-Նախիջևանի բարբառից՝ Ագքամա մի կտեսնէ, օսար խարիբ մի կտեսնէ, քուչօտ հալավով տուն մի տեսնէ (Պատկ, Ընտիր երկաս. 1893, հատ. Բ, էջ 335). — Կալաճի կա՞ օր... (անդ, 333). Շամա մի կկովին, քի՞չ մը կկովին՝ չգիտեմ (անդ, 405)։

Կիլիկիայի բարբառում հարցականը կազմելու համար բավական է վերջին վանկի պարուլիը (հարցական շեշտ). ինչպես՝ տեսա՞ր>դիսա՞յ, եկա՞ր>իգի՞յ։ Այն թուրքական մի՞ մասնիկը, որ հարցականի վերջում ավելացնում են Պոլսի և այլ բարբառներում, Զեյթունում գոյություն չունի։

Սվեդիայի բարբառում հարցականը կազմվում է լոկ ձայնի բարձրացումով. ոչ մի հարցական մասնիկ չի կցվում բային (ինչպես գլ. մի՞, Համշ. թէ՞). օրինակ՝ գուգի՞ս «կուտե՞ս» և այլն։

Համշենի թե մասնիկը հայերեն թե շաղկապն է և ենթադրում է խոսքի կրճատում. օրինակի համար չի՞ն գալ թե... հարցականը արժի իսկապես չի՞ն գալ թե կուգան.— մե՞ք թե արժի մե՞ք թե դուք.— տուն գացի՞ր թե արժի տուն գնացի՞ր թե ոչ և այլն։ Այս բացատրության իրրև ապացույց է ծառայում նաև այն հանգամանքը, որ հարցական միջակ անուններին մոտ թե չի գրվում. որովհետև կարելի չէ ասել «քանի՞ հոգի եք թե քանի հոգի չեք», «մարդը եկավ թե չեկավ» և այլն։

Ըստ որում թավ բազաձայնները բառասկզբից հետո դառնում են պարզ խուլ։ Ճանիկի շրջանը այս թե համարելով իրրև բայի անբաժան մի մասը, վերածել է թ>տ. և որովհետև բառավերջում չգիտեն «է», այլ միայն տ, ուստի թե դարձել է տտ։

Դալով մի մասնիկին, ինչպես ասացինք, փոխառյալ է թուրքերենից։ Այս ձևը շատ սովորական է թաթարական լեզուների մեջ՝ զանազան ձևերով. այսպես՝

Աստր. թրք. mu, mi. sän mu säп *գու՞ես*.
Կազանի թրք. مو ma كتارموسين *գնու՞մ ես*.
Ջաղաթ. مو ma كوكمايرسك *երկի՞նք թե երկիր*.
Կիրգիզ. Ալթայ. ma, ba, be اسانبه isen be *առո՞ղջ է*.
پا پارا پاز paza par ba *էլի կա՞*.
Ալթայ. پی pi پدیورپو pu pi dor *այս է՞*
(Вудаговъ, II, 260)

Բայց այս բոլորն էլ բնիկ չեն, այլ փոխառյալ չինարենի mo հարցականից, որի մասին խոսեցինք սկզբում։ Ահա երկու օրինակ էլ նույն հարցականից՝ թուրքերենի հետ համեմատության համար.

Չին. Նաքօ չիէ չանգ մօ
Թրք. Šu soqaq geniš mi.
Այն փողոցը լայն (է)?
Չին. Նի հաօ մաի չէքօ մա՞ մօ.
Դու կուզե՞ս ծախել այս ձին?

Այսպիսով մենք անենք հայերենի մեջ չինարեն մի մասնիկ, որ թուրք ցեղի հետ Չինաստանից ճամբա ելնելով եկել հասել է Փոքր Ասիա, Պոլիս ու Ղրիմ և անցել մեր լեզվին։

Ինչպիսի հրաշալի օրինակ անուղղակի փոխառության:

Հայերենում բայերից հետո գրված խօ մասնիկը թուրքական է. կիրգիզերենում գտնում եմ նույնը γoy *ձևով, որ իբր մասնիկ դրվում է բայերից հետո և նշանակում է ռուսերեն* ведь. *ինչպես՝*

ayttə γoy *«ասաց խոյ»*
kordə γoy *«տեսավ խօ»:*

(Шонанов, 68)

Հարցականը գործածական է մեր մեջ նաև բացասական իմաստով, բայց ավելի առաջին դեմքով. ինչպես՝

Ես տեսնո՞ւմ եմ=չեմ տեսնում
Նա գնո՞ւմ է, Նա գնո՞ւմ է որ=չի գնում
Ես տեսե՞ր եմ=չեմ տեսել:

Սրանից է ես ի՞նչ իմանամ (կրճատ՝ ես ի՞մ, գվռ. սի՞ւցամ)= ես ինչ գիտեմ, ես ինչ գիտնամ, ես գիտե՞մ և այլն, որոնք բոլորը նշանակում են «չգիտեմ»:

Երկուսի գումարն է ներկայացնում գրաբար Ո՞ւր է Հարել եղբայր քո.— Չգիտեմ. միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ (Ծննդ. Դ. 9):

Բ դեմքի համար նման ձև ավելի քիչ է գործածվում. ինչպես՝ Դու տեսե՞լ ես որ ասում ես (այն է՝ Չես տեսել, ինչու՞ ես անում):

Սրան հակառակ, բացասական հարցականը դառնում է հաստատական, ինչպես՝

Ես քեզ չասացի՞=Ես քեզ ասացի:
Ես չե՞մ տեսել =Տեսել եմ:

6. ՍԱՍՏԿԱԿԱՆ ԲԱՅ

(intensif կամ réitératif)

Զանազան լեզուներ բայի իմաստը զորացնելու համար ստեղծել են նորանոր ձևեր. այսպես օրինակ՝ արմատի կրկնությունը, արմատը կազմող ձայներից մեկի կրկնությունը կամ զանազան մասնիկներ:

* Այս հոդվածս տպված է նախ Թէոդիկի «Ամէնուն տարեցոյց»-ի մեջ, 1912, էջ 136—137:

Օրինակ՝ ջավախերենում բայը կրկնելով ստանում է իմաստի աստիճանություն. ինչպես՝ ḍawah-ḍawah *«քանիցս անգամ կամ բոլորովին գետին փռվել»:*

(Bohatta, Gram. jav. 73)

Հինդուստանի լեզվի մեջ ḍālnā *«ձգել» բայը իբրև օժանդակ կցվելով մի ուրիշ բայի, աստիճանում է նրա իմաստը. ինչպես՝* mār *զարնել, որից* mār-ḍālnā *«ստահակ հարվածել,* totschlagen*»:*

Արաբերենում կա հատուկ բայական մի ձև, որ աստիճանում է բայի իմաստը, կազմվում է արմատի վերջին ձայնը կրկնելով. ինչպես՝ ḥmr *կարմրել, որից* iḥimrār *աստիճ կարմրել (այս ձևը արաբ քերականության մեջ կոչվում է* ifi°lal*). կամ նաև միջին բաղաձայնը կրկնելով. ինչպես՝* qatala *սպանել,* qattala *շատ սպանել:*

Ամերիկյան արտակ լեզվով աստիճական բայը կազմվում է makema *կամ* ku *բառով. ինչպես՝*

hallikebben *ուրախանալ*
hallikebbemakeman *կամ*
hallikebbekun *«շատ ուրախանալ»*
hallikebbemakenikakubamade.

(Նույն բայի գերակատար անցյալի ըղձական ձևն է):

(Crevaux-Sagot-Adam, 234)

Կանգոյի չիլուբա լեզվում աստիճական կազմելու համար բայի վերջին a *ձայնավորը դարձնում են* akanya *կամ* akaya. *ինչպես՝* kuswika *կապել→*kuswikakaya, kuswikakanya *«կապել ամուր կերպով՝ շատ կողմերով»:*

(Gabriel, 176)

Հնդկական սանտալի լեզվի մեջ աստիճական կազմելու համար բառի առաջին ձայնավորից հետո դնում են k' *միջամասնիկը. օրինակ՝*

âl *գրել—âk'âl*
agû *բերել—ak'gû*
benao *անել, շինել—bek'nao*

(Grierson, IV, 39)

Նույն սանտալի լեզվում աստիճության համար կարելի է նաև բայի առաջին վանկը կրկնել. օրինակ՝ ñāl *«տեսնել» բայից՝*

ba-ĩĩ ĩĩäl-a
ոչ ես տեսնել=չեմ տեսնում (ալս մի բանը).
ba-ĩĩ ĩĩä-ĩĩäl-a
ոչ ես տեսնում եմ=մշտապես չեմ տեսնում (որովհետև աչքս կույր է)։

(Grierson, IV, 46)

Սոլոմոնյան կղզիների բուգոտու լեզվով երկավանկ բայերը սաստկութիւան համար կրկնվում են 4 ձևով.

ա) ամբողջութիւամբ. ինչպես՝ ili, ilili *դողդողալ.* aru, aruaru *ծակել,* ahu, ahuahu *ծխել.*

բ) կամ միայն առաջին վանկը. ինչպես՝ vahi, vavahi *ընտրել.*

գ) կամ նաև երկու վանկը, ինչպես՝ udolu, udoudolu *ամբողջ.*

դ) կամ նաև կրճատ կրկնութիւամբ. ինչպես՝

vela, veavela
vene, veevene
hiro, hiohiro
hagore, haohagore

Սրանք իրր թե սաստկական են, բայց դա հաճախ ձևական է միայն և իմաստի կողմից փոփոխութիւն չկա։

(Iwens W. 165)

Աֆրիկյան խառա լեզվի մեջ կրկնութիւնը ընդհակառակը թուլացնում է բայի իմաստը. օրինակ՝

fora *փորել,* forafora *երեսանց փորել*
enda *որոնել,* endaenda *երեսանց փնտրել.*

իսկ սաստկական կազմելու համար բայի վրա գնում են ša մասնիկը. ինչպես՝

biga *ծեծել,* bigiša *շատ ծեծել։*

(Kotz, 33)

Ամերիկյան չիկիտա լեզվով սաստկական կազմելու համար արմատի վերջին ձայնավորը երկարում է կրկնվելով և ընգալին հնչում տալով. օրինակ՝

naçamu-ca *աշխատել.*
naçamuṵ-ca „trabajo con aseo".

(L. Adam—V. Henry, 47)

Ամերիկյան բորե լեզվով սաստկականը կազմվում է բայի ներքին մի վանկը կրկնելով. ինչպես՝

nemanico *սիրում եմ,* nemaninico *շատ եմ սիրում.*
nabeco *խոսել,* nabeabeco *շատ խոսել։*

(L. Adam—Laclere, 21)

Ավստրալիայի բնիկների լեզվով բայի սաստկականը կազմվում է կրկնութիւամբ. ինչպես՝

bakkabakkandi *ձիու նման ընթանալ.*
kutpakutpandi *ցնցել ուժգին կամ արագ.*
wikkewikkerendi *ցնցել դլխով։*

(Teichelmann, 15)

Ջուվաշերենում սաստկական բայը կազմվում է -la մասնիկով. ֆրանսերենում էլ կան զանազան մասնիկներ, որոնք բային տալիս են սաստկութիւն. ինչպես՝

crier *բղավել,* criailler *շատ բղավել.*
charger *բեռնավորել,* surcharger *ծանրաբեռնել։*

Ֆրանսերենում կարելի է նաև բայի խնդիրը փոխելով իմաստը սաստկացնել. ինչպես՝ tâcher *ջանալ,* tâcher de *(սեռական) ջանալ մի բանի, իսկ* tâcher à *(տրական) շատ ջանալ։*

Գերմաներենում սաստկական բայի իմաստ սացվում է զանազան բառերի բարդութիւամբ. ինչպես՝

setzen *դնել,* festsetzen *ամուր դնել=հաստատել.*
schlagen *զարնել,* totschlagen *մահացու հարված հասցնել.*
laden *բեռնավորել,* überladen *չափազանց բեռնավորել։*

Իմաստը սաստկացնելու միջոցներից մեկն էլ վանկ առ վանկ արտասանելն է, ինչ որ ամեն լեզվի մեջ էլ կա. ինչպես՝

Ես քեզ կըս-պա-նեմ, հասկացա՞ր։

Ֆրանս. refus ca-té-go-rique! *«կարական մերժում»։*

Հնդեվրոպական լեզուների մեջ էլ կար արմատի կրկնութիւամբ կամ նույնիսկ արմատի վերջին բաղաձայնի կրկնութիւամբ սաստ-

կական բայ կազմելու սովորությունը. ինչպես՝ հուն. marmairô փայլփլում եմ, լտ. glutire կուլ տալ, gluttire ամբողջովին կուլ տալ:

Վերջին ձևը (բաղաձայնի կրկնությամբ սաստկական) կա նաև այժմ մեր մեջ. ասում ենք ճիմար, ապուշ, բայց ավելի սաստկացնելու համար իմաստը՝ ճիմմա՛ր, ապպո՛ւշ:

Սրա ամենալավ օրինակն է ամեն բառը, որ քիչ բարբառի մեջ պահված է մեկ մ-ով (ամէն, օմէն), իսկ բարբառների ամենամեծ մասի մեջ հնչվում է ամմեն:

Թվում է, թե սաստկական կազմելու այս ձևը կար նաև հընդեվրոպացոց ժողովրդական լեզվի մեջ:

Մեզ հայտնի չեն հին հայոց ժողովրդական հնչման մանրամասնությունները, բայց երևի սաստկականի այս ձևը գոյություն ուներ նաև մեր մեջ, որի հետքերն են կտտել «սաստիկ չարչարել», փրփիլ «ծծագկիլ» և այլն:

Սաստկական կազմելու մասնիկ են նաև ւ, ու կամ իւ, որից ունենք ցրել և ցրուել, դրդել և դրդուել:

Արդի հայերենում սաստկականը միանում է կրկնավոր և հաճախական բայերի հետ, որոնց վրա կխոսենք այժմ:

7. ՀԱՃԱԽԱԿԱՆ ԲԱՅ

Հաճախական (fréquentatif) ընդհանուր անունով կոչվում են այն բայերը, որ ցույց են տալիս գործողության կրկնողությունը:

Գործողության կրկնությունը մի քանի տեսակ կարող է լինել. ամենից սովորականն է նույն գործողությունը կատարել երկրորդ անգամ, բայց նաև կարելի է կատարել մի քանի անգամ, շատ անգամներ և կամ շարունակ:

Կան լեզուներ, որոնք այս երևույթները զանազանում են իրարից և նրանց համար ստեղծել են տարբեր ձևեր: Այսպես է, օրինակ, ամերիկյան կարիբեր լեզուն, որ ունի՝

1) itératif (կրկնողական), որ ցույց է տալիս երկրորդ անգամ կատարված գործողությունն (Morice, 342):

2) pluralitif (հոգնական), որ ցույց է տալիս նույն գործողությունը մի քանի անգամ և կամ զանազան տեղեր անել (Morice, 369):

3) numérositif (բազմական), որ ցույց է տալիս նույն գործողությունը կատարել շատ անգամ: Նախորդից ունեցած տարբերությունը այն է, որ pluralitif-ը մի քանի անգամ է, իսկ բազմականը՝ շատ անգամ: Բայց որովհետև ժողովուրդը սիրում է չափազանցել, ուստի հաճախ բայը փոխանակ հոգնական դնելու, դնում է բազմական (Morice, 383):

4) fréquentatif (հաճախական), որ ցույց է տալիս շարունակ անել նույն գործողությունը (Morice, 325):

Սրանցից դուրս կա հաճախականի մի ուրիշ տեսակը, որ ցույց է տալիս միաժամանակ շատ բան անել. այսինքն բայը իր մեջ է միացնում անձի կամ իրի բազմության գաղափարը: Այսպես՝ վերշիկներենում՝

di-c-as բերել և d-u-c-as շատ բան բերել
jec-as տեսնել, j-o-c-as շատ բան տեսնել:

Նույնը կա նաև կովկասյան լեզուների մեջ. այսպես՝
արխազերեն i-z-blu-eit այրում կամ վառում եմ.
i-z-bol-k -ueit շատ բաներ եմ այրում կամ վառում.
ավաներեն li-p'risde „taufen", li-p'risd-al-i „viele taufen".
թուշերեն t'as-ar „fällen", t'e-b-s-ar „viele fällen".
(Bleichsteiner WBKL 1, 318, Dirr. Einführ 48)

Կովկասյան կաբարդին լեզվի մեջ կա հաճախական բայ, որ է «շատ անգամ անել նույն բանը». օրինակ՝

s-tlaġu-rey-t «շատ անգամ տեսնում եմ»:

Կան լեզուներ, որոնց մեջ հաճախական և կրկնողական միանում են. օրինակ՝ ամերիկյան մայա լեզվի մեջ հաճախականը կազմվում է բայի առաջին վանկի կրկնությամբ. ինչպես՝

tin bi-qab „I tap with the fingers".
tin bi-bi-qab հաճախական.
tin la-k-eč „I strike you with the palm".
tin la-la-keč „I strike you sevaral times with the palm" (հաճախական):
(Tozzer, 91)

Ամերիկյան նահուատլ լեզվով choca լալ—chochoca հաճախ լալ (Grasserie, 29):

Այսպես են նաև հյ. փոփոխել, բարախել, վազվզել և այլն:

Մալայան էնդգանո լեզվի մեջ հաճախականը կազմվում է կրկնութ֊յամբ. Kähler (էջ 306) այս ձևը կոչում է duratif, որ նշանակում է տևական և ցույց է տալիս միշտ կամ շարունակ անել նույն բանը. օրինակ՝

kia kipuupududa'a ekoye նա սպանում է միշտ վարազներ.
ki kipanäänäünä'a նրանք շարունակ խոսում են.
'ika kipuupuada'a մենք տեսնում ենք (միշտ) նրան։

Տիբեթերեն լեզվի մեջ հաճախական բայը կազմվում է կրկնութ֊յամբ և ունի երկու իմաստ. ա) հաճախ նույն բանը անել, բ) երկար ժամանակ նույն բանը անել. օրինակ՝

byed byed par «հաճախ անել».
hgro hgro var «հաճախ գնալ, երկար ժամանակ քայլել»։
((Foucaux, 80)

Հաճախական բայը կարող է կազմվել զանազան ձևերով. մեր֊ը տեսանք կրկնութ֊յամբ կազմված ձևը, որ ամենի սովորական է. բայց կա նաև առանձին մասնիկով կազմված հաճախական։ Օրինակ՝ ամերիկյան յութականերեն լեզվում հաճախականը կազմվում է բայի մեջ ավելացնելով ti մասնիկը (պատահաբար նման հայերեն տ, ոտ մասնիկին). ինչպես՝ upse լողանալ բայից՝

ներկա-անցյալ		հաճախական
uspei	լողանում եմ	uspetii
uspeim	լողանում ես	uspetim
uspe	լողանում է	uspeti
uspetua	լողանում ենք	uspetitua
uspep	լողանում եք	uspetip
uspen	լողանում են	uspetin

ապառնի		
uspenii	պիտի լողանամ	uspetinii
uspenim	պիտի լողանաս	uspetinim
uspeni	պիտի լողանա	uspetini
uspento	պիտի լողանանք	uspetinto
uspenip	պիտի լողանաք	uspetinip
uspeniui	պիտի լողանան	uspetinui

(La Cueva, 38)

Ամերիկյան տարատիպ լեզվի մեջ հաճախականը կազմվում է vina մասնիկով և ցույց է տալիս միշտ կամ շարունակ անել նույն բանը. օրինակ.

cara-ni գրել—cara-vina-ni շարունակ գրել։
(Grasserie, 21)

Աֆրիկյան օնու լեզվի մեջ էլ իրարից տարբեր ձևեր են հաճախականը (fréquentatif), շարունակականը (continuatif) և տևականը (duratif)։

(Wacke, 166)

Աֆրիկյան վոլոֆ լեզվում հաճախականը կազմվում է itle մասնիկով և նշանակում է նույն բանը մի քանի անգամ իրար հետևից կրկնել։

(Rambaud, 40)

Այսպիսի մի ձև կա նաև աֆրիկյան սուկումա լեզվում (բանտու), որ քննիչը՝ Augustiny 56, կոչում է duratif, որ տևում է, նորից է կրկնվում, հաճախ է պատահում. ինչպես՝ շարունակ ծեծում եմ (կծեծեմ կոր)։

Մորվիներեն լեզվում «երկվորյակ բայեր» են կոչվում գծիկով միացած զույգ բայերը, որոնք ձևով, ձայնով և իմաստով նույն կամ նման են։ Սրանք ժողովրդական լեզվի զարդն են կազմում։

(Евсевеев, 198)

Հայերենի մեջ էլ ունենք ժողովրդական լեզվով կարել-կարկատել, կտրել-կոտրել, սրբել-մաքրել և այլն։ Հին հայերենում, մանավանդ մեսրոպյան շրջանում, շատ սիրելի էր այս ձևը։

Թուրքական շոր լեզվում հաճախականը կարող է նշանակել թե գործողությունը մի քանի անգամ կատարել և թե մի քանի հոգի կատարել, մասնիկն է gili (իր տեսակներով). օրինակ՝

keskile կտրատել
oynagəla շատ անգամ խաղալ։
(Дыренкова, 147)

Հին հայերենում հաճախական ձև հատկապես գոյություն չունի, բայց կան մի խումբ բայեր, որոնք հաճախական նշանակություն ունեն՝ ընդհանուր իմաստով, ոմանք սաստկական և ոմանք

էլ հաճախական. ալսպես են՝ պատառոտել, դիշատել, յոշատել կամ յոշոտել, պառակտել, բեկտել, կարատել:

Այս բոլորը կազմվում են ատ, ոտ, ա մասնիկներով, որոնք անշուշտ նույն են ոսկերոտի, ճնոտի, փորոտիք, ցցոտի և այլն հավաքական բառերի մեջ գտնված -ոտի մասնիկի հետ:

Արդի բարբառներում կան բազմատեսակ հաճախական բայեր, որոնք ցույց են տալիս մի քանի անգամ կրկնված գործողություններ: Դրանք կազմվում են մի խումբ բաղաձայնների կրկնությամբ և խճողումով, որ կարելի է վերածել հետևյալ պարզ ձևին.

1) Արմատի վրա ավելացնում են տ կամ կ բաղաձայնները.

2) Այս երկուսի միացմամբ առաջանում են կտ և տկ մասնիկները.

3) Ավելացնում են սկզբից ռ, վռ, կռ՝ իբրև զորացուցիչ, որով առացվում են ռտ, վռտ, կռտ մասնիկները.

4) Սրանց վրա ավելացնում են կ, որով առացվում է ռտկ, վռտկ, կռտկ մասնիկները.

5) Արմատի վրա դնում են վտ. կամ շկ.

6) Սրանք զորացնելով դարձնում են վտկ և շտկ.

Ահա այս բոլորի համադրական պատկերը.

տ	կ
կտ	տկ
ռտ. վռտ,	կռտ
ռտկ, վռտկ,	կռտկ
վտ	շկ
վտկ	շտկ

Տալիս ենք այս մասնիկներով կազմված բայերը.

տ.— կավտել, ժողվտել, ժողվըտվիլ, պատառտել, կոտրտել, կտրտել, շտկտել, ցատկտել, փախչտիլ, փնտռտել «ամեն կողմ որոնել», քավըտիլ «զանազան կողմերից քավել», քթվըտիլ «իր ոջիլները քթվել», պագվըտիլ «իրար համբուրել».

կ.— պատկիլ, հրմշտկել, չարչրկել, «շատ չարչարել», փլփլկիլ «զանազան տեղերից փուլ գալ», փրթկուիլ «թևերը փրթիլ դուրս գալ».

կտ.— ժաժկտիլ «շարժվել», էրևժկտալ «հորանջել».

տկ.— կարմրտկիլ, գլտորտկիլ, տապլտկիլ «թավալվել», երնեյտկալ «տատանվել», ծամռտկել, փախչըտըկիլ «ալս ու այն կողմ փախչել», փռալտկիլ «փայլփլել (թրք. parlamaq «փայլել» բայից), փնտռտկել «ալս ու այն կողմ որոնել», քթվըտըկիլ «ոջիլ

ները քթիվ անել», ապտակվիլ «մի կերպ ապրվիլ». այստեղ պետք է դնել նաև ճմռթկել, եթե սրա պարզ ձևն է ճմռել:

ռտ.— լիտել «անորոշ ձայնով և արագ խոսել», շիտկտել «ուղղել, հարթել», ճաթռտիլ «ճաքճքվիլ, զանազան տեղերից ճաքել», ճանկռտել «չանգռել, ճեղքռտել, ցատկռտել, փեթռտել, «փետրատել, թևրթևրը փետել, պոկռտել»:

վռտ.— լիզվռտել, խաշվռտել, խօսվռտուք «խոսակցություն», կանչվռտել «գոռալ, գոռգոռալ», վազվռտել, «այս ու այն կողմ վազել», քավռտել «քսել զանազան կողմերը», կրավորական քըսվըռտվիլ, հաչվռտել, ճնչվռտել. ճչվրտիլ «պոռպռալ»:

կռտ.— կոխկռտել «կոխռտել», քաշկռտել «քաշքշել».

ռտկ.— նեռռտըկել «ալս ու այն կողմ նեռել», շակռտկել «հարթել, կոկել, ուղղել», փախչռտըկիլ «ալս ու այն կողմ փախչել», փնթռտկուիլ «բղավել, ճղավել» (փետել բայից), քակռտըկել «քակել ու քանդել».

վռտկ.— լիզվռտըկել «ամեն կողմ լիզել», խաշվըռտկել «խաշել, խշփաշել», քավռտըկիլ «քավել».

կռտկ.— քաշկռտկել «քաշքշել».

վտ.— այս ձևը առաջանում է վ կրավորականից՝ ավելացնելով սրա վրա հաճախական տ մասնիկը. ընդհանրապես ունեն անդրադարձի, երբեմն էլ փոխադարձի նշանակություն.— պագվըտիլ «իրար համբուրել». գլմտիլ «իրար գղգղել, իրար հետ կռվել», շփվըտիլ «իր անձը շփել», սիրվըտիլ «իրար սիրել՝ փայփայել», պահվըտիլ «պահվել այս ու այն անկյունում», քերվըտիլ «իր մարմինը քորել շարունակ».

շկ.— պաղշկիլ «հովանալ».

շտկ.— աւրշտըկել «ավերել, քարուքանդ անել», պաղշտըկիլ «պաղել, հովանալ», խառնըշտըկել «խառնշտորել».

բ.— ճմռթել.

փշտկ.— փորփշտկել «փորփրել քթիթը և այլն».

լտկ.— վառլտկիլ «վառվել, փայլել» (այս բառը գիտեմ միայն Թեոդիկ. երևի կազմված թրք. փառլտկիլ ձևի նմանությամբ):

Այս մասնիկները, որոնք գոյություն ունեն Գոլսի բարբառում, հանդիպում են նաև ուրիշ բարբառներում: Տանք մի քանի օրինակներ ուրիշ բարբառներից.

Վանի բարբառում տարածված են ռ, տ, ռտ մասնիկները, որոնք նեղմտծվում են արմատի և բայական վերջավորության միջև. այսպես՝

թօռմըռիլ (թօռոմել)	քյակըռաել	կովըտալ, կովըտել
շակըռաել	ճանգլըռթիլ	լիգվըռավել
ծակըռաել	պատըռտվել	վյոշկըռաել

Համշենի բարբառում հատկապես տարածված են հաճախական բայերի հետևյալ մասնիկները.

ռ.— մաշարռուշ «մեծանալ, մարդ դառնալ», յէզըռուշ «հորթը մեծանալով եզ դառնալ», գովըռուշ «երինջը մեծանալով կով դառնալ», շընըռուշ «լակոտը մեծանալով շուն դառնալ», աչառըռուշ «արդեն աչառ դառնալ, եզ դառնալու մոտ լինել», գադվըռուշ «փիսիկը մեծանալով կատու դառնալ», ոմըռուշ «ուլը մեծանալով ոչխար դառնալ», գընգըռուշ «աղջիկը մեծանալով արդեն կնիկ դառնալ», օչխըրըռուշ «գառը մեծանալով ոչխար դառնալ», ծիյըռուշ «քուռակը մեծանալով ձի դառնալ», ախչըգռուշ «փոքրիկը մեծանալով չափահաս աղջիկ դառնալ», էշըռուշ «էշի քուռակը մեծանալով էշ դառնալ», խոզըռուշ «խոճկորը մեծանալով խոզ դառնալ», վորըռուշ «ընտանի կենդանին անխնամ ձնալով վայրենանալ», (հակառակն է դօնըռուշ «ընտանենալ»), մօջվըռուշ «մոջի խիտամայր դառնալ», վառէգըռուշ «ճուտիկը մեծանալով վառակ դառնալ», հավըռուշ «ճուտը հավ դառնալ», հաֆքըռուշ «թռչունի ձագը մեծանալ», հէշաըռուշ «կովի փոքր ձագը հորթ դառնալ և այլն:

ուր.— հաքնըվօրուշ «հագնվել», հաքըսավօրուշ «հագուստները հագնել», պէդավօրուշ «տեղավորվել». գէյզնըվօրուշ «մեկին պատրաստել մէկնելու», գէյզնըվօրվուշ «պատրաստվել մեկնելու», պաժնըվորուշ «հայրը իր որդիներին բաժանելով առանձին ընտանիք կազմել», պաժնըվօրվուշ «ընտրվի կրավորականը», հազըրվօրուշ «պատրաստութիւն տեսնել» և այլն:

Հաճախական բայերից հիշատակելի է այն խումբը, որ կազմվում է ռա մասնիկով. այսպես՝

մանրել—մօնդըռաուշ
կտրել—գըդըռաուշ
փետել—փէդըռաուշ
պատռել—բաղըռաուշ
**պռռել—բըդըռաուշ «մանկիկի թոթովանքը»:*

Այս բոլորի մեջ իմաստի ուժգնութիւն տալու համար դրված է ռ աոստականը, որի հաջորդ ա բաղաձայնն էլ փոխանակ ըստ օրինի դառնալու դ, դարձել է ա:

Այլ մասնիկներով են՝

հաուչկուշ «հորանջել»
գօխկըդուշ «կոխտուել»:

Ստորև տալիս ենք մի քանի օրինակ զանազան ձևերից, որոնք տարածված են Կիլիկիայի բարբառում.

գըռ՝վը՝դալ «կռուել» բայից
հաֆքըդիլ «հաւաքել» բայից
բաղըռդիլ «պատռուել» բայից
գը՝դռը՝դիլ «կտրել» բայից
գը՝դը՝լդիլ «կարել» բայից
փը՝նդը՝ռդիլ «փնտրել» բայից
քը՝թվը՝դալ «բթուել» բայից
հը՝լմը՝շդը՝գիլ «հրել» բայից
փը՝լփը՝լդիլ «փլել» բայից
էրէնջէգօլ «լօրանջել» բայից
գալմըլդըգալ «կարմրել» բայից
դարըլդըգալ «տապալել» բայից
էլէլդըդօլ «երերալ» բայից
ձը՝ռմը՝ռդը՝գօլ «ծռել» բայից
փառըլդըգիլ (թրք. parlamaq «փայլել» բայից)
ջը՝մը՝ռթդիլ «ճմռթել» բայից
ջէթէռդիլ «ճաթել» բայից
ջանդըռդիլ «ճանկել» բայից
ջը՝խգը՝ռդիլ «ճնդքել» բայից
ցադգըռդիլ «ցատկել» բայից
լը՝գվը՝ռդիլ, լը՝գվը՝ռգըդիլ «լիզել» բայից
խուռմուռդալ «խօսել» բայից
վագվը՝ռդիլ «վազել» բայից
քըռվըռդալ «քաուել» բայից
գը՝խգը՝ռդիլ «կոխել» բայից
գը՝գվը՝դալ «գգուել, կովտել»
սիլվըդալ «սիրել» բայից
քը՝լվը՝դալ «քորել» բայից
բաղիշգինօլ (պաղիլ «հովանալ» բայից)
խառնըշդըգիլ «խառնել» բայից
չալչըլդիլ «չարչարել» բայից (շատ չարչարել)

Բացի արմատի կրկնութ֊յամբ կազմված ձևերից, Ագուլիսի բարբառը հաճախ գործածում է նաև -ատ մասնիկով կազմված ձևեր. ինչպես ճատա՛տիլ «ճատատել», ճրփտա՛տիլ «ճարբոտիլ», կարա՛տիլ «կարատել», բշտո՛տիլ «բոլոր մարմինը բշտիկներ հանել», խշկճա՛տիլ «բոլորը չորանալ» (պրս. خشک xušk «չոր» բառից), ձկծկա՛տիլ «բոլորն էլ ծակծկել», կպկպա՛տիլ «կապկպոտել», թկա՛տիլ, բզկթկա՛տիլ «բոլորին էլ ծեծել», թքա՛տիլ «թքոտել», փշրա՛տիլ «փշրոտել», բռճա՛տիլ «բռնոտել» և այլն։ Այս բոլորը խոնարհվում են Ա յծորդութ֊յան համաձայն։

8. ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Այս կարգի բայերը կազմվում են արմատի կրկնութ֊յամբ. ինչպես՝ վազվզել, ծամծմել, փոփոխել և այլն։

Կան լեզուներ, որոնք շատ հարուստ են կրկնավոր բայերով, հատկապես հետաքննաց լեզուները. օրինակ՝

Մալայա-պոլինեզյան բոնաոկ իգորոտ լեզուն ունի «չափազանց շատ» (extensive) կրկնավոր բայեր։

(Seidenadel, 107)

Ինչպես գոյականները, նաև նախդիրները շատ լեզուներում կրկնվում են մի քանի անգամ. օրինակ՝

Մելանեզյան մոտա լեզվի մեջ sale «հագուստը հոսանքից քշվել» բայարմատը վեց անգամ կրճատ կամ ամբողջական ձևով կրկնվելով, ասվում է՝

o aka me salesalesale sasasale
նավակը քշվեց...

Այս կարգի կրկնավորները ցույց են տալիս շարունակութ֊յուն, կրկնողութ֊յուն, տատակութ֊յուն կամ ուժգնութ֊յուն։

(Codrington, էջ XX)

Անցնենք հայերենի բարբառներին.

Հին հայերենը շատ հարուստ էր կրկնավոր բայերով։ Բարբառները մասամբ պահում են այդ բայերը, բայց շատ անգամ էլ նոր կրկնավորներ են հնարել, որոնք բաժանվում են երկու կարգի. 1) ներկայացնում են դանազան ձայներ, 2) ներկայացնում են կրկնված դանազան գործողութ֊յուններ։ Բերենք օրինակներ տարբեր բարբառներից.

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

1) բօռբռալ «պռռպռալ»
դռդռալ «կռկռալ»
զզդզզալ «տզտզալ»
դռդռալ «տռտռալ»
խշխշշալ «խշխշալ»
խռխռռալ «խռխռալ»
մռմռալ «մռմռալ»
ջզջզզալ «ճզճզալ»
ջռջռալ «ճռճռալ»
ջվջվալ «ճվճվալ»
վզվզզալ «վզվզալ»
փռփռռալ «փռփռալ»
ֆշֆշշալ «ֆշֆշալ»
2) բլլբլալ «պլպլալ»
գակգռել «կակկռել»
գմգմալ «կմկմալ»
դաշտռշել «տաշտռշել»
զօզզռզալ «զոզզռզալ»
թռփռթռփել «թռփռթփել»
խռփռխռփել «խռփռխռփել»
հարհռռել «հարհռռել»
ձագձռգել «ծակծկել»
ձռմռռել «ծռմռռել»
մռմռռիլ «մռմռռիլ»
մռմռզալ «մռմռտալ»
չռչռռել «չռչռռել»
չռփչռփել «չռփչռփել»
ջռռջռռգել «ճռռճռռկել, ճռռ-ճռռակ անել»
վռզվզռել «վռզվզռել»
զննզննալ «տնտնալ, դանդաղիլ»
փոխռփռխել «փոխռփոխել»
քռշքռշել «քռշքշել»
քռշքռշել «քշքշել»
քռռքռռել «քռքռռել»

ԿԻԼԻԿԻԱՑԻ ԲԱՐԲԱՌ

1) բը՝պը՝գը՝գոլ «ջրի բարակ ծորիլը»
բոպբոռոլ «պռոպռռալ»
գոգգոռոլ «կռկռալ»
դոդդոռոլ «տռտռալ»
խոշխոշոլ «խշխշալ»
խոսխոսոլ «խսխսալ»
մոմմոռոլ «մռմռալ»
ջոջջոգոլ «ճգճգալ»
ջոջջոռոլ «ճռճռալ»
ջոլջոլոլ հլհլալ
վոզվոգոլ «վգվգալ»
փոսփոռոլ «փսփսալ»
ֆոշֆոշոլ «ֆշֆշալ»
2) *բոլբոլոլ «պլպլալ»*
գաբգըբիլ «կապկպել»
գամգամոլ «կմկմալ»
դ՛ոդդ՛ոլոլ «դռդռդռալ»
թաւիթըւիթիլ «թաւիթիթել»
խաւխըւխիլ «խաբխբել»
ձագձրդիլ «ծակծկել»
ձը՝ամբ՝ուիլ «ծամածել»
մալմըլիլ «մաթմթիլ»
մոամոգոլ «մամռալ»
չալչալիլ «չարչարել»
չափչրփիլ «չափչփել»
վազվրդիլ «վազվգել»
փէլփէլոլ «փալփալիլ»
փէխփէխիլ «փոփոխել»
քաշքըշիլ «քաշքշել»
քը՝շքը՝շիլ «քշքշել»
քը՝սքը՝սիլ «քսքսել»

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

դնդնալ «քթի տակից երգել»
ճօղճրդվիլ «արշալույսի ժամանակ արևի լույսի ճառագայթները»

խոռմըռալ «խեթ-խեթ նայել, աչքը վրան ոլորել»
ճավռալ «թռչունի ճավռդել, նոր կոշիկի ձայնը»
չխշխկացնել
լխլխկացնել «ջուրը ամանի մեջ շարժել»
խնդխնդացնել «շարունակ ծիծաղացնել»
ծնծնալ «ջուրը ծորիլ, կաթկթիլ»
դլըլդլըլալ «ջրի կարկաչել»
հռհռալ «բարձրաձայն ծիծաղել»
կռկռալ «ագռավի, կռունկի ձայն»
ճլվլռալ «թռչունի ձայն»
կվկվալ «հավի, կաքավի ձայն»
կաթկթիլ «ջրի և այլն կաթիլ-կաթիլ վազելը»
զղզղալ «բարակ քամու կամ հեղասահ ջրի ձայնը» (որից զղզղուն (ած)
կժալ կժկժալ «խառնիճաղանճ ձայներ հանել», կան և սրանց գոյականները. ինչպես՝ կժրկտոց «հրացանի ձայներ», վժրկտոց «ճվճվոց, աղմուկ» և այլն:

Երբ արմատը ունի -նգ հանգը, կրկնութեան ժամանակ, առաջին եզրում դառնում է ըստ օրինի յ. ինչպես՝

ղըլղընգլալ «ղնգղնգալ»
արլարընգլալ «էշի վրա նստած մարդու շարժվելը»
վըլվընգլացնել «վեգվեգացնել»
ծայծըլվիլ «ծակծկել»

Բայերի սաստկական ձևերը կազմվում են մի բաղաձայնի հավելումով. ինչպես՝ պահել—պախվկել...

Բայերի համար կա նաև մի ուրիշ տեսակ կրկնութեան, որ սակայն սովորական չէ. ինչպես՝ խասնէխաս կէղնի «հասնելու վրա կլինի»:

Ձենք խոսում կրկնութեան այն երևույթի վրա, որ սովորական է մեր բոլոր բարբառներում. ինչպես՝ խաց-մաց, առուց-մուց, ճիւր-միւր, արալ-մարալ և այլն:

Տարբեր բաղաձայններով կրկնութեան օրինակներ են այս բարբառում՝ հում>խում-լում, ամաւ-չամաւ, սուս-փուս, ուրախ-չուրախ, անուշ-չանուշ, (օրինակ, անուշ-չանուշ կերեր) «կերակուրներ» (եմ խիս):

Կամ ձայնավորի ներքին ձայնափոխութեամբ՝ ձայն>ձէն-ձիւն, ձէն-ձիւ(ն ձայնը հապավված):

Սառնե տալիս ենք Առափալի բարբառի կրկնավոր և հաճախական բայերի մի ցուցակ.

բզզալ>Մշ. բըզբըզալ
գոռգոռալ>Մշ. գ'օռգ'օռալ, Լհ. գ'օռգ'օռալու
թափթըփել>Մշ. «փոշին մաքրել»
թրթռալ<Մշ. «թիթեռի և նմանների ձայնը»
խլխլել<Մշ. «իրար ձեռքից հափշտակել»
ձագձըգել<Մշ. «ծակ-ծակ անել»
ծեծել>Մշ. ձէձգըվել «իրար ծեծել»
կակազել>Մշ. գագըզդալ, գըգըզդալ «կակազել, կմկմալ»
կարկատել>Մշ. գարգըդիլ
կոխոտել>Մշ. գոխքըդել
կտրել>Մշ. գոդրել, հճխ. գոդըրդըվիլ
կուխլ կրկ.>Մշ. գըռվըդել, Լհ. գըռվըդէլու
կտրել>Մշ. հճխ. գըդըրդիլ
հոտոտել>Մշ. հոդ'փըդալ
ճանճռոտել>Մշ. ջանքըռթիլ
մտածել>Լհ. մըդմըդալու
յօրանջել>Մշ. օրընջդալ, Լհ. գօրօնջ'դ'ըդալու
չարչարել>Մշ. չարչէրել
չափել>կրկ. Մշ. չափչըփել
պահել>կրկ. Մշ. բահըդվիլ
պատառել>կրկ. Մշ. բադըրդիլ
պլպլալ>Մշ. բըլբըլալ
վազել>կրկ. Մշ. վազվըզել, Հնգ. վազվըրտել
փսփսալ>Մշ. փսփսալ
քաղել>կրկ. Լհ. դ'ախդ'ըդէլու
քաշել>կրկ. քաշքըշել
քնքրտալ>Մշ. քէռքըռդ'ալ
քթռտել>կրկ. Լհ. քէդ'վըդվէլու
պահրտուիլ>Հնգ. (կարդա բահրդվիլ) «պահվել»
քննել>Հնգ. քըլընտել (քննտել)
լիզել>Հնգ. լըզմըդիլ
խօսել>Հնգ. խօսխօսվիլ «մեջերը կոիվ անել»։

9. ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԲԱԶՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅ

Գործողությունը կատարելու ժամանակ մի անձ կարող է գործ ունենալ մի առարկայի, ինչպես և մի քանի առարկայի հետ։ Այս

դեպքում ենթական լինում է եզակի և սեռի խնդիրը հոդնակի. օրինակ՝ ես վերցրի քարը— ես վերցրի քարերը։

Բայց նաև գործող անձը կարող են լինել ինչպես մեկ, այնպես և բազմաթիվ անձինք։ Այս դեպքում ենթական լինում է հոդնակի։ Օրինակ՝ աշակերտը սովորեց իր դասը— աշակերտները սովորեցին իրենց դասը։

Կարող է նաև պատահել, որ թե՛ գործող անձերը և թե՛ նրանց ենթարկված առարկաները բազմաթիվ լինեն։ Այս դեպքում երկուսն էլ դրվում են հոդնակի. ինչպես՝ աշակերտները սովորեցին իրենց դասերը։

Շատ լեզուներ կան, որոնք նման դեպքերում գործածում են հավաքական բառեր. օրինակ՝ հայերեն կարող ենք ասել, ենթական հավաքական դնելով՝

Շենքի քարեղենը և փայտեղենը արդեն պատրաստ է, մնում է երկաթեղենը։

Կամ՝ սեռի խնդիրը դնելով հավաքական՝

Ես հնձեցի արտորայքը,
Ես ծախեցի դեղորայքը։

Շատ սովորական է նաև հաճախական բայերի գործածությունը նման դեպքերում. օրինակ՝

Երեխան նատեց.— երեխաները նստոտեցին։
Ես ծախծխեցի դեղորայքը։

Այս պարզ ու հատարակ ձևի փոխարեն, որ սովորական է աշխարհիս լեզուների մեծագույն մասի մեջ, կան լեզուներ՝ որոնք առեղծել են մի այլ դրություն, որ կարող ենք կոչել միավորական և բազմավորական *(փոխ եմ առնում եղնիկի բառերը. միաւոր և բազմաւոր)*։

Այս դրությամբ, եթե գործող անձը մի հոգի է կամ նրան ենթարկված առարկան մի հատ է, դրվում է առանձին ձևի բայ *(միավորական)*, իսկ եթե գործող անձերը բազմաթիվ են կամ առարկաները բազմաթիվ են, դրվում է մի ուրիշ ձևի բայ *(բազմավորական)*։

Սրա ճիշտ գաղափարը տալու համար կարող էինք ասել հայերեն՝ ես վերցրի քարը *(միավորական)*, ես հավաքեցի քարերը *(բազմավորական)*։ Առաջինը ենթադրում է մի առարկա *(քարը)*, երկրորդը՝ մի քանի առարկա *(քարերը)*։ Անճիշտ կլիներ բազմա-

վորական բայը գործածել եզակի առարկայի համար, օրինակ՝ ես հավաքեցի քարը: Բայց եթե մեկը այս ձևով էլ խոսէր, ունկնդիրը պիտի հասկանար բազմաթիվ քարեր, որովհետև հավաքեցի բազմավորական է: Ալապես օրինակ՝ ես հավաքեցի ցորենը (անշուշտ մեծ քանակով):

Միավորական և բազմավորական բայի լավ օրինակ է նաև հալերեն զարնել և ծեծել: Առաջինը միավորական է. Այնպիսի մի ապտակ զարկի նրան, որ աչքից կայծակներ թռան (ապտակը մի հատ է). երկրորդը բազմավորական է, որովհետև ծեծելը (թակելը) լինում է բազմաթիվ հարվածներով. օրինակ՝ գորգը կամ ցորենը կարելի է ծեծել ամբողջ ժամերով:

Հաճախական և բազմավորական բայերի ձևական տարբերությունը այն է, որ հաճախականը կազմվում է միավորական բայից ինչ-որ մասնիկով կամ կրկնությամբ (նստել—նստատել կամ ծախել—ծախծխել), իսկ բազմավորականը ներկայացնում է բոլորովին նոր արմատ (վերցնել—հավաքել):

Ամեն լեզվի մեջ էլ կան ու կլինեն միավորական և բազմավորական բայերի դեպքեր, ինչպես հայերենում բացի նախորդից՝ հնձել, սրսել, քաղել, ցանել, շարել, դարսել, ժողովել, ցրել կամ ցրվել, դասավորել, կարգավորել և այլն:

Բայց ինչքան էլ որ շատացնենք այս կարգի բայերի թիվը հայերենում կամ ուրիշ նման լեզուներում, այնուամենայնիվ նրանք մասնավոր դեպքեր են և ոչ թե ընդհանուր երևույթ:

Միավորական և բազմավորական բայերի դրությունը զարգացած է հատկապես ամերիկյան բազմաթիվ լեզուներում, որոնց մեջ կազմում է ընդհանուր երևույթ և քերականական առանձին կարգ: Սա արդյունք է այդ ժողովուրդների կոլեկտիվ կենցաղի (տես Boas, Handbook of american Indian languages, II, 534):

Ալապես, օրինակ, ամերիկյան դակոտա լեզվում բացի սովորական հոգնակիից, կա նաև բազմավորական հոգնակի, որ Riggs (էջ 23) կոչում է collectif (հավաքական). դա այն է, երբ մի գործը երկու կամ ավելի անձինք են կատարում իրրև մի խմբակցություն: Եթե նրանք առանձին-առանձին կատարեին այդ նույն գործը, դա կլիներ սովորական հոգնակի: Բայց հավաքականն էլ կարող է ունենալ հոգնակի, երբ մի քանի խմբակ՝ յուրաքանչյուրը իր մեջ՝ շինում են մի-մի բան:

Այնու լեզուն էլ, թեև ամերիկյան չէ, ունի նման բազմավորական բայեր. ինչպես՝

a լինել—at շատերի լինելը
a նստել—rok նստոտել
ahun մտնել—ahup շատերի մտնելը
ama գնել—amapa—շատերի գնելը
arapa գնալ—paye շատերի գնալը
ek գալ—araki » գալը
ki անել— kiči » անելը
raige սպանել—ronnu » սպանելը:

Սրանցից մի մասը ածանց բայ է (ինչպես ama—amapa), իսկ մի մասն էլ անկախ արմատ (ինչպես a—rok):

(Batchelor, 81)

Կրոյբերը խոսելով այս մասին լոկոց լեզվի քերականության մեջ (էջ 204), ասում է.— Ամերիկյան լեզուներին հատուկ մի երեվույթ է թիվը որոշելու համար փոփոխել բայի բանը, որ լինում է կամ որոշ մասնիկով, կամ բառի ներքին փոփոխությամբ և կամ նույնիսկ ամբողջ արմատը փոխելով: Ներգործական բայերի մեջ թիվը վերաբերում է առարկայի քանակին (այսինքն հայցական հոլով սեռի խնդրին): Օրինակ՝ yokuts լեզվով tauǰ նշանակում է «սպանել մի մարդու», իսկ cox «սպանել մեկից ավելի մարդկանց»: Կրկնավոր բայն էլ պիտի նշանակեր շատությունն, բայց այդ շատությունը չի վերաբերում առարկայի թվին, այլ գործողությունը շատ անգամ անելուն:

Յակոց լեզվի մեջ այսպիսի բայերի խոնարհման մեջ բայի ներքին ձայնավորներն էլ են փոփոխվում՝ նման ձայնդարձի, բայց այստեղ շատ ավելի բարդ և անկանոն (էջ 209):

Ամերիկյան սալինան լեզվով չորս տեսակ բայաձև կա, որոնցից մեկը միավորական է, երեքը՝ բազմավորական. այսպես՝ «որսալ» բայի համար՝

kaxo-ta մի մարդ որսում է մի կենդանի
kaxo-ten » » » » շատ »
kaxo-tota շատ » » են մի »
kaxo-nilet » » » » շատ »

(Mason, 28)

Ամերիկյան պայմա լեզուն ամեն բայի համար ունի միավորական և բազմավորական ձև. նախ պետք է որոշել, թե ենթա-

կան եզակի է թե հոգնակի։ Ենթական հոգնակի դարձնելու ձևերը երկու են.

ա) Բայի վրա ավելացնել qa մասնիկը. ինչպես՝

cuwapitci արթնանալ (մի հոգու)
cuwapitciqa արթնանալ (զանազան մարդկանց)
qa երգել (մի հոգու)
qaqaiyiami զանազան մարդկանց երգելը։

Կան նաև ուրիշ մասնիկներ, բայց ամենասովորականն է qa.— Նույն նպատակի համար կարելի է նաև բայի արմատը կրկնել, բայի վերջին ձայնավորի երանգը փոխել, կարճացնել կամ երկարել։

բ) Երկու գաղափարների համար կան բոլորովին տարբեր բայեր. ինչպես՝

մի հոգու համար		շատերի համար
qari	նստել	yaɣwi
avi	պառկել	qwavi
wini	կանգնել	nui
pitci	հասնել	imwii
apii	քնել	aqoi

Նույնը կա նաև սեռի խնդրի համար, այսինքն թե մեկը մի առարկայի վրա է գործել, թե՞ մի քանիսի վրա. օրինակ՝

yanwi քաշել մի բան, yua քաշել շատ բաներ
watci դնել մի բան, yuna դնել մի քանի բան։

Ավելի բարդ ձևեր են՝

paqanu սպանել մի մարդու
papaqanu մի քանի հոգի սպանել են մի մարդու (ոչ թե մի մի մարդու, այլ միասին մի մարդու)
punquɣwai մի ձի ունենալ
pumpuquɣwa ամեն մեկը ունի ձիեր
panaɣa շատերի գնալը իր տունը
pampanaqai ամեն մեկը առանձին տուն գնալ
pampannaqaqwa ամեն մի խումբ առանձին տուն գնալը

qacvaɣanti որ ունի մի լեռ
qaqacvaɣanti ունենալ մի քանի լեռ։

(Sapir, 241, 258)

Ամերիկյան պոմո լեզուն ունի միավորական և բազմավորական բայեր, որոնցից առաջինը ցույց է տալիս, թե ենթական եզակի է, երկրորդը՝ թե ենթական հոգնակի է։ Ահա մի քանի օրինակ.

Միավորական		Բազմավորական
duli, dut	սպանել	— cak
gahu	ուտել	— ga-wa
gok, yuhu, go	կանգնել	— pil, guia
ga	նստել	— napo
mer	պառկել	— gudem pid
kil	կախել	— liki pubi
diga	տալ	— sixa, silax
aga	վազել	— gadi
wal, mal	մահ դալ	— pil
uhu	գնալ	— pili

(Kroeber, 321, 340)

Ամերիկայից դուրս, Աֆրիկայում, նուբիներեն լեզուն էլ ունի միավորական և բազմավորական ձևեր։ Տարբեր է բայարմատը, երբ մի անձ է կատարել և տարբեր՝ երբ մի քանի հոգի են կատարել. օրինակ՝ nad բայարմատը (մահ գալ, գնալ) իմաստով հատուկ է միայն մի մարդու, իսկ մի քանի մարդու համար լինում է nad-er. օրինակ՝

na ńad-ra դու մահն գալիս ես.
na nader-u (իմա naderru) դուք մահն եք գալիս.

Նաև սեռի խնդիրը մեկ թե մի քանիսը և կամ բայ առանց սեռի խնդրի՝ պահանջում են տարբեր բայեր. օրինակ՝

kol ուտել (մի հատ բան)—ինչպես՝ kwade kol-e միս եմ ուտում.
kam ուտել (շատ բան). ինչպես՝ henini kam-re ուտում եմ արմավներ. սրանից էլ կազմվում է՝ kam-er արմատը, որ գործածվում է, երբ սեռի խնդիր չկա. ինչպես՝ գնում եմ ուտել։
hur սպանել (մի կամ շատ բան), բայց մի անգամից. իսկ ob սպանել շատերին իրար հետևից, բայց մի անգամից. tok շատերին սպանել ջնջել.

ti տալ մի կամ շատ բան՝ մեկին կամ շատերին, բայց մի անգամից. իսկ huk-p տալ մի բան շատերին իրար հետևից կամ շատերին հավասարապես տալ մի բանի մի մասը (որ է մի բան բաժանել հավասարապես շատերի մեջ)։

(Kauezar, 110)

Աֆրիկյան վոլոֆ լեզվումն էլ կա բազմավորական ձևով բայ, որ կազմվում է -ando մասնիկով և ցույց է տալիս «մի քանի մարդիկ միասին անել մի գործողություն». բայց կա նաև այս բայի տարբեր մի ձևը, որ կազմվում է -ante մասնիկով և ցույց է տալիս «մի քանի հոգի մի բան անել փոխադարձաբար»։

(Rambaud, 39)

Աֆրիկյան բանտու լեզվում կա միավորական և բազմավորական բայի ավելի պարզ ձևը։ Ուսումնասիրողը (Hanke, էջ 20) զանազանում է երկու ձև.

1) verba communicativa, որը գործողությունը մի խումբ մարդիկ միասին են կատարում. կազմվում է ur մասնիկով. օրինակ՝

gīnar գալ—gine-ur-ar բոլորը միասին գալ.
aṅar գնալ հեռանալ—aṅe-ūr-ar բոլորն էլ միասին գնալ.
naṅgli name wau aneurban «կանայք դուրս գաշտ գնացին բոլոր»։

2. Verba consumativa, որ ցույց է տալիս, թե մի անձը բոլորն էլ արել է. կազմվում է նույն մասնիկով. օրինակ՝ we առնել, we-ūr-ar բոլորն էլ առնել։

adi iṅgi weūrman
ես կերակուրը բոլորը կերա։

Կովկասյան ուրբեն լեզուն էլ ունի միավորական և բազմավորական բայեր. այս կարգի բայերը intransitif են. երբ ենթական հոգնակի է, սրեմն բայը բազմավորական է, իսկ երբ բայը պատճառական է, սեռի խնդիրն էլ է հոգնակի։

(Dumézil, 60)

Հեդինակը (անդ, էջ 101 շար.) խոսում է միավորական և բազմավորական բայերի մասին և տալիս է նրանց ցուցակը։

10. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱՅ

Անվանական (dénominatif) ընդհանուր անունով հասկացվում են բոլոր այն բայերը, որոնք կազմված են անուններից, այսինքն

գոյականից կամ ածականից. ինչպես՝ սղոցել, կարմրիլ, դեղնիլ, մեծանալ, հարստանալ և այլն։

Զանազան միջոցներ կան անվանական բայերի կազմության համար։ Կարելի է գոյականի կամ ածականի վրա ավելացնել պարզապես բայական վերջավորությունը (ինչպես՝ սղոց-ել, կարմր-իլ) և կամ բառի ու բայական վերջավորության միջև դնել տեսակ-տեսակ մասնիկներ։

Օրինակ՝ թուրքերեն և չուվաշերեն լեզուների մեջ անվանական բայերը կազմվում են l և r մասնիկներով. ինչպես՝

թրք. qara սև—qararmaq սևանալ, qaralamaq սևացնել
yaš թաց—yašarmaq թրջվել
su ջուր—sulamaq թրջել, ոռոգել
baš գլուխ—bašlamaq սկսել
qavi ամուր—qavilemek ամրացնել
չուվաշ. samax խոսք, բառ—samaxla—խոսել։

Ամերիկյան գալիերի լեզվով անվանական բայը կազմվում է գոյականի վրա ավելացնելով boge «անել» բայը. օրինակ՝

uato	կրակ→uatoboge	կրակ վառել
oto	ձուկ→otoboge	ձուկ որսալ
sicu	մեղ→sicomboge	միղել
ete	ինչ→eteboge	ինչ ևս անում
	mansinemboge	աշխատել

Այս բայն է, որ կրճատվելով և ձևափոխվելով ռուկուլեն լեզվում դարձել է poc բայակերտ մասնիկը, ինչպես՝

susu	կաթ→susupok	կաթ՝ ծիծ տալ երեխային
suku	մեղ→sukupok	միղել
omili	լեզու→omilipok	խոսել
toto	թշնամի→totopok	կռվել
turua	պատուհան→turuapok	կերակուր եփել
kurua	չվան→kuruapok	չվանով կապել
arakabusa	հրացան→arakabusapok	հրացան արձակել (ֆրանս. arquebuse)
paria	աղեղ→pariapok	նետ արձակել

(Crevaux—Sagot—Adam, 29)

Աֆրիկյան հատուկ լեզվով անվանական բայերը կազմվում են գոյականի կամ ածականի վրա դնելով yi «անել», ji «զգալ» բայերը. ինչպես՝

magana	*լեզու*—yi magana	*խոսել*
çoro	*վախ*—ji çoro	*վախենալ*
kuka	*ճիչ*—yi kuka	*ճչալ*
kumia	*ամոթ*—ji kumia	*ամաչել*

(Marré, 36)

Ֆրանսերենում և գերմաներենումն էլ շատ պարզ է անվանական բայի կազմութիւնը. սրանց մէջ էլ հայերենի նման գոյականը կամ ածականը ուղղակի միանում է բայական վերջավորութեան հետ. ինչպես՝

ֆր.	scie	*սղոց*—scier *սղոցել*
	rouge	*կարմիր*—rougir *կարմրել*
	chanson	*երգ*—chansonner *մեկի վրա ծաղրական երգ հանել*
գերմ.	säge	*սղոց*—sägen *սղոցել*
	roth	*կարմիր*—röthen *կարմրել, ներկել:*

Բայց կարելի է նաև երկուսը միացնել որևէ մասնիկով. ինչպես՝ rein, *մաքուր*—reinigen *մաքրել:*

Անգլերենը շատ ավելի հատարակ է. գոյականը կամ ածականը կարելի է նաև գործածել իբրև բայ՝ առանց որևէ հավելվածի, որովհետև անգլերեն բայը բայական վերջավորութիւն չունի. ինչպես՝ saw *սղոց* և *սղոցել*, light *լուս, լուսավոր* և *լուսավորել:*

Անվանական բայը ունի մի քանի նշանակութիւն. այսպես՝ *1) մի բան անել (ինչպես՝ սղոցել), 2) լինել մի բան (ինչպես՝ մեծանալ), 3) դառնալ կամ վերածվել մի բանի (ինչպես՝ քաղցրանալ):* Շատ լեզուներ այս բոլորը միևնույն ձևով են արտահայտում. բայց կան լեզուներ, որ սրանցից յուրաքանչյուրի համար առանձին մասնիկ ունեն. այսպես է վոտյակերենը (Емелянов, Грам. вот. яз. 79):

Անվանական բայի մի որոշ ձև է ներկայացնում այն, որ ջավալերենում կոչվում է վիճակական բայ և ցույց է տալիս մի վիճակի մեջ մտնել կամ գտնվել. ինչպես՝ rājā *թագավոր*—rumājā *իրեն թագավոր համարել, թագավորի վիճակում գտնվել.* saré *քուն*—sumaré «քնի մեջ լինել, քնել»:

Դրավիդյան և ուգրո-ֆիննական լեզուներում ավելի է զարգացած անվանական բայի դրութիւնը. և ոչ միայն գոյականների ուղղականից, այլև սեռականից կազմում են բայի առանձին ձև, որ ըստ Caldwell 477—8 կոչվում է appellative (*որ նուլնպես ունի անվանական իմաստը*): Օրինակ՝

մորդվին. par *տեր, առարկան՝* paz-an *տիրոջինը, որոնցից* paz-ān *տեր եմ,* paz-an-ān «*տիրոջն եմ*»

թամիլ. kōn *արքա, սեռ.* kōn-in *արքայի, որից խոնարհվում է՝* kōn-en *թագավոր եմ,* kōn-in-en *թագավորինն եմ*
kōn-ei *թագավոր ես*
kōn-em *թագավոր ենք,* kōn-in-em *թագավորինն ենք*
kōn-ir *թագավոր եք և այլն:*

Անվանական բայի ավելի բարդ ձև ունի աբխազերենը, որ գոյականի և բայի բարդութիւնից կազմում է նոր բայաձևեր. ինչպես՝

il-č'a-s-ç'-ueit' *(իլչասցվելթ)* «*բերանն եմ դնում*», որ կազմված է i *զոյն* -l *նրան* -č'y *բերան* -s *ես* -ts' *դնել* -ueit' *ներկայի վերջավորութիւնը:*

Ամերիկյան կարիբեր լեզուն էլ շատ անգամ գոյականը մրցընում է բայի մեջ (incorporation) և կազմում զանազան բարդ բայեր. ինչպես՝ šen «*երդ*» *բառով*՝

ne-šen-dezya		*երգելով մեն գալ*
ta-šen-dizyaih	»	*մտնել*
t'e-šen-dizyaih	»	*դուրս գալ՝ ելլել*
hwe-šen-dezyaih	»	*հեռանալ*
hwosa-šen-dezya	»	*երգելով հասնել*
hwone-šen-dezya	»	*թափառել*
utene-šen-dezya	»	*երթալ հանդիպելու (բայց չդտնելով) և այլն և այլն:*

(Morice. Carr. lang, 131)

Հայերենի մեջ էլ, թէ գրաբար և թէ աշխարհաբար, ունենք բազմաթիվ անվանական բայեր, որոնք կազմված են գոյականից և ածականից: Սրանք ունենում են չորս նշանակութիւն.

1) մի գործ կատարել—ինչպես՝ գրել, ծակել
2) նրանով գործել—ինչպես՝ սղոցել, փոցխել
3) մի բան դառնալ—ինչպես՝ սպիտակել
4) մի բան դարձնել—ինչպես՝ փոքրել (գներս), սրբել (մաքրել):

Անվանական բայ կազմելու համար սովորաբար առնում ենք բառի ուղ.-հյց. ձևը. ինչպես՝ քաղցր—քաղցրանամ, տէր—տիրեմ, տիրանամ և այլն:

ն բները ներմուծում են երբեմն ա. ինչպես՝ ակն—ականել, անուն—անուանել, սերմն—սերմանել: Մյուսները պարզ ն-ով. ինչպես՝ մատն—մատնել, դառն—դառնանալ. թեև կարելի էր ենթադրել, թե ալսպիսի բայերը ձևացած են մատին և այլն սեռականներից: Մյուսների մասին ալսպիսի կասկածի տեղիք չկա. ինչպես՝ ակնարկեմ, ակնկալեմ, ակնկորիմ, քրտնիմ և այլն:

ե բները ներմուծում են ե ձայնավորը. ինչպես՝ եղր—եղերել:

Բիչ անգամ պահված է լինում բառի բունը. ինչպես՝ մերձ—մերձենալ (<մերձի-անալ):

Անվանական բալ կազմելու համար գործ են ածվում հետեվյալ վերջավորութիլունները.

1) -եմ, -իմ, որոնք կազմում են ներգործական, կրավորական և չեզոք բայեր. ինչպես՝ ծառալ-եմ, թագավոր-եմ, թագաւոր-իմ, չափ-եմ, չափ-իմ, ընտր-եմ, առեմ, մեկն-եմ (=մեկնիմ), կամք—կամիմ, երազ—երազիմ, կամ թե նախդիրով՝ զգեստնեմ, լաղեմ, և կամ բարդութիլամբ. ինչպես գլխատեմ, յաղթահարեմ, քաջալերեմ:

2) -ացամ, որ տալիս է «լինել» նշանակութիլամբ չեզոք բայեր. ինչպես՝ աղաւտանալ, ընտանի—ընտանեանալ, լոյս—լուսանալ, հող—հողանալ, և կամ նախդիրով, ինչպես՝ յ-երկուանալ:

3) -ամ, որից ունենք լուսամ, ողրամ, գթամ և այլն. պատմական շրջանում սակայն այս վերջավորութիլունը քիչ է գործածվում:

Երբեմն անսովոր բառերով էլ կազմում են անվանական բայ. ինչպես՝ դրաւորականել «դրի անց կացնել». Զվարթ սրբուհւոյն դրաւորականեցին ամենայն իրօք վայելչականագոլնք քան զիմս (Վրք. հց. ա 316):

Անվանական բայերի շատ ընդարձակ կիրառութիլուն ունենք արդի լեզվում, ուր գոյականների վրա -եմ, ածականների վրա -ացայ ավելացնելով կազմում ենք ամեն տեսակի բայեր, նույնպես օտար բառերով. ինչպես՝ ճանապարհել—ճամբել, շիտակ—շիտակել, օսլալել, ապտոնել, տելեֆոնել, հեռագրել, անոթենալ, քաղցածանալ, աքլորանալ և այլն:

Անվանական բայերից դուրս, ածանցական բայերի մեջ մի նոր ձև ունի կովկասյան կաթարդին լեզուն, որ երկու բայարմատ միացնելով իրար հետ՝ կազմում է նոր բայեր. ինչպես՝ nesin հասնել և žen վազել բայերից՝ nežesin «վազելով հասնել»:

Սա բայերի բարդութիլան մի նոր ձև է, որ գոլութիլուն չունի հնդեվրոպական լեզուների մեջ:

11. ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԹՎԱ

Բացի բալի դրական ձևից, լեզուները ունեն հաճախ մի ուրիշ ձև ևս, որով բալի այդ դրական իմաստը ավելի են զորացնում: Այս ձևը կարող ենք կոչել հաստատական:

Այս ձևը կազմվում է դրական բալի որևէ ժամանակի, նույնիսկ հրամալականի վրա ավելացնելով զանազան բառիկներ կամ մասնիկներ. ալսպես՝

Իռւսերենում ունենք ведь կամ же. ինչպես՝

Ведь он приехал!

Արևելյան թուրքերենում da! ինչպես՝

geldim da! եկա, yit da! «գնա»:

Մոնղոլական ալար բարբառում կան ալս նպատակով bü, da l, ly մասնիկները. իսկ xeyā մասնիկը ընդհակառակը ցույց է տալիս կասկած. ինչպես՝ «կարծեմ տեսա, կարծես եկար և այլն»:

(Поппе, Алар. говор. 128)

Հալիբենում ալսպիսի նպատակներով բարբառներում գործածական են՝ ևէ (կամ ևը), է, դա, էլի, էլ, իշտէ, ա՞, եա՞, ո՞ւ:

ևէ մասնիկը գործածվում է Պոլսի բարբառում «թեթև» նշանակութիլամբ. ալս իմաստով նա կազմում է թեական եղանակը, որի մասին արդեն խոսել ենք վերը: Բալց միևնույն ժամանակ ևէ հաստատական մասնիկ է և նշանակում է մի ալնպիսի վիճակ կամ գործողութիլուն, որի մասին խոսողը բոլորովին վստահ է և ուզում է խոսակցի սխալը հերքել. օրինակ.

— Աղէկ գիտեմ, որ անիկա գողցած չէ:
— Է՛, ես աչքովս տեսայ ևէ...

Այսպիսի ևե մասնիկը խոսակցութ֊յան մեջ տարբերվում է թեական ևե֊ից մի երկար շեշտով։

Նույն մասնիկը գործածվում է նաև Նոր֊Նախիջևանի բարբառում իբրև հաստատական կամ ցույց տալու համար խոսողի հավանութ֊յունը. ինչպես՝ Ա՛խպար, մաշթը բան կասէ նը՞. Գէշ ասէն պիտ վախենամ նը՞... Հինութ ադէթները ադէկ ին նը՞... (Եղբա՛յր, մարդը բան է ասում. Սաստիկ պիտի վախենամ. Հին սովորութ֊յունները լավ են)։

դա՞, գործ է ածվում Նոր֊Նախիջևանի բարբառում նախադասութ֊յան վերջը՝ ասածը հաստատելու և զարմանք հայտնելու համար այն մասին, որ խոսակիցը չգիտե կամ գիտենալ չի ուզում. օրինակ՝ Զլանցիր, ետևիդ իմ» կասիմ դա... Սրա փոխարեն Ղրիմում գործ է ածվում դահա ձևը. ինչպես՝ Զահիր դուն աս դաղերուն (լեռների) Իսախ֊Յուսուֆն իս դահա (Ղրիմու առակներ, էջ 7). Նույնպես և Օրի մեջ, ինչ. Մէկ գործ բաշլալիլու էդմր դահա... Ջէրէ չասիր դահա. վալ քեզի (Նոր կեանք, 1907, էջ 282ա)։ Այս երկու ձևերի գործածութ֊յունը ցույց է տալիս, որ դա՞ և դահա՞ ծագում են թրք. da հաստատական մասնիկից և որ այս թրք. da ձևն էլ կրճատված է թրք. daha «դեռ», «տակավին» բառից։—Aldəm da=հյ. առի դա՞ նշանակում է «առի, դեռ ինչ ես ուզում»։

Էլի՞. դրծածվում է երևանի բարբառում. ինչպես՝ Ասում ևս, էլի՛. գնացի տեսայ էլի՛. Ձևիցս գնաց էլի՛։— Թարգմանված է թրք. daha «դեռ», «էլի» բառից, որ նույնպես գործածական է մեր մեջ դա կամ դահա ձևով։— Սրա կրճատ ձևն է՝

Է՛լ, որ գործածական է Թավրիզի բարբառում նույն իմաստով. ինչպես՝ Ասում եմ էլ։

Է՛. ունի հաստատական իմաստ, գործածվում է Պոլսի բարբառում՝ միայն հրամայականից հետո և համապատասխանում է ևէ հաստատական մասնիկին, որ չի գործածվում հրամայականից հետո. ինչպես՝ կեր է՛. Տար է՛։— Կարելի էր կարծել, որ այս է մասնիկը կրճատված է էլի>էլ ձևից, որ տեսանք քիչ վերևում. բայց դա անկարելի է, որովհետև էլ, էլի ձևը գոյութ֊յուն չունի Պոլսի բարբառում, ուր կա միայն ալ։

ո՛ւ. գործածվում է Նոր֊Նախիջևանի բարբառում, նախադասութ֊յան ծայրին, ճիշտ այն նշանակութ֊յամբ՝ ինչ որ դա, էլի՛. օրինակ՝ Կասիմ ու... Բևերիր ու...։ Ջայնավորից հետո պատահած ժամանակ քիչ անգամ դառնում է վու. ինչպես՝ Ասի վա՛... Ծէլանին կնիկը քնքշի վա՛... Համապատասխանում է Պոլսի ևե՛ կամ

թրք. a! ձևին. ինչպես՝ ըսի նէ՛... բերիր նէ՛... թրք. dedim a! getirdin a!

Թուրքերենից փոխառութ֊յուն են նաև ա՛, եա՛, իշա՛, որոնք այս նշանակութ֊յամբ (իբրև հաստատական մասնիկ) դրվում են նախադասութ֊յանց վրա. ինչպես՝ ըսի եա, կերանք ա, կերաւ իշա՛։

12. ԲՆԱԶԱՅՆ ԲԱՅԵՐ*

Բնաձայն են կոչվում այն բառերը, որոնք նշանակում են ներքին հոգևկան մի ազդակ կամ արտաքին նյութական մի ազդակ, և ձայնով էլ իրենց նշանակած նյութի պատկերն են. ինչպես՝ ճնչել, ճռնչել, շշնջել, բրչալ, ճառաչել, ճաջել, խըրխըճջել։

Այսպիսի բնաձայն բառերով տարօրինակ կերպով ճոխ է մեր լեզուն. այնչափ որ ոչ մի նոր լեզու կարող չէ մրցել հայերենի հետ, եթե նույնիսկ միայն մեր հին լեզվի դանձի հետ համեմատենք. հին լեզուներից էլ հազիվ միայն հունարենը. իսկ եթե մեր նոր լեզուն և նոր բարբառներն էլ նկատի առնենք, այս ճոխութ֊յունը գրեթե անհամեմատելի է։

Առաջին ակնարկով նկատելի է, որ բոլոր այս բնաձայն բառերի մեջ գրեթե միշտ նույն ձայներն են, որ կրկնվում են. այն է ճ, ռ, ռճ, չել և այլն, բայց երբ ավելի ուշադիր կերպով քննենք, պիտի տեսնենք, թե այս հաճախակի կրկնութ֊յուններն այնպես անկանոն կերպով կամ ըստ պատահման չեն, այլ ունեն որոշ միօրինակութ֊յուն, հետևաբար օրենք, այնպես որ կարելի է նրանց մեջ նման ձևերի առանձին-առանձին կարգեր որոշել։

Անհավասիկ հայերենում գտնված բոլոր բնաձայն բառերի կարգերը.

*1) *ճչալ կամ շչել, բչալ կամ բչել, նաև բջել, ճչել. այս ձևերի մեջ էական տարրը նախաձայն շ, բ, ճ ձայներն են. չ իբր հոդակապ ավելացել է պարզական արմատի վրա, ուստի և այս ձևերն իսկական նմանութ֊յուն ունեն փախչել, թաքչել, մատչել բառերին, որոնց արմատն է փախ, թաք, մատ։*

2) Հնչել, շնչել, բնչել, գնչել, կնչել, փնչել, մնչել, խնչել, սրանց հետ նաև խնջել. այս կարգումն էլ էական տարրերը ն, շ,

---

* Իբրև առանձին հոդված հրատարակել եմ նաև «Հանդէս Ամսօրեայ», 1899, էջ 202—5։

բ, գ, կ, փ, մ, խ ձայներն են. այս կարգի տարբերությունը առաջինից այն է, որ չ հոգակապի վրա հնչել ավելացել է նաև ուրիշ մի ն, որով այս ձևերը համեմատելի են ճիշտ երկնչել, կորնչել, մարանչել, յարնչել բառերին, որոնց արմատն է երկ, կոր, մարտ, յար:

3) *Բաչել, թաչել, հաչել, շաչել, թերևս նաև բաջաղիլ և հաջել (շան), էական տարբը բ, թ, ճ, շ, որոնք ահել են ա ձայնավորով. չ հոգակապն է. ձևը նույն է, ինչ որ ճաճ-ա-չել, որի արմատն է ճաճ:

4) Գանչել, թանչել, խանչել, կանչել. արմատը գ, թ, խ, կ. այս կարգը երկրորդից այն տարբերությունն ունի, ինչ որ երրորդը առաջինից. ձևով նույն է մեղանչել, որի արմատն է մեղ:

5) Գոչել, կոչել և պոչիւն բառերով կազմում են մի փոքր կարգ, ուր արմատական գ, կ, պ ձայնների վրա՝ փոխանակ երրորդ կարգի ա հավելվածի՝ ավելացել է ո:

6) Նախապես կարծում էի, թե առանձին մի խումբ են կազմում թնդալ և *դնդալ, վերջինը ենթադրելով դնդիւն բառից: Բայց կասկածելի էի գտնում. նախ՝ դնդալ համարելով առաջինի հետ նույն՝ իբր արդյունք գրչագրական սխալի. երկրորդ՝ հավանական համարելով, որ թունդ լինի ամբողջական արմատ: Այժմ գտնում եմ, որ իրոք ամբողջական արմատ է թունդ, որ ծագում է հնխ. stund կամ tund արմատից: Այս մասին տես ՀՄ 1899, էջ 203բ և Աբմ. բառ:

7) Այլևայլ ձևերով ունենք բմբիւն, բոմբիւն և թմբիւն. սրանց բայական ձևերը չկան: Վերջինին նման է նաև թմբուկ, որ ըստ Հյուբշ. Arm. Gr. 154, լինելով փոխառություն պհլ. *tumbūk, պրս. tanbūk ձևից, կապ չունի նրանց հետ: Ըստ Աբմ. բառ. (տես թմբիւն բառի տակ) այս բառերը արմատական չեն և ծագում են նախնական բ և թ ձայնեերից: Մանրին է մբ, որ գտնում ենք նաև արդի բարբառներում. ինչպես՝ խոմփալ, թրմփալ, ճլոմփ, կիւմփ:

8) Այս կարգը կազմվում է առաջին կարգի ձևերի վրա ավելացնելով ո ձայնը. սրանից բայական ձևով պահված են միայն կոչել և ճոչել. բայց հնագույն անշուշտ կային նաև *հոչել, *սոչել, *խոչել, ինչպես ցույց են տալիս ճոչակ, սոիչ կամ սոիճ (համմ. կոիչ և կոչել), խոչակ կամ խոչափող և խոչոտել բառերը:

9) Ամենից ավելի հարուստ է այս կարգը, ուր բայական ձևով կան խոնչել, կոնչել, փռնչել, ճռնչել, դոնչել, մոնչել. սրանց

հետ նաև վրնջել. նմանապես ենթադրվում է *ճռնչել, *շոնչել և սոնչել. որովհետև կան ճռնչիւն, շոնչառ, սոնչառ գոյականները: Այս բառերի արմատներն են կ, փ, ճ, դ, մ, զ, վ, ճ, շ, ս, խ ձայնները. և ինչ տարբերություն որ կա ութերորդ կարգի և առաջինի միջև, նույն տարբերությունը կա նաև իններորդի և երկրորդի միջև, այն է՝ ո ձայնի հավելումը երկրորդի ձևերի վրա:

10) Բառաչել, թառաչել, կառաչել, ճառաչել, շառաչել. արմատը բ, թ, ճ, կ, շ. կազմվում են նույն ձևով, ինչ որ 8-րդ և 9-րդ, այսինքն ավելացնելով ո ձայնը՝ երրորդ կարգի վրա: Բայց այստեղ գալիս միանում է նաև մի երկրորդ ա (բառաչել և ոչ բառչել): Մեր մատնանիշ արած նմանությունն ավելի որոշ կերպով երևում է բաչել-բառաչել, թաչել-թառաչել, հաչել-հառաչել, շաչիւն-շառաչիւն միացյալ ձևերից, ինչպես գտնում ենք իրար կից դրծածված մեր հին մատենագրության մեջ:

11) Նույն ո հավելվածով չորրորդ կարգից շինվում են բառաչել, կառաչել, խառաչել ձևերը, որոնք կազմում են այս փոքրիկ կարգը. արմատը բ, կ, խ:

12) Գոռոչ, կոռոչել կամ կորոչ, պոռոչիւն արմատը գ, կ, պ, նույն համապրությամբ՝ ինչ որ 8—11՝ հինգերորդ ձևից:

13) Թրնգիւն, դրնգիւն, շռինգ. այս գոյականները ենթադրում են *բրնգել, *շռնգել և դրնգել ձևերը. վերջինը իրոք էլ գործածված է. կազմվում են վեցերորդ ձևից ո հավելվածով: Նույն ձևն է նաև խռնատալ:

14, 15, 16) Ջոռալ (ՆՀԲ), գոռալ, ճռուողել, իբր զ, գ, պ, ճ ձայնեերից. համմ. գոչիւն, պոռոչել, ճռուել և այլն: Առաջինի արմատն է զ, ասատկացած ո հավելվածով (կարիք չկա համեմատելու ճառ, բառ, ատառ բառերի հետ, որոնք ուրիշ կազմություն ունեն):

17) Բրչալ, գդչել կամ գդշել, ինչպես և բրջել, բրջանք. ներկայացնում են առաջին ձևի կրկնավորը:

18) Դռնչել, դռնչոտիւն, խռչխռչել. երկրորդ ձևի կրկնավորը:

19) Պապաչել, խախաչել, կակաչել կամ կարկաչել. ներկայացնում են երրորդ ձևի կրկնավորը:

20) *Գանգաչել, գանգաչել. առաջին ձևը, որ ենթադրվում է գանգաչեցուցանել բառից, առանձին չէ ավանդված. բայց պահված է վրացերենում. համմ. վրաց. գանգաշի (Աբրամ. 1898 հուլիս, էջ 311ա). չորրորդ ձևի կրկնավորն է:

21) Խոխոջել *միակ ձևն է, որ ներկայացնում է հինդերորդ ձևի կրկնավորը։*

22) Ճռուել՝ *նմանապես միակ ձևը՝ կրկնավորն է* *ճռուել *ձևով մի բայի, որից* ռ *հավելվածով և* ոդ *մասնիկով կազմված է* ճռուոդել. *սրանց մեջ ու մասնիկ է տրևմ. հմմտ.* դրդել և դրդուել, քքումն և քքուփ, ցրել և ցրուել. *հմմտ. նաև* ճճռուել։

23, 24, 25) Բրել *կամ* բիրել, շշուկ, քքումն, գրդալ, շրշիւն, քրքուփ, քքուփ.— *կազմված են պարզական* բ, շ, ք, գ *արմատներից կրկնութեամբ և* բ, ու *ձայների հավելումով.— քուք արմատը բնիկ հայ է և առաջանում է Հնխ.* ku *բնաձայն արմատից։*

26, 27, 28, 29) Մրմռալ *կամ* մռմռալ, գրգռալ, գոգռալ—կարկաչել. բարբաջել, բարբանջել, խարխնջել, գարգաչանք, կրկջաձայն, դրդջիւն, քրքիչ, քրքչալ—շշնջել, դդնչել, խխնչել *կամ* խխնջել, խախանջել, *և* մրմնջել, խրխնջիւն, դրդնջիւն, արաւունջ, քրքնջալ *(Բրս. մրկ. 258)*, քրքինջ *(անդ)*, շրշնջել, շրշունջ *կամ* շրշունչ *ձևերը նմանապես կրկնավորներն են 14, 8, 9 (կամ 2) կարգի ձևերի։*

30) -ռճճ *մասնիկով են կազմվում* բճճկալ, կաղկաճճել, կզկճճալ *(իբր կանձկանճռալ) և* կճճաձայն։

Ամփոփելով մինչև այստեղ ասվածները՝ տեսնում ենք, թե հին հայերենի 1, 4, 2 բնաձայն բառերի արմատներն են բ, գ, դ, զ, թ, խ, կ, հ, ճ, մ, ն, շ, պ, ս, վ, տ, փ *և* ք *18 բաղաձայնները. այսինքն յուրաքանչյուր բնաձայն բառի նախաձայնը. ածանցները սովորաբար կազմվում են* ն, չ *(որ և* ջ*) հոդակապերով,* ա, ռ *հավելվածներով,* ռ *զորացուցիչ ձայնով և կրկնութեամբ։*

Այս բոլոր կարգերից դուրս են մնում մոտ 50 հազվադեպ ձևեր, որոնցից ոմանք բոլորովին առանձին են, ուրիշներ կրկնական, մի քանիսն էլ միանալով գալառական ձևերի հետ, կազմում են առանձին խմբեր, ինչպես կտեսնենք քիչ հետո։

Մտորև տալիս ենք ցուցակը բոլոր բնաձայն բայերի, քաղելով Նոր Հալիպլյան բառարանից, Առձևոն բառարանից և իմ Արմատական բառարանից ու Հայոց լեզվի պատմութիւնից, Ա. հատ., էջ 114—6։ Տրված ձևերից մեծ մասը բայական ձևով է, իսկ երբ բայական ձևը չի ավանդված, դնում ենք գոյականաձև.

— բաղբաջել
— բաղբանջել
+ բաչիւն
+ բաջաղիլ
+ բառաչել
+ բարբանջել
+ բարբաջել
+ բզեզ, բիբեզ

+ բրչալ
+ բզգալ
+ բնչել
+ բոմբիւն, բմբիւն
+ բշել, բշալ
+ բջել
— բջջիկ, բջջանք
+ գանգաչ(նցուցանել)
— գանգիւն
+ գանչել
+ գարգաչանք
— գլգլունք
+ գնչել
+ գոչել
+ գոռալ
+ գոռոչ
+ գոգռալ
+ գրգրալ
+ գրդալ
+ դանդաչել
+ դդնչել
+ դդչել
— դոփել
+ դռնչել
+ դրդնջիւն
+ դրդջիւն
+ դրնդել
+ զռալ
+ թռնչել
+ թռչել
+ թռռանչել
+ թռռաչել
— թռփռփիլ
+ թմբիւն
+ թռնգալ
+ թրնդիւն
+ խախանջել
— խախանջ
+ խախաչ
+ խառնչել
— խառնչել
+ խարխնճել
+ խխնջել
+ խխնջիլ
— խոխրտիւն
+ խնչել
+ խնջել
+ խոխոջել
+ խնջխնջել
+ խռնչել
+ խռնռալ
+ խռչակ, խռչափող, խռչոտիլ
— խռպոտ
+ խրխինջ, խրխնջել
— խոշիւն
— ծափ
— կականել
+ կակաչել
+ կաղկանձել
+ կռնչել
— կառանչել
+ կառաչել
+ կարկաչել
+ կռկնձռալ, կնձռալն
— կթռձալն
+ կնչել
— կնռնռոց
+ կոչել
+ կռռոչ
+ կռնչել
+ կոչել, կռիչ
— կրաս
+ կրկջաձայն
— կրճել
— հաչոտիլ, հաչոտչ
+ հաչել
+ հաջել

85 + հառաչել
+ հնչել, հունչ
+ հունչուն
+ հոչակ
— ղօղանջել
90 — ճիկ
— ճիճռունք
— ճղել «ճվճվալ»
+ ճճուել
— ճնճղուկ
95 + ճնճուել
— ճողփիւն
+ ճչել, ճիչ
— ճողել
— ճռճռուող
100 + ճռնչել
— ճռուել
+ ճռուողել
+ ճռչել
— ճռվռել
105 + մեչել, մռնչ
+ մռմռալ
+ մռնչել
+ մրմնջել
— լայ լու
110 — նուաւ
+ շաչել
+ շառաչել
— շարշափիւն
+ շնչել, շունչ
115 + շշուկ
+ շշունջ, շշնջել
+ շչել
+ շռինդ
+ շռինչ, շռնչան
120 + շրշիւն
+ շրշնջել, շրշունջ
+ պապաչել
+ պոչիւն
— պռռաւ, պռռոք
125 + պռռոչիւն
+ սուիչ, սուիճ
+ սռինչ, սռնչան
— վճխոն
— վու վու
130 + վրնջել
— տզզալ Ա.Բ
+ տրտունջ, տրտնջել
+ փնչել
+ փռնչել
135 — փռնկալ, փռնքալ, փռնգալ
— փստ-ա-ծաղիկ
— քարթնջուկն, քրթմնջել
— քնքրտալ
+ քքուկն, քքուիլ
140 + քրքուիլ
+ քրքիջ, քրքջալ
142 + քրքնջալ, քրքինջ

Այժմ տալիս ենք բարբառներում գտնված բոլոր բնաձայն բայերի ցուցակը, քաղելով իմ Գավառական բառարանից (տպ. Թիֆլիս, 1913), որ բոլոր գավառական բառերի ժողովածուների մեջ մեծագույնն է: Այս բառերի թիվը է 660:

— բառանչել
— բզբզալ
— բլբլալ
— բղբղալ
5 — բլթբլթալ
— բնկալ
— բղալ
— բղբղալ
— բղալ
10 — բռռալ
— բռռբռալ
— բուալ
— բռալ
— բռանչել
15 — բռբռալ
— բռբռթալ
— բռնչել
— բռռալ
— գաղաջել
20 — գլգլալ
— գլթալ
— գմալ
— գմռռալ
— գմփգմփոց
25 — գոչգոչալ
— գոռգոռալ
— գոռռալ
— գչգչալ
— գչգչալ
30 — գռմռալ
— գռնռալ
— գռռալ
— գռռաւիլ
— գվգվալ
35 — գվվալ
— գրմբացնել
— գրմոց
— գրմփալ
— գժժալ
40 — գլգլցնել
— գնդնկալ
— գնկգնկալ
— գնքալ
— գմբալ
45 — գմբգմբալ
— գմբռռոց
— գմգմբոց
— գմփացնել
— գնգղնգալ
— գրմփալ
50 — գնգնալ
— գնկրտալ
— գոմփա գոմփ
— գռնգռնալ
— գռգռալ
55 — գռռալ
— գրխկոց
— գրմբալ
— գրմբգրմբալ
— գրմփալ
60 — գրմփգրմփալ
— գրնգալ
— գրնգղրնգալ
— գլգլալ
— գնկալ
65 — գկռտալ
— գղգղալ
— գղգղկալ
— գմբգմբալ
— գմգմալ
70 — գմգմփալ
— գմփգմփ
— գնգալ
— գնգղնգալ
— գնգնալ
75 — գնկռ գնկռ
— գնկռտալ
— գռգռալ
— գռթկացնել
— գռռալ
80 — գրխկալ
— գրխկգրխկացնել
— գրմփալ
— գրմփգրմփալ
— գրնգալ

— ղընդղընդալ
— թաթրատալ
— թթխկ-իչ
— թլթլալ
— թխթխկալ
90 — թխկացնել
— թխկթխկացնել
— թխռալ
— թխրցնել
— թմբթմբալ
95 — թմփալ
— թմփթմփալ
— թնալ
— թնթնալ
— թնղթնղալ
100 — թնկթնկռալ
— թնքցնել
— թշթշալ
— թշշալ
— թշվշալ
105 — թռնթռնալ
— թսթսալ
— թսալ
— թրխկալ
— թրխկթրխկացնել
110 — թրխթրխկոց
— թրմիջալ
— թրմփալ
— թրպտոց
— թրփոց
115 — թփթփալ
— թփպոց
— թփռ թփռ
— թքթք
— թքշիլ
120 — թքռալ
— ժնդժնդալ
— ժնկռալ
— ժվժվալ
— ժվռալ
125 — ժրժրալ
— լըլընցնել
— լսլսել, լսլսալ
— լսլսկալ
— լսացնել
130 — լղրռալ
— լղրցնել
— լպռտել
— լվլվալ
— լվռալ
135 — լփլփացնել
— լփռալ
— լփռտկել
— լփրցնել
— խառանշել
140 — խզզացնել
— խժալ
— խժլտոց
— խժվժոց
— խլխլալ
145 — խնթխնթթացնել
— խնիկ
— խնկոց
— խնճխնճել
— խոլխոռնճալ
150 — խշալ
— խշխշալ
— խշշալ
— խշտացնել
— խշրտալ
155 — խռնթխռնթալ
— խռխռռալ
— խռրդխռրդալ
— խչխչալ
— խռկալ
160 — խռխռալ

— խռռալ
— խռմփալ
— խռխշտալ
— խռխռռալ
165 — խռնգալ
— խռռալ
— խռխռթոց
— խռփշտալ
— խռխռալ
170 — խրթխրթթացնել
— խրխնջալ
— խփխփալ
— ծգծգալ
— ծլմփացնել
175 — ծլնկալ
— ծլվլալ
— ծլփալ
— ծլփծլփալ
— ծլկթալ
180 — ծկռտալ
— ծղրալ
— ծղրտալ
— ծմրալ
— ծնգծնգալ
185 — ծռալ
— ծպծպացնել
— ծպռալ
— ծռթկալ
— ծռռան
190 — ծվծվալ
— ծփվալ
— ծրծրալ
— ծրնգացնել
— ծրփծրփացնել
195 — ծքծքալ
— կալանչել
— կարկինչել
— կարկչել
— կզմզռալ
200 — կժալ
— կժժալ
— կժկժալ
— կժվժալ
— կժրփռալ
205 — կլաւել
— կլթիկ
— կլթկլթալ
— կլխռալ
— կլկլալ
210 — կլպլռալ
— կխթալ
— կխկխալ
— կղալ
— կղկղալ
215 — կկղալ
— կղկնճալ
— կճկճալ
— կճրցնել
— կմկմալ
220 — կնձկնճալ
— կոնկռռնալ
— կոնկռռալ
— կոնճալ
— կոնճկոնճալ
225 — կոտկռռալ
— կչկչալ
— կպկպալ
— կռալ
— կռաւել
230 — կռթալ
— կռթկռթալ
— կռտռալ
— կռկռալ, կրկրալ
— կռմբալ
235 — կռմռալ
— կռշնել

— կոչկոչալ, կրչկրչալ
— կռռալ
— կվկվալ
240 — կակտալ
— կրխալ
— կրկնչալ
— կրկչալ
— կրկտալ
245 — կրմրալ
— կռմփալ
— կրփկրփոց
— հաջմաջել
— հաջվռտել
250 — հաւհաւել
— հոհոալ
— հռնդալ
— ղղղալի
— ղժբժալ
255 — ղժժալ
— ղժղժալ
— ղժվժալ
— ղլղղլղացնել
— ղլթղլթալ
260 — ղլղլալ
— ղլղղալ
— ղլվլալ
— ղլտրտալ
— ղճրտալ
265 — ղնջղնջալ
— ղնջռտացնել
— ղռղռ
— ղռնդռնալ
— ղռռդռռալ
270 — ղռալ
— ղռռացնել
— ղռղռալ
— ղռղռճցնել
— ղռնդոց
275 — ղռռալ
— ղռվռալ
— ղրղճալ
— ղրճացնել
— ղրփել
280 — ճարճրալ
— ճզալ
— ճզճզալ
— ճզճզտալ
— ճզճզալ
285 — ճզտալ
— ճզտրցնել
— ճզմռտալ
— ճթճթալ
— ճթռտալ
290 — ճլխթրտալ
— ճլխպալ
— ճլճլալ
— ճլճլթալ
— ճլճլտալ
295 — ճլմփալ
— ճլվզ
— ճլվլալ
— ճլվլտալ
— ճլվռտալ
300 — ճլփալ
— ճխալ
— ճխճխալ
— ճխրտալ
— ճխճխպիլ
305 — ճկճկալ
— ճկռտալ
— ճղացնել
— ճղաւել
— ճղլանի
310 — ճղղալ
— ճղճղալ
— ճղլղան

— ճղուշտուք
— ճղռոդել
315 — ճղվղալ
— ճղրթթալ
— ճղրցնել
— ճնկճցնել
— ճճճել
320 — ճմճմալ
— ճմպլտալ
— ճնալ
— ճնգալ
— ճնգճնգացնել
325 — ճնթլկոց
— ճնթկոց
— ճնկալ
— ճնկլնկալ
— ճնկլտալ
330 — ճնկռտալ
— ճնկճնկալ
— ճնճնալ
— ճննալ
— ճննչել
335 — ճննչռտել
— ճռտալ, ճխ ճխ
— ճռփ տալ
— ճչալ
— ճչվրտիլ
340 — ճռալ
— ճռթալ
— ճռթկացնել
— ճռթպռթալ
— ճռճռալ
345 — ճռճռթալ
— ճռմռթացնել
— ճռնչալ
— ճռպռտալ
— ճռռալ
350 — ճռվռալ
— ճռվռալ
— ճճճռտալ
— ճվլտալ
— ճվճվալ
355 — ճվռտալ
— ճաճռտալ
— ճռվռտալ
— ճրթճրթթալ
— ճրթճոց
360 — ճրթռվրթ
— ճքալ
— ճք ճք
— ճքրտալ
— մալանչ մալանչ գալ
365 — մալիլ
— մալռվիլ
— մղալ
— մղղալ
— մղլռտալ
370 — մղլռկալ
— մղմղալ
— մղմղռտալ
— մղրռտալ
— մղրռկալ
375 — մժմժել
— միաւ
— մլաւել
— մկկալ
— մկմկալ
380 — մղլռտալ
— մղմղալ
— միկիկալ
— մշալ
— մշլռտալ
385 — մշմշալ
— մշշացնել
— մռռմռքալ
— մռշմռշալ

— մռալ
390 — մռլտալ
— մռլտկալ
— մռմշտալ
— մռմռտալ
— մռռալ
395 — մսմսալ
— մսսալ
— մրթմրթալ
— մրմրթալ
— մրմրչոց
400 — մրրալ
— նղնղալ
— նմնմացնել
— նռնռալ
— նֆֆալ
405 — շախկլտալ
— շախկդի
— շախշխկալ
— շախրտոց
— շառլատ
410 — շխկալ
— շխկարալ
— շխկշխկալ
— շխշխկալ
— շխշխկալ
415 — շխպնցնել
— շխռտալ
— շղկկալ
— շմփացնել
— շնկալ
420 — շնկշնկալ
— շշնկոց
— շռտալ
— շռռալ
— շռշռալ
425 — շռռալ
— շվշվալ
— շվվալ
— շրթոց
— շրխկալ
430 — շրխկշրխկալ
— շրմփալ
— շրպպալ
— շրփալ
— շրփշրփալ
435 — շփլթոց
— շփշփալի
— շփռտոց
— չթռտալ
— չլթչլթան
440 — չլմփալ
— չլմփչլմփալ
— չլչլալ
— չխկացնել
— չխկչխկալ
445 — չխչխկալ
— չխչխպալ
— չխչխփալ
— չխչփել
— չխպչխպալ
450 — չմչմալ
— չմփչմփալ
— չնկալ
— չռալ
— չռչռալ
455 — չրթալ
— չրթչրթալ
— չրթվրթալ
— չրթփրթոց
— չրխկալ
460 — չրխկչրխկալ
— չրխչրխկալ
— չրչրալ
— չրպպալ
— չրփացնել

465 — չփչփալ
— չփփացնել
— պայլել
— պպպալ
— պղկալ
470 — պղկալ
— պպպպալ
— պլթպլթալ
— պժժան
— պժպժալ
475 — պլթել
— պլթպլթալ
— պռռալ
— պլպլալ
— պխկալ
480 — պխպխկալ
— պղկալ
— պղպղալ
— պճպճալ
— պռռալ
485 — պռռչալ
— պռռչռչալ
— պռռպռռալ
— պռռվռռալ
— պռնչել
490 — պռչկալ
— պռչել
— պռչպռչալ
— պռպռալ
— պռպռթալ
495 — պռռոց
— պռպռալ
— պռրռալ
— չժվժալ
— չղրչղրալ
500 — չղղալ
— չնկչնկալ
— չռչռալ
— ջրնգալ
— ռաչել
505 — ռռալ
— ռռռալ
— ռռռռալ
— ռվռվալ
— սրրալ
510 — վզալ
— վզզալ
— վզվզալ
— վժալ
— վժժալ
515 — վժլռալ
— վժվժալ
— վժրռտալ
— վլվլալ
— վլվլկել
520 — վխվխկալ
— վխկռալ
— վխկրռալ
— վխվխալ
— վղվղալ
525 — վղրռալ
— վեղալ, վեկալ
— վեղռտալ
— վեղվեղալ
— վշալ
530 — վշշալ
— վշվշալ
— վոթալ
— վոթկալ
— վոթվոթալ
535 — վոչալ
— վոչալ
— վոռռացնել
— վռվռալ
— վրթվրթալ
540 — վրվրթալ

— վրխալ
— վրխկալ
— վրվթալ
— վրվջալ
545 — տատատալ
— տզալ
— տզվզալ
— տզտզալ
— տժժալ
550 — տժվժալ
— տժտժալ
— տլվլալ
— տխտխկալ
— տկտկալ
555 — տղլտալ
— տմամալ
— տմփտմփալ
— տնկլտալ
— տնկռտալ
560 — տնկտնկալ
— տնչալ
— տնտնալ
— տնքալ
— տնքտնքալ
565 — տռեալ
— տռլնգալ
— տռլտալ
— տռնգոց
— տռտռալ
570 — տռռեալ
— տրլնգալ
— տրխկալ
— տրմբացնել
— տրմբտրմբալ
575 — տրմփալ
— տրմփտրմփոց
— տրտրոց
— տրփալ
— տրփտրփալ
580 — տփալ
— տփտփալ
— տքալ
— տքտքալ
— տքրտալ
585 — տքքալ,
— ցլքցլքոտիլ
— ցխցխալ
— ցնգլի
— փթալ
590 — փթրտալ
— փթփթալ
— փլթփլթալ
— փխրտալ
— փխփխկալ
595 — փնթփնթալ
— փնչալ
— փնչփնչալ
— փնքփնքալ
— փշշալ
600 — փշտացնել
— փշփշալ
— փռթացնել
— փռթկալ
— փռնգտալ
605 — փռշտալ
— փռնչալ
— փռռալ
— փռռփռռալ
— փռփռալ
610 — փսալ
— փսսալ
— փստալ
— փրստալ
— փսրտկալ
615 — փսփշտալ
— փսփսալ

— փսփստալ
— փրթացնել
— փրթմրթալ
620 — փրթփրթալ
— փրփնջալ
— քղկալ
— քթռտալ
— քթքթալ
625 — քլթքլթալ
— քլքլալ
— քնթփնթալ
— քչփչալ
— քչքչալ
630 — քոքռալ
— քստքստացնել
— քսրտալ
— քսփսալ
— քսփստալ
635 — քվքվալ
— քրքրալ
— քփռթալ
— քփռտալ
— քփքփալ
640 — ֆթֆթթալ
— ֆլֆլուն
— ֆնչալ
— ֆշալ
— ֆշշալ
645 — ֆշռտալ
— ֆշտացնել
— ֆշֆշալ
— ֆշֆշտալ
— ֆռնկռտտալ
650 — ֆռթկալ
— ֆռկալ
— ֆռնչացնել
— ֆռռալ
— ֆռռել
655 — ֆռֆռալ
— ֆսալ
— ֆստացնել
— ֆսֆսալ
— ֆսֆշտալ
600 — ֆսֆստալ

Այս ցանկն էլ կազմված է համարյա նախորդի ձևով. ուր որ պարզ բայը կա, այնտեղ բայածանց ձևերը չեմ դրել, իսկ ուր որ պարզ բայը չկա, բայածանց ձևը դնել անհրաժեշտ եմ համարել։ Այսպես՝ թշշալ կա, ուստի չեմ դրել թշշոց, բայց դրել եմ դռնդոց, որովհետև չկա դռնդալ։ Անշուշտ այս կարգի ձևերն էլ կան բարբառներում և միայն ինձ չի հաջողվել գտնել։

Բնաձայն բայերի մի մասը գործածական է նաև գրաբարում, ուստի չեմ նշանակում այս յուցակում. նրանք նշանակված են արդեն առաջին յուցակում. այսպես՝ գոռալ, մռմռալ և այլն։

Բարբառների բնաձայն բայերի կազմության մեջ նկատելի են. 1) Այն, որ մինչդեռ գրաբարում բնաձայն բայերը ընդհանրապես պատկանում են Ա լծորդության ա տիպարին (-ալ), ապա-հով գերիշխում է Գ լծորդության ա տիպարը (-ալ)։ Կան բայեր, որ գտնվում են թե՛ գրաբարում և թե՛ բարբառներում, բայց գրաբարում վերջավորվում են -ել, բարբառներում՝ -ալ. ինչպես՝ կռչել=

կռչալ, ճչել=ճչալ, ճռնչել=ճռնչալ, ճռռողել=ճռվողալ, փնչել=փնչալ և այլն:

2) Մի քանի դեպքերում բարբառները գալիս են լրացնելու մեր ունեցած թվերի ծանոթութիւնը գրաբարի բնաձայն բառերի մասին: Այսպես՝ հնից կա փստածաղիկ «լեզվի ծայրով խոսած», բայց չկա փստել բալը. այժմ բարբառներում գտնում ենք փըստալ:— Գրաբարում կա կքղագայլ. չկա բալը. բարբառները տալիս են կքղալ բալը: Երբեմն էլ բարբառները ներկայացնում են գրաբարի շարունակութիւնը. ինչպես՝ կաղկանձել=գվռ. կղկնձալ:

3) Բարբառների մեջ բալական ձևը կազմվում է հաճախ -տալ վերջավորութիւնով, մինչդեռ պարզ բնաձայնը չունի տ. ինչպես՝ լվռ-լվռ—լվռալ, լփռ-լփռ—լփռալ, խռլ-խռլ—խռլալ, լպռ-լպռ—լըպռալ. կամ նաև պարզ ձևով. ինչպես՝ դինջ-դինջ—դնջդնջալ և այլն:

4) Հաճախ բնաձայն բայերը ունեն անցողական ձև՝ -ացնել վերջավորութիւնով. ինչպես՝ խշտացնել, խնթխնթացնել, ծրնգացնել, ղրնացնել և այլն, իրը թե առարկային այդպիսի ձայն հանել տալ (և ոչ թե ինքը հանել), ինչպես որ գրաբարումն էլ ունենք ճնչեցուցանել, գռնգաչեցուցանել և այլն:— Երբ բալի պարզ ձևը չկա, դնում եմ ցանկացած անցողականը. հակառակ պարագային անցողականը չեմ նշանակում:

Այս նախնական ծանոթութիւններից հետո անցնենք քննել բարբառների բնաձայն բայերի կազմութիւնը և դասավորել ըստ կարգի:

Նախ դնում ենք այն ձևերը, որոնք պատկանում են գրաբարի բնաձայն բայերի խմբերին, պահելով յուրաքանչյուր կարգի թվահամարը:

1) Ճչալ, որի հաճախականն է ճչվրտիլ:

2) Ճնչել (որ և ճիճչել, հաճախականը՝ ճնչվռտել), ռնչալ, փնչալ, ֆնչալ:

3) Աչել «ջրերի շաչելը». նաև ճաջել, որի կրկնականն է ճաչմռջել և հաճախականը՝ ճաչվռտել:

4) Այս կարգին են պատկանում կլաճչել և մլաճչ մլաճչ գալ:

5, 6) Չկա:

7) Այս կարգին են պատկանում դմբալ, դմփացնել, թմփալ, շմփացնել. սրանցից ունենք կրկնական դոմփադոմփ, հաճախական՝ դմբրտոց:

8) Կա միայն պռչել, վռչալ:

9) Այս կարգին են պատկանում ճռնչալ, փռնչալ, բռնչել, պռնչել, ֆռնչացնել, իսկ փռշտալ առաջանում է փռնչտալ ձևից:

10) Չկա:

11) Բառաչել և խառաչել:

12) Կա միայն պռոչալ (գրբ. պռռոչել ձևից), որի հաճախականն էլ է պռոչտալ:

13) Հռնդալ, դռնդոց, գռնռալ:

14) Բռալ, կռալ, խռալ, ճռալ, դռալ, մռալ, շռալ, չռալ, սռալ, տռել: Վերջինից՝ արմատական բաղաձայնի կրկնութիւնով տռռել, ինչպես կա շշուկ, շշնկոց:— Կ հավելվածով է խռկալ:

15) Բռռալ, պռռալ, դռռալ:

16) Չկա. բայց համմ. ճռռուղել և ճռվղալ:

17) Կա միայն ճճճել:

18) Ճճճխճճել, դճջղճջալ (առաջինը՝ դնջռտացնել), փըճչփըճչալ:

19) Կա միայն գագաչել. մյուս նման ձևերի մասին տես տակը:

20, 21, 22) Չկա:

23, 24, 25) Չկա:

26) Շատ հարուստ է այս կարգը բարբառների մեջ, որ ունենք՝ բռռալ, դռդռալ, զռզռալ, խռխռալ, կռկռալ, հռհռալ, դռդռալ, ճռճռալ, նռնռալ, շռշռալ, չռչռալ, պռպռալ, սռսռալ, վռվռալ, տռտռալ, փռփռալ, քռքռալ, ֆռֆռալ.— կա նաև ր ձայնով՝ ժրժրալ, ծրծրալ, կրկրալ, չրչրալ, տրտրոց, քրքրալ.— և հաճախական ձևով՝ խռխռտալ, մռմռտալ:

27) Ներկայացնում է ավելի զանազան ձևերով. այսպես՝ կարկրնչել, կրկնչալ, կրկչալ, կարկչել, ղրղճալ, փրփնջալ, վրվնջալ:

28, 29) Չկա:

30) Այս ձևի համար նույն արմատից ունենք կռնճալ, կռնճկռնճալ, կնճկնճալ և նճ>զ ձայնափոխութիւնով էլ կզմզտալ (որ է *կնճմնճտալ):

Մինչև այստեղ հիշված բառերն ու ձևերը պատկանում են հին (գրաբարի) կարգերին: Այժմ անցնենք այն նոր կարգերին, որ հնարված են բարբառներում:

31) Խժալ, կժալ, վժալ.— այս երեքը կազմված են արմատական խ, կ, վ բաղաձայնների վրա ավելացնելով ժ բնաձայնը:

32) Դժժալ, գժժալ, կժժալ, վժժալ, տժժալ, պժժալ.— կազմված են դ, ղ, կ, պ, վ, տ բաղաձայնների վրա ավելացնելով ժ բնաձայնը, որ առաջութեան համար կրկնված է: Ըստ այսմ այս կարգը նախորդի առաջականն է:

33) Կժկժալ, պժպժալ, վժվժալ, ղժղժալ, ժժժալ, մժմժել.— կազմված են կ, ղ, մ, պ, վ, տ բաղաձայններից՝ ժ բնաձայնի հավելումով և կրկնութ֊յամբ, ուրեմն 31-րդ կարգի կրկնականն է:

34) Ղժժալ, կժժալ, խժժոց, ջժժալ, ժժժալ.— կազմվում են ղ, կ, խ, ջ, տ բաղաձայններից՝ ժ բնաձայնով, և կրկնութ֊յամբ, բայց երկրորդ եզրի մեջ բաղաձայնը վերածելով վ:

35) Անջատ ձևեր են ղժբժալ, վժրտալ. վժլտալ, խժլտոց որոնց մեջ արմատն է միշտ նախաձայն բաղաձայնը (ղ, վ, խ), բնաձայնն է նույնպես ժ, որի վրա ավելացել է իբրև սաստկական բ կամ լ և վերածվել է հաճախականի:

36) Ձզալ, մզալ, վզալ, տզալ,— կազմված են ճ, մ, վ, տ բաղաձայններից՝ զ բնաձայնի հավելումով: Հնից այսպիսի ձև ավանդված չէ- բայց ունենք բզզալ, բզզել, տզզալ (№ 37), որ նույնի սաստկականն է:

37) Բզզալ, պզզալ, խզզացնել, մզզալ, վզզալ, տզզալ.— կազմված են բ, խ, մ, պ, վ, տ բաղաձայններից՝ զ բնաձայնով (ինչպես № 36), որ սաստկութ֊յան համար կրկնված է (ինչպես № 32). համմ. նախորդը:

38) Բզրզալ, ճզճզալ, մզմզալ, պզպզալ, վզվզալ, տզտզալ.— կազմված են բ, ճ, մ, պ, վ, տ բաղաձայններից՝ զ բնաձայնի հավելումով և կրկնութ֊յամբ. համմ. № 33: Սրանց հաճախականն է՝ ճզճզտալ, մզմզտալ:

39) Անջատ ձևեր են ճզտալ,— պզկալ, քզկալ,— մզլտալ, մզլտկալ,— ճզրտալ, մզրտալ, մզրտկալ,— ճզվզալ, տզվզալ,— ճզտրցնել, որոնք բոլոր կազմված են նույն զ բնաձայնի հավելումով ճ, մ, պ, տ, ք բաղաձայններից. միայն թե սրանց մեջ ավելացել է հաճախականի համար լ, կ, տ, ռռ, տկ, կամ արմատը կրկնվել է (համմ. № 35):

40) Խշալ, մշալ, վշալ, ֆշալ.— կազմվել են խ, մ, վ, ֆ բաղաձայններից՝ շ բնաձայնով. հնից ոչ մի նման օրինակ չունենք (բայց կա խոշիւն):

41) Թշշալ, խշշալ, մշշացնել, վշշալ, փշշալ, ֆշշալ.— նախորդի սաստկականն է շ բնաձայնի կրկնութ֊յամբ ձևացած (համմ. № 32, 37):

42) Թշթշալ, խշխշալ, մշմշալ, վշվշալ, փշփշալ, ֆշֆշալ.— կազմված են բ, խ, մ, վ, փ, ֆ բաղաձայններից՝ շ բնաձայնով և կրկնութ֊յամբ, ինչպես № 33 և 38: Ձայնավորի միջամտութ֊յամբ էլ կա մուշմուշալ:

43) Թշտացնել, փշտացնել, ֆշտացնել.— կազմված են խ, փ, ֆ բաղաձայններից՝ շ բնաձայնով և տ հավելվածով:

44) Անջատ ձևեր են ֆշֆշտալ, բշվշալ, մշլտալ, ֆշռտալ, խշրտալ, որոնք կազմված են կրկնութ֊յամբ կամ շ, լ, ռ հաճախականներով: Համմ. № 35, 39:

45, 46, 47, 48) Կազմվում են արմատական բաղաձայնի վրա ավելացնելով ս բնաձայնը, որ կարող է կրկնվել. ինչպես և կարող է ամբողջ արմատը կրկնվել. այսպես՝ փսալ, ֆսալ,— թսսալ, մսսալ, վսսացնել, փսսալ,— թսթսալ, մսմսալ, վսվսալ, ֆսֆսալ, փսփսալ:— Անջատ ձևեր են փստալ, փսփստալ, ճռճռտալ, ֆսֆրտալ, փսիշտալ, ֆստացնել, ֆսֆշտալ, քսփսալ, քսփստալ, քրրտալ, քսաքստացնել, փստրկալ, որոնք կազմվում են կրկնութ֊յամբ և հաճախականի զանազան ձևերով. համմ. № 31—35, կամ 36—39, և 40—43 կարգերը, որոնք կազմվում են զ, ժ, շ բնաձայներով և նույն ոճով:

49) Բուալ, ծուալ, ճուալ, շուալ.— կազմվում են բ, ժ, ճ, շ բաղաձայններից՝ վ բնաձայնով, որ ըստ հայերեն ուղղագրութ֊յան գրվում է ու: Նույն ձևով ունենք հնից նուալ «մլավել կատվի»: Սրանց արմատական ձևն էլ կա նիւ, որից բարբառներում ունենք նիվ-նիվ, նաւ-նիվ: Նույն վ բնաձայնով կազմված են նաև գրաբարի մեջ նիւռել, նիւռուել, նռուել, նռուողել, նռնուող բառերը: Հաճախական ձևերից ունենք ճվռտալ, ժվռտալ, լվռտալ, ճվլտալ:— Անջատ ձև է նաֆալ «հիվանդի տքալ»:

50) Նախորդից վ բնաձայնի կրկնութ֊յամբ առացվում են գըվվալ, շվվալ, ծվվալ. համմ. № 32, 37, 41, 46:

51) Ամբողջ արմատի և բնաձայնի կրկնութ֊յամբ ունենք գըվգըվալ, ժվժվալ, լվլվալ, ծվծվալ, կվկվալ, ճվճվալ, շվշվալ, սվսվալ, քվքվալ. համմ. 28, 33, 42, 47:

52, 53) Իբրև բնաձայն է գործածվում նաև մ, որով սակայն ունենք միայն մի օրինակ, որ է, գմալ: Բայց սրանից կա և մի հաճախական (գմռտալ): Կրկնութ֊յամբ էլ ունենք 6 օրինակ, այն է կմկմալ, ճմճմալ, զմզմալ, տմտմալ, չմչմալ, ճմճմացնել:

54) Գրաբարի մեջ տեսանք բոմբիւն և թմբիւն ձևերը (№ 7), որոնց հավելվածն է մբ. նույնը գտանք նաև բարբառներում մբ կամ մփ ձևով, ինչպես՝ դմբալ, թմփալ և այլն: Այս բնաձայնով կարելի է առանալ թե՛ ամբողջական և թե՛ կրճատ կրկնութ֊յամբ ձևեր: Այսպես՝ ամբողջական են թմբթմբալ, դմբդմբալ, չմփչմփալ, զըմփ-

զըմփ, ամփոմփալ, զմբզմբալ, զմփզմփոց, թմփթմփալ.— կրճատ են՝ զմզմբոց, զմզմփալ.— իսկ հաճախական է՝ ճմպլտալ:

55) Այս նույն ձևերի սաստկականը կազմվում է ռ կամ՞ր սաստկացուցիչ բաղաձայնով. որով ունենք թե պարզ, թե ամբողջական կրկնական և թե կրճատ կրկնական ձևեր: Այսպես՝ պարզ ձևով՝ գրմփալ, դրմփալ, զրմփալ, թրմփալ, շրմփալ, տրմփալ, դրմբալ, տրմբացնել, զրմբացնել, կռմբալ, խռմփալ.— կրկնութլամբ՝ զրմփզրմփալ, տրմփտրմփոց, տրմբտրմբալ, դրմբդրմբալ, ղըրմփղըրմփալ.— կա նաև գրմոց «գետի խոխոջ», որ կարող է թե այտեղ դրվել և թե կցվել № 52 գմալ բային՝ ր հավելվածով:

56) Ինաձայն է նաև ղ, որ կարող է կցվել արմատական բաղաձայնին, կամ կրկնված ձևով և կամ ամբողջ արմատի կրկնութլամբ: Այսպես՝ պարզ ձևով են՝ բղալ, կղալ, ճղացնել.— կրկնված ձևով են՝ բղղալ, ճղղալ,— ամբողջ արմատի կրկնութլամբ են՝ բղղբղղալ, զղղզղալ, կղկղալ, պղպղալ, ջղջղալ, ճղճղալ, մղմղալ, նրղնրղալ, վղվղալ: Արմատական բաղաձայնի կրկնութլամբ ունենք կրկղալ (համմ. № 17 բրչալ, դչչել): վ բաղաձայնով կրկնված է ճըղճըղալ, ճռուղղել: Վերջապես ր, լ բաղաձայններով կազմված հաճախական ձևեր են ճղլանի, ոդղդալ, մղլտալ, ճղլղան, վղրտալ, ծղրալ, ծղրցնել, ծղրտալ, ճղրթալ, լղրտուք, լղրցնել, ճղուշտուք:— Հին հայերենում ղ-ով կազմված ձևեր են խղուրախիւն (կարդա խղվըրախիւն), ճղել, ճաղել:

57) խ բնաձայնով կազմված են՝ ամենապարզ ձևով՝ ճխալ, արմատի կրկնութլամբ կամ ր, ռ հաճախականով՝ լխլխել, լխլխալ, կխկխալ, ճխճխալ, ցխցխալ, շխշխալ, վխվխալ, շխռտալ, շախրտոց, ճխրտալ, փխրտալ, թխրցնել, լխացնել, թխռտալ: Այստեղ ենք դնում նաև կրխալ, վրխալ, որ կազմված են այդ բնաձայնով և նախդիր ռ սաստկականով, որ դարձել է ր:

58) խկ (կամ ղկ, խք) բնաձայնով են կազմված՝ պարզականը՝ շխկալ, թխկացնել, դխքալ, թթխկիչ (արմատը կրկնված), բխկալ, զխկալ, պխկալ, պղկալ, չխկացնել, հաճախական վխկրտալ, վըխկըտալ, շախկլտալ, կրկնավոր դխկդխկալ, թխկթխկացնել, շխկշխկալ, չխկչխկալ, վխկվխկալ, և կրճատ կրկնավոր լխլխկալ, դխդխկալ, թխթխկալ, շխշխկալ (նաև շախշխկալ), պխպխկալ, չխչխկալ, տխտրխկալ, փխփխկալ, զղղղկալ ձևերը:

59) Այս խկ բնաձայնը սաստկութլան համար ստանալով ր՝ դառնում է թխկ, որով կազմվում են մի խումբ պարզական և կըրկ-

նավոր բայեր: Պարզական են զրխկալ, թրխկալ, տրխկալ, չրխկալ, շրխկալ, վրխկալ, դրխկոց.— իսկ կրկնավոր են՝ զրխկրխկացնել, թրխկթրխկացնել, չրխկչրխկալ, շրխկշրխկալ, և կրճատ ձևով՝ չրխչրխկալ, թրխթրխկոց: Նկատելի է, որ այս բոլորի մեջ սաստրդասականը ր է, մինչդեռ այլուր դնում ենք ընդհանրապես ռ:

60) խպ (դր. խփ) բնաձայնով են կազմված շխպճցնել, չրխպչրխպալ, չղրչղրալ, չխչխպալ, չխչխփալ, ճխճխպիլ, չխչփել: Սրանց նախատիպն է հին հայերենից ճողփիւն:

61) կ բաղաձայնով կազմված ունենք սակավաթիվ բայեր, որոնք են՝ արմատի կրկնութլամբ ճկճկալ, մկմկալ, տիտկալ.— բնաձայնի կրկնութլամբ՝ մկկալ.— ռ սաստկականով և հաճախական ձևով՝ գկռտալ, ծկռտալ, ճկռտալ.— առանձին է ճռում ծկլքալ: Գրաբարում ունենք ճիկ, որ այս բոլորի մեջ ամենապարզ արմատն է ներկայացնում, բայց նաև ձգռտալ, ձգռտալ:

62) տ բնաձայնով կազմված ձևեր են՝ խոխոտալ, պտպտալ, կտկտալ, ճաճատալ, պարտալ: Սրանք բոլոր կրկնավոր են, միայն վերջինը պարզ, բայց հաճախական: Առանձին ձև ունեն կտկտալ, դդդդալի, ճավտալ:

63) ք բնաձայնով ունենք՝ պարզական փքալ բայը, հաճախական քթռտալ, չթռտալ, ճթռտալ, փթրտալ, իսկ կրկնութլամբ՝ փթփթալ, քթքթալ, պթպթալ, ճթճթալ, ֆթֆթալ:

64) փ բնաձայնով կազմված ունենք մի խումբ բայեր, որոնց մեջ միակ պարզականն է ափալ (որից ափել, ափոց).— կրկնական են՝ թփթփալ, քփքփալ, լփլփացնել, տփտփալ, խփխփալ, շփշփալի, կպկպալ, չփչփալ, ծպծպացնել.— նաև տապտպալ.— բնաձայնի կրկնութլամբ են չփփացնել, թփփոց, իսկ լ հավելվածով է շփլփոց:— Սրանց հնագույն օրինակն է գրաբարի թափփափել «սիրտը բաբախել», դոփել, ծափ, կափկափել, շարշափուն. և նոր բնաձայն ճոփ տալ:

65) փտ բնաձայնով են կազմված թփտ թփտ, լփրցնել, և տ հաճախականի հավելումով՝ լփռտալ, լփռտիլ, քփռտալ, քփռթալ, լփռտոց (լռտալ):

66) Սրա հակառակ բփ բնաձայնով են կազմված՝ պարզական արփալ, չրփացնել, շրփալ, զրփել, թրփոց, կրկնակ պ-ով՝ թրպտոց, շրպտալ, չրպտալ, կրկնավոր ծրփծրփացնել, տրփտրփալ, կրփկրփոց, շրփշրփալ ձևերը:

67) ք բնաձայնով են կազմված՝ պարզական ագալ, ճքալ, հաճախական ագրտալ, քքրտալ, ճքրտալ, կրկնավոր ագտքալ,

ծքծքալ (նաև ծգծգալ), թքթք, ճքճք, և ք-ի կրկնութլամբ էլ՝ ապքալ: Առանձին է մնում բքշիլ:

68) չ բնաձայնով, բայց միշտ արմատի կրկնութլամբ կազմված բայեր են՝ կչկչալ, քչքչալ, խչխչալ, գղգղալ, նաև քչփչալ, գշգշալ, ինչպես նաև ճ բնաձայնով՝ կճկճալ, պճպճալ: Հին լեզվի մեջ չ բնաձայնով ունենք հատկապես ճիչ, ճչալ և այլն, գոյականաձև հայհուչ, ճ-ով կազմված քճքճել, իսկ ռ ձայնավորով միաձին՝ գոչել, որի կրկնավորն է բարբառներում գոչգոչալ, սրանից էլ ածականաբար՝ գոչգոչաճ:

69) Ամենաշատ գործածված բնաձայններից մեկն է լ, որից արմատի կրկնութլամբ կազմված են՝ բլբլալ, գլգլալ, ղլղլցնել, զլզլալ, թլթլալ, խշխշալ, ծլծլալ, կլկլալ, ղլղլալ, ճլճլալ, չլչլալ, պլպլալ, վլվլալ, փլփլալ, ֆլֆլուն, հաճախական են վլվլկլլ:

70) Նույն ձևով, միայն թե երկրորդ եզրի մեջ արմատի բաղաձայնը դարձնելով վ (համմտ. № 34) կազմված են ծլվլալ, ճլվլալ, ղլվլալ, ալվլալ, և հաճախական ձևով՝ ճլվլատալ, կլպլատալ:

71) Նույն լ ձայնի կրկնութլամբ են ծլլալ, պլլալ, սլլալ, ճլլակ:

72) Նույն լ-ի վրա ավելացնելով փ՝ ճլփալ, ծլփալ և կրկնութլամբ՝ ծլփծլփալ.— նաև ներմուծելով մ՝ ծլմփացնել, ճլմփալ, չլմփալ, չլմփչլմփալ:— Առանձին են ճլվզ, ճլվատալ:

73) Նույն լ-ի վրա ավելացնելով դ կամ թ (տ)՝ առանում ենք պարզական դլթալ, պլթել, կլթիկ, հաճախական դլտրատալ և և կրկնավոր՝ բլթրլթալ, ղլթղլթալ, կլթկլթալ, չլթչլթան. պլթպլըթալ, փլթփլթալ, քլթքլթալ, բլդբլդալ, ղլդղլդացնել, և կրճատ՝ ճլճլթալ, ճլճլտալ, ղլղլդալ:

74) Անջատ ձևեր են ցլքցլքոտիլ, կլխտալ, ճլխթրալ, ճրլրխպալ:

75) Ավելի շատ սովորական է ն բնաձայնը, որով ամենապարզ ձևով ունենք՝ բնալ, ճնալ և խնիկ «ռնգախոս». կրկնութլամբ՝ ճննալ, արմատի կրկնութլամբ դնդնալ, զնզնալ, թնթնալ, ճնճնալ, ջնջնալ, տնտնալ. և ու ձայնավորի ներմուծմամբ՝ դունդունալ, թունթունալ, զունզունալ:

76) Ահում դառնում է նգ կամ նկ, որով ունենք պարզական գնգալ, ճնգալ, ճնկկցնել, ճնկալ, շնկալ, վնգալ կամ վնկալ, չնկալ, խնկոց «կռունկի ձայն». կրկնութլամբ գնդգնգալ, գնգգնգալ, թընգթընգալ, ժնգժնգալ, ծնգծնգալ, վնգվնգալ, տնկտնկալ, ճնգճնգացնել, շնկշնկալ, չնկչնկալ, ճնկճնկալ, ինկինկալ, կրճատ՝ շշնկոց, հա-

ճախական՝ գնկատալ, դնկրտալ, ժնկատալ, տնկուտալ, ճնկուտալ, ֆոնկուտալ, կրկնավոր հաճախական՝ թնկթնկուտալ.— անջատ մնում են ճնկկնկալ, տնկկտալ, ճնկկտալ, ծլնկալ, վնգստալ, կռնկատալ, ցնգլի:

77) Սրա մեջ կարելի է ներմուծել նաև բ կամ ռ զորացուցիչը, որով առանում ենք պարզական գրնգալ, գրնգալ, ծրնգացնել, ջրընգալ, տռնգոց, կրկնական՝ գրնգդրնգալ, գրնգդրնգալ:—Սրա հին օրինակն է նաև փռնգալ, որ գրվում է նաև փռնկալ, փռնքալ (այս ձևերը տալիս է ՆՀԲ, բայց ԱԲ չի հիշում).— հաճախականն է գվռ. փըռընգտալ:

78) Գտնում ենք նաև նք, որով ունենք պարզական անքալ, թնքցնել, կրկնավոր՝ անջանքալ, փնքփնքալ:

79) Մի քանի օրինակ էլ ունենք նբ ձևով. այն է՝ փնթփընթալ, քնթփնթալ, խնթխնթացնել, խռնթխռնթալ: Նույն խմբին են պատկանում ամմամբ՝ ճնթկոց, ճնթկոց:

80) Ամենից ավելի գործածական է ռ բնաձայնը, որից մի քանի օրինակ տեսանք վերը պարզական ձևով (№ 14): Հին հայերենից հետո շրջանում արդեն ավանդված է զռալ, որ ունի ՆՀԲ, բայց չի հիշում ԱԲ: Բարբառներում աչքի են ընկնում հատկապես սրա կրկնված ձևը (ռռ), որից ունենք բռռալ, գռռալ, դռռալ, զռռալ, խռռալ, կռռալ, ծռռան, դռռալ, ճռռալ, մռռալ, շռռալ, պըռռոց, սռռալ, փռռալ, ֆռռալ. նույնը նաև կրկնակ բ-ով՝ սրբալ, մըրբալ:

81) Վերը (№ 26) տեսանք նաև արմատի կրկնավոր ձևը (բռբռալ և այլն). բայց արդեն արմատի բաղաձայնը կարող է փոխվել երկրորդ եզրում. այսպես են գռմռալ, կռմռալ, ճռմռացնել, դռվռալ, ծռվռալ, գռբռացնել, կրվրալ: ԱԲ գիտե արդեն նույնել, որ սակայն չունի ՆՀԲ: Սրանց կարող ենք միացնել հին լեզվից ճիճռունք, ճռուել, ճռճռուղ: Այս բոլորի հնագույն պատկերը ներկայացնում են գոռգոռալ, խոռխոռալ, որոնք կենդանի են բարբառներում. կրճատ ձևեր են բոռբռալ, պռռպռալ. իսկ ու ձայնավորով էլ՝ դուռդուռալ: Կա նաև գոռռալ՝ նախորդ № 80 ձևով: Հաճախական ձևով է պռռվռալ:

82) Այս նույն ռ բաղաձայնից աճած ունենք նաև ռթ (կամ րթ), որից պարզական ձևով կազմված են կռթալ, ճռթալ, վռթալ, փռթացնել, փրթացնել, չրթալ, ճրթոց, շրթոց. նույնից կ հաճախականով՝ ծռթկալ, փռթկալ, վռթկալ, գռթկացնել, փռթկացնել, ֆռթկալ:

83) Սրանց կրկնավորներն են կռթկռթալ, վռթվռթալ, վրրթ-վրրթալ, չրթչրթալ, ճրթճրթալ, խրթխրթացնել, փրթփրթալ, մրթմրթալ, և կրճատ կրկնությամբ՝ բռթռթալ, ճռճռթալ, պռպռ-թալ, խռխռթոց, մրմրթալ, վրվրթալ (նաև վրվթալ)։ Երկրորդ եզ-րում արմատական բաղաձայնի փոփոխությամբ են չրթփրթոց, չրթվրթալ, փրթմրթալ, փռթպռթալ, ճրթռւվրթ։

84) Փոխանակ ռբ ձևի ունենք նաև ռտ՝ հետևյալ բառերում. ֆռռալ, փռռփռռալ, կրռմբռալ, ճռպռռալ։ Անջատ է մնում ֆըռ-կալ ձևը։

85) ռ բաղաձայնը էլ ավելի աճելով՝ առանում է նաև ռլռ, ռլնգ ձևերը, որոնցից ունենք՝ խռլռալ, մռլռալ, կռլռալ, շռալը-ռռւք, տռլռալ, մռլռակ.— խռլնդալ, տռլնդալ, տրլնդալ։

86) Ունենք դարձյալ ռչ (րչ) ձևը, որի համար կարելի չէ ասել, թե խկապես ինչ ծագում ունի, որովհետև կարող է լինել թե չ բնաձայնի սաստկականը և թե ռ բնաձայնի չ-ով աճած ձևը։ Սրանից են կազմված կռկռչալ, կրչկրչալ, պռչպռչալ, մրմրչոց, խրխրջալ։

87) Փոքրիկ, բայց շատ հին մի խումբ են կազմում կճրցնել, ղճրտալ, ղրճացնել, ղռղռճցնել, որոնց նշանավոր վկայությունն է «Անդ եղիցի լալ և կրճել ատամանց» (Մտթ. Ը. 12, ԺԳ. 42, Ղկ. ԺԳ. 28)։ Գոլականի ձևով էլ ունենք հնից վկիոն «ծիծեռնակի ձայն»։

88) Մի այսպիսի փոքրիկ խումբ են կազմում մլաւել, միաւ, կլաւել, կռաւել, ճղաւել, որոնց հետ կարելի է կցել նաև ճաւճաւ-ւել։ Այս բոլորը բնաձայն բայերի ամենահարազատ պատկերն են ներկայացնում։

89) Նույնպիսի հարազատ պատկեր ունեն մալել, պալել, կրկնությամբ՝ մալուլել, որոնց ամենահին վկայություններն են դրարարի մեջ՝ վալել, հայհոյել, լալ լու, հալ հուչ։

90) Ավելի սակավաթիվ՝ դրբ. վու վու «աղաչելի ձայնը», գվռ. ղուղու։

91) Այս բոլորից դուրս անսովոր ձևեր են ներկայացնում ծմրալ, ծպտալ, կժրկտալ, խռփռշտալ (գոյականն է խռռուփռշ), խռխշտալ, խռլխռնճալ, խորդխորդալ, թրմշալ, թաթրտկալ, լրլր-բեցնել, կնթալ, գռտտտիլ, ճարճրալ, պռշկալ, կռնկռռնալ, կռշնել, կրկտալ, շղկլկալ, շխկարալ, շախկի, մամշտալ, մռռմռքալ, որոնք կարելի է բացատրել նախորդ բնաձայն բայերի կազմության ոճով։

Այսպիսի անհատ ձևեր են նաև գրաբարից ավանդված հե-տևյալ բայերը.— քրթմնջալ, քարթնջուն, խռպոտ, ճնճռուկ, ճնճը-դուկ, փռտռածադիկ, բաղրաջալ, բաղրանջանք, գանգիւն, խախանջ, կակաղ, կիթղալ, կնտռատց, կուկլռւլել, կրաս, զօղանջել և քրքտալ։

Վերոհիշյալ 91 կարգի բնաձայնները վերածելով մեկ ընդհա-նուր կանոնի, կարող ենք ասել, թե՝

Բարբառների մեջ բնաձայնները կազմվում են մեր բոլոր բա-ղաձայններից (բացի ձ, յ, ռ, ր, ւ), ավելացնելով նրանց վրա իբր ածական՝ 1) զ, ժ, շ, ս, մ, ն, վ, ղ, խ, կ, տ, բ, փ, ք, չ, լ, ռ բաղաձայնները (պարզ կամ կրկնված ձևով և կամ արմատը այս բաղաձայնների հետ կրկնված), 2) կամ թե նգ, նկ, նք, նբ, ռբ, ռտ, մբ, մփ, րփ, լփ, լբ, խպ, խկ, փռ, ռչ, շտ, ստ կրկնակ ձայ-նախմբերը, 3) կամ թե նգռ, րնգ, րխկ, ռլտ, թռտ, վռտ, մռտ, լմփ, րմփ, 4) և կամ վերջապես ռլնգ երկակ և քառակ ձայնա-խմբերը։

* * *

Ամեն լեզվի մեջ էլ կան բնաձայն բառեր։ Հայերենի հետ համեմատելու համար օրինակ առնենք մեր շրջակա և ծանոթ լե-զուներից մի քանիսի բնաձայն բառերը։

Ռուսերենից՝

хохотать	բարձր ձայնով ծիծաղել
жужжать	բզզալ, ոզոզալ
храпеть	խորդալ, խռմփալ
шуршать	տերևների, շորի շրշյուն
тарахтеть	սակառի գլորվելու ձայն
чирикать	ճռվողել
гоготать	սագի ձայն
каркать	ագռավի կռկռալ
ворковать	աղավնու, ճնշել, վուվու
ржать	խրխնջել ձիու
пычать	բառաչել
блеять	մաքի ոչխարի
мяукать	մլավել կատվի
гавкать	հաչել շան
тявкать	» »
шамкать	պառավի շաղփաղփել

квакать	*դորսի կռկռալ*
булькать	*պլթպլթալ (կերակրի, ջրի)*
чавкать	*ուտելու ժամանակ չփչփացնել*

Ֆրանսերենից՝

glouglou	*շշից թափված ջրի կամ հեղկահոսքի ձայն*
glousser	*հավի կրկչոցը ճուտերը կանչելիս*
cocorico	*աքլորի ծուղրուդու, կուկուլիկու*
froufrou	*շորի շրշյուն*
trictrac	*նարդի*
roucouler	*աղավնու և առատրակի ձայն*
hurler	*գայլի և շան ոռնալ*
caqueter	*հավի կարկաչել*
miauler	*կատվի մլավել*
hennir	(>լա. grunnire) *խոզի խորդալ*
grogner	*ձիու խրխնջել*
braire	*էշի զռալ*
gazouiller	*ճովռդել թռչունի*
rugir	(<լա. rugire) *մռնչել առյուծի*
barrir	*փղի ձայն*
trompeter	*արծվի ձայն*
pouffer	*փսթկացնել (ծիծաղել)*
coasser	*դորսի կռկռալ*
croasser	*ագռավի կռկռալ*
bourdonner	*բզեզների բզզալ*

Ինչպես այս մի քանի օրինակները ցույց են տալիս, ռուսերենի և ֆրանսերենի բնաձայն բայերը չեն կրում հայերեն բնաձայն բայերի բնութիւը։ Մեր բայերի արմատը առաջին բաղաձայնն է միայն, որի վրա ավելանում են զանազան ածականներ և դրացուցիչ բաղաձայիններ։ Իսկ ֆրանսերենի և ռուսերենի բնաձայն բայերը ամբողջութիւամբ արմատական ձև ունեն։

Այս կողմից հայերենին շատ ավելի նման են թուրքերենի բնաձայն բայերը, որոնց ամբողջական ցուցակը տալիս ենք այստեղ՝ բառաքաղելով Պետրոս Զեքի Կարապետյանի Օսմանեբենեն հայերեն բառարանը (տպ. Պոլիս, 1912)՝ ծալրից ծալր։

patər patər patərdamaq *ադմկել*
parəl parol parlamaq *փալփլել*

taqərdamaq *թնդալ*
teker-meker tekerlemek *թավալել, գլորել*
ʃangəl-ʃungul *դանդաղ և աղմկալից*
ʃayir-ʃayir *ճարճատելով*
ʃərtlamaq *ճռնչել*
ʃərʃər *ճպուռ, շառաչուռ*
ʃəzərdamaq *ճռնչել*
ʃəzlamaq *խշխշալ, ճղրտալ, ճռնչել*
ʃeğəltə *ճավղում, կարկաչում*
ʃanbur-ʃunbur *ջրի մեջ ընկնելու ձայնը*
ʃəzlamaq *սլրելու ձայն*
ʃivʃiv *թռչունի ճավղ*
ʃəvəldamaq *թռչունի ճավղել*
čatər-čatər čatərdamaq *ճարճատել*
čağəldamaq *ջրի խոխոջել*
čaqəldamaq *կոպիճի՝ ընկույզի ձայն հանել, շառաչել*
čangərdamaq *վայնասուն փրցնել*
čot *փոքր ձայն*
čətərdamaq *ճաճատել*
čortlaq *ճպուռ*
čərčər *ճպուռ, նուրբ ձայնով ջուր*
čəngərdamaq *հնչել*
čənlamaq *ականջը խոսել*
čətərdamaq *շառաչել*
harəl harəl *առատահոս հոսել*
haralta *ժխոր*
(xarxara (*արաբ.* خرخر) *հռնչյուն*))
xərəldamaq *խորդալ*
xəšxəš *խաբշափլուն*
xešərde *խաբշափլուն, առատվլուն*
xəšəldamaq *խժալ*
xumurdamaq *մռմռալ*
xənʃaxənʃ *լիուլի (բազմութիւն)*
xortlamaq *խռլտալ*
dəzlamaq *բզզալ*
dərdər, dərəltə *պարապ խոսք, առատաց*
zangər zangər zangərdamaq *դողալ*
zərp *հանկարծ, մեկենիմեկ*

zərəl zerol *բարձրաձայն (լալ)*
zərlamaq *գոալ*
zərəldamaq *ճռնչել*, zərəltə *անպետ խոսք*
šaplamaq *ապտակի շառաչել*
šıpər šupur šapərdamaq *շաչել*
šadərdamaq *շառաչել, կարկաչել*
šarəl šarəl šarəldamaq *հեղեղի պես հոսել*
šaqərdamaq *շաչել, ճռվողել*
šaqlamaq *շաչել*
— šərp *հանկարծ, մեկեն*
— šərəl šərəl šərlamaq (šərəldamaq) *խոխոջել*
šuruldamaq *մռմռալ*
šorolop *ագահաբար ուտելու ձայն*
tarərdamaq *օդքերի ձայն հանել*
taqər tuqur taqərdamaq *ոռնաձայնով դղրդել*
təngərdamaq *շաչել, կռնչել*
—tənlamaq *հնչել, թնդալ, զռնչել*
— təqər təqər təqərdatmaq *դռնջել, թնդացնել*
gurgur, guruldamaq *փորի կոկռալ*
— gəǰərdamaq *կրճատացնել առաւօտները*
fərlatmaq *շպռտել*
— fərəldaq *շռնչան*
— fərəl fərəl dönmek *արագ-արագ շուռ գալ*
— fəš fəš *թխավարելու ձայն*
— fəšər fəšər fəšərdamaq *ֆշրտալ, շաչել, խոխոջել*
— fəšəldamaq *շչել, շառաչել, խարշափ*
fəsər fəsər içmek *անընդհատ ծխել*
fəslamaq, fəsəldamaq *փսփսալ*
fenger fenger ağlamaq *զառն արցունքով լալ*
gəpər gəpər gəpərdamaq *եռուզեռով նիվել*
qəǰərdamaq *առաւօտները կրճատացնել*
qəǰərdamaq *ոռնալ, կաղկանձել*
qəğəšdamaq *խարշափել*
kütürdü patərdə *աղմուկ, ժխոր*
gürüldemek *աղմկել, գոռալ, երկինքը որոտալ*
gümürdemek *մռնչել, գոչել*
mərəldamaq *մռմռալ*
məšəl məšəl *մշիկ-մշիկ (քնել)*

melemek *մռնչել (ոչխարի)*
miyav *մլաւլուն*, miyavlamaq *մլաւել*
vərlamaq, vərəldamaq } *առատալ, դառարկ, խոսելով ձանձրացնել*
vəzəldamaq, vəzlamaq } *բզզալ, տզզալ, դառարկ խոսել*
vaqvaqa *(արաբ.) գորտի կռկռոց*
velvele *աղմուկ, ժխոր*
havlamaq *հաչել (շան)*
hayqərmaq *պոռչտալ, բղաւել*
hete pete *խոսքի մեջ վարանում*
hoplamaq *ցատկել, սիրտը խաղալ, հուզվել*
hüngür hüngür *աղիողորմ (լալ)*
həčqərmaq *հէկկկալ*

Ինչպես քննութիւնը ցոյց է տալիս՝ բնաձայն բայերի արմատը մի ամբողջական վանկ է. pat, par, tak, tek, J̌ang, J̌ay, J̌ər, J̌ərt, J̌ez, J̌əğ, J̌anb, J̌iv. J̌ev, čat, čağ, čaq, čang, čət, čərt, čər, čəng, čən, har, xər, xəš, xum, xənǰ, xort, dəz, dər, zang, zər, zərp, šap, šad, šar, šaq, šərp, šər, šur, tap, taq, təng, tən, təq, gur, gəǰ, fər, fəš, fəs, fəng, qəp, qəǰ, küt, gür, güm, mər, məš, mə, vor, vəz, vəl, hav, hayq, het, hop, hüng, həč *(բոլորը 68), որոնցից կազմվում են վերոհիշեալ 90 բառերը։ Արմատները աճում են* ər, əl, (er, ir, ur, ul, ür, ül) *մասնիկներով, որոնցից էլ կազմվում են բայանունները* tə, də *վերջավորութիւնով, իսկ բայերը* da-maq, la-maq (de-mek, le-mek) *վերջավորութիւններով։*

Բայց վերոհիշեալ 68 արմատներն էլ կարելի է դասավորել հետևեալ ձևով.

1. J̌er, čər, xər, dər, zər, šer, fər, mər, ver.
2. par, har, šar, gur, gür, šur.
3. J̌ərt' čərt xort.
4. zərp, šərp.
5. taq, čaq, šaq, tek, təq.
6. čən, tən.
7. čəng, təng, čang, J̌ang, zang. feng, hüng.
8. J̌əz, dəz, vəz.
9. xəš, feš, meš.

10. pat, čat, qüt, het, čət.
11. šap, tap, qəp, hop.
12. gəǰ, qəǰ, heč.

Մնացյալները մնում են մի-մի կամ առ առավելն երկու։

Բայց այս 12 կարգի բնաձայնները ցույց են տալիս նույնպես, որ կա կազմութիւն ընդհանուր մի կանոն։— Բուն արմատն է բառի առաջին բաղաձայնը, որ ընդհանրապես ə (33 անգամ) և երբեմն էլ a (20 դեպք) կամ e (5 դեպք), u (3 դեպք), ü (4 դեպք) ձայնավորներով միանում է r, q, n, z, š, t, p, ǰ, č աճականներին։ Ամենաշատ գործածական աճականն է r, որից ունենք 15 օրինակ։ Աճականին կարող է ավելանալ նաև մի ուրիշ բաղաձայն (t, p, g) և կազմել նոր խումբ։ Այս կողմից ամենահարուստն է ng, որից ունենք 7 օրինակ։

Այս բոլորը նույն է հայերեն բնաձայն բայերի կազմութեան հետ։ Չեմ համարձակվում ասել, թե երկու լեզուներից մեկը մյուսից փոխ է առել արդյոք, թե նույնանման մտածողութեան պատահական արդյունք է։

Այս մասին վճիռ կարող է տալ միայն թուրքերեն լեզվի պատմութիւնը և հատկապես կենսաբանական Ասիայի ալթայական լեզուների ուսումնասիրութիւնը։ Այստեղ հիշում եմ միայն, որ չուվաշերենում ազմուկ, ձայն ցույց տվող բնաձայն բայերը կազմվում են artat, altat *մասնիկներով, ինչպես՝*

šaltartat *թխկացնել*
axaltat *քահքահ ծիծաղել*
maxartat *քրմփաջել, փնթփնթալ քթի տակից։*
(Ашмаринъ, Матер. 299)

Սրանց նման են թաթարական բնաձայն բայերը, որոնք կազմվում են ի միջի այլոց ərda, əlda *մասնիկով. ինչպես՝* šabərda *«ջրի մեջ ճողփալ»,* čəyəlda *«խոզի խանչել» և այլն (անդ, էջ 300)։*

13. ՕՏԱՐ (ՓՈԽԱՌՅԱԼ) ԲԱՅԵՐ

Օտար լեզուներից փոխառյալ բայեր շատ կան հին հայերենի մեջ։ Այսպես՝ պարսկերենից են անդաճել «մտածել», բազմիլ, շնորհել, բժշկել, գրաւել, գաւել, գրաւառել և այլն։ Աւորերենից են աքսորել, բասրել, գաղթել, զուգել, թարգմանել, խարբալել, հաշուել, շպարել, սափրել, փրկել, քարոզել և այլն։ Հունարենից

փոխառյալ բառեր շատ կան հայերենի մեջ. բայց բայ չկա։ Այդ շատ սակավաթիվ բայերի մեջ կարող ենք հիշել միւռոնել, փոսել, կանոնել, հաղել, սպրոսել, պռուգել, պռոնկել, տպել, տպաւորել, մարտիրոսանալ և այլն։ Արաբերենի էլ սակավաթիվ բայերից կարելի է հիշել խալտիլ «սխալվել», խանդակել «փոս կամ խրամ բանալ», կլալիկել «անագազօծել», հիսաբել կամ խսարել «պաշարել», մկրտել, նայել և այլն։ Կիլիկյան շրջանում ֆրանսերենից փոխառյալ սակավաթիվ բայերի մեջ էլ կարելի է հիշել բյալեթել՝ ջանջղել, ջաստել, սալզել, արֆըրնդել և այլն։

Այս բոլորը վերաբերում են անցյալին։

Արդի հայ բարբառները ունեն բազմաթիվ փոխառյալ բայեր իրենց շրջապատող կամ սիրող լեզուներից։ Բազմաթիվ փոխառութիւններ ունեն հայ բարբառները Տաճկաստանում՝ տաճկերենից, Կովկասում և Ռուսաստանում՝ ռուսերենից, ինչպես և մյուս երկրներում ուրիշ լեզուներից (Ռումինիայում՝ ռումիներենից, Լեհաստանում՝ լեհերենից, Հունգարիայում՝ հունգարերենից) և այլն։ Այս վերջիններս սակավաթիվ են և չեն մտնում ընդհանուր հայ լեզվի շրջանակի մեջ։

Մեծագույն թիվը կազմում են տաճկերենից կամ թուրքերենից փոխառյալ բայերը։ Ամեն տեղ էլ սրանք երկու կարգի են բաժանվում. փոքր մասը արմատով միայն թուրքերեն է, իսկ վերջավորութեամբ հայերեն։ Տալիս ենք այստեղ մի քանի թուրքերենից փոխառյալ բայերի՝ գրեթե հայոց բարբառով.

աշխիլ, ախշիլ «հեռակուրը թթվել<թրք. eški-mek.
բաշլայիլ «սկսել»<թրք. bašla-mak.
բարըշիլ «հաշտվել»<թրք. barəš-maq.
բարըշդուրիլ «հաշտեցնել»<թրք. barəš-dər-maq.
բեջերիլ «հարմարցնել, սարքել» թրք.<beǰer-mek.
բուլըշկիլ «կեղտոտուիլ, վարակվել»<թրք. bulaš-maq.
բիլէյիլ «սրել (դանակ և այլն)»<թրք. bile-mek.
դարդըղիլ «ցրել, տակնուվրա անել»<թրք. darmadağən.
եզմէլ «ճզմել» թրք.<ez-mek.
բալլիլ «կողոպտել»<թրք. tatan.
բամահիլ «ապահել»<թրք. tamah.
բարթիլ «հշտել»<թրք. tartmaq.
թէմբըծուրիլ «մաքրել»<թրք. temiz.
բըխմէլ «խցկել»<թրք. təqmaq.

թօփել «հավաքել»<թրք. top-la-maq.
խալայել «անագել»<թրք. qalay-la-maq.
խալըսիլ «ազատվել»<արաբ. xalāṣ.
խամզել «քսել»<արաբ. ɣammāz.
խանդրել «համոզել»<թրք. qandər-maq.
խարջել «ծախսել»<արաբ. xarǰ.
խափլայել «ծածկել, պատել»<թրք. qapla-maq.
խրմըշել «չխնայել»<թրք. qey-maq, դերբ. qəy-məš.
խըռռտիլ «բարկանալ»<թրք. xərz-lan-maq.
ճազըրտրիլ «պատրաստվել»<արաբ. hāzə'r.
ճավասիլ «փափագել»<պրս. heves, havas.
մհօճրել «կնքել»<արաբ. muhr,<թրք. möhür-lemek.
մրնգրոհ «կեղտառուտ», մրնգրոհիլ «կեղտոտվել»<պրս. murdar, ազավ. mundar.
մըշտել «բռթթել»<պրս. mušt, բառնցք.
յըղնել «դիզել»<թրք. yeɣən «դեզ», yəɣ-maq դիզել, (որ ցույց է տալիս, թե ածանցումը կատարված է yəɣən գոյականից և ոչ թե բայից).
նախլել «պատմել»<արաբ. naql.
նախշել «նկարազարդել»<արաբ. naqš.
չալել «նվագել»<թրք. čal-maq.
չոքիլ «ծնրադրել» čök-mek.
սաբօնել (երև. սապնել) «օճառել»<թրք. sabun-lamaq.
սախաթ «վիճակ, հաշմանդամ դարձնել»<արաբ. saqat «հաշմ».
սըխմել «սեղմել»<թրք. səq-maq.
սըղմիլ «սեղավորվել, պարփակվել»<թրք. səɣ-maq.
սուսնալ «լռել»<թրք. sus լուռ.
փառադել «պատառոտել»<թրք. para-lamaq. (միանալով հայերեն փարատել ձևի հետ).
փառըլտալ «փայլփլել»<թրք. parəl-damaq.
փառտիլ «ժանդոտիլ»<թրք. pas-lan-maq.
փեյտայիլ «առաջ գալ, երևան գալ»<պրս. peyda.
քեսեյվիլ (երև. քիսալուել), «քիսվել բաղնիսում քիսա քսվել» պրս. kīsa քսակ.
քըֆրել (երև. քըվրել) «հայհոյել» արաբ. kufr «հայհոյանք»:

Երբեմն հայերեն բառը ձևով և իմաստով այնքան նման է լինում թուրքերենին, որ բոլորովին նույնանալու համար մի քայլ է միայն մնում: Այսպես են՝

սեղմել=թրք. səqmaq «սեղմել», որից և փոխ. Պլ. սըխմել «սեղմել».

թխել «խցկել»=təqmaq «խցկել», որից և փոխ. Պլ. քըխմել «խցկել»:

փարատել «վանել, հեռացնել, մաքրել»→թրք. paralamaq. «պատառ-պատառ անել», որից և փոխ. Պլ. փառատել «պատառոտել».

թրք. darmadaɣən «ցրված, ցիրուցան», որից փոխ. Աալ. Արբ. Եվդ. Կյսր. Մշ. Մրս. Զրս. Պլ. տարադնել «ցիրուցան անել», Աչք. բաժանել, սփռել» (հլ. տար և տեղ բառերի հետ կապակցելով):

Այլ բարբառներից հիշենք, օրինակ՝
Նոր-Ջուղայի բարբառով՝

բիլուրվել «խելահաս դառնալ, մեծանալ», բիլուրացել է «արդեն մեծ է»<թրք. بیلور bilur դիտակ>բիլուր «մի քիչ խելահաս դարձած տղա»:

դաստել «իրար վրա շարել»<պրս. dasta.

Մարաղալի բարբառով՝

բաշլամըշել «սկսել»
դամիլ «դամ դնել»
դինջանալ «հանգստանալ»
թարդիամիշել «թօղնել, լքել»
ինջիթմիշել «նեղացնել, վշտացնել»
կրտրլել «կողոպել»
հաղըրել «պատրաստել»
չամմըշել «բարձել»
ջիրվեմվել «բարկանալ»
փառշել «գործ փոել»
կուդուրմուշօցուցել «կատաղեցնել»
ալըշմըշացուցել «վարժեցնել»
թուլտատըրմըշել «շտապեցնել»
կըզդըրմըշել «տաքացնել»
(որոնք նաև թուլտատըրմըշօցուցել, կըզդըրմըշօցուցել):

Այս բոլորը, ինչպես ասացինք, ունեն հայերեն վերջավորություն և ըստ այսմ խոնարհվում են հայերեն բայերի նման. ինչպես՝ մէօհրեցի, խանդրեց, աշխեցաւ, կը փէդալի և այլն:

Այս կարգի բայերի թիվը մեծ չէ:

Սակայն շատ ավելի մեծ է թիվը այն կարգի բայերի, որոնք վոխ են առնված դերբայական -միշ ձևով և խոնարհման ժամանակ նրանց կցված հայերեն օժանդակ բայն է միայն, որ խոնարհվում է:

Եթե բայը ներգործական է, հարակից օժանդակ բայը լինում է առնել (Երև. անել, Նախ. անիլ, Պլ. ընել և այլն), իսկ եթե չեզոք կամ կրավորական է, օժանդակը լինում է լինել (Երև. ըլնել, Նախ. ըլալ, Պլ. ըլլալ). ինչպես՝

բաթմիշ ընել «ընկղմել», բաթմիշ ըլլալ «ընկղմվել», բաթմիշ էդաւ «ընկղմվեց», բաթմիշ ըրաւ «ընկղմեց», բաթմիշ պիտի ըլլայինք «պիտի ընկղմվեինք», բաթմիշ եղիր «ընկղմվի՛ր» և այլն և այլն:

Ահա մի փոքր ցանկ այս կարգի փոխառյալ բայերի.

Պոլսի բարբառով.

բաթմիշ ըլլալ «ընկղմվել»<թրք. batmäš
բաթմիշ ընել «ընկղմել»
բաթդըրմիշ ընել «ընկղմել տալ»<թրք. batərmäš
բասդըրմիշ ընել «գերազանցել»<թրք. basdərmäš
խայմիշ ըլլալ «սահել»<թրք. qayməš
խանգըրմիշ ընել «համոզել»<թրք. qandərməš
խավուրմիշ ընել «խորովել»<թրք. qavurməš
խավուրմիշ ընել տալ «խորովել տալ»
խավրուլմիշ ըլլալ «խորովվել»<թրք. qavrulməš
խըզմիշ ըլլալ «բարկանալ»<թրք. qəzməš
խըզդըրմիշ ընել «բարկացնել»<թրք. qəzdərmeš
մէօհիւրլէմիշ ընել «կնքել» <թրք. möhürlemiš
լիւգմիւշ ըլլալ «լողալ»<թրք. yürmiš
շամառլամիշ ընել «ապտակել» <թրք. šamarlaməš

Նոր-Նախիջևանի բարբառով.

սիւրմիշ անել «քշել»
ուլտուրմիշ կանինք «հարմարցնել, սարքել»
կալաճի անելէն «խոսելով»

ատէմիշ արել իս «փորձել դիտել ես»
պուհամիշ ըլալ «ցնդվել»
նախլ պիտ անէր «պիտի պատմեր»
թաշմիշ ըլալ «զնդալ, թափվել»
խազրմիշ կըլանք «կկապաղանք»
ֆուլաթմիշ կանէ «կշպռահ»
խալամիշ լալ «գործածել»

(Պատկանեան, Երկասիրութիւններ, հատ. Դ, Ռոստով, 1904, էջ 31—37)

Մարաղայի բարբառով.

չալըշմըշ լէլամ «աշխատեցի»
պանամըշ ին անէլի «հանդիմանում ին»
թալամիշ ըլէլ «շտապել»
կալամըշ տըրն «տեղավորեցին»

Ստորև տալիս ենք այլ բարբառներից օրինակներ, առաջին և երկրորդ կարգի փոխառութիւնները ներկայացնելով նույն բարբառին վերաբերող մասում.

Վանի բարբառ.

Թուրքերենից փոխառյալ բայերը երկու կարգի են բաժանվում.

ա) Նրանք, որ կազմված են որևէ թուրքական արմատով, շատ հաճախ թրք. դերբայական -միշ ձևով և հայերեն որևէ օժանդակ բայով. ընդհանրապես անել՝ եթե բայը ներգործական է և կամ եղնել «լինել»՝ եթե բայը չեզոք կամ կրավորական է, ինչպես՝

բայըլմիշ էլնել «խելքը թռցնել»
թմախ անել «ագահել»
խորոր անել «լուր տալ, իմացնել»
խավասլամիշ էլնել «փափաղիլ»
ճիւքմ կտրել «վճիռ տալ»
մայիլ եղնել «հիանալ, սքանչանալ»
սուս անել «լռել»
փոյդա անել «հնարել, ճարել» (պրս. payda)
փառլամիշ ելով «փայլեց»
փարալամիշ անել } «պատառոտել, հաշ-
փառչալամիշ անել } տել, գիշատել»

փեօզմիշ անել «փչացնել, ոչնչացնել»
քիւֆիւր անել «հայհոյել»

Այս բոլորի մեջ խոնարհման ժամանակ խոնարհվում է միայն հայերեն օժանդակ բայը և թուրքերեն բառը մնում է միշտ անփոփոխ։

բ) Նրանք, որ կազմված են թուրքական արմատից, բայց հայերեն բայական վերջավորութիւնով։ Սրանք թիվով շատ ավելի քիչ են, քան նախորդները և խոնարհվում են սովորական հայերեն բայերի նման. օրինակ՝

բաշլայել «սկսել»
բոյեմբոյրանալ «հավատարմվել»
բորիւշել «հաշտվել»
բորիւշցիւցել «հաշտեցնել»
բէջարել «խնամել, հոգ տանել» (հատկապես ալիքին)
թալանել «կողոպտվել»
թալնրվել «կողոպտվել»
խլրսել «վերջանալ»
խոջել «ծախսել»
խուրդել «փող մանրել»
կաշխել «ձին թիմարել քերիչով», որ և գ. խաշխել
կիմիշել «խնայել»
ջնռաել «բարկանալ» արաբ. jinn «դև, սատանա» բառից)
ճազըրվել «պատրաստվել»
մէօրէլ «կնիքով կնքել»
մուռաըռել, մուռալել «կեղտոտել, ապականել»
նիշել «նկարագարդել» (արաբ. naqš «զարդանկար» բառից)
շարխօշնալ, սարխօշնալ «հարբել»
չէօչէլ «չոքել, ծունր դնել»
ջայնվել «կորչել գնալ», հրմ. ջայնվի՛ «կորի գնա»
սապոնել «օճաուել»

սուխկրտել «հաշմանդամ դարձնել» (արաբ. saqaṭ «հաշմանդամ»)
սիլախվորվել «դինվել»

Համշենի բարբառ.

Թուրքերենից փոխառյալ բայերը շատ բազմաթիվ են. ընդհանրապես վերցված են դերբայական ձևով կամ հայերեն ընդ, ըլլուշ օժանդակներով. օրինակ՝

խապիս ընուշ «բանտարկել»
յեղմիշ ընուշ «դիզել»
կայիր ըլլուշ «կորչել»
շաշմիշ ըլլուշ «զարմանալ» և այլն։

Շատ ավելի քիչ են այն բայերը, որոնք հայերեն բայական վերջավորութիւն ստանալով՝ բոլորովին հայացել են և խոնարհվում են հայերեն ձևով. օրինակ՝

յեղնուշ կամ յեղմուշ «դիզել», սրղմուշ «սեղմել», բաշընուշ «վերջացնել», պարրշկրնուշ «հաշտեցնել», չօքուշ «ծնրադրել», չալուշ «նվագել», բէջարուշ «գլուխ հանել», ոզմուշ «ճզմել, ճմռել», կանչդրմուշ «համոզել», ղալայուշ «անազատօծել», ղըմըշուշ «խնայել», կավուրմուշ «տապակել», որից օրինակ կավուրմեցի «տապակեցի», կավուրմիմ ինի «պիտի տապակեմ», կավուրմ՝ «տապակիր» և այլն։

Կիլիկիայի բարբառ.

Սրանք նույնպես երկու կարգի են բաժանվում. առաջինը զուտ թուրքերեն դերբայներն են, որոնք մտել են բարբառիս մեջ (միշ, մըշ ձևով) և գործածվում են միշտ նալ «լինել» կամ ենիլ «անել օժանդակներով։ Այս կարգի բայերը խիստ շատ են. տալիս ենք միայն մի քանի օրինակներ.

բաթմըշ նալ «ընկղմվել», «անանկանալ»
բաթըմըշ ենիլ «ընկղմել»
ղանդըմիշ ենիլ «համոզել»
ղավուրմիշ ենիլ դօլ «խորովել տալ»
ղավուրմըշ նալ «խորովվել»
ղը՝զմը՝շ նալ «բարկանալ, կատաղել»
ղը՝զդը՝րմիշ ենիլ «կատաղեցնել»
սօյմուշ ենիլ «կողոպտել»
ուչդուրմիշ ենիլ «սարքել, հարմարացնել»

դիւթմիշ ենիլ «մշանել»
մեօճիւլլեմիշ ենիլ «կնքել»

Երկրորդ կարգին են պատկանում այն բայերը, որոնք արմատով թուրքերեն են, բայց վերջավորութիւնով հայերեն և խոնարհվում են հայերեն բայի պես: Սրանց թիվը՝ նախորդների համեմատութիւնով, շատ ավելի քիչ է: Տալիս ենք մի քանի օրինակներ.

էշխիլ «կիրակուրը միալով թեզվիլ»
բայըշիլ «հաշտվիլ»
բայըշցընել «հաշտեցնել»
էզմիլ «ճգմել, ճնշել»
դամանիլ «ազահութիւն անել»
թեմիսցընիլ «մաքրել, սրբել»
խալայիլ «կլնկիլ, անուգազօծել»
խալըսիլ «ազատվել»
խամնիլ «քսութիւն անել, մատնել»
խեյջիլ «ծախսել, խարջել»
խըմըշիլ «խնայել»
ճազըյվընալ «պատրաստութիւն տեսնել»
ճավասըլ «փախչագել, ցանկանալ»
յը՛ղընիլ «դիզել»
ճախշիլ «ենկարազարդել»
չուքիլ «ծննդագրել»
սոբիւնիլ «օճառ քսել»
սախթիլ «միասնով հաշմանդամ դարձնել»
սը՛խմիլ «սեղմել, ճնշել»
փեյդեյիլ «ածիլվուց հետո հարթել, հղկել, փխրատհ անել»
քեսեյվալ «բաղնիսում քիսա քսել»
ֆլանիլ «հայհոյել» (ծագում է ֆլան ֆլաո կանեմ «այսպես այնպես կանեմ» ձևից):

Սվեդիայի բարբառ.

Առաջին կարգի բայերը կազմված են թուրքերենի անցյալ դերբայից, որ միում է միշտ անփոփոխ և խոնարհվում է նրա միացած հայերեն օժանդակ բայը:

Երկու օժանդակ բայ կա, որոնք խոնարհվում են այս պարագային. ընիլ «լինել» և իմիլ «անել». առաջինը չեզոք և կրավո-

բական բայերի համար, երկրորդը՝ ներգործականը (որի հետ նաև պատճառականն) բայերի համար:

Հայտնի է, որ թուրքերենում անցյալ դերբայը երկու ձև ունի. ծանր ձայնավորի համար -məš, թեթև ձայնավորի համար -miš. հայերենը, որ ծանր ու թեթև ձայնավորների հատմար խտրութիւն չունի, երկու ձևերից միայն մեկն է վերցրել իր փոխառութեանց մեջ: Պոլսահայ բարբառը (ինչպես նաև Ղրիմի և Հյուս-Նախիջևանի բարբառը) վերցրել են -միշ ձևը, որ ավելի հարմար էր հայերենին, իսկ Սվեդիայի բարբառը վերցրել է -մըշ ձևը: Ահա օրինակներ.

բարմըշ ընիլ «ջրի տակ ընկղմվել. 2. սքանչանալ»
բաթմըշ իմիլ «ընկղմել. 2 փչացնել»
բասթըրմըշ իմիլ «գերազանցել»
ղ՛ավըռմըշ իմիլ «խորովել»
խանդըրմըշ իմիլ «համոզել, խաբել»
շաշմըշ ընիլ «զարմանալ» և այլն և այլն:

Երկրորդ կարգին են պատկանում այն բայերը, որոնց արմատը թուրքերեն է (կամ նաև արաբերենից ու պարսկերենից փոխառյալ թուրքերեն), իսկ խոնարհման վերջավորութիւնները հայերեն: Ահա օրինակներ.

բառըշիլ «հաշտվել. 2 սակարկութեան մեջ համաձայնութեան գալ»
բառըշցընիլ «հաշտեցնել»
բըլըշիլ (թրք. bašla-maq) «սկսել»
դարդըղնիլ «ցանուցիր անել»
դըմմանիլ «ազատել»
բալանիլ «կողոպտել, ավարել»
խալիսիլ «ազատել. 2 ազատվել»
խամազիլ «քսութիւն անել, մատնել»
խարջիլ «ծախսել, վատնել»
ղ՛ալաջիլ «կլնկիլ, անուգազօծել»
մըշդիլ «հրել, բոթել»
ճախշիլ «ենկարազարդել»
սըխմիլ «սեղմել թրք. səq-maq»
փառըլդի՛լ «փայլփլիլ»
փեյդաճիլ «ելևէջ. հայտ գալ»
բուֆրիլ «հայհոյել»

Կան և արաբերեն բայեր՝ այս ձևի փոխառութիւամբ. ինչպես՝

խագբռիլ «պատրաստել»
խիսսիլ «հղծանել, փչացնել» նաև «մահանալ»
բլղիլ «կուլ տալ» (<արաբ. بلع bal')
շըլֆըթի՛լ «ցավից մռմռալ, կապտել
հագ'աթիլ «պատմել» (արաբ. حكاية hikāyat)

Ասացինք, որ այս երկրորդ կարգի բայերը խոնարհվում են հայերեն բայերի պես. իսկ առաջին կարգի բայերը ունեն այն առանձնահատկութիւնը, որ խոնարհման ժամանակների մեջ մասնիկը դնում են օտար բառի սկիզբը և ոչ թե օժանդակի վրա, այնինչ ճիշտ հակառակը այն ձևիւ որ ընդունված է Պոլսի բարբառում. օրինակ՝

գը շաշմըշ ըննօմ «կը զարմանամ»
գու շաշմըշ ըննօմ «կը զարմանամ կոր»
գը բաղաշլամըշ ինէ «կը պարզևէ»
գու բաղաշլամըշ ինէ «կը պարզևէ կոր»
գը բասդըրմըշ ինիմ «կը գերազանցնեմ»
գու բասդըրմըշ ինիմ «կը գերազանցնեմ կոր»
բըր բասդըրմըշ ինիմ «պիտի գերազանցնեմ»:

Թուրքերենից հետո դալիս են ռուսերենից փոխառյալ բայերը, որոնք չափազանց շատ են Նոր-Նախիջևանի բարբառում, և շատ ավելի սակավաթիվ Կովկասի հայոց բարբառներում: Սակայն որ բարբառին էլ որ պատկանին, ռուսերեն բայերը չեն ստացած հայերեն բայական վերջավորութիւն և միշտ էլ խոնարհվում են օժանդակ բայով:

Դնում եմ մի քանի օրինակ իմ Քննութիւն Նոր-Նախիջևանի բարբառի աշխատութիւն (Երևան, 1925, էջ 378—379 շար.) ռուսաբան հատվածից:

փհռեժիվաթ անէյիր նը «նեթե ապրէիր, ապրուեներն ունենալիր»
փօռթիթ չանէ՞ «չփչացնի՞»
թռէ'թօվաթ արի «պահանջեցի»
փաստուփիթ արա՛ «վարվիր»
արռաթիցցը էի՛ր «դիմիր»
իզլաժիթ արա՛ «առաջադրիր»

փռասիթ արա՛ «խնդրիր»
փադավաթ թօ անէ «տա»
փռաժիվաթ կանէ «կբնակվի»

Այստեղ արված բոլոր բայերը անորոշ դերբայով են, որ ռուսերեն բայի խոնարհման մեջ պարզագույն ձևն է: Այսպես են նաև հունգարահայոց (Սուչավայի) բարբառով գրված հատվածում (տես իմ Բարբ., էջ 273—6) գործածված ռումիներեն և լհհերեն բառերը:

դ'ելեգրաֆադ՝ անիլը «հեռագրենք»
բ'օզվօլիդ՝ անիլ «թուլատրեն» (լհհ.)
վըզ'սուի'դ իլ «մոռած են»<ռում. vacsuít
նըզ'ըժիդ՝ չանիլ «չենգրեն»<ռում. necajit
սլիդ՝ անէ «շտապի»<ռում. salit
արանժադ՝ կանէ «կկարգավորի» ռում. aranjat

Այսպես են բոլոր ուշ ժամանակի փոխառութիւնները, որոնք հայերենի բնիկ բառերի հետ դեռ մերված չեն: Այնպես որ զարմանալի է օրինակ՝ անգլ. brush «խոզանակ» բառը, որ Նոր-Ջուղայի բարբառում փոխ առնվելով, դարձել է հայկական վերջավորութիւամբ բրշել «խոզանակիլ»:

14. ԱՆՍՈՎՈՐ ԱԺԱՆՑՅԱԼ ԲԱՅԵՐ

Ամերիկյան արավակ լեզվի մեջ կան հետևյալ բայական ձևվերը.

Kan «մի քիչ» բառով կամ մասնիկով կազմվում են ամբողջական խոնարհմամբ բայեր, որոնք ցույց են տալիս, թե գործողութիւնը քիչ չափով է կատարվում. ինչպես՝

daiyahadda «ման եմ գալիս»
daiyahaddakannika «մի քիչ ման եմ գալիս»:
(Grevaux—Sagot—Adam, 229)

hittika «հաճույքով, սիրով, gern». կազմում է ամբողջական խոնարհմամբ բայեր. ինչպես՝

hoddikahittikabu «հաճույքով ուզում եմ քեզ տեսնել»:
(Անդ, 231)

Այս երկուսի միացումով կազմվում է նոր բայ, որ նույնպես ունի ամբողջական խոնարհում. ինչպես՝

daiyahaddakannihittiparuka «ձիեն ես փափագ ունենալի, մի քիչ մաղ գալու»:

(Անգ, 232)

rubuûn «միասին» բառով կազմվում են բայեր, որոնք ցույց են տալիս, թե ենթական միասին այդ գործողությունն է կատարում և նրա հետ ուրիշ բան էլ չի անում. խոնարհվում է ամբողջ բայը իր բոլոր ձևերով. ինչպես՝

aiyahaddarubuda «միասին մաղ եմ գալիս (և ուրիշ բան չեմ անում)»: (Անգ, 232)

Այս ձևը միացնելով առաջին ձևի հետ՝ ստացվում է նոր բայ, որ նույնպես ունի ամբողջական խոնարհում. օրինակ՝

adiarubukannidapa bumûn «միասին մի քիչ պիտի խոսեմ քեզ հետ (ուրիշ բան չպիտի անեմ)»:

(Անգ, 234)

Kan «գնա, տակավին, էլ» բառով կազմվում են ամբողջական բայեր. ինչպես՝

mandinkoada գնա չեմ գալիս
mandinkoaba գնա չես գալիս
mandinkoala գնա չի գալիս և այլն:

կարելի է սրա վրա ավելացնել նաև re մասնիկը. օրինակ՝

yumûnikoarela «գնա նա այնտեղ է»:

(Անգ, 234)

Non-agentif passif— բայական այն ձևն է, որի ենթական հայտնի չէ, կամ որովհետև խոսողը չգիտե, կամ ուզում է թաքցնել իր իմանալը, կամ չի մտածում ենթական հայտնելու մասին, որ սակայն իսկույն պիտի երևա նույն խոսքի շարունակության մեջ: Ըստ այմ, երբ ունենք կրկնակ նախադասություն, առաջինի մեջ կարող է լինել այնպիսի մի ձև, որ պիտի պարզվի երկրորդ նախադասության ներդործական բայի և նրա ենթակայի միջոցով. օրինակ՝

The man's chest is being bitten-the lion is bitting it.
Մարդու լանջը պատռված էր.— առյուծն էր պատռել այն:
Այս ձևը գտնվում է աֆրիկյան չիչևա լեզվում:

(Watkins, 76)

Agentif passif.— Սա այն բայական ձևն է, ուր հակառակ նախորդին՝ ենթական հայտնի է և ենթարկվում է բայի նշանակած գործողության: Այսպիսի ձև կարող են ստանալ միայն ներդործական բայերը՝ վերածվելով կրավորականի. օրինակ՝

Թուլլ ումիք (ներան) Զամմունջային ամուսնացվի (նա) Կասունգայի հետ:
Այս ձևն էլ գտնվում է աֆրիկյան չիչևա լեզվում:

(Watkins, 79)

Ամերիկյան կարմիրներեն լեզվի մեջ կա բայական մի ձև, որ ցույց է տալիս, թե լավ է կատարում այդ գործողությունը. այսպես arameta «թաքցնել» բայից՝ karametatitina «լավ եմ թաքցնում», karametatitibu «լավ ես թաքցնում» (na Ա. դեմքի դերանուն, bu Բ դեմքի) և այսպես բայի բոլոր ժամանակներն ու դեմքերը:

(R. Breton, 55)

Բանտու ընտանիքի բնագա լեզվի մասին խոսելիս, ահա թե ինչ է գրում J. Mockey, էջ 7. «Աֆրիկայի այս մասի լեզուները նշանավոր են բայի այն զարմանալի ճկունությամբ, որով մի միակ արմատից կանոնավոր կերպով, անվերջանալի դանազանությամբ ածանցում են բազմաթիվ ձևեր: Չկա թերևս աշխարհում մի ուրիշ լեզու, որ մոտենա նրանց բայի դանազանության և ճիշտ թեքումին, ընդունելով միևնույն ժամանակ՝ խոնարհման այնպիսի խիստ կանոնավորություն և իմաստի ճշտություն»:

Հիշյալ բնագա լեզվի մեջ բայը 8 ձև է ստանում. օրինակ՝

kalaka «խոսել»
kalakate «շարունակել խոսելը»
kalakia «խոսել մեկին կամ մեկի համար»
kalakide «խոսեցնել» (պատճառական)
kalanakiani «իրար հետ խոսել» (փոխադարձ)
kalaka bekalikali «ոչ դիտմամբ, այլ պատահարար կամ զվարճության համար խոսել կատակով»
takala «խոսել առաջին անգամ, խոսել փորձել»
talaka bokalaka «խոսել և էլ չխոսել»:

Ժամանակներն են 1 ներկա, 4 անցյալ, 2 ապառնի. այս 7 ժամանակները ունեն 2 եղանակ՝ սահմանական և առթարատական, հրամայականը ունի 1 ձև, կարողականը 3 ձև (2 ներկա և 1 կա-

տարյալ). բոլորը լինում է 18 ձև: Բայի բոլոր 8 տեսակներն էլ ունեն այս 18 ձևը՝ դրական և բացասական (առանց օժանդակի), որ լինում է 18×8×2=288, նույնքան էլ կրավորական՝=576, որ եթե 6 դեմքով հաշվենք, կունենանք 3456 ձև մի բայարմատից:

(Mackey, 30—33)

Նաբիներենի բայական բունը շատ ածանցական ձևեր ունի, որոնք դասազանվում են ըստ իրենց նյութական բովանդակության: Մի բան դցել կամ գետնի վրա դնել տարբեր են, եթե դցված կամ դրված առարկան թեթև է կամ թե ծանր է: Երբ մի բան կտրված է, տարբեր բայ է, եթե միայն մի կտոր է կտրված տարբեր է, և, վերջապես, ուրիշ է եթե շատ կտորներ են կտրված: Կամ տարբեր է, երբ մի կարծր բան և կամ մի փափուկ բան է մի քանի կտոր արված: Երբ մի բան են լցնում, տարբեր բայ է, եթե մի անգամից է կատարվում տարբեր, ինչպես մի մեծ ամանից փոքրի մեջ լցնելով և կամ թե մի քանի անգամից լինի կատարված և այլն: Օրինակ՝

big մի բան դցել,
bag մի ծանր բան դցել. օրինակ՝ մի բեռ դցել:

Այս նպատակին հասնելու համար բայարմատի ծայրին դնում են զանազան մասնիկներ, կամ նաև նախամասնիկներ, կամ արմատի ներքին ձայնավորն են փոխում (ձայնդարձ), կամ արմատի վերջում մի բաղաձայն ավելացնում (աճական): Բայց այս բոլորի համար ոչ մի կանոն չկա, մասնիկների գործածությունը կատարվում է խառնիխուռն և տիրում է մեծ մթություն:

(Kaukzor 110—113, 123)

Աֆրիկյան և ամերիկյան լեզուները շատ հարուստ են ածանցյալ բայերի զանազան տեսակներով: Ահա թե ինչ է ասում V. Henry իր աշխատության մեջ ամերիկյան չիկիտա լեզվի մասին. «Զարմանալի չպիտի լինի ասել, որ չիկիտա լեզուն ունի անսահման կարողություն բարդելու նախնական արմատները և կազմելու բարդ բայեր և գոյականներ... և մարդ ապշած մնում է գաղափարների այն կուտակման հանդեպ, որ այս լեզուն արտահայտում է մի բայով, որ խոնարհվում է զանազան եղանակներով և դեմքերով. ինչպես՝ «գլխին հարված առանալ», «մեկ ուրիշի դիմացը տեղավորվել», «մազերը շատ խճճված լինել» և այլն

(տես L. Adam—V. Henry, Arte... de la langue Chiquita, Paris, 1880, Առաջաբան, էջ XV):

Այստեղ դնում եմ չիկիտա լեզվի ածանցյալ բայերի երկար շարքը:

Արմատի վերջում ավելացնելով i, առացվում է մի բայ, որի նշանակությունն է «իսկույն վերջացնել գործողությունը կամ այդ գործողությունը առաջին անգամ կատարել». օրինակ՝ ixai-ca «ուտելը վերջացնել» կամ «ալիմ սկսել ուտել»:

— ciri մասնիկը ցույց է տալիս մի բան առաջուց կամ կանխավ անել. ինչպես՝ yapiu-ciri-ca «ես առաջուց եմ ցանում».

— nauco «անել իբր թե ձրիաբար և առանց ունենալու ուրիշ շարժառիթ՝ եթե ոչ անել այն».

— noço «ուրիշ ձևով անել».

— na «կեղծիք անել մի բան».

— çupizi «վատ անել, սխալ անել».

— zupi «անել մի բան շտապով և առանց հոգատարության».

— çabo «անել հանկարծ, անակնկալ կերպով».

— ooco «ջանադրությամբ անել մի բան»,

— utu «չծուլանալ անելուց, չձգձգել».

Ահա օրինակ zura-ca «խոսել» բայի զանազան երանգները.

zura-pa-ca խոսել մի ուրիշին.
» -tai-ca խոսելիս լինել.
» toqui-ca խոսել, շատախոսել.
» -taqui-ca հաճախ խոսել.
» -ta-ca ցած ձայնով խոսել.
» -tupura-ca բարձր խոսել.
» -zoo-ca կատաղությամբ խոսել.
» -ta-ca խոսել ուշադրությամբ և դիպուկությամբ.
» -ciri-ca ուրիշներից առաջ խոսել.
» -zori-ca շտապով խոսել.
» -tacaxi-ca կակազելով խոսել.
» zura-çabo-ca կոպտաբար խոսել.
» -b-aezo-ca ուրիշի խոսքերը կրկնելով խոսել.
» -tiincanene-ca երկար խոսել.
» -zupi-ca առանց մտածելու խոսել.
» çupiri-ca վատ խոսքեր խոսել.
» -zipi-ca կեղտոտ խոսքեր խոսել.
» -to-ca ուրիշից հետո խոսել.

» -tobi-ca *խոսել սկսել և ընդմիջվել.*
» -tochee-ca *խոսքը վերջացնել.*
» -tochee-ta-ca *խոսելուց բոլորովին դադարել.*
» -toqui-nau-xii-ca *շնորհալի կերպով խոսել.*
» -ana-ca *գորովալի կերպով խոսել.*
» -moco-ca *տարբեր ձևով խոսել.*

(L. Adam—V. Henry, 47—50)

Մյուս կողմից ահա թե ինչ է ասում Westermann, 47, *իր աֆրիկյան էվե լեզվի ընդարձակ և բարեխիղճ քննութեյան մեջ. «Մեր լեզուների մեջ մանրիկների և վերջավորութեյունների ծագումը կամ նախնական նշանակութեյունը շատ անգամ կամ բնավ ծանոթ չէ և կամ թե շատ դժվար է ճանաչել: Մինչդեռ էվե լեզվում այն բոլոր ձևերը, որոնք ծառայում են հոլով, թիվ կամ բայական ձևեր կազմելու, անկախ, ինքնուրույն գոյութեյուն ունեցող գոյականներ կամ բայեր են»:*

Ցույց տալու համար, թե ամերիկյան հնագույն լեզվի բայը զանազան մանրիկներով գործածութեյան ինչպիսի նրբութեյուններ է արտահայտում, տալիս ենք հետևյալ օրինակները.

yo wiñ xan *նա վերցրեց մի ինչ-որ հեղուկ կամ մանր կտրատած մի բան, որ կարելի էր կողովի մեջ լցնել:*

ya wiñ an *նա վերցրեց մի կտոր քարի նման մի բան:*

ya wiñ tan *նա վերցրեց գավազանի նման երկար մի բան:*

ya wiñ ut *նա վերցրեց մի շոր կամ նրա նման մի բան, ինչպես մի վերմակ:*

(Goddard, 34)

Ամերիկյան տարատեսակ լեզվի մեջ՝

ber *մանրիկը ցույց է տալիս, թե գործողութեյունը լուրջ չէ, այլ կատակով էր արված. օրինակ՝ միացնելով* pe *ընդհանրութեյան ցույց տվող և* ra *հոգնակի շինող մանրիկների հետ՝* ni *բայական մանրիկով՝* tembum *«ամուսնանալ» արմատից ստացվում է՝*

tembum-ber-pe-ra-ni *«ամուսնանալ իրար հետ կատակով» (ծիծաղի համար, ոչ լրջորեն. երևակայական մի տեսակ խաղ է):*

(Grasserie, 21)

quare *մանրիկով կազմվում են այնպիսի բայեր, որոնք ցույց են տալիս, թե գործողութեյունը միայն իր համար է կատարվում. օրինակ՝* pañi *տանել,* pa-quare-ni *տանել իր համար:*

(Grasserie, 21)

en *մանրիկը ցույց է տալիս մի հոգով արված մի բան:*

(Grasserie, 21)

scu- *մանրիկը ցույց է տալիս, որ գործողութեյունը կատարվում է մի լայն առարկայի վրա. ինչպես՝*

cara-ni *գրել*→cara-scu-ni *գրել (մի սեղանի վրա)*
hure-ni *վառել*—hure-scu-ni *վառել (օջախը):*

(Grasserie, 21)

Նույն tarasque *լեզվում՝*

quatha *մանրիկը ցույց է տալիս, որ գործողութեյունը կատարվում է ցածրը, գետնի վրա. օրինակ.*

quira-ni *դնել*—quira-quatha-ni *դնել ցածրը՝ գետնի վրա:*

(Grasserie, 21)

Հետաքրքրական են այս լեզվի մեջ մարմնի մասեր և անդամներ նշանակող մանրիկները, որոնք կցվում են բային, երբ հարկ է լինում խոսել այդ անդամների մասին. օրինակ՝

cu	*ցույց է տալիս*	*ձեռքը, մատները.*		
cha	»	»	»	*կոկորդը*
di	»	»	»	*ականջը*
ru	»	»	»	*ճակատը*
ta	»	»	»	*երանքը, կողքը*—cuisse?
tsi	»	»	»	*գլուխը*

(այսպիսի մանրիկների թիվը 60-ից ավելի է):

Օրինակ՝ hopo *«լվալ» բայից՝*

hopo-cu-ni *լվանալ (ձեռները)*
hopo-cha-ni » *(կոկորդը)*
hopo-di-ni » *(ականջը)*
hopo-ta-ni » *(երանքը*— cuisse).
hopo-ru-ni » *(ճակատը)*
hopo-tsi-ni » *(գլուխը):*

Բայց այսքանը բավական չէ. մանրիկների հետ պետք է հիշել նաև անդամը. ինչպես՝

huponi-di-ni cutziqua
լվանալ (ականջ) ականջը:

(Grasserie, 23)

Ամերիկյան տուպի լեզվում կա բայական մի ձև, որ անհարմար անունով կոչվում է verbe absolu (բացարձակ բայ) և ցույց է տալիս մարդու վրա կատարված մի գործողութիւն. կազմվում է poro մասնիկով. ինչպես՝ a-ambae ù ուտում եմ մի բան, a-poro-u ուտում եմ մարդ կամ մարդու միս, a-s-aysu սիրում եմ նրան, a poro-aysu ես մի մարդ եմ սիրում, a poro-mboe, ես մի մարդ եմ ուսուցանում, a-poro-mondo մարդ եմ ուղարկում:

(L. Adam, 50)

Ամերիկյան դակոտա լեզվով բայարմատը ստանում է զանազան նախամասնիկներ, որոնք ցույց են տալիս, թե գործողութիւնը ինչ միջոցով կամ ինչպես է կատարվել:

՝bo ցույց է տալիս, որ գործողութիւնը կատարված է կարելով, սողոցելով.

bo հրացանով, փայտով կամ բռունցքով զարնելով.
k կացինով զարնելով, տաշելով.
na ոտքով զարնելով կամ ճնշելով.
pa ձեռքով հրելով կամ շփելով.
ya բերնով մի բան անել:

Բայարմատը մնում է անփոփոխ. միայն մասնիկներն են ավելանում. ինչպես՝ ksa արմատից՝

baksa գանակով կտրել երկուսի.
boksa հրացանով զարնել.
kaksa կացինով կտրել.
naksa ոտքով ջարդել.
paksa ձեռքով ջարդել.
yaska խածնելով (բերանով):

(Riggs, 20)

Հնդկական բոդո լեզվից՝

ne-bai-thā-thī
4 3 2 1

«ձեռացնել (1) թե կանգնել է (2) և շարունակել (3) գնալը (4).

nu-zā-hui-nai-šui-lā
գնա-վերցրու և նայիր ու դիտիր ուշադրութիւնդ:

(Grierson, հատ. III, մ. II, էջ 13)

Ոչ միայն մասնիկներ, այլև մակրայներ միջամասնիկի ձևով կարող են մտնել բայի մեջ. օրինակ՝ հնդկական նագա լեզվով՝ hu «ամբողջապես» մակրայով՝

mhā-či-hu-lelho-di
«չկարողանալով ուտել ամբողջապես բանները»:

Այսպիսի բառեր են նաև lā նորից, mē միշտ, ni ցանկալ, pi շատ, prē բոլոր, pu ամբողջ, se հույժ, tā ամբողջապես, wā կամ zo իմաստը սաստկացնող. այս բոլորը կարող են մտնել բայի մեջ:

(Grierson հատ. III, մ. II, էջ 213)

Սամատրայի բատա լեզվի մեջ այնպիսի բայեր կան, որ մենք մի ամբողջ բարդ նախադասութիւնով պիտի բացատրեինք. ինչպես՝

manggomahhon «մի բան մի ամանից ձեռքերը լիքը վերցնելով մի արիշ ամանի մեջ լցնել»:

(Schreiber, 15)

Պերսի առնա սիմի կամ կեչուա լեզվի մեջ բայը ունի բազմաթիվ մասնիկներ, որոնք կցվելով բայի վերջին՝ տալիս են բազմատեսակ երանգներ: Պարզ մասնիկների թիվը է 22, իսկ նրանց խառնուրդներից կազմվում են բարդ մասնիկներ, որոնց թիվը է 84, միասին՝ 106 մասնիկ: Օրինակ՝ pu մասնիկով կազմված բայերը ցույց են տալիս, թե գործողութիւնը կատարվել է հանկարծ, պատահաբար և անակնկալ կերպով. axlya-capuy նշանակում է «կորած բանների մեջ իրանը փնտրելով նորից ընտրել»:

Զարմացանց մեծ է մասնիկների այս խառնակութիւնը:

(Middendorf, 103)

Նույնիսկ այնպիսի մի հետամնաց լեզու, ինչպես Ավստրալիայի ավաբակալ լեզուն է, ունի հարուստ բայական ածանցում. օրինակ՝ tiir «կտրել» արմատից՝

tiir-kulliko ինքնիրեն կտրվել.
» -burrilliko մի գործիքով կտրել.
» -bung-gulliko կտրել անձամբ (և ոչ թե գործիքով).
» -buġ-ga-bunbilliko թուլլատրել կտրել.
» -buġ-gulliko սրիպել կտրել.

» -burribunbilliko *թուլլատրել կտրել ալևինչ նպատակով.*
» -burrilliko *թուլլատրել կտրել մի բանի համար.*
» -kullibunbilliko *թուլլ տալ, որ ինքնին կտրվի.*
» -kulliko „to break of its own itself, as wood".
(Threlkeld, 62)

Ավստրալիայի վիրանդհուրի լեզվով (որ սակայն 4-ից ավելի հաշվել չգիտե), բայը ունի բազմաթիվ նրբութիւններ, որոնք արտահայտվում են հետևյալ բառամասնիկներով.

bianna *գործողության հարատևություն.*
(օրինակ՝ ya- bianna *միշտ կամ շարունակ նայել).*
gannanna *ներկայումս գործողության հարատևություն.*
awaigunnanna *երկար շարունակություն (օրինակ՝* ga-gawai-gunnanna *երկար նայել).*
garrimana *ամբողջ օրը շարունակել.*
guabianna *ամբողջ գիշերը շարունակել.*
numinga *մի գործողություն շարունակել մի փոքր ժամանակ՝ մի ուրիշը սկսելուց առաջ.*
billinga *մի հրամանի հնազանդելով կատարել.*
lilinga *մի գործ կատարել մի ուրիշի փոխարեն.*
duringa *մի բան անել լավ և անթերի.*
danna *մի բան անելուց և մի քիչ դադար տալուց հետո նորից անել.*
gilanna *երկուսով միասին մի բան անել.*
einga *մի բան ուրիշներից առաջ անել.*
nana *մի բան անել մի ուրիշ մարդու արածից հետո.*
maranna *մի բան անելուց հետո մի բան էլ անել (օրինակ՝ բռնելուց հետո ծեծել).*
(Threlkeld, IV, 62)

Հիպերբորյան չուքչի լեզուն ունի 22 բայակերտ մասնիկ, որոնք երանգավորում են բայի իմաստը: Դրանց մեջ հետաքրքրականն են հետևյալները.

—syqîu *ցույց է տալիս միայն մի անգամ կատարված գործողություն. ինչպես՝ «մի անգամ նկավ, մի անգամ սպանեց» և այլն:*

—čet— *ակարացնում է գործողության ուժը, մի քիչ կամ հազիվ երբեմն անել մի բան. ինչպես՝ «հազիվ է պատահում, որ նա կռվի, քիչ անգամ է դուրս գալիս...*

—ntet *ցույց է տալիս գործողության ավելացումը, շատանալը.*
—qaet *ցույց է տալիս* endearment *և* diminution *(սիրցնել, նվազեցնել).*
—čhat *ցույց է տալիս խոսողի զայրույթը.*
—čet *ցույց է տալիս զգալ (լավ, տաք).*
—ru *ցույց է տալիս մեծ թիվ կամ բազմություն. ինչպես՝ նկան մեծ բազմությամբ. նստած էին մեծ թվով. ձյուն նկավ մեծ քանակությամբ:*
—ñita *ցույց է տալիս գլուխ բերել մի բան* (to fetch).
—tuwe *հանել (շոր, վերարկու և այլն).*
—ip *հագնել (գլխարկ, շոր և այլն).*
—gili *որոնել (ինչպես որսի ժամանակ).*
—ų *ուսել (միս, լարդ և այլն):*
(Bogoras, 805—812)

15. ՀԱՐԳԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Տեսանք դերանունների քաղաքավարական ձևերը զանազան լեզուների մեջ: Դրանցից զուրս կան նաև խոսքերի քաղաքավարական ձևերը:

Բոլոր հնդիկ-իրանական լեզուները բայերի մեջ ունեն հարգական ձևեր. բայց հնդկական նեպալի լեզուն հնարել է մի ամբողջ հարգական խոնարհում՝ ընդօրինակելով տիբեթ-բիրմանական լեզուներից: Օրինակ՝ Նեպալի լեզվով եթե ուզենան ասել «նա արեց», հարգական ձևով պիտի ասեն՝ tes-lē garna bho, *որ բառացի նշանակում է «նրանով արվելով եղավ,* by him doing became*»: Նմանապես «Դուք արիք» ասելու տեղ* tapāni-lē garnu bhō *«ձեզանով արվելով եղավ»:*

Սրանով, ինչպես տեսնում ենք, ենթական ինչ դեմք էլ որ լինի (Ա, Բ, Գ դեմք, եզակի կամ հոգնակի, արական կամ իգական), հարգական խոնարհման ժամանակ բայը դրվում է եզակի Գ դեմք, արական:

Հարգական բայն է hūnu „to become, լինել, վերածվել»:

Սակայն սա հին կամ նախնական ձևն էր: Ժամանակ անցնելով բայի նախնական հորինվածքը մոռացվից և հարգական բայն էլ սկսեց խոնարհվել սովորական բայի ձևով: Ենթական դրվեց ուղղական հոլով, թեև բայը ներց Գ դեմք: Այժմ այս է հարգական ձևը:

Մի ուրիշ հարցական խոնարհում էլ կա Նեպալի լեզվում, որ է փոխանակ ասելու «նրանով արվելով եղավ», սովորական դերանունն դնելով՝ ասում են. «նա եղավ անող, he became a doer»։
(Grierson, հատ. IX, մ. IV, էջ 41—43)

ՀԱՎԵԼՎԱԾ

1. ՍՂՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՄԵՋ

Սղման ու ամփոփման այն բոլոր կանոնները, որ տեսանք հոլովման ու ածանցման մեջ, անփոփոխ կան նաև բայերի խոնարհման մեջ. այսպես՝

գիտ — գուանել, գիտ.
մուտ — մտանել, եմուտ.
սէր — սիրել, սիրեմ.
լոյց — լուցանեմ, լուցի, ելոյց.
հովիւ — հովուեմ, հովուեցից.
արբանեակ—արբանեկեմ, արբանեկեալ.
հրեայ — հրէանալ.
կեա — կեալ, կենդուցանել, կեցի, կեաց։

Ձենք խոսում ա, ե, ո, այ, աւ ձայնավորների և երկբարբառների մասին, որոնք ինչպես հոլովման, այնպես և խոնարհման մեջ մնում են անփոփոխ։

Առանձնապես կարևոր է հիշատակել այն երևույթը, որ երբ փոփոխելի ձայնավորները գտնվում են արմատի վերջին բաց վանկում, այսինքն կազմում են արմատի վերջին ձայնավորը, անփոփոխ մնում են ձայնավորով սկսող մի որևէ վերջավորության առաջ (ինչպես հոլովման ժամանակ), բայց փոփոխման օրենքին են ենթարկվում բաղաձայնի մոտ. այսպես՝

լու արմատից՝ լուեալ, լուայ, լուաւ, լուիցեմ, լուացանեմ, բայց լսեմ։

երդու (հնխ. ertu) արմատից՝ երդուեալ, երդուայ, երդուիր, բայց երդնում (որ է *երդուանում)։

առ (Հնխ. dō) արմատից՝ առնել, բայը առամ և այլն (də, d- արմատից)։

դի (Հնխ. dhī, dhē), որից դիել, դիեցուցանել, դիեցի։

լի (Հնխ. plē) արմատից՝ լիանալ, լիացնել, լիացուցանել, բայց լնուլ, լցնել, լցուցանել, լցի, լրացնել։

լէ, որից լինիմ, ուր է դարձել է ի՝ հաջորդ ն-ի մոտ. նույնից ունենք ակայն *լեհալ, հրմ. *լէ՛ր, որոնք ապա դարձել են լեալ, լե՛ր, որովհետև հե հանդիպումը ընդունելի չէ հայերենում, իսկ ր-ից առաջ կլինի ե և ոչ է։

դի (Հնխ. dhē) արմատից՝ դնել (<*դինել), իսկ եղ արմատից՝ եղի, եղեալ, եղից, եղաք։

2. ԲԱՅԱԿԱՆ ԶԵՎԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետաքրքրական է իմանալ, թե բայական բոլոր ձևերը՝ իրենց ամբողջ խոնարհման մեջ, դեմքերն ու թիվերը առանձին հաշված, մինչև քանիսի՞ են հասնում։

Մենք պիտի առնենք իհարկե այնպիսի լեզուներ, որոնց բայերի խոնարհումը բավական հարուստ է։

Ա. գրքում կատարել ենք մի քանի լեզուների բոլոր բայական ձևերի թվումը, որոնց մեջ հիշատակելի է թուրքերենը, որի բայական ձևերի գումարն է 128 400։

Աբաբերենը, որի բայական ձևերի խոնարհման ամբողջ պատկերը դրել ենք ներածութեան մեջ, ներկայացնում է մեզ հետևյալ վիճակագրութիւնը.

Կատարյալը ունի	*13 ձև*
Ներկան	*11 »*
Գերակատարը	*13 »*
Բուն ապառնին	*13 »*
2 բարդ ապառնիները	*22 »*
Անկատարը	*11 »*
Սաորադասականը	*11 »*
Կրճատ	*11 »*
4 տեսակ սաստկական	*44 »*
Հրամայական	*11 »*
Դերբայներ	*3 »*
	163 »

Այս է մի պարզ բայի բոլոր խոնարհյալ ձևերի գումարը, որի վրա ավելացնելով նուխքան էլ կրավորականի համար՝ կունենանք 326 ձև։

Պարզ բայերից գոնե ունենք 15 ածանցական բայ, որոնց յուրաքանչյուրը խոնարհման ժամանակ ստանում է գոնե 163 ձև, որով 163×15, կունենանք 2445 ձև։

Այս էլ ավելացնելով նախորդ 326 թվի վրա, կունենանք արաբերեն մի բայի բոլոր պարզ և ածանցյալ ձևերի բոլոր թվերի, բոլոր սեռերի և բոլոր դեմքերի ընդհանուր գումարը՝ 2771։

Աբաբերենի նման և գեռ շատ ավելի բազմազան ու ճոխ է սաուբերենի բայական ձևերի կազմը։ Նախ բայը ունի չորս ձայն (vox), որոնց յուրաքանչյուրը ունի երկու էլ երկրորդական ձայն։ Չորս ձայները ըստ երբայերենին կոչվում են kal *(պարզ բայ),* niphal *(կրավորական),* shaphel *(անցողական),* pael *(սաստկական) և կազմվում են հետևյալ ձևով։ Առաջինն է պարզ արմատը առանց հավելվածի. երկրորդը ստանում է* na- *նախամասնիկը, երրորդը՝* ša- *նախամասնիկը և չորրորդը կրկնում է միջին արմատական ձայնը։ Երկրորդական ձայները (դերանվանական բայեր) առաջին արմատականից հետո ավելացնում են* -ta-, *իսկ երրորդականները (սաստկական և հաճախական)* -tan- *կամ* -tana-։ *Այսպիսով բոլոր ձայների թիվը լինում է 4×3=12 ձայն։*

Այս 12 ձայների պատկերը հետևյալն է.
Պարզ՝ faγāl, nafγāl, šafγāl, faγγāl.
Երկրորդական՝ fitγāl, nitafγāl, šitafγal, fitaγγal.
Երրորդական՝ fitanγal, nitanafγāl, šitanafγāl, fitanaγγal.

Սրանք ունեն 9 եղանակ, միասին հաշվելով նաև անեղևույթը, թեև սա բայ չէ, այլ գործածվում է գոյականաբար։ Այս եղանակներն էլ բաժանվում են հետևյալ ձևով.

1. **Անեղևույթ**, *որ ունի պարզ. ներկա դերբայ, շարունակական դերբայ (միշտ անող), ներգործական դերբայ, անցյալ կրավորական դերբայ։*

2. **Սահմանական**, *որ ունի* aoriste, mutatif *և* precatif *(ըղձական)։*

3. **Հրամայական**, *որ ունի* aoriste *և* mutatif։

4. **Տևական** (permensif), *որ ունի պարզ և ըղձական։*

5. Ենթակայական (subjectif)
6. Թեական (dependent)
7. Առարկայական (objectif)
8. Սաստկական (energétique)
9. Ածանցական (paragogique)

} լրացքանչյուրը ունի 3 ձև, որ է՝ aoriste, mutatif և ըղձական։

Ընդամենը լինում է 27 ձև։

Անկերևույթի 5 ձևերը կազմվում են faγal, faγil, faγal, fiγil, fuγul տարազներով։ (Ըստ իմաստի սրանք լինում են, օրինակ՝ բեք արմատից՝ բերել, բերող կամ բերելիս, միշտ բերող, բերած, բերված)։ Այս 5 ձևերը ըստ 12 ձայնների կազմելով՝ կունենանք 62 անկերևույթ ձև։ Այս 62 անկերևույթ ձևերը անշուշտ գործածական էին լեզվի մեջ, մանավանդ հին շրջանում, բայց հետո մասամբ գործածությունից ընկան։ Ամենից ավելի սովորականն են անցյալ դերբայի կրավորականի 12 ձայները, չեն գոնված երկրորդական ձայների ներկա դերբայը, շարունակական դերբայը և անցյալ դերբայի ներգործականը. մյուսները հաճախ պատահում են։

Դերբայների բոլոր 4 ձևերի 12 ձայնից կարելի է կազմել մի նոր ձև, որ կոչվում է բաղադրյալ դերբայ. դրա համար դերբայի սկիզբը ավելացնում են mu նախամասնիկը. օրինակ՝ munafγal, mušafγil, mufaγγil, mufiγγil, muftaγil, muntaγil և այլն, որով կունենանք ընդամենը 48 բաղադրյալ դերբայ։

Սահմանականի aoriste-ը կազմվում է դերբայի 4 ձևերից. սեռն ու թիվը որոշվում են հետևյալ ձևով.

Եզակի Ա.	a-	Բ. ար.	ta-	Գ ար.	i-
		իգ.	ta-i	իգ.	ta-
Երկակի	mu		ta-ā		ti-a
Հոգնակի	ni-	ար.	ta-u	ար.	i-u
		իգ.	ta-a	իգ.	i-a

(Նախամասնիկների հավելման ժամանակ դերբայի առաջին ձայնավորը ընկնում է, բացի ներկա դերբայից)։

Այսպես ունենում ենք aoriste-ի ձևերից՝

Ա. դեմք՝ afaγil, afγal, afγil, afγul.
Բ դեմք՝ tafaγil, tafγal, tafγil, tafγul.
» իգ. tafaγili, tafγali, tafγili, tafγuli և այլ և այլն։

Aoriste-ի խոնարհման ժամանակ ունենալով բոլոր թվերի, սեռերի և դեմքերի համար 12 ձև, լրացքանչյուր ձայնի համար 4 aoriste, որ է 12 ձայնի համար 48 aoriste, ընդամենը խոնարհման ձևերի թիվը լինում է 12×4=576։

Mutatif կոչված ձևը ներկա դերբայից և շարունակական դերբայից կազմված aoriste-ի ձև է, միայն միջին արմատականը կրկնված։ Առաջինը երևի գործածվում էր ներկայի իմաստով, երկրորդը շարունակական ներկա կամ ապառնի իմաստով։ Երկու ձևի mutatif-ը սակայն միայն kal ձայնի համար է, մյուս ձայների mutatif-ը կազմվում է շարունակական դերբայից։ Այսպիսով լինում է 13 ձև mutatif, որ խոնարհման 12 ձևերով լինում է 156 ձև։

Precatif-ը կազմվում է ավելացնելով lu- մասնիկը՝ բոլոր aoriste և mutatif ձևերի վրա. որով ունենում ենք 576+156=732 ձև precatif։

Հրամայականի մեջ aoriste-ը կազմվում է 4 դերբայներից, ունի միայն Բ դեմք, եզակի և հոգնակի, արական և իգական, բոլորը միասին 16 ձև։

Mutatif-ը կազմվում է միայն ներկա և շարունակական դերբայից՝ երկրորդ արմատականի կրկնությամբ և ունի նույնպես միայն Բ դեմք. բոլորը 8 ձև, բոլոր 12 ձայների համար 288 ձև։

Permensif եղանակի պարզը կազմվում է 4 դերբայներից, ավելացնելով հետևյալ վերջավորությունները.

Եզակի Ա.	-aku, -ak	Հոգնակի	-āni, -ānu
Բ	-āta		-ātunu
Գ ար.	—		-u, -uni
Գ իգ.	-at		-ā

Խոնարհման ժամանակ, չհաշվելով երկակին, կունենանք 11 ձև, որով 4 դերբայի համար կլինի 44 ձև և 12 ձայնի համար՝ 12×11=132 ձև, միասին հաշվելով նաև երրորդական ձայները, թեև չեն ամանդված։

Նույն եղանակի precatif ձևը կազմվում է ավելացնելով բոլորի վրա lu- նախամասնիկը, որով բոլորի գումարը լինում է դարձյալ 132 ձև։

Subjectif եղանակի 3 ձևերը կազմվում են սահմանականի համապատասխան ձևերից, ավելացնելով եզակիի վրա -u և հոգնակիի վրա -nu մասնիկները։ Ընդհանուր գումարը լինում է 576+156+732=1464 ձև։

Dependent եղանակի 3 ձևերը կազմվում են նույն ձևով՝ ավելացնելով եզակիի վրա -i, հոգնակիի վրա -uni: Ընդհանուր գումարը լինում է նույնքան ձև:

Objectif եղանակի 3 ձևերը կազմվում են նույն ձևով՝ եզակիի համար ավելացնելով -a: Բոլորը լինում է 854 ձև (հոգնակին հիշված չլինելով չենք հաշվում):

Սաստկական եղանակը կազմվում է ավելացնելով m՝ subjectif, dependent և objectif եղանակների բոլոր ձևերի վրա, և սաստկացնում է նրանց իմաստը: Վաղնջական ձև է և նոր լեզվի մեջ հազվագյուտ: Ձևերի ընդհանուր գումարը լինում է 1464+1464+854=3782:

Ածանցական եղանակը նույն սաստկականն է, որի վրա ավելացել է -ma վերջածանցը: Ընդհանուր գումարն է այսպես 3782:

Բոլոր ձևերի միահամուռ գումարը լինում է 13 472:

Բայց այս թիվը, ինչպես և Թուրքերենի 128 400 սոսկալի թիվը ոչնչութիւն են՝ համեմատած ամերիկյան կարմիր լեզվի (Աֆաբակ երկրում) բայական ձևերի հետ:

Այս լեզվի մեջ բայը կարող է ունենալ 22 տեսակ, ամեն մի տեսակը կարող է առնել մինչև 500 նախամասնիկ, հաշվելով նաև սրանց կը կարող է առնել մինչև 500 նախամասնիկ, հաշվելով նաև սրանց կրավորական ու բացասական ձևերը, մեր մի բայական ձևի դեմ կգտնենք բազմաթիվ տասնյակ հազարավոր ձևեր (many tens of thousands for one of our own language)[1], իսկ ուրիշ ձևափոխութիւններով էլ միլիոնավոր ձևեր (these verbs can be made to grow to over a million of others)[2]: Այժմ եթե հաշվենք բայի խոնարհման ժամանակները (ներկա, անկատար, կատարյալ, հինգ տեսակ ապառնի և այլն), եթե նկատենք, որ բայը մինչև 20 դեմք ունի[3], այն ժամանակ մի բայի առացած բոլոր ձևերի համագումարը միլիոնների՞ կհասնի:

Ջանազան լեզուների բայական ձևերի այս սարսափելի թվերի դեմ համեմատութեան դնենք նաև մեր բայական ձևերի ընդհանուր վիճակագրութիւնը:

Գրաբար բայի խոնարհումը ունի լոթը եղր (սահմանական ներկա, անկատար, կատարյալ, ապառնի, հրամայական, սաստրադասական ներկա և դերբայները): Յուրաքանչյուրը սրանցից ունի 6 ձև (դեմք), միայն հրամայականը ունի 3 ձև և դերբայները՝ 4 ձև: Բոլորի գումարը լինում է 37 ձև:

[1] Morice, The Carrier language, II, p. 403.
[2] Անդ, II, էջ 405:
[3] Անդ, էջ 435—6:

Սրանց վրա պիտի ավելացնենք բաղադրյալ եղրերը, որոնք թիվով 6 են և յուրաքանչյուրը 6 դեմքով՝ լինում են 36:

Գումարելով 37-ի հետ կունենանք 73 ձև:

Այս է մեր մի բայի ամբողջ խոնարհական ձևերը:

Բայց մեր բայը ունենում է բացի ներգործականից կամ չեզոքից, նաև կրավորական, անցողական և անցողականի կրավորական: Սրանց յուրաքանչյուրն էլ ունենալով 73 ձև, կունենանք 73×4=292 ձև:

Եթե բացասականն էլ համարենք առանձին ձև, կրկնելով նույն թիվը՝ կունենանք ընդամենը 584 ձև:

Գրաբարի այս փոքրիկ թվի դեմ բարբառները շատ ավելի մեծ թիվ են ցույց տալիս: Օրինակ՝ առնենք Պոլսի բարբառը:

Այստեղ պարզ եղրերն են սաորադասական ներկա, անկատար, կատարյալ, հրամայական (2) և դերբայները (6), որոնք միասին ունեն 26 ձև:

Բարդ եղրերը 8 են, որոնցից հրամայականը ունի 4 ձև, որով բոլորը լինում է 46 ձև:

Բաղադրյալ եղրերը թիվով 36 են, որոնցից երկուսը (հրամայական) ունեն միայն 2 ձև. բոլորի գումարը լինում է 208 ձև:

Այս բոլորը միասին՝ այն է պարզ (26), բարդ (46) և բաղադրյալ (280) եղրերի գումարը լինում է 280 ձև:

Սրանց վրա պետք է ավելացնել թեական ձևերը, որոնց գումարն է (280-ից հանած հրամայականներն ու դերբայները, որոնք թեական չունեն) 258. միասին՝ 538 ձև:

Սրանց վրա ավելացնելու համար պատմողական եղանակի ձևերը, կրկնելով նույն թիվը, կունենանք 1076:

Այս բոլորը կարող են ունենալ իրենց կրավորականը, անցողականը և անցողականի կրավորականը: Շատերն ունեն նաև իրենց չեզոք ձևը (կոտրել, կոտրիլ, կոտրուիլ), ուստի բազմապատկելով նույն թիվը 5-ով կունենանք 5380 ձև:

Եթե հաշվենք նաև բացասականը, իրեւ առանձին բայական ձև, հայտնին մի բայի բոլոր բայական ձևերի գումարը Պոլսի բարբառում կլինի 10 760:

Չենք հաշվում սաստկական և հաճախական բայերը (ինչպես՝ շոկել, շոկալ, շոկատկել), ինչպես և կրկին անցողականը (սիրցնել տալ) իր կրավորականով (սիրցնել տրուիլ), որոնք կարող են ի դեպ հինգ և ավելի անգամ ավելացնել վերոհիշյալ թիվը:

3. ԲԱՐԴ ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Շատ լեզուներ դիտեն երկու բայ միասին խոնարհել մի բայի պես. օրինակ՝ ամերիկյան դակոտա լեզվով wahimdotanka *նշանակում է «գալիս եմ տուն և նստում եմ»* (I come home and I sit down)։

(Riggs, 35)

Բիրմաներեն լեզուն էլ երկու բայ իրար կցելով կամ բարդելով կազմում է մի նոր բայ, որ մենք ավելի երկար խնդիրներով պիտի բացատրեինք. ինչպես՝ uk *«ծածկել»* և mie *կամ* ta *«ձեռք բերել» բայերից առացվում է* ukmie *կամ* ukra *«ծածկելով բռնել» (ինչպես՝ ձուկը ցանցում)։* hluk *«թրթռալ, շարժել, ցնցել»* և t'an *«ձայն հանել, հնչել» միանալով տալիս են* kluk-t'an *«հընչել գանգակի նման»։*

Kya *լսել և* pyau *խոսել բայերից առացվում է* kya-pyau *«կրկնել իրրև տեղեկացնելու համար, to repeat us information"։*

Pya *«ցույց տալ» և* pe *«տալ» բայերից առացվում է* pya-pe *«մի բանի նշանը ցույց տալ»։*

(Latter, 126)

4. ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Այս բառով հասկանում ենք բայերի խոնարհման որոշ մի ձևը, որ կարող է մյուս բայերի խոնարհումից տարբեր ձև ունենալ։ Ընդհանրապես լծորդությունը որոշվում է բայի վերջավորություններից. բայց վերջավորությունը դեռ քիչ է, որովհետև լինում են դեպքեր, երբ տարբեր վերջավորություններ միատեսակ խոնարհում ունենան, ինչպես և կարող է մի վերջավորություն երկու տարբեր խոնարհում ունենալ։ Այսպես օրինակ՝ պարսկերենի մեջ բայերը երկու տեսակ վերջավորություն ունեն՝ dän *և* tän, *բայց որովհետև երկուսն էլ միատեսակ են խոնարհվում, հաշվում են մի լծորդություն։*

Կան լեզուներ, որոնք շատ բազմաթիվ լծորդություններ կամ վերջավորություններ ունեն. օրինակ՝ ամերիկյան կրի լեզուն չեզոք բայերի մեջ 32 տեսակ վերջավորություն ունի (en, wan, amon, ton, kon, man, hun, pan, kan, kan!, ban, pin, min, bin, tan, twan, wan, yan, yan!, san, inin, ini, yun, pun, yin, win, mon, kwan, kkwan, nan, tin, tan), *որոնք վերածվում են 7 լծոր-*

դության (Lacombe, 81)։ *Սրա վրա ավելացնելով անգեմ բայերի 7, ընդհանուր առարկայական 8 և անշունչ առարկայական 2 լծորդությունները (տես Ա գիրք, էջ 158—159), բոլորը միասին կլինեի 24 լծորդություն։*

5. ԲԱՅԵՐԻ ՆԱԽԱՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Ամերիկյան տենսա լեզվի մեջ.

lyung- *փչելով՝ խոր շնչելով անել մի բան.*
nyaba- *սուր տաշելով, ծայրը սրածայր շինել.*
reh- *կտրելով շինել մի բան.*
nvug- *կլորացնելով շինել մի բան.*
npon- *շփելով, հղկելով շինել մի բան.*
yuv- *զարնելով, հարվածելով շինել մի բան.*
sri- *պատռելով շինել մի բան.*
nam- *խայթելով անել մի բան.*
tbub,-bub- *փայտից շինել մի բան.*
ritn- *երկաթից շինել մի բան*
ilok- *լեզվով անել մի բան.*
xal- *հաճուկքով անել մի բան.*
üv- *սիրով անել մի բան*
rew- » » » »
xap- *կրքոտ սիրով անել մի բան.*
king- *չուզենալով անել մի բան.*
aray- *բարկությամբ անել մի բան.*
dnub- *քաղցած փորով անել մի բան.*
vam- *ծարավ ժամանակ անել մի բան.*
nank- *անձրևի տակ անել մի բան.*
prig- *կարկտաի տակ անել մի բան.*
lyess- *ձյուն եկած ժամանակ անել մի բան.*
ats- *արագ, շուտ անել մի բան.*
abmw.-abm- *դանդաղությամբ անել մի բան.*
niks- *մտածելով անել մի բան.*
pfa-, ppa-, pa- *անդգուշությամբ անել մի բան.*
var- *ուշադրությամբ անել մի բան.*
dung- *հավատարմությամբ անել մի բան.*
pva-, vva-, va- *առատաձեռնությամբ անել մի բան.*

bex- *մի բանի հակառակն անել.*
bya- *ցատկելով անել մի բան.*
kyag- *վազելով անել մի բան.*
geg- *կանգ առնելով անել մի բան.*
kolto-, ktov- *չափազանցութեամբ անել մի բան.*
tyub- *խառնուռ անելով անել մի բան.*
twoc- *ծխելով անել մի բան.*
wet- *փոշտալով անել մի բան.*
xig- *բղավելով անել մի բան.*
tyang *երգելով անել մի բան.*
liss-, -lists *թքելով անել մի բան.*
ranw-, -zan- *ագահութեամբ անել մի բան.*
donk- *գետնի վրա պառկած անել մի բան.*
wos- *ճարպիկորեն անել մի բան.*
urth- *շուռ տալով, դարձնելով անել մի բան.*
tbav-, -bav *ուղիղ անել մի բան.*
gnah-, gna- *շատ անել մի բան.*
ha- *մենակ անել մի բան.*
ktak- *մի բան կապուլտ անել.*
ikr-, -kro- *մի բան կարմիր անել.*
cwo-, co- *մի բան կանաչ անել.*
ravg-, rav- *փառքով անել մի բան.*
pnang- *կրակով անել մի բան.*
egn- *բոցով անել մի բան.*
dwon- *արլունով անել մի բան.*
krung- *նկարով անել մի բան.*
wak- *ջրով անել մի բան.*

(Haumonté, 29 և այլն)

Ամերիկյան ամարա լեզվում կան 36 բայական մասնիկներ, որոնք կցվելով բային՝ փոխոխում են նրա իմաստը, ավելացնելով զանազան երանգներ, հատկապես կողմի և տեղի ուղղութիւն ցույց տալու համար:

(Middendorf, 129—158)

Ամերիկյան էրի լեզվի մեջ ներգործական բայը ստանում է 50 տեսակ մասնիկ, որոնց միջոցով կազմվում են զանազան ածանցական բայեր.

1. hew *գործով արած ներգործական.*
2. mew *խոսքով արած ներգործական.*
3. mew *կազմվում է չեզոք բայից և նշանակում է «նրան այնպես ընդունել». օրինակ՝ նրան իրր մայր ունեմ, վերցրել եմ իրր կին, նրան ընկեր եմ արել:*
4. tew *ենթական ինքն է անում այդ գործը:*
5. atew *ենթական նրանից մի բան է շինում.*
6. eyimew *ենթական մտածում է այդպես անել.*
7. wokeyimew *հավատում է.*
8. new *ձեռքով է անում.*
9. pitew *բազուկով է անում.*
10. skawew *ոտքով կամ սրունքով է անում.*
11. spitew *համ է առնում.*
12. pwew *ուտելու հարմար է գտնում.*
13. mamew *հոտ է առնում.*
14. ttawew *լսում է.*
15. nawew *նայում, տեսնում է.*
16. yew *նույն է 4 tew.*
17. hyew *տեղավորում է.*
18. wew *ընկերանում է.*
19. pahwew *ուժեղ հարված է տալիս.*
20. ahwew *ջրի վրա մի բան անել.*
21. kkawew *մեկին մի բան տալ.*
22. kawew *մեկի համար մի բան անել.*
23. twawew *մեկին մի բան անել.*
24. stawew *մեկի փոխարեն անել.*
25. tittew *մեկի համար մի բան անել.*
26. swew *կրակով, մկրատով, դանակով մի բան անել.*
27. sawatew *մկրատով կամ դանակով մի բան անել.*
28. huyew *ջրով գնալ.*
29. abawayew *ջրով մի բան անել.*
30. amew *առաձներով մի բան անել.*
31. atemew *բերանով մի բան անել.*
32. simew *նետելով ցնցում առաջացնել.*
33. astimew *քամիով մի բան անել.*
34. tisahwew *շուռ կամ հանկարծ անել մի բան.*

35. totawew մեկին մի բան անել.
36. puyew սղոցով, խարտոցով մի բան անել.
37. tahwew կացինով, հրացանով մի բան անել.
38. ktuwew կացինով կամ դանակով փայտի վրա գործել.
39. skatew թողնել, լքել.
40. hattew մեկի հետքով մի բան անել.
41. ppinatew վատ վարվել, չարչարել.
42. kwatew ասեղով, ցանցով, թակարդով մի բան անել.
43. gawihew գժգոհությամբ, բարկությամբ անել մի բան.
44. kkattawew քաղցրությամբ, քնքշությամբ վարվել.
45. okatew բնակարանի, տան վերաբերյալ մի բան անել.
46. ganamew ոսկորի վրա բան անել.
47. tonamew բերնով, խոսքով մի բան անել.
48. kkatew վերածել, իր հալրը դարձնել.
49. kkamew վերածել, իր աղջիկը դարձնել.
50. sakkomew որդեգրել.

(Lacombe, 112—6)

Նույն լեզվի մեջ չեզոք բայերը առանում են 74 տեսակ մասնիկ, որով կազմում են դանազան ածանցական բայեր.

1. maw նեղդործականը վերածում է չեզոքի.
2. čimew նավով գնալ, թիավարել.
3. huw ջրով ճամբորդել.
4. poyuw ջրից քշվել, հոսանքով իջնել.
5. nawew ուտելու վերաբերյալ բան:
6. pew ջրով կամ այլ հեղուկով մի բան.
7. yamow փախչել, սարսափ.
8. kkakew իբր գործիք գործածել և նրանով մի բան անել.
9. akew նույն նշանակությամբ.
10. kkasuw ձևացնել, կեղծել.
11. vasuw ծնողների աղջիկը որդիների վրա.
12. abew թիվ, չվան, մազ.
13. apiw նստել.

14. abiw աչքի զործողություն.
15. towatew կռնակով բեռ տանել.
16. towew ձայն հանել, խոսել.
17. awew անասունի մորթի, մուշտակ, տաե.
18. yaw թռչել.
19. amow թափառել, վախչել.
20. kkwamiw քնել.
21. kkwasiw նույն նշանակությամբ.
22. katew փոր, քաղցածություն.
23. skoyum անտնդ.
24. puw ուտել.
25. kamow պիրություն, չաղություն.
26. skiwew ցեխ, ճահիճ.
27. huw շար հագնել.
28. payihuw մարմնի ուժեղ շարժում.
29. payiw ձիով գնալ, վազել.
30. okew շինարարություն.
31. maɬžihuw առողջական վիճակ.
32. sin հասնել, ընկնել, պատկել.
33. atamow խոսք, շունչ, բերան.
34. mow ձայն, խոսք.
35. kwew նույնը.
36. wew նույնը.
37. attawiw փայտի, ծառի վրա մաղ դալ.
38. yiw մարմնի որևէ շարժում.
39. kkwew դեմքի վրա մի բան անել.
40. ew չեզոք բայ է շինում.
41. iw «ունեմ» օժանդակն է կազմում.
42. wiw «լինել» օժանդակն է կազմում.
43. tekkwew խմել.
44. appinew հիվանդություն, ցավ, մահ.
45. kkawew ձիան միս.
46. skewew բացի ձկնից ուրիշ ամեն միս.
47. yawew մարմին.
48. čiwew նլնել, իջնել.
49. iskuttew սառույցի վրայով գնալ.
50. awew ձու (հավկիթ).
51. ittwaw ձև, ստորություն.

52. kkwaw արյուն.
53. ham երգ.
54. nam քալլել, տեսնել, ձեռքով բռնել.
55. yawesiw ցասում, բարկութիւն.
56. abakwew ծարավ.
57. attam շնչել, հառաչել.
58. tatžimow քաշ գալ.
59. teppwew խորովել.
60. attikwew անտառ, ծառ կտրել.
61. kwew թակարդ լարել.
62. kikkaw ծերութիւն.
63. pakwew տերև, ծաղիկ, թերթ.
64. skusiwew չոր խոտ.
65. simow պարել, պառկել, պպղել.
66. abawew ջրի վրա մի բան.
67. kkam քանի հոգի են.
68. yaskwehusuw գավազանով քալլել.
69. wokeyimow կարծել, հավատալ.
70. kitasuw բարկութիւն.
71. uttew քալլել.
72. astimow ջրի վրա քամիով գնալ.
73. askwew դեղորայք.
74. ppwaw ծխախոտ.

(Lacombe, 82—87)

6. ԱՆԿԱՏԱՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենի անկատարի կազմութիւնը մինչև հիմա անբացատրելի է մնացել. ոչ մի կերպով կարելի չի եղել անկատարը մեկնել հնդեվրոպական քերականութեան տվյալներով։ Meillet հայագիտը իր „Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique" (2-րդ տպ. Վիեննա, 1936 թ., էջ 126) փորձում է տալ գիտական մեկնութիւնը, բայց գրական արդյունքի չի հասնում։ Հույս ունենք ստորև հայերենի անկատարը կապել հնդեվրոպական լեզուներից մի քանիսի հետ։

Նախ դիտենք այն հանգամանքը, որ շատ լեզուների մեջ անկատարը սերտ կապ ունի կատարյալի հետ։ Այսպես, անգլերենում և գերմաներենում անկատար և կատարյալ բոլորովին նույն են.

I	loved	Ich liebte
		du liebtest
he	loved	er liebte
we	loved	wir liebten
you	loved	ihr liebtet
they	loved	sie liebten

Սրանք նշանակում են հավասարապես «սիրում էի, սիրեցի» և այլն։

Գրեթե նույն է նաև սլավոնական լեզուներում, որոնց մեջ անկատարը կատարյալի հետ կամ բոլորովին նույն է և կամ տարբերվում է միայն մի նախամասնիկով. օրինակ ռուսերենից.

я	любил	полюбил
ты	любил	полюбил
он	любил	полюбил
мы	любили	полюбили
вы	любили	полюбили
они	любили	полюбили

Պարսկերենում անկատարը տարբերվում է կատարյալից միմիայն նրանով, որ ավելացնում է սկզբից می mī մասնիկը. օրինակ՝

خوردم	xōrdam	«կերա»
خوردی	xōrdī	«կերար»
خورد	xōrd	«կերավ»
خوردیم	xōrdīm	«կերանք»
خوردید	xōrdīd	«կերաք»
خوردند	xordand	«կերան»
می خوردم	mī xōrdam	«ուտում էի»
می خوردی	mī xōrdī	«ուտում էիր»
می خورد	mī xōrd	«ուտում էր»
می خوردیم	mī xōrdīm	«ուտում էինք»
می خوردید	mī xōrdīd	«ուտում էիք»
می خوردند	mī xōrdand	«ուտում էին»

Նույնիսկ ոչ հետաքրքրական մի լեզու, ինչպես թուրքերենը, անկատարը կազմում է կատարյալի սկզբին ավելացնելով ī ձայնավորը. օրինակ՝

sevdim	«սիրեցի»	sever idim	«սիրում էի»
sevdin	«սիրեցիր»	sever idin	«սիրում էիր»
sevdi	«սիրեց»	sever idi	«սիրում էր»
sevdik	«սիրեցինք»	sever idik	«սիրում էինք»
sevdiniz	«սիրեցիք»	sever idiniz	«սիրում էիք»
sevdiler	«սիրեցին»	sever idiler	«սիրում էին»

Անկատարի և կատարյալի այս սերտ նմանութիւնը բնում է բնականաբար նրանից, որ երկուսն էլ ածցյալ են:

Երբ համեմատում ենք հայերենի անկատարը կատարյալի հետ, տեսնում ենք, որ այստեղ էլ վերջավորութիւնները մեծագոյն մասամբ նույն են. այսպես՝

Կատարյալ		Անկատար		
բերի	*բերէի*	*խօսէի*	*աղալի*	*թողուի*
բերիր	*բերէիր*	*խօսէիր*	*աղալիր*	*թողուիր*
(է)բեր	*բերէր*	*խօսէր*	*աղալր*	*թողուր*
բերաք	*բերէաք*	*խօսէաք*	*աղալաք*	*թողուաք*
բերէք	*բերէիք*	*խօսէիք*	*աղալիք*	*թողուիք*
բերին	*բերէին*	*խօսէին*	*աղալին*	*թողուին*

Զորս լծորդութեան անկատարի վերջավորութիւններն են ունենն i, իր, ր, աք, իք, ին, որոնցից երկուքը (i, աք, ին) բոլորովին նույն են կատարյալի հետ, երկուսը (իր, իք) տարբեր են միայն ձայնավորով, իսկ մեկը միայն կազմվում է նոր մասնիկով, որ է ր:

Հայերէն անկատարի վերջավորութիւնը բազկացած է երեք տարբից. մեկը (ըստ կարգի երրորդը) այն վերջավորութիւնն է, որ տեսանք և որ նույն է ընդհանրապես կատարյալի հետ. մյուսը (ըստ կարգի երկրորդը) անկատար կազմող իսկական մասնիկ է և (ըստ կարգի առաջինը) բայի բունն է (b, b, ա, ու):

Ներկալի կազմութիւնը բացատրելու ժամանակ տեսանք, որ 4 լծորդութիւնների ամենից ակներև օրինակը տալիս էր երրորդ լծորդութիւնը: Այստեղ էլ նույնն է: Երրորդ լծորդութեան աղայի ձևը կազմված է 1) աղ արմատից, 2) ա բնից, 3) յ մասնիկից, 4) i վերջավորութիւնից: Ուրեմն անկատար կազմող իսկական մասնիկն է յ:

Ինչպես որ ներկալի մեջ յ ձայնը միանալով բայի բնի հետ զանազան անճանաչելի խառնուրդներ էր կազմում, նմանապես այստեղ: Զորրորդ լծորդութեան մեջ (թողուի, թողուիր և այլն) ու-

բնի պատճառով յ ջնջվում է: Ա և Բ լծորդութեան մեջ բնի ե ձայնավորի հետ միանալով դառնում է i: Ըստ այսմ Ա, Բ լծորդութեան անկատարի նախնական պատկերը հետևյալն է.

**բերելի*	**բերելաք*	**խօսելի*	*խօսելաք*
**բերելիր*	**բերելիք*	**խօսելիր*	*խօսելիք*
**բերելր*	**բերելին*	**խօսելր*	**խօսելին*

Դ լծորդութեան նախնական պատկերն էլ հետևյալն է՝

**թողուլի*	**թողուլաք*
**թողուլիր*	**թողուլիք*
**թողուլր*	**թողուլին*

*Նկատելի է, որ եղակի գ դեմքի մեջ (որի հնագույն ձևն էր *թողուլր և ուր յ ջնջվելով պիտի դառնար *թողուր) զարմանալի կերպով յ մասնիկը պահված է և նրա պահպանման համար ու ձայնավորը տուժելով դարձել է u:*

Միայն Դ լծորդութեան է, որ ինչպես տեսանք, սկզբից մինչև վերջը, ա ձայնավորի չեզոքութեան պատճառով պահում է յ մասնիկը անփոփոխ:

Ի՞նչ է այս յ կիսաձայնի ծագումը:

Ձայնական օրենքների համաձայն հայերենի յ-ն առաջանում է երկու ձայնավորի միջև գտնված հնխ. t-ից:

Բայց ինչ է այս t-ի ծագումը:

Այս t մասնիկը, որ կազմում է անկատարը, ճիշտ նույն է գերմաներենի մեջ անկատար կազմող t մասնիկի հետ, որի հետ նույն է անգլերենի ed մասնիկը: Այդ երկուսի օրինակները տրված են վերևում:

Գերմանագետները ընդունում են, որ անկատարի և կատարյալի t=ed մասնիկը նույն է անգլերենի և գերմաներենի անցյալ դերբայի t=ed մասնիկի հետ. ինչպես՝ ge-lieb-t, ge-mach-t, ge-sag-t, ask-ed, lov-ed, mak-ed և այլն (տես Victor Henry, Précis de grammaire comparée de l'anglais et de l'allemand, Paris 1893, էջ 297, 320, 378—79):

Այս մասնիկի ծագումը համարվում է „énigmatique" (տես անդ, էջ 297). հայերենը գալիս է ոչ միայն լուծելու այս „énigme"-ը, այլև հաստատելու, որ այդ t մասնիկը հնդեվրոպական ծագում ունի: Այսպիսով իմանում ենք, որ հնդեվրոպական նախալեզվի անկատարի կազմության զանազան ձևերի մեջ կար նաև t-ով

կազմված մի ձև, որ մինչև այժմ անհայտ էր մնացած և այժմ նրանց է գալիս շնորհիվ հայերենի համեմատության:

Մենք ընդունում ենք, որ անցյալ դերբայի t մասնիկը նույն է անկատարի t մասնիկի հետ և այդ դնում ենք նաև իրանական խմբի մեջ: Հին պարսկերենում անցյալ դերբայի վերջավորությունն է ta, որ պահլավերենում դառնում է tak և նոր պարսկերենում կրճատվելով դառնում է ta, da (առաջինը խուլ բաղաձայնների մոտ, երկրորդը թրթռուն բաղաձայնների և ձայնավորների մոտ): Սրանց միջոցով կազմվում է հարակատարը, իսկ հարակատարի միացմամբ կազմվում է կատարյալը, որի վրա ավելացնելով mī մասնիկը, ինչպես տեսանք վերը, ստանում ենք անկատարը. օրինակ.

rafta	am	—	գնացել եմ
rafta	ī	—	գնացել ես
rafta	ast	—	գնացել է
rafta	īm	—	գնացել ենք
rafta	īd	—	գնացել եք
rafta	and	—	գնացել են

Դերբայի և օժանդակ բայի միացմամբ հետո կազմվել է կատարյալը, որ հետևյալն է՝

raftam	—	գնացի
raftī	—	գնացիր
raft	—	գնաց
raftīm	—	գնացինք
raftīd	—	գնացին
raftand	—	գնացին

Այսպիսով պարսկերենը ցույց է տալիս, որ ինչպես անցյալ դերբայը (ta), նույնպես և կատարյալն ու անկատարը միևնույն ծագումն ունին անգլերենի և գերմաներենի համապատասխան ձևերի հետ:

Վերջացնելու համար մեր քննությունը, պետք է ասենք, թե այս t մասնիկը նույն է հնխ. to մասնիկի հետ, որ կցվելով արմատի ստորին աստիճանի ձայնդարձին և իր վրա առնելով շեշտը՝ տալիս է.

1) Շատ բազմաթիվ ածականներ, ինչպես հնխ. $k^{l}lu$-tó-s> սանս. çru- tá-s, գնդ. sru-tō «լսված», հուն. κλυτός, լտ. in-clutus «հռչակավոր»=հայերեն լու(յ) «լսված»:

2) Որևէ բան կրող՝ ունեցող, ինչպես լատիներեն bar-bā-tus, հնլ. brada-tŭ, ռուս. рогатый, богатый, լիտ. barzdó-ta-s, բոլորն էլ «մորուսավոր»:

3) Գոյականներ՝ o ձայնդարձով. ինչ. հուն. φόρ-το-ς «բեռ», հնլ. živo-tŭ=լիտ. gyva-tà «կյանք», լտ. vī-ta, banitās, facultās, facilitās, հնլ. dobrota «բարություն», rabota «ծառայություն»:

Սրանց կարգից է նաև մարդ<հնխ. mr̥-to (mer «մեռանիլ» արմատից), սանս. mr̥tás.

Մասնիկը առանում է նաև eto, oto և do ձևերը. վերջինիս համար օրինակ են՝ հնլ. tvrŭ-dŭ «ամուր, պինդ», լտ. calidus «տաք», horridus «կոշտ» և այլն (տես Meillet, Introduction, 7-րդ տպ., Paris, 1934, 268):

Մնում է ասել, որ նույն մասնիկը դնում ենք նաև լատիներենի մեջ -tus, -ta, -tum ձևերով, որ մի կողմից կազմում է participium perfecti passivi և մյուս կողմից ածականներ, ինչպես scriptus, amatus, laudatus և այլն: Նրանք շարունակվում է արդի իտալերենում to, ta ձևով (scritto, scritta, amato, amata) և իսպաներենում do, da ձևով (andado, venido, andada, venida «քայլած, եկած»):

ՅԱՆԿԵՐ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազերեն— *203, 251, 455*
Ալար— *457*
Ալբաներեն—*121, 422*
Ալեուտերեն— *156*
Ալթայական լեզուներ— *156, 488*
Ալթայերեն— *429*
Անյոն— *121*
Անոմ— *146*
Ամերիկյան *(հնդկացիական)* լեզուներ— *448, 449, 502—504*
Այմարա— *421, 520*
Այնու— *448—449*
Անգլերեն— *52—53, 74—75, 93, 95—96, 100, 116, 121, 123, 125—126, 129, 149—150, 177, 224, 280, 424, 454, 499, 524—525, 527*
Աննամերեն— *153—154, 420*
Ասորերեն— *488*
Ասուրերեն— *513—516*
Ավարակալ— *507—508*
Ավարերեն— *419*
Ավստրալիական լեզուներ— *433*
Արաբերեն— *125, 127—128, 155, 251, 357, 424, 431, 485, 489—491, 497—498, 512—513*
Արամակերեն— *431, 499—501*
Արիական լեզուներ— *227—228, 509*
Արչիներեն— *156*
Առակա— *351*
Ափար— *257, 422*
Ափռաներեն— *144—145, 252*
Աֆրիկյան լեզուներ— *502—504*

Բանտու լեզուներ— *327*
Բասկերեն— *176—177, 199—201*
Բատա— *507*
Բարա— *255*
Բարեա— *123*
Բարի— *171*
Բացբերեն— *257*
Բեդաուե— *125*
Բելուջերեն— *53—54, 254*
Բենգա—*501—502*
Բետոյա *կամ* տուկանո— *420*
Բերբերական լեզուներ— *123, 126, 423*
Բիրմաներեն— *46—47, 252—253, 422, 518*
Բոդո— *506—507*
Բոնգու— *452*
Բոնսոկ-իզորոա— *51, 252, 350, 442*
Բորե— *433*
Բրաճուի— *353*
Բուգոտու— *432*
Բուդուխերեն— *358*
Բուլղարերեն—*123*
Բուշմեներեն— *44*
Բուրյաթերեն

Գալիբի— *453*
Գալլա— *125—126, 352*
Գանգ— *122*
Գերմաներեն— *52—53, 74, 119, 121, 129, 159, 224, 251, 280, 356, 360, 424, 433, 454, 524——525, 527*
Գիլգիթի շինա— *254—255*
Գնաա— *252*
Գոլա— *177*
Գոթերեն—*119, 121, 123, 126—127*
Գուջարաթի— *254, 335*

Թակոտա— *448, 506, 518*
Թանիերեն— *121, 123—124, 224*
Թիերի— *204—205*
Թրավիդյան լեզուներ— *157, 455*

Ընթայնցերեն— *513*
Ընդոսլավական լեզուներ— *51—52, 72, 74, 226, 228, 355, 410, 424*

Ինդերեն— *528*

Իցգաոո— *359, 436*
Իվի— *177, 504*
Իրի— *520—524*

Քաբասարան— *358*
Քաբարական լեզուներ *տե՛ս* բուրմական լեզուներ
Քաբարերեն— *156, 158, 488*
Քաբերեն— *161—162, 186*
Քամիլերեն— *157, 455*
Քոխարերեն— *279, 360*
Քուրմական լեզուներ— *360*
Քուրմերեն— *43, 47, 53, 72, 75, 95—97, 107—108, 116—117, 138, 155, 159—160, 162, 176, 216, 226, 236, 242—243, 245—247, 250—251, 256—258, 286, 303, 335, 356—357, 361, 426, 429—430, 438, 453, 457, 459, 484—498, 512, 516, 525—526*

Օա— *125, 359*
Օնգուշերեն— *257, 358*
Օռաճդերեն— *258*
Օսագաներեն— *97, 116, 128, 224, 529*
Օտալերեն— *43, 120—121, 129, 224, 424, 529*
Օրանական լեզուներ— *528*

Ալբել— *131*
Ամգերեն— *121, 175, 216, 244, 252, 256, 351, 358, 420*
Անսերեն— *50—51*
Աոտիներեն— *120—121, 224, 226—228, 258, 279, 355, 359—361, 424, 434, 528—529*

Ասիշներեն— *53*
Ավգիերեն— *354*
Աբքերեն *տե՛ս* լատիշերեն
Աներեն— *161, 227, 499*
Անգիա *տե՛ս* ռոնգ
Ափավաներեն— *53, 529*
Աուեյորո— *171*

Բակասերեն— *360*
Բասոե՛— *352, 432*

Գարարդիներեն— *435, 457*
Գարիլերեն— *356, 421*
Գազակներեն *տե՛ս* կիրգիզերեն
Գամբո— *253*
Գամիլարոյ— *154*
Գամշադալ— *122*
Գանավարի— *154*
Գարաիբերեն— *501*
Գարիբի— *162*
Գարոլինյան— *129—130*
Գարբիներ— *434—435, 455, 516*
Գենյան— *46, 351*
Գեշուա *տե՛ս* ռուենա
Գիկոմի— *45*
Գինգա— *352*
Գինյամվեզի— *122*
Գիպանա— *162*
Գիրգիզերեն— *47, 53, 429—430*
Գյուրիներեն— *358*
Գոհլ— *356*
Գրի— *350, 518—519*
Գուանամա— *421—422*

Հավահ— *250—252*
Հարար— *354*
Հաուսա— *124—126, 161, 454*
Հինդուստանի— *50, 431*
Հին սլավոներեն— *123, 227, 258, 360—361, 529*
Հյուրկիլի— *358*
Հնդեվրոպական նախալեզու— *53, 120, 223, 258, 357, 359, 424, 527—529*
Հնդեվրոպական լեզուներ— *119, 433—434, 457, 524, 527*

Հունարեն— *53, 122, 127, 129, 161, 224, 227, 244—245, 258, 279, 355, 357, 359, 488—489, 528—529*
Հունգարերեն— *119, 126*
Հոպա— *504*

Ղափիերեն— *253—254*

Ճապոներեն— *44, 154, 202, 252, 258, 349*

Մալգաշերեն— *352*
Մամբիլա— *123*
Մայա— *420, 435*
Մինիանկա— *421*
Միվոկ— *424*
Միխս— *252, 257*
Մոնղոլերեն— *44, 154—155, 162, 252, 457*
Մոսա— *442*
Մորդվիներեն— *350, 437, 455*
Մվալի— *123*
Մուեղարի— *45*
Մուսուկ— *131*

Յակուտերեն— *49*
Յաունդե— *123*
Յաֆա— *155*
Յոկուց— *449*
Յուկի— *155, 424*
Յուրակարե— *436*

Նագա— *421*
Նահուատլ— *435*
Նգարիմա— *124*
Նենեցերեն— *355*
Նևպալի— *509—510*
Նիմմա— *350—351*
Նոր հունարեն *տե՛ս* հունարեն
Նոր պարսկերեն *տե՛ս* պարսկերեն
Նուբիերեն— *45, 354, 451—452, 502*

Շինա— *130*
Շոռո— *97, 360, 437*
Շվեդերեն— *52, 224*

Չաղաթայերեն— *429*
Չևսերեն— *53, 126, 410*
Չեչեներեն— *256—257, 355, 358*
Չերեմիսերեն— *45—46*
Չիբչա— *356, 421*
Չիլուբա— *431*
Չիկիտա— *432—433, 502—504*
Չինարեն— *121, 419—420, 429*
Չինուկ— *204*
Չիչևա— *128, 156, 204, 279*
Չուվաշերեն— *49, 156, 433, 453, 488*
Չուտիյա— *353*
Չուֆշիերեն— *508—509*

Պալի— *359*
Պաճլավերեն— *121, 528*
Պայնյո— *449—451*
Պարսկերեն— *50, 53, 121—122, 144—145, 148, 156, 161—162, 175, 177, 186, 226—227, 237, 257, 359—360, 442, 490, 497, 518, 525, 528*
Պոմո— *451*
Պորտուգալերեն— *120—121, 203*
Պրովանսալ— *121*

Ջավայերեն— *155, 431, 454*
Ջիգգի— *359*

Ռաջասթանի— *354—355*
Ռետոռոմաներեն— *124*
Ռոնգ— *253, 422*
Ռոմանական լեզուներ— *227—228*
Ռուկույեն— *453*
Ռումիներեն— *157, 210, 224, 499*
Ռուենա սիմի *կամ* կիշուա— *353, 507*
Ռուսերեն— *72, 123—124, 126, 157, 160—161, 202—203, 227, 258, 355, 358, 410, 430, 457, 483—484, 489, 498—499, 525, 529*

Սալիշան— *449*
Սաճո— *256*
Սամոա— *126*
Սանսկրիտ— *53, 127, 249, 258, 358, 361, 528*

Սարա— *351—352, 423—424*
Սելկուպերեն— *355*
Սեմական լեզուներ— *119*
Սեսուտո— *124*
Սերբերեն— *123, 227*
Սիկկիմ-Բհուտիա— *422*
Սինդհի— *254*
Սինհալի— *129, 360*
Սլավ(ոն)ական լեզուներ— *202, 227—228, 525*
Սոգդերեն— *122*
Սվահիլի— *349—350*
Սուրխարբա— *125—126*
Սուկումա— *437*
Սումերերեն—*251, 352*

Վայու— *253*
Վապո (Վապպո)— *123, 255, 352*
Վեյշ— *119—120*
Վերշիկերեն— *435*
Վիրաններուի— *508*
Վոլոֆ— *437, 452*
Վոտյակերեն— *454*
Վրացերեն— *257, 351*

Տաճիքի— *252*
Տանկներեն *տե՛ս* բուրհերեն
Տամաշեկ—*421*
Տարասկ— *437, 504—505*
Տելուգու—*254, 351*
Տեեսա— *170—171, 252, 519—520*
Տիբեթերեն— *255, 442—443, 436*
Տիլլամուկ— *422*
Տուկանո *տե՛ս* Բեռոյա
Տուպի— *506*

Ցիգաներեն (ռուսական)— *124*
Ցվա— *353*

Ուրիխերեն— *254, 354, 452*
Ուգրո-ֆիննական լեզուներ—*455*
Ուզբեկերեն— *47—49, 128—129, 176*
Ուկրաիներեն— *123—124*

Փուլ— *350*

Քալաշա *տե՛ս* Կաֆիրի
Քամախ— *422*
Քաշմիրի—*43, 171, 255, 422*
Քաֆիրի— *106—107*
Քրդերեն—*313*

Օյրառերեն— *49*
Օճո շելկեամ— *130—131*
Օճու— *437*
Օսսերեն— *203*

Ֆիններեն—*119—121, 155*
Ֆիջի— *250*
Ֆրանսերեն—*42—43, 52—53, 72, 74, 93, 117, 120—121, 129, 159, 162, 222, 224, 231, 280, 424, 433, 453—454, 483—484, 489*
Ֆուտումա— *130*

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիս— *61, 64—65, 68, 91, 114, 137—138, 169, 178, 188—189, 194—196, 201—202, 210, 220—221, 228—229, 232—235, 238—239, 248, 283—284, 305—306, 331—332, 369—372, 425—426, 442*
Ախալքալաք— *63, 491*
Ակն— *67, 78—79, 111, 146, 151, 213*
Ամասիա— *98—99*
Առտիալ— *84, 97, 109, 165, 297—299, 305, 339—340, 391—392, 446*
Ասլանբեկ— *98—99, 111, 118, 140, 151, 213, 491*
Աստրախան— *60, 65, 178, 189, 192, 196, 209*
Աստափազար— *98—99*
Արաբկիր—*83, 98—99, 107, 213, 491*
Արդվին— *87—88, 173, 178, 183, 189*
Արտաշատ— *194*

Բաբերդ— *76, 97, 117*

Գերսիմ— *213*

Եվդոկիա— *64, 66, 76, 98, 140, 144, 426, 491*
Երևան— *33—34, 59—60, 64, 67, 87—89, 106, 114, 134, 173, 178, 189, 191, 209—210, 220, 225, 406, 458, 490—492*
Երզնկա— *76, 213*

Զեյթուն *(տե՛ս և Կիլիկիա)*— *79—83, 145—146, 167—168, 213, 303*
Զմյուռնիա— *108, 213*

Էֆեսոս— *234—235*
Թավրիզ— *72, 201, 210—211, 458*
Թիֆլիսի— *60, 65, 87—88, 106, 133—134, 178, 187, 189, 192, 209—210, 238*

Լեհահայ— *77—78, 144, 298, 305, 339—340, 489*

Խարբերդ— *76, 97, 146, 213, 407*
Խոյ— *62, 67, 178, 183—185, 201—202, 211*
Խտարջուր— *99, 104—105*

Կարին— *63, 66, 76, 82—84, 97, 104, 106, 108, 110—111, 139—140, 213, 403—406*
Կարճևան— *220, 228, 238*
Կեսարիա—*82—83, 105—106, 114, 119, 142—143, 158—159, 164, 210, 363, 407—408*
Կիլիկիա— *62, 102—104, 150—151, 243—247, 301—305, 241—242, 395—401, 428, 441, 444, 495—496*
Հյուրիե— *79, 491*

Հաճին— *144, 151*
Համշեն— *63, 78, 82, 84, 97, 99—100, 109—110, 117—118, 129, 140—141, 147, 164—165, 212, 225, 294—297, 305, 338—339, 388—391, 426—429, 440—441, 495*
Հունգարահայ— *78, 144, 213—214, 220, 228, 299, 392, 489, 499*

Ղազախ— *135, 146, 194, 209*
Ղարաբաղ— *60, 64—68, 88, 134—135, 178, 184—185, 187, 189, 192, 210,*

221, 234, 236—238, 247—248, 287, 332—358, 406
Ղարադաղ— 210
Ղամարլու տե՛ս Աւռաչատ
Ղրիմ— 76, 97, 140, 157—159, 164, 213, 243, 245, 458, 497

Ճանիկ— 388—391, 429

Մալա— 388—391
Մալաթիա— 76, 86, 97—99, 107, 117—118
Մարաղա— 61—62, 65, 68, 90—91, 114—115, 138—139, 169—170, 178, 183—184, 192—196, 201—202, 211—212, 221, 228—229, 231, 248, 284—287, 305—306, 330—331, 372—374, 426, 491—493
Մարսվան— 99, 491
Մարաշ— 76, 78, 97, 142, 147, 213
Մենրի— 194, 196, 220—222, 228, 237—238
Մուշ— 76, 84, 106, 139—140, 164, 170, 182—183, 211, 306, 491

Նիկոմիդիա— 108
Նոր Բայազետ— 210—211, 406—407
Նոր Նախիջևան— 63—67, 72, 76, 85—86, 111, 140, 142, 158—159, 169—170, 213—214, 221, 228—229, 243—247, 292—294, 305, 336—338, 376—388, 428, 458—459, 492—493, 497—499
Նոր Ջուղա— 61, 64—66, 68, 88—90, 114, 135—137, 147—148, 168, 173, 178—182, 185—187, 191, 209, 220, 228—229, 232—235, 248, 282—283, 305—306, 311, 329—330, 367—369, 426, 491

Շամախի—60, 64—66, 178, 187—188, 192, 210, 287
Շապին-Գարահիսար—97

Ոզմի—62, 76, 82, 111, 146, 150, 212—213, 234

Զալբր— 378
Զարսաճճեմ— 213, 491

Պոլիս— 33—34, 64—67, 72, 76, 82—84, 98, 109, 118, 140, 145, 151—152, 162—164, 168—170, 210, 213, 220—221, 225, 228—229, 235, 242—247, 287—292, 305, 308, 310, 332—336, 361, 374—376, 426, 427—428, 443, 457—459, 489—492, 497—498, 517

Ռոտոսթո— 76, 92—98, 108, 142, 211, 213, 426
Ռումինահայ— 489

Սալմաստ— 178, 184—185, 194, 201—202
Սերաստիա— 83, 98—99, 118, 140, 144, 407
Սվեդիա— 62, 76—77, 82, 100—102, 111—112, 118—119, 145, 150, 166—167, 245, 247, 304—305, 342—344, 401—403, 428, 496—498
Սուչավա— 63, 72—78, 97, 143—144, 213—214, 220, 220, 228, 299, 339

Վան— 62, 76, 82, 84, 106, 109, 139, 165—166, 212, 234, 299—301, 305, 340—341, 392—395, 439—440, 444—445, 493—495

Տաբենեան— 82
Տիատին— 68
Տիգրանակերտ— 76, 82, 84—85, 146—147, 182—183
Տրապիզոն— 63, 78, 82, 84, 97—99, 111, 117, 140, 212, 407, 427
Տփղիս տե՛ս Թրիլիսի

Ցղնա— 137—138, 188—189, 195

Ուրմիա— 91, 114—115, 138—139, 183—185, 194—196, 211, 234

Քղի— 213, 220

Օրամ— 144

Ֆենեան տե՛ս Կեսարիա

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա. ԼԵԶՈՒՆԵՐ

(Բառասկզբում՝ ն=նիհ, մ=միջին, ե=ճոռ)

Ակրխագ. — արխագերեն
ալբ(ան). — ալբաներեն
ալեուտ. — ալեուտերեն
ալթայ. — ալթայերեն, ալթայական
անգլ. — անգլերեն
աննամ. — աննամերեն
աս(որ). — ասորերեն
ասուր. — ասուրերեն
ավար. — ավարերեն
արար. — արաբերեն
արչին. — արչիներեն
աֆղան. — աֆղաներեն
բասկ. — բասկերեն
բայց. — բայցերեն
բելուջ. — բելուջերեն
բերբեր. — բերբերերեն
բիրմ(ան). — բիրմաներեն
բուդուխ. — բուդուխերեն
բուլղ(ար). — բուլղարերեն
բուշմ(ան). — բուշմաներեն
բուրյաթ. — բուրյաթերեն
գերմ. — գերմաներեն
գոթ. — գոթերեն
դան. — դաներեն
դրավիդ. — դրավիդյան
երբ. — երբայերեն
եվր. — եվրոպական
զնդ. — զենդերեն
թաթաս. — թաթասերեն
թաթ. — թաթերեն
թթր. — թաթարերեն, թաթարական
Քրբ. — Քուրթերեն
ինգուշ. — ինգուշերեն
իռլ. — իռլանդերեն
իսպ. — իսպաներեն
իտ(ալ). — իտալերեն
իրան. — իրանական
լազ. — լազերեն
լատ., լտ. — լատիներեն
լեզգ. — լեզգիերեն
լեթթ. — լեթթերեն
լեհ. — լեհերեն
լիթ., *լիտ(վան).* — լիտվաներեն
լտ. տե՛ս *լատ.*
կարարգ(ին). — կարարգիներեն
կարելլ. — կարելլերեն
կարաչ. — կարաչերեն
կիրգիզ. — կիրգիզերեն
հբգ. — հին բարձր գերմաներեն
հինգուստ. — հինգուստանի
հիռլ. — հին իռլանդերեն
հյ. — հայերեն
հն. — հունարեն
հոգ. — հոգկերեն
հնխ. — հնդեվրոպական նախալեզու
համեր. — համերյան հունարեն
հսլ. — հին սլավոներեն
հունգ(ար). — հունգարերեն
ճապ(ոն). — ճապոներեն
մալգաշ. — մալգաշերեն

Մբդ.— միջին բարձր դերմաններեն

Միջ. հյ. } *— միջին հայերեն*
Մհյ. }

Մոնղոլ.— մոնղոլերեն
Մորդ(վին).— մորդվիններեն
Յակուտ.— յակուտերեն
Նենեց.— նենեցերեն
Չվ(եդ).— չվեդերեն
Չեխ.— չեխերեն
Չեչ(են).— չեչեներեն
Չերեմիս.— չերեմիսերեն
Չերք(եզ).— չերքեզերեն
Չին.— չինարեն
Չուվաշ.— չուվաշերեն
Չուքչի.— չուքչիերեն

Պահլ. } *— պահլավերեն*
Պհլ. }

Պորտ.— պորտուգալերեն
Պրով.— պրովանսալ
Պրսկ.— պարսկերեն
Ջավայ.— ջավայերեն
Ռ., ռուս.— ռուսերեն
Ռոման.— ռոմանական
Ռոմին.— ռոմիներեն
Ռուս. տե՛ս Ռ.
Սանս., սնս.— սանսկրիտ
Սեմ.— սեմական
Սերբ.— սերբերեն
Սլ.— սլավոներեն, սլավոնական
Սոդդ.— սոդդերեն
Սումեր.— սումերերեն
Վերշ.— վերշիկերեն
Վր., վրաց.— վրացերեն
Տաճկ.— տաճկերեն
Ուրխ.— ուրխերեն
Ուզբ(եկ).— ուզբեկերեն
Ուգրո-ֆիննն.— ուգրո-ֆիննական
Ուկր.— ուկրաիներեն
Քրդ.— քրդերեն
Օս(ս).— օսսերեն
Ֆիննն.— ֆիններեն
Ֆր., Ֆրանս.— ֆրանսերեն

Բ. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ, ԵՆԹԱԲԱՐԲԱՌՆԵՐ, ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ագլ.— Ագուլիս
Առտ.— Առտիալ
Ասլ.— Ասլանբեգ
Աստր.— Աստրախան
Ատափ.— Ատափազար
Արդ.— Արդվին
Եվդ.—եվդոկիա
Եր(և).— Երևան
Զեյթուն
Թավր.— Թավրիզ
Թիֆլ., Թլ.— Թբիլիսի
Լհ., Լհհ.— Լեհահայ
Խրբ.— Խարբերդ
Կես., Կս.— Կեսարիա
Կիլ.— Կիլիկիա
Կր.— Կարին
Կրճ.— Կարճևան
Հճ.— Հաճին
Հմշ.— Համշեն
Հնգ.—Հունգարահայ
Հնդ.— Հնդկահայ
Ղր.— Ղրիմ
Ղրբ.— Ղարաբաղ
Ղրդ.— Ղարադաղ
Ճ.— Ճանիկ
Մ.— Մալա
Մլք.— Մալաքիա
Մղ., Մղր.— Մեղրի
Մշ.— Մուշ
Մրզ.— Մարաղա
Մրշ.— Մարաշ
Մրս.— Մարսվան
Նախ.— Նոր Նախիջևան
Նջ.— Նոր Ջուղա
Շմ., Շմխ.— Շամախի
Ո., Ոգմ.— Ոգմի

Որմ.— Ուրմիա
Չլ.— Չալդր
Պ., Պլ.— Պոլիս
Ջ., Ջղ.— Ջուղա
Ռ.— Ռոտոսթո
Սբ.— Սեբաստիա
Սչ.— Սուչավա
Սվեդ.— Սվեդիա
Վն.— Վան
Տիգ.— Տիգրանակերտ
Տր.— Տրապիզոն
Ցղ.— Ցղնա



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Գլուխ Ի. Ներածություն աշխարհաբարի մեջ . . . . . 5—43
1. Աշխարհաբարի խոնարհման ընդհանուր նկարագիրը . 5
2. Աշխարհաբարի խոնարհման ծագումն ու զարգացումը . 13
3. Անկանոն և պակասավոր բայերը աշխարհաբարում . . 21
ա. Զարտուղի բայեր 21
բ. Անկանոն բայեր 28
գ. Անկանոն բայերի ծագումը 32
դ. Պակասավոր բայեր 36
ե. Անդեմ բայեր 41

Գլուխ Լ. Հայկան կամ օժանդակ բայ . . . . . 44—73

Գլուխ Մ. Բարդ և բազադրյալ ժամանակներ . . . . . 74—240
1. Բարդ ժամանակներ 75
ա. Սահմանական ներկա 75
բ. Սահմանական ներկայի շարունակականը . . . 95
գ. Սահմանականի անցյալ անկատարը 108
դ. Սահմանականի անցյալ անկատարի շարունակականը 116
ե. Ապառնի 119
զ. Անցյալ ապառնի 150
է. Հրամայական 153
ը. Հրամայական ժամանակ 170
թ. Բարդ հրամայականի անցյալ 171
2. Բազադրյալ ժամանակներ 173
ա. Սահմանական ներկա 173
բ. Սահմանական անցյալ անկատար 190
գ. Բազադրյալ անցյալ կատարյալ 201
դ. Բազադրյալ անցյալ (հարակատար, դերակատար և հարակից ձևեր) 202
ե. Բազադրյալ ապառնի և հարակից ձևեր 229

Գլուխ Ժ. Թեական և պատմողական եղանակներ . . . . . 241—248
1. Թեական եղանակ 241

2132-1961

2. Պատմողական եղանակ 245
Գլուխ ԺԱ. Բայերի զանազան տեսակներ . . . . . 249—510
1. Աժանցյալ բայեր 249
2. Անցողական բայ 251
3. Կրավորական բայ 313
4. Բացառական բայ 349
5. Հարցական բայ 419
6. Մատակական բայ 430
7. Հաճախական բայ 434
8. Կրկնավոր բայեր 442
9. Միավորական և բազմավորական բայեր 446
10. Անվանական բայ 452
11. Հատատական բայ 457
12. Ինաձայն բայեր 459
13. Օտար (փոխառյալ) բայեր 488
14. Անսովոր ածանցյալ բայեր 499
15. Հարցական խոնարհում 509

Հավելված . . . . . 511—529
1. Սգում և ամփոփում խոնարհման մեջ 511
2. Բայական ձևերի վիճակագրություններ 512
3. Բարդ բայի խոնարհում 517
4. Լծորդություն 518
5. Բայերի նախամասնիկների ցանկ 519
6. Անկատարը հայերենում 524
Ցանկեր . . . . . 531—543
1. Լեզուների ցանկ 533
2. Հայերեն բարբառների ու խոսվածքների ցանկ . . . 537
3. Համառոտությունների ցանկ 539
4. Նյութերի ցանկ 542

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՏՈՐ IV

Բ ԳԻՐՔ

212-1961

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՂԱՄՄՑԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Կ. Թ. ՏԻՐԱՑՈՒՐՑԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՑԱՆ
Վերատեսող սրբագրիչ՝ Ա. Հ. ԱՎԱՆՑԱՆ

ՎՖ 01100 Հրատ. № 1861 Պատվեր 14 Ս։Խ 625 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 11/I 1961 թ., տպագրված է տպագր. 15/XI 1961 թ., տպագրական 34 մամուլ, հրատ. 26,75 մամուլ, թուղթ 60×92¹/₁₆։ Գինը կազմով 1 ո. 80 կ.

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24